Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

5847

241
L-SU

Ihr

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՀԱՏՈՐ Ա

2 .05. 2013

5069
ч.

241
L-50

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

OCT 2000

ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՀԱՄԱՌՕՏԵԱԼ Ի Ս. ԱԼՓՈՆՍՈՍԻ

ԼԻԿՈՒՈՐԵԱՑ

Ի ՁԵՌՆ

Տ. ԵՊՈՒԱՐԴԱՑ Վ. ՀԻՒՐՄՈՒԶ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇԻՐԱԿԱՑ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

Լոսը
363994


Հատոր Առաջին

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ

1865

Հայաստանի Պետական Գրադարան



Fr. Hurtado Cal. G. Bernascone inc.

Volgiamoci a Dio con cuori puri

Apocal. 14. Virgines enim sunt, qui sequuntur Agnum.

Ap. Apoc. C. 15.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Որպէս Տեսականն Աստուածաբանութիւն բարձրագոյն քան զամենայն գիտութիւնս է, այսպէս և Առաքեալն քան զլսնաւ գիտութիւնս կարևոր։ Սա ուղղեակ է ամենայն գործոց մարդոյ. սա ոչ միայն բանաւոր կացուցանէ զմարդ, այլ և հոգևոր. և սա է, որ՝ի նպատակ անդր իւր առաջնորդէ մարդոյ։ Այնք ոամիկն անպարտական է և անբաւական իսկ ուսանելոյ զգիտութիւնս զայս, սակայն իրաւունք են նորա պահանջելոյ զոյն յառաջնորդից իւրոց, որոց յանձն է՝ի տեառնէ ցուցանել նմա զճանապարհ յաւիտենից կեանաց։ Այմն հպատակել ևեթ անկ է պարտուց իւրոց, իսկ քահանային ցուցանել նմա զպարտս նորա. գաբիր է քահանայ, առ՝ի տալ ժողովրդոյ զհրամանս տեառն։ Այսր աղագաւ պատուիրէ Աստուած՝ի ձեռն մարգարէին. «Օ՛ի շրթունք քահանային զգուշասցին գիտութեան, զի բերան տեառն ամենակալի է»։ Ասան որոյ՝ի խղճէ մեռց պարտ է քահանայի ուսանել զայս գիտութիւն, և վասն ուսանելոյ՝ պարապել՝ի սոյն զամենայն կեանս իւր։ Օ՛ի զոր վասն մարմնաւոր բժշկութեան ասաց բժշկապետն, Կեանք սուղ, արուեստ երկայն. զնոյն և զհոգեւոր բժշկութենէ է ասել։ Այն՝ որք բա-

բոյական զնեալ և զնոհականութիւն մարդոյ վարկանին, այլ ոչ յերաւի. ապաքէն առանց խելացի և խոհականութեան չմարթի և մարմնաւորն բժշկութիւն, այլ նոքօք և եթ չկարէ ոք բժշկել՝ եթէ ոչ նախ զբնութիւնս ախտից և զղօրութիւնս դեղոց ուսանիցի: Նազմապատիկ և սոյ հոգւոյ են ախտակրութիւնք, և ըստ ազգի ազգի ախտակրութեանցն դեղք այլեայլ զորս կանոնք և սահմանադրութիւնք եկեղեցւոյ, և աստուածարեալց արանց վարդապետութիւնք աւանդեն, և որոց ուսումն ընդ խոհականութեան յարդարեն զբարոյական: Որ առանց այսոցիկ առաջնորդելն կամիցի այլոց, դնեմ զանձն՝ի վտանգի տերունական վճռոյն. "Այր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ, և երկոքեան՝ի խորխորատ անկանին,,: Նոյնպէս որ՝ի վտանգէ աստի զգուշացեալ՝ բնաւ իսկ և յառաջնորդութենէ հրաժարի, ծայրայեղ՝ի հակառակն անկանի՝ ի քահանայական սպարտուցն վերջանալով, որպէս ցուցեալ է՝ի մատենիս՝ի գլուխս ԺԲ, թիւ 126:

Այսոցիկ աղագաւ ձեռն արկի յառաջիկայս վաստակ, զորբոյն Աւետիսոյ Թարգմանչին տալ մերազնեայց զԽարոյական Յստուածաբանութիւն, ընդունելի ամենեցուն, և՝ի սրբոյ առաքելական գահէն վերկայեալ ըստ ողջմտութեան: Նոյնպէս վասն այլևայլ պատճառաց հարկ եղև ինձ հրաժարել՝ի ձիշդ թարգմանութենէ նորին. յորոց մի և այն է, զի մատենագիրս՝ որ զամենայն կեանս իւր՝ի սոյն գիտութիւն և յընթերցումն ամենայն բարոյականաց պարապեալ՝ կարողն էր՝ի տարաձայնութեան կարծեաց նոցա սահմանել զբաւագոյնն և տալ վճիռ, ինքն առ խոնարհութեան և երկիւղածութեան հաղիւ զկարծիս իւր բացատրէ որպէս հաւանականագոյն, և վասն այնորիկ ամենայն ուրեք զվկայութիւնս համաձայնելոց ընդ իւր աստուածաբանից կարևոր համարի՝ի ներքս ածել: Այլ իրի հարկ եր ինձ ինքնագիւմաբար՝ և ոչ թարգմանո-

ըէն՝ ՚ի դիմաց նորա խօսել, առ ՚ի կարող լինելոյ զկարծիս նորա բաղում ուրեք տալ ՚ի կանոն, զորս ինքն յետ քննելոյ զվարդապետութիւն աստուածաբանիչ առ Հաստարակ՝ համարի հաւանականագոյն։ Կարող զի ՚ի մատենիս յայսմիկ ոչ ոճ ինչ և եղանակ բանից մատենագրին խնդրի, այլ բացայայտութիւն՝ որ ազատ թարգմանութեամբ զիւրագոյն յաջողէր ինձ։ Սակայն ըստ իմաստից չէք իմ ուրեք խոտորեալ ՚ի կարծեաց սրբոյ մատենագրիս, այլ ըստ ամենայնի հետևեալ վարդապետութեան նորա յաներկևան ապահովութիւն. զի ուղղափառ հաւատոյ մանն է և ապացոյց, ոչ ինչ նուազ քան զտեսական աստուածաբանութեան, բարոյական ողջմտութիւն։

Այլ քանզի ոչ ՚ի միջի է յօրինեալ առաջիկայս մատեան, այլ զրեթէ թարգմանեալ, կարևոր համարիմք զեկուցանել աստ հանրաբար՝ զոր ուրեք ուրեք ՚ի ստորև իջոյց ծանուցեալ է մեր, զի որ ինչ ՚ի սմա յաղագս եկեղեցական բարեկարգութեանց ՚ի բնագրէ սրբոյ մատենագրիս ըստ աւանդելոյ նորա վասն արևմտեան եկեղեցւոյ ՚ի կիր առեալ եմք, այնոքիկ ոչ խափանեն զաղգային եկեղեցական կանոնս մեր, ըստ յայտարարութեան նորին իսկ տրիդենտեան ժողովոյ։ Այլ քանզի առ մեզ չև ևս վաւերաբար հրատարակեալ են կանոնագիրքք, և ոչ ամենայն ազգային կանոնք մեր անկորուստ առ մեզ հասեալ, և ոչ իսկ ՚ի միօրինակ սովորութենէ ազգիս ըստ հանգամանաց և հարկի ժամանակաց կանոնք հաստատեալ, չէր մեզ օրէն՝ առանձին դատողութեամբ սահմանել ՚ի կանոն որ ինչ ՚ի գիրս մեր գտանին աւանդք, կամ արտաստահման առնել որ ինչ ՚ի կանոնաց տրիդենտեան ժողովոյ և ՚ի հռովմէական սահմանադրութեանց մուծեալ են առ մեզ։ Այլ նորագոյ ազգիս է անկ՝ միաբանութեամբ դատել, ընտրել և սահմանել որ ինչ ՚ի նախնեացն մերոց աւանդեալ է ՚ի կանոնգիրս, կամ՝ ի սովորութենէ ընկալեալ, և հաստարակաց հաւանութեամբ ընդ ձեռին։

ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՑ

ՏԵԱՌՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ

ԵՒ

ԵՂԲՕՐ ՆՈՐԱ.

ՊԱՐՈՆ ԲԱՂՏԱՍԱՐԱՑ

ՆԵՓԻՍԵԱՆՑ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՅԱՂԱԳՍ ԽԼՃՄՏԱՆԱՑ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

1. Հեռաւոր և մերձաւոր կանոն բարուքեան մարդկային գործոց:
2. Քանիսատիկ է խիղճ մտաց:

1. Բարուքեան մարդկային գործոյ առաջին կանոն է համաձայնուքիւն նորին ընդ աստուածային օրինաց: Ա՛յլ քանզի մարթ իսկ է խղճի մտաց համաձայն աստուածային օրինաց կարծել ինչ՝ որ չիցէ այնպիսի, նմին իրի բարուքեան գործոյ հեռաւոր կանոն՝ համարին Օրէնք աստուածային, իսկ մերձաւոր կանոն՝ Խիղճ մտաց:

2. Ա՛յր աղագաւ գիտակցուքիւն զանազանի՛ւ խղճմտանաց: Ո՞վ գիտակցուքիւն է գիտել զսկըզբունս աստուածային օրինաց. զոր օրինակ զի Պարտ է պաշտել զԱստուած. Պարտ է խօրշել՛ի մեղաց. Ոչ է պարտ առնել ինչ ումեք, զոր ոչն կամի ոք թէ արասցեն այլք ինքեան: Իսկ խիղճ մտաց՝ դատաւճիռ, զոր՛ի սկզբանց անտի յառաջ ածեմք՝ թէ արդեօք զայս ինչ կամ զայն գործ օրէն իցէ առնել թէ ոչ: Այսու օրոց սահման խղճի մտաց է՝ Դատաստիճ ըէ գայս ինչ ասել եւ այժմ օրէն իցէ առնել ըէ ոչ:

Ա՛յլ եւ այլ ազգք են խղճի մտաց. ուղիղ և մոլար, տարտամ և վարանական՝ զոր խղճահարուքիւն կոչեմք, երկբայելի և հաւանական. զորոց մի ըստ միոջէ արժան է խօսել:

ԳՕԴՈՒԱԾ Բ

3 · Ուղիղ խիղճ մտաց ։
4 · Մոլար խիղճ մտաց ։
5 · Մարքի տգիտութիւն բնական օրինաց ։
6 · Մարքի իցէ անգիտանալ թէ ցանկութիւն չարեաց մեղք են ։
7 · Տարտամ խիղճ մտաց ։
8–11 · Վարանական խիղճ մտաց ։

3 · Ուղիղ խիղճ մտաց այն է, որ թելադրէ զարժանն. վասն որոյ որ առնէ ինչ ոք ընդդէմ այսպիսւոյ խղճի մտաց, մեղանչէ աներկբայելի ։

4 · Մոլար խիղճ մտաց այն է, որ սադրէ թիւր ինչ. և է կրկին, չաղթելի և անչաղթելի ։ Անչաղթելի է, եթէ չիցէ 'ի միտս ուրուք կասկած կամ երկեւան սխալելոյ. և քանզի խիղճ մտաց այսպիսի՝ ըստ ասացելումն 'ի վերոյ՝ է մերձաւոր կանոն մարդկային գործոյ, ղհետ գայ հարկաւորութիւն ըստ այմ գործելոյ ։ Նոյն չաղթելի է, եթէ իցէ 'ի միտս ուրուք կասկած կամ երկեւան սխալելոյ, և ինքն ոչ կարող լուծանել զայն և հետազօտել զհնարաւորութիւն. վասն որոյ որ այսու խրաճիւ ոք գործէ ինչ՝ մեղանչէ, թէպէտ և չիցէ ընդդէմ օրինաց գործն զոր առնէ ։ Այլ կարող 'ի լուծումն տարակուսանաց՝ զայն կանոն ասեմ, զոր 'ի կարևոր գործս սովոր են ունել մարդիկ, և ոչ անսովոր ինչ կանոն ։

5 · Որ 'ի մեզս, որ են ընդդէմ բնական օրինաց, մարքի տգիտութիւն անչաղթելի ։ — Անչաղթելի տգիտութիւն անմեղադրելի առնէ զգործն, որպէս յայտ է 'ի դատապարտութենէ մեղսութեանն Պայի՝ որ ասէր. Մենեզէս ի մարդի բնական երաժանոյ փգիտութիւն անչաղթելէ, այլ փգիտութիւնս այս ոչ ապաւ կացուցանէ զմարդ 'ի մեղսոյ յայժմու պայմանի բնութենէնս ։ Այս քանզի եկեղեցի սուրբ զայս և զայսպիսի քանս աղանդաւորացն դատապարտէ, աստի աստուածաբանք զանազանեն զառաջին սկզբունս օրինաց, և որ ինչ 'ի սկզբանց անտի անմիջապար կամ երկրորդաբար ղհետ գան ։ Առաջին սկզբունք՝ այսինքն բնական օրինաց գլխաւոր պատուիրանք՝ այնպէս քաջայայտ են իւրովի, և գիտակցութենէն մարդոյ այնպէս քաջածանօթ, զի անմարթ է նմա անգի-

տանալ զայնոսիկ անյաղթելի տգիտութեամբ. որպէս վկայել մնաց մերոյ՝ զի Պարտ է պաշտել զ[Աստուած, զի Ո]ր ոչն կամիք թէ արասցեն մեզ այլք՝ պարտիմք և մեք չառնել զայն այլոց, և այլն: [Որ ինչ յայսցանէ անմիջաբար զհետ գան, որպիսի են տանաբանեալ պատուիրանք, այնպէս յայտնի են և այնոքիկ, զի 'ի կարի տգէտ և 'ի տխմար մարդկանէ հաղիւ՝ ոմանք թէ կարիցեն անգիտանալ զայնս անյաղթելի տգիտութեամբ առ սակաւ ինչ ժամանակ, և կարի դժուարադէպ է այսպիսւոյ տգիտութեան անմեղադրելի գոլ: [Սակ որ ինչ երկրորդաբար 'ի սկզբանէ անտի գան զհետ, որպէս ջահանջել տոկոսիս, չգայթակղեցուցանել զոք և այլն, մարթ է անգիտանալ ուժեք զայնս անյաղթելի տգիտութեամբ. և տգիտութիւնն այն լիցի անմեղադրելի, եթէ չիցէ մարթ նմա սովորական ջանիւք՝ որպէս 'ի վեր անդր ասացաք՝ յաղթել այնմ: [Այս այսպէս հաստատեն սուրբ [Աւգուստինոս, [Աքրուա, մեծն [Ալբերտ, և այլք. և դատապարտութիւն իսկ մնորութեանն Պայի զնոյն հաստատէ. զի եկեղեցի սուրբ եթէ չհամարէր և 'ի պատուէրս բնական օրինաց հնարաւոր ըզտգիտութիւն անյաղթելի, ոչ արդեօք սահմանէր այսպիսւոյ տգիտութեան ազատ 'ի մեղայ կացուցանել զմարդ:

6. [Ան իսկ յաստուածաբանից՝ որք կարելի համարին տգէտ մարդկան առանց մահու չափ մեղայ կարծել, զի ցանկալ և եթէ մեղայ՝ չիցեն մեղք, այլ 'ի գալ և եթէ ցանկութեան յարդիւնս՝ հանապազեն մեղք: [Այլ ոչ ջամիտք յաստուածաբանից անմարթ համարին գիտել ուժեք՝ զի չար է պոռնկութիւն, և անգիտանալ՝ զի չար իցէ ցանկութիւն պոռնկութեան: [Իցէ իսկ մարթ գիտել ուժեք՝ զի այս ինչ կամ այն ընդդէմ [Աստուծոյ է, և համարել զի և ցանկութիւն գործելոյ զնոյն չիցէ աստուածընդդէմ:

7. [Տաղտամ խիղճ մնաց է, ուր ընդ երկուս պատուիրանս ոք տարակուսեալ՝ չգիտիցէ յո՞ր կողս հակամիտել. օրինակ իմն՝ ուր առաջի կայցէ ստերդուժն լինել, կամ մահառիթ ուժեք, զինչ առնել իցէ: Պարտ է յայնժամ, եթէ իցէ կարելի, հարցանել զայր գիտունն և խոհական. իսկ եթէ ոչ՝ զիոքրագոյնն յերկուց չա-

լեաց ընտրել, ընդդէմ գրական օրինաց մարդկայնոց կամ աստուածայնոց գործելով՝ քան ընդդէմ բնական օրինաց։ Իսկ եթէ չիցէ բաւական և ոչ զիտքըագոյնն ՚ի չարեաց ընտրելոյ, որ ինչ յերկոցունց անտի չարեացն և գործիցէ՝ ոչ մեղանչէ, զի ոչ ևս է ազատ, և առանց ազատութեան չիք մեղանչել։

8· Ա պրանակաւ խիղճ մտաց է՝ երկնչել տարապարտ, և մեղս Համարել ուր չիք մեղք։ Ինաղում կանոնս վասն այսպիսեաց վարանելոյ աւանդեն հոգևոր հարք· այլ յետ աղօթից՝ հզօրագոյն, թէ արդեօք և միակ դէզ, այն է՝ որպէս Հայրն Ա ենիերի ասէ, հնազանդել հօր հոգևորի։ Ա ան որոյ պարտ է խոստովանահօր նախ քան զամենայն երկու ինչ դնել ՚ի մտի վարանելոյն։ Ա յա՝ զի որ հնազանդին հօր հոգևորի ուր չիք յայտնապէս մեղք, ապահովէ զՀոգի իւր· զի ոչ թէ մարդոյ հնազանդի, այլ Աստուծոյ՝ որ ասէն· “Ա ր ձեզ լսէ, ինձ լսէ,,։ Ա յրկրորդ՝ զի որ ոչն հնազանդի, դնէ զանձն ՚ի վտանգի կորուսանելոյ՝ ոչ միայն զխաղաղութիւն սրտի, զեռանդն աստուածպաշտութեան, զյառաջադիմութիւն հոգևոր, այլ և զառողջութիւն, զմիտս և զՀոգի իսկ· զի մարթ է խղճահարութեանն այնչափ զայրանալ՝ մինչև առ յուսահատութեան դնալ զիւրովին, կամ բոլորովին անձնատուր լինել ախտից, որպէս պատահեալ իսկ է ոչ սակաւուց։

Ա յսմ ևս պարտ է խոստովանահօր խելամուտ առնել զայնպիսին, զի ոչ է մարթ ձգիւ ընդ Աստուծոյ որպէս ընդ վաճառակցի ունել Հաշիւ· եղուկ էր մեզ, եթէ այնպիսի պահանջէր ՚ի մէնջ Համար, վասն որոյ ասէ սաղմոսերգուն· “Ա ՚ի մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քումմ, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի,,։ Ա ամի աստուած յօգուտ և ՚ի շահ Հոգւոյ մերոյ՝ կեալ մեզ միշտ յերկիւղի զՀանդերձելոյ, որպէս զի որչափ ՚ի կարի մերում է՝ զգուշագոյն վարեսցուք զկեանս՝ առ ՚ի չխոտորելոյ ՚ի պատուիրանաց նորա· այլ յետ այնորիկ՝ պարտ է մեզ ապաւինել յողորմութիւն նորա, խոստովանել զի առանց շնորհաց նորա ոչ է մեզ մարթ Հասանել փրկութեան, և խընդրել միշտ շնորհս ՚ի նմանէ, և ՚ի նա զամենայն վստահութիւն մեր Հաստատեալ՝ խաղաղութեամբ սրտի յա-

բատևել՝ի ջանս։ Օ այս և սուրբ Պաղեստացին խրատէ. "Լաւ է մեզ՝ի խնամն Աստուծոյ ապաւինել իբրև զկոյր ոք՝ի խաւարի վտանգաւոր կենացս, և շատանալ վկայութեամբ հոգևոր հօր մերոյ ընդ ուղիղ գնացս մեր, և մի առաւել ինչ խնդրել գիտելոյ. զի հնազանդելումն չիք վտանգ դատապարտութեան»։ Օ սոյն և սուրբն Փիլիպպոս ներեան հաստատէ. "Որ խոստովանահօրն իւրում հնազանդի՝ զերծուցանէ զանձն իւր՝ի տալոյ հաշիւ զգործոց իւրոց»։ Եւ այլ ոմն՝ի սրբոց հարց ասէ. "Հպարտութեան է և թերահաւատութեան՝ չհանդարտել խոստովանահօրն բանիւք»։

9. Պարտ է դարձեալ խոստովանահօր աղդել՝ի սիրտ վարանելոյն վստահութիւն մեծ՝ի Քրիստոս՝ որ ետ զանձն առ՝ի փրկել զմեզ, և՝ի սուրբ Տիրամայրն՝ որ է բարեխոսն և հզօր մայր մեր. և յուցանել նմա զի ոչ ոք դիմեալ առ նոսա և անտես գտանի լեալ։ Եւ վերայ այսոցիկ և արգելցէ նմա չընթեռնուլ գիրս վարանեցուցիչս, չյաձախել ընդ խղճահարս, մի լսել քարոզս ահարկուս, և մի զկշճմանս իւր քննել զիրաց՝ որ յաւելուն նմա վարանս։ Իսկ զվարանելոյն երկիւղիւ հաւանութեան ընդ չար խորհուրդս մտաց՝ պարտ է քաջ՝ի քաց մերժել զերկիւղ, և խելամուտ առնել զնոսա՝ զի փորձութիւնք այնպիսիք՝ որ վիշտս ածեն նմա, վարձուց են առիթ և ոչ թէ մեղաց։ Պարտ է խոստովանահօր ունել յայսմիկ զկանոնն զայն մեծ՝ տուեալ՝ի հոգևոր հարց, զի որոց երկիւղած է խիղճ մտաց և չգիտիցեն ստուգիւ մահու չափ ինչ մեղուցեալ, երկիւղ նոցա և կասկած ոչ զօրեն ինչ։ Օ՝ի որպես Հայրն Աստուածընկալ ասէ, Ոչ է հնար թէ հրէշ այնպիսի սոսկալի մտցէ՝ի սիրտ երկիւղած՝ առանց զգալոյ նորա զայն աներկբայելի։ Ո՞ան որոյ պարտ է արգելուլ ևս խղճահարայ՝ չխոստովանել զիմորձութիւնս մտաց, եթէ չգիտիցեն ստուգիւ հաւանեալ ընդ այնս։ Գիտելի է և՝ զի ոչ ինչ օգնեն խղճահարայ կանոնք մանանկանք, այլ ընդհանրական կանոնս պարտ է սահմանել նոցա. վասն զի ընդ մանանկանս վարանին միշտ, ոչ այնպիսի զգեպս իւրեանց վարկանելով։

10. Իսկ վասն վարանելոյ ընդ անցեալ խոստովանութիւնս իւրեանց՝ թէ գուցէ ոչ ամենայն մեղս իւ-

բեանց խոստովանեալ իցեն, կամ թէ ոչ զամենայն յա-
րակից հանգամանս քացատրեալ, կամ թէ ոչ բարւոք
զղջալմն և զառաջադրութիւն արարեալ, պարտ է
խոստովանահօր՝ յետ լսելոյ զընդհանրական խոստովա-
նութիւն նոցա և ներելոյ առ ժամանակ մի երկրորդել
նոցա զանցելոյ կենացն իրս՝ արգելուլ ապա մի և մը-
տածել զայնս, և մի յանցելոց իրաց լինչ խոստովանել՝
եթէ չկարիցեն երդմամբ չափ հաստատել մահացու
լինչ ստուգիւ մեղուցեալ և չև և խոստովանեալ։ Ո՞վ
որպէս նաքին հոգևոր հարք ասեն, եթէ խղճահարի ու-
րուք մոռացեալ լինչ իցէ ի խոստովանութեան՝ ոչ է
պարտ նմա հանդերձ այնքան վտանգաւ և նեղութեամբ
խոստովանել զայն, (գոնեա ի չգիտելն զայն հաւաս-
տեաւ), ուր պատճառք թերեւսպոյնք իսկ քան զայն,
որպէս ի ձառս խոստովանութեան առաջի կայ մեզ ա-
սել՝ աղատ կացուցանեն զապաշխարողն ի պարտուց ան-
տի, առանց լինչ ստանանելոյ՝ ամբողջութեան խոստովա-
նութեանն։ Այսո որոյ պարտ է խոստովանահօր պինդ
կալ, և ի չհնազանդել ապաշխարողին՝ յանդիմանել
զնա և պատժել իսկ, չտալով նմա հրաման հաղորդե-
լոյ։ Պաղցրութիւն պարտ է առնել ընդ խղճահարս՝
որ հնազանդին, իսկ ընդ անհնազանդս խստութիւն.
զի եթէ գամ մի ի հնազանդութենէ և վերջանայ-
ցեն՝ վճարեալ է վասն նոցա. կամ խելագարին և կամ
յուսահատեալ՝ անճնատուր լինին ի չարիս։

11. Այս և ի խղճահարաց՝ որք յամենայնի մեղս
լինչ կասկածեն. այսպիսեաց պարտ է պատուիրել, զի
արհամարհեալ զկասկածանս իւրեանց՝ համարձակ ըզ-
գործովք իւրեանց գայցեն. և խելամուտ առնել զնո-
սա, զի ուր չիք լինչ յայտնապէս չար՝ պարտ է նոցա
յաղթել երկիւղին։ Այլ լինչ փոյթ եթէ չկարիցեն ի
բաց դնել զայն՝ որ անհնարին իսկ է արդեօք խղճա-
հարաց, այլ շատ է զի արհամարհեսցեն զայն. վասն զի
երկիւղն այն ոչ է երկիւղածութիւն և բանաւոր կաս-
կած, և չզօրէ ընդդէմ մնացն գաւանան՝ որ յերկիւղի
իսկ անդ տևէ, թէպէտև անզգալի առ սաստկութեան
երկիւղին։ Այլ ուրեմն ուր չիք լինչ յայտնի չար, չմե-
ղանչեն ի գործելն զայն. զի ոչ եթէ ընդդէմ խղճմ-
տանացն իւրեանց գործեն այնուիկ, այլ ընդդէմ տա-

բապարտ երկիւղին. վասն որոյ պարտ է հրամայել խըղճահարին, ոչ միայն ապհասարհել զերկիւղ այնպիսի՝ այլ և ոչ խոստովանել որ ինչ ընդդէմ այնր երկիւղի գործիցէ։

ՅՕԴՈՒԱԾ Գ

12. Երկբայելի խղճմտանք. բացասական և դրական տարակոյս։
13. 14. Տեսական և գործնական տարակոյս։
15. 16. Ուր օրէնքն լուծն երկբայելի։
17. Ուր ոսխան լուծ երկբայելի։
18. Ուր չկայ հայտ հրամանի մեծաւորին ընդ մեղաց արկանել զանցուցեալն։
19. Ուր պարտաք ծոմապահութեան կամ ծոմ վասն հաղորդութեան լուծն երկբայելի։
20. Ուր արդելաք կամ պարտաք լուծն երկբայելի։

12. Երկբայելի խիղճ մտաց է, յորժամ՝ի տարակուսի կայ խիղճ մտաց՝ առանց հակամտելոյ՝ի մի կողմն։ Կայ զանազանի տարակոյս՝ի բացասական և՝ի դրական։ Բացասական է՝ ուր չիք բաւական պատճառ յայսկոյս կամ յայն հակամտելոյ, և այս է ընդհին տարակոյս։ Իսկ դրական է՝ ուր պատճառք ծանուցնք են յերկաքանչիւր իսկ կողմն հակելոյ, կամ՝ի հակամտել՝ի մի կողմն՝ կասկածեն միտք թէ՝ի միւս կողմն լուծ հակելի։ Որով դրականն տարակոյս գտանի նոյն ընդ հաւանական կարծիս, զորմէ առաջի կայ մեզ ասել՝ի յաջորդ յօդուածդ։

13. Պարձեալ զանազանի տարակոյս՝ի գործնական և՝ի գործնական։ Տեսական է՝ եթէ ոք երկբայի թէ այս ինչ լուծ ստուգիւ այսպէս, զոր օրինակ թէ այս ինչ պատերազմ լուծ արդար. թէ նկարել՝ լուծ գործ ծառայական. թէ ջրով թանձրացեալով՝ի շոգւոյ մաքրել լուծ մկրտել, և որ սոցին սակի տարակոյսք։ Իսկ գործնական է՝ ուր զբաւրութենէ և զօրինաւորութենէ գործոյն լուծ տարակոյս. զոր օրինակ՝ արդեօք՝ի կիւրակէի աւուր օրէն լուծ նկարել, արդեօք օրէն լուծ զինուորել՝ի պատերազմ՝ որոյ երկբայելի է արդարութիւն։ Վասն որոյ պարտ է զանազանել զչհմարիտն յօրինաւորէն. զի տեսականն տարակոյս յածի զչհմարտութեամբ իրին, իսկ գործնականն զօրինաւորութեամբ նորին։

Ըստ այսմ՝ զանազանութեան դիւրաւ՝ի միտ առնուլ

է՝ զի չէ օրէն գործել ինչ գործնական տարակուսիւ. քանզի պարտ է մարդոյ ունել ստուգութիւն բարոյական ընդ օրինաւորութիւն գործոյն՝ զոր առնէ. ապա թէ ոչ, ՚ի վտանգ մեղայ զանձն արկեալ՝ մեղանչէ ըստ սուրբ գրոց. "Որ սիրէ զվտանգ, ՚ի նմին կորնչէ,,: Եւ մեղքն զոր գործէ, ՚ի կասկածանաց անտի առնու զտեսակ իւր և զծանրութիւն. եթէ կասկածէ օր՝ զի գողութիւն է զոր առնէն, պարտաւոր գտանի գողութեան. և եթէ կասկածէ մահու չափ մեղս գործել, մեղանչէ մահու չափ: Իսկ որ գիտիցէ զի մեղս գործէ, այլ անգիտանայցէ՝ արդեօք ներելի թէ մահու չափ իցեն մեղքն զոր գործէ, ոմանք համարին զի մահու չափ մեղիցէ, այլ հաւանականադոյն կարծիք համարին՝ ներելի նմա մեղանչել, եթէ միայն խիղճ մտաց նորա ոչ ազդիցէ նմա զի զանձն ՚ի վտանգ արկանէ մահու չափ մեղաց, և զի պարտ է նմա քննել զոր առնէն, և եթէ արդարև չիցեն մեղքն մահու չափ, և չարութիւն գործոյն զկնի եղանակաւ լինի անյայտ:

14. Իսկ տեսական տարակուսիւ օրէն է գործել ինչ, ուր իցեն գործողին այլ պատճառք օրինաւոր համարեալ զգործն: Օ՚ի այլ են պատճառք՝ որ ցուցանեն զնըշմարտութիւն իրիք, զոր օրինակ թէ արդեօք այս ինչ պատերազմ իցէ արդար, կամ նկարչութիւն իցէ գործ ծառայական. և այլ՝ որք տան դատել օրինաւոր զիրն զայն, զոր օրինակ թէ արդեօք օրէն իցէ զինուորել ՚ի պատերազմ՝ որոյ արդարութիւն չիցէ յայտնի, կամ թէ իցէ օրէն ՚ի կիւրակէի աւուր նկարել. զի մարթ է աստանօր այլոց օրինաց լուծանել զտարակոյս, որպէս այն թէ Ա՚ատափոյն է պայման սպասողին: Եւ զան որոյ պարտ է ՚ի տարակուսի անդ խնդրել՝ թէ ո՞ ստացօղն իցէ՝ այսինքն տէր իրաւանցն, պատուիրա՞ն թէ ազատութիւն, ո՞ր իցեն իրաւունք, ո՞ր այն իցէ համարեալ օրինաւոր: Ա՚յսպա առ ՚ի գիտել զտէր իրաւանցն՝ պարտ է խնդրել թէ յո՞ր կոյս ՚ի սովորութենէ համարին իրաւունք. զի ՚ի համարել իրաւանց ՚ի մի կողմն, միւսում կողման պարտ ՚ի վերայ գայ ցուցանելոց զհակառակն. զի առանց ցուցակութեան ոչ զօրէ ինչ ընդդէմ նորին:

15. Ա՚յսմ զհետ գայ նախ՝ զի եթէ ազատութիւնն իցէ ստացօղ, այսինքն զի եթէ ՚ի կողմն ազատութեան

համարին իրաւունք, պարտ է ցուցանել ընդդէմ նո-
րին՝ զպատուիրանն բարձիչ աղատութեան. զի պա-
տուիրան անստոյգ չկարէ ստոյգ պարտս ի վերայ ածել
ումեք, և բառնալ զազատութիւնն տուեալ նմա յ[illegible]-
տուածոյ գործել զոր կամի, բայ յիւրաց՝ զորս յայտնա-
պէս արգելեալ է, որպէս բացայայտ ասէն գիրք. "Ինքն
ի սկզբանէ արար զմարդ, և եթող զնա ի ձեռս կամաց
իւրոց. եթէ կամիս պահեացես զպատուիրանս... ա-
ռաջի մարդոյ կեանք և մահ, և զինչ հաճոյ Թուեսցի
իւր՝ տացի նմա". (Ալէքս. ԺԵ. 14): Իսկ եթէ սահ-
մանել և հրատարակել օրինացն յայտ է, և բարձուցին
եւեթ նորին կամ անօրինուցին երկբայելի, պարտ է պա-
հել զայն. զի ստացօղ յայնժամ գտանին օրէնք, այս-
ինքն ի կողմն օրինաց են իրաւունք:

16. Օնոյն է ասել, եթէ ընդունելութիւն եւեթ
օրինացն իցէ երկբայելի. զի պարտ իսկ է ընդունելի
լեալ համարել զօրէնս արդարութեան, ըստ առաջինն՝
զի Որ ինչ երաւոյժ է առնել, սովորաբար համաբէ արբեալ:
Օյոյն հաստատէ և կանոնն ընկալեալ ի բարոյակա-
նաց. զի եթէ լինել կամ չլինել գործոյ իրիք իցէ երկ-
բայելի, առանց յուցակութեան չհամարի լեալ՝ որպէս
ի վեր անդր ասացաք. բայց եթէ արդարև լեալ իցէ, և
վաւեր կամ անվաւեր զոլ նորին իցէ երկբայելի, վա-
ւերական միշտ համարի լեալ, որպէս պատկ, խոստովա-
նութիւն, ուխտ, և այլն. զի յերկբայս օգնեն օրէնք
վաւերականութեան նոցա: Հանգոյն սմին և միւսն է
առաջ. Ոչ ղոչ չար համարեալ է առանոյ յոյցակոծնեան:

17. Օհետ գայ երկրորդ՝ զնոյն իմանալ և վասն
ուխտի որ ինչ ասացաքն զօրինաց. զի ուխտն օրէնք իմն
առանձնական է՝ զոր օրինադրէ ոք իւր: Ո՛ան որոյ է-
թէ ոք երկբայիցի եթէ իցէ՞ զայս ինչ կամ՝ զայն ուխ-
տեալ, և չգիտիցէ ստուգիւ զուխտելն, ոչ է պարտա-
կան պահելոյ զուխտն զայն: Նոյնպէս եթէ երկբայելի
իցէ այսր կամ այնր իրիք բռնանդակել յուխտին կամ
ի հրատարակեալ օրէնսն, ոչ ևս պարտ ի վերայ ա-
ծեն. զի յայնժամ ուխտն այն կամ օրէնք չտնին իրա-
ւունս ի վերայ այնր երկբայելի մասին: Իսկ եթէ ոք
զուխտելն հաւաստեաւ գիտիցէ, և երկբայիցի՝ եթէ
կատարեա՞լ իցէ զայն եթէ ոչ՝ պարտական է կատարել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
3639

զնոյն· զի յայնժամ ուխտն այն է ստացօղ, այս ինքն ուխտին են իրաւունք ։ Ա՝ման որոյ եթէ ոք չգիտիցէ ստուգիւ կատարեալ զժամերգութիւն իւր կամ զա-պաշխարանս, պարտական է կատարել զայն ։

18· Օ՝հետ գայ երրորդ՝ զի պարտ է հպատակի կա-տարել զՀրաման մեծաւորին, յորչափ չգիտիցէ հա-ւաստեաւ զի ընդդէմ օրինաց է Հրամանն· զի երկբա-յութիւն ևեթ ընդ օրինաւորութիւն Հրամանին չկա-րէ բառնալ զերաւունս Հրամայելոյ մեծաւորին ։ Ա՝ման որոյ ասէ սուրբն Յոհաննես, զի օրէն է հպատակի ըստ Հրամանի Թագաւորին զինուորել՝ի պատերազմ, յորչափ անիրաւութիւն պատերազմին այնորիկ չիցէ հաւաստի ։ Այլ եթէ միտս ինչ հոգևոր, կամ մար-միաւոր ինչ ծանր միտս՝ի հնազանդութենէ անտի հա-սանէ հպատակին, երկբայութիւն ևեթ անդանօր ընդ օրինաւորութիւն Հրամանին՝ բաւէ՝ի կացուցանել միտս ազատ՝ի հնազանդութենէ ։

19· Օ՝հետ գայ յերրորդ զի որ չգիտիցէ ոք ստուգիւ քանևմիոյ ամաց լեալ, ոչ է ընդ օրինօք ծոմապահու-թեան· իսկ որ երկբայիցի չևաս զվաթսնամեկնիւք ան-ցեալ, ընդ օրինօք է· զի իրաւունք օրինացն ծոմապա-հութեան հասեալ՝ի վերայ նորա, տարակուսիւ ոչ բառնան ։

Նմանպէս եթէ ոք՝ի հինգշաբաթի աւուր յետ քա-ւականապէս քննելոյ երկբայեսցի չևաս հասարակեալ գիշերոյ, կարէ ճաշակել միս· այլ՝ի չորեքշաբաթի ա-ւուր եթէ երկբայեսցի չև հասարակեալ գիշերոյ, չկա-րէ ճաշակել ։

Իսկ եթէ երկբայեսցի ոք կլեալ ինչ կամ ճաշակեալ յետ հասարակ գիշերոյ, կարիցէ՞ հաղորդել յառաւօ-տուն ։ — Ցարաձայնին զայսմանէ բարոյականք, այլ բազմաց հաւանական Թուի թէ կարիցէ· զի արդեա-կան են օրէնք, այսինքն չկարել հաղորդիլ անճոմ· վասն որոյ յորչափ օրինացն չիցէ ասացեալ՝ զի և ոչ երկբայանօք ոք ընդ լուծումն ծոմապահոյ կարիցէ հա-ղորդիլ, ազատութեան ոչ բառնան իրաւունք, և օրէն է երկբայելոյն հաղորդիլ ։

20· Օ՝հետ գայ հինգերորդ՝ զի եթէ պսակեալք երկբայեսցին ընդ վաւերականութիւն պսակի իւրեանց,

այսինքն զի եթէ կասկածիցեն արգել ինչ լեալ պատկին, և յետ բաւական քննութեան կայցեն միայցեն տեղի տարակուսի, օրէն է նոցա տալ և խնդրել զամուսնական պարտս։ Նմանապէս որ գիտէ ստուգիւ զպարտս իւր, և անգիտանայ զհատուցանելն, պարտական է հատուցանելոյ։ իսկ որ չգիտէ ստուգիւ զպարտս իւր, կամ աննենգ մտօք ժառանգէ ինչ, ոչ պարտի առ երկբայութեան հատուցանել զանստոյգ պարտս կամ զժառանգութիւն իւր տալ այլում։ վասն զի տէրութիւնն այն տայ նմա իրաւունս։ զի ցորչափ չկարիցէ այլ ոք զհակառակն յայտնի ցուցանել՝ չկորուսանէ նա զիրաւունս իւր։ Ոմն որոյ ասէ սուրբն Գրիգոսիոս. "Ցորչափ անգիտանայ ոք զի այլոց ուրուք է զոր ունի, ինքն է նորին տէր օրինաւոր,,։ Ընդ հակառակն եթէ երկբայանօք ժառանգեալ ուրուք ինչ իցէ՝ կասկածելով զօտարին գրաւեալ, պարտի հատուցանել զայն նմա հանդերձ փոխարինաւ յամելոյն զհատուցումն, եթէ գիտելով անփոյթ լեալ իցէ ի քննել և ի հատուցանել։

ՑՕԴՈՒԱԾ Դ

21։ Հաւանական խիղճ մտաց։
22։ Ի հաւատոյս։
23։ Ի բժշկութեան։
24։ Ի դատաստանի։
25–27։ Ի սուրբ խորհուրդս։
28։ Ի տոյժս այլոց։
29։ Ասպիճանք հաւանականութեան։
30։ Նուազ հաւանական։
31։ Ամենահաւանական։
32 41։ Հաւանական կամ հաւանականագոյն։

21։ Հաւանական խիղճ մտաց է, յորժամ միտք մեր հաւանական կարծեօք համարի ինչ օրինաւոր։ Իսկ հաւանական կարծիք է՝ որ յենու ի հաստատուն ինչ պատճառ համղիչ խոհեմ մտաց։ Ընդ դիտելի է՝ զի ոչ է օրէն հաւանական կարծեօք գործել ինչ, ուր վտանգ իցէ վնասու այլոց։ զի այլ է ունել իրաւունս գործելոյ ինչ, և այլ՝ գործելոյ զայն հանդերձ վնասու այլոց, այսինքն յորժամ զհետ գայ վնաս այլոց, եթէ հաւանականն այն կարծիք՝ որով գործեալքն՝ լիցէ հնդա-

ըիտ։ Ոչինակ ինն՝ եթէ որսորդ նշմարիցէ ինչ՝ ի քա-
ցեայ՝ երկ նմա հաւանականաբար թուեցեալ քան թէ
մարդ, չէ նմա օրէն հարկանել զայն մինչեւ ստուգեալ
զի չիցէ մարդ։ Նոյնութիւնն այն թէպետեւ ա-
ռաւելուցու քան զհաւանական, ցորչափ չգիտիցէ ան-
երկբայելի՝ զի է այն երկ, անօրինի՝ ի հարկանելն
զայն. զի եթէ յանկարծ փոխանակ երկոյ իցէ մարդ,
մարդասպան գտանիցի։

22. Նմանի զհետ գայ նախ՝ զի՝ ի հաւատոյս և յիրս
իրկութեան ոչ է օրէն վարիլ, ոչ միայն կարծեօք
նուազ հաւանականաւ՝ որ գտատպարտեալ իսկ է՝ ի
սուրբ եկեղեցւոյ, այլ և ոչ հաւանականաւ, և ոչ իսկ
հաւանականագունիւ։ Ոչ՝ ի պարտ է յայսպիսիս ապա-
հովագոյն կարծեօք վարել, վասն որոյ և զապահովա-
գոյնն՝ ի կրօնս ունել՝ որ են հաւատք կաթողիկէ հռո-
մէական սուրբ եկեղեցւոյ. զի որչափ և հաւանական և
հաւանականագոյն իսկ այլոց ուրուք՝ ի կրօնից Թուեսցի
ուղղութիւն, այլ ղայւիտենական փրկութիւն ոչ է օ-
րէն դնել և՝ ի դոյն ինչ և՝ ի հեռաւոր վտանգ։

23. Ոչ՝ հետ գայ երկրորդ՝ զի պարտ է բժշկի, զա-
պահովագոյնս՝ ի դեղոյ տալ հիւանդին, և չէ նմա օրէն
մատուցանել առ՝ ի փորձ դեղ այնպիսի՝ որ մարթի վը-
նասակար գոլ։ Նայց եթէ չիցէ հիւանդին յոյս ապրա-
նաց, և յուսայցէ որ զնա վտանգաւոր ինչ դեղով ապ-
րեցուցանել՝ որով մարթ իցէ կանխել մահու հիւան-
դին, օրէն արդեօք իցէ՝ ի դեպս յայսպիսիս՝ ի կիր ար-
կանել դեղ վտանգաւոր։ — Ոմանք՝ ի բարոյականաց
ոչ օրէն համարին, այլ առաւելագոյնք՝ ի նոցանէ օրի-
նաւոր. զի գոգցես ինն և բնութիւնն ինքնին խնդրէ
զսուղ ինչ մասն կենաց իւրոց անդամոյ դնել՝ ի վտան-
գի՝ առ՝ ի չկորուսանելոյ զայն բովանդակ։

24. Ոչ՝ հետ գայ երրորդ՝ զի պարտ է դատաւորի հա-
ւանականագոյն կարծեօք վարել. քանզի հրամայեն նմա
օրէնք աստուածայինք և մարդկայինք՝ իւրաքանչիւր ու-
մեք տալ զիրաւունս ըստ չափոյ հաւանականութեան
պատճառաց, որովք պահանջէ նա զիրաւունս իւր։
Ոմանն որոյ դատապարտեալ է՝ ի սուրբ եկեղեցւոյ ա-
սել. "Հաւանական է կարել՝ դատաւորի կարծեօք, և-
և նուազ հաւանականաւ, դատել,, Ոմանք եթէ պարտա-

օրինն ըստ օրինի իւրում ժառանգեալ զայն՝ զորմէ և վէճն, հաւանականագոյն իսկ կարծիք չբաւեն առ ի բառնալ զայն ի նմանէ, այլ խնդրին պատճառք յաղթահարիչք մտաց։ Ի որպէս ի վեր անդր (20.) ասացաք, ա- մենայն ումեք իրաւունք են պահելոյ որ ինչ ըստ օրինի ստացեալն է, չև ցուցեալ պահանջողին զիրաւունս իւր։

25. Ոչ հետ գայ չորրորդ՝ զի ի վաւերականութիւն սուրբ խորհրդոյ ոչ է օրէն հաւանական կարծեօք վա- րել, և ոչ հաւանականագունիւ, այլ պարտ է զապա- հովագոյն և զբարեպաշտ ստոյգ կարծիս ունել։ Հա- կառակն սորին կարծիք դատապարտեալ է ի սուրբ և- կեղեցւոյ, ի բաց առեալ զերկուսին զյաւսոսիկ դէպս.

26. Ի՝ յորժամ երախային վտանգ մահու ի վերայ կայցէ, և գոյացութիւն ջրոյ առ ի մկրտութիւն իցէ երկբայելի։ Ի օրէն է յայնժամ և և նուազ հաւա- նականաւ վարել կարծեօք, այլ պայմանաւ պարտ է զմկրտութիւնն առնել, այսինքն՝ զի եթէ հեղանիւթն այն զօրէ փոխանակ ջրոյ։ Պայմանաւս այսուիկ ոչ ինչ անարգութիւն հաստատէ խորհրդոյն՝ եթէ անվաւեր լինի մկրտութիւնն, և հարկն անօրինէ զպայմանաւ կատա- րումն խորհրդոյն։

27. Ի իւս և՝ ուր համարելի է զի եկեղեցի սուրբ ընծայս զթերին, եթէ երբեք անվաւեր խորհուրդն գը- տանիցի. օրինակ լիցի՝ եթէ կասկած ի միջի կայցէ ար- գել ինչ պակին գոլոյ, օրէն է համարել զի եկեղեցի սուրբ անօրինիցէ զարգել այդպիսի երկբայական առ ի վաւերականութիւն պակին։ Նոյնպէս և ի խորհուրդ ապաշխարութեան եթէ հաւանական է ունել խոստո- վանահօր իշխանութիւն արձակելոյ, ընծ զթերին եկե- ղեցի սուրբ՝ եթէ գուցէ ինչ վտանգ անվաւեր գոլոյ արձակմանն։ Այլ Հայր Ալբերտ և այլք ոչ սակաւք յաստուածաբանից ամիսփեն զյաւսոսիկ ի դէպս հար- կաւորութեան կամ օգտի իրիք մեծի։

28. Որպէս ի վեր անդր (21.) ասացաք, ոչ է օրէն հաւանական կարծեօք վարել ուր այլոյ ուրուք ինչ ինաս իրաւանց։ Այլ պարտ է զի ժառանգութիւն իրաւանց նորա ինչ ստոյգ, և չկայ և օգուտ մեծ ի ինասելոյ իրաւանց նորա. որպէս եթէ որ ի քաղաքի ուրեք ջարտամբաւեալ ինչ իւիք, և վտանգ ի միջի

կայցէ միաբանակար լինելոյ նորա այլուր, յոյժ հաւանական է՝ զի օրէնն էցէ յայնպիսի դէպս յայտնել զայն յանդգնեալ նորա։

29. Յայս վայր զերծաց որ միաբանեն այլում կամ բառնան զերբաւունս նորա. իսկ ուր չիցէ այս վտանգ, օրէնն է վարել հաւանական կարծեօք։ Այլ առ՝ի գիտել՝ թէ ո՛ր աստիճան հաւանականութեան օրինաւոր կացուցանէ զգործ ինչ, պարտ է զանազանել զաստիճանս նորին. որ են՝ նուաղ հաւանական, հաւանական, հաւանականագոյն, ամենահաւանական, և բարձրագէս սպոյգ։

Ա. Նուաղ հաւանական է՝ որ ունի ինչ հիմն հաստատութեան, այլ ոչ համոզէ զխոհական միտս։

Բ. Հաւանական է՝ ուր թէպէտ ներքին պատճառք, և կամ արտաքինովք՝ այսինքն բարեյականաց վկայութեամբ համոզին խոհական միտք, այլ ոչ առանց ինչ կասկածանաց ընդ ճշմարտութիւն հակառակ կարծեաց։

Գ. Հաւանականագոյն է՝ որ թէպէտև հաստատագոյն ունի հիմն, այլ և հակառակ նորին կարծիք կայ միայ հաւանական։

Դ. Ամենահաւանական է՝ որ այնպիսի ունի հաստատութիւն, զի հակառակ նորին կարծիք ոչ ևս թուի հաւանական։ Այլ թէպէտ ամենահաւանական՝ բայց քանզի կայ և միայ միշտ՝ի կարգի հաւանականութեան, ոչ է մարթ խոհական միաց անկասկած գոլ ամենևին ճշմարտութենէ հակառակ կարծեաց։

Ե. Իսկ բարեյապէս ստոյգ այն է՝ ուր ոչ ևս միայ ինչ կասկած վտանգի, զի հակառակն նորին կարծիք իցէ ճշմարիտ։

30. Ո՞յսոսիկ քաջ զանազանեալ, ասեմք նախ՝ զի նուազ հաւանական կարծեօք ոչ է մարթ գործել ինչ, զի վտանգ մեծ է սխալելոյ. վասն որոյ յեկեղեցւոյ սըրբոյ դատապարտեալ է ասել. "Ինդհանրապէս ուր ներքին կամ արտաքին հաւանականութեամբ գործեմք ինչ, որչափ և նուազ լցէ հաւանականութիւն գործոյն, խոհեմութեամբ միշտ գործեմք,,։ Այլ պատճառք, զի նուազն այն հաւանականութիւն չհամարի՝ի հաւանականութիւն, որպէս նուազն խոհեմութիւն և նուազն զօրութիւն ոչ ևս է խոհեմութիւն և զօրութիւն, այլ

մանաւանդ անխոհեմութիւն և տկարութիւն։ Ոմանք
է ասել ուր հաւանականին հակառակ կարծիք՝ զօրա-
ւորագոյն է և հաւանականագոյն. վասն զի յայնժամ
հաւանականութիւն նորա նուազէ և լինի երկբայելի,
և ոչ ևս օրէն է վարել նովաւ։

31. Երկրորդ՝ զի ամենահաւանական կարծեաց օ-
րէն է վարել, զի ՚ի սրբոյ եկեղեցւոյ դատապարտեալ
է ասել. "Ոչ է օրէն զհետ երթալ հաւանական
կարծեաց, ևս և ամենահաւանականին"։ Ոչ բաւա-
կանապէս թուի զգուշացեալ այսմ վարդապետու-
թեան Պրոսպեր Ֆանեանոյ, ուր ասէ. "Պարտ է
այնպէս հանգչել մտաց, զի զարդեանց իրացն լիցի ան-
կասկած, այսինքն զի ի նմա ստուգութիւն բարոյա-
կան՝ թէպէտ և ոչ բացայայտ և ապացուցական"։
Այս վարդապետութիւն մերժէ ՚ի բաց զամենայն
հաւանականութիւն, և ոչ իսկ զամենահաւանականն
համարի բաւական։ Այնպէս և Հաբերտ քաջ ա-
տուածաբան՝ ՚ի մանկունս յայսմիկ ոչ բաւականապէս
զտանի զգուշացեալ ուր ասէ. "Աստ է բարութիւն
խղճի մտաց՝ որ հաստատի ՚ի հաւանական կարծիս,
եթէ չիցէ նորա ստուգութիւն բարոյական"։ այս-
ինքն՝ որպէս ինքնին իսկ բացատրէ, եթէ հաւանա-
կանն այն կարծիք ոչ ՚ի բաց բառնայցէ զամենայն կաս-
կած սխալանաց, և հակառակն նորին կարծիք չկորու-
սանիցէ զամենայն հաւանականութիւն։

32. Երրորդ՝ զի և որ երևելապէս հաւանականն
թուի կարծիք, օրէն է վարել նովաւ ՚ի նպաստ ազա-
տութեան, ուր հաւանականագոյնն քան զհակառակ կար-
ծիսն լիցի, և կամ գէթ հաւասարապէս նպաստաւոր
օրինաց։ Զանազի երկու հակառակ կարծիք, ոյոց եր-
կաքանչիւր երևելապէս լիցի հաստատութիւն, հաւա-
սարապէս գտանին հաւանական. զի դուզնաքեայն այն
խտիր, եթէ կայցէ ՚ի միջի, չհամարի ինչ ըստ առա-
ծին. "Ոյոյն ինչ՝ համարի առ ոչ ինչ"։

Այս վարդապետութիւն բազում պատճառօք և
վկայութեամբք հաստատէ սուրբն Ալֆոնսոս յիւրումն
ընդարձակ բարոյականի, մանաւանդ այնու՝ զի օրէնք
երկբայականք չկարեն պարտս ՚ի վերայ ածել ստոյգս
ազատութեան մարդոյ։

33. Եչ զօրէ ասել առ այս, զի մարդ ընդ յաւիտեանական օրինաք ծնեալ, պարտի յերկբայս նախադասել զօրինս Աստուծոյ քան զազատութիւն իւր, իբր զի նախ իսկ քան զազատութիւն իւր են իրաւունք աստուածայինք, և չգործել աւելի ինչ քան զոր ներէ Աստուած դրականապէս. ուստի զՀետ գայ վկարել նմա յերկբայս հաւանական կարծեօք՝ի կիր արկանել զազատութիւն, թէպետև հաւանականագոյն իցէ ունել իւր անդ ազատութիւն քան չունել, եթէ չիցէ նմա ստուգութիւն բարոյական և կամ գէթ ծայրագոյն հաւանականութիւն:

Պատասխանեմք առ այս, զի թէպետև ընդ իշխանութեամբն Աստուծոյ ծնանի մարդ, և պարտի հնազանդել նմա յամենայնի՝ որ ինչ և հրամայեսցէ, այլ գործք իւր ոչ են կապեալք՝ի ծնէ ընդ առանձինն ինչ օրինօք: Եթէ արդարև էր օրէն մարդոյ գործել ինչ որ չիցէ ներեալ նմա յԱստուծոյ յայտնապէս, ոչ ևս տայր նմա Աստուած պատուիրանս չգողանալոյ, չսպանանելոյ և այլն: Այլ Աստուած արար ազատ զմարդ, և ետ նմա պատուիրանս՝ի պահպանութիւն, որպէս և ասեն գիրք. "Արար զմարդ, և եթող զնա՝ի ձեռս կամաց իւրոց,,: Ուստի յաւելու սուրբ Գուլիելմոս. "Որ ինչ ոչ է արգելեալ յօրինաց, օրինաւոր է,,:

34. Այս ուրեմն թէպետև օրէնք աստուածայինք յաւիտենականք են, իսկ ազատութիւն մարդկային ետոյ, այլ այս յետնութիւն ըստ ժամանակի և եթէ է. զի ըստ բնութեան՝ յետոյ են օրէնք և կամ գէթ պարտք պահպանութեան օրինաց քան զազատութիւն մարդոյ: Վանզի կանխէ հպատակութիւն քան զընդունելութիւն օրինաց, և Հարկ է զի իցեն նախ հպատակք՝ յորոց վերայ դիցին ապա օրէնք. որպէս զի օրէնք աստուածայինք թէպետև յաւիտենականք են, այլ զլինելութիւն մարդոյ Համարին յառաջագոյն, որպէս և սուրբ Գուլիելմոսն ասէ: Ըստ այսմ՝ ազատութիւն մարդոյ առաջի Աստուծոյ կանխէ իմայականապէս քան զօրէնս՝ որ ամփոփեն զազատութիւն նորա. վասն որոյ օրէնք, որ չեն ստոյգ, ոչ ածեն՝ի վերայ նորա պարտս: Ընդդիմիր Վասնոյ այսուիկ զդէմ ունի Սկովտի, որ պարտ Համարէր մեղաւորի զներգործութիւն զղջման յամենայն աւուրս

տօնից. "Ոչ ոք մարդկային և ոչ աւետարանական օրէնք չէ տալիս զայդ ,,:

35. Այլ համարեալ իսկ զօրէնս յառաջ քան զաշխատութիւն մարդոյ, այսու ամենայնիւ ոչ գտանէր մարդ պարտական օրինաց մինչեւ յայտնեալ նմա այն: Պատուիրեաց ի յայտ առնել և ի դնել ի վերայ մարդոյ աղատի զօրէնս, առ ի զրկելոյ զնա յաշխատութենէն՝ պարտ է զի օրէնքն իցեն աներկբայելիք. և այս է զոր ասէն սուրբ Գրիչքն. "Յորչափ հրատարակումն օրինաց կարևոր է առ ի տալոյ նմա զօրութիւն և իրաւունս, որպէս ապա մարթ իցէ օրէնս համարել զյաւիտենական օրէնս՝ որ չէին հրատարակեալ մարդոյ, զի և չէր իսկ մարդ.... Ոչ ասն զի թէպէտ և յաստուածակոյս կողմանէ անտի մնածեալ՝ հրատարակեալ էին օրէնք, այլ ի կողմանէ մարդոյ՝ որում հարկ էր յայտ առնել զայն առ ի կացուցանել զնա պարտական այնմ, ոչ էր մարթ հրատարակմանն այնմիկ յաւիտենական գոլ,,: Ոչ ասն որոյ յաւելու Աիլուիոս. "Օրէնք աստուածայինք յայնժամ հրատարակին մարդոյ, յորժամ ձանաչէ սա զայնս ,,:

36. Իսկ զոր ասէն թէ բնական և դրական օրէնք, որք վասն մարդոյ սահմանեալ են, վաղ իսկ հրատարակեալ և յայտնի լեալ՝ ոչ ևս անկանին ընդ երկբայութեամբ, ոչ ինչ մերում կարծեաց ստանանք: Ո՞ւ թէ պէտև օրէնքն ինքնին յայտնի իցեն և աներկբայելի, այլ ըստ յարակից հանգամանացն չեն այնպիսիք. վասն որոյ ուր երկբայելի է թէ այս ինչ կամ այն դէպք իցէ՞ն ընդ այս ինչ օրինաք, օրէնքն այն գտանին երկբայելի վասն այնր դիպուածոյ, և ոչ ի վերայ աճեն պարտս: Օրինակ ինն՝ յայտնի են օրէնք ընդդէմ տոկոսեաց. բայց ուր հաւանական իցէ այսր իրիք կամ այնր դաշինն ոչ գոլ տոկոսիս, անդ օրէնքն յայտնիք՝ որ արգելուն զտոկոսիս՝ լինին երկբայելի վասն այնր դաշինն. և յորչափ երկբայելի՞է դաշինն այնորիկ գոլ տոկոսիս, կարծիք միայն են հակառակել նորա յայտնի ինչ օրինաց, և օրէնքն այն գտանին վասն նորա անյայտ: Ո՞ւ ասել թէ այս կամ այն ինչ դէպք երկբայելի է թէ անկանին ընդ այս ինչ օրինաք, հաւասար է ասելոյ թէ այս ինչ օրէնք յայս ինչ դէպս երկբայելի են. իսկ օրէնք

երկբայելի ոչ ածեն պարտս ՚ի վերայ։ Ա՚ան գի եթէ օրէնք երկբայականք պարտս ՚ի վերայ ածէին ապահովագոյն կարծեաց հետևել, պարտքն այն ոչ ևս լինէր պահպանութիւն օրինաց՝ որ ՚ի դէպս անդ երկբայելի է, այլ պահպանութիւն կարծեացն՝ որ զայն դէպս համարի ընդ այնու օրինօք։ Ա՚րդ ո՛ւր երբեք հրամայիցեն օրէնք հնազանդել կարծեաց՝ որ խստութեան օրինաց պաշտպան կան, երբ օրէնք երկբայելի վկարեն համարիլ ընդ օրէնս և կամ դէթ պարտս ՚ի վերայ ածել։

Դ՚ուցուք ևս գի այն դէպք երկբայելի արդարև ընդ այնու օրինօք իցեն. սակայն երկբայութիւն ևեթ զերծ կացուցանէ զայն յօրինաց անտի. քանզի յերկբայս ոչ ածեն օրէնք պարտս ՚ի վերայ, և ոչ ընդդէմ լինչ կամացն Ա՚ստուծոյ առնէ ոք այնուիկ, որպէս սուրբ Ա՚գուստինոսին ասէ. գի որ չգիտէ ոք գիւտն Ա՚ստուծոյ, չէ իսկ պարտական առնելոյ զայն։ Ա՚ԹԷ դոյին իսկ օրէնք այդպիսի՝ զապահովագոյն կարծիս ունելոյ յերկբայս, օրէնքն այն անստոյգ ոչ կարէին պարտս ՚ի վերայ ածել այդմ կարծեաց հետևելոյ։ Ա՚պա ուրեմն ուր անստոյգ են օրէնք կամ դրեթէ անստոյգ, վկարեն խոտիանել զաղատութիւն մարդոյ, և դատաւիճք ապահով գի օրինաւոր է զոր գործեալքն, ըստ վարդապետութեան սրբոյ Ա՚գուստինոսի՝ զոր ՚ի վեր անդր ասացաք. “Ո՚ր լինչ ոչ է արգելեալ յօրինաց, օրինաւոր է,,։

37. Ա՚այց ոմանք յօրինս համարին զապահովագոյն կարծիս ունել, և առ այս ածեն վկայութիւնս յեկեղեցական կանոնաց ուստեք և ՚ի Հարց՝ Թէ յերկբայականս՝ պարտ իցէ գնալ ընդ աներկևան Ճանապարհ։ Ա՚այց նոքին իսկ Հարքն՝ յորոց ածեն վկայութիւնս՝ որպէս սուրբն Պոնաւենթուրա, Կերսոն, Վիլհելմ Աւվերնեթրոյ և այլք, յայտ առնեն գի կանոնն այն ոչ է պատուիրան՝ այլ խրատ միայն. գի սուրբն Ա՚նտոնինոս յայտնի իսկ ասէ. “Ո՚ապահովագոյնն ունել ուղի՝ խրատ է և ոչ պատուիրան,,։ Ա՚ւ այլուր ասէ. “Վ՚ան առաւելագոյն վարձուց կարևոր է, և ոչ վասն փրկութեան,,։ Ա՚ւ դարձեալ այլուր. “Կանոնդ այդ վասն բոլորովին երկբայելեաց է, և ոչ վասն հաւանական կարծեաց,,։

Ա՚րդ Թէպետև օրէնք էին հետևել ապահովագոյն կարծեաց, և օրէնք ընդհանուր յամենայն իսկ ՚ի դէպս,

ոչ միայն ՚ի բոլորովին երկբայականս՝ այլ և ՚ի հաւա-
նական կարծիս, այսչափ մեկնութիւնք աստուածաբա-
նից գէթ երկբայելի առնէին զայն. իսկ օրէնք երկբա-
յականք և անստոյգ՝ չկարեն պարտս ՚ի վերայ ածել։

38. Իսկ որոց զխստագոյն կարծիս ապահովագոյն
համարին, Հայրն Մարտինոս Տեփրատոյ դոմինի-
կեան քաջ աստուածաբան ՚ի Հնդեաց զօրինայ երկբա-
յելեաց բազում խոհականութեամբ ասէ. "Լիդու
խստութեամբ ոչ եթէ յաջողէ փրկութիւն հոգւոց,
այլ մանաւանդ խափանի,,։ Եւ միւս ոմն ՚ի դոմինի-
կեանց աստուածաբանից Հայրն Պանքել ասէ. "Ծո-
պէտև ապահովագոյն է առնել որ ինչ հաւանակա-
նագոյն և ապահովագոյն կարծիք ուսուցանեն, սա-
կայն չէ ապահովագոյն պարտ անձին համարել զայն.
այլ ապահովագոյն այն իսկ է, չատանալ ՚ի պատուի-
րանս կարծեօք՝ որ արդարև իցէ հաւանական, իսկ ՚ի
խրատս հաւանականագունին վարել։ Զի առ ՚ի պար-
տաւորել զնիղձ մտաց ընդ մեղաց, խնդրի պարտակա-
նութիւն բարոյապէս ստոյգ. իսկ ուր չիցէ սա, ոչ է
օրէն զբեռն զայն դնել ՚ի վերայ խղճի մտաց, վասն զի
բարոյապէս է ստոյգ ունել մեզ ազատութիւն ընդու-
նելոյ ՚ի կարծեաց որ առաւել թուիցի մեզ ընդունելի։

Եւ արդարև զիարդ մարթ իցէ համարել ապահո-
վագոյն զնիղձ մտաց խոստովանահօր՝ որ հաւանական
ինչ կարծեաց զհետ երթալով՝ չարձակէ զապաշխա-
րողն, որում խոստովանութիւն մեղացն տայ յայտնի
իրաւունս ընդունելոյ զարձակումն։ Կամ որ առաւելա-
գոյն ապահովութիւն իցէ խոստովանահօր ՚ի յայտնել
ապաշխարողին զծանրութիւն մեղացն՝ յորում կայ նա
անգիտութեամբ, յորժամ յայտնութեամբն այնուիկ
մեղքն նիւթական և անձնաս ումեք՝ փոխի ՚ի տեսակա-
ւոր, և որ անգիտութեամբն ՚ի չնորհս Աստուծոյ էր՝
զրկի ՚ի չնորհայ անտի։ Ասա այսմ իմա և զայլոց խոս-
տագոյն կարծեաց։

39. Ասացեալ համարեաւ զի առ ՚ի գործել ըստ օրինի՝
պարտ իցէ ունել բարոյական ստուգութիւն ՚ի գործ-
նականն դատման ընդ բարութիւն գործոյն, զհետ բե-
րեն նոքա զառարկութիւնս զայս կարծեցեալ անլուծա-
նելի. Եթէ տեսական դատումն իրիք ՚ի կարծեաց հա-

ւանական և է և անստոյգ, գործնականին դատման՝ որ ՚ի հաւանական կարծեաց անտի գայ յառաջ՝ պրպէս մարթ իցէ ունել ստուգութիւն բարոյական, որ խնդրի առ ՚ի գործել ըստ օրինի. գործնականն դատումն պրպէս այլազան ՚ի տեսականէն կարիցէ գոլ։ — Ա.յլ ըզպատասխանի առարկութեանս հատուցեալ իսկ է մեր յառաջագոյն. զի պատճառք՝ որ հային ՚ի ձշմարտութիւն իրիք և առնեն զայն հաւանական, այլ են ՚ի պատճառաց՝ որ հային ՚ի բարութիւն գործոյն, և տան մեզ ստուգութիւն բարոյական՝ գործելոյ ըստ օրինի։ Որինակ իմն. այլ է պատճառ՝ որ ցուցանէ հաւանական զարդարութիւն այսր կամ այնր պատերազմի, և այլ՝ որ ցուցանէ օրինաւոր հպատակի, և պարտական իսկ առնէ զնա զինուորել ՚ի պատերազմ՝ որոյ երկբայելի է արդարութիւն. քանզի պատճառ երկրորդիս այսորիկ է հրաման թագաւորին։ Վասն որոյ ոչ իրաւացի է ասել՝ թէ անմարթ իցէ գործնականին դատման գոլ ստոյգ կամ այլազան ՚ի տեսականէն, յորժամ սա իցէ անբաւոյգ. զի ահա ասացեալ պատերազմիս հաւանական է գոլով արդարութիւն, տեսական դատումն հպատակին հաւանականաբար է կարէ զպատերազմն զայն համարել արդար. այլ գործնական դատմամբ դատի ստուգիւ՝ զի ոչ միայն կարէ ըստ օրինի, այլ և պարտի իսկ զինուորել ՚ի պատերազմն յայն ըստ հրամանի թագաւորին, որում պարտի հնազանդել յամենայնի՝ որ չիցէ ստուգիւ անիրաւ։

40. *Ա.յլ որպէս ոչ է գոլոյն կուսակցացն խաղութեան դատապարտել առանց ստուգութեան զկարծիս՝ որ ՚ի զօրաւոր պատճառս և ՚ի վկայութիւնս յենուն, նոյնպէս և ՚ի հակառակէն եպերելն են՝ որք առ ՚ի հաւանական համարել լինէ՝ շատ համարին զկարծիս սակաւուց ոմանց բարոյականաց աննշանից, և վասն մարդասիրութեան բազում այն է՝ զի ՚ի թուլութիւն զառածանին։ Պարտ է խոստովանահօր չև ընտրեալ ըզկարծիս լինէ՝ քննել զներքին պատճառս այնորիկ. և ՚ի գտանել լինէ ապացոյց ընդդէմ ազատութեան, և ոչ լինէ առ այն բարոյապէս հաւասարակշիռ պատասխանի, պարտ է նմա նախադասել զայն քան զվկայութիւնս բարոյականաց, և սև երևելեաց. եթէ ոչ այնչափ և այն-*

պիսի իցեն վկայութիւնք որք քան զկարծեցեալ ապացոյց իւր գեր ՚ի վերոյ անցանիցեն։

41. Այսպէս ՚ի տեսական մասին. իսկ ՚ի գործնականին, յորժամ որ տարակուսի՝ ՚ի խնդիր ԹԷ ՚ի քաղցրագոյնն կոյս հակամտել, զայս պարտ է նմա ունել կանոն։ Ուր առաջի կայցէ զերծուցանել զապաշխարօղն ՚ի վտանգէ տեսական մեղաց, պարտ է խոստովանահօր վարել քաղցրութեամբ ըստ ներելոյ քրիստոնէական խոհեմութեան. իսկ ուր քաղցրութեամբ յաճախէ վտանգ տեսական մեղաց, որպիսի են կարծիք ինչ Թոյլք յաղագս խոշընդոյ ՚ի հրապուրանաց մեղաց, լաւ է խոստովանահօր և պարտ իսկ՝ վարել խստութեամբ առ ՚ի պահել զապաշխարօղն ՚ի ընդհարս Աստուածոյ։ Այլ կաըևոր համարիմ զեկուցանել աստանկին, զի ուր ուրեք հաւանականագոյն զկարծիս ինչ ասեմ, չկամիմ այնու հաւանական զներհակ կարծիսն համարել, այլ զի չկամիմ դատապարտել զայն իբր անհաւանական՝ Թողլով զայն այլոց ՚ի դատել։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՑԱՂԱԳՍ ՕՐԻՆԱՑ

ՑՕԴՈՒԱԾ Ա.

1–3. Զինչ են օրէնք և քանիսպատիկ:
4. Պայմանք օրինաց:
5–8. Հրատարակուածն օրինաց.
9. 10. Ընդունելութիւն օրինաց:
11. Եթէ զամն տան չկոչէ լեալ ընդունելի:
12. Եթէ ի բազմայ լեալ անընդունելի:

1. Սահման օրինայ է՝ կանոն ուղիղ գործելոյ: Ընդ օրէնս և ընդ պատուիրան այս ևեթ է խտիր, զի օրէնք դնին հասարակաց, իսկ պատուիրանք իւրաքանչիւր ումեք: Նա բաժանին օրէնք ի յաւիտենական, ի բնական և ի դրական: Յաւիտենական օրէնք են խմաստութիւնն Աստուծոյ՝ որոյ սահմանեալ է մարդկան կանոնս ուղիղ գործելոյ, պարտ ի վերայ եդեալ նոցա պահելոյ զայս: Բնական օրէնք են նոքին յաւիտենականքն, որ յաստուածային կողմանէ նկատեալ՝ ասին յաւիտենականք, իսկ որպէս լուսով բանին յայտնեալ մարդկան՝ ասին բնականք, որպիսի են տասնաբանեայ պատուիրանք: Իսկ դրական օրէնք են, որ թէպէտ ոչ յայտնեալ ի բնութենէ՝ այլ համեմատ են բնական օրինաց. և այսու մանաւանդ զանազանին յիրերաց, զի որ ինչ ի բնականն օրինաց են արգելեալ, վասն զի չար են՝ վասն այնորիկ են արգելեալ. իսկ ի դրականն օրինաց արգելեալքն, վասն զի արգելեալ են՝ վասն այնորիկ են չար:

2. Դրական օրէնք բաժանին յասպուածային և ի մարդկային: Ընդ աստուածայնովքն անկանին ամենայն պատուիրանք հին կտակարանին ծիսականք և դատաստանականք՝ որ դադարեցին մահուամբն Քրիստոսի, և կացին միացին բարոյականքն ևեթ՝ որ են տասնաբանեայ պատուիրանք: Ընդ աստուածայնովքն անկանին և ամենայն հրամանք առ սուրբ խորհուրդս նորոյ կտակարանին պատկանաւորք: Իսկ դրական օրէնք մարդ-

կայինք քաժանին յԱրաւունս ազգաց, և յԱկեղեցական և ի դաղափարական օրէնս ։

3. Արաւունս ազգաց կոչեմք որ ինչ ամենայն ազգաց հաւանութեամբ սահմանեալ և ընդունելի լեալ են. որպէս օրէնք արդար պատերազմի, որպէս անտէրունչ իրաց նախաժաման ստացողին գոլ, և այլն ։ Ակեղեցական օրէնք են, զորս եկեղեցւոյ առ ի հոգևոր տեսչութիւն քրիստոնէական միաբանութեան սահմանեալ է, որպիսիք են Ա Ձռականքն, Ա եգերորդքն վձռականք, Աղեմեանք, Ընտրուղիք, և ամենայն կնդակք քահանայապետականք՝ պատուիրանադիրք հանուրց հաւատացելոց ։ Քաղաքական օրէնք են, զորս թագաւորաց առ ի քաղաքական տեսչութիւն ժողովրդոյ սահմանեալ է. այսոքիկ ըստ տեղեաց իւրաքանչիւր զանազանին. այլ հասարակաց օրէնք քաղաքականք բովանդակին ի մատեանս իրաւագիտութեան ։

4. Ի կարող լինելոց օրինաց պարտ ի վերայ ածել, պարտ է նախ՝ զի իցեն բարի, այսինքն համաձայն կրօնից ։ Արկրորդ՝ զի իցեն արդար, և մի հարբատահարիչ իրաւանց հպատակաց ։ Արրորդ՝ զի իցեն կարելի բարոյապէս, այսինքն զի մի յոյժ դժուարին իցէ կատարել զայնս ըստ տեղւոյն և ըստ ժամանակի ։ Չորրորդ՝ զի օգտակար իցեն հասարակաց, և օգուտ նոցա իցէ երևելի ։ Հինգերորդ՝ զի իցեն հարկաւոր առ ի խափանել զյաճախագիպ ինչ չարիս ։ Ա եգերորդ՝ զի յօրինագրէ իցեն սահմանեալ, և առ ի դնելոց պարտս ի վերայ հպատակաց ։ Եօթներորդ՝ զի իցեն դիւրին, և չիցէ մարթ կամակորել զայնս առ ի խաբէութիւն, որով միասակարք իցեն քան օգտակարք ։

5. Ի վերայ այսոցիկ կարևոր է օրինաց և հրատարակութին առ ի պարտս ի վերայ ածել, որպէս ամենայն բարոյականք ուսուցանեն. վասն որոյ ասէ սուրբ Աւգուստինոս. “Ոչ այլ ինչ են օրէնք, բայց պատուիրանք հրատարակեալք,” ։ Ոի որովհետև օրէնք կանոն են հասարակաց, և ամենեցուն պարտ է հնազանդել օրինաց, եթէ գէթ մեծի մասին հասարակաց չիցեն ծանուցեալ՝ զիարդ մարթ իցէ նոցա հպատակել այնց ։

6. Ումն իրի պարտ է կայսերական օրինաց հրատարակել յամենայն գաւառս և ի մայրաքաղաքս՝ որ ընդ

իշխանութեամբ կայսեր են. և յետ հրատարակելոյ իսկ խնդրին ամիսք երկու առ՝ի պարտս՝ի վերայ ածել Հպատակաց:

7. Բայց արդեօք օրէնք՝ի Հռոմայ քահանայապետացն և յայլոց ինքնիշխան Թագաւորաց Հաստատեալք ածիցե՞ն պարտս՝ի վերայ Հպատակաց առանց հրատարակելոյ ամենայն ուրեք: — Ի սակաւք յաստուածաբանից, և Հայրն իսկ Աւարկզ, կարևոր համարին զհրատարակումն. զի չէ հաւանական թէ սրբազան Պատն կամիցի պարտս՝ի վերայ ածել որոց չիցեն օրէնք իւր ծանօթ՝ի Հռովմ և եթէ հրատարակեալ: Բայց Հասարակաց և հաւանականադոյն կարծիք համարին պարտս՝ի վերայ ածել, եթէ՝ի մայրաքաղաքի եւեթ իցեն հրատարակեալ, մանաւանդ օրէնք քահանայապետականք:

8. Երկամեայ ևս ժամանակ յետ հրատարակելոյ օրինաց չհամարին ունակք կարևոր. բայց բաղումք և երևելիք յաստուածաբանից կարևոր համարին զայն, և յոյժ հաւանական են կարծիք նոցա: Ասն զի առանց ժամանակի անմարթ է օրինաց գալ՝ի ծանօթութիւն Հասարակաց. վասն որոյ եթէ չիք՝ի հրովարտակին սահման ժամանակի, պարտ է հետևել սահմանելոցն յարանց խնամոց, որպէս զի միւք ումեք լինի ըստ հաճոյից երկարաձգել զազատութիւն:

9. Արևո՞ր իցէ արդեօք զի ընդունելի լեալ իցեն օրէնք առ՝ի պարտս՝ի վերայ ածելոյ: — Յայտ իսկ է զի մեղանչեն որք չընդունիցին, եթէ զեկեղեցական և թէ զքաղաքական օրէնս՝ որ արդարք իցեն. զի հակառակն այսորիկ վարդապետութիւն դատապարտեալ է յեկեղեցւոյ. այսինքն անել զի "Ամեղանչէ ժողովուրդ՝ որ ոչն ընդունիցի, առանց իսկ պատճառի, զօրէնս հրատարակեալս յիշխանէն,,: Ասն որոյ երկբայելի այն եւեթ է՝ թէ արդեօք օրէնք չև ևս ընդունելի լեալ՝ ածիցե՞ն պարտս՝ի վերայ:

Պարտ է զանազանել՝ի մասինս յայսմիկ զեկեղեցական օրէնս՝ի քաղաքականն: Ասն քաղաքականին ասեն ունակք, զի չև ընդունելի լեալ՝ չածիցեն պարտս. քանզի իշխանք՝ի ժողովրդոց ունին զիշխանութիւն օրինադրութեան: Այլմահիկեան աստուածա-

բանք, և Յաքրուա իսկ, հաւանական համարին զայս կարծիս։ Բայց առաւելագոյնք յաստուածաբանից, ընդ որս և Սուարէզ, Փանցիոյ, Լայման, Սիլուեսթրոյ և Տիանա, զհակառակն հաստատեն. և հաւանականագոյն են կարծիք նոցա. զի օրէնք սահմանեալք ի մեծաւորաց և յիշխանաց, եթէ արդարք իցեն, յինքեանց իսկ ունին զզօրութիւն պարտս ի վերայ ածելոյ։

Իսկ ձեկեղեցական օրինաց չիք իսկ երկբայել. զի սրբազան Պապին իշխանութիւն է պարտս ի վերայ դնելոյ ամենայն հաւատացելոց, ազատօրէն և առանց պայմանի ընդունելութեան օրինացն ի նոցանէ։ Այսու զի սոցա է զի զիշխանութիւն օրէնսդրութեան ոչ ի հաւատացելոց ունի նա, այլ ի բանէն Քրիստոսի Աբածէա ղեկաբս իմ։ Որով և օրէնք սահմանեալք յեպիսկոպոսաց յիւրաքանչիւր Թեմս պարտ ի վերայ ածեն աներկբայելի, զի նոցին ևս իշխանութիւն ի Քրիստոսէ է, Թէպետև ոչ անմիջապէս։

10. Հանդերձ այսու ամենայնիւ ոչ սակաւք յաստուածաբանից ասեն, զի եկեղեցի որպէս մայր բարեդութ ոչ ածէ պարտս ի վերայ հաւատացելոց պահելոց զօրէնս՝ որ չիցէ լեալ ընդունելի։ Այլ լաւ ևս է հետևել կարծեաց Սուարէզի, Լայմանի, Ալմաինիկեանց և այլոց. զի որպէս ի վեր անդր ասացաք՝ ուր իրաւացի է հրաման մեծաւորի, պարտք են հպատակաց հնազանդելոց, և ոչ է կարծել զի մեծաւորն առ ի դիւրութիւն նոցա ազատս զնոսա ի պարտուց կացուցանիցէ։

11. Բայց դադարել ամենայն պարտ, նախ՝ եթէ ընդ տանամեայ ժամանակ չիցեն օրէնքն լեալ ընդունելի, որպէս գրեթէ ամենայն բարոյականք ընդունին։ Եւ եթէ ի սկզբան անդ լեալ իսկ առ ժամանակ մի ընդունելի, և ապա զամն տասն դադարեալ իցէ, հաւանական է զի և ոչ յայնժամ պարտս ի վերայ ածիցէ, որպէս հաստատեն Լեսիոյ, Ազորիոյ, Նաւարրոյ, Վատերիոփալ և այլք, ընդդէմ այնոցիկ՝ որ պահանջեն քառամեայ ժամանակ։ Այսու զի քաղաքական օրինաց այս է սահման, և վասն եկեղեցականաց չիք ինչ վճիռ ընդդէմ այնոցիկ լեալ։ Իսկ քառամեայ ժամանակին կանոն ոչ վասն եկեղեցական օրինաց է, այլ վասն անշարժ գոյից եկեղեցւոյ՝ ըստ օրինի ստացելոյ։

12. Երկրորդ՝ յորժամ մեծապատճի և ազգամիտ մարդիկ ժողովրդեան չկարեն լեալ օրէնքն ընդունելի. քանզի յայնժամ թէպետև ներկայ սովորութիւնն չկարէ լեալ՝ի նախադրութիւն, և առաջինքն չընդունողք օրինաց կարեն յանցաւորք, բայց ազատ գտանին այլք յօրինադրութենէ: Ոչ ան ազի իշխանին լռել և չպատուհասել զօրինազանցս յայտ իմն առնել չկամել պարտս՝ի վերայ դնել այլոց պահելոյ զօրէնս, զոր առաւելագոյնք՝ի ժողովրդենէ ոչ պահեն:

13. Երրորդ՝ դադարեն պարտք օրինապահութեան, որպէս Հայրն Մովսէս և կէսք՝ի բարեյականաց ասեն, յորժամ հակառակ սովորութեան են օրէնքն և դժուարինք առ՝ի պահել: Բայց Յաղմատիկեանք իմանատութեամբ ամիոփեն զայս ազատութիւն՝ի դէպս, յորում եթէ գիտեր օրէնադիրն զհակառակ սովորութիւնն և զդժուարութիւն և կամ զայլ յարակից հանգամանս, ոչ սահմաներ զօրէնսն: Պարտ է և՝ի խնդրել ժողովրդեան բառնալ զօրէնս ինչ, եթէ լուեսցէ յետ այսպիսի իշխանն առ օրինազանցս, յայտ առնէ հաւանական նաբար չկամել պարտս՝ի վերայ դնել այլոց, որպէս յօրինադիր՝ի բարեյականաց միաբանին:

ՅՕԴՈՒԱԾ Բ

14–16. Հրամայական օրինաց պարտք:
17. Կարիցէ՞ն հրամայել ներքին ներգործութեանց մարդոյ:
18. Եթէ ծանր նեղութիւն՝ի վերայ ածիցէ:
19. Կարիցէ՞ն օրէնք բառնալ զպարտս բնութեան:
20–21. Պարտ իցէ մարդոյ բառնալ զարգելս օրինապահութեան:
22–23. Երկբայութիւնք զօրինաց:
24–25. Պատժական, հոգևոր, զղջողական, պայմանական օրէնք:
26. Ի սուտ կարծիս հաստատեալ օրէնք:
27. Դաշնադրութեան օրէնք:
28. Ի կատարումն օրինաց իցէ՞ կարևոր՝ի ընդհս Աստուածոյ գոլ:
29. Իցէ՞ կարևոր դիտաւորութիւն:
30–31. Մարթ իցէ նովին միով գործով այլևայլ պատուիրանս կատարել:
32. Ջինչ եթէ նովին միով գործով ընդդէմ այլևայլ պատուիրանաց ոք յանցանիցէ:

14. Օ՞ր հրամայական օրէնս պարտ է զանազանել՝ի պատժականաց: Պատժականք ոչ պարտաւորեն՝ի մեղս զյանցաւորն, այլ՝ի պատուհաս եւեթ. իսկ հրամայա-

կանք, եթէ՛ եկեղեցականք և թէ՛ քաղաքականք, պարտաւորեն ՚ի մեղս. բայց միայն եթէ՛ քաղաքականք չեցեն ընդդէմ եկեղեցական կանոնաց: Իսկ յերկաքանչիւրոյ անտի խառն օրէնք, եթէ՛ ՚ի մեղս և թէ՛ ՚ի պատուհաս պարտաւորեն: Բ. Նախ զհրամայականացն ասացուք, երկրորդ զպատժականաց, և երրորդ զխառն օրինացն պահպանութենէ:

Ա. Հրամայական օրինաց պարտք ըստ ծանրութեան և ըստ թեթեւութեան իրացն է, զորս հրամայեն օրէնք. բայց հաւանականագոյն կարծիք են, զի և ՚ի ծանուննա մարթ իցէ օրէնսդրին պարտաւորել զօրինաղանցն ՚ի թեթեւ մեղս: Այլ ընդհակառակն ՚ի թեթեւ իրս չըկարէ օրէնսդիրն պարտաւորել զօրինաղանցն ՚ի ծանր մեղս, եթէ ոչ անտի չարիք ծանուննք կամ ՚ի նա հասարակաց կամ արհամարհութիւն օրինաց զհետ գայցեն: Որ ի և արհամարհութիւն օրինաց տեսակաւոր, այսինքն ուր ուրեք որ ապստամբօրէն ընդդէմ օրինաց գործիցէ, ծանր մեղք են միշտ. իսկ յորժամ անհոգութեամբ կամ ՚ի յոյզ բարկութեան և կամ ՚ի կրից ինչ զառաջեալ անցանիցէ ըստ օրէնս, թէպէտև բազում անգամ յանցանիցէ, սակայն ոչ այնու ծանրին յանցանքն, որպէս սուրբ Գրուհացին ուսուցանէ:

15. Օրինաց, որ ՚ի ծանր մեղս պարտաւորեն, նշանք այսոքիկ են. նախ՝ ծանրութիւն իրին ըստ ինքեան. երկրորդ՝ որ սովորաբարն համարի ծանր. երրորդ՝ յորժամ ձև օրինադրութեան զայն յայտ առնէ, որպէս յասենն. Հրամայեմ զօրութեամբ Հնազանդութեան. Պատուիրեմ առաքել, և այլն: Իսկ յորժամ ասեն միայն. Հրամայեմ, կամիմ, արարէք, կէտոյ ընդ առ, և այլն, մարթեն նշանակել և ծանր և թեթեւ զօրինաղանցութիւնն, վասն որոյ զայլ յարակից հանգամանս յայժամ պարտ է նկատել: Չորրորդ նշան է ծանրութիւն պատուհասի օրինաղանցութեանն, որպէս աքսոր անդարձ, բանադրանք, անկանոնութիւն, խափանումն յաճենայն պաշտամանէ կամ զրկումն ՚ի հասից ընդ երկար: Այլ իմա՝ ըստ հաւանականագոյն կարծեաց, եթէ վճռեալ իցեն բանադրանքն կամ արգելք, այսինքն եթէ նուիրն իսկ օրինաղանցութեամբն անկանիցի ոք ՚ի բանադրանս կամ յարգելս:

16. Լեթէ օրէնք սահմանելով օրինաղանցութեան պատուհաս՝ յաւելուցուն ևս հրամայել, մեղիցէ՛ յայն ժամ օրինաղանցն: — Կէսք համարին չմեղանչել՝ վասն չգացատրելոյ զայն օրինայ. բայց այլք հաւանականագոյնս համարին մեղանչել: Քանզի ընդ պատժական և ընդ խառն օրէնս այն իսկ է խոհը, զի առաջինն ընդ պատուհասիւ ևեթ արկանէ զօրինաղանցն, իսկ երկրորդն և՛ ընդ պատուհասիւ և՛ ընդ մեղաց. ապա թէ ոչ, աւելորդ էր օրէնսդրին յետ սահմանելոյ պատուհաս՝ յաւելուլ զհրաման:

17. Կարիցե՞ն մարդկային օրէնք հրամայել ներդործութեանց սրտի: — Ուղղակի չկարեն, զի սրտից մարդկան դատաւոր Աստուած միայն է. բայց կարեն անուղղակի, ուր ընդ արտաքին գործս մարդոյ կցորդ իցէ ներքինն: Օրինակ իմն. եկեղեցի սուրբ՝ ի հրամայելն՝ զեթ միանգամ՝ ի տարւոջ խոստովանել, խնդայ ընդ խոստովանութեան և ղջմութիւն և առաջադրութիւն. զի առանց այսոցիկ խոստովանել չհամարի՝ ի խոստովանութիւն. նոյնպէս և՝ ի հրամայելն զպահակ, խնդայ զհաւանութիւն մտաց: Իսկ՝ ի վերայ արտաքին գործոց, որչափ և գաղտնածածուկք իցեն, հրամայեն օրէնք անբերկբայապէս. որպէս և որ՝ ի ծածուկ վարդապետել զմոլորութիւն, ընդ բանադրանաք է. և որ գաղտ իսկ զոք սպանանէ, լինի անկանոն:

18. Պարտ իցէ մարդոյ եւսեւ ծանր տուժիւք և նեղութեամբ կատարել զօրէնս: — Յերկուս ևեթ դէպս պարտ համարին զայն բարոյականք. մի՝ ուր օրէնք բարոյապէս կարևոր են վասն բարւոյ հասարակաց, զի վասն հասարակաց բարւոյ պարտ է ամենայն ումեք տոյժս և նեղութիւն յանձն առնուլ. միւս ևս՝ ուր յօրինաղանցութենէ անտի զհետ դայ արհամարհութիւն կրօնից կամ եկեղեցւոյ: Այս են հասարակաց կարծիք աստուածաբանից:

19. Կարիցե՞ն օրէնք մարդկային եղծանել զբնական պարտս. որպէս օրէնք՝ որ անվաւեր կացուցանեն զկատակ կամ զդաշնադրութիւն արարեալ առանց նօտարի, և որ զմանկտին չև լեալ ձերբազատ անպարտ առնեն հատուցանելոյ զբնականն փոխ: — Յատանականագոյն կարծիք կարել ասեն. զի մարդկային օրինաց իշխա-

նուելիւն ել յԱստուծոյ՝ վասն հասարակաց բարւոյ բառնալ լինչ յումեքէ և տալ այլում։

20. ՊաՓրատ լեզի մարդոյ բառնալ՝ի բաց զմերձաւոր արգելը օրինապահուԹեան։ Ումն զմարդկայնոց օրինաց, և մի՛ զբնականաց։ — Պարտ է զանազանել զարգելը օրինապահուԹեան՝ յաղատուԹենէ՝ի պարտուց օրինապահուԹեան. օրինակ իմն՝ տօն է ուրեք առ վաղիւ, և պարտք ընԹերակայուԹեան սրբոյ պատարագին. մարԹ է ումեք խոյս տալ այլուր՝ ուր չլիցի տօն, և ազատել՝ի պարտուց անտի։ Ապա առանց ազատուԹեան՝ի պարտուց՝ հայԹայԹել արգելը օրինապահուԹեան, ոչ է օրէն. վասն որոյ որ ոք առանց իրաւացի պատճառի վաստակի առ՝ի չկարելոյ ծառայապահել, մեղանչէ. և ոչ միայն սակաւն դիտաւորուԹեամբ վաստակեաւն մեղանչէ, այլ և որ դիտելով զի խափան ծառայապահուԹեան վաստակն այն լինելոց է, և սակայն վաստակի առանց իրաւացի պատճառի։ Ո՞ այս այսպէս ուսուցանեն սուրբ Աստուածային, Այսման, Անքեզ, ԱագոԹԹա, Վասիլիոս և այլն. և Վասիլիոս համարի զայս՝ հասարակաց կարծիք աստուածաբանից ընդդէմ Աալմատիկեանց։

21. Խոկ բանադրեալք և բանտարկեալք չմեղանչեն ընդդէմ պատուիրանի ընԹերակայուԹեան սրբոյ պատարագի՝ անփոյԹ լեալ ազատելոյ՝ի բանտէն կամ՝ի բանադրանաց. զի հեռաւորք են արգելքս այսոքիկ։ Այլ մեղանչեն և նոքա, եԹէ այնու դիտաւորուԹեամբ կան և մնան՝ի բանադրանս կամ՝ի բանտի՝ առ՝ի չկատարելոյ զպատուիրանն։ Այս հաւանական կարծիք են, զի Թէպետև չիցէ նոցա այդ դիտաւորուԹիւն, այլ կարիցեն դիւրաւ զարգելը օրինապահուԹեան՝ի բաց բառնալ, պարտ է նոցա ջանալ բառնալոյ զայն առ՝ի կատարել զօրէնս։

22. ԵԹէ օրէնք կամ պարտք օրինապահուԹեան երկբայականք լինեն, պարտ լեզի պահել զայնս։ — Այս է պարտ, նախ՝ եԹէ երկբայուԹիւն զէուԹենէ կամ զչէուԹենէ օրինացն լիցի, որպէս՝ի վեր անդր ասացաք. (գլ. ա. 15. 32)։ Այս երկրորդ՝ եԹէ այսր կամ այնր իրիք ընդ օրինաւքն այնուիկ անկանել լեզի երկբայելի, և կամ որպէս երևելիք յաստուածաբանից ա-

սեն՝ եթէ հրատարակուին օրինացն կամ ժամանակ պարտս ՚ի վերայ ածելոյ իցէ երկբայելի։

23. Խոկ ընդհակառակն եթէ երկբայութիւն ՚ի վերայ ընդունելութեան կամ չընդունելութեան օրինացն իցէ, օրինաց են իրաւունք, պարտ է պահել զայն։ Նմանապէս եթէ ՚ի վերայ օրինադրին իցէ երկբայութիւն, թէ արդեօք օրինաւո՞ր իցէ իշխանութիւն նորա կամ զօրի՞ յայնվայր, նորա են իրաւունք ցորչափ կայ յիշխանութեան։ Պարձեալ եթէ զանիրաւութենէ օրինացն իցէ երկբայութիւն, իշխանին կամ մեծաւորին են իրաւունք ցորչափ չիցէ ստոյգ անիրաւութիւն հրամանին։ Այլ եթէ երկբայութիւն զօրինացն իցէ՝ թէ արդեօք հրամայականք իցեն թէ խրատականք, կամ թէ պարտաւորիցե՞ն զօրինաղանցն ՚ի մեղս թէ ՚ի պատուհաս ևեթ, անդանօր ազատութեան են իրաւունք։

Ը. 24. Պատժական օրէնք, որպէս ասացաքն, ընդ պատժով ևեթ արկանեն զօրինաղանցն և ոչ ընդ մեղս. որպէս օրէնք՝ որ արգելուն չհատանել զծառս, չտանել արտաքս զցորեան, և այլն։ Պիտելի է սա այս՝ զի հոգևոր պատիժք, որպէս բանադրանք, անկանոնութիւն, զրկումն, կախումն, արգելք պսակի և այլն, եթէ վճռեալ իցեն նովին իսկ գործով օրինաղանցութեանն անկանել ընդ նոքօք՝ առանց իրիք արտաքին օրինական գործողութեան, օրինաղանցին ընդ գործելն զայնցանս՝ գտանի ըստ խղճմտանաց անկեալ ՚ի պատուհասն։

25. Այլ եթէ պատիժն զրկողական ընդդէմ է իրաւանց յառաջադոյն ստացելոց, որպէս եկեղեցական հասից, ընտրութեան և այլն, անդ նորոգ վճռոյ պէտք են, գոնէ վասն յայտ առնելոյ զայնցանս զրկելոյն, թէ պէտս յառաջնում վճռին բացատրեալ և իցէ անկանել նովաւ՞ն իսկ գործով ՚ի պատուհաս։ Այլ՝ անաւանդ յորժամ պատիժն դրական լինի իցէ, այս ինքն հատուցումն, հրաժեշտ, տոյժ, նեղութիւն և այլն, որպէս սիմոնականաց և զեկեղեցական ստացուածս վաճառողաց սահմանեալ պատիժք. քանզի դժուարին յոյժ է մարդոյ անձամբ զանձն պատուհասել։ Կանոնիկ աստի պարտ է ՚ի բաց առնուլ զպայմանեալ պատիժս, որպէս

ժողովրդապետաց և կանոնիկոսաց՝ ի սրիգենտեան ժողովոյ և պայմանեալ զրկել՝ ի հասիցն՝ եթէ՝ ի բացեայ կայցեն։

26. Որինք՝ ի սուտ ինչ կարծիս հաստատեալ՝ կալցի՞ն պարտս՝ ի վերայ ածել խղճի մտաց։ — Պարտ է զանազանել. զի այլ է զսուտ ինչ համարել՝ ի հնմարտուԹիւն, և այլ՝ ի հնմարիտ ինչ յաւելուլ սուտ կարծիս։ Այլ ոչ ածէ պարտս խղճի մտաց. զոր օրինակ եթէ անասնոյ քո չիցէ միասեալ արտոյ օտարին, և դատաստանաւ ցուցցի միասեալ, և դատապարտեսցիս՝ ի տոյժս միասուն, չես պարտական՝ ի խղճի մտաց՝ Թէ և պարտ իցէ քեզ հատուցանել առ՝ ի չտալոյ գայԹակղուԹիւն այլոց. վասն որոյ և օրէնն է քեզ ընդ զտոյժ քոյին ծածկապէս։ Այսմանապէս և ժառանգ, որ վասն ոչ ունելոյ զվաւերական ցուցակ գոյից ննջեցելոյն՝ դատապարտիցի՝ ի հատուցումն պարտատուրց առաւել քան զժառանգուԹիւնն ըստացեալ։

Իսկ ուր կարծիք սուտ՝ ի հնմարիտ ինչ յաւելուն, որպէս յորժամ անասնոյ քո արդարև միասեալ իցէ արտոյ օտարին, այլ ստուԹեամբ համարիցիս պատճառք միասուն՝ որպէս Թէ քեզին անդր զանասունն արձակեալ, պարտ է քեզ՝ ի վճռել դատաւորին՝ հատուցանել զմիասն։ Այլ անդր օրէնք սահմանեալ են ոչ՝ ի պատիժ ևԹէ յանցանաց, այլ մանաւանդ ընդդիմ անհոգուԹեան մարդկան՝ առ՝ ի զառաջս ունելոյ միասուց այսպիսեաց։

27. Ո՞զ հնշնագրուԹեան պայմանեալ տոյժ կամ պատիժ պարտ իցէ արդեօք նախ քան զվճիռ հատուցանել։ — Կէսք պարտ համարին, այլ առաւելագոյնք ոչ։ Այսմատիկեանք զայս երկրորդ կարծիս հաւասարապէս համարին հաւանական, այնու զի ամենայն որ՝ ի յանձն առնուլ զպարտս ինչ՝ համարի ըստ կարգի օրինացայ կրել զպատիժն. արդ օրէնք չպարտաւորեն զոք՝ ի պատիժ նախ քան զվճիռ։

Գ. 28. Իսկ յաղագս եղանակի օրինապահուԹեան գիտելի է նախ՝ զի ԹէպԹ և կարևոր է մարդոյ լինել՝ ի հնորհս Աստուծոյ՝ որպէս զի օրինապահուԹիւն լիցի նմա՝ ի բարեգործուԹիւն, քայց առ՝ ի կատարումն օրինացայ ոչ է կարևոր։ Որինակ լիցի. որ ոչ՝ ի հնորհս Աս-

տուծոյ ծոմապահէ, կամ առ ընթեր կայ սրբոյ պատարագին, կամ կատարէ զժամակարգութիւն և զպաշտօնեարանս, ընուէր ընուէ զօրինս՝ այլ ոչ արժանաւորի ինչ այնուհետև։ Օ՞ի որպէս սուրբ Աստուածային ընդ աստուածաբանս առհասարակ ուսուցանէ, Դիպաստորութիւն օրէնաց ոչ անկանի ընդ օրինօք. զի այլ ինչ է հրամայեալն յօրինաց, և այլ նպատակ նոցին։ Վասն որոյ և որ վասն ապահովութեան կա՛մ ի ցոյցս մարդկան ծոմապահէ, ընուէ զօրինս, թէպէտև դիտաւորութիւն իւր չիցէ ուղիղ։

29. Երկրորդ զի թէպէտև վասն իրին պատուիրելոյ կարևոր է դիտաւորութիւն, որպէս առ՝ի լսել ըզպատարագ. զի որ կայ ևթէ յեղեկեցօջ՝ի ժամ պատարագի առանց դիտաւորութեան լսելոյ զպատարագ, չհամարի լուեալ զպատարագ. այլ առ՝ի ընուէ զպարտս լսելոյ զպատարագ՝ ոչ է կարևոր դիտաւորութիւն։ Վասն որոյ որ՝ի կիւրակէի աւուր երթայ յեկեղեցի առ՝ի լսել զպատարագ, կատարէ զպարտս իւր՝ թէպէտև չիշիցէ զի կիրակի է, կամ չիցէ նորա դիտաւորութիւն զկիրակի պարտսն կատարելոյ, կամ թէ առ ահի խակ հօրն դնայցէ յեկեղեցի առաջիկայ լինել սրբոյ պատարագին։ Օ՞ի թէպէտև մեղիցէ խակ այնուհետև, սակայն կատարեալ լինի զպատուիրանն. զի որով և է օրինաւ կաւ ընուն կամք պատուիրանադրին, որպէս բարւոք իմաստասիրեն Աուարէզ, Եսկոյ, Ֆուրնելի, Վալենտիկեանք և այլք բազումք։

Եայց եթէ ուխտ ուրուք եդեալ իցէ կամ ապաշխարանս՝ի խոստովանահօրէն ընկալեալ լսել զպատարագ, և ինքն այլով դիտաւորութեամբ լսիցէ, և ոչ առ՝ի ընուէ զուխտ իւր կամ զապաշխարանս, չկատարէ զպարտս իւր։ Ուստի եթէ՝ի լսել անդ կիշիցէ զուխտ իւր կամ զապաշխարանս՝ սակայն և այնպէս այլով դիտաւորութեամբ լսիցէ. ապա թէ ոչ, լցեալ լինի զպարտս իւր. զի ամենայն ուրուք կամք և դիտաւորութիւն այն իսկ է, ընուէ նախ զպարտս իւր։

30. Երրորդ՝ զի մարթ է այլ և այլ պատուիրանս միանգամայն կատարել, եթէ չիցեն խափան իրերաց գործքն. օրինակ լիցի, առաջի կալով սրբոյ պատարագին կատարել զժամակարգութիւն կամ զպաշտօնեարանս։

31. Չորրորդ՝ զի մարթ է նովին միով գործով այլ

Լայլ պատուիրանս կատարել, եթէ նոյն իցեն պատ-
ճառք երկաքանչիւր պատուիրանացն. զոր օրինակ ե-
թէ տօն աւետեաց կամ աստուածայայտնութեան՝ ի
կիրակէի աւուր հանդիպիցի, ոչ ի չարկ երկուս պա-
տարագս տեսանել, միով ևեթ մարթ ի լնուլ զը-
պարտս տօնին և զկիւրակէի. և որ յայնպիսում ա-
ւուր զանց զպատուիրանաւն առնիցէ, ոչ կրկնակի մե-
ղանչէ: Այլ ուր այլ և այլ իցեն պատճառք պա-
տուիրանացն, ոչ ի մարթ միով նովին գործով լնուլ
զերկաքանչիւր. զոր օրինակ եթէ ուրուք ուխտեալ
իցէ ծոմապահել օր մի, ոչ լնու զուխտն ծոմապա-
հելով յաւուրս սահմանեալս յեկեղեցւոյ՝ ի ծոմա-
պահութիւն, և ոչ միով ծոմապահութեամբ զուխտ
իւր և զպաշտօնարանս սահմանեալ՝ի խաստովանահօրէ
կարէ կատարել: Այլ եթէ հրամայեալ իցէ՝ի խոս-
տովանահօրէն ծոմապահել զամիսն՝ի բուն, և յամ-
սեանն յայնմիկ պատահիցէ օր մի սահմանեալ յեկե-
ղեցւոյ՝ի ծոմապահութիւն, լնու զերկաքանչիւր իսկ
զպարտս ամենօրեայ ծոմապահութեամբն:

32. Հինգերորդ՝ զի մարթ ի միով օրինաշանցու-
թեամբ կրկին մեղս գործել, ուր այլևայլ պատճառք
իցեն պատուիրանին, որպէս որ սպանանէ զոք յեկե-
ղեցականաց, կրկնակի մեղանչէ. մի՝ ընդդէմ արդարու-
թեան առ ոտն կոխեալով զպատուիրանն Աստուծոյ, և
միւս ևս՝ ընդդէմ կրօնիւ՝ ոտնհար լինելով օրինաց եկե-
ղեցւոյ, որ հրամայէ պատուել զպաշտօնեայս իւր:
Այլ եթէ նոյն և մի պատճառք իցեն պատուիրանին,
մի ևեթ մեղս գործէ. որպէս կանոնիկոս քահանայ ե-
թէ զանց զժամերգութեամբ արասցէ, ոչ կրկնակի մե-
ղանչէ՝ միայն թէ հրաժարեսցի՝ի հասից ժամերգու-
թեան:

ԳՕԴՈՒԱԾ Գ.

33. Ո՛ւմ իցէ անկ քաղաքական օրէնսդրութիւն. և ումմ եկեղեցականն:
34. 35. Ցաղագս սահմանադրութեանց Ժողովոց, և Հռովմէական Ոտ-
թոյ աւենին:

33. Տալ օրէնս քաղաքականս անկ է բարձրագոյն իշխանութեան, որպէս Թագաւորաց և Հասարակապետութեանց և իշխանաց որ չիցեն ընդ ուրուք ձեռամբ: Իսկ որ ընդ սոքօք պետութիւնք կամ քաղաքինեաք՝ կացեն իսկ դնել օրէնս և սահմանադրութիւնս, այլ առժամանակեայ. և որ իշխէն նոցա՝ կարող է բառնալ զօրէնսդրութիւն նոցա: Քաղաքական օրէնք, որպէս և ի վեր անդր ասացաք, պարտս եւս խղճի մտոյ ի վերայ ածեն՝ եթէ չիցեն հակառակ եկեղեցական օրինաց:

Իսկ եկեղեցական օրէնսդրութիւն անկ է նախ սրբազան Պապին. երկրորդ՝ ընդհանուր Ժողովոյ, եթէ նորին հրամանաւ իցեն գումարեալ, և օրէնքն ի նոցանէ սահմանեալք հաստատեալ իցեն ի նմանէ. երրորդ՝ ազգային և գաւառական Ժողովոյ իշխանութիւն է դնել օրէնս վասն ազգի իւրեանց. չորրորդ՝ եպիսկոպոսաց վասն թեմի իւրեանց, բայց խորհրդակցութեամբ ուխտի եկեղեցւոյն:

Եպիսկոպոսաց իշխանութիւն յԱստուծոյ իցէ անմիջապէս, թէ միջնորդաւ սրբազան Պապին: — Կէսք միջնորդաւ, իսկ այլք յԱստուծոյ անմիջապէս զիշխանութիւն նոցա համարին, այլ ընդ իշխանութեամբ սրբազան Պապին: Հաղորդեալք և յաստուածաբանից այնպիսի ասեն ունել եպիսկոպոսաց իշխանութիւն ի թեմի իւրեանց, որպէս սրբազան Պապին ի վերայ ամենայն եկեղեցւոյ. եթէ միայն չիցեն զհաւատոյ խընդիրք, կամ արտաքոյ եկեղեցական օրինաց իրք ծանուցանք, որպէս արդեօք Պսակի և այլն: Իսկ Ժողովք կանոնիկոսաց աթոռանիստ եկեղեցեաց, ի վախճանել եւեթ եպիսկոպոսին ցորչափ ժամանակս թափուր կայցէ աթոռն, իշխանութիւն ունին օրինադրութեան:

34. Իսկ վճիռք հռոմէական աւենից ունիցին ար-

գեօք զզօրութիւն օրինաց։ — Անկին իսկ ՚ի վերայ իրին, զորմէ վճիռն է. և ՚ի վերայ իրաց ևս նմին նմանեցաց համարին ոմանք ունել նոցա զնոյն զօրութիւն, եթէ գիտութեամբ սրբազան Պատին և նախագահի ժողովոյն՝ կնքով կարգինալին և ստորագրութեամբ նոտար լեալ իցեն վճիռքն։ Այլ այլք թէպետև զօրութիւն մեծ ասեն ունել վճռոցն այնոցիկ, այլ հաւանական չհամարեալ չաճել պարտս ՚ի վերայ ամենեցուն՝ եթէ չիցեն ՚ի դիմաց սրբազան Պատին առ ամենայն հաւատացեալս հրատարակեալ։ Օ՚ի որպէս ինչ մեզ ասել ՚ի ստորև (73. 74.), ամենայն իսկ վճիռք յայլոց սահմանեալք և ոչ ՚ի քնիկ օրէնսդրէ, ընդ նոր օրէնս համարին. վասն որոյ առ ՚ի զօրութիւն նոցա պահանջի նոր և աշխարհաբարող հրատարակումն, որպէս ՚ի վեր անդր (5.) ասացաք. այլ վճիռք հռոմէական առեն ոչ այսպէս հրատարակին։ Սակայն վճիռք՝ որ յայտնի են ամենեցուն, արգեամբք հրատարակեալ, ՚ի բազումս ինց սովորութիւն լեալ, և ՚ի գիրս տպագրեալ, բաւական են պարտս ՚ի վերայ դնելոյ ամենայն հաւատացելոց։

35. Հռոմէական Ղոթայի առեն վճիռք չունին զօրութիւն զընդհանրական օրինաց. իսկ զառաքելական դիւանին վճռոց երկբան են կարծիք. Լեսիոյ, Վալերիոյ, Տիանա և այլք, այնու զի վճիռ սովորութիւն հրատարակելոյ զգայս, համարին չունել նոցա զօրութիւն օրինաց ընդ հանուր, այլ ՚ի Հռոմ և եթ. բայց Լաքրուա, Կոմիզ, Ղորիոյ և այլք, այնու զի այսպէս ունի սովորութիւն, համարին զգայնսիկ յընդհանրական օրէնս, զեթ որ ինչ յայնցանէ հանրական իրս սահմանեն, և ոչ Հռոմայ և եթ պատկանաւորս։

ՅՕԴՈՒԱԾ Դ

36. Ընչ ոմանց պարտս 'ի վերայ ածեն օրէնք :
37. Ածիցեն արդեօք տղայոց :
38. Ածիցեն արդեօք օրէնսդրաց :
39. 40. Ածիցեն արդեօք օտարականաց :
41. Եթէ օտարականք հարևանցի ուրեք կայցեն :
42. Իցէ իշխանութիւն եպիսկոպոսի անօրինել զսխտ օտարականաց, զծոմապահութիւն և այլն :

36. Ընդ եկեղեցական օրինօք ոչ անկանին, ոչ անհաւատք, ոչ մանկունք, և ոչ խելագարք. իսկ արբեցեալք նիրհեալք և տգէտք չմեղանչեն յանցանել ըստ օրէնս : Այսոքան որոյ մարթ է առաջնոցն տալ գործել ինչ ընդդէմ օրինաց, այլ յետնոցն ոչ և. իսկ ընդդէմ բնական օրինաց, ոչ առաջնոցն և ոչ յետնոց օրէն է տալ գործել ինչ :

37. Մանք յաստուածաբանիչ համարին մանկտւոյ ոչ իսկ և իսկ ընդ հասանելն 'ի չափ բանաւարութեան անկանել ընդ օրինօք, այլ գէթ 'ի տասնամեկի. բայց օտար 'ի հասարակաց վարդապետութենէ է և հերքի 'ի բազմաց կարծիքս այս : Զանազանդ զի եթէ կանխէ և բանաւարութիւն մանկան քան զհասակ եօթնամեայ, որպէս է ուրեք զի պատահէ, յոյժ հաւանական թուի անկանել նմա անդստին ընդ եկեղեցական օրինօք, որպէս համարին բազումք, թէպէտ և հակառակն և կարծիք չէ անհաւանական ըստ սրբոյ Գրիգորեան. զի օրինաց չէ նեհատեն զանսովոր դէպս, այլ զսովորականս :

Բայց մանկան այնպիսւոյ եթէ մահուչափ մեղս ինչ գործեալ իցէ, պարտ է նմա խոստովանել զայն. զի օրէնք պարտս 'ի վերայ ածեն յասելն յայտնապէս. Որ 'է պէս ընդրուելեան բարւոյ և չարի իցէ հասեալ : Իսկ եթէ երկբայելի իցէ մանկանն հասանել 'ի բանաւարութիւն, նախ քան զհասակ եօթնամեայ չհամարի հասեալ, անտի և անդր՝ հասեալ :

38. Օրէնսդիրք և պարտին պահել զօրէնս՝ զոր սահմանեն, առ 'ի չտալոյ այլոց դայթակղութիւն և օրինակ չար. իսկ եթէ օրէնքն զղաչնադրութեանց իցեն

և զսակէ տուրևառից, ծանուննս մեղանչելն օրինազան-
ցութեամբն։

39. Ո՛տարականաց պարտ է պահել զհասարակաց օրէնս, ուր և իցեն յերկրի ուղղափառաց. այլ ազատ են յայնժամ յօրինաց հայրենեաց ցորչափ հեռի իցեն անտի, թէպետև առ՛ի խուսելոյ յօրինաց անտի հեռացեալք իցեն։ Նոյնպէս և որք՛ի նմին թեմի՛ի տեղի ուրեք ազատ յօրինաց անտի իցեն խուսափեալ։ Ոմանորոց հաւանական կարծիք են՝ վանորէից և եկեղեցեաց կրօնաւորական կարգաց ազատս զոլ յօրինադրութեանց թեմական եպիսկոպոսի, որպէս ուսուցանեն Սայիր, Էլիա, Անդրիկուէզ, Բանտիտոյ, Տիանա, և Սալմանտիկեանք. վասն զի ժողովն տրիդենտեան ազատ կոչէ յայնցանէ, ոչ միայն զմիանձունս, այլ և զմենաստանս նոցա։

40. Ո՛տարականաց ոչ միայն՛ի բնականալ ուրեք հասանեն պարտք օրինապահութեան երկրին, այլ և՛ի բնակել ևեթ անդ՝ որպէս հասարակաց կարծիք են բազմայականաց, թէպետ և իցեն իսկ ոմանք՝ որք զհակառակն կարծիցեն։ Իսկ ընդ բնականալ և ընդ բնակել այս լինչ է խտիր, զի բնակօղեալ ասի ուրեք՝ որոյ՛ի մտի եղեալ իցէ բնակել անդ՛ի սպառ, և միտք նորա յայտնեն յածելոյ անդր զառաւելագոյն մասն ստացուածոց իւրոց, կամ՛ի ստանալոյ իւր անդ տուն, կամ՛ի յայտ առնելոյ զկամս իւր չմեկնելոյ անտի, և կամ՛ի բնակելոյ անդ զամս տասն՝ առանց լինչ ցուցանելոյ կամս մեկնելոյ անտի։ Իսկ բնակեալ ասի, որ զառաւելագոյն մասն տարւոյ կամ զամիսս բազումս բնակէ ուրեք։

41. Իւայց օտարականի՝ որ հարևանցի ուրեք բնակիցէ, պարտ է զօրէնս երկրին այնորիկ պահել։ — Ոմանք յերևելի աստուածաբանից պարտ համարին՝ վասն հասարակաց խաղաղութեան, և առ՛ի չտալոյ պատճառս գայթակղութեան այլոց. այլ և սոքա ազատ՛ի պարտեաց աստի կացուցանեն զօտարականս անցաւորս, կարևոր համարեալ զկայ առնուլ նոցա անդ իբր օր մի վասն անկանելոյ ընդ օրինօք երկրին։ Իւայց Հայրն Սուարեզ բարւոք զանազանէ, զի եթէ օտարական ոք դեռ ևս իսկ հասեալ իցէ՛ի դէմ եդեալ տեղին, անկանի ընդ օրինօք տեղւոյն. իսկ եթէ անցս ևեթ ընդ այն

առնելոյ իւրէ՝ անտի և անդր դէմ եդեալ, ոչ է պարտ նման, ոչ ծոմապահութեան, ոչ առաջնակայութեան սըրբոյ պատարագին, և ոչ այլոց դրական օրինաց երկրին։ Ո՛չ օրէնք դրականք բնակչաց Աւետ պարտս ՚ի վերայ դնեն, և ոչ անցաւորաց· բացասականք Աւետ պարտս միշտ ՚ի վերայ ածեն։

Այս վարդապետութիւն Հաւանական է բառական· Նապէս· այլ Հաւանականադոյն են բազմաց կարծիք, զի չանկանի օտարական որ ընդ օրինօք երկրին, եթէ չիցէ անդ գոնէ բնակեալ ցամիսս բազումս կամ զկէս մասն տարւոյ անդ անցուցանելով։ Ո՛չ օրէնք Հպատակաց վասն են· իսկ որ Հարևանցի ուրեք բնակէ, չհամարի ընդ Հպատակս· վասն որոյ և չէ ընդ օրինօք երկրին, բայց միայն եթէ չիցեն օրէնքն դաշանց կամ Հասարակաց իրաւանց պատկանաւորք։

42· Ոչ՝ իշխանութիւն Թեմական եպիսկոպոսի անօրինել օտարականաց զուխտ կամ զերդումն կամ զծոմապահութիւն կամ զտօն և զկիրակէ։ — Հաւանական է ունել նմա իշխանութիւն ՚ի վերայ օտարականաց՝ որ չիցեն Աւետ անցաւորք, վասն նոցին պատճառի՝ զոր ՚ի վեր անդր ասացաք· զի Թէպետև Հարևանցի բնակիցեն անդ, սակայն Թեմականի եպիսկոպոսին են Հպատակք։ Բայց Հաւանականադոյն կարծիք համարին ՚ի վերայ այնոցիկ Աւետ ունել նմա իշխանութիւն, որոց գրեթէ բնակացեալ իցեն անդ։

ՅՕԴՈՒԱԾ Ե

43· Որ ինչ ազատ կացուցանէ զոք յօրինաց։ — Անպատութիւն։
44· Երկիւղ։
45· Անկարողութիւն։

43· Նախ և առաջին՝ ազատ կացուցանէ տգիտութիւն և ՚ի բնական օրինաց՝ եթէ իցէ անյաղթելի, և չիցեն պատուիրանքն անմիջական հետևանք նոցին, որպէս ՚ի Ձառս խղճի մասց ՚ի վեր անդր ասացաք· (գլ· Ա· 5·)։ Իսկ եթէ ուրուք յաղթելի իցէ տգիտութիւն, այսինքն եթէ պարտական իցէ որ և կարօղ գիտել զօրինս, և գիտելով ևս զի պարտ է նման ատուգել

ձերկբայութիւն իւր՝ անփոյթ առնիցէ, չէ ազատ յօրինաց։

44. Երկրորդ՝ ազատ յօրինաց կացուցանէ երկիւղ. այլ աստ պարտ է զանազանել զդրական օրէնս ՚ի քնա-կանաց։ Ի դրականաց անտի, և և յաստուածայնոց, սովորաբար ազատ կացուցանէ երկիւղ ծանր, եթէ չիցէ ՚ի միջի հասարակաց գայթակղութիւն կամ արհամարհութիւն եկեղեցւոյ. որպէս եթէ ոք ստիպիցի յայլմէ լուծանել զպահս վասն առ ոտն կոխելոյ զպատուիրան եկեղեցւոյ. զի պարտ է նմա յայնժամ տալ և զկեանս վասն պահելոյ զպատուիրանն։ Իսկ ՚ի քնական օրինաց դրականք ոչ միշտ պարտս ՚ի վերայ ածեն. վասն որոյ ոչ ոք պարտական է վտանգաւ կենաց կատարել զուխտ իւր կամ դարձուցանել զաւանդ։ Այլ ՚ի քա-ցասականաց, որպիսի են մի սպանանել, մի գողանալ և այլն, ոչ ազատ կացուցանէ երկիւղ և ոչ մի։ Բայց միայն ուր հարկ իցէ պաշտպանել զկեանս ընդդէմ սպա-նողի, կամ առնուլ ինչ զուրուք առ ՚ի վերծանելոյ ՚ի չարահամբաւութենէ, զադարէ պատուիրանն։

45. Երրորդ՝ ազատ յօրինաց կացուցանէ անկարո-ղութիւն պահելոյ զայն։ Այլ որ անկարօղն է բռնա-դակ պահել զօրէնս, պարտականո՞ւ իցէ պահել զայն ըստ կարի։—Պատանօր պարտ է զանազանել. զի եթէ մարթ իցէ բաժանել զպատուիրանն, և ՚ի պահել զմասն ինչ նորին՝ հասանիցեն օրէնք ՚ի նպատակ անդր իւրեանց, պարտ է յայնժամ պահել զայն ըստ կարի։ Օրինակ լիցի. եթէ չկարիցէ ոք կատարել բռնադակ գժամա-կարգութիւն, պարտ է նմա կատարել որչափ ինչ կա-րէ. հակառակն սորին վարդապետութիւն դատապար-տեալ է։ Դարձեալ եթէ ոք չկարիցէ հարթիկ պա-հել զքառասնորդս, գէթ ոչ աւելի քան զմիանգամ յաւուրն պարտ է նմա ձաշակել զմիս, այսպէս ՚ի Ան-նեդիկտեայ ծդ սահմանեալ։ Իսկ եթէ կատարել ըստ-մանեայ զօրէնս ոչ ինչ օգնէ դիտաւորութեան օրի-նացն, յայնժամ ոչ է պարտ կատարել ուժեք զայն ըստ կարի. զոր օրինակ եթէ ուխտ ուրուք եղեալ իցէ գը-նալ Երուսաղէմ և չկարիցէ երթալ, ոչ է պարտ նմա զկէս ձանապարհին առնել։

Ազատ յօրինաց կացուցանէն և անօրինութիւն, բայա-

ռութիւն, և ներհակ սովորութիւն, զորոց պարտ է մեզ խօսել զիւրաքանչիւրոց ուրոյն։

ՑՕԴՈՒՄԱԾ Զ

ԳԱՂԱՓԱՐ ՏՆՕՐԻՆՄԱՆ։

46. Կարևոր իցէ առ՝ի տնօրինումն պատճառս իրաւացի։
47. Եթէ աղերսագիրս տնօրինմանն իցէ Թերի։
48. Եթէ իցէ վասն այլոց ուրուք։
49. Լռելեայն տնօրինումն։
50. Պատճառք տնօրինման։
51. Ուր երկբայելի իցէ կարևորութիւն տնօրինման։
52. Իցէ երբէք պարտ մեծաւորի տնօրինել։
53. Եթէ ոք ոչ ըստ խղճի մտաց տնօրինէ, կամ Թէպէտ և ըստ խղճի մտաց՝ այլ առանց իրաւացի պատճառի։
54. Եթէ ոք առ ահի տնօրինէ։

46. Արդարև յօրինաց կայուցանէ և տնօրինումն օրինադրին կամ որոյ հաւասար նմին իցէ իշխանութիւն, եթէ միայն իցէ ինչ իրաւացի պատճառ տնօրինելոյ. ապա Թէ ոչ, մեղանչէ տնօրինօղն։ Այլ ներելի գործէ մեղս, եթէ յառաջնոյ մեծաւորաց որ իցէ տնօրինօղն. և չմեղանչէ իսկ, եթէ երկբայելի և եթէ իցէ պատճառ տնօրինմանն։ Իսկ որ ընդունի զտնօրինումն յայնպիսւոյ ումեքէ մեծաւորէ առանց իրաւացի պատճառի, չմեղանչէ՝ի վարելն նովաւ, որպէս ուսուցանեն Աւստրիկ, Սալմանթ, Վասթրոփալ, Փոնցիոյ, և այլք։

47. Այլ դիտելի է նախ՝ զի եթէ աղերսագիրն խաբէական է կամ Թերի, այսինքն եթէ ստէ ինչ և կամ լռէ զՀնարաւորութիւն, անվաւեր է տնօրինումն՝ եթէ լռութիւնն իցէ զկրաց, զոր ըստ օրինի դիւանագրոյ սովորութիւն է բացատրել յաղերսագրի, կամ եթէ չիցէ Հնարիտ պատճառն վախճանական, այլ ոչ յորդորականն։ Իսկ եթէ պատճառն ստուէմամբ ածեալ երկբայելի իցէ, այս ինքն վախճանականն Թէ յորդորականն իցէ Համարելի, վաւերական Համարի՝ որպէս ուսուցանեն Սանքէզ, Փոնցիոյ, Վասթրոփալ, Սալմանտիկեանք և այլք. զի յերկբայս նպաստեն օրինք վաւերականութեան գործոյն։ Ոմանք ուսուցանեն, եթէ այլևայլ պատճառք ածեալ իցեն յաղերսագրին, կիսք

Ձվանրիտ և կէսք սուտ, այլ մի իսկ յայնցանէ բաւական իցէ առ՝ի տնօրինուածն։

48. Պիտելի է երկրորդ՝ զի մարթ է և այլում ումեք վասն այլոց ուրուք խնդրել և ընդունել տնօրինուածն յանգէտս նորին և յակամայս իսկ։ Բայց զընորհս՝ի սրբոյ ապաշխարութեան ժողովոյն՝ պարտ է խնդրել կամ նմին իսկ ապաշխարողն, կամ խոստովանահօրն, և կամ յայգպականաց ապաշխարողին ցջորրորդ աստիճան. և պարտ է միշտ տնօրինելոյն հաւանիլ ընդ տնօրինուածն առ՝ի վաւերական առնել զայն։

49. Պիտելի է երրորդ՝ զի մարթ է վարել և լուծեալն տնօրինմամբ, այս ինքն է՝ եթէ մեծաւորին տեսանելով զօրինազանցութիւնն և կարելով դիւրաւ և առանց դժուարութեան խափանել զայն՝ լուռ և եթէ կայզի Համարի յայնժամ տնօրինել, որպէս ուսուցանեն Սուարէզ, Վասքրոփալ, Սալմանտիկեանք և այլք. իսկ եթէ իցէ մեծաւորն ականատես, ընդունի իսկ զկնքանան լուծեալն՝ այլ ոչ և զտնօրինուածն։ Բայց Լինպել՝ի վկայութիւն ածեալ զՍուարէզ, զՍիլուեսթրոյ և զայլս, յաւելու զի՝ի կարևոր Հարկի՝ եթէ չիցէ հնար դիմել առ մեծաւորն վասն տնօրինման, օրէն է վարել գուշակելով զայն։

50. Պիտելի է չորրորդ՝ զի են ինչ պատճառք որ ինքեանք իսկ ազատ կացուցանեն յօրինաց առանց տնօրինման, եթէ իցեն գոնեա հաւանականաբար իրաւացիք. և են՝ որ թէպէտ և բաւականք առ՝ի տնօրինուածն, այլ կարօտին տնօրինման. որպէս՝ օգուտ հասարակաց կամ իւրաքանչիւր իսկ ուրուք, արժանապատուութիւն խնդրողին, կամ պատիւ մեծաւորին՝ առ՝ի չհամարելոյ խիստ, և սոցին սակի պատճառք։

51. Պիտելի է հինգերորդ՝ զի եթէ իցէ երկբայելի (դրական կամ բացասական երկբայութեամբ) թէ իցեն կամ թէ չիցեն պէտք տնօրինման, օրէն է հպատակի վարել ազատութեամբ իւրով. բայց լաւագոյն է զլուծումն երկբայութեանն կամ զտնօրինուածն խնդրել՝ի մեծաւորայ և՝ի ստորակարգելոյ, զի յերկբայականս իշխանութիւն է և նոցա տնօրինելոյ, առանց իսկ մեծաւորին ընդհարելոյ նոցա զայն, որպէս ուսուցանեն Լայման, Վասքրոփալ Տիանա, Սալմանտիկեանք, և այլն։

Ի բաց առեալ զարգելը պսակի. զի անդ զվաւերա-
կանութենէն են բանք, ոչ միայն դաշանց՝ այլ և սրբոյ
խորհրդոյն, և չէ օրէն գործել երկբայանօք, և ոչ իսկ
հաւանական կարծեօք զիրացն. զի ոչ է կարծել թէ
յերկբայս իրացն տնօրինիցէ եկեղեցի զարգելս, որպէս
է համարել՝ի հաւանական կարծիս զիրաւանց. և ոչ
խօսեցեալոց օրէն է դնել զանձինս՝ի վտանգ պսակելոյ
առանց ընդհայ խորհրդոյն, զի չէ օրէն նոցա հրաժա-
րել յօգնականութենէն նոցին: Վասն որոյ՝ի յերկբայս
պարտ է գնել առ եպիսկոպոսն դիմել, որում օրէն է
տնօրինել զարգելս երկբայականս:

52. Հնդիր Ա. Արդեօք պարտ իցէ մեծաւորին տը-
նօրինել, ուր իրաւացի պատճառք իցեն տնօրինման: —
Եթէ պատճառքն օրինաւոր և եթէ առնեն զտնօրինուածն,
ոչ է պարտական. իսկ եթէ առնեն կարևոր առ՝ի խոր-
հել՝ի ծանուցց չարեաց կամ առ՝ի հայթայթել զօ-
գուտ մեծ հասարակաց և զիւրաքանչիւրոց իսկ, պար-
տական է: Այլ՝ի ժխտել մեծաւորին զտնօրինուածն,
թէպէտ և անիրաւեսցի՝ի ժխտելն, պարտ է հպատա-
կին կալ յօրէնս՝ եթէ չիցեն պատճառքն հարկեցու-
ցիչք, որպէս յորժամ հարկ՝ի վերայ կայցէ պսակ օրհ-
նել առանց յառաջագոյն հրատարակելոյ և եպիսկո-
պոսն յանիրաւի զլացի զտնօրինուածն:

53. Հնդիր Բ. Արդեօք զօրէ՞ տնօրինուածն տուեալ
՝ի մեծաւորէ ըստ ոչ խղճի մտաց, համարելով թէ չի-
ցեն պատճառք իրաւացիք տնօրինման՝ ուր գուցեն: —
Եթէ օրէնադիրն ինքնին իցէ որ տնօրինէն, զօրէ ան-
երկբայապէս. իսկ եթէ՝ի սահմանակարգեալ մեծաւո-
րաց օք իցէ տնօրինօղն, ոմանք անզօր համարին զտնօ-
րինուածն, զի չէ օրէն նմա անպատճառ տնօրինել. այլ
հասարակաց և հաւանականագոյն կարծիք զհակառակն
ուսուցանեն. վասն զի զօրութիւն տնօրինման՝ի գոյու-
թիւն պատճառացն է հաստատեալ, և ոչ՝ի ծանօթու-
թիւն նոցին: Իսկ եթէ մեծաւորն ըստ խղճի մտաց
տնօրինէ, ուր չիցեն պատճառք իրաւացիք, անզօր հա-
մարին զտնօրինուածն Վասթրոփալ, Փոնցիոյ, Սուա-
րէզ, Լայման, Սալաս, Սոթոյ և Լաւարրոյ, ընդդէմ
Սալմանտիկեանց և այլոց. իսկ եթէ մեծաւորն հասու
լեալ զի չիցեն բաւական պատճառք, և սակայն տնօրի-

նիցկ։ Այլ յերկբայս՝ զօրէ միշտ անօրինութիւն, որպէս նոքին իսկ ազգ առնեն։

54. Ինդիր Գ. Արդեօք զօրէ՞ անօրինութիւն տուեալ առ ահի։ — Օ՛ր եթէ գուցեն պատճառք իրաւացիք անօրինելոյ, և եթէ մեծաւորին չիցեն լեալ կամք ստուգիւ հակառակ անօրինմանն. վասն զի երկիւղ ոչ բառնայ զկամաւորութիւն։ Որչն իսկ է երբեմն ահարկութեամբ առնուլ զանօրինութիւն, եթէ արդարացի իցէ ահարկութիւն. որպէս սպառնալիք դիմելոյ առ բարձրագոյն իշխանութիւն, եթէ ստորագոյնն ժխտէ անիրաւաբար զանօրինութիւն։

ՅՕԴՈՒԱԾ Լ

ԹԷ ՈՑՑ ԱՆԿ Է ՏՆՕՐԻՆԵԼ

55. 56. Սրբազան Պասն ըստ կարգի իշխանութեան իւրոյ զինչ ինչ կարող է անօրինել։
57. 58. Զինչ ինչ եպիսկոպոսունք։
59. Զինչ ինչ ժողովրդապետք։
60. Զինչ ինչ կարգապետք։
61. Զինչ ոք ըստ աւանդեալ իշխանութեան։ Եթէ վախճանի աւանդօղն։
62. Պայման օրինաց մինչ ցդնօրինումն։
63. Ստորաբանդումն իշխանութեան։
64. Յաղագս անձամբ զանձն անօրինելոյ։

55. Ա՛յլ է իշխանութիւն ըստ կարգէ և այլ աստանդեալն։ Սրբազան Պասն ըստ կարգի իշխանութեան իւրոյ կարող է անօրինել զամենայն օրէնս կանոնականս, և ս և զայնս՝ զորս առաքեալք որպէս առաջնորդք եկեղեցեաց սահմանեցին. որպէս պահել զքառասնորդականն պահս, սրբել զկիւրակէս, չձեռնադրել զկրկին ամուսնացեալս, և այլն։ Օ՛ստս այսպէս ուսուցանէ սուրբ Աւգուստինոսին, և յաւելու զի կարող է սրբազան Պասն անօրինել որ ինչ յեղանակ աստուածայինն պաշտաման պատշաճի. այլ ոչ զօրէնս աւանդեալս յառաքելոյ որպէս ի Քրիստոսէ ընկալեալս, որպիսի են պատշաճեալքն ի նիւթ և ի ձև խորհրդոց և ի նուիրագործութիւն սրբոյ պատարագին։

56. Կարող իցէ Պասն անօրինել և զպատուիրանս

ինչ աստուածայինս։ — Արդ զայնս՝ որ ի կամոյ մերոյ գոյ առնուն պատճառս, որպիսի են ուխտք և երդումունք, եթէ միայն զոյացեն պատճառք իրաւացիք. քանզի յայն ժամ ոչ բառնայ զիրաւունս աստուածայինս, այլ զհինն պարտուցն, կամ որպէս սուրբ Աւգուստինոս ասէ՝ յայտ առնէ որ ինչ հաճոյն է Աստուծոյ։ Այլ կարիցէ՞ արդեօք անօրինել ինչ և յայնոյ, որ ի կամս Աստուծոյ իցեն։ — Հասարակաց և հաւանականագոյն կարծիք զգալ ասեն. զի ստորակայի չիք իշխանութիւն ի վերոյ օրինաց սահմանելոյ ի բարձրագոյն իշխանութենէ։ Սակայն ոչ սահաւք յաստուածաբանից ուսուցանեն յոյժ հաւանականաբար, զի կարող էցէ Պապն ի դէպս ինչ իբր ոչ եթէ անօրինել, այլ յայտ առնել զի գադարեն անդ օրինք աստուածայինք. քանզի իշխանութիւն այսպիսի կարևոր Թուի ընծայել նմա առ ի բարւոք տեսչութիւն եկեղեցւոյ ի բազմազիմի դէպս՝ որոց մարթ է պատահել։

57. Օրէն է և եպիսկոպոսաց ըստ կարգի իշխանութեան իւրեանց անօրինել զսահմանադրութիւնս նախորդաց իւրեանց և զթեմական ժողովոց։ Ոչնոյն կարող է առնել և փոխանորդն ժողովական ի դատարկանալ աթոռոյն. այլ ոչ և փոխանորդ եպիսկոպոսին, որպէս ուսուցանեն Ալմատիկեանք և Անքեզ ընդ բազումս. զի եթէ ոչ բացայայտակի և ուրոյն իցէ նմա աւանդեալ յեպիսկոպոսէ իշխանութիւն անօրինելոյ, ընդ այլ իշխանութիւնս չհամարի աւանդեալ նմա այն։ Կարող են և եպիսկոպոսունք անօրինել՝ ի թեմի իւրեանց զսահմանադրութիւնս գաւառային ժողովոյ ոչ վերապահեալս։ Կարեն և անօրինել զհասարակաց օրինս քահանայապետականս, որպիսի են անկանոնութիւն, արգելք պսակի, ուխտք վերապահեալք և այլն, բայց միայն ի կարևոր ժամանակի՝ յորժամ չիցէ զիւրին դիմել առ Պապն, որպէս ասացաք ի ստորև (ի գլ. Ի. յղ. արտունութեանց)։ Դարձեալ և զօրինս պապականս սահմանեալս վասն թեմի իւրեանց. և դարձեալ ի դէպս, յորս մարթ է արդարև երկբայել՝ թէ իցէ՞ն կամ թէ ոչ պէտք անօրինման. և դարձեալ յամենայն իսկ իրս՝ որ ստէպ պատահեն, որպիսի են ուխտք ոչ վերապահեալք, սրբել զկիւրակիս, ժու ժկալել՝ ի մայ

և այլն։ Եւ յայս ամենայն իրս կարէն և եպիսկոպոսունք առանձին իշխանութիւն իւրեանց և այլոց, զի իշխանութիւնս այս անկ է նոցա ըստ իրաւանց կարգի, յարակից իւրեանց պաշտման։

58. Կարէն և եպիսկոպոսունք տնօրինել զայն ամենայն կանոնական սահմանադրութիւնս, յորս յաւելեալ եցէ պայման՝ ինձ ոչնօրինաւն. զի այսուհիկ համարի չնորհեալ նոցա իշխանութիւն տնօրինելոյ։ Իսկ վասն տնօրինելոյ եպիսկոպոսաց զամենայն իսկ օրինս կանոնականս՝ որոց տնօրինումն չիցէ յայտնապէս վերապահեալ, բաղումք համարին ունել նոցա զայս իշխանութիւն, որպէս Սոթոյ, Ալիսբեր, Սուրբն Ղնատինոս, Լալել, Վրասթրոիալ և այլք։ Եւ յայլ ղեմ ունին Սուարէզ, Պոնաչինա, Սալմատիկեանք և այլք. զի ստորակարգելոց չէ օրէն իշխել՛ի վերայ օրինաց սահմանելոց՝ ի բարձրագոյն իշխանութենէ։ Եւ սուրբն Ղւիսնոս՝ ի սկզբան յառաջին կարծիս լեալ, ապա հրաժարէ յայնմանէ։

59. Յողովրդապետաց և իշխանութիւն է ըստ իւրաւանց կարգի և՝ ի սովորութենէ, և և առանց բացակայութեան Թեմական եպիսկոպոսի, տնօրինել՝ ի դէպս կարևորս՝ որ ստէպ պատահէն, և յորս սովորութիւն լեալ է նոցա տնօրինել, որպէս զծոմապահս, ըզՀանգիստ կիւրակէի, և այլն. այսպէս ուսուցանեն Սուարէզ, Ալիւեսթրոյ, Սանքէզ, Սալմատիկեանք, Վ Լիա և այլք բազումք։

60. Կարգապետք ունին իշխանութիւն ըստ կարգի և պաշտաման իւրեանց, չնորհեալ նոցա յիւրաւանց, տնօրինել՝ ի դէպս իւրաքանչիւր զկանոնս՝ որոց տնօրինումն չիցէ արգելեալ։ Վ անահաքը և ստորակարգեալք կարէն արտունութեամբ տնօրինել զթեթև ինչ կանոնս, կամ որ ինչ առանձին վասն վանայ իւրեանց են սահմանեալ, և կամ որոց ստէպ պէտք լինին տնօրինման։

61. Իսկ յաղագս ասոնդեալ իշխանութեան տնօրինելոյ գիտելի է նախ՝ զի որոյ է իշխանութիւն տնօրինելոյ ըստ կարգի պաշտաման իւրոյ, կարող է և առանձել զայն այլոյ՝ որպէս ուսուցանեն բարեպականք գրեթէ առ հասարակ։ Եւ ասի իշխանութիւն ըստ կարգի

այն՝ որ յարակից է պաշտամանն ուրուք, որպէս ասաց-ցուք ՚ի տօրև (՚ի գլ. Ժ. յղ. արտունութեանց)։ Ա-ւանդեալս այս իշխանութիւն սպառի մնհուամբ աւանդողին, եթէ ըստ եղանակի փոխանորդութեան վասն իրաց ինչ ևեթ աւանդեալ իցէ, և իրքն չէ ևս սկսեալ. զի անձկապէս յայնժամ պարտ է իմանալ զտնօրինու-մն որպէս առեալ ինչ, եթէ միայն չիցէ ՚ի մեծաւորէն ինք-նակամ աւանդեալ, կամ ընդ իրաւունս գրեալ, կամ յօգուտ հասարակաց և կամ միաբանութեան իրիք շնորհեալ։ Նակ եթէ ըստ եղանակի շնորհաց իցէ ա-ւանդեալ, ոչ սպառի մնհուամբ աւանդողին, և ոչ անձ-կապէս՝ այլ ընդարձակաբար յայնժամ իմանալի է զտնօ-րինումն որպէս նպաստաւոր ինչ։ Ա՝ասն որոյ յայնժամ եթէ երկբայելի ևս իցէ բաւականութիւն պատճառաց առ ՚ի տնօրինումն, կարէ ոք աւանդեալ իշխանու-թեամբն տնօրինել, որպէս ասեն Այեթանոյ, Ա-լեքսեթրոյ, Անքեզ, Ալմաթիկեանք, Ֆափիա, Կրա-նատոյ և այլք։

62. Պ՚իտելի է երկրորդ՝ զի ուր յաւելուն օրինք գի-չ՚ պանօրինուածն, օրէն է մեծաւորաց ստորակարգելոց տը-նօրինել զայնս, թէպետ և ՚ի վերադունից չիցէ տուեալ նոցա յայտնապէս իշխանութիւն։

63. Պ՚իտելի է երրորդ՝ զի որոյ իշխանութիւն ոչ ըստ կարգի և յիրաւանց պաշտամանն է, այլ ՚ի վե-հագունէ աւանդեալ նմա, չկարէ ստորաւանդել զայն այլում՝ եթէ չիցէ տուեալ նմա յայտնապէս և այն իշխանութիւն ՚ի վերադունէն կամ ՚ի սրբազան Պա-պէն։

64. Պ՚իտելի է չորրորդ՝ զի որոյ է իշխանութիւն ան-պայման տնօրինելոյ զայլս, կարող է և զանձն տնօրի-նել, որպէս ուսուցանեն բարոյականք գրեթէ առ. հա-սարակ։

ՅՕԴՈՒԱԾ Ը

65. 66. Ձի մարթ է դադարել տնօրինման 'ի դադարել պատձառին :
67. Նահանջմամբ տնօրինմանն :
68. Հրաժարմամբ տնօրինելոյն :

65. Երբակի դադարէ տնօրինուածն. Ա. Ի դադարել պատձառին : Բ. Նահանջմամբ տնօրինմանն 'ի տնօրինողէն. Գ. Հրաժարմամբ տնօրինելոյն :

66. Ա. Դադարէ տնօրինուածն 'ի դադարել պատձառին. այլ պատձառ իմա զշարժիչն կամ զվախձանական, և զայն՝ դադարեալ 'ի սպառ. զի եթէ դադարէ յորդորականն և եթէ պատձառ, և կամ շարժիչն ոչ 'ի սպառ դադարէ, զօրէ դեռ ևս տնօրինուածն : Ոմն դարձեալ եթէ չև ևս տնօրինուածն իցէ 'ի կիր արկեալ, և կամ չիցէ բեռն լինչ փոխանակ նորին 'ի վերայ եդեալ : Ոսկ յերկբայս՝ թէ իցէ արդեօք վախձանականն պատձառ 'ի սպառ դադարեալ եթէ ոչ, զօրէ տնօրինուածն, զի լինքն է տէր իրաւանցն : Այլ դարձեալ իմա՝ եթէ տնօրինուածն գնեթ լռելեայն պայմանաւ իցէ տուեալ, իբր ասել՝ երէ կայցէ ծայրէ պապձառն. որպէս է իմանալ յորժամ պատձառն չհամարի մշանջենաւոր : Կամ զի եթէ տնօրինուածն ընդհատի անպայման, որպէս՝ է իմանալ յորժամ պատձառ նորա համարի մշանջենաւոր, օրինակ իմն՝ յորժամ վանն պարկեշտութեան վարուց, վանն սակաւութեան պաշտօնէից, վանն աղքատութեան աղգակացոց, և վանն այլոց սոցին սակի պատձառաց ընդհատի, ոչ դադարէ : Ո՞վ յետ բառնալոյ միանգամ պարտուց օրինաց առանց իրիք պայմանի 'ի ձեռն տնօրինման, ոչ ևս դառնայ՝ եթէ ոչ վերստին 'ի մեծաւորէն սահմանեալ : Տնօրինուածն անպայման ոչ դադարէ թէպէտ և իցէ միանգամ յարդիւնս եկեալ. վասն որոյ տնօրինեալն յուսատէ ողջախոհութեան ամուսնացեալ, 'ի մեռանել ամուսնոյն՝ կարէ միւսանգամ ամուսնանալ, եթէ չիցէ ընդհատեալ նմա տնօրինուածն յայտնապէս վասն միանգամ եթէ պսակելոյ :

67. Բ. Յաղագս նահանջելոյ զտնօրինուածն գիտելի է, զի մեղանչէ տնօրինօղն՝ եթէ 'ի դադարել 'ի սպառ

վախճանական պատճառի տնօրինմանն՝ ոչ նահանջել զայն։ Որպէս և՛ ի հակառակին մեղանչէ, քայց նեբելի մեղօք, եթէ անպատճառ նահանջիցէ զայն, թէպէտ և նահանջումն լինի վաւեր։

Քայց մահուամբ տնօրինօղին դադարէ արդեօք տնօրինումն։ — Եթէ անպայման ընդհեալ է տնօրինումն, կամ յաւելուածովս դինե՞ նահանջեաց, կամ թողլով՛ ի կամ առաքելական աթոռոյ կամ թեմական եպիսկոպոսի, ոչ դադարէ։ Իսկ դադարէ, եթէ տուեալ իցէ յաւելուածովս՝ ցորչափ հաճոյ լուծեսցի մեզ, և եթէ չիցէ սկիզբն լեալ երկին տնօրինելոյ։

68. Գ. Դադարէ տնօրինումն և հրաժարմամբ տնօրինելոյն, եթէ միայն ընկալեալ իցէ հրաժեշտ նորա՛ի մեծաւորէն. ապա թէ ոչ, օրէնն է հպատակին վարել նովաւ, թէպէտ և չիցէ իսկ նորա յաւաջադոյն վարեալ նովաւ։

ՅՕԴՈՒԱԾ Թ

ԴԱԴԱՐՈՒՄՆ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ, ԵՒ ԲԱՅՑՈՒՈՒԹԻՒՆ ՕՐԻՆԱՑ։

69. Ի դադարել վախճանին՝ դադարիցէ՞ն օրէնք։
70. Զարգելեալ գրոց։
71. Զբարեկարգութեան օրինաց։
72. Զմեկնութենէ օրինաց։
73. 74. Կարեւո՛ր իցէ հրատարակումն վասն յայտարարութեան օրինաց։
75. Զվարդապետական մեկնութենէ։
76. Կանոնք մեկնութեան։
77. Բացառութիւն։
78. Դիպաց՛ի դէպս երբ ըզրն օրէնք։

69. Ա. Խնդիր մեծ է՝ զի՛ի դադարել վախճանի օրինաց բոլորովին, դադարիցէ՞ն օրէնք։ — Եթէ դադարէ վախճան նոցին վասն հասարակաց, յայտ է զի դադարեն. քանզի ոչ եւս լեալ պիտանի՝ և ոչ պարտս՛ի վերայ ածեն։ Ոյս այսպէս ուսուցանեն սուրբ Գուինացին և այլք գրեթէ առ հասարակ։ Այլ իւրաքանչիւր ումեք վասն ազատ լինելոյ յօրինաց անտի՝ շատ է պիտել հաւանականաբար զդադարել նոցին վասն հասարակաց։ Իսկ՛ի դադարել վախճանին՛ի սպառ վասն իւ-

բաքանչիւրոց ումանց, պարտ է զանազանել. եթէ միա-
սակար լինիցին յայնժամ օրէնքն կամ գժուարին յոյժ,
հասարակաց կարծիք են՝ զի չածեն պարտս ի վերայ.
այլ եթէ անպէտ եւեթ համարեսցին յայս լինչ դէպս
կամ վասն այսր ուրուք, հասարակաց կարծիք համարին
ածել նոցա պարտս. զի է միշտ վտանգ խաբելոյ իւրա-
քանչիւր ումեք ըստ անձին զինչպիտութեան։ Ա-յս-
պէս ուսուցանէ սուրբ Աւգուստինոս ընդ այլս. թէպէտ
եւ չպակասեն ևս երևելի աստուածաբանք, որ զհակա-
ռակ կարծիսն ունին. այլ սուրբն Աւգոստինոս ի կարծիս
նոցին ի սկզբան անդ միտեալ, և ապա նահանջեաց։

70. Որ՞ն իցէ ումեք զարգելեալ գիրս ընթեռնուլ
ի դաղարել վտանգի վասն նորա և գայթակղութեան։
— Այ է օրէնն. զի վախճան օրինացն չգտագարէ երբեք
ի սպառ, որ ոչ միայն վասն զգուշութեան ի վտանգէ
սահմանեալ է, այլ եւ ի հնազանդութիւն բոլորից յայն-
պիսի վտանգաւոր իրս, և ի բառնալ զպատճառս մոլա-
բամիտ մտածենագրաց զվարդապետութիւնս իւրեանց
ծաւալելոյ։

71. Պիտելի է դարձեալ զի յընդհանրական լինչ օ-
րինաց ոչ եղծանին օրէնք առանձինն ուրեք տեղւոյ, ե-
թէ ոչ եղծանիցին ի նմա յայտնապէս յիշատակու-
թեամբ, և կամ յաւելուածովն՝ ոչ երբ առանձին օրինաց
ընդդէմ այնոցիկ ըստ ելոյ։

72. Բ. Ա՝ենդութիւն օրինաց երբակի է. Վաւերա-
կան, սովորական, վարդապետական։ Ա՝ ա ւ ե ր ա կ ա ն է՝ նոյն
ինքն յօրէնսդրէն կամ՝ի յաջորդէ նորա և կամ՝ի մե-
ծաւորէ արարեալ։ Ա՝ո վ ո ր ա կ ա ն՝ որ՝ի սովորութենէ ըն-
կալեալ։ Ի՝ակ վարդապետական՝ զոր բարեյականք առնեն,
զիւրս օրէնսդրին բացատրեալ։

73. Ա՝րդ մեկնութիւն օրինաց լինչ արարեալ յիշ-
խանէ կամ՝ի սրբազան Պապէն՝ կարիցէ առանց հրա-
տարակման պարտս՝ի վերայ ածել։ — Պարտ է աստա-
նօր զանազանել զյայտարարութիւնն՝ի մեկնութենէ։ Յայ-
տարարութիւն է յայտնել զիմաստ լինչ ինքնին բուռն
դակեալ յայտնապէս յօրէնս անդ. որպէս եթէ յերկ-
բայել անդ՝ եթէ օրդւով զհարազատն եւեթ իցէ նման-
նալ թէ և զանհարազատն, յայտ առնիցէ օրէնսդիրն՝
զի պարտ իցէ իմանալ և զանհարազատն։ Ի՝ակ մեկնու-

Թիւն է, որոյ իմաստ ոչ է յայտնապէս բովանդակեալ յօրէնս անդ, այլ պէսպէս կարծիք են ջանմանէ, և պատճառաբանութեամբ է իմանալ զայն. որպէս եթէ ընդ անուամբ հօր և զհաւ իցէ իմանալ, կամ ընդ մանուամբ՝ և զմայ քաղաքական, զիշտնջենաւոր բանտարգելութիւն և այլն:

74. Բայդ ըստ այսոցիկ ուսուցանեն բարոյականք, զի յայտարարութիւն յայտնապէս յօրէնս անդ բովանդակեալ՝ ոչ կարօտի հրատարակման, այլ պարտ ի վերայ աճէ գիտողաց՝ ոչ նոր ինչ օրէնս դոլով: Նոկ մեկնութիւն, որ բերէ իմաստ ինչ ոչ յայտնապէս բովանդակեալ յօրէնս անդ՝ այլ աղօտաբար, կարօտի հրատարակման որպէս նոր ինչ տալով օրէնս: Օնոյն է ասել և զայտարարութենէ, զոր յաջորդ օրէնսդրին կամ մեծաւոր օք առնիցէ. զի միտք օրէնսդրին ոչ որպէս նմին ինքեան՝ ծանօթ է նոցա, վասն որոյ առ ի յայտ առնել զայն (թէպէտ և յօրէնս անդ բովանդակեալ իցէ) հարկ է ի պատճառս դիմել և ի մեկնութիւնս՝ որ հաւասար է նոր օրէնս սահմանելոյ, և կարօտի հրատարակման. ապա թէ ոչ, յայտարարութիւն այն չհամարի վաւերական՝ այլ վարդապետական ևեթ:

75. Մեկնել զօրէնս վարդապետօրէն ամենայն ումեք օրէն է, բայց միայն պարտ է առնել զայն ըստ կանոնաց և ըստ իմաստից՝ որ առաւել ընկալեալ են ի բարոյականաց: Զանգի յառաջ պատահեն երկբայութիւնք, և զի ոչ է մարթ կամ դիւրին խնդրել զլուծումն նոցին յօրէնսդրէն, հարկ իսկ է տալ իմաստնոց իշխանութիւն մեկնելոյ զօրէնս: Այլ իցէ՞ օրէն մեկնել զօրէնս, յորում արգելեալ իցէ ամենայն մեկնութիւն: — Բդելմամբ այսուիկ իմանան ումանք զնոսին ևեթ մեկնութիւնս արգելեալ. բայց Աալմատիկեանք իմաստութեամբ մերժեն զայս կարծիս, զի մնոսի մեկնութիւնք ինքնին իսկ արգելեալ են. վասն որոյ յայսպիսիս չէ օրինաւոր ծր և է մեկնութիւն վարդապետական, որպէս ի Պիոսէ Գ, արգելեալ են մեկնութիւնք սահմանադրութեանց տրիդենտեան ժողովոյ: Նմա զմեկնութիւնս ի ձև բացատրութեան արարեալ և տպագրութեամբ հրատարակեալս, և ոչ զհարևանցի և զանխիւ ևեթ կամ գրով արարեալ բացատրութիւնս,

որպէս սովորութիւն կալաւ իմանալ զայն, և որպէս բաղումք ՚ի բարեյականաց իմանան։

76. Կանոնք մեկնութեան օրինաց այսոքիկ են. Ա. Ուշ ունել մտաց և վախճանի օրէնսդրին և պատճառի օրինացն։ Բ. Յերկբայականս մեկնել զայն ՚ի նպաստ վաւերականութեան գործոյն։ Գ. Ընդհակառակ իմանալ զայն յատելի իրս, և լայնաբար ՚ի նպաստաւորս։ Դ. Զբառս օրինաց առնուլ ըստ յատուկ նշանակութեան ուր ուրեք չգոյ ինչ անտեղութիւն, կամ ոչ զհետ գայցէ կարծիք ամպարշտութեան զօրինադրէն։ Յատուկ նշանակութիւն ընկալեալն է ՚ի սովորութենէ. իսկ զբազմանշանակս պարտ է ըստ գլխաւորագոյն նշանակութեանն իմանալ ՚ի պատժական և ՚ի պատուիրատնական օրէնս. այլ ՚ի նպաստաւորս սովորութիւն է միտ դնել և քաղաքական յատկութեան բառից. որպէս ընդ բառիս օրինաւոր և զօրինաւորեալն է իմանալ։ Սակ առ ՚ի գիտել թէ ինչ յօրինաց առելի իցէ թէ նպաստաւոր, պարտ է զպատճառ նորին հետազօտել վասն որոյ սահմանեցաւն է։

77. Գ. Տայցառութիւն է որ ինչ դէմ հաւանակա-նաբար կարեմք համարել, զի օրէնսդիրն ՚ի դէպս ինչ ոչ պարտս ՚ի վերայ դնիցէ. և դէպքն են՝ ուր օրէնքն լինին ժլասակար կամ յոյժ ծանր և դժուարին ՚ի կատարումն։

78. Երդեօք զիպաց ՚ի դէպս, ուր նոյն իցէն պատճառք, զօրիցէն օրէնք։ — Երկու են զայսմանէ կարծիք, այլևայլ յերևմանն՝ այլ նոյն ըստ իրին. քանզի երկաքեան իսկ հաստատէն զօրել օրինաց հաւասարապէս ՚ի դէպս, ուր այնպէս յար և նման իցէն պատճառք՝ մինչև համարել օրէնսդրին յանկրաւութիւն կամ յանխոհեմութիւն, եթէ ոչ ընդ նովին օրինօք արկանէր զայնս. զի ՚ի դէպս յայսպիսիս Ճշմարտի առաքեալն. "Ուր յար և նման է պատճառ, նոյն է օրինաց սահման"։ Ըստ այս պատահէ նախ յառընչակիցս, օրինակ լինի՝ որպէս օրէն է հարսնացուի հրաժարել ՚ի փեսայացուէն վասն տարակայութեան նորա, այսպէս և փեսայացուին օրէն է վասն նոյն պատճառի։ Երկրորդ ՚ի համանմանս, որպէս ընտրել և ընծայել յեկեղեցական պաշտամունս և ՚ի հասս։ Երրորդ ՚ի յարակիցս,

որպիսի են սարկաւագութիւն և կիսասարկաւագութիւն: Յորմէդ՝ բավանդակեալ, որպէս որում չնորհի առնել կտակ՝ չնորհի և յաւելուածս առնել՝ ի նմին. որում արգելեալն է ուսել ձու, արգելեալ է և միս: Այսոքան որոց յայսոսիկ զօրէն օրինք, և՛ և պատժականք. քանզի կանոնն ամիսոփելոյ զատելի օրինս և ընդարձակելոյ զնպաստաւորս, որպէս իմաստութեամբ ասեն Յուարկ, Պոնաչինա և այլք, զօրէ՝ ուր պատշաճական է մեկնութիւն օրինաց, այլ ոչ և՛՝ ուր ստիպողական է. զի յայնժամ ասելի է մանաւանդ բավանդակել օրինաց զդէպսն զայսոսիկ քան թէ ընդարձակել յայսոսիկ զօրինս: Պակաս օրինք պատժականք սովորաբար ոչ զօրեն՝ ի դէպս՝ որ չիցեն բացատրեալ. որպէս քանագրանք ստիպելոյ զիանայս մնանել՝ ի մեռնաստան ոչ զօրէ ընդդէմ ստիպողաց զարս, զի ոչ յար և նման են պատճառքն:

ՅՕԴՈՒԱԾ Ժ

79. Պայմանք կարեւորք առ՝ ի սովորութիւն:
80. Յեղծումն սովորութեան:
81. Եթէ օրինք մերժեն՝ ի բաց զամենայն սովորութիւն ապագայ:
82. Սովորութիւն մեկնիչ օրինաց:
83. Եթէ օրինք նահանջիցեն զամենայն հակառակ սովորութիւն:

79. Պարտ է զանազանել զսովորութիւն՝ որ գործէ օրինս, ՚ի սովորութենէ՝ որ եղծանէ զօրինս, զոր պարտ է մանաւանդ կոչել եղծումն սովորութեան: Այրդ որպէս զի զզօրութիւն օրինաց ընկալցի սովորութիւն, երբեք լինչ լինդրին. նախ՝ զի սովորութիւնն մեծցի՝ ոչ ՚ի սակաւուց ոմանց, այլ գէթ յառաւելագոյն մասնէ հասարակութեան՝ որ կարիցէ սահմանել օրինս, թէպէտ և չունիցի իրաք իշխանութիւն սահմանելոյ. զի յայնժամ սովորութիւնն այն ՚ի լռելեայն հաւանութենէ իշխանին առնու զօրութիւն օրինաց: Այրկրորդ՝ խնդրի գէթ լռելեայն հաւանութիւն իշխանին. և համարի հաւանութիւն, եթէ իշխանն կարելով խափանել զսովորութիւնն զայն՝ լռէ ընդերկար:

Այրրորդ՝ խնդրի օրինաւոր նախապրութիւն. առ որ կարևոր է ա. գոնեա տասնամեայ ժամանակ, որպէս

'ի վեր անդր ասացաք. (11.): Բ. խնդրի ֆամանակ անընդհատ. զի եթէ երբեք 'ի միջոցի անդ խափանեցի առ ժամանակ մի սովորութիւնն այն 'ի հասարակաց, կամ պատուհասեցի չիշխանին, ընդհատեալ համարի նախագրութիւնն: Գ. խնդրի կրկնութեանն նեքգործութեամբ հանդերձ՝ այսինքն զի մի առ ահի կամ՝ յանգիտս պահեցի սովորութիւնն. զի եթէ օրինս համարեցի ժողովուրդն որ ինչ ոչն է, և յանգիտս զայն յանձն առնուցու, չանկանի ընդ պարտեօք: Ասան որպ ուր չիցէ մարթ դիտել ստուգիւ թէ արդեօք սովորութիւն ինչ իբրև պարտս՝ թէ որպէս բարեպաշտութիւն, կամ իբրև ծանր ինչ պարտս՝ թէ որպէս թեթև ինչ լցէ ընկալեալ, 'ի յարակից հանգամանաց անտի է իմաստասիրել: Որ օրինակ եթէ սովորութիւն ինչ լցէ ծանրաբեռն և սակայն ընդ երկար ժամանակ պահեալ անընդհատ, համարի ծանր պարտուց յանձնառութեամբ մուծեալ և հանապազորդեալ. որպէս սովորութիւն հրաժարելոյ 'ի կթելոյնաց 'ի հակմանս ոճոյ, և միանձանց և միանձնուհեաց կատարելոյ զժամակարգութիւն:

80. Իսկ առ 'ի մուծանել սովորութիւն ինչ 'ի խափանումն օրինաց, երկու ինչ կարևոր են. նախ՝ զի սովորութիւնն այն չիցէ հակառակ աստուածայնն օրինաց. երկրորդ՝ զի ըստ օրինի լցէ նախագրեալ: Ընդ դիտելի է նախ՝ զի առ 'ի մուծանել զսովորութիւն յեղծումն օրինաց՝ չքաւէ դիտաւորութիւն եւեթ օրինազանց լինելոյ, այլ խնդրին յայտնապէս և կամք եղծանելոյ զօրէնսն մինչ զի և չարամտութեամբ հանդերձ գտանի տեղի նախագրութիւն: Ապաքէն ոչք մուծանեն զսովորութիւն խափանիչ օրինաց, մեղանչեալ մեղանչեն ցորչափ չիցէ լցացեալ նախագրութիւն. այլ ոչք մուծելովք 'ի նոցանէ սովորութեամբն վարին, ոչ ինչ մեղանչեն: Դիտելի է երկրորդ՝ զի թէպէտ և առ 'ի մուծանել զրական ինչ խափան և նոր իրաւունս՝ խնդրի դիտաւորութիւն եղծանելոյ զօրէնս, սակայն եթէ օրինք ինչ բարեմտութեամբ իսկ՝ այսինքն յանգիտս ոչ պահի ընդ երկար ժամանակ, զօրէ նախագրութիւն 'ի լցումն տան ամաց՝ յակամայս իսկ իշխանին. զի համարի հաւանել նմա ընդ սովորութիւն ըստ օրինի նախա-

պրեալ. իմա եթէ իշխանն ոչ զդեմ ունիցի դրականաց պէս ընդդէմ սովորութեանն՝ որ եղծիչ է օրինաց իւրոց։

81. Ըստ այսմ՝ ի մուծանելոյ զհակառակ սովորութիւն յառաջ գայ եղծումն օրինաց, և և յորժամ յաւելեալ իցէ՝ ի սահման օրինացն՝ ոչ ինչ ջրել սովորութեան էրէտ հակառակ այնոց։ Ո՞ի յաւելուածն այն վասն անցելոց սովորութեանց համարի, և ոչ ապառնեաց. մանաւանդ զի, որպէս Յուարէզ, Վոնցիոյ, Պոնաչինա, Վալմատիկեանք և այլք ասեն, հաւանական է սովորութեան խափանել և զօրինս, յորում հերքին և ապառնի սովորութիւնք։ Իսկ եթէ օրէնք զամենայն ապառնի սովորութիւն հերքեն իբրև անիրաւ, յայնժամ պարտ է զանազանել. զի եթէ հերքեն որպէս հակառակ բնական օրինաց և դրականաց աստուածայնոց, ոչ կարէ անդ զօրել հակառակ սովորութիւն. այլ կարէ, եթէ հերքեն իբրև անիրաւ ըստ այնմ ժամանակի. զի՝ ի փոփոխել հանգամանաց ժամանակի՝ մարթ է իրաւացի գոլ սովորութեան, և զօրել ընդդէմ օրինաց, որպէս ուսուցանեն բարոյականք գրեթէ առ հասարակ։

82. Կարէ և սովորութիւն մեկնել զօրինս, ուստի մեկնութիւնք այնպիսիք կոչին սովորականք, և նուազագոյն ժամանակ պահանջեն՝ ի նախագրութիւն։ Եւ հասարակաբար զամենայն օրինս ըստ սովորութեան տեղեաց պարտ է մեկնել։

83. Վիտելի է դարձեալ զի օրէնք հանրականք ոչ եղծանեն զառանձնական սովորութիւնս տեղեաց նախագրեալս, եթէ չիցեն յայտնապէս յիշատակեալ կամ խափանել հրամայեալ զնոր և է հակառակ սովորութիւն։ Իբաց առեալ զօրէնս սահմանեալս յեպիսկոպոսաց, զի համարի գիտել սոցա զամենայն հակառակ սովորութիւնս՝ ի սահմանելն զօրէնս։ Եւ դարձեալ զսովորութիւն յանյիշատակ ժամանակաց հասեալ՝ չը-համարի երբեք խափանել օրինաց, եթէ ոչ յանուանէ խափանիցեն զայն օրէնք ըստ յայտարարութեանց սրբոց գահին։

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ՑԱՂԱԳՍ ՄԱՐԴԿԱՑԻՆ ԳՈՐԾՈՑ ԵՒ ՄԵՂԱՑ

ՑՕԴՈՒԱԾ Ս.

1 · 2 · Գործք մարդոյ և գործք մարդկայինք :
3 · Ցաղագս Կամաւորի և Հանդամանաց նորա :
4–6 · Քանիսպատիկ է կամաւորն :
7–11 · Չինչ է ազատն և քանիսպատիկ :
12 · 13 · Արժէքք մարդկային գործոյ, և նախ՝ տգիտութիւն :
14 · Երկրորդ՝ բռնութիւն :
15 · Երրորդ՝ տենչ հաճելոց զսյլս :
16–18 · Չորրորդ՝ երկիւղ, և քանիսպատիկ :
19 · Ոչսոյ մարդկային գործք ընդունին զբարութիւն կամ զչարութիւն :
20 · Գործ արտաքին յաճախիք զբարութիւն ներքնոյն :
21 · Գուցէ ինչ գործ մարդկային անխոթական :

1 · Ցայսվայր խօսեցաք զկանոնաց մարդկային գործոց, որ են խիղճ մտաց և օրէնք · արդ այժմ խօսեսցուք զնոցունց իսկ մարդկային գործոց, նախ ընդհանրապէս, և ապա մասնաւորաբար զմեղաց :

2 · Երկակի մարթ է նկատել զգործս, որ գործին ՚ի մարդկանէ : Մի՝ ընդհանրապէս որ ինչ և է եղանակաւ գործեցեալ, և ըստ այսմ կոչին գործք մարդոյ · երկրորդ՝ յազատ ընտրութենէ կամաց մարդոյ գործեցեալ, և ըստ այսմ կոչին գործք մարդկայինք : Այսոքա որոյ գործք որ կանխեն քան զընտրութիւն կամաց կամ զվարել բանականութեան, են գործք մարդոյ՝ այլ ոչ մարդկայինք : Երկու ինչ խնդրի առ ՚ի կացուցանել զգործ մարդկային ընդունակ վարձուց կամ պատժոց · մի՝ զի իցէ կամաւոր, և միւս ևս՝ զի իցէ ազատ :

3 · Զբ ՚ի գոլ կամաւոր՝ պարտ է գործոյ յառաջ գալ ՚ի ներքուստ, և ոչ յարտաքինն բռնութենէ · և գարձեալ Հանապազամբ իրին գալ ՚ի գործ, վասն որոյ չէ մարգասպանութիւն սպանանել զոք՝ երկ զնա կարծելով :

4 · Բազմապատիկ ազգ են կամաւորութեան · Այս՝ տեսական, զօրութիւնական, ունակական և մեկնական ·

երկրորդ՝ արտաբերեալ և հրամայեալ. երրորդ՝ ուղղակի:

Ա. Տեսակն է ընտրեալն ներգործութեամբ՝ ի կամայ և հրամայեալ: Օ՛օրոշեչական է՝ որ յառաջ գայ և կատարի զօրութեամբ կանխակալ կամայ: Հանակական է ներգործութիւն կամայ, որ կամեցեալ միանգամ և ոչ ևս իցէ նահանջեալ: Կենական է ներգործութիւն կամայ, յորժամ ոք ոչ կամի լինչ և ոչ խորհի, այլ կամէր՝ եթէ խորհեր՝ ի հանգամանս իրին:

5. Բ. Դրոաբերեալ ասի ներգործութիւն կամայ, որ մերձաւորապէս ներգործի՝ ի կամայ. որպէս բաղձալ լինչ կամ ընտրել կամ մերժել, սիրել լինչ կամ ատել: Դրամայական է որ լինչ յիշեանութենէ կամայ ներգործեն այլ զօրութիւնք ներքինք կամ արտաքինք. որպէս խորհել գնալ և այլն: Այս գիտելի է զի ամենայն ներգործութիւնք արտաբերեալք կամ հրամայեալք՝ ի կամայ, ՝ի վախճանին վասն որոյ ներգործին՝ առնուն ըստ տեսակ. ըստ այսմ ներգործութիւնք, որոց նոյն է վախճան, թէպէտ և նիւթապէս իցեն այլազանք՝ սակայն նոյն են ըստ տեսակին. որպէս եթէ ոք ծոմապահ կամ աղօթէ կամ քարոզէ վասն Աստուծոյ, ներգործութիւնք սիրոյ են առ Հասարակ: Իսկ ընդ հակառակն ներգործութիւն նիւթապէս մի և նոյն, եթէ վասն այլ և այլ վախճանի առնի՝ ի կամայ, այլ և այլ է ըստ տեսակին:

6. Գ. Ուղակի է կամաւոր ներգործութիւն, յորժամ ինքնին կամի ոք և դիտէ. իսկ անուղղակի, եթէ զպատճառս իրին կամի ոք՝ նախատեսանելով՝ ի նմա զգործն: Ասն որոյ առ՝ ի համարել՝ի մեզ զանուղղակի կամաւորն, խնդրի նախ՝ գիտութիւն անտի յառաջ եկեալ գործոյն. երկրորդ՝ պարտք խափանելոյ զգործն յառաջագայեալ. զի եթէ չիցէ ումեք պարտ խափանելոյ զայն, և ոչ դիտէ նա զայն, ոչ մեղանչէ՝ ի կամել զպատճառն ըստ ինքեան բարւոյ, թէպէտև նա խատեսանիցէ զարգասիս անտի յառաջ եկելոյ չարեաց, որպէս տեսցուք՝ ի բաղում դէպս՝ ի ստորև:

7. Դ՝ի լինել մարդկային ինչ գործոյ վարձուց կամ պատժոյ արժանի, պարտ է զի իցէ գործեալ աղատութեամբ. քանզի վարդապետութիւն հաւատոյ է ընդ

դեմ Պաղեստինի՝ ի ժողովէն տրիդենտեան սահմանեալ, զի է մարդոյ ինքնիշխան ազատութիւն ևս և յետ անկման Ադամայ. այլ պարտ է ասա զանազանել զայլևայլ ազգ ազատութեան։ Առաջին՝ ազատութիւն՝ ի բանութենէ և՝ ի հարկէ. և երկրորդ՝ ազատութիւն՝ ի հակառակութենէ և՝ ի ներհակէ։

8. Այլ է ազատութիւն՝ ի բանութենէ՝ որ կոչի ինքնայօժարութիւն, և այլ՝ ի հարկէ՝ որ կոչի անհարկութիւն. առաջինն կարևոր է առ՝ ի կացուցանել զգործն, այսինքն ազատ, թէ և իցէ հարկաւոր՝ որպէս երանելեացն հարկաւորաբար սիրել զԱստուած, այլ ինքնայօժար՝ առանց յումեքէ բռնադատելոյ։ Ի որպէս սուրբ Աղուինացին և սուրբն Գրոստինոս ուսուցանեն, զոյ՝ ի մեզ ազատութիւն կամաց վասն վերջին վախճանի անբռնադատ՝ ի հարկէ բնական յօժարութեան, այլ չէ՝ ի մեզ ազատութիւն յօժարութեան կամ հակառութեան կամելոյ և չկամելոյ, որպէս ընդ հուպ պարզեսցուք։ Երկրորդն, այսինքն ազատութիւն՝ ի հարկէ կամ անհարութիւն, զերծ կացուցանէ ըզգործն ոչ միայն՝ ի բռնութենէ՝ այլ և՝ ի հարկէ. որով կարող է ոք թողուլ զգործն՝ որ է ազատութիւն հակառակութեան, կամ առնել զհակառակն՝ որ է ազատութիւն հերհակութեան։

9. Ի այլ է ազատութիւն հակառակութեան՝ որ կոչի և առնելութեան, այսինքն կարելոյ առնել և չառնել զինչ, և այլ է ազատութիւն ներհակութեան՝ այսինքն զներհակն առնելոյ, որպէս սիրել և ատել։

10. Ոչ այսոսիկ այսպէս զանազանեալ, ասեմք արդ. մարդկային գործոյ առ՝ ի լինել վարձուց կամ պատժոց արժանի պարտ է զի իցէ ազատ՝ ազատութեամբ անխըտրութեան, որ միայն է Աչմարիտ ազատութիւն, այսինքն զերծ՝ ոչ միայն՝ ի բռնութենէ, այլ և՝ ի հարկէ։ Ի ժողովն տրիդենտեան սահմանէ ընդդիմանալսն ապաշխարութեան Ճարտոյ խոստանալ և չկատարել զնորին. և դատապարտեալ են՝ ի սրբոյն Պիոսէ Ե. և յայլոց քահանայապետաց մոլորութիւնքս այսոքիկ Պայի և Յանսենեայ. Պայի՝ որ ասէ. "Որ կամաւորն է, թէ և՝ ի հարկէ իցէ, ազատ է"։ Եւ թէ "Բռնութիւն հեռի բառնայ զբնական ազատութիւն մարդոյ"։ Եւ թէ

“Ա՛եղանչէ մարդ, և ա և լինի դատապարտելի, յայնմ՝ զոր Հարկաւ գործէ,,: Կ՚ըսե Յանսենեայ՝ որ ասէ. “Ի պայմանի անկեալ բնութեանս առ՚ի լինել վարձուց կամ պատժոց արժանի, ոչ խնդրի մարդոյ ազատութիւն՚ի Հարկէ, այլ շատ իսկ է ազատութիւն՚ի բռնութենէ,,:

11. Կ՚ըսեմք է զի ազատութիւն անխտրութեան յառաջ գայ յանխտրութենէ դատման, որ է կշիռ բարւոյ և չարի նկատեալ՚ի գործելն: Եթէ ոչ եթէ անխտրութիւնս այս դատման՝ կացուցանէ զազատութիւն, այլ միայն արմատ է ազատութեան՝ որով կարող կրնն ընտրել ազատօրէն և հաւասարապէս որ ինչ Հաճոյ է:

12. Պրդելք որ խափանեն զգործ մարդկային, այսինքն զկամաւորութիւն գործոյ, են տգիտութիւն, բռնութիւն, ցանկութիւն, և երկիւղ. բայց երկիւղ ոչ բառնայ, այլ նուազէ զկամաւորութիւն:

13. Ո տգիտութիւն ևս պարտ է զննազանել. զի նախ՝ այլ է տգիտութիւն բացասական, որ է պակասութիւն գիտութեան յայնմ՝ որ ոչն կարէ գիտել. այլ դրական, որ է պակասութիւն գիտութեան յայնմ՝ որ կարօղն է գիտել. և այլ դրականն, որ է խաբէութիւն կամ մոլորութիւն կամաւոր: Երկրորդ՝ այլ է տգիտութիւն էրօռանց, այսինքն պատուիրանին. և այլ տգիտութիւն գործոյ, այսինքն պատուիրեալ իրին: Երրորդ՝ այլ է տգիտութիւն նախընթաց կամ անյաղընդէլի, որ կանխէ քան զամենայն մտածութիւն. այլ հետևորդն կամ յաղընդէլի, որ մտածեալն է դէթ զօրութեամբ կամ աղօտաբար. և այլ պատճառական, որ ընկերէ գործոյն՝ այլ ոչ է պատճառ նորին, և ոչ ազդէ ինչ յայն. որպէս զի առանց տգիտութեանն իսկ այնորիկ լինէր գործոյն գալ՚ի կատարումն. որպէս որ սպանանէ զԶինամին յանգետս՝ երբ զնա կարծելով, այլ այնու յօժարութեամբ կամաց՝ զի սպանանէր զնա եթէ ծանուցեալ ևս էր: Ընդդէմ՝ տգիտութիւնն հետևորդ կամ յաղթելի՝ բաժանի՚ի նախնջ և՚ի կոմակար. Թանձր է՝ եթէ անփոյթ որ արասցէ գիտել զոր կարէ և պարտի գիտել. իսկ կամակար՝ եթէ որ չկամիցի գիտել զՔՀնարտութիւն առ՚ի մեղանչել ազատօրէն: Յայսցանէ՚ի միտ առնուլ

է, զի նախընթացն կամ անյաղթելի տգիտութիւն բառնայ ՚ի սպառ զկամաւորութիւն. հետևորդն կամ յաղթելի ոչ բառնայ, այլ նուազէ. իսկ զուգընթացն ոչ բառնայ և ոչ նուազէ, զի որպէս ասացաքս՝ ոչ ինչ ազդե ՚ի գործն:

14. Խնդութիւն խափանէ ՚ի սպառ զգործ մարդկային. վասն որոյ գործք՝ ՚ի բռնութենէ եւթ յառաջ եկեալք՝ ոչ վարձուց և ոչ պատժոց են արժանի: Ասացեալ գիտելի է զի բռնին զանազանի ՚ի հարկաւորէն. քանզի հարկաւորն կարէ և լինել կամաւոր, որպիսի է աստուածսիրութիւն երանելոց, և զանազանի յակամայէն՝ որում մարթ է յառաջ գալ ՚ի տգիտութենէ:

15. Յանկուցեալք է խնդալ զշարժուն զգայական յօժարութեան. որ եթէ իցէ նախընթաց՝ խափանէ ըզգործ մարդկային, այսինքն զկամաւորութիւն ըստ մասին. և ըստ ամենայնի իսկ, ՚ի կանխեէն բոլորովին քան զգանն: Վասն որոյ շարժմունք զգայականք առանց ինչ հաւանութեան կամաց ոչ համարին ՚ի մեզս, ոչ ՚ի մանուանդ յաւելուլ զկամաւորութիւն և զմեզս:

16. Երկիւղ ևս պարտ է զանազանել ՚ի թեթև և ՚ի ծանր: Ծանր է՝ ա. եթէ չարիքն սպառնացեալք հաւանականաբար ՚ի վերայ կայցեն, բ. եթէ անխուսափելիք իցեն, գ. եթէ մեծամեծք, գէթ ըստ հանգամանաց անձանց՝ որպէս կանանց, որդւոց, որբոց, հպատակաց և այլն, յորս աղդէ և երկիւղ ակնածութեան: Այլ աստ գիտելի է զի երկիւղ ակնածութեան յայնժամ համարի ծանր, յորժամ ՚ի վերայ մեծարանաց՝ զոր զգայ որդի կամ որբ ՚ի հակառակել հօրն կամ հայրապետի, յաւելուլ երկիւղ երկարատև ցասման նոցա կամ վրէժխնդրութեան:

17. Պարտ է զարձեալ զանազանել զերկիւղ որ ՚ի ներքուստ՝ յառաջ եկեալ ՚ի հանգամանաց իրին. որպէս զերկիւղ մահու՝ որ ՚ի մեծի մրրկի տայ վաճառականին առնել զվաճառս իւր ՚ի ծով, յերկիւղ անտի՝ որ արտաքուստ յառաջ եկեալ յաղատ պատճառէ, այսինքն յայլմէ ումեքէ: Այս պայմ՝ որ արտաքուստն է երկիւղ՝

մարթի գոլ իրաւացի և անիրաւ, ըստ ահարկուին ուղ-
նելոյ կամ չընդունելոյ իրաւունս սպառնալեաց։ Այլ դար-
ձեալ զանազանի երկիւղ՝ որ ստիպէ զոք յայս ինչ գործ,
յերկիւղէ՝ որ առ այլ ինչ է սպառնացեալ, և ոչ առ՚ի
գործն՝ զոր երկիւղէն այնուհիկ գործէ ոք։

18. Ո՛յսոսիկ այսպէս զանազանեալ, ասեմք՝ զի
երկիւղ ոչ խափանէ զգործ մարդկային, այսինքն զկա-
մաւորութիւն գործոյ ոչ բառնայ բոլորովին՝ այլ ըստ ի-
միք, այսինքն նուազէ և ԹԷ։ Իսկ ԹԷ երկիւղ ազատ
կացուցանիցէ յօրինայ ԹԷ ոչ, ասացաք զայսմանէ՚ի
վեր անդր։ (գլ. Բ. 44.)։ Այլ ԹԷ երբ անվաւեր զգործ
առնիցէ երկիւղ, զայսմանէ ասացուք՚ի Հառս ուխտից,
դաշանց, և ամուսնութեան։

19. Արդեօք առնուն գործք մարդկայինք զբարութիւն
իւրեանց կամ զչարութիւն։—Իւրաքանչիւր յառարկա-
յից և՚ի հանգամանաց նոցա. իսկ տեսակապէս, այս-
ինքն զբարոյական բարութիւն կամ չարութիւն, յա-
ռաքինութեանց՝ որոց Համաձայնին կամ Հակառակին։
Զոյսչափ ինչ շատ լեզի՚ի պատասխանի խնդրոյս ըստ
տեսական մասին, զի ըստ գործնականին խօսեսցուք՚ի
ստորև (31.)։

20. Զրդեօք գործն արտաքին չաւելու ինչ այլ բա-
րութիւն կամ չարութիւն՚ի գործն ներքին ըստ էական
մասին վարձուց կամ պատժոց, զի ըստ պատահակա-
նին չաւելու ստուգիւ որպէս ամենայն աստուածաբանք
միաբանին։—Մովմնայականք ընդ առաւելագոյնս՚ի բա-
րոյականաց ժխտեն, իսկ սկովտականք Հաստատեն.
բայց ըստ տեսականին է խնդիրն, իսկ ըստ գործնակա-
նին միաբանին և Թովմնայականք զի՚ի կատարել ուրուք
գործով զչարութիւն՝ առաւել չարընչին կամք՚ի չա-
րին, և արտաքին գործոյն չաւելու աներկբայապէս
չարութիւն կամաց, որպէս և պատահէ սովորաբար.
վասն որոյ ասէ Հաբեթ զի «Որ կատարէ զմեղս գոր-
ծով, պարտ է ասել զի առաւել ինչ գործէ չար քան
զայն՝ որ ցանկայ և ԹԷ գործել»։

21. Արդեօք արդեօք գործ մարդկային անխտրա-
կան, այսինքն ոչ բարի և ոչ չար։—Իաբանին Թով-
մնայականք ընդ սկովտականս զի մարթի ըստ տեսակին
կամ ըստ առարկային, որպէս ջրջել, Հայել և այլն.

վան որոյ խնդիրն է զգործոց իւրաքանչիւր ուրուք՝ի մարդկանէ, եթէ մանրթ իցէ ուժեք առնել ինչ ոչ բարի և ոչ չար։ Կովտականք հաստատեն, այլ Թովմեայականք հաւանականագոյնս ժխտեն. զի մարդոյ, քանզի բանաւոր է, պարտ է յամենայն գործս իւր ունել դիտաւորութիւն ինչ բարի. զոր եթէ չունիցի, ոչ ևս անխոտրելի է գործ նորա, բայց եթէ ոք առ տգիտութեան գործեսցէ անխորհրդաբար։

ՅՕԴՈՒԱԾ Բ

22. Յմահուչափ և զներելի մեղաց։
24. Յաղագս զգաստութեան մտաց։
26–31. Յաղագս հաւանութեան կամաց։
32. Զխնաստասիրական մեղաց։

22. Ասուրբն Ա[ստ]ուածոյ Ա[ստ]ուածաբան և սուրբն Յովհաննես սահմանեն զմեղս՝ Ա[ստ]ուած, գործ կամ ցանկութիւն ընդդէմ յաւիտենական օրինաց. քանզի յայսմ իսկ է տեսակաւոր չարութիւն մեղաց, և այսուիկ սահմանես այս բովանդակել և զձեռնտուութիւն մեղաց, զի և այս ընդդէմ է օրինացն Ա[ստ]ուածոյ. բովանդակել և զօրինազանցութիւնս ընդդէմ մարդկային օրինաց՝ որոյ հրամայեն հնազանդել աստուածայինքն. «Ա[ստ]ուածոյ հրամանին հակառակ կայ իշխանութեան, Ա[ստ]ուածոյ հրամանին հակառակ կայ.,.» (Հռոմ. ԺԳ. 2)։

23. Ա[ստ]ուածային մեղք ծանուցնք իսկապէս Թշնամանք են Ա[ստ]ուածոյ. իբր ոչ եթէ իրօք Թշնամանիցի Ա[ստ]ուած, զի որպէս նոյն ինքն սուրբ Ա[ստ]ուածային ասէ՝ անմարթ է Ա[ստ]ուածոյ ընդունել Թշնամանս, այլ յիղձս մեղաւորին՝ որ իսկապէս Թշնամանէ և արհամարհէ զԱ[ստ]ուած, ի վայր քան զարարածս զնա դասելով։ Ասէ Թէ պարտ իցէ և զներելի մեղս Թշնամանս Ա[ստ]ուածային օրինաց կոչել կենք յաստուածաբանիչ հաստատեն. զի Թէպետ սուրբ Ա[ստ]ուածային զներելի մեղս ոչ ընդդէմ օրինաց համարի՝ այլ արտաքոյ օրինաց, սակայն այսուիկ կամի ասել՝ զի ներելի մեղք ընդդէմ պատուիրանի ևԹէ օրինաց են, և ոչ ընդդէմ վախճանի նոցա՝ որ է աստուածսիրութիւն. բայց և պատուիրանս այս օրինապահութեան հրամայեալ է, որպէս յասելն՝

“Ա՛յլ ես սահեմ ձեզ՝ ամենևին մի երդնուլ,,. (Մա՛ծ. ե. 34)։ Ա՛յլ և ներելի մեզք ընդդէմ են օրինաց։

24. Ա՛ր ’ի մեզս համարելոյ իմիք՝ պարտ է զի իցէ կամաւոր, որպէս ’ի վեր անդր ասացաք (5.) և առ ’ի գոլ կամաւոր մահու չափ մեզայ՝ պարտ է զի իցէ ’ի նմա կատարեալ հաւանութիւն գործողին։ Ա՝ան որոյ խնդրի նախ լի և կատարեալ զգաստութիւն մնաց և գիտութիւն չարութեան իրին, զի շարժմունք ցանկութեան՝ որ նախ առաջինն կոչին կանխելով քան զբան, չհամարին ’ի մեզս։ Շարժմունք՝ որ թերակատար զգաստութեամբ մնաց ներգործին, որպէս ’ի քուն կիսարթուն կամ ’ի զբաղման մնաց, չհամարին ինչ աւելի քան զնեբելի մեզս։ Նոկ շարժմունք կշռադատեալք, զորոց ծանր չարութիւն գէթ խառն ’ի խուռն խմանան միտք, և հաւանին ընդ այնս կամք, ծանր մեզք են ըստ ամենայն աստուածաբանից. յորոց սուրբ Գրոյն ինայելոյ. “Մեզք ըստ իւրումն առարկայի մահու չափ՝ ըստ անկատարութեան բարոյական ներգործութեանն կարէ գոլ ներելի, եթէ չիցէ կշռադատեալ այլ յանկարծագործ,,։

25. Ա՛ր մնացու մեզս խնդրի արդեօք զգաստութիւն մնաց կամ գիտութիւն բացայայտ չարութեան գործոյն, թէ շատ իցէ զօրութեամբն։ — Ա՛րկակի մարթ է գիտել ինչ զօրութեամբ. մի՝ յորժամ ոք երկբայի մահու չափ ինչ թէ ներելի գործիցէ մեզս, և յայնժամ՝ ստուգիւ մեղանչէ մահու չափ՝ եթէ գործիցէ առանց ’ի բաց դնելոյ զկասկած. իսկ եթէ գիտիցէ զպարտս խնդրելոյ զչմարտութիւն և չկարելոյ գործել կասկածանօք։ Ա՝իւս և եղանակ զօրութեամբ գիտելոյ ինչ այն է, յորժամ ոք պատճառս տայ մեզայ. այլազգ ’ի միմեանց խօսին զայսմանէ բարոյականք, այլ ’ի վերջ միաբանին զի գէթ ’ի սկզբան խնդրի բացայայտ զգաստութիւն մնաց գիտելոյ զծանրութիւն իրին և զարգասիս չարեաց՝ որ անտի հաւանականաբար կարեն յառաջ գալ, կամ գոնէ գիտելոյ զպարտս ’ի մտածել զհետեւանս գործոյն։ Ա՝ գործոյ այսպիսեաւ զգաստութեամբ մնաց գործեցելոյ հետևեալ չարիք՝ իբր արգասիք առաջնոյ պատճառին՝ մահու չափ են ստուգապէս վասն զօրութեամբ գիտութեանն։ Ա՛յլ այն ամենայն ար-

գասիք Հանդէս ընդ պատճառին մի միայն մեղք են, որպէս ուսուցանեն աստուածաբանք գրեթէ առ Հասարակ։

26. Որ մահուշափ մեղս խնդրի դարձեալ կատարեալ Հաւանութիւն կանոց, զի առանց կամաւորութեան չիք մեղանչել։ Պարտէն մարթ է կանոց Հաւանել և անուղղակի ընդ մեղս ծանուցանս, որպէս ի տալ պատճառս նոցին գիտելով զհետևանսն, այլ այս՝ ուրանօր պարտ իցէ խափանել զհետևանսն. իսկ ուր չիցէ այս պարտ, անպարտ է ոք ի չարեաց հետևանացն՝ ընկամելով զայնս գրականապէս, թէպէտ և նախատես իցէ այնց։

27. Գիտելի է զի յետ իմացման մտաց երրակի մարթ է կանոց շարժիլ յառաջարկեալ իրն մեղանչական. նախ՝ Հաւանելով դրականապէս ընդ այն, երկրորդ՝ զդեմ ունելով դրականապէս, և երրորդ՝ ոչ Հաւանելով և ոչ զդեմ ունելով, անմէտ ի մի կայս։ Որդ խընդիրը է՝ Թէ մեղիցէ մահուշափ որ այսպէսն առնիցէ, ոչ զդեմ ունելով դրականապէս զպայական բաղձանացդ ի ծանր ինչ մեղանչական։ — Պատ Ձմեռատոգոյն կարծեաց յոլովից ի բարոյականաց և սրբոց Պատուհասչուին՝ մեղանչէ, այլ ոչ մահուշափ. զի վտանգն Հաւանութեան՝ որ կարէ զհետ գալ ի չունելոց զդեմ՝ ոչ է մեծաւոր, այլ հեռաւոր Լեթ։

28. Որ ոչ զնոյն է ասել զմարմնական հեշտութեանց, որոց ըստ Հասարակաց վարդապետութեան պարտ է մեզ Հակառակ կալ դրականապէս ընդ ծանր մեղաց. զի այսոքիկ եթէ իցեն սաստիկք, գիւրաւ զհետ ձգեն զկամոց Հաւանութիւն ի չՀակառակել նորա այնոցիկ դրականապէս։

29. Յաղագս այսպիսեաց փորձութեանց գործով ընդդեմ ունելոց, օգնէ յոյժ առ ի նուազել զարտաքին և զդպայական շարժումն մասանց՝ Հանդերձիւք զայնս նուաճել, ըստ խրատու ուրումն յարդեաց բարոյականաց։ Իսկ առ ի պահպանել զՀոգի ի Հաւանութենէ, օգնէ յոյժ խորհել զարչարանս Քրիստոսի, զտանջանս դժոխոց, և զմահ՝ որում մարթ է ի մեղս անդ ի վերայ Հասանել. օգնէ և ևս զմտաւ ածել զնայել խղճի, որ զհետ մեղաց խոշտանգէ զսիրտ մեղաւորի։ Որ ի

վեր քան զամենայն օգնէ և կարևոր իսկ է յայսպիսի փորձութիւնս դիմել առ Աստուած ըստ իմաստնոյն բանն. «Վիտացի ոչ այլազգ լինիցիմ ժուժկալ, բայց եթէ Աստուած տայցէ»։ (Ծնաբ. Ը. 21)։

Պարտ է խոստովանահօր ազդ առնել զայսոսիկ ապաշխարողաց, և մանաւանդ զարձադարձիւ անկելոց. մի՛ շատասցի խոստմամբ և եթէ նոցին, և մի՛ առանց խրատելոյ զնոսա՝ ածել Թափիցէ՛ի վերայ զարձակումն։ Օգուշացուսցէ զնոսա մի՛ յամել՝ի վէճ ընդ փորձութիւնս այլ նորոգել զառաջադրութիւն կամելոյ զմահ յանձն առնուլ քան մերձենալ տեառն, և ուսուսցէ կարդալ միշտ զանուն Յիսուսի և Աբրիամու յօգնութիւն։ Ասացի մի՛ յամել՝ի վէճ. զի հոգևոր հարք առ հասարակ առ՛ի յաղթել մարմնական փորձութեանց, որպէս և որ ընդդէմ հաւատոյ գան փորձութիւնք՛ի միտս՝ լաւագոյն համարին քան զձակատել ընդ նոսա՛ի պատերազմ և խնդրել ընդդէմ այնոցիկ զինս, դալ. ձուցանել՛ի նոցանէ զմիտս՛ի բաց յայլ խորհուրդս. և եթէ թեթև իցեն շարժմունքն, արհամարհել իսկ զայնս։

30. Վիտելի է դարձեալ զի չէ պարտ դրականապէս զդէմ ունել փորձութեանց կամ մարմնական շարժմանց, ուր իրաւացի պատճառք իցեն. որպէս եթէ ըզփորձ առեալ զիտիցէ ոք զի յաճախեն՛ի վերայ իւր փորձութիւնք զդէմ ունելով, և դադարեն արհամարհելով. և դարձեալ եթէ շարժմունքն այնոքիկ յառաջ գան՛ի կարևոր կամ յօգտակար լինել իրաց, որպէս՛ի լսելոյ զնոսոտավանութիւն, յընթերցմանէ բարոյական կամ բժշկական մատենից, ՛ի շնչափմանց կարևորաց առ՛ի դարման, և այլն։ Զի յայնժամ չէ ոք պարտական Թողուլ զգործն՝ յորմէ շարժմունքն այնոքիկ սկսան յառաջ գան, և ոչ դրականապէս զդէմ ունել այնց՛ի չարատևել նոցին, ուր գժուարին յոյժ լիցի հալածել զնոսա անդադար։ Ասան որոյ շատ է չայնժամ, զի եթէ վասն երկիւղածաց, փոյթ ունել չտալոյ հաւանութիւն, զի և զգուշութիւնս իսկ այս պատերազմել է ընդդէմ փորձութեանց։

31. Վիտելի է դարձեալ զի առ՛ի մեղս պղերգութեան խնդրի ներգործութիւն կամաց դրական և մտա-

ձեալ՝ զանց առնելոյ զհրամայեալ գործոցն։ Այլ դարձեալ մեղք պղերգութեան՝ որ յառաջագրեալ պատճառէ ուստեք գան յառաջ, գործին՝ ոչ ի վերջանալն անդ ի պարտուց, այլ անդստին ի դնել զպատճառ վերջանալոյն, որպէս Հաստատեն Անքէզ, Պռնաչինա, Պեքանոյ և այլք։ Ասն որոյ որ նախատեսութեամբ հետևանացն դնէ զպատճառ, որպէս որ արբենայն՝ գիտելով զի զանց զպատուիրանաւ տեսանելոյ զպատարագ առնելոց է, թէպէտ և կարասցէ ապա տեսանել զպատարագ, պարտաւոր է մեղաց պղերգութեան՝ որում արբեցութեամբն ետ պատճառս։ Այլ եթէ բանադրանք ի վերայ կայցէն կատարման մեղացն, և նախ քան զկատարումն հետևանացն զղջասցի ոք, թէպէտ և պարտաւոր գտանի հետևանաց չարեացն, այլ ոչ անկանի ընդ բանադրանօք. զի առ ի բանադրանս խնդրի յամառութիւն մինչև ի լուծմն մեղացն։ Իսկ եթէ ոք թողեալ զպատարագ՝ երթիցէ յորս կամ ի խաղ, շատ է նմա խոստովանել զպղերգանաւն ի պատարագէ. զի խաղն և որս յայն սակս համարին նմա ի մեղս ծանունս՝ զի զանց զպատարագաւն արար։

32. Պիտելի է դարձեալ զի դատապարտեալ է Ալեքսանդրէ Ը. վարդապետութիւնն այն, որ չհամարի մահու չափ և ոչ արժանի յաւիտենական պատժոց զէ- ֆսպսպէրեան յորջորջեալ մեղս, այսինքն յորժամ գործէ ինչ ոք ձանաչելով զայն ընդդէմ լուսոյ և եթ բանին, այլ ոչ ընդդէմ աստուածային օրինաց։ Ո՛ի որ ձանաչէ զգործ ինչ ընդդէմ լուսոյ բանին, ձանաչէ գէթ ընդ աղօտ՝ զի է այն և ընդդէմ արարչի և տուողի նորին։

ՅՕԴՈՒԱԾ Գ

33. Խղճ, ախորժ, հեշտութիւն:
34. ՊաՓրա իսկ զտեսակ հեշտութեան բացատրել:
35. Հեշտանալ ընդ զաղջադործութիւն և ընդ խորհուրդ զաղջադործութեան:
36. Խղճ գործելոյ ինչ չար, եթէ էր այն օրինաւոր:
37. Ախորժ և խղճ խօսեցեալոց և ամուսնոց:
38. Ախորժել ընդ չարիս վասն բարի արդասաց:
39. Ընդ չարիս այլոց վասն բարի վախճանի:
40. Ընդ արգելեալ ինչ՝ ի դրական օրինաց:

33. Ի մեղանչական խորհուրդս պարտ է զանազանել զիղձս, զախորժ և զյամեալ հեշտութիւնս: Ուղձք հային յապառնին, այսինքն եթէ ոք ցանկայ խորհրդածեալ կամօք գործել չար ինչ. և ասի գործուածեայ, եթէ առաջադրեր կատարել զայն. իսկ անգործուածեայ, եթէ առաջադրեր իսկ՝ եթէ կարեր կատարել զայն, որպէս թէ ասել՝ Յափշտակէի զդանձս եկեղեցւոյ, եթէ կարէի: Ախորժ հայի յանցեալն, այսինքն եթէ ոք հաճի ընդ գործեցեալ չարիս: Իսկ յամեալ հեշտութիւն հայի՝ ի ներկայն, այսինքն եթէ ոք ընդ միտ ածէ զմեղս ինչ, և հեշտանայ ընդ այն՝ որպէս թէ գործիցէ զայն յայնժամ. և ասի յամեալ, իբր ոչ եթէ առանց յամելոյ յայն ընդ երկար՝ չգործիցին մեղք, զոր՝ ի թարթել ակն մարթի և գործել, այլ առ՝ ի նշանակել զկամաւոր յամեցումն:

34. Ընդ եթէ ուղձք և եթէ ախորժ բովանդակեն հաճոյքն զչարութիւն և զտեսակ մտածեալ մեղացն. վասն որոյ եթէ ոք ցանկայ լինել ընդ ումեք և կամ հաճի ընդ լինելն, պարտի բացատրել ընդ կուսի թէ ընդ արամբեայ կամ ընդ հաւատաւորի էին խորհուրդք իւր. և եթէ պարծի ոք՝ ի մեղս լինչ իւր, պարտի բացատրել՝ ի խոստովանութեան զտեսակ մեղացն. զի՝ ի պարծելն յաւելու սովորաբար՝ ի չարութիւն պարծանացն և ղհաճութիւն ընդ գործեցեալ մեղսն՝ յոր պարծի:

Իսկ թէ պաՓրա իսկ զնոյն և զյամեալ հեշտութենէ ասել, խնդիր է առ բարեյականս. կէսք հաստատեն, և կէսք ժխտեն. և որք ժխտենն՝ յաւելուն, զի եթէ ոք

հեշտանայ ընդ լինելն ընդ արամբւոյ, ոչ վասն չնու-
թեանն՝ այլ վասն գեղեցկութեան և եթե նորա, ոչ գոր-
ծէ մեղս չնութեան, զի ոչ մտանեն հանգամանք չնու-
թեան ՚ի հեշտութիւն նորա որպէս յիղձս և ՚ի հաճու-
թիւն, որ բռնադակենն զմեղս ըստ ամենայն մասին՝
առանց կարելոյ զատանել զայն ՚ի հանգամանացն։ Ա՛յս
կարծիք հաւանական յոյժ է ըստ տեսականին, այլ ըստ
գործնականին ասելի է՝ թէ պարտ է բացատրել ՚ի հեշ-
տութեան զամենայն հանգամանս անձինն, զի ՚ի մտա-
ծելն զնմանէ հեշտութեամբ, դէթ վտանգ մեծ է ըն-
ձէից մեղանչելոյ ընդ նմա։

35. Կ՚երեւի է գարձեալ զի այլ է հեշտանալ ընդ
չարն, և այլ ընդ խորհուրդ չարին։ Որ հեշտանայն ընդ
չար, եթէ ծանոյ ինչ իցէ գործն չար, ծանրապէս և
ինքն մեղանչէ. իսկ որ հեշտանայն ընդ խորհուրդ գոր-
ծոյն չարի՝ առանց հաճելոյ ընդ գործն, որպէս որ ըն-
թեռնու զաղիրս և յընթերցումն եւեթ նոցին հեշտա-
նայ՝ առանց հաճելոյ ընդ նոսին, մարթ է և հեշտու-
թեանս այսմիկ գոլ ծանր մեղք՝ ուր իցէ մերձաւոր վը-
տանգ հաւանութեան. այլ ուր չիցէ այսպիսի վտանգ,
ներելի մեղք են. և չեն իսկ մեղք, ուր իրաւացի պատ-
ճառք իցեն ընթեռնելոյ կամ խորհելոյ զայսպիսիս, որ-
պէս յուսանելն, ՚ի բժշկելն, ՚ի լսել զխոստովանութիւն
և այլն։ Կ՚ասպէս ուսուցանեն սուրբք Կ՚ռւինացին,
սուրբն Կ՚նտանինոս, Սալմատիկեանք և այլք գրեթէ
առհասարակ։

36. Կ՚րդեօք ծա՞նր մեղք իցեն ցանկալ ծանր ինչ
մեղս գործելոյ, եթէ էր օրինաւոր։ — Յիրս արգե-
լեալս ՚ի գրական օրինաց յայտ է թէ ոչ. երկբայու-
թիւնն է զկրաց, զորս արգելուն բնական օրէնք։ Յա-
ղագս այսորիկ պարտ է զանազանել. եթէ պայման ըզ-
ձիցն բառնայ զչարութիւն գործոյն, որպէս եթէ ասի-
ցէ ոք. Կ՚ռնուէ զքէն այսր ուրուք, եւրէ ներքէր ինչ Կ՚պռուած.
ոչ մեղանչէ, դէթ ծանր ինչ մեղս։ Իսկ եթէ պայմանն
ոչ բառնայ զչարութիւն գործոյն, որպէս եթէ ասիցէ
ոք. Սպանանէի զայս ոմն, եւրէ չէին ոք ծիսոյս. մեղանչէ ծանր։
Այնպէս և որ ասիցէ. Կ՚րէ չիմաստքէր ՚ի մեղս, չինաւորքէր
լինէի, հայհոյէի, և այլն. զի այսոքիկ ըստ ինքեանս են
մեղք, և չէ մարթ ՚ի բաց առնուլ յայսցանէ զչարու-

թիւն, որպէս ասեն Յանքէզ, Լայման և Ղզըլիոյ։ Նայց Յուարէզ, Պոնաչինա և այլք ոչ սակաւք ասեն հաւանականաբար, զի որ ցանկայ չարի՝ պայմանաւ չլինելոյ իրին չար, ոչ ցանկայ այնմ իսկապէս, այլ դյօժաւրութիւն իւր յայն ցուցանէ, որ չէ ինչ մահուչափ։ Նոկ որ ցանկայ անպայման՝ զի ըստ ինքեան չարն՝ չլինէր արգելեալ, չէ աղատ ’ի մահացու մեղաց· քանզի ցանկայ աստուածադիր կարգի և օրինաց բնութեան վերը ’ի վայր յեղաշրջելոյ, որպէս ուղիղ իմաստասիրեն Յալմատիկեանք և այլք։

37· Օրէն իցէ խոսեցեալոյ ախորժել ընդ հանդերձեալ հարսանիս իւր ընդ խոսեցեալումն, այսինքն ընդ լինել իւր ընդ նմա։ — Յանք օրէն համարին, այլք պայման դնեն ախորժանացն՝ զի իցէ բանականին և ոչ ցանկութիւն, առանց վտանգի զգայականին, իմա առանց մարմնական շարժման։ Նայլ պարտ է հաստատել ընդ բազումն զի չէ երբէք օրէն, ոչ ըստ միումն և ոչ ըստ միսսում եղանակի· զի ախորժն այն առաջի կացուցանէ զառարկայն· և այս առանց ամենևին թութեան՝ որ օրինաւոր առնէ զայն՝ չմարթի գոլ անմեղանչական։ Յան որոյ ախորժն այն գտանի լեալ ընդ մեղանչական ինչ· զի թէպէտ և պայմանաւ է հաւանութիւնն ընդ առարկայն, այլ առանց պայմանի է ախորժն։ Նայլ ինչ է, ասէ Յոնքաչեա, ցանկալ և ոչ ցանկալ ընդ խոսեցելումն յորժամ լիցի իւր կին· զի այսուիկ ցանկայ հանդերձելոյ օրինաւոր իրին։ Նայց և առ այս ասելի է, զի յիշեաց այսպիսիս յամելով ուրուք ’ի խորհել՝ վտանգ մեծ է անդստին հեշտանալոյ, վասն որոյ պարտ է խոստովանահօր արգելուլ խոսեցելոյ չյամել յայսպիսի իղձս։ Նայց առն ’ի բացեայ ’ի կնոջէն ախորժել ընդ անցեալ կամ ընդ ապառնի լինելն ընդ նմա՝ յոյժ հաւանական է զի չէ ըստ ինքեան մահացու· Թէպէտ և Յալմատիկեանք և Յոնքաչեա զհակառակն հաստատեն, եթէ հանդերձ մարմնական շարժմանքն իցէ ախորժն։ Նայց եթէ շօշափմունք իսկ անհամեստաբար, որոց չէ մարթ առանց մարմնական շարժմանց կամ գէթ մերձաւոր վտանգի նոցա լինել, օրինաւորք են ամենևին առանց վտանգի դիջութեան, և նոքին իսկ Յալմատիկեանք

չգատապարտեն զայն ՚ի մահուչափ մեղս, ապա օրինաւոր իցէ և ախորժել ընդ անցեալ կամ ընդ ապառնի վայելս իրերաց։ Ի սոյն կարծիս են սուրբն Կիտոնիոս, Կայէթանոյ, Ի ասպուէզ, Ի աքրուա, Սուարէզ, Վերսոն, Ի այման, և այլք. զսոյն յայտնապէս ուսուցանէ և սուրբ Գրիգուրեացին։

38. Օրէն իցէ արդեօք ախորժել ընդ գործ ինչ ըստ ինքեան չար, վասն բարւոյն՝ որ անտի հետևեալ։ —Պարտ է զանազանել. եթէ գործն տեսակապէս լեալ է չար, այսինքն մեղօք գործեալ, ոչ է օրէն ըստ ամենեցուն իսկ բարոյականաց. իսկ եթէ առանց մեղայ իցէ արարեալ, ամենևք օրէն համարին ախորժել ընդ այն որպէս ընդ պատճառ բարւոյ։ Այլ պարտ է ասել ընդ բազումս յաստուածաբանից, զի ախորժն այն չէ երբեք օրինաւոր. զի թէպէտ և գործն այն չիցէ արարեալ մեղօք, սակայն միշտ է չար։ Եւ ոչ իսկ միայ զայսմանէ տեղի երկբայութեան յետ դատապարտելոյ Ինոսէնտեայ ԺԱ. զերկոսին զայսոսիկ վարդապետութիւնս. “Պարտուպատշաճ չափաւորութեամբ օրէն է առանց մահուչափ մեղանչելոյ տրտմել ընդ կեանս ուրուք, և ուրախ լինել ընդ բնական մահ նորա, խնդրել զայն անդորձ բաղձանօք, և ցանկալ այնմ, ոչ վասն դժկամակութեան ընդ նմա ունելոյ, այլ վասն ժամանակաւոր ինչ օգտի,,։ Եւ դարձեալ. “Օրէն է բացարձակ ըղձիւք ցանկալ մահու հօրն, ոչ առ չարիս նմա կամելոյ՝ այլ վասն բարիս անձին ցանկալոյ զփարթամ ժառանգութեանն որ՚ի նմանէ,,։ Եւ պատճառք իրաւացի դատապարտութեանն, զի ըստ օրինաց եղբայրսիրութեան պարտ է մեզ նախադասել զկեանս այլոց քան զամենայն ժամանակաւոր օգուտ և զփառս մեր։

39. Այլ օրէն է ցանկալ և ուրախ լինել ընդ ժամանակաւոր տոյժս ընկերին վասն բարւոյ հասարակաց կամ անմեղի ուրուք կամ նորին իսկ տուժելոյն, որպէս ուսուցանեն բազումք ՚ի բարոյականաց ընդ սրբոյ Գրիգորեացին՝ որ ասէ. “Օրէն է առանց գործելոյ ընդդէմ եղբայրսիրութեան՝ ցանկալ ժամանակաւոր արկածից ուրուք, և ախորժել ընդ այն որպէս ընդ խափանումն չարեաց այլոց ուրուք կամ հասարակաց կամ եկեղեցւոյ,,։ Ըստ այսմ օրէն է, պահելով միշտ զկարգ եղբայրսիրու-

թեան, ցանկալ և ախորժել ընդ հիւանդութիւն և ընդ մահ իսկ ամենազօրին յօրինակ այլոց, ի դադարումն գայթակղութեան և հոգևոր ճաշակու այլոց: Ըստ այսմ օրէն է ուրախ լինել և ընդ ժամանակաւոր տոյժս ուրուք առ ի խափանումն տուժից հասարակաց: Այսպէս օրէն է և հօր, որպէս ասեն Ալմատիկեանք և Ինքալեա, կամել զմահ որդւոյ՝ վասն արդար երկիւղի ի նախատինս տանն լինելոյ նորա: Այսպէս և Սոթոյ, Հասթրոփալ, Արանատա, Ալիա, Փոթեսթա, ընդդէմ այլոց, օրէն համարին ցանկալ մահու անձին՝ եթէ դառնագոյն քան զմահ թուեսցի ումեք բազմավիշտն կենցաղ վասն հիւանդութեան իւրոյ կամ աղքատութեան կամ այլոց տառապանաց: Այլ ոչ անհաւանական թուի այս որպէս զայն՝ զոր Ազորիոյ և Պոնաչինա օրէն համարին մօր կամել զմահ դստեր վասն չկարելոյ նորա ամենանանաղ առ տգեղութեան և աղքատութեան, կամ վշտակրելոյ իւրոյ յառնէն վասն դստերն:

40. Իսկ ախորժել ընդ իրս արդելեալս ի դրական օրինաց, որպէս յաւուրս պահոց ընդ խորտիկս և այլն, օրէն է և կամ գէթ չէ ինչ ծանր մեղք. այլ եթէ ոք յանդգնաց լուծեալ իցէ զպահս, չէ օրէն նմա ախորժել ընդ այն:

ՅՕԴՈՒԱԾ Դ

41. 42. Որոշումն մեղաց ըստ տեսակի:
43. Ըստ թուոյ. արմատ բազմապատկութեան ներգործութեանց:
44–47. Ներքին ներգործութիւնք:
48. 49. Արտաքինք.
50. 51. Արմատ զանազանութեան առարկայից:

41. Յորմէ արմատոց առնուն մեղք զորոշումն ըստ տեսակի: — Սուրբ Գրոլինացին ի մեղանչական առարկայից ասէ մեղաց առնուլ տեսակս, իսկ Սկովտ յայլևայլ առաքինութեանց՝ որոց մեղքն հակառակին: Հաւանականք են երկաքանչիւր, այլ երկրորդաւն դիւրագոյն ևս է զանազանել զտեսակս մեղաց: Սակայն են ինչ այլ և այլ մեղք՝ որ նմին միում առաքինութեան են հակառակք, որպէս ստերջմնութիւն և հայհոյու-

Թիւն Հակառակին կրօնիչ. վասն որոյ պարտ է ասել զի կրկին են արմատք զանազանութեան տեսակի մեղաց. մի՝ Հակառակել նոցա այլ և այլ առաքինութեանց, միւս և՝ այլ և այլ ազգ Հակառակել նոցա նմին միում առաքինութեան:

42. Իսկ թէ ինչ ըստ առարկային մեղք մարթի՞ ըստ յարակից Հանգամանաց ինչ ծանրանալ քան զմեղս ծանուցնա ըստ տեսակին: — Ասացուածք և Տուբանացոյ ժխտեն, այլ Հասարակաց կարծիք Հաստատեն. և պատահէ այս ոչ բնաբանապէս, այլ բարեյապէս. վասն որոյ ասէ սուրբ Աւգուստինոս զի անամնադիտութիւն ծանրագոյն է քան զերդմնազանցութիւն: Յորմէ՝ ի միտ առնուլ է զի կանոն որոշելոյ զտեսակս մեղաց՝ ի Հակառակ առաքինութենէ ոչ զօրէ, ուր զծանր ինչ մեղաց է խնդիր ընդդէմ իրիք յառաքինութեանց՝ առ Համեմատութեամբ թէթև ինչ մեղաց ընդդէմ այլոց առաքինութեան:

43. Պարձեալ և զզանազանութիւն մեղաց ըստ թուոյ՝ ի կրկին արմատոց է առնուլ. ՝ի կրկնութենէ ներգործանոյ բարոյապէս ընդհատելոյ, և՝ ի զանազանութենէ բուրական առարկայից: Յաղագս առաջնոյն թէ որպէս ներգործութիւնք կամաց ընդհատիցին, պարտ է զանազանել զիներքին ներգործութիւնս յարտաքնոց. և զիներքինս դարձեալ՝ ի մեղ՝ որ՝ ի ներքս՝ ի սրտի կատարին, որպէս ատելութիւն և մոլորութիւն, չար ցանկութիւնք, յամեալ հեշտութիւնք և այլն, և՝ ի մեղ՝ որ արտաքոյ բանիւ կամ գործով կատարին, որպէս հայհոյութիւն, գողութիւն և այլն:

44. Արդ ըստ այսոցիկ զանազանութեանց ասեմք, զի ներգործութիւնք ներքինք՝ ի մեղս սրտի ընդ կրկնեն և ընդհատին. այնպէս զի քանիցս և հաւանին կամք, նոյնչափ է թիւ մեղացն:

Ասն որոյ պարտ է ապաշխարողին բացատրել ըստ կարի զթիւ ներգործութեանց հաւանութեան. և եթէ չկարէ, գէթ բացատրել ընդհանրապէս ոչչափ ինչ ժամանակս յարատևեալ իցէ՝ ի մեղս անդ, և ստէպ թէ դուն ուրեք յաւուրն ներգործեալ՝ ի սրտի զատելութիւն կամ զիղձս մեղանչականս: Իսկ եթէ ներգործութիւնքս այսոքիկ՝ ի միջէ ևեթ՝ ի սաստկութենէ

կրից յառաջ գայցեն, Թէպէտ և սուղ ինչ ընդհատու-
Թեամբ յիրերաց, մի և եթ Համարին մեղք, որպէս ու-
սուցանեն Լուկաս, Ալ իւա և Յամպուրինի, և Թուի
Հաւանական կարծիք նոցա։

45. Խակ ներգործուԹիւնք ներքինք 'ի մեղս արտա-
քինս՝ որ կատարին քանիւ և գործով, որպէս բամբա-
սանք, գողուԹիւն և այլն, կրկնակի ընդհատին բարո-
յապէս. մի՝ նահանջմամբ կամաց, և միւս ևս կամա-
ւոր դադարմամբ, այսինքն եԹէ ոք ազատօրէն դադարէ
յառաջադրուԹենէ չարեացն. այնպէս պի 'ի մտաբերել
անդրէն 'ի նոյն առաջադրուԹիւն յետ կամաւոր դա-
դարմանն՝ կրկնէ զմեղս։

46. Ալ՝ իաբանին ամենայն բարոյականք պի նահանջ-
մամբ կամաց և կամաւոր դադարմամբ ընդհատին ներ-
քին ներգործուԹիւնք 'ի մեղս արտաքինս։ Խայց խընդ-
դիր է՝ Թէ արդեօք սովորական դադարմամբք ընդհա-
տիցին առաջադրուԹիւնք չարեաց 'ի մեղս արտաքինս։
Կէսք հաստատեն, և հաւանական է ըստ բաւականին
կարծիք նոցա. այլ հաւանականագոյն է այլոցն՝ որք ա-
սեն, պի եԹէ սուղ ինչ ժամանակ տեւէ առաջադրու-
ԹիւնՆ՝ ներգործուԹիւնք նորին կրկնեալք՝ չհամարին
ընդհատեալ։ Լայլ վասն համարելոյ սուղ կամ երկար
ժամուցուԹիւն, Հայրն Վինչինա սահմանէ օր մի վասն
երկարուԹեան, Հայրն Յոնքալեա ժամս երկուս,
այլք ժամուս չորս և ցհինգ. բայց սաստկուԹիւն ոչ
և է կրից չեւէ սովորաբար աւելի քան ժերկուս և ժե-
րիս աւուրս. վասն որոյ մարԹ է ժառաջադրուԹիւնն
չար, որ 'ի սաստկուԹեան անդ կրիցն արարեալ՝ ոչինչ
աւելի քան ժերկուս կամ ժերիս աւուրս յառաջ, հաս-
րել մի և եԹ մեղս ընդ կատարումն գործոյն։ Խակ եԹէ
աւելի քան ժաւուրս երիս իցէ տևեալ առաջադրու-
ԹիւնՆ չարեացն, պարտ է ընդհատեալս Համարել ներ-
քինս ներգործուԹիւնս մեղացն և կրկնեալս՝ ըստ ամե-
նայն դադարմանց 'ի քուն 'ի ժգաղմանս և այլն։

47. Խայց եԹէ ներգործուԹիւն կամաց յարատևէ
'ի գործ ինչ արտաքին, որպէս գողոյ ունել առ իւր ըզ-
գողօնն առաջադրուԹեամբ չդարձուցանելոյ զայն առ
տէր իրին, Համարելի է մի և եԹ մեղս, որպէս յայժ
հաւանականաբար ուսուցանեն առաւելագոյնք 'ի բա-
րոյականաց։

48. Յայսվայր զնեղքին ներգործուԹենէ արտաքին մեղաց. իսկ արտաքին ներգործուԹիւնք նոցա ընդհատին բարեյաւելս, եԹէ չկոչեն ’ի կատարումն միոյ իրիք ներգործուԹեան կարգեալ. որպէս եԹէ ոք առ ատելուԹեան հարկանէ զՔրիշնամին առանց կամելոյ սպանանել զնա, մին մի ’ի Հարուածոցն այլ և այլ մեղք են. զնոյն է ասել և զանկարգ շօշափմանց՝ որ առանց այլոյ իրիք դիտաւորուԹեան գործին: Իսկ ’ի մի ևեԹ մեղս Համարին, նախ՝ եԹէ անդատին ’ի նմին Թափոյ կրից յառաջ գայցեն, որպէս յորժամ ոք ’ի զայրոյթ բարկուԹեան կրկնէ և երեքկնէ հայհոյել կամ նախատել և կամ հարկանել միահետ. և երկրորդ՝ եԹէ ներգործուԹիւնքն այնոքիկ արտաքինք ’ի կատարումն միոյ ևեԹ մեղաց լցեն, որպէս զկն առնուլ ուրուք, խնդրել զՔրիշնամին, և կրկնել և երեքկնել ’ի նա զՀարուած առ ’ի սպանանել. նոյնպէս և որ դիտաւորուԹեամբ պղծելոյ ընդ ումեք՝ խօսի ընդ նմա, Համբուրէ զնա և շօշափէ: Այս ամենայն ’ի մի ևեԹ մեղս Համարին, և շատ է յայնժամ խոստովանել զմարգասպանուԹիւն կամ զպղծուԹիւն ընդ կնոջ գործեալ:

Այլ արդեօք պարտ իցէ խոստովանել զշօշափմունս իսկևիսկ զՀետ պղծուԹեանն արարեալս: — Այլ է պարտ, զի որպէս լուծին այնոքիկ և մի ընդ այնմ Համարին. եԹէ միայն շօշափմունքն այնոքիկ (զնոյն է ասել և զՀեշտուԹեանց) չառնիցին դիտաւորուԹեամբ միասնագամ կրկնելոյ զմեղն: Սակայն դիտելի է ըստ Հասարակաց վարդապետուԹեան աստուածաբանից, զի եԹէ չյաջողեսցի ումեք կատարել զդիտաւորուԹիւն իւր, պարտի խոստովանել զամենայն Հնարս արտաքինս՝ զորս ’ի կիր արկեալ իցէ առ այն, զորմէ զանգիտէ, շօշափմունս, զերծի իւր ’ի գործ մեղացն, և զամենայն ինչ որպէս այլ և այլ մեղս. զի այն ամենայն գործք արտաքինք առնուն զտեսակ չարուԹեան զմեղանչական վախճանին:

49. ԼԹէ կամելով ոք զողանալ Հազար դահեկան, ’ի բազում նուագս գողանայցէ զայն, միԹէ բազում մեղս գործէ: — Գործէ բազումս, զի յիւրաքանչիւր իսկ նուագս է ինքնուրոյն գողուԹեանն չարուԹիւն:

50. Երկրորդ արմատ բազմապատկուԹեան արտաքին

ներգործութեանց մեղայ է զանազանութիւն բոլորա-
կան առարկայից: Բդ ինդիր է առ բարոյականս թէ
արդարև վասն այլ և այլ առարկայից բազմապատկիցին
մեզք. որպէս որ միով ևեթ հարուածով սպանանէ
զբազումս, մի՞ ևեթ գործիցէ մեզս թէ բազումս: —
Ամենք մի մեզս համարին գործել սպանողին. այլ ընդ
առաւելագոյնս յաստուածաբանից պարտ է ասել զհա-
կառակն: Ո՞վ որպէս նմին գործոյ մարթ է ունել այլ
և այլ տեսակս չարութեան զանազանեալս յիրերաց,
զնոյն է ասել և ըստ Թուոյ, եւս և ընդդէմ մի և նոյն
առաքինութեան. որպէս եթէ կանամբի ընդ արամբեայ
գործիցէ շնութիւն: Ա՝ան որոյ ասեմք զի այլ և այլ
մեզս գործէ, նախ՝ որ ՚ի մի ևեթ հարուած սպանանէ
այլևայլ անձինս, կամ միով բանիւ չարահամբաւէ զբա-
զումս:

Երկրորդ՝ որ միով գողութեամբ ՚ի բազմոց գողա-
նայցէ. այլ ոչ է պարտ իմանալ զայս զմիաբանութեանց
և զմենաստանաց և զժողովոյ կանոնիկոսաց, զի ինչք
նոցա չեն իւրաքանչիւրոց: Երրորդ՝ որ միով ներգոր-
ծութեամբ կամաց առաջադրէ լուծանել զայլ և այլ
պահս, կամ չարիս մաղթէ բազմաց, կամ ցանկայ այլ
և այլ կանանց, կամ բազումս անգամ ընդ մէն միում կա-
նել:

51. Բայց որ զայլ և այլ մասունս հաւատոյ միան-
գամայն ուրանայ, մի ևեթ մեզս գործէ. զի մի է առար-
կայ հաւատոցն՝ Ճշմարտութիւն առ ՚ի Աստուածոյ յայտ-
նեալ, վասն որոյ անհաւատ է հաւասարապէս որ զմի
՚ի մասանցն և որ զայլ և այլ մասունս հաւատոյ ուրա-
նայցէ: Նմանապէս և որ չարահամբաւէ զբազ առաքի-
բացոյց, Քրիստ, Սուրբն, Հուկաս և այլք, ընդդէմ
Աքրուայ համարին հաւանականաբար մի ևեթ մեզս
գործել նմա: Պարձեալ և որ այլ և այլ չարիս ըղձանայ
թէնաւմնոյն՝ որպէս չարահամբաւութիւն, տոչժս, մահ
և այլն, միով ևեթ դիտաւորութեամբ կործանմանն նո-
ցա, համարին հաւանականաբար Կայեթանոյ, Ա՝ա-
լենցիա, Պոնավինա, Աքրուա և այլք, մի ևեթ մեզս
գործել նմա, և շատ համարին ասել նմա ՚ի խոստովա-
նութեան Ջարիս Ծանուհա Մաղդեցի այլոմ: Այլ որ ըղ-
ձանայցէ այլ և այլ չարիս հասուցանել այլոմ գործով,

կամ զմի մի՝ի չարեաց յայնցանէ մաղթեսցէ նմա, պարտի մի առ մի բացատրել զայնս որպէս այլ և այլ մեղս։ Այլ եւս, Յուկոյ և Պալմատիկեանք համարին միակ մեղս սեղանակապտութեան գործել խոստովանահօր, որ՝ի մահուչափ մեղս արձակիցէ հետզհետէ այլ և այլ ապաշխարողս. այլ պարտ է ասել ընդ Պռնաչինայ, ընդ Ճուրնելեայ, ընդ Աքրուայ և ընդ այլս՝ գործել նմա ըստ թուոյ ապաշխարողացն այլ և այլ սեղանակապտութիւնս։ Այլ քահանային, որ՝ի մեղս հաղորդեսցէ զաւազումն, համարին ոմանք՝ և ոչ առանց հաւանականութեան՝ մի եւթ մեղս գործել։ Միակ թէ քանի՞ մեղս գործիցէ պատարագելով՝ի մեղս, ասասցուք՝ի Հառս Հաղորդութեան։

ՅՕԴՈՒԱԾ Ե

52. Արգասիք մահուչափ և ներելի մեղաց։
53. Քանի՞ օրինակաւ մեղք մահուչափ փոխին՝ի ներելի։
54. Քանի՞ օրինակաւ ներելին փոխի՝ի մահուչափ։
55. Զինչ և՝ի հաւանական վտանգի մահուչափ գոլոյ։

52. Մահուչափ մեղք զրկեն զմարդ յաստուածային ընծայայ՝ որ է կեանք հոգւոյ, վասն այսորիկ և կոչի մահուչափ կամ մահացու։ Միակ ներելի մեղք թէպէտ և չզրկեն՝ի ընծայայ, այլ նուազեն զսէր առ Աստուած։ Ասորքն Ընտնինոս խրատէ զհոստովանահարս մի՛ դատապարտել ինչ՝ի մահացու մեղս «առանց յայտնի վկայութեան սուրբ գրոց կամ եկեղեցական կանոնաց և սահմանադրութեանց, և կամ բացայայտ պատճառի»։ Ասան որոյ և յաւելուլ ընդ սուրբ Գրիգորնացւոյն, զի՝ի ծանր վտանգ մեղաց դնեն զանձինս՝ որք առանց այսպիսի սեաց հաւաստեաց դիւրաւ դատապարտեն զգործս իբրև մահուչափ մեղս, ՝ի նոյն խիղճ մտաց արկանելով զապաշխարողս։

53. Մեղք ըստ ազգի իւրում մահուչափ քանի՞ օրինակաւ կարէ փոխել՝ի ներելի։ — Ոմն մահուչափ մեղս երեք ինչ խնդրին. ծանրութիւն նիւթոյ, կատարեալ գաստութիւն մտաց, և կատարեալ հաւանութիւն կամաց. արդ ըստ այսոցիկ երեցունց գլխոց մարթի՛ մա-

հացու մեղաց փոխել ՚ի ներելն։ ՚Լախ՚ ըստ նիւթոյն ոչ է պարտ նկատել զծանրութիւն նորա միայնակ, այլ և ըստ յարակից հանգամանաց, ըստ բոլորին, և ըստ դիտաւորութեան. զի չմարթի լինել սակաւութիւն նիւթոյ՝ ուր սակաւութեամբն ոչ նուազին յանցանքն, որպէս ՚ի սիմոնականութեան, յերդմնազանցութեան, ՚ի զազրագործութեան և այլն։ Եւ դարձեալ նիւթք սակաւք յաճախութեամբն կացուցանեն նիւթ ծանր, յորժամ իրօք կամ գէթ բարոյապար միանան, որպէս գողնք մանունք, Հաշակք ՚ի ծոմապահս և այլն։ Երկրորդ՝ ըստ մտաց անզգաստութեան մարթէ ումեք զերծ գտանել ՚ի մանուշակի մեղաց, որպէս որ ոչ բոլորովին զարթուցեալն է ՚ի քնոյ, որոյ վերացեալ իցեն միտք, և որ կրկ յանկարծ ազմուկ սաստիկ ՚ի մտի, և առանց քաջ խելամտութեան գործէ ինչ։ Երրորդ՝ ըստ կամայ հաւանութեան, զոր յանձինս երկիւղածս ոչ է պարտ համարել կատարեալ՝ եթէ չգիտիցեն հաւաստեալ տուեալ զկատարեալ հաւանութիւն։

54. ՎՈրպէս օրինակաւ Հակառակ այսմիկ մեղք նեղելոյք կարեն փոխել ՚ի մանուշակի։ — Հնգեակ օրինակաւ։ ՚Լախ՚ ՚ի վախճանին, որ ըստ ինքեան իցէ մանուշակի. որպէս որ թեթև ինչ բան անհամեստ ասիցէ ումեք առ ՚ի ձգելոյ զնա ՚ի ծանր ինչ մեղս։ Երկրորդ՝ ՚ի յարընչութենէ սրտի յայն. որպէս որ գործիցէ ինչ ոչ ծանր ըստ ինքեան, այլ այնու յօժարութեամբ մինչև կամել նմա առ ոտն կոխել զպատուիրանս Աստուծոյ քան հրաժարել յայնմանէ. օրինակ լիցի որ առ սիրոյ բարեկամին կամեցեալ իցէ արբենալ քան հակառակել կամաց նորա. այլ շատ է նմա յայնժամ խոստովանել զկամս արբեցութեան։ Երրորդ՝ վասն տեսակս արհամարհութեան օրինաց և օրէնսդրին. որպէս յորժամ ոք զօրինազանցութիւն առ առելութեան օրինաց գործիցէ, կամ մեծաւորին առ ՚ի չհպատակելոյ նմա ստուգագանիցէ։ Չորրորդ՝ վասն գայթակղութեան փոքրկանց, որպէս ասացաւք ՚ի յաջորդ գլուխդ (28.)։ Հինգերորդ՝ վասն մերձաւոր վտանգի անկանելոյ ՚ի ծանր ինչ մեղս։

55. ՎՄանք համարին զի եթէ ոք ՚ի հաւանական և եթէ վտանգ ծանր մեղաց զանձն դնիցէ, չմեղանչէ մա-

հուչափ, միայն Թէ իցէ և հաւանականութիւն չանկա-
նելոյ և յայն. այլ այս կարծիք նոցա չէ ընդունելի։
Ո՞ւ Է Թէ չէ օրէն հաւանական կարծեօք վարել ուր
իցէ վտանգ միասու այլոց, որպէս ասացաքս՝ի վեր անդր
(գլ. Ա. 21.) ոչչափ և առաւել ուր իցէ վտանգ անձին հոգևոր։ Ո՞ւ Թէպէտ և անստոյգ իցէ անկումնն,
այլ ստոյգ է վտանգն. վասն որոյ ծանր մեղանչէ որ զնէ
զանձն յայսպիսի վտանգ, իմա առանց իրաւացի պատճառի. զի որ առ հարկի զանձն՝ի վտանգ արկանէ, որպէս հանդերձեալ եմք ասել զվիրաբուժէ և զժողովըրդապետէ՝ի վեցերորդ պատուիրանին (գլ. Թ. 39.) հընդնաըք պահպանողականք՝ զորս պարտ է նմա՝ի կիր արկանել՝ բաւական լինին վասն հարկին և իրաւացի պատճառի անպարտ առնել զնա. զի յայնպիսումն կարօտութեան օգնէ նմա Աստուած, որ ոչն օգնէ յանդգնելոց՝ առանց հարկի վտանգել զանձինս։

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՑ ԱՌԱՋՆՈՑ ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ ՏԱՄՆԱՐԱՆԵՑՈՑ ՕՐԻՆԱՑ

ՑՕԴՈՒԱԾ Ա.

ՑԵՂԱՏՍ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԻԿՈՒԹԵԱՆՑ

1–5· Հաւատք:
6–8· Յոյս:
9–12· Սէր:
13· Ներգործութիւնք աստուածաբանական առաքինութեանց:

1· Ընդ առաջնով պատուիրանաւն անկանին առաքինութիւնք աստուածաբանականք, այսինքն հաւատք յոյս և սէր: Հաւատք ՚ի առաքինութիւն աստուածաբանական հեղեալ՚ի մեզ Հ՚աստուծոյ, որով բերիմք ՚ի հաւատալ աներկբայ՝ վասն հաւատարմութեանն Հ՚աստուծոյ՝ ամենայնի զոր ինքն յայտնեաց և՚ի ձեռն եկեղեցւոյ առաջի արար մեզ՚ի հաւատալ,,: Հ՚պոստոլական առաքինութիւն կոչի, զի հաւատք որպէս և յոյս և սէր ուղղակի Հային Հ՚աստուած, ուր բարոյական առաքինութիւնք Հային անուղղակի: Հ՚սի հեղեալ Հ՚պոստոլոյ, զի հաւատք պարգև Հ՚աստուծոյ են գերբնական: Հ՚Նեղբեայ ասեմք հաւատալ, զի հաւատք չկարեն կալ ընդ երկբայութեան, որպէս դատապարտեալ իսկ է մոլորութիւնս այս Հ՚ննովկենտեայ թ: Յաւելումք վասն հաւատարմութեանն Հ՚պոստոլոյ, վասն զի Հ՚աստուած ճշմարտութիւն անխաբ՝ ինքն է տեսական առարկայ հաւատոյ: Հ՚Ընդայնի ըղձ ինչն յայտնեաց, քանզի յայտնութիւնք աստուածայինք են նիւթական առարկայք հաւատոյ: Ի յետն եղեղեցւոյ առաջի արար մեզ՚ի հաւատալ զի աստուածային յայտնութիւնք՚ի ձեռն եկեղեցւոյ ևեթ լինին մեզ, որոյ անսխալութեանն առհաւատչեայք են մարգարէութիւնք, հրաշք, հաստատութիւն այնքանեայ վկայից, այլովքն հանդերձ, վասն որոյ ասէրն ( ).

գոստինոս. "Հաւատայի աւետարանին, եթէ ոչ ածէր զիս յայն՝ կամ ողիկ եկեղեցւոյ վկայութիւն,,:

2. Այս ուրեմն նիւթական առարկայ հաւատոյ, այսինքն զոր պարտիմքն հաւատալ, է նախ Աստուած, և ապա որ ինչ յԱստուծոյ յայտնեալ: Ոչ տեսական առարկայ, այսինքն վասն որոյ պարտիմքն հաւատալ, է հաւատարմութիւնն Աստուծոյ:

3. Ի խորհրդոյ հաւատոյ, զորս պարտ է մեզ բացայայտակի դաւանել, կէսք կարևորք են հարկաւորութեամբ մկնորդի, այլք հարկաւորութեամբ պատուիրանի: Կէսք երկբայութիւն չի պարտ է բացայայտակի դաւանել հարկաւորութեամբ միջնորդի՝ չի մի է Աստուած, և նոյն ինքն վարձահատոյց բարեաց և արդար վրէժխնդիր չարաց: Ոչ յաղագս խորհրդոյ ամենասուրբ Երրորդութեան և մարդեղութեան և մահուանն Քրիստոսի Թէպէտ և հաւանականք են երկուստեք կարծիք, և խնդիրն մնայ յերկբայս եթէ պարտ իցէ հարկաւորութեամբ միջնորդի թէ պատուիրանի դաւանել զայնոսիկ, սակայն հաւաստի է 'ի հակառակ կարծեացն դատապարտութենէ, չի չէ ընդունակ արձակման որ ըզխորհուրդս զայսոսիկ անպիտանայցէ: Քանզի ապաշխարութեանն խորհուրդ՝ հաղորդութիւն է վաստակոց փրկչին. վասն որոյ պարտ է ապաշխարողին բացայայտակի հաւատալ զխորհուրդ Երրորդութեան և զմարդեղութեան՝ առ 'ի հաղորդս լինել հաւատով արգասեաց նորին 'ի ձեռն խորհրդոյն: Ոչ հարկաւորութեամբ պատուիրանի պարտ է բացայայտակի գիտել և դաւանել, նախ զհանգանակն գէթ ըստ էական մասին, երկրորդ զՀայր մեր և զԱղաւթն, երրորդ՝ զտասնաբանեայ և զեկեղեցւոյ պատուիրանս, և չորրորդ՝ զխորհուրդս ամենայն ումեք կարևորս՝ այսինքն զմկրտութիւն, զհաղորդութիւն և զապաշխարութիւն. զի այլոյն բացայայտակի հաւատք ընդունողայն եթէ զխորհուրդսն զայնոսիկ կարևորք են:

4. Երրակի մարթ է գոլ անհաւատութեան. Ոչացասկան, այսինքն որոյ չիցէ երբեք լսեալ ինչ զհաւատոյ. Պակասական, այսինքն որ յանցաւորութեամբ տգիտանան զհնչմարտութիւնս հաւատոյ. Հակառակ, այսինքն որք արհամարհեն և մերժեն զհաւատս քա-

րոզեալ նոցա ըստ բաւականին, որպէս Հեթանոսք, Հրեայք, և Հերետիկոսքն։

5. Զի Հերետիկոսութիւն երկու ինչ խնդրին. մեղսրութիւն մտաց և յամառութիւն. վասն որոյ ոչ ի հերետիկոս՝ որ արտաքուստ ևեթ ուրանայ զՀաւատս, կամ որ բացասապէս ևեթ երկբայի զայնմանէ, այսինքն ի կախ ունելով զմիտս զնմանէ ինչ Հաւատոյ, զի չէ այս դատումն։ Այլ Հակառակն Հերետիկոս է՝ որ երկբայելի դատի և Հաստատէ զվարդապետութիւն ինչ Հաւատոյ, կամ այնչափ ի կախ ունի զդատումն՝ զի զօրութեամբ երկբայելի դատի զվարդապետութիւն Հաւատոյ, գիտելով զի այնպէս զայն ուսուցանէ եկեղեցի սուրբ։ Թէպէտ որ պատրաստան է Հպատակել եկեղեցւոյ՝ չէ Հերետիկոս, զի չէ ի նմա յամառութիւն։

6. Յայս՝ է առաքինութիւն, որով զՀանդերձեալ երանութիւն և զկարևորս առ այն՝ աստուածային օգնականութեամբն ընդունելոյ վստահաբար ակն ունիմք։ Կիրթական գլխաւոր առարկայ յուսոյ, այսինքն որում պարտիքն յուսալ, է երանութիւնն յաւիտենական՝ որ է վայելումն նորին ինքեան Աստուծոյ. և երկրորդական առարկայք՝ ընդհանուր աստուածային և բարեգործութիւնք մեր օգնականութեամբն Աստուծոյ։ Թէպէտ և ամենայն առարկայ, այսինքն վասն որոյ պարտիքն յուսալ, ըստ ոմանց՝ է ողորմութիւնն Աստուծոյ, ըստ Թովմայական նոց՝ ամենակարողութիւն նորա, ըստ կիսոց՝ խոստումն աստուածային, և ըստ այլոց՝ բարութիւնն Աստուծոյ ի տալ մեզ զկարևորս առ ի Հասանել փրկութեան, որ նոյն է ընդ ողորմութեանն Աստուծոյ։

7. Զսահ ի միտ առնուլ է՝ զի երեքին այսոքիկ ի միասին կացուցանեն տեսակապէս զառարկայ յուսոյ, այսինքն ողորմութիւնն Աստուծոյ և ամենակարողութիւն՝ որովք օգնէ մեզ յաղթել թշնամեաց փրկութեան մերոյ, և խոստումն Աստուծոյ կամ Հաւատարմութիւն ի խոստմանն իւրում փրկելոյ զմեզ ի ձեռն վաստակոյն Քրիստոսի. զի առանց այսր խոստման չէր մեզ մարթ անշուշտ վստահութեամբ յուսալ Հասանելոյ փրկութեան։

8. Երեք Հակառակ յուսոյ՝ են յուսահատութիւն և յանդգնութիւն. և մեղանչէ յանդգնութեամբ՝ որ

յուսայ ՚ի փրկութիւն իւր՝ կամ իւրովք ևեթ վաստակովք, և կամ վաստակովքն ևեթ Քրիստոսի առանց իւրոյ գործակցութեան: Արդանչէ դարձեալ յանդգնութեամբ որ յաճախէն ՚ի մեղս՝ ձախողակի յուսացեալ ՚ի գթութիւնն Աստուծոյ, որպէս թէ նովին դիւրութեամբ զմի և զբազում մեղս ներեսցէ, կամ վաղվաղ ՚ի մեղս՝ յուսացեալ դիւրաւ ապա հանդիպելոյ ՚ի նմանէ թողութեան. այլ ոչ և որ ախտիւն բերիցի ՚ի մեղս, յուսալով միանգամայն գտանել զթողութիւն: Իսկ որ յարատևէն ՚ի մեղս, ՚ի մտի եդեալ յետոյ ապա զղջանալ, այնպիսին ոչ ընդդէմ յուսոյ՝ այլ ընդդէմ սիրոյ անձին մեղանչէ, կացեալ ՚ի վտանգ դատապարտութեան:

9. Այր՝ է առաքինութիւն, որով սիրեմք զԱստուած վասն իւր, և զմեզ և զայլս վասն Աստուծոյ: Այ ասն ոչ րոյ նիւթական գլխաւոր առարկայ սիրոյ, այսինքն զոր պարտիմքն սիրել, է ինքն Աստուած՝ զոր պարտ է մեզ սիրել ՚ի վեր քան զամենայն ինչ որպէս վերջին վախճան մեր: Գերբնական առարկայ է անձն մեր և ընկերին, զոր պարտիմք սիրել Աստուծոյ այսպէս գոլով հրամայեալ: Իսկ տեսական առարկայ սիրոյ, այսինքն վասն որոյ պարտիմքն սիրել զԱստուած, է անհուն բարութիւն նորա՝ աղբիւր և պարառութիւն ամենայն կատարելութեանց:

10. Որքն իցէ սիրել զԱստուած վասն ժառանգելոյ զնա: — Որքն է. զի սէր դիմէ Աստուած, իբրև ՚ի վերջին վախճան, վասն որոյ իցէ ժառանգելոյ զայն՝ որ է վերջին վախճան մեր, է բուն իսկ՝ թէ արդեօք և կատարելագոյն ներգործութիւն աստուածսիրութեան. զի ժառանգութիւն լուծին է սիրոյ, որով առաքեալն յանկայր ճոռանել առ ՚ի լինել ընդ Քրիստոսի: Այլ ոչ միւ և նոյն ինչ գտանի այսուիկ առարկայ սիրոյ և յուսոյ. զի որպէս բարւոք իմաստասիրէ Ճաբերտ, յոյս դիմէ ՚ի ժառանգել զԱստուած որպէս զբարին իւր, իսկ սէր յանկայ ժառանգել զնա ՚ի նորին ինքեան փառս. զի ՚ի ժառանգել մարդոյ զԱստուած, որպէս ասէ սուրբն Աւետարանոս, մնառանայ զանձն և յամենայն անձինս սիրէ զնա:

11. Իցէ արդեօք ներգործութիւն աստուածսիրու-

Թեան սիրել զաւրութիւնն Աստուծոյ որպէս անկաւոր մեզ, զի անձնասիրութիւն Թուի այս քան աստուածասիրութիւն: — Եթէ զաւրին մեր ունիցիմք յայսմիկ վախճան, զտանի անձնասիրութիւն և պատշաճի յոսոյ. այլ եթէ զփառս Աստուծոյ ունիցիմք վախճան՝ սիրելով զաւրութիւն նորա որպէս անկաւոր մեզ, վասն զի օգնէ մեզ առ ի ընուլ զկամ իւր և հասանել վերջնոյ մերում վախճանի՝ որ է սիրել զնա, վասն որոյ և արարն զմեզ, այս իսկ է բուն աստուածասիրութիւն, որպէս ասէ սուրբն Գրիգորիոս. "Ընդէպս պարտ է քեզ սիրել զԱստուած, զի և որպէս վարձ քո ըղձանայցես ժառանգել զնա, որով միայն լեցի քեզ յագենալով:

12. *Իսկ սիրել զԱստուած վասն բարերարութեանցն առ մեզ, է ներգործութիւն ընդհակառակութեան և ոչ սիրոյ, որպէս ասեն Ղաբերտ և Լաքրուա. այլ յաւելու Ղաբերտ, զի եթէ զբարերարութիւնս Աստուծոյ նկատեսցէ ոք որպէս հաղորդութիւնս բարութեան նորա, լեցի և այս ձևմարիտ ներգործութիւն սիրոյ, սիրելով յայնոսիկ ոչ զբարիս՝ զորս ընդունի ոք, այլ զբարութիւնն Աստուծոյ՝ որ զայնոսիկ ընդհկ:*

13. *Պարտ է ամենայն ուժիւք առնել զներգործութիւն հաւատոյ յուսոյ և սիրոյ. և հակառակն սորին վարդապետութիւն դատապարտեալ է յԱղեքսանդրէ Ք. և յՀոնովկենատեայ ԺԱ. զի առանց այսր ներգործութեան ոչ է մարթ կատարել զառաքինութիւնս զայսոսիկ: Զրդ զներգործութիւնս զայս է զի ըստ ինքեան պարտ է մեզ առնել, և է զի ըստ պատահման: Ըստ պատահման՝ 'ի փորձութիւնս և 'ի կատարել զպատուիրանս, որպէս 'ի խոստովանեցն և 'ի հաղորդել և այլն. իսկ ըստ ինքեան՝ ոչ միայն 'ի հասանելն 'ի բանավարութիւն և 'ի մահու, այլ և 'ի կեանս դէթ միանգամայնս սեան: Ըստ նմին և զներգործութիւն եղբայրսիրութեան. զի առանց այսորիկ դէթ դժուարին է կատարել զպատուիրան սիրոյ:*

Զի՞ չէ ինչ կարևոր դիտաւորութեամբ զներգործութիւնս զայսոսիկ առնել առ 'ի ընուլ զպատուիրանն, այլ շատ է առնել և եթէ, և ս և ըստ այլոց պիտոյից, որպէս 'ի հալածել զփորձութիւնս, 'ի խոստովանել և այլն: Ըստ այսմ 'ի ներգործութիւն սիրոյ համարին և

ամենայն Հայաստակութիւն կամայն Աստուծոյ, և որ ինչ առ՝ի սէր Աստուծոյ արարեալ: Աստ այսմ և՝ի ներգործութիւն հաւատոյ համարին աղօթել, երկրպագել սրբոյ խաչին, խաչակնքել զանձն, և սոցին սակի բարեպաշտութիւնք: Ապա որոյ որ քրիստոնէաբարն կենցաղավարի հաստատուն՝ի հաւատս, և գոնեա զպատուիրանն զատկական կատարէ, ոչ է պարտ նմա երկբայել թէ արդեօք ընուցիւ զպատուիրան հաւատոյ. զնոյն իմա և զյուսոյ:

ՅՕԴՈՒԱԾ Բ

ՅԱՂԱԴՍ ԵՂԲԱՑՐՍԻՐՈՒԹԵԱՆ

14. Կարգ սիրոյ:
15. Կարգ նախադասութեան անձանց:
16. Որ ինչ ցոյգք սիրոյ առ Թշնամիս:
17. Ներել նոցա:
18. 19. Պարաք ողորմութեան:
20. Խրատ եղբայրական:
21. Երբ ազատ իցէ ոք յայնմանէ:
22. Պարաք մեծաւորաց յայսմ:
23. 24. Զինչ է գայթակղութիւն և քանիպատիկ:
25. Որ գայթակղեցուցանէն գործիցէ և ընդդէմ եղբայրսիրութեան, որպէս ընդդէմ առաքինութեանն՝ որում մեղանչէ:
26. 27. Զինչ եթէ գայթակղեալն ինքնին իսկ պատրաստ իցէ՝ի մեղանչել:
28. Առ՝ի խափանել զգայթակղութիւն պարտ իցէ յանձն առնուլ ըզտոյժս, և թողուլ իսկ զդրական պատուիրանս:
29. Որ ինչ պատճառք գայթակղութեան՝ի կանանց և՝ի թատերգութեանց:
30. Օրէն իցէ թելադրել զիաբրադոյն՝ի չարեաց:
31. 32. Երբ օրէն իցէ նիւթական եթէ գործակցութիւն՝ի մեղս:

14. Աստ կարգաւորեալ սիրոյ՝ պարտ է մեզ զնոյս առաջ և զընորհս նորա քան զամենայն ինչ վերադասել, և զբարին մեր քան զայլոցն՝ եթէ չիցէ այն գերադոյն ըստ կարգի: Իսկ կարգ բարեաց այս է. նախ հոգևոր կեանք և ապա մարմնաւոր, ապա անուն բարի, և ապա ինչք. վասն որոյ ոչ է մեզ պարտ զկեանս այլոց քան զմերն նախասահմանար առնել, այլ զփրկութիւն և՝ եթէ նորա քան զմարմնաւոր կեանս մեր: Այս իմա և վասն ամենայն իսկ քահանայից՝ի վերջին կարօտութեան ուրուք. իսկ վասն եպիսկոպոսաց և ժողովրդա-

պետաց ՚ի ծանր իսկ կարօտութեան: Եւ յորժամ ՚ի վերջին կարօտութեան ոք իցէ հոգեպէս, թէպէտ և վտանգ հաւանական առաջի կացցէ մեզ ՚ի մեղս ինչ անկանելոյ, եթէ միայն չիցէ անկումն մեր ստոյգ բարոյապէս, պարտիմք հասանել նմա յօգնութիւն. զի յայնժամ օրէն է մեզ յուսալ յօգնականութիւնն Աստուծոյ, որպէս ուսուցանեն սուրբ Հոգևնայինն, Յուսաբէզ, Աղեմտիկեանք և այլք բազումք: Եայց և զայս իմա ուր ուրեք իցէ յոյս կարելոյ օգնել, և չիցէ ոք այլ որ օգնեսցէ, և կարօտեալն օգնականութեան արդարև ՚ի վտանգի դատապարտութեան կացցէ. զի այս ամենայն պահանջի առ ՚ի կացուցանել զմի երջիկն կարօտութիւն: Ի ժամանակի սրածութեան պարտական են քահանայք, առ ՚ի չզգեզ այլոց, դիմել ՚ի վտանգ. զի ՚ի բազմութեան անդ ախտակրելոց ստոյգ է բարոյապէս գտանել մեղաւորաց, որ ոչ կարիցեն առ տղիտութեան ՚ի կիր արկանել զՀնարս փրկութեան ՚ի ձեռն կատարեալ զղջման:

15. Իսկ կարգ անձանց, զորս պարտ է մեզ նախադասել ըստ պարտեաց եղբայրսիրութեան, այս է: Ի վերջին կարօտութեան կենաց պարտիմք վերադասել այլոց ամենեցուն զՀնօղս մեր. զի որ ՚ի ձեռն նոցա ընկալաք զկեանս, պարտիմք օգնել կենաց նոցա քան այլոց ամենեցուն: Եւ ՚ի ծանր աղքատութեան պարտ է առն նախադասել զամուսին իւր, ապա զորդիս, ապա զՀայր, ապա զմայր, ապա զեղբարս և զքոյր, ապա զայլ ազգականս, և ապա զսպասաւորս:

16. Պարտ է մեզ սիրել և զթՀնամիս մեր, ՚ի սրտի և արտաքոյ, այսինքն յուցանելով նոցա գէթ զսովորականն ցոյցս սիրոյ՝ որով ընդ բարեկամն վարիմք. ողջունել զնոսա, կամ գէթ ընդունել զողջոյն նոցա, պատասխանել զթՀոյ նոցա, չխուսել յերեսաց և ՚ի խօսակցութենէ նոցա, չզրկել զնոսա ՚ի Հասարակաց կամ ՚ի սովորական ողորմութենէ, և յայլոց նշանաց եղբայրսիրութեան: Պէտք ընդունել ասացաք զողջոյն նոցա. այլ յորժամ թՀնամին վՀաղոյն ոք իցէ, կամ գայթակղութեան կացցէ վտանգ, կամ առանց մեծի նեղութեան կարասցէ ոք ողջունել զթՀնամին և աղաչել զնա ՚ի ծանր մեղաց առելութեան ընդ իւր, պարտի և ողջու-

նել կնա։ Ամենք ազատ ի մահուչափ մեղաց կացուցանեն եթէ չընդունիցի զոր զողջոյն Թշնամւոյ, յորմէ սուտ ինչ յառաջ ընկալեալ իցէ Թշնամանս։

17. Պարտ իցէ Թշնամանելոյն ներել Թշնամանողի։ — Սահմանիկեանք զԹշնամանս եւեթ պարտ համարին ներել, այլ ոչ եւ զատենական պատիժ՝ որ յօդուտ հասարակաց է սահմանեալ։ Արտաքոյ է այս տեսակեանսդէս. այլ ըստ գործնականին ոչ է մարթ վըստահել զոր ներել առեն Թշնամւոյ իւրեանց, եւ զվրէժ արդարութեան իբր առ ի խրատ չարաց պահանջին։ Զի զոր բազմապատիկ ծանրացեալ մեղօք մատչին ի խոստովանել, որպէս հաւանելի է՝ Թէ այդպիսի սէր բարւոյ հասարակաց եւ արդարութեան անսպակ յամենայն կրից վրէժխնդրութեան ունիցին, ուր արդարասիրութիւն նոցա ի Թշնամին եւեթ իւրեանց սահմանի, եւ չէ ինչ նոցա փոյթ զայլոց չարագործաց։ Ոմանց որոյ դիւրին յոյժ է, որպէս առաւելագոյնք համարին, զի բարեսիրութիւն պատրուակիւք զանձնական վրէժխնդրութիւն նոցա։ Յակացն օրէն է արձակել զԹշնամանեաւն, Եթէ զոյժս ընչից իւրոց նախ պահանջեսցէ առ ի ներել ձեռաւորին, բայց միայն Եթէ չիցէ սա աղքատ ամենևին և անկարող հատուցանելոյ։

Օրէն է դարձեալ արձակել զԹշնամանեալ, Եթէ ներեսցէ պայմանաւ դնալոյ Թշնամանողին ի բաց, Թէ գուցէ որդիք կամ եղբարք իւր իցեն դառնացեալք ընդ նմա, կամ այնպէս խեռ և կռուասէր իցէ Թշնամանօղն, զի դժուարին յոյժ իցէ համբերել ստահակութեան նորա։

18. Զի ի դատել զպարտս ողորմութեան, զանազանելի է նախ զվերջինն կարօտութիւն ի ծանր կարօտութենէ, և զծանրն ի սովորականէն։ Վերջինն է, յորժամ որ ի վտանգի կենաց կայ. Ծանր է, յորժամ ծանր ինչ չարեաց վտանգ առաջի կայցէ, որպէս կորըստեան համբաւոյ կամ արդար մեծութեան. իսկ սովրական, յորում գտանին մուրացիկք։ Զանազանելի է դարձեալ զգոյս աւելորդս կենաց՝ յաւելորդաց անտի վայելչութեան պայմանի կենաց։

19. Երդ ի ծանր կարօտութեան ուրուք պարտիմք օգնել նմա ի գոյից աւելորդաց պայմանի վայելչութեան

կենացս, այլ՝ի յետին կարօտութեան՝ ևս և՝ի գոյից աւելորդաց առ՝ի կեանս մեր: Յայսպիսում յետին կարօտութեան եթէ չիցէ ինչ մեր աւելի քան զկարևորն առ՝ի կեանս՝ի նպաստ աղքատին, օրէն է մեզ նպաստել նմա խնդրելով չընչեղաց: Իսկ՝ի սովորական կարօտութեան՝ ասեմք ընդ սուրբ Աղուինացւոյն և ընդ այլս քաղումն, զի մեծատունք պարտին ծանր պարտեօք առնել ողորմութիւն աղքատաց յաւելորդաց պայմանի իւրեանց ըստ տերունական պատուիրանին. "Ո՞ արժանն իսկ տուք ողորմութիւն,,. (այսինքն զաւելորդն ըստ լ. Ղ ՟ժԱ): Իբր ոչ եթէ զամենայն իսկ զաւելորդս պարտ իցէ տալ, այլ զյիսներորդ մասն տարեկան հասից, այսինքն երկու՝ի հարիւրոց շատ համարին աստուածաբանք հաւանականաբար. և նուազ իսկ քան զերկու, եթէ բազում յոյժ իցեն հասքն: Այսման ներէ իսկ փոխանակ ողորմութեան աղքատաց՝՝՝ի բարեգործութիւն ինչ՝ի կիր արկանել զայն: Այլ զայսոսիկ ոչ է իմանալ զեկեղեցական հասից. զի վայելողացն՝ի սոսին պարտ է զաւելորդս առ հասարակ բաշխել աղքատաց կամ՝ի բարեգործութիւն, որպէս ասացուք՝ի տօրէն (գլ. Ժ. 7.):

20. Աղբայրական խրատուց պատճառք են մեզք մահացու, յորում որ անկեալ կայցէ, կամ՝ի վտանգի անկանելոյ: Ոմանք պարտք են եղբայրսիրութեան խրատել զյանցաւեալն՝ ուր իցէ յոյս ուղղութեան, թէպէտ և յանդիմս իցէ յանցաւեալ: Այլ ըստ հաւանականագոյն կարծեաց պարտ է խրատել ոչ միայն զյանցաւեալն ընդդէմ բնական օրինաց, այլ և ընդդէմ դրականաց:

21. Այլք դադարեն այս պարտք նախ՝ յորժամ չիցէ հաւաստի յանցաւած եղբօրն, զի յերկբայս ոչ է պարտ յանդիմանել զոք՝ եթէ չիցէ՝ի միջի ինչ հասարակաց կամ ծանր, որպէս սպանութեան և այսպիսեաց յանցանաց: Երկրորդ՝ ուր չիցէ յոյս օգտի, և միասակաւ քան թէ օգտակար Թուեսցի խրատն. զի յայնժամ ոչ է պարտ խրատել զյանցաւեալն՝ եթէ չիցէ՝ի վտանգ մահու խղճիւ մտաց, կամ եթէ չիցէ վտանգ մոլորութեան այլոց: Երրորդ՝ եթէ չիցէ զբ, որում պատշաճ իցէ խրատել զյանցաւեալն: Չորրորդ՝ եթէ մարթ իցէ

կարծել խոհականապէս, զի ինքնին զգաստանայցէ յանցուցեալն։ Հինգերորդ՝ եթէ չիցէ մարթ առանց ծանրը նեղուցեան խրատել, որ եղբայրսիրութեան և՛ պարտք։ Վեցերորդ՝ եթէ չիցէ դէպ ժամանակ. զի օրինաւոր համարին բազումք՝ի բարեյականաց ճեալ միւսանգամ յանցանելոյ նորա, զի զօրաւոր և՛ լիցի խրատն։ Պարձեալ ուսուցանէ սուրբ Հոգևնացին՝ներելի և՛ եթէ մեղս գործել, որ առ երկիւղի կամ շահու վերջանայցէ՝ի պարտուց աստի՝ եթէ չհամարիցի ստոյգ զգարձ եղբօրն. զի եթէ հաւաստի համարիցի դարձուցանել զնա խրատելովն և՛ ոչ խրատիցէ, մահուչափ մեղանչէ։

22. Պատուիրանս այս պարտ՝ի վերայ ածէ ամենեցուն, և՛ և՛ հպատակաց. այլ առաւել և՛ մեծաւորաց, որպէս եպիսկոպոսաց, ժողովրդապետաց, խոստովանահարց, ծնողաց, արանց առ կանայս իւրեանց, հոգաբարձուաց, տերանց, վարժապետաց և՛ այլն. վասն զի սոցա պարտ է խրատել և՛ յանդիմանել զՔպատակս իւրեանց, ոչ առ եղբայրսիրութեան և՛եթէ՝ այլ և՛ի պարտուց պաշտաման։ Վասն որոյ պարտ է նոցա և՛ հետազօտել զյանցուածս նոցա, ուր իցեն այնոցիկ ցոյգք հաւանականք. և՛ վանահարց պարտ է երբեմն ծանրը պարտեօք յանդիմանել ոչ միայն զմեղս մահացուս, այլ և՛ զներելի յանցուածս կրօնաւորաց՝ եթէ ծանրը միտս պահպանութեան կանոնաց զՔետ դայցէ։ Այլ եթէ վտանգ կենաց հասցէ՝ի յանդիմանելոյ, ազատ են՝ի պարտուց աստի մեծաւորքն առ հասարակ՝ բաց՝ի հոգևոր հովուաց. զի սորա ոչ՝ի պաշտամանէ և՛եթէ՝ այլ և՛ յարդարութենէ պարտին ընդՔզհոգևոր կարօտութիւն ժողովրդեան իւրեանց, վասն որոյ ընդունինն իսկ Թոշակ. և՛ ոչ միայն՝ի յետին կարօտութեան պարտ է նոցա, այլ և՛ի ծանր կարօտութեան, որպէս ուսուցանեն քարոյականք գրեթէ առ հասարակ։ Վիտելի է աստ զի և՛ քարոզիչք պարտին՝ի պարտուց պաշտամանն յանդիմանել զՔհասարակաց մեղս, առանց իսկ յուսոյ ուղղութեան, հանդերձ տուժիւք իսկ անձին, որպէս յաւելուն Կալմատիկեանք։

23. Վայթակղութիւն կրկին է, ներգործական և կրաւորական։ Ներգործական է՝ բան կամ գործ անուղղայ, որ այլում պատճառս տայ կործանման։ Ներգոր-

ծականիս այսմիկ գայթակղութեան մարթի ի գոլ ոչ ղակէ և անհաղղակի. ուղղակի՝ եթէ ինքնին ածի զոք ի մեղս, և անուղղակի՝ եթէ ասէ կամ առնէ ինչ մեղանչական հրապուրիչ այլոց ի մեղս։ Ա. և գայթակղութիւն պիտանի, որ ոչ միայն ածէ զոք ի մեղս, այլ և զկորուստս հոգւոյ նորա հնարի դիւաքար։

24. Արատարականն գայթակղութիւն է նայն ինքն կործանումն կամ մեղք, յոր անկանի գայթակղեալն և զանազանի ի պատեալ՝ որ կոչի և ֆոքինոց, այսինքն որ վասն տկարութեան իւրեանց անկանին. և յատեալ՝ որ և ֆարիսականն կոչի, այսինքն որ վասն չարութեան իւրեանց անկանին։

25. Ընդեօք գայթակղութիւն կրկին իցէ մեղք, ընդդէմ եղբայրսիրութեան, և ընդդէմ առաքինութեան՝ որում մեղանչէ։ — Չորեակ կարծիք են զայսմանէ. ոմանք զդիւականն և եթէ գայթակղութիւն, և ոմանք զուղղակին և համարին ի կրկնակ մեղս. այլ պարտ է ասել ընդ առաւելագոյնս յաստուածաբանից, զոր և սուրբ Աւգուստինոս յայտնապէս ուսուցանէ, զի ոչ միայն դիւականն և ուղղակին՝ այլ և անուղղակի տուեալն գայթակղութիւն կրկին մեղանչէ, ընդդէմ սիրոյ և ընդդէմ առաքինութեան։ Ընդդէմ սիրոյ, զի եթէ պարտիմք վասն եղբայրսիրութեան խափանել զմեղս եղբօր՝ եթէ կարեմք, օրչափ և առաւել չտալ նմա պատճառս մեղաց. և ընդդէմ առաքինութեան, զի հաւասար է ընդդէմ նորին մեղանչելոյ՝ տալ այլոց մեղանչել։

26. Եղիցի՞ ոք արդեօք մեղս գայթակղութեան ի խնդրելն չար ինչ յայլմէ, որ ինքնին իսկ պատրաստ իցէ առնել զայն, որպէս որ ընդ պոռնկին մեղանչէ։ — Ո՛չ հաստատութեան կողմն ընդդէմ այլոց ոմանց ուսիմք ընդ բազումս. զի որպէս ի վեր անդր ասացաք (գլ. Դ. 20.) համարեալ իսկ հաւասարի զկարծիս զի արատաբին ներգործութիւն տեսականապէս ոչ ինչ յաւելուցու ի չարութիւն ներքին ներգործութեանն, սակայն ի գործնականն ի կատարել մեղաց գործով յաձախել միշտ չարութիւն կամաց առաւելագոյն հաճութեամբն ի գործն արտաքին, և երկարագոյն տևողութեամբ հաճութեանն։ Ա՛ման որոյ որպէս որ մեղանչէն արտաքին և

ներդործութեամբ՝ չարաչար ճնաւել Հոգւոյն, նոյնպէս և որ գործակիցն լինի նմա յայն, ծանր մեղանչէ ընդդէմ սիրոյ։ Աստի հաւանականաբար ըզհետ պայ, պի չէ կարևոր բացատրել մեղսակցայ 'ի խոստովանութեան / առաջին լեալ իցէ 'ի հրապուրել զմիւսն. զի որ հրապուրէն և որ հաւանի 'ի հրապոյրս, երկոքեան ևս մեղանչեն ընդդէմ եղբայրսիրութեան. որպէս զի հրապոյրք անդանօր ոչ այլ ինչ են, բայց Հանգամանք մեղայն ծանրացուցիչք 'ի նմին տեսակի մեղայ, զոր ըստ Հաւանականապէն կարծեաց և ըստ սրբոյ Աւգուստինոսի չէ ինչ պարտ բացատրել 'ի խոստովանութեան, որպէս ասացաք 'ի Հառս խորհրդոյ ապաշխարութեան։

27. Օ որ ասացաքս իմա զիրացդ, որ ըստ ինքեան են չար. այլ յիրս անխտիրս, այսինքն որ ոչ բարի են ըստ ինքեանց և ոչ չար, և զորս մնրմի է ումեք տալ այլում առանց մեղայ, խնդրել ինչ՝ որպէս փոխ 'ի վաշխառուէ, կամ սրբութիւն 'ի քահանայէ՝ որ 'ի մեզս կայցէ, օրէն է՝ եթէ Հարկ կամ օգուտ ինչ մեծ առաջի կայցէ. իսկ առանց այսոցիկ, որ խնդրէն և՝ ծանր մեղանչէ ընդդէմ սիրոյ և առաքինութեան։

28. Պարտ է մեզ զարձեալ, յորժամ կարեմքն առանց ծանր նեղութեան, հրաժարել և երբեմն 'ի ժամանակաւոր բարեաց և 'ի Հոգևորայ իսկ եթէ չլցեն կարևոր 'ի փրկութիւն, առ 'ի չտալ փոքրկանց պայթակղութիւն ծանր։ Այլ բարւոք աստանօր զեկուցանէ սուրբ Աւգուստինոս, զի յետ միանգամ խրատելոյ զեղբայրն՝ զայթակղութիւն նորա լինի փարիսեական, և ոչ ևս պարտական գտանիմք խուսեալ յայնմանէ։ Իսկ եթէ Հարկ լիցի առ այս Թողուլ և զգրական պատուիրանս, որպէս զպատարագ, զպահս և այլն, Հաւանականապէն կարծիք պարտ Համարին Թողուլ և զայն. զի բնական պատուիրան խափանելոյ զգայթակղութիւն՝ այսինքն զմեզս եղբօր, առաւել է քան զգրականն։ Այլ զայս ամենայն իմա, եթէ միանգամ կամ երկիցս լիցի Հարկ. զի առաւելն ծանր է յոյժ, յոր ոչ ստիպէ եղբայրսիրութիւն։

29. Աեղանչեն ծանունս մեղօք գայթակղութեան կանայք որ զկուրծս իւրեանց ոչ ծածկեն Համեստաբար, և որք մուծանեն սովորութիւն այսպիսի՝ Թէ և

ոչ կարի անհամեստ։ Ոչանուշնս մեղանչեն և որք յօրինեն կամ՝ ի տեսիլ ածեն թատերգութիւնս մեծապէս անհամեստս։ Այսպէս և նկարիչք, որք նկարեն և գնեն ՚ի տեսիլ հասարակաց պատկերս զաղջատեսիլս։

30. Ջաւելագոյնք՝ ի բարոյականաց ընդ սրբոյն Գոստինոսի օրինաւոր համարին թէ լաւագոյն է զիջ քրագոյն չար, առ ՚ի խորշել ՚ի մեծագունէն՝ զոր կամի նա առնել. զի չէ այս խրատ չարի՝ այլ բարւոյ, յորդորել զոք զի ընտրեսցէ զփոքրագոյնն չար, թէ և իցէ այլատեսակ։ Ոչինչ է գարձեալ և տանուտեառն և հօր չառնալ ՚ի բաց զդէպս գողութեան ծառայից և որդւոց պատրաստելոյ ՚ի գողանալ, որպէս զի ըմբռնեալք ՚ի գողութեան՝ ազգողագոյնս խրատեսցին։ Խաղումք ՚ի բարոյականաց ներբեն ևս տալ նոցա դէպս գողանալոյ, առ ՚ի զառաջս առնուլ զչարեաց նոցա, զի ասէ սուրբ Աւգուստինոս. “Հրապուրել զոք ՚ի մեզ՝ ոչ երբեք է օրէն, այլ զմեզս ուրուք ՚ի բարի ինչ ՚ի կիր արկանել օրէն է,,։

31. Կիւթական գործակցութիւն օրինաւոր համարի հասարակօրէն առ բարոյականս, ուր գուշակ իրաւացի պատճառ. զի այլ է ՚ի գործակից լինելոյ տեսակաբար, որ է ուղղակի մեղսակցութիւն՝ որպէս ՚ի պոռնկութեան, կամ որ աղդէ ՚ի կամն չարագործին՝ որպէս դէտ կալ վասն գողոյ կամ աւազակի՝ զի ապահովագոյնս գողասցի կամ սպանցէ, գրել գիրս տուիականս ՚ի դիմաց հոմանւոյ, ածել պարգևս առ մեղսակից նորա, ընդունել պարգևս ՚ի դարանակալէ պարկեշտութեան. զի այսպիսի գործակցութիւնք ՚ի բնէ են չարք, զի խրախուսեն զայլս ՚ի մեղս, և կամ դէթ տածեն զչար կամն նոցա. վասն որոյ ոչ երբեք, և ոչ առ ահի մահու, ազատք են ՚ի մահու չափ մեղաց։ Սակ նիւթական գործակցութիւն յանխափիր իրս է, զորս մարթ է ումեք առնել առանց մեղաց, այլ նա չարութեամբ ՚ի մեղս վարի նոքօք. որպէս առնուլ յումեքէ փոխ, զոր չկամիցի նա տալ առանց տկոսեաց. տալ գինի այնմ՝ որ արբենայն նովաւ. տալ բանալի ումեք՝ որ ՚ի գողութիւն վարիցի նովաւ։

32. Ընդ այսպիսի նիւթական գործակցութիւնք օ-

բինաւորք են երիւք պայմանօք. նախ՝ զի իցեն յանխըտիր իրս, որպէս ասացաք. երկրորդ՝ զի չիցէ ոք պատահական՝ ի պաշտամանէ խափանել զմեզս ուրուք. երրորդ՝ զի իցէ պատճառ իրաւացի և համեմատ գործակցութեանն. զի յայնժամ մեղք եղբօրն ոչ՝ ի գործակցութենէ քումմէ գայ յառաջ, այլ՝ ի չարութենէ իւրմէ՝ որով՝ ի մեղս զգործ քո՝ ի կիր արկանէ։ Զի ոչ եթէ դու զգործ քոյին ընդ չար կամս նորա կցորդես, այլ ինքն զչար կամս իւր ընդ գործ քոյին կցորդէ. վասն որոյ գործ քո ոչ է մեղացն նորին պատճառ, այլ՝ ի միասին պատահումն՝ զոր ոչ է քեզ պարտ խափանել յորժամ իրաւացի պատճառք են քեզ չխափանելոյ. որպէս եթէ պանդոկապետ առ ահի մատուռակիւղ գինի արբեցողի։ Նոցացաք երեսայն և հաճոյ պատճառ. զի ըստ չափոյ գործակցութեան՝ ի մեղս խնդրի կարևորութիւն պատճառին։ Զայս համեմատութիւն պարտ է կշռադատել նախ ըստ համարման խոհականաց. և գարձեալ ըստ այսմ կանոնի, թէ չէ օրէն գործակից լինել՝ ի միասս ուրուք՝ եթէ չիցէ մեզ երկիւղ մեծագոյն միասոյն։ Ընդ բինակ իմն. եթէ ոք մահ սպառնայցէ քեզ, թէ ոչ ձեռն տայցես՝ ի սպանումն Հնամոյ իւրոյ՝ տալով նմա զին, չկարես տալ նմա զայն. թէ ոչ է օրէն քեզ օգնել զրահանապետ՝ ի մահ ուրուք առ՝ ի փրկել զքեզ՝ ի մահուանէ։ Գարձեալ եթէ զող սպառնայցէ կողոպտել զքեզ՝ եթէ ոչ ձեռն տայցես նմա՝ ի կողոպտել զայլ ոք, չկարես և ոչ յայսմ գործակից լինել նմա. իսկ եթէ՝ ի հրաժարել քո՝ ի գործակցութենէ անտի առաջի կայցէ քեզ մահ կամ չարահամբաւութիւն, դառնիս՝ ի յեսին կարօտութեան՝ յորում պարտի միւսն այն ներել քեզ զգործակցութիւնդ՝ ի կորուստ ընչից իւրոց, զի մի՛ լիցի քեզ կորուսանել զկեանս կամ զհամբաւ։ Զայսմանէ տես և՝ ի ստորև (գլ. ժ. 56)։

ՅՕԴՈՒԱԾ Գ

ՅԱՂԱԳՍ ԿՐՕՆԻՑ ԵՒ ՈՐ ԻՆՁ ԸՆԴՆԷՄ ՆՈՐԻՆ ՄԵՂՔ։

33· Զ[ի]նչ են կրօնք։
34· Մնապաշտութիւն· Ախտարք· Երազահանութիւն· Սաղմոսա-
Հմայութիւն· Վիճակահմայութիւն։
35· Մահան դիւթական։
36· Խարհմայութիւն։
37· Փոշի համակրական։
38· Փորձել զԱստուած։
39· Սեղանակատարութիւն։
40–48· Սիմոնականութիւն։
49–53· Պատիժք նորա և արձակումն։

33· Կրօնք առաջինն է յառաքինութիւնս, և սահմանի՝ «Առաքինութիւն զպարտուպատշաճ պաշտօնն ընծայելոյ Աստուծոյ»։ Յառուքինութիւնք երկու հակառակք են առաքինութեանս այսմիկ· անապաշխարութիւն ըստ առաւելապանցութեան, և ամպարշտութիւն ըստ պակասութեան։ Մնապաշտութեան տեսակք են երեք՝ կռապաշտութիւն, հմայք, խորհրդոյթք· ամպարշտութեան տեսակք չորս, փորձել զԱստուած, սեղանակատարութիւն, սիմոնականութիւն, և երդմնապանծութիւն։

34· Մնապաշտութիւն է՝ մնոտի կրօն ընծայելոյ Աստուծոյ պաշտօն անձահ։ Ասն որոյ կրկին է մնապաշտութիւն· մի՝ յորժամ որ ընծայէ Աստուծոյ պաշտօն սուտ, որպէս աշխարհականի պատարագել, սուտ նշխարս դնել ի բազմոցի առ ի յարգութիւն, հրաշս՝ յայտնութիւնս՝ տեսիլս սուտս կեղծաւորել, որ մնհուսչաւ մեղք են· կամ յորժամ որ աւելորդ ինչ պաշտօն ընծայէ Աստուծոյ, որպէս զայսր անուան քահանայի լսել զպատարագ, կամ յայս ինչ աւուր եօթնեկի ձեռնարկել ի գործ, և զայն ինչ օրաչար համարել։ Իսս և այգ մնապաշտութեան՝ յորժամ որ զանեղին անհաղորդական պաշտօն ընծայէ եղականաց, որպիսի է կռապաշտութիւն, այսինքն պաշտել զդիս, զանասունս, զծառս, զանդրիս և այլն։ Նմայք են գուշակութիւն ապառնեաց ի ձեռն դիւաց, յայտնի կամ լռելեայն ընդ

նոսա գաղնակցութեամբ: Ալ ման որոյ մեղք են նախ՝ ախտարբ, այսինքն աստեղագիտութիւն, որ գուշակէ զաղատ ապագայս, որ ՚ի կամ մարդոյ են և որ ՚ի կամ Աստուծոյ. ուր աստեղաբաշխութիւն ՚ի շարժմանէ մոլորակաց գուշակէ և եթե զանձրև կամ զերաշտ այլովքն հանդերձ: Աստեղաբաշխին յառաջ և մնալ, և ՚ի ծննդոց զբնաւորութիւն գուշակել, թէպէտ և չիցեն մեղք, այլ անստոյգ են և մնոտիք: Երկրորդ՝ ծանր մեղք են երազահանութիւնն, այսինքն հաւատալ երազոց և ըստ այնմ վարել ՚ի գործս կամ գուշակել զապառնիս, ուր չիցեն հաւաստիք կամ հաւանականութիւն յոյժ՝ աստուածաւստ գոլոց երազոցն: Երրորդ՝ սաղմոսահմայութիւն, այսինքն սաղմոս ինչ մրմնջել յերիւրեալս այս ինչ կամ այսպիսի բառիւք ՚ի բժշկութիւն. և այս ՚ի մահացու մեղս է որոց անկրիպելի հաւատս ընծայեն այնց, և մանաւանդ եթէ սուտ կամ աննշանական բառիւք իցեն յերիւրեալ, և նորաձև լիցին գրեալ: Չորրորդ վհճահմայութիւն, այսինքն վհճակաւ կամ նշանօք յայտնի կամ լռելեայն խնդրել ՚ի դիւէն զյայտնութիւն ծածկելոց կամ ապագայից: Այլ է վհճակաւ բաժանել ղինչս, կամ սահմանել ղվէճս, բաշխել պաշտօնս աշխարհական ըստ հարկի իրաց. այլ զհաս եկեղեցական և զհոգևոր պաշտամունս ոչ է օրէն տալ վհճակաւ:

35. Չէ երբեք օրէն ՚ի կիր արկանել զմահանան անուանեալ դիւթական, որոյ զարձմանքն գուշակեն ումանք զգանձս ծածկեալս, զերակս ջուրց, կամ զերեսս արտորհդոյ փոփոխեալս: Ումանք ՚ի բարեպաշտութեանց արգասիս բնութեան համարին զայսոսիկ. այլ զնմանէ մարթի իցէ շարժել մանաւանդ բնականապէս, և զանյայտս յուցանել. զի և ՚ի բողոքել երբեմն ուրուք ընդդեմ դիւական գործակցութեան՝ եկաց մականն դիւթական անշարժ, թէպէտև գայր անդ խնդրեալն ՚ի նմանէ:

36. Սպրահմայութիւն է՝ հնարս անհամեմատս առ ՚ի գիւտ իրաց ինչ ՚ի կիր արկանել, որպէս ձեւս ինչ կամ արարողութիւնս կամ նշանս կամ բառս ինչ սրբազանս կամ՝ աննշանականս՝ առ ՚ի ստանալ գիտութիւն ինչ առանց ուսանելոյ, կամ առ ՚ի բժշկել յախ-

տէ կամ՝ի վերայ։ Եւ զդէմ այս ամենայն մնոտի խարանք մեղք են ծանուցանք. և պարտ է խոստովանահօր հարցանել զայսցանէ մանաւանդ զքննուօրս, զդայեակս, զհովիւս և զքնիչսն։

37. Եւայց ուրանօր վիճեն յայտնի ցոյցք չարութեան արգասեաց, ըստ իրատու սուրբ Գրոյն պարտ է համարել զայնոսիկ արգասիս բնութեան։ Վասն ո՞ր յոյժ հաւանականաբար օրէն է ցանել զիշխ համակրական յարիւն եղեալ՝ի վերայ՝ առ՝ի դադարեցուցանել զայլևս բղխումն արեան։ Ըստ այսմ և զբուստ և զեղնդունս կենդանեաց չհամարի արգելեալ՝ի կիր արկանել ընդդէմ յաչալանաց կամ ակնհարութեան այնոցիկ՝ որոց միասակրք են հայեցուածք։ Յայսմիսի հայեցուածս դեղոց, որ թուին անմեղանչականք, շատ է՝ի հանդարտութիւն խղճի մտաց՝ յայտ առնել՝ի սկզբանէ զկամն ընդդէմ ամենայն դիւական ազդեցութեան։

38. Ապարդիւնն ձգի ընդդէմ պարտևպատշաճ մեծարանացն Աստուծոյ։ Զաջին եղանակ ամպարշտութեան է փորձել զԱստուած. և է այս կրկին, պեսպէնաբար և ճշմարիտ։ Տեսակաբար է՝ յորժամ որ երկբայի զիմաբէ՝ի կատարելութեանցն Աստուծոյ, և յանդգնի փորձել զայն. մանաւանդ մեղանչէ որ այսպէսն փորձէ զԱստուած, և մեղսրութիւն խոկ է երկբայել նորա, եթէ զրահանապէս երկբայիցի։ Սակնական է յորժամ թողեալ ուրուք զընական հնարս, կամի զի հրաշիւք փրկեսցէ զնա Աստուած՝ի չարեաց. որպէս որ զի կամիցի առողջանալ յախտէն առանց դեղոց, կամ անձամբ զանձն առանց լինչ հարկի արկցէ՝ի վտանգ՝ յանդուգն յուսացեալ յԱստուած։ Ահաւասիկ մեղանչէ և որ այսպէսն յանդգնի, եթէ ոչ ազդեալ ինչ յԱստուծոյ, կամ տպիտաբար գործիցէ, և կամ՝ի թեթև ինչ. որպէս եթէ՝ի թեթև ինչ խոթութեան առանց դեղոց՝ի տեառնէ մեծայցէ առողջութեան։

39. Չրկրորդն եղանակ է սեղանապաշտութիւն, որում մարթի է գոլ անչնական, պեղական և էրական։ Ընձեռական է եթէ որ զեկեղեցական որ կամ զմիանձն հարկանիցէ, կամ պղծութիւն ընդ ուխտելոյ ումեք գործիցէ։

Տեղական է եթէ ոք զեկեղեցի սրբիցէ սերմնահեղութեամբ, կամ արիւնհեղութեան բաւական ինչ քահանայ: Սրբի եթէ պղծիցի եկեղեցի և ծածկաբար հեղմամբ: Կէսք ժխտեն զայն, և ոչ առանց հաւանականութեան. այլք հաւանականագոյնս հաստատեն: Օնոյն է ասել և զամուսնական մերձաւորութենէ յեկեղեցւոջ, որ ըստ հաւանականագոյն կարծեաց է սեզանակապտութիւն. որպէս և ամենայն անհամեստ շոշափմունք, հայեցուածք և խօսակցութիւնք յեկեղեցւոջ, զորոց ասացաւք 'ի տորև. (գլ. թ. 22): Սեղանակապտութիւն է և զաւանդս եկեղեցւոյ գողանալ. և ըստ հաւանականագոյն կարծեաց՝ եւս որ և իցէ գողութիւն գործեալ 'ի սրբավայրս. և սրբավայր կոչի ամենայն տեղի սահմանեալ յեպիսկոպոսէ 'ի պաշտօն աստուածային կամ 'ի գերեզման՝ 'ի յարկայ միոյնէ ցգետին: Սակ իրական սեղանակապտութիւն է ոչ ըստ օրինի մատակարարել կամ ընդունել զսուրբ խորհուրդս, կամ անսուրբ առնել զնշխարս սրբոց կամ ըղպատկերս, կամ զպաշտս եկեղեցւոյ, և որ ինչ օրհնեալ իցէ և սրբազանեալ: Սեղանակապտութիւն է խառնաւար առնել և զբանս սուրբ գրոց, 'ի զաղիր ինչ կամ 'ի թշնամանս 'ի կիր արկանելով: Սեղանակապտութիւն է զնշխարս սրբոց գողանալ գժկամակութեամբ ստացողին:

40. Սրբորդ եղանակ ամպարշտութեան է սիմոնականոնիան, որ է ջար կամք գնելոյ կամ վաճառելոյ հոգևոր ինչ կամ ղպարակից հոգևորին, որպիսի են ժառանգութիւնք եկեղեցականք, սպասք օրհնեալք և այլն: Դառեակ է սիմոնականութիւն. Տպաւոր, առևել, էրական և Տպերմական: Պատուր է եթէ ոք տայ ինչ ումեք առ 'ի կացուցանել զնա պարտական փոխանակ մերինաւորին հատուցանելոյ ինչ հոգևոր, կամ ընդ հակառակն, առանց ինչ դաշնի: Սակեալ է՝ նորին փոխանակութեան դաշնագրութիւն, անգործ երկուսանեք: Իրական է՝ նոյն դաշնագրութիւն 'ի գործ եկեալ: Սակ մտերմական՝ եթէ ոք թողու այլում հոգևոր ինչ պաշտօն, որպէս զի և նա թողցէ զայն այլում. կամ 'ի թողուն այլում պահէ իւր իրաւունս միւսանգամ առնելոյ զայն 'ի դէպս ինչ. կամ հրաժարէ յառաջարկեալ նմա

պաշտամանէ, պայմանաւ ժառանգելոյ զայն յայս ինչ դէպս կամ՝ ի ժամանակի։

41· Պարգևք, որ հաւասար են դնող առ՝ ի ստանալ հոգևոր ինչ, յերիս բովանդակին։ Յախ՝ ամենայն ինչ որ վարձուք կատարին կամ վարձուց են արժանի, որպէս դաշն վաճառելոյ, փոխ տալոյ, թողութիւն կամ հատուցումն առնելոյ պարտուց և այլն։ Երկրորդ՝ ամենայն ինչ որ պարտս՝ ի վերայ ածէ ծառայութեան։ Երրորդ՝ բարեխօսութիւն, ևս և՝ ի ձեռն այլոց, որ արժանի իցէ վարձուց։ Յայց տալ ինչ բարեխօսին կամ միջնորդի՝ ի վարձ աշխատութեանն կամ տուժից՝ եթէ կրեալ է, թէպէտև չիցէ ընդդէմ օրինաց՝ այլ վտանգաւոր է։

42· Այլ է սիմոնականութիւն աստուածային իրաւանց, և այլ մարդկայնոց։ Սիմոնականութիւն աստուածային իրաւանց է վաճառել զնորհուրդս և զամենայն ինչ սուրբ· սիմոնականութիւն մարդկային իրաւանց է վաճառել զրբքազան սպասաւորութիւնս, որպիսի է պաշտօն եկեղեցպանի, հոգաբարձուի, դանձապետի, փաստաբանի եկեղեցւոյն և այլն։ Երդ հասարակաց վարդապետութիւն համարի և՝ ի սոսին տեղի ունել սիմոնականութեան որպէս՝ ի վաճառս աստուածային իրաւանց։

43· Սիմոնականութիւն աստուածային իրաւանց է և ընդունել զոք՝ ի կարգ կրօնաւորութեան վասն ընչից նորա, եթէ չիցեն այլ օրինաւոր պատճառք ընդունելոյ զնա և զտուրս նորա։ Օ՜ի եթէ մենաստանն չիցէ աղքատ, չէ նման օրէն առնուլ օժիտ՝ ի կրօնաւորելոյ, բայց միայն՝ ի պատճառս ցաւագարութեան կամ ծերութեան։ Այլ զայս իմա վասն միանձանց, զի միանձնուհեայց բերել օժիտ սահմանեալ է՝ ի Կղեմայ Ը։

44· Համարին ոմանք՝ ի բարոյականաց զի տալ ինչ ումեք պարգև վասն ընդունելոյ հոգևոր ինչ, եթէ վասն բարեկամութեան եւթէ իցէ և ոչ վասն պարտս՝ ի վերայ ածելոյ, չիցէ սիմոնականութիւն։ Այլ ցոյս չափ գլխաւոր վախճան տրոցն է առնուլ ինչ հոգևոր, և մանաւանդ եթէ չիցեն տուրքն գումարեալ ինչ, սիմոնականութիւն է։

45· Որչն իցէ ընդունել ինչ տուրս վասն մատա-

կարարուԹեան խորհրդոյ։ — Որպէս գինս այնոցիկ ոչ երբեք. այլ վասն արտաքին մարմնաւոր աշխատուԹեան օրէն է. որպէս վասն հեռի ուրեք գնալոյ առ՝ի պատարագել, կամ վասն ծոմապահելոյ առ՝ի տարաժամ պատարագել ըստ կամաց մատուցողին զպատարագիս։ Այլ առանց իսկ մարմնաւոր աշխատուԹեան՝ օրէն է ընդունել ինչ ոչ որպէս գինս, այլ՝ի Թոշակ պիտոյից առ՝ի կեանս, ԹէպԵտև չիցէ կարօտ որ ընդունելոյն։

46. Որ մատակարարէն զխորհուրդս կամ քարոզել առ՝ի շահել զկեանս, մեղիցէ մահուաւք։ — ՍոԹոյ, Սուարեզ, ՎիլլեսԹրոյ, Յանքեզ, Պալմատիկեանք և այլք ըստ հանրագոյն և հաւանականագոյն կարծեաց ազատ առնեն զնա՝ի մահուաւքն մեղայ, եԹէ ըստ ասացելոցս՝ առ՝ի Թոշակ կենայ ընկալցի զտուրս. այլ այսու ամենայնիւ չէ ազատ՝ի ներելի մեղայ, որ վասն շահելոյ և եԹէ զկեանս մատակարարել զսրբուԹիւնս։

47. Որքո՞ն իցէ փոխանակել զսրբուԹիւնս ընդ իւրեարս։ — ԵԹէ իրքն փոխանակեալք երկոքին ևս իցեն սոսկ սրբազանք՝ օրէն իսկ է, որպէս զաղօԹս փոխանակել ընդ պատարագի և այլն։ ԵԹէ ընդ հասս ինչ իցեն կցորդեալ, որպէս եկեղեցական պաշտամունք, առանց հրամանի Պապին կամ դԹէ եպիսկոպոսի, ոչ է օրէն։ Իսկ զսկի և զպաս հոգևոր և այլն, մարԹ իսկ է վաճառել կամ փոխանակել՝ որչափ ինչ ըստ ինքեան արժէն, առանց՝ի ներքս խառնելոյ զօրհնուԹիւնն և զմանն սրբազան։

48. Որքո՞ն իցէ տրիւք ինչ զերծանել՝ի հարստահարուԹենէ առ՝ի ժառանգել ինչ հոգևոր։ — Կրկուս կանոնս սահմանէ առ այս սուրբ Գրիգորիոսն։ ԵԹէ ստացեալ իցէ ուրուք զիրաւունս ժառանգելոյ զայն, կարող իսկ է տրիւք զերծանել՝ի հարստահարուԹենէ։ Իսկ եԹէ չէ ևս իցէ ստացեալ զիրաւունս, չէ նման օրէն տրիւք ողոքել զտուիչն՝ ԹէԵտև անիրաւաբար ժխտիցէ տալ։ Այլ միայն՝ օրէն է տալ ինչ ումեք որ ԹէԵտև չկարիցէ քեզ, այլ կարիցէ եԹէԵտև ձեռնտու առ առեղուԹեան՝ պարգևօք կամ չարախօսուԹեամբ խափանելով զվարկ ընտրողաց։ Իսկ եԹէ ընտրօղն ինքնին իցէ քեզ հակառակ, որ ոչ միայն ձեռնտու կարիցէ՝ այլ և օգնել քեզ, ոչ է քեզ օրէն ողոքել

զնա տրիւք. զի արծաթն այն յանկուցանէ զնա միշտ ՚ի նպաստ քո՝ առ ՚ի ժառանգութիւն եկեղեցական պաշտամանն և հասից։ Այլ և սա եթէ հնարեսցի դաւով և բռնութեամբ խափանել զվարկ այլոց ընտրողաց, օրէն է քեզ յայնժամ արգելուլ տրիւք զանիրաւութիւն նորա, յայտ արարեալ զի աւելի ինչ քան զայն չէ քո խնդիր։

Ձ. Օրէն դարձեալ հրաժարեցուցանել զոք տրիւք ՚ի խնդրելոյ զպաշտօն ինչ եկեղեցական, որում մարթ է նմա հասանել, որպէս զի իւր կամ այլում միասցէ այն. այլ ընդ հակառակն օրէն է տրիւք խափանել զընտրութիւն անարժանին։ Օրէն է և ՚ի ծանր կարօտութեան տրիւք ստիպել զոք ՚ի մատակարարութիւն խորհրդոյ, զորս անիրաւաբար զլանայ. զի այս հաւասար է խափանելոյ զանիրաւութիւն։

49. Կանոնք եկեղեցականք սահմանեն ընդդէմ սիմոնականայ զպատիժս զայսոսիկ։

Ա. Որ սիմոնականութեամբ մտանէ ՚ի կարգ կրօնաւորութեան, անկանի ինքն ՚ի բանադրանս, և միաբանութիւնն կախեալ միայ։ Դարձեալ ամենայն ընտրութիւնք սիմոնականք ՚ի կարգապետութիւն, ՚ի վանահայրութիւն և յամենայն հոգևոր պաշտամունս, անվաւերք են։

50. Բ. Ի սիմոնական ձեռնադրութիւնս (քայ ՚ի հերետիկոսութենէ) ձեռնադրօղն և միջնորդք անկանին ՚ի բանադրանս և ՚ի կախումն պապական, և ՚ի խափանումն եկեղեցւոյն ՚ի պաշտամանէ։ Իսկ ձեռնադրեալն ոչ միայն անկանի ՚ի բանադրանս և ՚ի կախումն ՚ի կարգաց անտի ընկալելոց սիմոնականութեամբ, այլ և խափանի յելանելոյ ՚ի վերագոյն կարգ։ Այլ ՚ի պատժոյ աստի ազատ է ձեռնադրեալն, որոյ յանգիտս սիմոնականութեան այլոց ընկալեալ իցէ զկարգ։

51. Գ. Եկեղեցական պաշտօնատարութիւնս, ուր իցէ իրական սիմոնականութիւն, անվաւեր են ամենայն ընտրութիւնք և առաջարկութիւնք. վասն որոյ և չկարէ ընտրեալն ընդունել զՏէս, և ոչ կալ ՚ի պաշտամանն։ Եւ ոչ տգիտութիւն անյաղթելի ազատ կացուցանէ զոք ՚ի պատժոյ աստի, ոչ պատժոյն անգիտութիւն և ոչ սիմոնականութեանն գործելոյ վասն իւր յայլմէ։ Այլ ա-

զատ է նա 'ի պատժոյ, նախ՝ եթէ դժկամակ պատուոյն և անգէտ սիմոնականութեանն՝ առ 'ի հաձել զտուրքն ընկալեալ իցէ զայն: Երկրորդ՝ եթէ գործօղ սիմոնականութեանն դաւով զայն գործեալ իցէ, առ 'ի կացուցանել զնա անընդունակ պաշտամանն: Երրորդ՝ եթէ զերեամ մի անխոռով վայելեալ իցէ 'ի պաշտօն իւր: Զանց այսոցիկ որ սիմոնականութեամբն ընդունի զպաշտօն եկեղեցական, անկանի 'ի պատկան քանադրանս, զրկի նովին իսկ իրաւամբք յընկալեալ պաշտամանէն, և ոչ ևս կարէ ընդունել այլ պաշտօն: Այս հաւանական է յոյժ, զի առ 'ի կրել պատիժ այսպիսի՝ պէտք իցեն վճռոյ դատապարտութեան:

52. Ո՞ւմ որ գործէ սիմոնականութիւն մաերմանական, 'ի վերայ պատժոց իրականին՝ զրկի և 'ի նախընկալ այլոց ժառանգութեանց. այլ հաւանականաբար՝ ոչ առանց յայտարար վճռոյ յանցանացն: Սակայն ժողովն տրիդենտեան սահմանէ, զի քննիչք ընծայելոց 'ի ժողովրդապետութիւն՝ որոց պարգևս 'ի նոցանէ ընկալեալ իցէ՝ չկարիցեն ընդունել արձակումն 'ի խոստովանութեան, առանց հրաժարելոյ եկեղեցական ժառանգութեանց:

53. Պիտելի է նախ՝ զի այս ամենայն պատիժք սահմանեալ են ընդդէմ սիմոնականութեան յիրս՝ զորոց ասացաք, այսինքն 'ի վաճառս կրօնաւորութեան և եկեղեցական կարգաց և ժառանգութեանց. այլ ոչ և 'ի վաճառս սրբազան իրաց, կամ եկեղեցական իրաւատութեան կամ ազատ պատարագեաց: Երկրորդ՝ զի առ 'ի կրել զսահմանեալն պատիժ, պարտ է սիմոնականութեան լրանալ երկուստեք և արտայայտ. բայ 'ի մաերմական սիմոնականութենէ, յորում շատ է տուչութիւն կաշառոյ ըստ կանոնին Պիոսի Ե: Երրորդ՝ զի զրկինս ընկալեալս առ 'ի տալ զսիմոնականն պաշտօն կամ կարգ կամ խորհուրդ, եթէ իցեն աւելի քան զվեցս կենաց պաշտօնէին (տես 'ի 45.) պարտ է հատուցանել տուաղին զայն, եթէ նախ քան զընդունելութիւն սրբազան իրին իցէ տուեալ. իսկ եթէ յետ ընդունելութեանն, հաւանականապէս է հատուցանել եկեղեցւոյն կամ աղքատաց: Իսկ զհասս սիմոնականութեամբ ընկալեալ ժառանգութեան պարտ է հատուցանել եկեղեցւոյն,

և հաւանականաբար աղքատաց կամ յաջորդելոյն ՚ի ժառանգութիւնն, կամ ընդունել ՚ի պապէն անօրինութիւն։ Այլ զգինս ընդունելութեան ՚ի կրօն չէ պարտ հատուցանել առանց վճառս։ Յորմէ՝ զի զբանապրանս և զկախումն սիմոնականութեան, եթէ իցէ հրատարակեալ, ոչ ոք բաց ՚ի պապէն կարող է արձակել. իսկ եթէ ՚ի ծածուկ, կարող են ըստ հասարակաց կարծեաց արձակել և եպիսկոպոսունք։ Այսպէս և զանընդունակութիւն այլոց իրիք ժառանգութեան կարեն անօրինել եպիսկոպոսունք, եթէ միայն չիցէ սիմոնականութիւնն ածեալ յատեան, և չիցէ լեալ մոեր-մական։ Կարեն եպիսկոպոսունք և զնոյն ժառանգութիւն սիմոնականութեամբ ընկալեալ՝ անօրինել, եթէ ընդունօղն չիցէ լեալ կիսակից սիմոնականութեանն գործեցելոյ յայլոց. բայց պարտ է նմա հրաժարել նախ ՚ի ժառանգութենէն։

Յորմէ եղանակ ամպարշտութեան է երդնապանութիւնն, զորմէ ՚ի յաջորդ գլուխդ ասասցուք. (յօդ. Ը)։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՑ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

ՅԱՂԱԳՍ ՀԱՑՀՈՑՈՒԹԵԱՆ։

1։ Զ[ինչ է] հայհոյութիւն։
2։ Անիծանել զարարածս։
3–11։ Անիծանել զմեռեալս։

1։ Հայհոյութիւն է ընծայել արարածոյ աստուածային ատորոգելիս, որպէս կոչել սուրբ զգեա և այլն, կամ նախատական ինչ ասել ընդդէմ Աստուծոյ և սրբոց, կամ զսրբութիւնս Եկեղեցւոյ զրկանել և զոտնս։ Հայհոյութիւն է և ասել։ Ի հեճուկս Աստուծոյ։ Ել արդարութեամբ առնէ գէր գայս։ յետինս այս մելորութիւն եւս է և բացատրելի ի խոստովանութեան։ Պարծել եւս մարթ է հայհոյել, որպէս ընդ երկինս թքանելով, կամ զսրբութիւնս առ ոտն կոխելով։

2։ Անիծանել զարարածս, որպէս զհուր զհողմ զանձրեւ և այլն, ոչ է հայհոյել՝ եթէ չիցէ ինչ բան նըշանական Աստուծոյ, որպէս երկինք, կամ աստուածային կարողութեան՝ որպէս հոգի։

3։ Ել է հայհոյութիւն անիծանել և զմեռեալս, եթէ ոչ իմանայցէ ոք զհոգիս քաւարանի, կամ ոչ ասիցէ Անիծեալ հոգի արդարոյ կամ Նզովեալ ի Քրիստոս։

4։ Ալ ասն զի ոչ ըստ ինքեան և ոչ ըստ մտաց աստղային է այն հայհոյութիւն։ Ել ըստ ինքեան, զի մեռեալն նշանակէ զրկեալ ի կենաց, ոչ եւս էակ։ և ըստ այսմ ոչ հոգի և ոչ մարմին նշանակէ։ վասն որոյ Հնդիւս և իմաստասիրաբար ոչ ումեք առնէ Եհնամանս, որ զոք անիծանել ինչ անէակ։

5։ Այլ ասիցէ ոք զի ասա մեռեալն առնչական է,

և կարէ նշանակել թէ զմարմին և թէ զՀոգի մեռեալն։ — Այլ ասա ոչ զմնայ և զդիտաւորութենէ են բանք, այլ զբուն նշանակութենէ. սակայն և ըստ երկրորդաբար նշանակութեան՝ զմարմին ևս թէ ի խմանալ մեռեալ, և ոչ զՀոգի անմահ. զի մեռեալ անուղղակի ևս թէ յուցանէ զՀոգի՝ երբեմն կենդանաբար մարմնոյն մեռելոյ։ Եւթէ բնիկ նշանակութիւն մեռելոյ դիակն է, ապա յանիծանել ուրուք զդիակն՝ ոչ է իմանալ ըստ ինքեան զՀոգի. այլ առ ի տալ նմա զայն ի միասն, հարկ է զի կամ որ անիծանէն՝ իմանայցէ ի միաս իւր զՀոգի, և կամ ի յարակից բառիցն առնուլ զայդ նշանակութիւն։

6. Այսպա ուրեմն անիծանել զմեռեալս ոչ է ըստ ինքեան հայհոյել. տեսցուք արդ թէ իրդ ըստ մտաց անիծանողացն։ — Այս ոչ ըստ այսմ է հայհոյութիւն. զի որք անիծանէնն զմեռեալս, սովորաբար ոչ իմանան զՀոգի։ Օի այլ է մարդ կենդանի բաղկացեալ ի Հոգւոյ և ի մարմնոյ, զոր թէ որ անիծանէ ի Հոգին անիծքն ի վեր ելանեն. այլ մարմին մեռեալ բաժանեալ է ի Հոգւոյն, և ոչ է հարկ իմանալ զայն ընդ մարմնոյ։

7. Սակայն դիցուք թէ որ անիծանէն զմեռեալս՝ իմանայցէ զնոսա որպէս կենդանիս։ Այլ մի թէ որ անիծանէն զոք կենդանի, մանաւանդ մեղանչէ միշտ։ Այո մեռեալն բարեյականք, Այեթանոյ, Սոթոյ, Սոլինա, Փրատոյ, Ազորիոյ, Լուկոյ, Աալմատիկեանք և այլք ընդ սրբոյ Գրիգորիոսցւոյն հաստատեն զի անէծք ընդդէմ ուրուք յայնժամ է մանաւանդ, յորժամ տեսակապար որ զնա անիծանէ, այսինքն որպէս մեկնէ Այեթանոյ՝ յորժամ չարիս որ մեղեալ ընկերին, և ծանր չարիս, և ոչ յորժամ նիւթապէս ևեթ առանց չարութեան։

8. Այս սակայն է ի նմա՝ զոր անիծանէն՝ Հոգի և մարմին, և ընդդէմ ոչ մանաւանդ մեղանչեցէ։ — Ասն զի որ անիծանէն, ոչ միշտ զՀոգի ընկերին իմանայ անիծանել, և ոչ զնման զայն՝ յորում պատկեր աստուածութեանն գերափայլէ, այլ բաժանել զայն ի միաս, վասն որոյ և ոչ մանաւանդ մեղանչէ։ Այլ զանգան արարածս անիծանէ, եթէ որպէս աստուածատուրս զնոսա նկա-

տեալ՝ անիծանիցէ, մահուաւք մեղանչէ ըստ սրբոյ Պա-
ւլինոսի, և հայհոյէ. այլ ոչ, եթէ նկատեալ զնո-
սա յինքեանս և եթ՝ անիծանիցէ. և սակայն արարածք
Աստուծոյ են բնաւք: Այսպա ուրեմն որպէս ընդունի
սուրբ Գրոցն զայս իմանալի բաժանումն, այսպէս
և որ անիծանէն զմեռեալս զհոգի նոցա իմանալով ա-
նիծանել՝ մեղանչէ մահուաւք. իսկ որ բաժանէ զայն ի
միտս, անիծանելով զընկերն՝ առանց իմանալոյ անիծա-
նել զհոգին, չմեղանչէ մահուաւք և չհայհոյէ:

9. Իսկ ասել թէ ամենեքեան որք անիծանէնն զմե-
ռեալս՝ իմանան անիծանել և զհոգիս նոցա, չէ օրէն,
բազմաց ի խոստովանահարց զհակառակն վկայելով ի
հարցափորձելոյ զապաշխարօղս: Ոմանաւանդ զի սովո-
րաբար որք անիծանէն զմեռեալս, ոչ գնոսա կամին
թշնամանել՝ այլ զկենդանիս, առ որս արձակէնն զա-
նէծս՝ որպէս յիշոցնատուս լինելով: Ոմն որոյ խոստո-
վանահօր անկ է հետազօտել, և զճանրութիւն մեղացն
ըստ մտաց ապաշխարողին դատել:

10. Օգտս վարդապետութիւն երկարագոյնս ցու-
ցանէ փոստիւք սուրբն Պաւղինոս, լուծանելով և զա-
մենայն առարկութիւնս, և վկայութեամբք բազմաց
հաստատելով, զի անիծանել զմեռեալս ոչ է ըստ ին-
քեան հայհոյութիւն, և ոչ մահացու մեղք, և յա-
ւելու.

11. Ոկարեմ ապա ի միտ առնուլ՝ թէ օրպէս ոմանք
առանց իսկ երկբայելոյ՝ հաստատեն իբր հաւաստի, և
ի բեմէ իսկ քարոզեն հայհոյանս գոլ և մահացու մեղս
ըստ ինքեան՝ անիծանել զմեռեալս. ուր վարդապետք
առ հասարակ, և ս և խիստք՝ որպէս Ներսէս Պա-
նձնեցի և այլք, խրատեն մի ինչ ի ծանր մեղս դատապարտել ա-
ռանց յայտնի վկայութեան սուրբ գրոց կամ բացայայտ
պատճառաց, և կամ եկեղեցական կանոնաց և վճռոց:
Ոչ ի որպէս սուրբն Պետրոս յաւելու, "Ի սահմա-
նել մահացու որ ինչ ոչն է, մահուաւք մեղիցեն որք
անկանիցինն յայն. զի ամենայն որ հակառակ է խղճի
մտաց, օժանդակէ դժոխոց":

ՅՕԴՎԱԾ Բ

ՅԱՂԱԳՍ ԵՐԴՄԱՆ

12. Զ[ինչ] է երդումն:
13. Վանիլատեիկ:
14. Պայման օրինաւոր երդման:
15. 16. Օրէն իցէ երդումն երկիվի:
17. Ո՞ր ի վերին երեսս երդնու:
18. Զի երդումն օրինաւանց ոչ ածէ պարտս:
19. Վանի՞ ինչ ազատ կացուցանեն յերդմանէ:
20. Յաղագս երդմնեցուցման:

12. Երդումն է կոչել զանուն Աստուծոյ ի վկայութիւն ճշմարտութեան: Ապա երդնու, ոչ միայն որ ասէն՝ Աստուած վկայ, այլ և որ զսուրբս նորա կոչէ ի վկայութիւն, կամ զսրբութիւնս՝ որպէս զխաչ՝ զեկեղեցի՝ զաւետարան՝ զՀաղորդ, և զարարածս՝ յորս գերբահայել զօրութիւնն Աստուծոյ կամ բարութիւն, որպէս զերկինս՝ զԿոզի և այլն: Այլ է երդումն կոչել զնիզ մտաց իւրոց ի վկայութիւն, կամ ասել՝ Ցեսու՛ նէ ոչ. կամ ճշմարտութի՛ւն է այս որպէս պատահարն կամ ասել ևս՝ Երդնո՛մ ձեզ այս այսպէս է, եթէ միայն չիցէ այն ի պատասխանի պահանջելոյ այլոց ի նմանէ երդումն Աստուած կամ յաւետարանն և կամ յայլ ինչ յաստուածային:

13. Վաւակի է երդնուլ. մի՝ հաստատելով ինչ. երկրորդ՝ խոստանալով. երրորդ՝ անձին կարդալով, որպէս ասել՝ Ոհա՛ծ արասցէ ինձ ոչ արարէց զայս ինչ կամ զայն. չորրորդ՝ սպառնալով, որպէս ասել՝ Անէ ոչ լուիցես, կենդանի է ո՛չ՝ ձեզ հպատակեցոյ ինձ: Երդ ըստ առաջնումն ծանր մեղանչէ որ հաստատէ ինչ սուտ: Ասա երկրորդումն ևս մեղանչէ ծանր, եթէ չունիցի կամն կատարելոյ զոր խոստանայն: Իսկ եթէ ունիցի կամն, և ապա չկատարիցէ, և դուշնաքեայ ինչ իցէ խոստացեալն, չոյժ Հաւանական է՝ զի չմեղանչէ մահու չափ. քանզի երդնուլն՝ կոչէ զԱստուած ի վկայութիւն այնր ժամու կամացն, և ոչ հանդերձելոցն ի կատարել զխոստացեալն: Իսկ եթէ զոր խոստանայ ինչ երդմամբ առանց մտաց հաւանութեան

ընդ երդումն կամ ընդ խոստումն իւր, մեղանչէ մահու-
չափ. այլ հաւանականաբար ոչ է պարտական՝ ի կա-
տարումն խոստմանն, գնել ընդ ծանր մեղաց: Այսպէս եր-
բորդումն, եթէ չարիս և եթէ ոք կարդայցէ անձին՝ ա-
ռանց՝ ի ներքս ածելոյ զայտաւած, հաւանական է՝ թէ
չածիցէ պարտս՝ ի վերայ իւր ընդ ծանր մեղաց: Ոմանք
է ասել և զսպառնականէն. մանաւանդ զի եթէ անի-
բաւ իցեն սպառնալիքն, չածեն երբեք պարտս՝ ի վե-
րայ: Ասան որոյ երդմունք ծնողաց պատուհասելոյ զոր-
դիս՝ սովորաբար ոչ ածեն ինչ պարտս, զի կամ զգուշ-
նաքէից են, և կամ՝ ի տարապարտ կրից:

14. Արեք ինչ կարևոր են առ՝ ի կացուցանել օրի-
նաւոր զերդումն: Այսպէս՝ զի չիցէ զգուշնաքէից. այլ որ
յայսմ յանցանէ, ներելի են յանցանքն: Երկրորդ՝ զի
իցէ արդար երդուեալն իր. վասն որոյ ծանր մեղանչէ որ
երդնուն առնել ինչ անիրաւ, թէ և անիրաւութիւնն
իրին չիցէ ծանր: Երրորդ՝ զի իցէ երդուեալն իր բա-
րոյապէս և գնել յեղանակաւ լինն ստոյգ:

15. Ինդրի աստանօր թէ իցէ՞ օրէն երդումն երկ-
դիմի: — Այլ է սուտ, և այլ երկդիմի. և երկդիմու-
թեան այլևայլ ազգք են. է բաւիւ երկդիմութիւն, է
բանի՝ երկուս իմաստս ըստ գրոյն ունելով. է և իմաս-
տից՝ գրաւոր և խորհրդաւոր իմաստս ունելով: Ոչն
երկդիմութիւն՝ և ամիսոխումնն ոչ սուտ տաւորս, զի սուտ
տաւորն արգելեալ է բոլորովին, այսինքն ժխտել զճշմ-
մարտութիւն ինչ՝ զոր ձշմարիտ ձանաչէն միտք. զի չը-
կարէ որ լսէն գուշակել երբեք զերկդիմութիւնն. իսկ
ոչ սուտ մտաւոր, յորժամ՝ ի հանգամանաց բանին կարէ
որ լսէն գուշակել զայլ ինչ միտս խօսողին: Որպէս է-
թէ գիտիցէ ինչ ոք ընդ կնքով, կարէ ասել թէ չգի-
տիցէ. զի չգիտէ առ՝ ի յայտնել զայն. որպէս և տէրն
մեր ասաց չգիտել զօր դատաստանին, զի չգիտէր զայն
որպէս մարդ, և կամ լաւ ևս ըստ այլոց մեկնչաց՝ չգի-
տէր զայն առ՝ ի յայտնել: Որպէս և յորժամ ասացն.
"Ոչ եմ ես՝ ի տունն յայն,,. զի չէմանէր յայտնա-
պէս, այլ՝ ի ծածուկ: Այսպա ուր իրաւացի պատճառք ի-
ցեն, օրէն է պատասխանել և երդնուլ իսկ երկդիմու-
թեամբ, կամ ամիսոխմամբ մտաց ոչ սուտ մտաւորաւ.
զի յայնժամ ոչ է խաբել զայլս, որ չէ երբեք օրէն,

այլ Թողուլ նոցա խաբել. զի ոչ միշտ պարտական եմք ըստ մտաց Հարցողացն պատասխանել: Եւ ոչ է այս օրինաւոր՝ ի դատաստանի. զի անդ իշխանութիւն է դատաւորի Հարցանել, և ամենայն ոք պարտի ասել զՃշմարտութիւնն. վասն որոյ որ երդնուն յատենի երկրդիմութեամբ, մեղանչէ ընդդէմ օրինացս արդարութեան:

16. Եւ արասքոյ ատենի այլազգ Համարին բազումք ի բարբարականաց, մինչև ասել՝ զի եթէ ուրուք խոստովանեալ իցէ զմեղս ինչ իւր, Հարցեալ յայլմէ խոստովանահօրէ՝ Թէ ունիցի զայն ինչ մեղս, կարէ ժխտել զայն, խմանալով ոչ գործեալ զայն առ ի կրկին խոստովանել. ի բաց առեալ զունակական մեղս, զորս պարտի ամենայն ոք խոստովանել՝ Հարցեալ ի խոստովանահօրէ: Նմանապէս եթէ աղքատի ուրուք մի ևեթ նկանակ իցէ, և խնդրիցէ ոք ի նմանէ Հաց ի փոխ՝ կարէ ասել Թէ չունի. զի յաղքատութենէ նորա մարթէ զուշակել այլոց զմիտս բանին, այսինքն զի չունի առ ի տալ այլոց: Եւ յայսպիսի դէպս ապահովագոյն է ասել. Ո՛չ տայր ինձ զայն. իսկ Թէ զոյր իմ Հաց, և կամ այսպիսի ինչ:

17. Եթէ ոք ի վերին երեսս երդնուցու՝ ոչ կամելով ընդ ունել զերդնուն, մնհաւանի մեղանչէ. իսկ որ կամելով առնել զայն՝ երդնու վեր ի վերոյ, Հաւանական նաբար ներելի մեղս գործէ, առնելով ևեթ զանուն Աստուծոյ ընդունայն:

Նոյնպէս և որ երդնու վեր ի վերոյ առանց կամելոյ պարտս յանձն առնուլ. զի երդումն այնպիսի՝ չէ իսկապէս երդումն, և ոչ խոստումն Ճշմարիտ. այլ որ երդնու Ճշմարտապէս՝ չկամելով ընդ ունել զերդնուն, ոչ միայն մեղանչէ մնհաւանի, այլ և պարտական գտանի կատարելոյ զերդնուն՝ Թէպէտև առանց կամելոյ պարտս յանձն առնուլ երդուեալ իցէ. վասն զի պարտքն այն յառաջ գայ անգամն յերդմանէն, որ ի պատիւ Անուանն Աստուծոյ ստիպէ ի լրումն խոստմանն:

18. Երդումն չկարէ երբեք պարտս ի վերայ ածել առնելոյ ինչ ընդդէմ օրինացս, և ոչ կատարելոյ մնոաի ինչ կամ խափան մեծագունի բարւոյ, որպէս Հաստատակ ինչ աւետարանական խրատուց: Այլ եթէ

նպաստաւոր ինչ այլոց ումեք իցէ երդումնն, պարտ է կատարել միշտ զայն՝ ուր ուրեք չիցեն մեղք. վասն ո՞ր որ երդնու հատուցանել տոկոսիս, կամ տալ գողոյ զինչս իւր, պարտական է տալոյ, Թէպէտ և կարիցէ յե՞տոյ առնուլ իւր զփոխարէնն: Հաւանական իսկ է, զի կարիցէ յայնժամ երդնուլ լռելեայն պայմանաւ, այս՞ինքն տալոյ՝ եթէ ոչ ԹողուԹիւն յեպիսկոպոսէ ընկալցի երդմանն. և ընկալեալ զԹողուԹիւն, ոչ ևս պարտական է տալոյ: Իսկ եթէ օրէնք ինքնին ընդունայն առնեն զխոստումն, որպէս զհարենախօսուԹիւն եկեղեցական, կամ զկրօնաւորուԹիւն կամ զամուսնուԹիւն երդուեալ առ ահի սպառնալեաց, ընդունայն է երդումնն:

Այլ գիտելի է զի ամենայն խոստումն արարեալ երդմամբ, իւրովի բերէ զպայմանս զայսոսիկ: Ա՛խ՝ եԹէ որում առնի խոստումն, ընկալցի զայն, կամ Թէ ոչ արասցէ ԹողուԹիւն այնմ: Երկրորդ՝ եԹէ հանգամանք իրացն ոչ փոխեսցին երևելապէս. կամ եԹէ իցէ ինչ՝ զոր եԹէ գիտէր որ երդուաւն, ոչ երդնոյր: Երրորդ՝ եԹէ կայցէ մնայցէ վախճանական պատճառ խոստմանն: Չորրորդ՝ եԹէ միւս կողմն կայցէ՛ի խոստմանն: Հինգերորդ՝ եԹէ մեծաւորք ոչ արգելուցուն զկատարումն խոստմանն: Վեցերորդ՝ եԹէ առանց ծանր վնասու մարԹ իցէ կատարել զխոստումնն: Ա՛ն որոյ եԹէ խոստանայցէ ոք լռել զգաղտնիս, ոչ է պարտական լռելոյ յեպիսկոպոսէ ընդ առաջ ծանր վնասու, եԹէ միայն չիցէ խոստացեալ յայտնապէս յանձն առնուլ և զծանր վնաս: Իսկ եԹէ վտանգաւ իսկ կենաց իցէ խոստացեալ զլռուԹիւն, հաւանականաբար ոչ է պարտական: Ա՛ն որոյ և որ խոստանայն չյայտնել զգաղտնիս բժշկուԹեան ախտից, ոչ է պարտական պահելոյ զխոստումնն՛ի ծանր վտանգի կենաց ուրուք:

19. Ի պարտուց երդման ազատ կացուցանէ, նախ՝ բարձումն երդմանն, զոր կարէն բառնալ Հարք, արք, եպիսկոպոսունք, աբբայք, և ամենայն մեծաւորք, ևս և՛ի վնաս այլոց: Երկրորդ՝ անօրինուԹիւն կամ փոխանակուԹիւն, զոր կարէն առնել որք ունին իշխանուԹիւն անօրինելոյ և փոփոխելոյ զուխտս: Երրորդ՝ ԹողուԹիւն պարտեացն, զոր կարէն առնել եպիսկոպոսունք

և վանահարք հպատակայ իւրեանց, և ս որոյ աւանդեալ իշխանութիւն է տնօրինելոյ զսխատս։

Վ Խտելի է նախ՝ զի զերդումն ՚ի նպաստ այլոց ուրուք արարեալ, նա ինքն նպաստեալն կարէ Թողացուցանել. և և յորժամ երդումին այն ՚ի նուէր Աստուծոյ արարեալ իցէ, այլ՚ի նպաստ այլոց իցէ խոստումին, որպէս աղքատի ուրուք կամ եկեղեցւոյ կամ մենաստանի։ Վ Խտելի է երկրորդ՝ զի առ ՚ի բարձումն երդմանն չէն կարևոր պատճառք, այլ կարևոր են միայն ՚ի տնօրինումն, ՚ի փոխանակութիւն և ՚ի Թողութիւն։ Վ Խտելի է երրորդ՝ զի եթէ խոստումն երդմամբ հաստատեալ՝ ընկալեալ է յումեքէ ՚ի նպաստ իւր, և դարձն ՚ի մէջն կայցէ, ոչ ևս աք կարէ բառնալ զայն՝ բայց միայն նպաստեալն։

Վ անն որոյ զերդումն կամ զուխտ յարաբերութեան՝ զոր ՚ի կրօնս ուրեք առնեն միաբանք՝ ոչ ոք կարէ Թողացուցանել, բայց Պապն և կարգապետ ուխտին։ Վ Անզգի երդումն այն որպէս դաշնադրութիւն հպատակին է ընդ միաբանութեան. զի միաբանութիւնն պարտ յանձն առնու կերակրել և ուսուցանել զհպատակն, և սա սպասաւորել ուխտին։ Վ Խտելի է չորրորդ զի զհոստումն երդմամբ հաստատեալ, և ընկալեալ ևս ՚ի նպաստեղոյն, կարէ Թողացուցանել մեծաւորն՝ յորժամ ընդդէմ իրաւանց իւրոց իցէ այն, կամ ձնասակար հասարակաց, կամ սպառնալեօք յափշտակեալ։

20. Եպիսկոպոսն է խնդրել յումեքէ յանուն Աստուծոյ զպատասխանի, կամ հրամայել իսկ յանուն Աստուծոյ՝ որպէս դիւահարաց։ Օ՞ր առանձինն՝ ամենայն ոք կարէ առնել, այլ հրապարակաւ՝ պաշտօնեից և եթէ եկեղեցւոյ անկ է առնել հրամանաւ Թեմական եպիսկոպոսի։ Պարտ է որոյ կատարենն զպաշտօնս զայս՝ զգոյշ լինել, մի ընդվայրաբանողս և մնոտիախնդիրս լինել, այլ այնմ և եթէ ուշ ունել խափանելոյ զբարիս և ազատելոյ զտառապեալն ՚ի հարստահարութենէ դիւին։

ՅՕԴՈՒԱԾ Գ

ՑԱՂԱԳՏ ՈՒԽՏԻ

21–24. Զ[ի]նչ է ուխտ:
25. Որ վասն ոչ բարւոյ արարեալ ուխտ:
26. Ուխտ չինգրելոյ երդիւք անօրինուածն:
27. Ուխտ ամուսնանալոյ:
28. Ոչ ևս [ի]նչ ուխտելոյ:
29. Գիտելիք [ի]նչ առ այս:
30. Ուխտ պայմանաւ:
31. Տրոհական ուխտ. և որ կատարէ առանց յիշելոյ զուխտ իւր:
32. Եթէ անցցէ պայմանեալն ժամանակ:
33. Մեղք յամեցման ուխտին:
34. Ուխտ կրօնաւորական:
35. Փոխոխութիւն ուխտելոյ երկին:
36. 37. Բարձուածն ուխտին:
38. Փոխանակութիւն ուխտի:
39. 40. Տնօրինուածն ուխտի, և պատճառք նորին:
41. Զ[ի]նչ եթէ իցէ ուխտն [ի] նպաստ այլոց:
42–44. Ո՞ւմ անկ է անօրինել զուխտս:
45–49. Վերապահեալ ուխտք:
50. Կարո՞ղ իցէ Պապն անօրինել զուխտս հանդիսականս:

21. Ուխտ է խոստանալ Աստուծոյ գիտութեամբ կարելի [ի]նչ և լաւագոյն: Խոպանալ ասելիք, առ [ի] յուցանել զծանր պարտս՝ զոր յանձն առնու խոստացօղն, և առ [ի] զանազանել յառաջադրութենէ՝ որ ըստ [ի]նքեան ոչ ածէ և ոչ թեթեւ [ի]նչ պարտս: Ասն որոյ ուխտել առանց կամելոյ խոստանալ [ի]նչ կամ՝ պարտս յանձն առնուլ, ոչ [ի]նչ է ամենևին. ընդ հակառակն պարտական է [ի] պահպանութիւն ուխտին որ զք կամի խոստանալ և պարտս յանձն առնուլ, թէ և չկամիցի ընուլ զայն. կամ՝ որ զք կամի խոստանալ և ընուլ զխոստումն՝ գիտելով զպարտս ուխտին, թէ և չկարօղ հիցի յայն մնալ գրութեամբ. վասն զի որ կամի [ի]նչ, կամի և զհետեւանս նորա: Որ խոստանայ [ի]նչ, այլ չկամի պարտս յանձն առնուլ, մեղանչել մեղանչէ, այլ ըստ հաւանականագոյն կարծեաց ոչ է պարտական ուխտին՝ թէ և գիտիցէ զպարտս նորին. զի որովհետև պարտքն յառաջ գայ [ի] կամաց, ապա ոչ անկանի ընդ պարտեօք որ ոչն կամի: Այս մեղք այնպիսւոյն սովորա-

բար ներելի է, բայց յուխտէ կրօնաւորութեան և ձեռնադրութեան՝ յորս մահուչափ մեղանչէ. և որ ձեռնադրելոյն առանց կամելոյ յանձն առնուլ զպարտս ողջախոհութեան, անկանի ընդ պարտեօք՝ գէթ վասն եկեղեցական օրինաց։ Նոյնպէս և յերկբայեալն՝ թէ արդեօք կամեցեա՞լ իցէ ուրուք պարտս յանձն առնուլ, համարի ոչ վորաբար՝ ոյր ոչ ուխտէն՝ կամի պարտս յանձն առնուլ։ Նոյնպէս և յերկբայեալն՝ թէ արդեօք դիտութեամբ յանձն առեալ իցէ զպարտս ուխտին, համարի յանձն առեալ. ոյր ըստ առածին՝ ամենայն գործ համարի գործեալ ըստ օրինի։ Նոյնպէս եթէ երկբայութիւնն զնոսա մնանէն իցէ՝ թէ արդեօք ուխտեա՞լ իցէ թէ առաջադրեալ, ասելի է ուխտեալ՝ եթէ համարեալ իցէ խոստացողին մեղանչել՝ ի չկատարելն զայն։

22. Յաւելումն ասել գԻՈՒՆԻԱՆՈՍԻ. զի՝ ի պարտականութիւն ուխտին պահանջի կատարեալ ներգործութիւն բանին։ Այսու որոյ ուխտ մնական, որոյ չև իցէն աւիւ եօթն, ոչ արկանէ զնա ընդ պարտեօք, բայց եթէ յայտնի՝ ի նմա ցուցցի կատարեալ բանաւարութիւն. իսկ եթէ չեօթնամեան ուխտեալ իցէ, և բանաւարութիւն նորա երկբայելի, պարտական գտանի ուխտին. զի համարի յայնժամ՝ լեալ՝ ի նմա կատարեալ ներգործութիւն բանականութեան։ Ոմանք ասեն և զերկբայութենէ՝ թէ արդեօք յառաջ եթէ չետոյ քան զեօթնամեայ տիս ուխտեալ իցէ. ըստ ասացեալ առածիս՝ զի ամենայն գործ համարի գործեալ ըստ օրինի։

23. Նիկոմաքոս ասելիք զարձեալ, զի՝ ի պարտականութիւն ուխտին պահանջի լի և ազատ կշռադատութիւն կամելոյ զպարտս ուխտին յանձն առնուլ։ Այսու որոյ որ ուխտէն յահէ սպառնալեաց, ոչ ինչ է ուխտ նորա. ոչ միայն հանդիսաւորն՝ զորմէ լիք խնդիր, այլ և պարզն՝ ըստ հաւանականադոյն կարծեաց։ Եւ ինչ է և ուխտ վրիպակաւ արարեալ, թէպէտ և տխմարական և թանձր վրիպակաւ, յորժամ զերութենէն կամ զկարևոր հանգամանաց ինչ ուխտին իցէ վրիպակն։ Այնուամենայնիւ զի՝ որպէս Յուստիկ, Յանքէդ, և սուրբ Հռիփսիմեանցն հաւանական համարին, ամենայն իսկ վրիպակ եւս և ըստ պատահական հանգամանաց ուխտին, որ եթէ դիտելի

էր ուխտողին՝ ոչ ուխտէր, աղատ կացուցանէ զնա յուխտէն։

24. Եթէ զարձեալ կարելի ինչ ՚ի լաւագոյն. զի այլ աղգ ոչ ինչ զօրէ ուխտն։ Իսկ եթէ ըստ մասին ինչ կարելի իցէ և բաժանելի, զօրէ ուխտն ըստ մասին. նոյնպէս եթէ ըստ գլխաւոր մասին իցէ կարելի. այլ եթէ ըստ պատահական մասին և եթէ, ոչ և ս պարտ կատարումն ուխտին։ Եթէ ինչ ե զարձեալ ուխտն, եթէ իրն ուխտեալ իցէ նուազ բարւոյ, և կամ ոչ բարւոյ ինչ և ոչ չար։

25. Եթէ զօրէ արդեօք ուխտ, որոյ չար իցէ վախճան։ — Եթէ ուխտին ե վախճանն չար, որպէս եթէ ՚ի ցոյցս մարդկան ուխտիցէ զօ ծոմապահել՝ զի վասն ուխտին այնորիկ գովեսցի, զօրէ ուխտն. իսկ եթէ ուխտեալ իրին իցէ վախճանն չար, որպէս եթէ զօ ուխտիցէ ծոմապահել՝ որպէս զի ծոմապահուԹեամբն ագահեսցէ ՚ի ծախս, անզօր ե ուխտն։ Եթէ զօ ուխտեսցէ վասն ընդունելոյ մարմնաւոր ինչ յաստուածոյ, կամ պայմանաւ իւիք, որպէս՝ եթէ սպանանիցէ զԹշնամին, վաւեր ե ուխտն։ Եթէ զօ ուխտեսցէ մեղս ինչ գործել՝ և ս և ներելի, մեղանչէ մահուչափ. զի կամի ՚ի պատիւ աստուծոյ Թշնամանել զնա. զնոյն և վասն երդմանն սեն ումանք ՚ի բարոյականաց, այլ ՚ի մասինս յայսմիկ մարԹ ե գեղջկաց և տխմարաց յանցանել յաՀախ առանց մեղաց։

26. Օ՞ զօրէ արդեօք ուխտ չկնդրելոյ երբեք մնօրինուն։ — Օ՞ զօրէ, եթէ մնօրինուն չիցէ օգտակարագոյն Հոգւոյ ուխտողին։

27. Օ՞ զօրէ արդեօք ուխտ ամուսնանալոյ։ — Յովարաբար ոչ զօրէ, և ս և յուխտել ուրուք՝ յաղքատաց զոք կամ ՚ի պոռնկաց ածելոյ կին, եթէ չիցէ այն առ ՚ի բառնալ զգայթակղուԹիւն կամ զչարաՀամբաւուԹիւն, և կամ եթէ զփորձ առեալ ուրուք զանժուժկալուԹեան իւրոյ՝ ոչ կամիցի այլ ինչ դեզ ՚ի կիր արկանել։

28. Օ՞ զօրէ արդեօք ուխտ ոչ և ս ինչ ուխտելոյ։ — Օ՞ զօրէ, եթէ երագ ոք իցէ յուխտել՝ վտանգաւ չկարելոյ կատարել զուխտ իւր։ Այսան որոյ եթէ այնուՀետև ուխտեսցէ ինչ՝ մեղանչէ, այլ վաւեր ե ուխտ իւր, ե-

Թէ զառաջինն ուխտն չէիցէ արարեալ այնպէս՝ զի անշօր լինիցին յետ այնորիկ ամենայն ուխտք իւր, և չէիցէ և՛ս նահանջեալ զայն յիշելով յերկրորդումն ուխտին։ Իսկ եթէ ուրուք այլ և այլ ուխտս հակառակս իրերաց ուխտեալ իցէ, զարժանագոյնն յայնցանէ պարտի կատարել. և եթէ հաւասարք իցեն, զառաջինն՝ ըստ հանրապետին կարծեաց։

29. Իսկ յաղագս պարտեաց ուխտի դիտելի է.

Ա. Եթէ ծանր լինիցի իրն ուխտեալ, ծանր է և պարտականութիւն կատարելոյ զայն։ Այլ եթէ ոք զծանր լինիցն ընդ Թեթև պարտեաւք խոստանայցէ, ըստ հաւանականագոյն կարծեաց Թեթև է պարտականութիւն նորա կատարելոյ զայն։ Իսկ եթէ Թեթև իցէ իրն ուխտեալ, ոչ ոք կարէ խոստանալ զայն ընդ ծանր պարտեաւք։ Եթէ ոք ուխտեսցէ Թեթև լինիլ գործ առնել հանապազօր ընդ ամի ոմի՝ որպէս թէ լինի պարտապարտ, յայնժամ Թողլով զայն ընդ աւուրս բազումս՝ ծանր մեղանչէ։ Իսկ եթէ որպէս անձնական լինի պարտս ըստ աւուր աւուր ուխտեսցէ առնել լինի գործ Թեթև, զոր օրինակ ասել՝ Ողջ լեր Նաթանահէ, յայնժամ զաւուրս իսկ բազումս Թողլով զայն՝ չմեղանչէ լինի ծանր։

Բ. Պարտական է ժառանգն ըստ արդարութեան կատարել զամենայն ուխտս կտակարանին, և կատարել նախ քան զամենայն հրիտակս նորա, այլ յետ կատարելոյ զպարտս արդարութեան։

Գ. Երէց է տանուտեառն ուխտել լինի տուժիւք և սակաւ լինի մասին օրինաւոր ժառանգութեան որդւոցն, այլ ոչ՝ի մահուն. զի յայնժամ պարտ է նմա ըստ սահմանելոյ օրինացն անօրինել զինչս իւր։

Դ. Օրէն է օրէն հօր ստիպել զորդիս՝ի կատարումն ուխտի, զոր յանուն նոցին ուխտեալ իցէ. և ոչ միայն անութիւնք զՀետագայս իւրեանց կարեն ստիպել։

Ե. Ուխտս անձնականս՝ ուխտողացն պարտ է կատարել. իսկ զիրականս մարթ է և՛ի ձեռն այլոց կատարել։

30. Ա. Ի պայմանաւոր ուխտս եթէ չար իցէ պայմանն կամ անկարելի, ոչ զօրէ ուխտն։ Եթէ որդի ուխտիցէ լինի, որպէս ծոմապահել՝ պայմանաւ հաւա-

նուէթեան Հօրն, ոչ մեղանչէ եթէ ինքնին իսկ աղաչեցէ զՀայրն ՚ի չհաւանել։ Ընդ հակառակն մեղանչէ, եթէ խաբէութեամբ ածցէ զՀայրն ՚ի չհաւանել. թէպէտ և հաւանական է ազատել նմա յուխտէն ՚ի ընուլ պայմանին զոր եդեալն կը յուխտելն։

Ե. Որ ուխտիցէ զի պայմանաւ զողջախոհութիւն, որպէս՝ եթէ պահեսցէ զնա տէր ընդ ամն ողջոյն ՚ի մահուչափ մեղաց, և ապա կամօք մեղեցէ առ ՚ի զերծանել յուխտէն, մեղանչէ ևս և ընդդէմ ուխտին. իսկ եթէ անկցի առ տկարութեան, ազատ է յուխտէն։

Զ. Որ զի ուխտ անձամբ զանձն պատժել՝ եթէ երբեք խաղայցէ, յառաջնումն ևեթ նուագի ՚ի խաղալն պարտական է պատժոյն. իսկ որ ուխտ մի ևս խաղալ ընդ այս ինչ պատժով, քանիցս անգամ և խաղայցէ՝ պարտական է պատժոյն, եթէ միայն յիշելով զուխտ իւր խաղայցէ։

31. Թ. Որ զի ուխտէ ինչ տրոհաբար, այսինքն կամ զայս ինչ և կամ զայն առնելոյ, և ապա ընտրէ առնել զմին յայնցանէ, պարտ է նմա կատարել զընտրեալն զայն, թէպէտ և յետ ընտրութեանն՝ միւսոյ մասին կատարումն լինի անհնարին. իսկ եթէ յառաջ քան զընտրութիւն իւր մի յերկուցն լինի անհնարին, ոչ ևս պարտական է զմիւսն կատարել, եթէ միայն յամեցումն իւր յընտրութիւն չլինէ լեալ մեղանչական։ Ըստ հաւանականն կարծեաց օրէն է նմա և յետ ընտրութեան միոյ մասին, թողուլ զայն և կատարել զմիւսն, եթէ կամիցէ։

Ժ. Որ ուխտէն տեսանել զօրհնասպազ զսուրբ պատարագն, հաւանական է թէ ՚ի կիւրակէի աւուր չլինէ պարտ նմա երկուս պատարագս տեսանել։ Որ ուխտէն կատարել զվարդարան, շատ է զի զերծոցդ մասն նուրբն կատարեսցէ. և ընդ այլս կատարելով զայն, ընուանեբկեայապէս զպարտս իւր։ Որ ուխտէն ծոմապահել ՚ի շաբաթ աւուրս, ՚ի հանդիպել Ծննդեանն Քրիստոսի ՚ի նմին աւուր՝ ոչ է պարտական, եթէ ոչ յայտնապէս և զայն խոստացեալ իցէ։

ԺԱ. Որ կատարէ զպարտս ուխտին առանց յիշելոյ զուխտ իւր, ոչ է պարտ նմա միւսանգամ կատարել զայն. զի ամենայն ոք կամի նախ զպարտս իւր կատա-

ըել, և ապա զազատ բարեգործութիւնս։ Այս ընդհանրապէս, որ ունիցի հաւանական պատճառ համարելոյ կատարեալ զպարտս ուխտին, ոչ ևս է պարտական կատարելոյ զայն, որպէս հաստատեն Բուկոյ, Լայման, Մոնքաշեա, Պոսսիոյ, Վիւա, և Վալմատիկեանք։

32. Լթէ ուրուք ուխտեալ իցէ ծոմապահել ՚ի սահմանեալ ինչ աւուր, յանցանել աւուրն այնորիկ՝ իցէ՞ պարտական ծոմապահելոյ յայլ օր։ — Ոչ է պարտական, եթէ վասն աւուրն այնորիկ իցէ ուխտեալ. իսկ եթէ վասն իրին իցէ ուխտն, և սահմանն աւուրն պատահական ինչ, պարտական է։

33. Որչափ ինչ յամեցումն կատարման ուխտին համարիցի ՚ի ծանր մեղս։ — Լթէ զիշխանչելաւոր ինչ իրաց իցէ ուխտն, որպէս զմոռանելոյ ՚ի կրօն, ծանր մեղանչէ որ ՚ի յամելն անպատճառ աւելի քան զվեց ամիս. զի վասն իրաւացի պատճառի օրէնն է երիս կամ չորս ամիս յամել, եթէ որ ուխտէն՝ իցէ պատանեակ. իսկ եթէ զժամանակաւոր իրաց իցէ ուխտն, որպէս զնալոյ ուրեք յայլ և այլն, ծանր մեղանչէ որ զերկեամ մի կամ զերեամ յամէ ՚ի կատարել։ Որ ուխտէ ինչ անպայման, որպէս ասել Հանապազօր զվարդարան, իմանի միշտ զիշխանչելաւոր պարտ յանձն առնուլ. իսկ յերկբայելն թէ միշտ զիշխանչելո՞ր էր ուխտն եթէ ժամանակաւո՞ր՝ շատ է կատարել զնուազագոյն միոյն երկբայեալ։

34. Որ ուխտէն կրօնաւորել, զինչ պարտս յանձն առնու։ — Պարտ է նմա մտանել ՚ի կրօն և մնալ անդ. յելանելն անտի անպատճառ՝ ծանր մեղանչէ, եթէ չիցեն լեալ միտք նորա յուխտելն՝ զփորձ առնուլ կրօնաւորութեան։ Այլ շատ լեալ նմա յիւրաւացի պատճառ ելանելոյ ՚ի կրօնէ, եթէ ՚ի վեր քան զկարի իւր գտցէ զկարգ կրօնաւորութեան, կամ ծանր և ընդերկար տրխրութիւն հասցէ նմա անդ։ Իսկ եթէ ուխտեալ իցէ ՚ի կրօնի անդ, պարտ է նմա յանձն առնուլ և զծանր նեղութիւնն առ ՚ի կալ յուխտին, եթէ միայն չիցէ նմա այն բոլորովին անտանելի։ Կարելի է գարձեալ զի որ ուխտէն կրօնաւորել, անընդունելի լեալ ՚ի մենաստանս պատուին իւրոյ՝ ոչ է պարտական գնալոյ յայլ գաւառ ՚ի կրօնաւորութիւն. իսկ եթէ իցէ կին, ոչ է պարտական գնալոյ յայլ քաղաք։

35. Պատարէ պարտ ուխտին՝ի փոխոխել ուխտելոց իրացն, ՚ի վերայ հասանելով նորոց ինչ պատահարաց, կամ՚ի յայտ գալով անծանօթ ինչ հանգամանաց, զոր եթէ գիտեր որ ուխտն՝ չառնոյր յանձն ուխտել (տես՚ի թ. 23.). և կամ եթէ ուխտեալն իր լոկի անօգուտ կամ անկարելի. բայց եթէ ըստ մասին իցէ կարելի, պարտ է կատարել զայն ըստ այնմ մասին: Պատարէ դարձեալ պարտ ուխտին հրամանաւ վեհագունից, որոց իշխանութիւն է բառնալ զայն կամ փոփոխել և կամ անօրինել:

36. Կառնալ զպարտս ուխտի անկ է ծնողաց, հոգաբարձուաց, եպիսկոպոսաց, և ամենեցուն՝ որոց է իշխանութիւն՚ի վերայ ուխտողին, որպէս՚ի վեր անդրը ասացաք (19.): Այլ կարէն բառնալ և զհանգերձեալ ուխտս՝ զորս չէ իցէ ուխտեալ որդւոց նոցա կամ որբոց և այլն, առանց իսկ բաւական պատճառաց բառնալոյ. զի բառնալ զայնս անպատճառ՝ չէ նոցա գէթ՚ի ծանր մեղս: Ոմն որոյ հայրն, կամ առ՚ի չգոյէ հօր՝ հաւն, և մայրն իսկ՝ եթէ ոչ ընդդէմ դարձի հայրն, կարէն բառնալ զուխտս որդւոց, եթէ չեւս հասելոց յարբունս, ՚ի չգիտելն իսկ ստուգիւ՝ թէ յառաջ քան զարբունս ուխտեալ իցէ, և թէ յարբունս հասելոց՝ յորժամ իրական իցէ ուխտ նոցա, և չիցեն ժամանեալ՚ի հասակ ազատութեան, և չունիցին ինչ սեփական: Կարէն և զուխտս իսկ նոցա անձնականս բառնալ, եթէ իցեն այնոքիկ միաբանակարք առանձին տեսչութեան: Ոչնչոյն է ասել և զհոգաբարձուաց: Այլ և կարէ հայր բառնալ զուխտ որդւոյ հասելոց յարբունս, եթէ չեւ յարբունս հասեալ՝ ուխտեալ իցէ զայն, և՚ի հասանելն յարբունս՝ չիցէ վերստին հաստատեալ զայն:

Կարգապետաք կրօնից, և և վանահարք, կարէն բառնալ զամենայն ուխտս հպատակաց իւրեանց ուխտելոց, եթէ չիցեն այնոքիկ հաստատեալ՚ի նախորդաց իւրեանց, բայ յուխտէ՚ի խստագոյն կրօն անցանելոյ. իսկ զուխտս նորընծայից խափանել և եթէ: Ոչ այս իշխանութիւն անվաւեր առնելոյ զուխտս (այլ ոչ և զանօրինելոյ) ունին և վանահարք, որպէս Հաստատեն Աուաբէզ, Պոնաչինա, Այսմաիկեանք և այլք:

Պիտելի է զի ամենայն իսկ ուխտք յառաջ քան զկրօ-

նաւորելն եդեալք, ուխտիւ կրօնաւորութեան դադա-
րեն: Պարձեալ և արք կարեն բառնալ զամենայն
ուխտս կանանց իւրեանց, թէպէտ և ոչ ինչ յայնցանէ
հասցէ ինեա առանին տեսչութեան կամ պարտուց ա-
մուսնութեան, որպէս յայժ հաւանականաբար հաստա-
տեն Սոթոյ, Սանքէզ, Փրատոյ, Սալմատիկեանք և
այլն: Այս և զուխտս կանանց կատարելիս յետ մա-
հուան արանց իւրեանց, որպէս մնանելոյ ի կրօն կամ
պահելոյ զողջախոհութիւն. զայս այսպէս հաստատեն
նոյն վարդապետք ընդդէմ կարծեաց այլոց ոմանց: Այլ
զուխտս նոցա նախ քան զՀարսանիսն ուխտեալս՝ չկա-
րեն բառնալ, այլ խափանել ևեթ, եթէ իցեն ինեա-
կարք: Իսկ զուխտս արանց չկարեն բառնալ կանայք
նոցա, այլ խափանել ևեթ՝ եթէ իցեն ինքեանց ինա-
սակարք, որպէս զուխտ այցելութեան հեռաւոր ուխ-
տատեղեաց, կամ՝ չընդրկելոյ զպարտս ամուսնութեան,
որ ըստ հաւանականագոյն կարծեաց՝ ինքնին իսկ անզօր
է որպէս անպատկանաւոր ի նիւթ ուխտի:

37. Պիտելի է ղի ուխտք Հպատակաց՝ ըստ հաւա-
նականագոյն կարծեաց՝ չեն անվաւերք ըստ ինքեան,
այլ զօրեն մինչև մեծաւորաց նոցա բարձեալ զայնս.
ղի Հպատակք թէպէտ և ղկամն իւրեանց ընդ իշխանու-
թեամբ մեծաւորաց արկեալ, սակայն չեն զուրկք յայն-
մանէ: Պիտելի է դարձեալ ղի մեծաւոր, որպէս և
Հայր կամ եպիսկոպոս կամ այլ, կարող է բառնալ վա-
ւերաբար զուխտ Հպատակաց, թէպէտ և Հաստատեալ
իցէ զայն յառաջագոյն. վասն ղի չկարէ և ի կամէն
իսկ հրաժարել յիշխանութենէ՝ զոր տան նմա օրէնք
ևս և բնականք: Այսացաք վաւերաբար. վասն ղի ի բառ-
նալն զայն առանց իրաւացի պատճառի, չեցէ ազատ ի
ներելն մեղաց:

38. Փոփոխել զուխտս՝ եկեղեցական իշխանութեան
ևեթ է, զեթ ի փոփոխելն զայն ի թեթևագոյն ինչ,
կամ որոյ հաւասարութիւն իցէ երկբայելի: Օ՞ի ի
հաւասար ինչ փոփոխել՝ օրինաւոր համարին բարոյա-
կանք ոմանք նշանաւորք և նմին իսկ ուխտողն. թէպէտ
հաւանականագոյն յայժ է չկարել նոցա իւրովին առնել
զփոխանակութիւնն զայն, զի հաճոյագոյն է Աստուծոյ
խաստացեալն նուէր: Այ ի փոխանակել զուխտս ի

գործ լաւագոյն՝ ոչ խնդրի պատճառ, այլ խնդրի՛ փոխանակել զայն՛ի հաւասար ինչ: Այս շատ է յիրաւացի պատճառ՝նուազել վտանգի մեղայ, եւս եւ առաւելագոյն յօժարութիւն խնդրողին յայն. իսկ եթէ հաւասարութիւն փոխանակեալ իրին էցէ երկբայելի, շատ է յիրաւացի պատճառ ոչ թեթեւ ինչ դժուարութիւն կատարման ուխտին: Որոյ է իշխանութիւն փոփոխելոյ զուխտս, ՛ի հաւասար ինչ եւեթ կարէ փոխոխել զայնս. բայց զհաւասարութիւն բարոյապէս է իմանալ, այսինքն ուր չիք երեւելի ինչ առաւելութիւն: Յայժ հաւանական է զի օրէնն էցէ փոխել զուխտս իրականս յուխտ անձնական, եւ զանձնականս յիրական:

Վայելի է զի յետ փոխանակութեան ուխտից օրէնն է միշտ դառնալ յառաջինն, թէ եւ ՛ի լաւագոյն ինչ լեալ էցէ փոխանակութիւնն: Այլ եթէ փոխանակեալն գործ լիցի անհնարին, պարտ էցէ դառնալ յառաջին ուխտն: — Պարտ է, եթէ ընտրութեամբ ուխտողին լեալ էցէ փոխանակութիւնն. իսկ եթէ իշխանութեամբ եկեղեցւոյ, ոչ է պարտ. եւս եւ եթէ ՛ի յանցանաց ուխտողին լեալ էցէ այն անհնարին:

Վայելի է դարձեալ զի որ ունի իշխանութիւն փոփոխելոյ զուխտս կամ անօրինելոյ, կարէ եւ զիւրսն փոփոխել կամ անօրինել, որպէս ուսուցանեն Աուարիզ, Անքէզ, Փրատոյ, Ալմանտիկեանք եւ այլք ընդ սրբոյ Աղուինացւոյն:

39. Ի անօրինութիւն ուխտից խնդրի մեծագոյն պատճառ քան՛ի փոփոխութիւն: Հաւական պատճառք անօրինման են նախ՝ օգուտ հասարակաց կամ եկեղեցւոյ կամ միաբանութեան իրիք կամ տան, և կամ նորին իսկ խնդրողի՝ եթէ էցէ այն օգտակարագոյն իւր, կամ ապահովութիւն յուխտազանցութենէ, կամ ազատութիւն ՛ի տագնապէ խղճի մտաց: Երկրորդ՝ ոչ գոյն ինչ դժուարութիւն կատարման ուխտին: Երրորդ՝ թեթեւութիւն ազատութեան կամ կշռադատութեան, որպէս եթէ որ չև յարբունս հասեալ՝ ուխտեալ էցէ, կամ՛ի բարկութենէ շարժեալ, կամ՛ի նեղքէն երկիւղէ նաւակոծութեան, հրդեհի և այլն, կամ յարտաքին թեթեւ ինչ երկիւղէ: Չորրորդ՝ դադարումն շարժիչ պատճառի. որպէս եթէ այրի որ ուխտիցէ չամուսնա-

նալ միւսանգամ առ ՚ի չհասուցանել որդւոյ իւրում ժառայ, և մեռանիցի որդի իւր։

40. Կ՚ուտելի է նախ՝ ոչ եթէ արգասիս լեալ իցէ իւրաւացի պատճառ տնօրինման, այլ մեծաւորն ըստ ոչ խղճի, այսինքն ոչ իրաւացի համարելով զայն՝ իցէ տընօրինեալ, հաւանականաբար զօրէ տնօրինումն՝ եթէ և յաւանդեալ իշխանութենէ տնօրինեալ։ Իսկ եթէ մեծաւորն ըստ խղճի մտաց իցէ տնօրինեալ, այլ պատճառ տնօրինմանն ստուգապէս չիցէ լեալ բաւական, անզօր է տնօրինումն ըստ Հնմարտագոյն կարծեաց. (տես ՚ի վեր անդր. գլ. Ե. 53.)։ Ոչ այսպէս ապա-գաղէս. զի յերկեսայս՝ զօրութիւն տնօրինմանն ժառանգէ զիրաւունս։ Ոչ յլ՚ի չբաւել պատճառին ՚ի տնօրինումն, փոխանակութեամբ իւիք օրէն է ընուլ զթերին։

41. Կ՚ուտելի է երկրորդ՝ զի եթէ ՚ի նպաստ ուրուք յանուանէ իցէ ուխտն, այսինքն այսր անուան աղքատի կամ եկեղեցւոյ, ոչ է օրէն տնօրինել զայն յետ միանգամ ընդունելոյ զայն աղքատին կամ եկեղեցւոյն։ Իսկ եթէ իցէ ուխտն ՚ի նպաստ անանուան ուրուք աղքատի, օրէն է տնօրինել զայն՝ ևս և յետ ընդունելի լինելոյ ուխտին յուժերէ։ Ոմանք ասեն հաւանականաբար վարդապետք բազումք ընդդէմ Աուարէզի և Վանքէզի, եթէ իցէ ուխտն լեալ վասն Պատուծոյ գրէ խաւորապէս, և երկրորդաբար ՚ի նպաստ ուրուք ըստ իմիք տեսութեան, որպէս վասն աղքատութեան նորա կամ բարութեան և այլն. վասն զի յայնժամ չէն ինչ աղքատին այնորիկ իրաւունք ՚ի վերայ իրին խոստացեալ, կամ եթէ իցեն իսկ՝ ըստ կամացն Պատուծոյ են, որում գլխաւորապէս լեալ է խոստումնն։ Ոյլ զայս իմա զձրի խոստմանց, և մի զիսխոսադարձ խոստմանէ, որպիսի է ուխտ յարատևութեան ՚ի միաբանութիւնս կրօնից, որ դաշինք իմն են, որպէս ՚ի վեր անդր ասացաք (19)։

42. Կ՚ուտելի է երրորդ՝ զի իշխանութիւն տնօրինելոյ զուխտս անկ է ամենայն մեծաւորաց՝ որք ըստ կարգի իշխանութեան իւրեանց ունին իրաւասութիւն ատենական. որպէս Պապն ՚ի վերայ ամենայն Հաւատացելոց. որպէս եպիսկոպոսն ՚ի Թեմի իւրում, (այլ ոչ և փոխանորդ նորա և ժողովրդապետք և ապաշխարա-

Տալք)· որպէս կարգապետք ՚ի վերայ կրօնաւորաց և նորընծայից, որոց եթէ վաղ իսկ յաշխարհի ուխտեալ իցէ՝ գէթ կարեն խափանել զուխտ նոցա որպէս միա-սակար ըստ նորոյ պայմանին կենցաղ· և որպէս խոստո-վանահարք ՚ի մերբացիկ կարգաց կրօնաւորաց, որք հրա-մանաւ կարգապետին իւրեանց կարեն տնօրինել զուխ-տըս աշխարհականաց, և և արտաքոյ խոստովանու-թեան ։ Կարեն նաքա տնօրինել և զուխտ անցանելոյ ՚ի խստագոյն կրօն, որպէս և եպիսկոպոսաց է այս իշխա-նութիւն, որք զուխտ Հպատակաց իւրեանց ուխտելոց մնանել ՚ի խստակրօն ուրեք վանս՝ կարեն փոխել ՚ի կրօնաւորութիւն այլ ուրեք ՚ի վանաց, որ չիցէ այնչափ խիստ ։

43· Ումեքն մեծաւորք, որոց է իշխանութիւն տը-նօրինելոյ զուխտս, կարեն աներկբայապէս աւանդել զայն այլում եկեղեցականի, որոյ գէթ զխոստումն հե-րաց ընկալեալ իցէ ։ Այլ որպէս կարեն տնօրինել այլոց, կարեն և անձանց· և որ կարօղն է տնօրինել զուխտս, նոյն և զերդումնս կարող է ։

44· Բայց Թեմական եպիսկոպոսի օրէն իցէ տնօրի-նել զուխտ օտարականաց, որք հարևանցի գտանին յիւ-րումն Թեմի ։ — Հաւանականագոյն կարծիք ոչ օրէն համարին, եթէ օտարականն գէթ զառաւելագոյն մասն տարւոյ ոչ բնակիցի անդ· այլ ոչ անհատանելի է և հա-կառակն, որպէս համարին Սուարէզ, Ալմատիկեանք և այլք· զի և պանդխտաք հարևանցի ուրեք կացեալք՝ հպատակ են Թեմական եպիսկոպոսի, պարտականք օ-րինաց երկրին՝ յորում գտանին· և եթէ պարտուցն հաղորդք են, ապա և ընդհանուր հաղորդս անկ է նոցա գոլ· տես և որ ինչ ՚ի վեր անդր զարտօնութեանց ա-սացաք· (գլ· Բ· 4 և 42·) ։

45· Պահելի է չորրորդ՝ զի հնգից ուխտից տնօրի-նումն վերապահեալ է Պապին, այսինքն կրօնաւորե-լոց, ողջախոհութեան, և երից ուխտադնացութեանց՝ Երուսաղեմի, Պէլհաւոր առաքելոց, և սրբոյն Յակով բայ առաքելոյ ՚ի Սպանիա ։ Այլ ՚ի կարևոր ժամանա-կի, յորժամ դժուարին իցէ դիմել առ Պապն, և մե-տալուտ ՚ի վերայ կացցէ ծանր ինչ վնաս հոգևոր կամ մարմնաւոր՝ որպէս գայթակղութիւն կամ ուխտազան-

ցուԹիւն կամ կապ և կռիւ, կարեն ըստ Հասարակաց կարծեաց տնօրինել և վերցուցեալ մեծաւորք։

46. Այլ և ուխտքս այսոքիկ է ուրեք զի չեն վերապահեալ. և նախ՝ եԹէ ընդ ԹեԹև պարտեօք իցեն լեալ. երկրորդ՝ եԹէ իցեն լեալ յարտաքին ինչ՝ի ԹեԹև իսկ երկիւղ, զի ոչ ևս են կատարեալ ազատուԹեամբ լեալ. երրորդ՝ եԹէ չիցեն կատարեալ ըստ վերապահելոյ իրացն, որպէս եԹէ ուխտիցէ ոք չինդրել զպարտս ամուսնուԹեան։ Այսմանապէս ոչ է վերապահեալ և ուխտ ժամանակաւոր ողջախոհուԹեան, և ոչ ուխտ ուխտելոյ զողջախոհուԹիւն կամ զկրօնաւորուԹիւն, կամ ընդունելոյ զսուրբ կարգ, զի այսոքիկ չեն ուխտք ողջախոհուԹեան արարեալք՝ այլ առնելիք։ Այսպէս և ուխտ երԹալոյ՝ի Հռոմ, եԹէ չիցէ վանն այլ առնելոյ սուրբ առաքելոցն, ոչ է վերապահեալ։ Եւ ոչ յարակից հանգամանք ուխտից են վերապահեալ, որպէս երԹալ հետի կամ՝ի մկրտ և կամ յառաջ քան զամօրեայ աւուրս և այլն։ Տրօհականքն ևս ուխտք չեն վերապահեալ, որպէս եԹէ ոք ուխտիցէ կամ կրօնաւորել և կամ ծոմապահել, ևս և յետ ընտրելոյ զնմանն վերապահեալ՝ որպէս համարին հաւանականաբար Պալմատիկեանք և այլք բազումք. վասն զի յետ ընտրուԹեանն ևս ազատուԹիւն է ուխտողին փոխելոյ զընտրուԹիւնն։ Իսկ զուխտ պահելոյ զողջախոհուԹիւն յետ ամուսնուԹեան՝ կարեն տնօրինել եպիսկոպոսունք և մուրացիկ կրօնաւորք, ևս և որ յառաջ քան զպսակ արարեալ իցեն։

47. Իցէ արդեօք վերապահեալ և երդումն ողջախոհուԹեան որպէս զուխտ։ — Ակնք հաստատեն, իբր զի խոստումն հանդերձ երդմամբ բովանդակէ զուխտ. զի ոչ այլ ինչ է ուխտ բայց խոստումն։ Իսկ այլք լաւ ևս պատասխանեն, զի եԹէ դիտաւորուԹիւն այնորիկ որ երդնուն՝ իցէ յանձն առնուլ կրկին կապանս, այսինքն զուխտ և զերդումն, վերապահեալ է. այլ չէ վերապահեալ՝ եԹէ ոք զպարտս երդման ևԹէ կամիցէ յանձն առնուլ, որպէս զի խոստումն իւր իցէ անհնազանդելի, ոչ՝ի կապանաց ուխտի՝ այլ երդման ևԹէ, որ նուազագոյն պարտս՝ի վերայ աճէ քան զուխտ՝ որպէս ասէ սուրբ Գրիգորիոսն։ Իսկ յերկբայեն՝ եԹէ արդեօք կա-

մեղեաւ իսկ Թէ ոչ զերկոսին և կապանս յանձն առնուլ՝ զերդմանն և զուխտի, չհամարի կապեալ յուխտէ ըստ առածին՝ որ ամենեցուն է ընդունելի, Թէ ուխտ երկբայելի ոչ ածէ պարտս ՚ի վերայ ։

48. Ի փոխանակել զուխտ վերապահեալ, փոխանակեալն և լինի՞ վերապահեալ ։ — Ոմանք հաստատեն, այլ հասարակաց կարծիք զհակառակն ունին. զի Թէպետ և փոխանակեալն զնոյն պարտս առաջնոյ ուխտին ՚ի վերայ ածէ, այլ զի իրն ինքնին չէ վերապահեալ՝ ոչ բերէ ընդ իւր զպահեստն զայն կցորդ առաջնոյն ։

49. Արդ Թէ ուխտն վերապահեալ՝ պատժական կամ պայմանական ապառնի իցէ, իցէ՞ և յայնժամ վերապահեալ ։ — Հաւանականագոյն կարծիք՝ զոր հաստատեն Մոլետոյ, Վասարոփալ, Փրատոյ, Այլմահիկեանք, Սանքեզ և այլք, չհամարին վերապահեալ. զի ուխտք այսպիսիք ոչ յանխառն սիրոյ առաքինութեան յառաջ գան ։ Այլ զհակառակն է ասել՝ եԹէ յառաքինասիրութենէ ոք ուխտիցէ, և պայմանն յարգելս ևԹէ ուխտին ակնարկիցէ, որպէս եԹէ ուխտիցէ ոք կրօնաւորել ՚ի վանձանել մեղս. զի աստ յընդհից կատարելութեան յառաջ գայ ուխտն, և յաւելու պայմանն վասն չկարելոց Թողուլ անխնամ զմայրն ։

50. Կարող իսկ արդեօք Պապն տնօրինել զուխտ ողջախոհութեան յետ ընդունելոյ ուրուք զսուրբ կարգ, կամ զհանդիսական ուխտ կրօնաւորի ։ — Ըստ հաւանականագոյն կարծեաց՝ կարող է գԹէ զհիւսասարկաւագին և զսարկաւագի տնօրինել առ յոյժ կարևոր հարկի. և եԹէ զսոցայն, ևս առաւել զկրօնաւորաց ուխտ հանդիսական ։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՅ ԵՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

1 · Երրորդս այս պատուիրան եկեղեցական իցէ արդ՝ թէ աստուածա-
յին, և ածէ՞ պարտս ՚ի վերայ անհաւատից :
2 · Ո՞յք ոմանք մեղանչեն ընդդէմ այսորիկ :
3 · Ո՞ւմ անկ է սահմանել տօնս :
4 · Պարտք լսելոյ զբանն Աստուծոյ :
5 · Պարտք քարոզելոյ զայն :
6 · Ածիցէ՞ պարտս և մանկտուց :

1 · *Զև մատուցեալ՚ի խնդիր միոյ միոյ ՚ի պարտուց՝ զորս ՚ի վերայ ածէ երրորդս այս պատուիրան, կարևոր են գիտելիք ինչ :*

Այսպէս՝ զի պատուիրանս այս ըստ պարտուց պատուելոյ զ՚աստուած պաշտամամբ երբեք երբեք ՚ի կեանս մեր, էր և է աստուածային և բնական. այլ ըստ սահմանեալ ժամանակին, այսինքն ՚ի շաբաթի աւուր ՚ի հին օրէնս, և ՚ի կիւրակէի ՚ի նորումն, էր արարողական, և զարդիս եկեղեցական՝ ըստ Հաստարակաց կարծեաց : Այսպս ուրեմն եկեղեցի Թէպէտ և չկարէ բառնալ զպարտս այսր պատուիրանի ըստ մասին աստուածային պաշտամանն, սակայն կարէ փոխել և տնօրինել զպահպանուԹիւն տօնից և զկիւրակէի : Այսու զհետ գայ հաւանականաբար, զի օրէն իցէ յաւուրս տօնից ծառայեցուցանել զանհաւատս՝ որ արտաքոյ են եկեղեցւոյ, և պատուիրանք եկեղեցականք չեն վասն նոցա :

2 · Երկրորդ՝ զի ըստ Հաստարակաց կարծեաց, ԹէպէտԹ և կարևոր և ցանկալի՝ այլ ոչ ՚ի պարտեաց պատուիրանիս է ներքին պաշտօն ներդործուԹեան սիրոյ և զղջման, որպէս համարին ոմանք : Այսպէս և եԹէ պաշտօն է ՚ի պարտեաց, այսինքն լինել առաջնակարգ սրբոյ պատարագին և ջանալ ՚ի տօնական աւուրս. զի ԹէպէտԹ և վասնզի պատուիրանիս է սրբուԹիւն հո-

գալոյ, սակայն վախձան պատուիրանաց ոչ անկանի ընդ պատուիրանաւք ըստ առաձին՝ որ ընդունելի ամենեցուն է: Այլ ի երի և ղհետ բերեմք ընդ սրբոյ Աւգուստինոսեայն ըստ հասարակաց կարծեաց, զի ոչ կրկին մեղս գործէ, որ մեղանչէ ի տօնական աւուր, որպէս համարին ոմանք գործել նմա և սեղանակատուածին՝ գործ ծառայական զմեղս վարկանելով:

3. Երրորդ՝ զի կարեն եպիսկոպոսունք սահմանել տօն ի պատիւ ուրուք ի սրբոց, (այլ ոչ յերանելեաց), եթէ միայն հաւանեացին և կամ գէթ ոչ հակառակ կացեն այնմ ուստ եկեղեցւոյն և ժողովուրդն:

4. Չորրորդ՝ զի չէ ըստ ինքեան պարտ լսել զբանն Աստուծոյ ի տօնս, այլ օրք զգլխաւոր խորհուրդս հաւատոյ անգիտանան՝ նոցա պարտ է լսել, մանաւանդ ըզքրիստոնէական վարդապետուածին:

5. Յոգոմէն տրիգինտեան պարտ ի վերայ դնել եպիսկոպոսաց խօսել զբանն Աստուծոյ ի կիւրակէս և ի տօնս, իւրովի կամ ի ձեռն այլոց: Ոնոյն պարտ (և պարտ ծանր աներկբայապէս) դնել և ի վերայ ժողովրդապետաց. վասն որոյ մնհուչափ մեղանչէ որ ոք ի ժողովրդապետաց զամիս մի անընդհատ, և կամ զամիսս երիս ընդհատ, չխօսի զբանն Աստուծոյ առ ժողովուրդն: Այլ ոչ նոյնպէս և եպիսկոպոսունք, որոց ըստ հասարակաց սովորութեան՝ որ օրինաց ունի զօրութիւն՝ ոչ այնպէս յաճախ պարտք են քարոզել, վասն ծանուննց հոգոց տեսչութեան թեմին՝ զորս չկարեն ի ձեռն այլոց կատարել, ուր ներէ նոցա ժողովէն ի ձեռն այլոց քարոզել՝ եթէ ինքեանք չունիցին պարապ:

6. Հինգերորդ՝ զի երրորդս այս պատուիրան պարտ ի վերայ ածէ ամենեցուն հասելոյ ի հասակ ընտրութեան բարւոյ և չարի, որ սովորաբար համարի յեօթնամեայ: Յակ վասն տղայոց, որոց վաղագոյն ժամանեալ լսէ ի բանաւարութիւն, տես ի վեր անդր (գլ. Ե. 37.):

ՅՕԴՈՒԱԾ Բ

ՅՂՂԱԿՑ ՈՐ ԻՆՉ ԳՈՐԾՔ ԱՐԳԵԼԵԱԼՔ Ի ՏՕՆԱԿԱՆ ԱԽՈՒՐՑ

7 · Գործք ծառայականք, ազատականք, հասարակք :
8 · Ազատականք շահաբերք :
9 · Գաղափարել :
10 · Նկարել :
11 · Զկնորսութիւն և այլ որսք :
12 · Առեւնական գործք :
13 · Տուրհառք և գաշնագրութիւնք :

7 · Ի արօյականք յերկիս զանազանեն ըստ այսմ մասին զգործս : Ի Մարինոսոյ, որ մարմնով գործին և յօգուտ մարմնոյ՝ որպէս կարել, քերել և այլն, և կոչին ծառայականք՝ զի ծառայից են գործք : Ի Նաւսոյ՝ որ գլխաւորապէս ի մտաց յառաջ գան և ի կրթութիւն մտաց պատշաճին, որպէս ընթեռնուլ, ուսանել, նուագել և այլն, և կոչին ազատականք՝ զի ազատաց են գործք : Ի Հասարակ՝ որ և ծառայից և ազատաց են գործք, որպէս Ճանապարհորդել, որսալ և այլն : Ի բդ ի ծովական աւուրս ծառայական և եթէ գործք արգելեալ են, այլ ոչ ազատականք և ոչ հասարակք :

8 · Ա ան որոյ օրէն է ուսանել, ուսուցանել, գրել, երգել, նուագել և այլն, և ս առ ի շահ · զի դիտաւորութիւն գործոյ ոչ փոխէ զբնութիւն նորա յազատականէ ի ծառայական :

9 · Ճաւանականագոյն կարծիք օրինաւոր համարին և զընդօրինակել, զի և գրեն և գաղափարել զգրեանն յանկին ի կրթել զմիտս : Ա ան որոյ բազումք ի վարդապետաց օրէն հատարին ընդօրինակել և զերաժշտականն գրուածս և զհաշիւս, և ս և շարայարել զգիրս ի տպագրութիւն, այլ ոչ և տպագրել :

10 · Ի ստ հասարակաց կարծեաց բարոյականաց ծառայական գործ է նկարել, վասն նիւթականի մասին առաւելութեան · այլ և հակառակն կարծիք չէ անհաւանական, որպէս ասեն Ի այման, Ի ասթրոմիալ, Ի ան քալեա, և այլք · վասն զի նկարել՝ թուի ազատական գործ քան ծառայական, զի առաւել վաստակեն միտք

նկարչի քան զձեռս. շատ է զի մի՛ ի լեսուլ զներկս և ի պատրաստել զտաստակն պարապեսցէ: Պէտք յերկբայս մնայ խնդիրն, թէ արդեօք ազատակա՞ն իցէ թէ ծառայական. և եթէ չիցէ իսկ ազատական, գէթ հասարակ է՝ ծառայից և ազատաց պարապելով յայն: Իսկ քանդակել՝ ծառայական է աներկբայապէս:

11. Լլանել հրացանաւ կամ վարմիւ յորս՝ գործ ծառայական է ըստ ոմանց. այլ ըստ հասարակաց և հաւանականագոյն կարծեաց է ազատական: Ո՛չինորսուլթենէ առաւել մարթ է ասել՝ թէ իցէ ծառայական, եթէ եղանակ որսոյն իցէ բազմաշխատ:

12. Ի՞նչ ի՛ ծառայական գործոյ՝ ատենականք և արգելեալ են: Ատենականք համարին ամենայն վճիռք և դատաստանք և գործառնութիւնք վիճից, որպէս եկակուել յատեան, հարցափորձել զգատակազս, քննել զվկայս, տալ կամ կատարել զվճիռ: Այս ամենայն արգելեալ է՛ ի տօնական աւուրս, եթէ ոչ հարկ ինչ կամ պաշտօն Աստուծոյ պահանջիցէ: Այլ ոչ ընդ ատենականս համարին բանադրանք, անօրինութիւն, և այլ և իրաւասութեան մնասունք՝ որ առանց դատաստանական աղմկի կատարին:

13. Ինդ ատենական գործս համարին արգելեալ և վաճառք, եթէ չիցեն իրաց կարևորաց՛ ի հանապազորդ պէտս, որպէս կերակուր և ըմպելի, ձրագ և ազանելիք ոտից, և սոցին սակի իրք՝ որոց սահմանեալ իցէ սակ: Այլ զարդիս՛ ի սովորութենէ յօրինս լեալ են տօնավաճառք, բազում ուրեք և այլ տուրևառք, այլ ոչ և որ՛ ի կրպակս հրապարակաւ լինին. զի այսոքիկ և եթէ յեկեղեցական օրինաց վասն գայթակղութեան արգելեալ են: Վակայն և կրպակաւորաց ներելի համարի՛ ի բարոյականաց՝ զրօք փակելովք վաճառել ինչ կարօտելոց: Սովորութիւն լեալ է ուրեք ուրեք, գէթ ընդհանուր հրամանաւ Թեմական եպիսկոպոսի, տալ՛ ի վարձու զտուն և հանդոյն ամին առնել դաշինս՝ որ առանց ատենական աղմկի վճարին:

ՅՕԴՈՒԱԾ Գ

ՈՐ ԻՆՉ ՉԵՌՈՒԱՑԱԿԱՆ ԳՈՐԾՍ ԱՌՆՆՆ ՕՐԻՆԱՒՈՐ Ի ՏՕՆԱԿԱՆ ԱՒՈՒՐՍ

14· Տնօրինուիմն Պապին կամ եպիսկոպոսի կամ Ժողովրդապետի:
15· Սովորութիւն:
16· 17· Բարեպործութիւն և եղբայրսիրութիւն:
18–21· Հարկ:
22· Շահ մեծ:
23· Առ՝ի չկալոյ դատարկ:
24· Օգտակարութիւն:
25· Սուղ ինչ ժամանակ:
26· Որ աշխատեցուցանէ սուղ ինչ ժամանակ զայլ և այլ ծառայս:

14. Օգործ ծառայական օրինաւոր առնէ յաւուրս տօնից, նախ՝ տնօրինուիմն Պապին ընդ Հանուր եկեղեցի, եպիսկոպոսին՝ի Թեմի իւրում, և Ժողովական փոխանորդի՝ի դատարկութեան աթոռոյ (այլ ոչ փոխանորդի եպիսկոպոսին) եթէ իցեն պատճառք իրաւացիք, նոյնպէս և կարգապետաց՝ի վերայ կրօնաւորաց իւրեանց և ծառայից: Ժողովրդապետաց ևս իշխանութիւն է տնօրինելոյ՝ի դէպս ինչ, մերձակայութեամբ իսկ եպիսկոպոսին, բայց միայն առ ժամանակ մի և յիրս՝ յորս ներէ նոցա սովորութիւն:

15. Յրկրորդ՝ օրինաւոր առնէ սովորութիւն. որպէս դնալ՝ի դեսպակի, կառավարել, վարել գրաստս բեռնակիրս, ոռոգանել զպարտէզ, խոհակերել ևս և առանց Հարկի, և այլն: Ուրեք ուրեք ներեալ է՝ի սովորութենէ և աղալ զցորեան, ևս և վիրալ զմորուս կամ զգլուխ, զոր այլք Համարին ընդՀանուր իսկ լեալ սովորութիւն, մանաւանդ չինականաց՝ որք՝ի տօնս եթէ ունին պարապ զանձինս դարմանելոյ: Խազուք՝ի բարոյականաց զսովորութիւն երկբայելի՝ ոչ բաւական Համարին առ այս, այլ զՀաւանականն ևեթ, ըստ վկայութեան ուրուք յերևելեաց աստուածաբանից:

16. Յերրորդ՝ բարեպաշտութիւն, որ առնէ օրինաւոր զգործս պատկանաւորս աստուածային պաշտամանն, որպէս զանգակ Հարկանել, բարձեալ տանել զպատկերս սրբոց՝ի Թափօրի, մաքրել և զարդարել զսեղանս և

զեկեղեցի, կազմել և հիւանել աստիճանս՝ առ՝ի դնել զսրբութիւն՝ի բաղմոցի, և զայլ այսպիսի աշխատութիւնս:

Որչափ իցէ վանն բարեպաշտութեան և եռանդ աշխատել յաւուրս տօնից, միակել զարտս եկեղեցւոյ, կառուցանել եկեղեցի և այլն: — Ակնք օրէնն համարին, այլ հաւանականագոյն կարծիք ոչ ներելն՝ եթէ չիցէ ինչ հարկ առաժամայն կամ հրաման եպիսկոպոսի. վանն զի այսպիսի բարեգործութիւնք հեռաւորապես պատկանին յաստուածպաշտութիւն:

17. Ողորմած՝ եղբայրսիրութիւն. վանն որոյ օրէնն է իրաւունս առնել աղքատաց՝ի տօնական աւուրս, օգնել նոցա աշխատանօք, կարկատել զձորձս նոցա, և այլն:

18. Հիւանդորդ՝ հարկ անձին կամ այլոց՝ հոգւոյ և մարմնոյ. այսինքն յորժամ չիցէ հնար թողուլ զգործ ծառայական առանց ծանր ինչ վնասու կամ նեղութեան: Ոմն որոյ ներելի է ծառայից, որք՝ի բռնադատելոց տերանց իւրեանց վաստակեն յաւուրս տօնից՝ առ ահի ցասման նոցա և՝ի բաց արձակելոց՝ի ծառայութենէ: Այսպէս և կանանց և որդւոց, որք՝ի սատկ առն կամ հօր ստիպին՝ի գործ ծառայական: Վաճառական, որ ձեռ և կարօտեալք, որք՝ի հայթայթանս աւուրն պարենի և ձորձոյ իւրեանց կամ ընտանեաց վաստակեն:

19. Երեալ է առ հարկի և դեղավաճառաց գործել դեղոցայս. դարձեալ և այնոցիկ՝ որ վաստակեն՝ի հուր, թրծել զաղիւս, եփել զկիր՝ զօձառ՝ զապակի և այլն, որոց ոչ է մարթ թերի թողուլ զգործն առանց ծանր վնասու: Ասա այսմ օրէնն է երկայնագամել զսրբակս ձիոց յաւելորդութիւն, դարբնել զմուխ՝ կարևորս՝ի վաղիւ անդր՝ի հերկ, նորոգել զաղբիւրս, զկամուրջս, զուղիս և այլն՝ աւերեալս, կարել զերձակաց զկարևորս հարանեաց կամ յաւարկաւորութեան՝ի ստիպել հարկին, կամ եթէ չկարիցեն հասուցանել՝ի սահմանեալ աւուր զհանդերձս և տոյժ ծանր հասցէ նոցա անտի, կամ եթէ չիցէ օտարականի՝ դեռ ևս ուրեք հասելոյ՝ըզգեստ պատշաճաւոր: Օնոյն իմն և զկարուսակաց:

20. Երեալ է և հացագործաց աշխատել յաւուրս տօնից առ հարկի, զի առ՝ի չգոյէ հացի մարթ իսկ է յառնել աղմկի: Այլ առ տնին գործել հաց՝ ոչ առե-

նեքեան օրինաւոր համարին, եթէ չկոչէ վասն առօրեայ պիտոյից։ Օ՛նոյն իմա և զհաստատից առ հասարակ։

21. *Օրէն է և, եթէ վասնզ միասելոյ յանձրևէ կամ երկիւղ գողութեան՝ ի վերայ կայցէ, հնձել զցօրեան կամ զխոտ, քաղել զեղեգատուղ, զշաղանակ և այլն. և առնել որ ինչ առնին վասն առօրեայ պիտոյից է կարևոր, որպէս աւել ածել, յարդարել զանկողինս, լուանալ զանօթս խոհակերոցի, այլովքն համդերձ։*

22. *Ո՛չ՝ ի չկորուսանելոյ շահ մեծ՝ օրէ՛ն իցէ աշխատել յաւուր տօնի։ — Բազումք ոչ օրէն համարին, ոչ նոյն ինչ վարկանելով ընդ ծանր միասու զկորուստ մեծի շահու։ Այլ բազումք և երևելի բարոյականք օրէն համարին հաւանականաբար. զի կորուստ շահու մեծի համազօր է ընդ ծանր տոյժս, և դէպ նեղութիւն ծանր հասուցանէ՝ յոր ոչ ստիպէ պատուիրան տօնին։ Վասն իրի բազումք՝ ի բարոյականաց նեղեն և չտեսանել զպատարագ, առ՝ ի չկորուսանելոյ զշահ մեծ և անսովոր։ Ո՛չ ոչ է օրէն ելանել ումեք յորս՝ ի շաբաթու և գնալ հեռի, ուր՝ ի վաղիւ անդր չկոչէ նմա հնար տեսանել զպատարագ. այլ է թէ օք՝ ի չրեքշաբաթի կամ՝ ի հինգշաբաթի աւուր գնայցէ տապրադէմ յորս, կամ՝ ի պաշտամանէ և կամ առ՝ ի տանել վաճառս ուղևորեսցի։*

23. *Օրէ՛ն իցէ վաստակել՝ ի տօնի առ՝ ի վկալոյ դատարկ։ — Կէսք օրէն համարին, և կէսք ոչ. այլ եթէ՝ ի դատարկութենէ հասանէ ումեք վտանգ մեղանչելոյ, օրէն է նմա վաստակել. զի եթէ վասն մարմնաւոր պիտոյից ներեալ է վաստակել, ո՛րչափ և առաւել վասն հոգեկանաց։ Հաւանական է այս կարծիք, եթէ չկոչէ ումեք հնար այլով իւիք զդէմ ունել վտանգին։*

24. *Վեցերորդ՝ օգտակարութիւն, որպէս՝ ի հասարակաց ուրախութիւնս յաղթութեան կամ գալստեան թագաւորի առնել պատրաստութիւնս խաղուց և զբեստուց և այլն, զորս չկոչէ մարթ աւուրբք յառաջ կատարել։ Օ՛ի այսոքիկ բարոյաբար կարևորք են՝ ի խաղաղութիւն ժողովրդոց։*

25. *Հօթներորդ՝ սուղ ինչ ժամանակ. այլ ո՛րչափ։ — Հասարակաց կարծիք սահմանեն երկուս ժամ,*

կամ երկու և կէս. և աւելի ևս, եթէ այնպիսի ինչ հարկ ի վերայ կայցէ, որ ինքնին չիցէ բաւական օրինաւոր առնելոյ զաշխատութիւն:

26. Որչափ իցէ տանուտեառն՝ իրաքանչիւր ումեք ի տասանց ծառայից իւրոց կիսով չափ ժամու տալ աշխատել: — Այ է օրէն. և եթէ միանգամայն զնոսա աշխատ առնիցէ, ներելի մեզ գործել. իսկ եթէ զմիմեանց կինի, կէսք մահուչափ համարին մեզ. այլ հասարակաց կարծիք և զայն չհամարի ինչ ծանր: Այլ նմին միում ծառայի եթէ ի բազում նուագս տացէ աշխատել ի նմին աւուր տօնի աւելի քան զսահմանեալ ժամն, ծանր մեզ գործէ: Վնասելի է և զայս, զի յատենական գործս դուշնաքէութիւն նիւթոյ ոչ այնչափ ըստ սղութեան ժամանակին է, որչափ ըստ հանգամանաց գործոյն:

ՅՕԴՈՒԱԾ Դ

ՊԱՐՏՔ ՏԵՍԱՆԵԼՈՑ ԶՊԱՏՇԱՐԱԳ

27. Վնասելութիւն:
28. Մտադրութիւն:
29. Ժամերգութիւն ի տեսանելն զպատարագ:
30. Որ մատուցանէն զպատարագ:
31. Որ խոստովանի կամ լսէ զխոստովանութիւն:
32. Որ նիրհէ, կամ ժողովէ ողորմութիւն:
33. Դուշնաքեի մասին ինչ պակասութիւն:
34. Որ կրկին պատարագս լսէ կէս ի կէս:
35. Ուսոյ մարթ իցէ լսել կամ տեսանել զպատարագ:
36. 37. Յաղագս մատրան, և ուր իշխանութիւն իցէ եպիսկոպոսի պատարագել:
38. Օրէն իցէ եպիսկոպոսի տալ հրաման պատարագելոյ ի տունս:

27. Վնասենեցուն, որոց է ընտրութիւն քարւոյ և չարի, պարտ ի վերայ ածէ պատուիրանս այս. և առ ի ընուլ զպարտս զայս՝ խնդրին դիտաւորութիւն և մտադրութիւն:

Վնասելութիւն է, զի որ կամիցի տեսանել զպատարագ. զի որ վասն այլ ինչ իրիք կացցէ յեկեղեցւոջ, որպէս ի զնին գեղարուեստից, կամ սպասելով բարեկամին, և կամ բռնի կալեալ անդ, ոչ ընու զպարտս

լուր. իսկ եթէ յերկիւղէ հօր կամ վարժապետի տեսանիցէ զպատարագ, թէպէտ և ընու զպատուիրանն, այլ մեղանչէ վասն չար կամացն չտեսանելոյ՝ եթէ չէր նման երկիւղն այն։ Այլ չէ ինչ կարևոր ունել դիտաւորութիւն զպատուիրանն կատարելոյ, այլ շատ իսկ է դիտաւորութիւն առնելոյ զՀրամայեաւն. վասն որոյ որ տեսանէ զպատարագ՝ առանց իսկ դիտելոյ կամ յիշելոյ զի տօն է այն օր, ընու զպարտս տօնին։ Օ՞նգն խմն և զուխտից և զերդմանց և զապաշխարանաց, բայց միայն եթէ որ զերն խոստացեալ յիւրմէ կամ Հրամայեալ՝ի խոստովանահօրէն ոչ առ՝ի ընուլ այլ ինչ պարտս սահմանեսցէ։ Հասարակաց կարծիք են աստուածաբանից և հաւանականապոյն, զի եթէ որ յայնժամ չունիցի իսկ կամն կատարելոյ զպատուիրանն, կատարէ զայն տեսութեամբ պատարագին, զի զպատուիրեալն կատարէ կամաւորապէս։ Եւ ոչ զօրէ օրինակ դրամական պարտուց, զոր ոմանք առարկեն առ այս, թէ որպէս պարտապան որ Հարիւր դահեկանաց՝ եթէ դիտելով և յիշելով զպարտս իւր՝ տայ՝ի պարգև պարտատեառն իւրում Հարիւր դահեկան, ոչ զերծանի՝ի պարտուցն, սոյնպէս և որ ոչն կամի կատարել զպատուիրանն՝ պարտապան մնայ պարտուցն։ Օ՞չ՝ի պարտս դրամոց, որպէս և ուխտի, զկամաց պարտապանին կախեն պարտք. վասն որոյ կարէ որ՝ի Հատուցանելն և զայն՝ կալ մնալ պարտապան. այլ պարտք տեսանելոյ զպատարագ՝ կախի զկամայ եկեղեցւոյ, և ոչ՝ի կամն իւրաքանչիւր ուրուք է զայն պարտս յանձն առնուլ, վասն որոյ և ոչ՝ի կատարելն զայն՝ կալ մնալ պարտապան։

28. Մտդրի և մտադրութիւն, գէթ զօրութեամբ. այսինքն զի որ տեսանէն զպատարագ՝ զգայեղ և գիտից զի առաջի կայ սրբոյ պատարագին. վասն որոյ որ կայ անդ՝ի քուն կամ անզգայ կամ անգէտ իրին՝ որ կատարի, ոչ ընու զպարտս իւր։ Այլ պարտ իցէ արդեօք և նեղբին մտադրութիւն։ — Ասացուք չհամարին զայն կարևոր առ՝ի ընուլ զպատուիրանն, շատ համարելով զկաղն բարեպատս առաջի սրբոյ պատարագին առ՝ի պատուել զտէր։ Այլ հասարակաց կարծիք կարևոր համարին զնեղբին մտադրութիւն, այսինքն խորհել զԱստուած կամ զխորհուրդ սրբոյ պատարագին,

կամ աղօթիցն և արարողութեան միտ դնել: Այլ շատ է՛ի սկզբանէ պատարագին ունել դիտաւորութիւն զներքին մտադրութեան, և չնահանջել զայն կամաւոր ցնդմամբ մտաց և խորհրդով. ասեմ խորհրդով՝ զի եթէ ոք կամաւ իսկ այլուր զմիտսն ղեալեցուցանիցէ, առանց խորհելոյ զի առաջի կայ սրբոյ պատարագին, թէպէտ և կամաւոր է զբաղումն իւր՝ այլ ոչ ըստ մասին մտադրութեան պատարագին: Հաւանական է այս կարծիք, այլ ոչ անհաւանական և առաջինն. և վասն ոչ սակաւուց այնպէս կարծելոյ՝ գէթ երկբայելի լինի, թէ արդեօք օրինքս այս եկեղեցւոյ դնիցէ պարտ՛ի վերայ հաւատացելոց զներքին մտադրութեան:

29. Կատարէ զպարտս պատուիրանին և որ՛ի տեսանելն զպատարագ՝ քննէ զխիղճ մտաց իւրոց, որ ընթեռնու գիրս հոգևորս, որ կատարէ զժամերգութիւն կամ զպաշտօնարանս. զի մարթ իսկ է երկուս պատուիրանս միանգամայն կատարել, եթէ չիցեն խափան միմեանց: Այնպէս ընուն զպարտս պատուիրանին որք՛ի սպասաւորելն սրբոյ պատարագին՝ գնան յաւանդատունն առ՛ի բերել զկարևորս նմին, որպէս խունկ, գինի, նշխար և այլն:

30. Չիք երկբայութիւն զի պատարագիչն ընու զզգպարտս պատուիրանին. և հաւանական է զի և յափշտակութիւն մտաց ոչ լինչ ստնանէ մտադրութեան նորա, զի միտք նորա յայնժամ յափշտակեալ են յԱստուած:

31. Նազումք՛ի բարեյականաց համարին զի և որ խոստովանի՛ի տեսանելն զպատարագ՝ ընու զպարտս պատուիրանին, եթէ կարիցէ և եթէ միտ դնել. զի և խոստովանութեամբն որպէս աղօթիւք պատուէ զԱստուած: Այլ Լուկա, Պոնաչինա, Ծամպուրինի, Ալմատիկեանք ոչ ընդունին զայս: Իսկ խոստովանօղ մարթ է տեսանել զպատարագ՛ի լսելն զխոստովանութիւն:

32. Կատարէ զպարտս պատուիրանին, կամ գէթ ոչ ծանր մեղանչէ, և որ նիրհէ՛ի տեսանելն զպատարագ, այսինքն որ քուն՛ի գլուխ հաղիւ խմանայ զգլխաւոր մասունս պատարագին: Օրինայն խնա և զժամերգութենէ: Այնպէս և որ դանձանակաւ ջրջի ընդ եկեղեցին, հա-

ւանականաբար կատարէ զպարտս պատուիրանին՝ եթէ միտ դիցէ պատարագին : Իսկ որ զմանն մի մեծ սրբոյ պատարագին պարապէ ՚ի խօսակցութիւն, ոչ կատարէ զպարտս պատուիրանին. զի խօսակցութիւն ոչ ներքին ևս եթէ մեղադրութեան է խափան, այլ խափանէ և զարտաքինն :

33. Որ ինչ ՚ի պատուիրանիս յայսմիկ համարիցի նիւթ դուշնաքեայ : — Ետ ոմանց Թողուլ զպատարագն մինչև ցսկիզբն աւետարանին. ըստ այլոց բազմաց մինչև ցվերջ նորին, հանդերձ հանգանակաւն, որպէս համարի Ուկոյ ընդ այլս : Ըռաջնին կարծիքն հաւանականագոյն է, բայց երկրորդն ևս ոչ անհաւանելի. զի ըստ սրբոյն Իսիդորոսի յառաջնի ժամանակս ՚ի նուիրանաց անտի սկսանէր պատարագն, այսինքն ուր աւետքն զՏէր Ըստուած զօրութեանց : Ա՛յլ հասարակաց կարծիք ըստ Աուարէզի և այլոց չհամարին ծանր՝ Թողուլ ցսկիզբն ընթերցուածոյն, և ՚ի Հաշակամանէն և անդր, Թէպէտ և զերկոսին ևս ոք Թողուցու. որպէս և համարին ծանր Թողուլ՚ի սրբագործութենէ ցսկիզբն տէրունական աղօթիւ, կամ զսրբագործութիւն և զՀաշակումն : Իսկ զմի յերկոցունցն Թողուլ, այսինքն կամ զսրբագործութիւն և կամ զՀաշակումն, և կամ զմիոյ իսկ տեսակի սրբագործութիւն, կէսք ծանր համարին. բայց այլք բազումք չընդունին զայս կարծիս, իբր զի ոչ է յայտ էութեան պատարագին ՚ի սրբագործութեանն կալ, որպէս ունին հասարակաց կարծիք, Թէ ՚ի Հաշակման՝ որպէս այլք ընդ մեծին Ա՛լբերտի համարին : Ասկայն հաւանականագոյն առաջնոցն է կարծիք՝ հաստատեալ ՚ի հաւանականագոյն վարդապետութիւն էութեան պատարագին կալոյ յերկոսին միանգամայն, այսինքն ՚ի սրբագործութեան և ՚ի Հաշակման : Ա՛յլ այսու ամենայնիւ եթէ ոք յետ սրբագործութեան վերջնոյ պատարագի հասցէ յեկեղեցի, պարտի զկէս պատարագին տեսանել. զի որովհետև հաւանական է և կարծիք այնոցիկ՝ որք զէութիւն պատարագին կացուցանեն ՚ի Հաշակման, եթէ ոք չկարէ ընդուլ հաւաստեաւ զպատուիրանն, պարտի ընդուլ զայն գէթ հաւանականաբար :*

34. Որ զերկուց պատարագաց զկէսն տեսանիցէ, կա-

տարէ՛ զպատուիրանն։ — Որ ՚ի նմին ժամանակի զերկոսին ևս տեսանիցէ, զկէս պատարագաց, ոչ կատարէ աներկբայապէս, զի Հակառակն սորին վարդապետուԹիւն դատապարտեալ է։ Այլ որ զմին ՚ի սկզբանէ ցկէսն, և ապա զմիւսն ՚ի կիսոց ցկատարած տեսանիցէ, նու զպատուիրանն ըստ ոչ սակաւուց ՚ի բարոյականաց՝ որք բաւական համարին զայն բարոյական միուԹիւն ՚ի լրումն պատուիրանին։ Այլ զանաշանելի է ըստ այլոց քաջաց աստուածաբանից, որք ոչ բաւական համարին զայն ՚ի բաժանել սրբագործուԹեան ՚ի Ճաշակմանէ, այլ միայն՝ եԹէ մի ՚ի կիսոց անտի բովանդակիցէ զառաջին մասն պատարագին մինչև ցորբագործուԹիւն, և միւսն հանդերձ սրբագործուԹեամբ զՃաշակումն։

35. Յամենայն եկեղեցիս Հաստատակաց մարԹէ ընուլ զպատուիրանս զայս, ԹէպետԹէ և չկացեն Ժողովրդապետականք։ Ընու և որ յետոյսեղանոյն ՚ի դաստուանդ կայ, և որ ընդ պատուհան եկեղեցւոյ տեսանէ կամ լսէ զպատարագ, և կամ գոնէ ՚ի շարժմանէ այլոց իմանայ զգլխաւոր մասունս պատարագին։ Ընու և որ արտաքոյ եկեղեցւոյն կայ կցորդ կացեալոյն ՚ի ներքս անդ, ԹէպետԹէ և չտեսանիցէ և չլսիցէ զպատարագն։ Ընու ըստ ոչ սակաւուց աստուածաբանից, և ոչ առանց ՀաւանականուԹեան, և որ ՚ի պատուհանէ ուստեք մերձակայ տան տեսանէ զպատարագ, ԹէպետԹէ և ուղիղ ՚ի միջի կայցէ ընդ տունն և ընդ եկեղեցի, եԹէ միայն սակաւ իցէ հեռաւորուԹիւն, և երևիցի պատարագիչն։ Ուկայ և Ասքոպար ընդունելի համարին և զերեսուն քայլից հեռաւորուԹիւն, այլ Ամմուրինի և ԿոպաԹոյ ոչ ընդունին զայն։

36. Պատաք յեկեղեցիս հաստատակաց, զի յառտնին մասրունս ոչ ամենեքեան որ լսեն զպատարագ՝ ընուն զպատուիրանն. այլ միայն ընտանիք, և ազգականք նոցա՝ որ բնակեն և կերակրին ՚ի միասին, և սպասաւորք՝ ԹէպետԹէ և ոչ ՚ի տան անդ բնակեալք, այլ կարևորք ՚ի գործ հանապազօր և անդ կերակրեալք։ Այլ ոչ և սպասաւորք անկարևորք, և ոչ օտարք ամենևին։

37. Ի մասրունս այսպիսիս ոչ է օրէն և ոչ պատշաճ գալ յաւուրս գլխաւոր տօնից, որ են Ծաղիկ, Ջոզեգալուստ, Ծնունդ, ՊատուաճայայտնուԹիւն, Բաղ

հինգշաբաթի, Համբարձումն, Աչեւտումն, Վերափոխումն, Վկայասիրաց մահուանն, Գլխատուր առաքելոյ տօնք, և առ լատինացիս նա և ամենայն սրբոց տօնք: Այլ այս արգել ոչ վասն մատրանց այնոցիկ է, որ վասն հիւանդութեան չնորհին: Գիտելի է դարձեալ զի յառաջին մատրունս ոչ է օրէն պատարագել, եթէ չիցէ անդ ոք յընտանեաց՝ որոց չնորհեալն է ուղղակի արտունութիւնն այն: Եւ դարձեալ զի չէ օրէն աւելի քան զմիակ պատարագ՝ի մատրունս անդ՝ի նմին աւուր մատուցանել. ոչ հաղորդել զոք և ոչ լսել զխոստովանութիւն անհրաման՝ի Թեմական եպիսկոպոսէ և առանց իրաւացի պատճառի:

Այլ այս ամենայն վասն առանձնական մատրանց, և ոչ վասն այնոցիկ՝ զորս օրհնէ եպիսկոպոսն՝ի կղերանոցս, յորբանոցս, ՚ի հիւանդանոցս, յաղքատանոցս և այլն, ևս և ՚ի տունս ուրեք առանձնականս՝ եթէ իցէ դուռն մատրանն՝ի փողոցի. զի յայսպիսի մատրունս օրէն է և պատարագել, և լսել զպատարագ յամենայն աւուրս, զի ընդ եկեղեցիս հասարակաց համարին: Օնոյն է ասել և զմատրանց կրօնաւորաց և եպիսկոպոսաց և կարդինալաց:

38. Օրէն է եպիսկոպոսաց, ևս և արտաքոյ Թեմի իւրեանց պատարագել ՚ի տունս՝ յորս գտանին: Օրէն եր նոցա երբեմն և ամենայն ուրեք՝ի տունս աշխարհականաց պատարագել և տալ հրաման պատարագելոյ. այլ ամիսոփեցաւ այս իշխանութիւն նոցա՝ի տրիդենտեան ժողովոյ, և բացայայտ ևս՝ի Կղեմայ ԺԱ: Այլ այն զայս ամիսոփումն ըստ հասարակաց կարծեաց քաղցրականաց, որ և յոյժ է հաւանական, պարտ է իմանալ վասն հանապազօր և ունակական իշխանութեան, և ոչ վասն ներդործականին՝ որով ըստ առժամայն պիտոյից վասն իրաւացի պատճառաց օրէն է վարել եպիսկոպոսի:

Որոյ իցէ արտունութիւն առանձին մատրան, կարիցէ և յայլում ուրեք Թեմի՝ի փոխել զբնակութիւն իւր՝ վարել նովաւ: — Նաղումք հաստատեն զայս, զի ոչ տեղական է չնորհն՝ այլ անձնական. վասն որոյ՝ի կալ մնալ պատճառի չնորհին և այլուր, կայ մնայ և չնորհն: Սակայն Հայրն Փորթունատոյ սրբեչնայի գհակառակն հաստատ վկայութեամբ ևս այլոց. զի Թեպետ

և զարտունութիւնս պարտ է ընդարձակաբար մեկնել որպես նպաստաւորս, այլ ուր իրաւանց այլոյ ուրուք հակառակ ելանեն՝ ոչ ևս օրէն է մեկնել զայնոսիկ լայնաբար։ Վասն որոյ և ոչ օրէն է ուժեք յառաժամնակեայ բնակութեան իւրում՝ ի գեղջ՝ վարել նովին արտունութեամբ։ Այսմանէ և՝ ի ստորև ինայ մեզ ասել՝ ի Հառս արտունութեանց. (գլ. ի. 7.)։

Վայելպէտ և պատշաճ է ուրոյն՝ ի սենեկի ուրեք տան՝ ի վերնայարկի ունել զմատուռն, որպես զի մի իցէ բնակութիւն՝ ի վերայ նորա, և զատուցեալ իցէ յամենայն աշխարհական իրաց, սակայն ներելոյ է՝ ի սովորութենէ վարադուրաւ ևս բաժանել զայն՝ ի սրահի ուրեք, կամ փայտակերտ փեղկիւք՝ ի դարանի ուրեք մեծի։ Այլ որպես յեկեղեցւոջ՝ ի պահանջել հարկին օրէն է ուտել և ննջել և գործել, ևս առաւել մարթ է յառանին մատրան։ Այլ որպես ներելի և եթէ մեզ գործէ որ ոչ միշտ՝ այլ առանց հարկի առնէ զայսոսիկ յեկեղեցւոջ, այսպէս և յառանին մատրան։ Վասն որ միշտ և անխափոր իբրև զայլս՝ ի սենեկաց տանն ունի զմատուռն, անսուրբ առնէ զայն, մինչև կարօտել միւսանգամ օրհնութեան՝ ի Թեմական եպիսկոպոսէ։ Վասնապէս և՝ ի վերայ մատրան բնակել Թէպէտ և չիցէ պատշաճ, այլ չէ արգելեալ. զի և որ զտանեօք եկեղեցւոյ ննջէ, արտաքոյ եկեղեցւոյ համարի ննջել։ Վասն որոյ առ անձկութեան տանն օրէն իսկ է առնել՝ ի վերայ մատրան բնակութիւն։

Վայելէ է զի՝ ի նմին տան ոչ է օրէն կանգնել երկուս մատուռնս. վասն որոյ եթէ՝ ի տան ուրեք միոյ՝ ի բնակչաց իցէ մատուռն, և այլ ոք՝ ի նմին տան Թէպէտ և ուրոյն բնակեալ՝ խնդրիցէ և առնուցու զնոյն արտունութիւն, անվաւեր է ընորհն։

ՅՕԴՈՒԱԾ Ե

ՈՐ ԻՆՉ ՊԱՏՃԱՌՈՒ ԱԶԱՏ ԿԱՑՈՒԹՅԱՆՆ Ի ՊԱՐՏՈՒԹ ՏԵՍԱՆԵԼՈՑ ՉՊԱՏԱՐԱԳ

39 • Անկարողութիւն, այսինքն հիւանդաց, բանադրելոց, բանտարկեալոց, պահապանաց և այլն :
40 • Ծառայք, որդիք, կանայք արգելեալք ի տերանց, ի հօրէ և յառնէ իւրեանց :
41 • Ծանր նեղութիւն :
42 • Սովորութիւն :
43 • Օրէն եղեալ վասն գայթակղութեան կամ շահու մեծի կամ վասն խոստովանութեան զանց առնել զպատարագաւ :

39 • Որ և եղեալ անկարողութիւն իրական կամ բարոյական, այսինքն որ աճէ ծանր տոյժ կամ նեղութիւն, հոգևոր կամ մարմնաւոր, անձին կամ այլոց, ազատ կացուցանէ ի պարտուց տեսանելոց զպատարագ : Այսոքիկ որոց ազատ են հիւանդք, որ չկարեն ելանել ի տանէ՝ առանց վնասելոց առողջութեան իւրեանց, կամ յերկարաձգելոց զնօթութիւն, կամ կրելոց նեղութիւն ծանր : Իսկ յերկբայս՝ պարտ է հիւանդին հանգարտել խորհրդով բժշկին կամ մեծաւորի և կամ առն խոհականի . և ի չդադարել իսկ երկբայութեան՝ ազատ է հիւանդն հաւանականաբար, ուր ծանր վտանգ առողջութեան ի վերայ կայցէ . զի օրէնք բնութեան պահելոց զառողջութիւն գերազոր է քան զդրական օրէնս :

Ազատ են և բանադրեալք և բանտարգելք . զի ոչ է պարտ նոցա առ ի տեսանել զպատարագ զհետ լինել արձակման կամ ազատութեան : Այլ եթէ դիւրաւ կարիցեն գտանել զայն, և մանաւանդ եթէ կամաւ անփոյթ լինին զայնմանէ առ ի չտեսանելոց զպատարագ, պարտաւոր գտանին :

Ազատ են և պահապանք քաղաքաց և բանակաց, տանց, հօտից, և տղայոց իսկ՝ եթէ չիցէ մարթ առանց ծանր նեղութեան ածել զնոսա ի միասին յեկեղեցի : Պարձեալ և որոց վտանգ իցէ բանտարկութեան, և որոց հոգ հիւանդաց :

40 • Ազատ են և ծառայք, եթէ չկարիցեն գնալ յե-

կեղեցի առանց Հասուցանելոյ տերանց իւրեանց ծանր նեղութիւն. այլ պարտ է նոցա և նեղութիւն ինչ յանձն առնուլ առ ի չզրկելոյ ի պատարագէ, որպէս վաղայարոյց լինել և այլն: Իսկ եթէ չիցէ նոցա գործ կարևոր՝ չեն ազատ ի պարտուց պատուիրանին, բայց վասն վտանգի ցասման տերանց իւրեանց, և արձակելոյ զնոսա ի բաց, և չկարելոյ նոցա գտանել գիւրաւ զայլ ոք տէր: Ո՛նոյն է իմանալ և վասն որդւոց ստիպելոց ի հօրէ իւրեանց, և վասն կանանց յառնէ, վաստակել յաւուր տօնի և չերթալ ի պատարագ. զի և սոքա ազատ են վասն վտանգի ծանրացաստումն լինելոյ նոցա:

41. Ազատ են և նաւորդք և ուղևորք, եթէ ծանր նեղութիւն հասցէ նոցա ի տեսանելոյ զպատարագ: Ազատ կացուցանէ և հեռաւորութիւն եկեղեցւոյ. ի մասին յայսմիկ պարտ է կշռադատել զհանգամանս անձին և ժամանակի և տեղւոյ. այլ սովորաբար բաւական համարի հեռաւորութիւն երից մղոնաց, այսինքն ձա՛ նապարհ հնգից քառորդաց ժամու. և նուազագոյն և այս, եթէ անձրևէ կամ ձիւնէ:

42. Ազատ կացուցանէ և սովորութիւն ըստ տեղեաց՝ չերանելոյ ի տանէ եօթնեակս ինչ կամ ամսօրեայ ժամանակ յետ որդեծնութեան, կամ ի սուգ մահու առն կամ քեռ և այլն: Այլ որոց սկսեալ իցէ վասն պլոց իրաց երանել, չեն ազատ ի պարտուց պատուիրանին: Ազատ են և տիկնայք՝ որոց չիցեն հանդերձ պատշաձաւոր և ընկեր կամ սպասաւոր. այլ պարտ է նոցա, եթէ կարիցեն, վաղ քաջ ընդ առաւօտն, և կամ ի հեռաւոր ուրեք եկեղեցի գնալ ի պատարագ, ուր չիցէ բազմութիւն ժողովրդեան: Ազատ են և աղջկունք յղիք ըստ փորձանաց. ոմանք ազատ համարին և զօրիորդս ուր մի և եթէ իցէ պատարագ, և ի նմա հրատարակիցին հարսանիք նոցա. այլ այս ներելի է ըստ սովորութեան տեղեաց, կամ եթէ նեղութիւն ծանր հասցէ անտի օրիորդին:

43. Ազատ է և կին, որում ի գնալն յեկեղեցի հասանէ տալ այլում գայթակղութիւն: Այլ այս պարտք եղբայրսիրութեան ոչ աւելի քան զերկուս նուագս հարկ առնէ նմա չտեսանելոյ զպատարագ: Ազատ կա-

յուցանէ հաւանականաբար և կորուստ մեծի շահու, որպէս վասն աշխատութեան ասացաք (22.): Վասն որոյ ներելի է կառավարաց, աղօրեպանաց, և այլոց այսպիսեաց: Զատ է և որ առ՝ի խափանել ծանր ինչ մեղս կամ՝ վնաս՝ չկարէ տեսանել զպատարագ, և կամ՝ առ՝ի խոստովանել զի մի հասցէ նմա կալ ընդերկար՝ի ծանր մեղս: Այլ ոչ է օրէն Թողուլ զպատարագ առ՝ի գործել աստուածահաճոյ ինչ գործ մեծ՝ որ չիցէ պատուիրեալ: Իսկ յաղագս օտարականաց, եթէ պարտ իցէ տեսանել նոցա պատարագ՝ որ վասն այնր տեղւոյ է պատուիրան, ասացաք՝ի վեր անդր. (գլ. Բ. 41.):

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՑ ՁՈՐՐՈՐԴ ՊՏՏՈՒԻՐԱՆԻՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

ՊԱՐՏՔ ՈՐԴՒՈՑ ԱՌ ԾՆՕՂՍ

1. Սէր որդեկան:
2. Յարգութիւն:
3. Հնազանդութիւն:

1. Պարտ է որդւոց առ ծնօղս իւրեանց, որպէս և Հպատակաց առ մեծաւորս իւրեանց, ունել սէր՝ յարգութիւն և հնազանդութիւն: Զայն որոյ ծանր մեզանչէն ընդդէմ սիրոյ, նախ՝ որք առեանն զնոսա, կամ չարիս ըղձանան նոցա՝ կրկին մեղս գործելով, այսինքն ընդդէմ արդարութեան և ընդդէմ գթութեան: Երկրորդ՝ որք արգելուն նոցա անիրաւ հնարիւք չառնել կատակ: Երրորդ՝ որք դառնացուցանեն զնոսա յոյժ, առանց իրաւացի պատճառի: Չորրորդ՝ որք ի ծանր կաթոտութեան նոցա ըստ մարմնոյ կամ ըստ հոգւոյ՝ ոչ օգնեն նոցա, մանաւանդ եթէ ի վտանգ մահու չտան նոցա ընդունել զսուրբ խորհուրդս:

2. Ծանր մեղանչեն ընդդէմ յարգութեան նախ՝ որք հարկանեն զնոսա եւս և թեթևակի, կամ սպառնան ձեռօք զհարուած: Երկրորդ՝ որք յերեսս իսկ ծաղր առնեն զնոսա: Երրորդ՝ որք անիծանեն զնոսա լու ի լու նոցա, կամ թշնամանեն՝ կոչելով զնոսա յիմար, արբեցող, անբան, անօրէն, գող, և այլն: Իսկ տգետս կոչել զնոսա կամ ապուշս կամ ծերս և այլն, ոչ մահացու ինչ համարի՝ եթէ ոչ յոյժ դառնանայցեն նոքաւ: Ասացաք յերեսս իսկ. զի ոչ անխտիր օրէն է ի մահու չափ մեղս գատապարտել զորդի, որ զկերպ հօրն առաջի այլոց ծաղրածութեամբ խաղ առնիցէ, կամ անէծս նմա առանց չարակամութեան կարդայցէ:

3. Ո՛չ ոք մեղանչէն ընդդէմ հնազանդութեան նախ՝ որք ընդդէմ կամաց նոցա կրկին անարժան ածէն, անպատիւ առնելով զաշգատաւհին: Ցիս զայսմանէ՛ ի ստորև. (գլ. ԻԸ. յղ. Հարսնախօսութեան): Երկրորդ՝ որք գողանան՛ ի տանէ ոչ դուշնաքեայ ինչ. և զայսմանէ տես՛ ի ստորև յաղագս գողութեան. (գլ. թ. 32): Երրորդ՝ որք անսաստեն արդար հրամանի նոցա՛ ի ծանր ինչ յայտնապէս և խստիւ հրամայեալ. որպէս չխաղալ խաղս ինչս սակաւս, չելանել գիշերի, չյաճախել ընդ այս կամ ընդ այն ընկերս կամ կանայս, և այլն: Զայսցաքս պղտոր հրամանի նոցա, զի յընտրութիւն պայմանի կենաց չէն ինչ պարտք որդւոց հնազանդել ծնողաց իւրեանց. վասն որոյ ծնօղք, որպէս՛ ի յաջորդ յօդուածիս ասացաք, ծանր մեղանչէն յարգելով զանձնութիւն որդւոց, և՛ ի սոխալել զնոսա՛ ի պայման ինչ կենաց սակայս:

ՅՕԳՈՒԱԾ Բ

ՊԱՐՏՔ ԾՆՕՂԱՑ ԵՒ ԵՂԲՕՐՑ

4. Ապրուստ, մասն ժառանգութեան՝ որ անկանի որդւոց, օժիտ դստերաց:
5. Դաստիարակութիւն. հայր որ արգելու զկոչումն որդւոց, կամ սակս զնա՛ ի պայման ինչ կենաց՝ և՛ ի կրօնաւորութիւն:
6. Պարտք եղբարց:

4. Երկու ինչ պարտ է ծնողաց հայթայթել որդւոց, զպահպանութիւն կենաց և զդաստիարակութիւն: Ըստ պահպանութեան կենաց մեղանչէն նախ՝ որք չհայթէն զինչս իւրեանց մինչև անկարող լինելոյ տալ որդւոց, և ս և անհարազատից, զապրուստ կարեւոր. կամ անփոյթ առնեն հայթայթել նոցա զայն ըստ կարի: Երկրորդ՝ որք անիրաւութեամբ զրկեն զնոսա՛ ի մահու իւրեանց յօրինաւոր ժառանգութենէ, կամ՛ ի կենդանութեան չտան զհասս որդւոյ՝ որ կամ ինն մտանել՛ ի կարգ եկեղեցական, և կամ չտան օժիտ դստերաց՝ և ս և ընդդէմ կամաց իւրեանց ամուսնացելոց, եթէ հպէն նոցա յամուսնանալն աւելի քան զքսան և հինգ ամ. իսկ եթէ պակաս՝ պարտական է հայր նո-

ցա գէթ կերակրել զնոսա, թէպէտ և ընդդէմ հայրենի կամաց հարանացեալ իցեն անարժանից։ Ոսկ որդւոյ պարտական է հայր ոչ միայն զկերակուր նորա տալ, այլ և զհարսին նորա՝ թէպէտ և անօժիտ իցէ հարսնացեալ, և ընդդէմ կամաց հօրն լեալ իցէ առնանալ որդւոյն։ Յաւելուն բարոյականք, զի պարտ է հօր կերակրել զորդի, թէպէտ և վատնեալ իցէ նորա ըզմասն ժառանգութեան իւրոյ վաղ իսկ ընկալեալ։ Եւ ևս ոչ է օրէն հօր արտաքսել զորդի ՚ի տանէ, թէպէտ և կամիցի կերակրել զնա արտաքոյ. այլ կարող է զորդի խեռ և ստահակ փակել ՚ի կրթարանի ուրեք յուղղութիւն վարուց։ Ոսկ որդի ելեալ ՚ի հայրենի տանէ՝ չկարէ պահանջել ինչ ՚ի հօրէն, բայց եթէ վասն առաքինութեան իւրէ ելեալ։ Ոսկ վասն անժառանգելոյ հօր զորդի ասասցուք ՚ի ստորև. (գլ. ժ. 115. յղ. գաշանոյ)։

5. Ոսկ ըստ դաստիարակութեան մասին, նախ՝ մեղանչեն ծնօղք, որք անփոյթ առնեն ուսուցանել նոցա՝ գէթ ՚ի ձեռն այլոց՝ զկարևորս փրկութեան և զկրօնս։ Երկրորդ՝ որք տան նոցա զայթակղութիւն հայհոյելով կամ զաղիր խօսիւք և այլն, և մանաւանդ ունելով զնոսա յառագաստի իւրեանց, կամ զուստերս և զդստերս ՚ի միում անկողնի։ Երրորդ՝ որք ոչ խրատեն և յանդիմանեն զմեղս նոցա։ Չորրորդ՝ որոց չիցէ փոյթ վերջնալ նոցա ՚ի կրօնական պարտուց, ՚ի սուրբ խորհրդոց, ՚ի պահպանութենէ տօնից, ՚ի պահոց և այլն։ Հինգերորդ՝ որք ներբեն նոցա կենակցել ընդ զայթակղեցուցիչ արս կամ կանայս, և յաճախել խօսնարանս առ դստերս իւրեանց։ Վեցերորդ՝ որք արգելուն որդւոց իւրեանց ջամբռնանալ, զորմէ տես ՚ի ստորև (գլ. ԺԸ. յղ. Հարսնախօս.) և մանաւանդ չմտանել ՚ի կարգ եկեղեցական կամ կրօնաւորական, զորմէ ասասցուք դարձեալ ՚ի ստորև. (գլ. ԺԹ. 25. յղ. կրօնաւորութեան)։ Չօթներորդ՝ որք ընդ հակառակն ստիպեն զորդիս իւրեանց յամբռնութիւն, կամ զայս ոք կամ զայն ածել կին։ Այլ սուրբ Գրիգորիոս, Պելլարմինոս, Այման, Անքեզ, Փեթրոբոր, Վոլետոյ և այլք բազումք օրէն համարին նոցա զերկրորդս զայս՝ եթէ պատճառք ծանուցանէ ՚ի միջի կայցեն, որպէս բարձումն անհաշտ թշնամութեան կամ օգնականութիւն մեծի կարօտութեան

իւրեանց և այլն, և կամիցի որդին ամուսնանալ։ Ըստ այսմ մեղանչէն և որք ստիպեն զուստերս իւրեանց քահանայանալ կամ կրօնաւորել, կամ զդստերս՝ մտանել՝ի կուսաստան. և ըստ վճռոյ տրիդենտեան ժողովոյն անկանի ընդ բանադրանաւք ոչ միայն որ ստիպէ զոք ուխտել՝ի կուսաստանի կամ զգենուլ զձև կարգին, այլ և որ բռնի մուծանէ զնա անդր՝ի դաստիարակութիւն։ Այլ ազատ են՝ի բանադրանաց աստի ծնօղք՝ որք յորդորեն և եթէ զդստերս իւրեանց մտանել՝ի կուսաստան, որպէս Համարին Պարպօզա, Ռոտրիկուէց և այլք, ընդդէմ Վայր Ղեքսանդրի՝ի կարգէ Ծնեալ՝ որ Համարի զայն բանուածիւն առ երկիւղի ակնածութեան. բայց այլ է երկիւղ ցասման Հօր, և այլ իղձ Հայրենի յայտնեալ յորդորանաւք. չատ է զի մի տհաճութիւն ընդ յորդորանն խառնեսցէ։

Բայց քանզի ժողովն սուրբ՝ի բաց առնու՝ի վճռէն զդէպս իրաւանց, Ռուարէզ և Պոնաչինա և այլք նեբելի Համարին ստիպել զօրիորդս մտանելոյ՝ի մենաստան՝ի պատիժ անկման նոցա կամ վասն վտանգի անկանելոյ՝ի փորձութիւն, գոլով ինքեանց և այլոց՝ի դայթակղութիւն կալ նոցա՝ի տան. զի դադարէ յայնժամ վախճան օրինաց ժողովոյն, ըստ ասացելոցս՝ի վեր անդր. (գլ. Ը. 69)։ Յաղագս այսր բանադրանաց ինչ մեզ ասել և՝ի ստորև. (գլ. ԻԹ. 29)։ Պիտելի է զի ժողովն սուրբ բանադրէ՝ի նմին վճռի և զայնոսիկ, որք առանց իրաւացի պատճառի արգելուն զկանայս չուխտել կամ չզգենուլ զձև կրօնաւորական։ Ամանք՝ի բարեյականաց Հաւանականադոյն Համարին անկանել ընդ սովին բանադրանօք և այնոցիկ, որք արգելուն և զմուտս նոցա՝ի կուսաստան։

6. Ընդարձ ևս պարտ է, եթէ ձեռն նոցա իցէ բաւական, կերակրել զեղբարս և զքոյր, և տալ նոսա օժիտ քերոյ. ոչ միայն՝ի յետին կարօտութեան, այլ և՝ի ծանուս։ Բայց քերոյ ոչ Համեմատ չպարտին եղբարք տալ օժիտ, այլ կերակրել եթէ զնոսա։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

ՊԱՐՏՔ ՏԵՐԱՆՑ, ԾԱՌԱՅԻՑ, ԵՒ ԱՄՈՒՍՆԱՑ

7. Պարտք տեառըց մանաւանդ ի վարձ ծառայից:
8. Պարտք ծառայից. եթէ թողուն ինչ գողանալ այլոց. եթէ մեկնին ի ծառայութենէ ընդդէմ դաշին:
9. Նախազգուշութիւն ղհատուցմանէ վարձուց:
10. 11. Փոխարինումն վարձուց:
12. Պարտք առն:
13. Պարտք կնոջ, մանաւանդ գնալոյ ղհետ առն իւրոյ:

7. Տեղանչեն տեառքը, նախ՝ եթէ պատճառս տան ծառայից չկատարելոյ զպատուիրանս տօնից և զսուրբ խորհրդոց: Երկրորդ՝ եթէ չտան կամ յամեն տալ ըզվարձանոցա: Երրորդ՝ եթէ չյանդիմանեն զնոսա ի հայհոյելն և ի տալ գայթակղութիւն: Չորրորդ՝ եթէ արձակեն զնոսա ի բաց առանց իրաւացի պատճառի նախ քան զպայմանեալ ժամանակն, և պարտական են յայնժամ հատուցանել նոցա բովանդակ զվարձս պայմանեալ ժամանակին: Այլ եթէ արձակմամբն ի բաց ոչ հասցէ ինչ տոյժ ծառային, յայնժամ զկէս և եթէ վարձուցն և զձեռաձիր ի խղճէ մտաց պարտի հատուցանել տէր նորա, թէպէտ և յատեանի պարտի զբռվանդակն: Իսկ ի հիւանդանալ ծառային ընդ երկար՝ չեն ինչ պարտք տեառնն տալոց զվարձս նորա, եթէ չիցէ սակս որութիւն ինչ ուրեք հակառակ այսմ: Այլ եթէ չիցէ անդ հիւանդանոց, և ծառայն չիցէ ի ծանր կարօտութեան, հաւանականաբար և ոչ զծախս հիւանդութեան նորա պարտի տէր նորա հատուցանել:

8. Իսկ ծառայք մեղանչեն, նախ՝ եթէ ոչ կատարեն զպաշտօն իւրեանց, կամ ոչ հնազանդին տերանց իւրեանց ի մասին ծառայութեան: Երկրորդ՝ եթէ անփոյթ առնեն զտոյժս տերանց իւրեանց, կարելով խափանել զայն. և եթէ յարտաքնոց անտի հասանեն տոյժքն, ինքեանք պարտական են հատուցանելոյ զայն: Իսկ եթէ ի ծառայակցաց, հաւանականագոյն և հասարակաց կարծիք համարին մեղանչել նոցա ընդդէմ եղբայրսիրութեան՝ այլ ոչ ընդդէմ արդարութեան,

վան որոյ և ոչ պարտապանս Հատուցանելոյ զտոյժան. միայն թէ չիցէ նոցա յանձն հոգ պահպանութեան իւրացն այնոցիկ։ Իսկ եթէ նախ քան զպայմանեալն ժամանակ առանց իրաւացի պատճառի մեկնին ի ծառայութենէ։ Ոչայց յայնժամ ոչ է օրէն տերանց զլանալ նոցա բովանդակ զվարձս աւուրց ծառայութեանն, այլ զկէսն պարտին Հատուցանել։ Իսկ եթէ առ խօթութեան կամ վանս այլոց իրիք իրաւացի պատճառի մեկնի օք ի ծառայութենէ, իրաւունք են նմա պահանջելոյ բովանդակ զվարձս ժամանակի ծառայութեանն։

9· Ոչայց պիտելի է՝ զի յետ երկուց ամաց մեկնելոյ իւրոյ ի ծառայութենէ ոչ ևս օրէն է նմա պահանջել զվարձս, ըստ կանոնակին Պիտսի Ե։ Այլ զայս իմա յաւենի· զի ըստ խղճի մտաց պարտի տէր նորա Հատուցանել· զայսմանէ Ճղիւս և ի ստորև ասացուք ի խոսեբն զնախադրութենէ· (գլ· ժ· 10)։

10· Եթէ առանց սակի ծառայութեանն ծառայեաց օք, և ոչ կամիցի տէր նորա զվարձս ծառայութեանն Հատուցանել, օրէն է նմա իւրովի առնուլ զիսխարէնն, զկէթ ըստ նուազագոյն սակի՝ զոր սովոր իցէ տէր նորա Հատուցանել այլոց, և կամ ըստ սակի՝ զոր Հասանէր նմա Հատուցանել այլոց։ Իսկ վանս մանկատեայ, զոր սովոր են աղնուականք ընդունել ըստ աղաչանաց ի ծառայութիւն իւրեանց, սովորութիւն է կերակրել և թզնոսա։

11· Պիտելի է զարձեալ զի չէ օրէն ծառայի առնուլ զաղտ զփոխարէն ծառայութեան իւրոյ, եթէ առաւել զատիցի զվաստակս իւր քան զվարձս՝ զոր ընդունի· զի Հակառակն այսոցիկ վարդապետութիւն դասատպարտեալ է։ Սակայն Ալիւա, Սալմատիկեանք, Սուարէզ, Եսսիոյ և Սոլինա՝ի բաց առնուն զդէպս, եթէ օք բռնադատեալ՝ի Հարկէ՝ յանձն առեալ իցէ զսակ վարձուց յոյժ նուազ քան զարժանն ծառայութեան իւրոյ։ Ոչ յայնժամ որպէս պարտի տէր նորա Հատուցանել նմա զարժանն, այսպէս և ինքն կարէ փոխարինել իւր ըստ նուազագոյն սակի վարձուց· իմա եթէ տէր նորա չկարիցէ առանց անիրաւութեան գտանել զայլ օք, որ զնոյն ծառայութիւն նովին վարձուք

հարկանիցէ նմա։ Այլ արդարապէս յաւելցուն այլք, զի ոչ է օրէն ծառայի պահանջել աւելի ինչ վարձս՝ եթէ իւրովի յաւելեալ իցէ իւր աշխատութիւն առանց յայտնի կամ լռելեայն կամաց տեառն իւրոյ։

12. Այր մեղանչէ նախ՝ եթէ հարկանէ կամ թըշնամանէ տարապարտ զկին իւր. զի վասն իրաւացի պատճառի, մանաւանդ վասն անհաւատարմութեան, օրէնն է առն պատուհասել զկին իւր, այլ չափով և ըստ պայմանի նորա։ Դարձեալ մեղանչէ այր, եթէ չթողու կրնոջ իւրում կատարել զպատուիրանս. իսկ եթէ զկատարեսցն ևս արգելու, այսինքն զի չթողու նմա յաճախել՝ի սուրբ խորհուրդս, ոչ սակաւք՝ի բարեյաճնաց չհամարին նմա ծանր մեղանչել՝ եթէ ոչ մեծ ինչ օգուտ՝ի յաճախութենէ անտի երևեսցի՝ի կինն։ Մեղանչէ երրորդ՝ եթէ չկամի կամ անփոյթ առնէ հայթայթել նմա զպէտս կերակրոյ, իմա յանիրաւի. զի կարող իսկ է զնանալ նմա զայն, եթէ նա առանց պատճառի մերկեսցի՝ի տանէ, կամ չնասցի։ Այլ միայն զօժիտ նորա չկարէ զրաւել առանց դատաստանի. այլ՝ի պահանջել զայն կնոջն, կարող է և ինքն պահանջել՝ի նմանէ զհաւատարմութիւն։

13. Իսկ կին մեղանչէ նախ՝ եթէ չհնազանդիցի արդար հրամանաց առն իւրոյ, մանաւանդ յամուսնական պարտս. և կամիցի իշխել՝ի տան, եթէ միայն չիցէ ապիկար կամ վատնող ոք այր իւր։ Երկրորդ՝ եթէ զհասարակաց ինչս ընդդէմ կամաց առն իւրոյ ծախիցէ առաւել քան զարժանն պայմանի իւրոյ. զայսմանէ ասացաւք՝ի տեղւն՝ի խօսելն զգողութենէ. (գլ. ժ. 32)։ Երրորդ՝ եթէ միաւսանգամ ամուսնացեալ՝ ոչ պահէ օրդւոց առաջնոյ առն իւրոյ զառ՝ի նմանէ ընկալեալ ժառանգութիւնն, որոյ պաղտն ևեթ է ինքն տէր։ Չորրորդ՝ եթէ առանց իրաւացի պատճառի չառնու յանձն գնալ զհետ առն իւրոյ, որ կամիցի անպատճառ իսկ յերկիրն օտար կալ ընդերկար։ Ի եթէ ընդ հուպ դառնալոյ իցէ, ոչ կինն պարտական է գնալոյ և ոչ այրն պարտի ածել զնա ընդ իւր՝ եթէ չկարիցէ առանց ծանր ծախուց։ Այլ և կինն ոչ է պարտական գնալոյ ընդ նմա, նախ՝ եթէ այնու դաշամբ իցէ ամուսնացեալ, և չիցէ՝ի միջի նոր ինչ և ծանր պատճառ անակնկալ։

Երկրորդ՝ եթէ առ չար ինչ կամիցի ածել զնա այր իւր։ Երրորդ՝ եթէ վտանգ մահու կամ ծանր ինչ պատուհաս նման յուղևորութենէն։ Չորրորդ՝ եթէ այրն Թափառական կամիցի շրջել։ Իսկ յաքսորել առնն՝ կէսք ի բարոյականաց օրէն համարին զնոքա չերթալ ընդ նը֊մա· բայց հաւանականագոյն և այլք պարտական զնա համարին զնալ ընդ առն իւրում։

ՅՕԴՈՒԱԾ Դ

ՊԱՐՏՔ ՀՈԳԵՒՈՐ ՀՈԳՈՒԱԾՈՑ

14· Սահմանն արիզենաեան Ժողովոյ վասն կալոյ նոցա ի վիճակի իւ֊րեանց։

15· Ժողովրդապետ որ կայ ի վիճակի իւրում առանց կատարելոյ ըզ֊պարտս իւր։

16· Բարեմտութիւն ոչ ազատ կացուցանէ զնա ի հատուցմանէ։

17· Հրաման եպիսկոպոսի։

18· Ո՞ւր պարտ էցէ կալ սրբազան Պատկն, կարգինալաց, եպիսկո֊պոսաց, և Ժողովրդապետաց։

19· Ազատ կացուցանեն զնոսա եղբայրսիրութիւն, հարկ, հնազան֊դութիւն և խոնարհութիւն։

20· Բաւական էցէ բանիւ աւետ կամ լռելեայն կամ վարկուցեալ հրա֊ման։

21· Եթէ գուցէ իրաւացի պատճառ բացակայութեան, այլ ոչ և հրա֊ման։

22· Պա՞րտ էցէ հատուցանել զամենայն հասս։

23· Ո՞ւմ հատուցանել։

24–27· Մատակարարութիւն սուրբ խորհրդոց։

28· Ի ժանտախտի։

29· Վասն որո՞ պարտին մատուցանել զպատարագ։

30–32· Պարտին յանգիմանել։

33· Պարտին արգելուլ անարժանից ձառնուլ զձև եկեղեցական, և չը֊տալ նոցա վկայական։

34· Պարտին հսկել, մանաւանդ ի վերայ զատկական հաղորդութեան, և արգելից պատկի։

35· 36· Քարոզ և քրիստոնէական վարդապետութիւն։

37–44· Որ ինչ կարևորագոյնք ի քարոզութիւն։

45· 46· Որ ինչ Ժողովրդապետի այլ պարտք, այսինքն բարի օրինակ, առընթերակայութիւն ի հոգևարս, ողորմութիւն, քննել զման֊կաբարձս վասն մկրտութեան։

14· Խաղաղապատիկ են պարտք Ժողովրդապետի, այլ զևսեւորագոյնսն յայնցանէ հինգ։ Ա· Կալ եկեղեցւոջ իւրում։ Բ· Մատակարարել զսուրբ խորհուրդս։ Գ·

Պատարագել վասն ժողովրդեան: Դ. Յանդիմանել: Ե. Վարժել և հրահանգել:

Ա. Յաղագս բնակութեան ժողովրդապետաց նախ առաջին գիտելի է որ ինչ՝ ըստ իմացուածոյ բարեյակատնաց առ Հասարակ՝ յայտ առնէ ժողովն տրիդենտեան, պարտ համարեալ նոցա և եպիսկոպոսաց յաստուածային իրաւանց կալ՝ի վիճակի իւրեանց, պարտականք եւ լավ հովուել զհօտ իւրեանց ոչ միայն մատակարարու-թեամբ խորհրդոց և աստուածային բանիւ՝ այլ և բարի օրինակաւ, զոր չէ մարթ առնել նոցա առանց կալոյ առ ժողովրդեան: Յայտ առնէ դարձեալ վասն եպիսկոպոսաց, զոր և վասն ժողովրդապետաց է իմանալ, մի մեկնել՝ի վիճակէ իւրեանց՝ բայց միայն վասն եղբայրսիրութեան, վասն հարկի, վասն հնազանդութեան, վասն յայտնապէս օգտի եկեղեցւոյ կամ հասարակաց, հրամանաւ Պապին կամ եպիսկոպոսապետին, յնամ կալեալ ըստ կարի՝ զի մի՝ի բացակայութենէ նոցա վնաս ինչ հասցէ հօտին: Յայց ներեալ է եպիսկոպոսաց վասն իրաւացի պատճառի զամիս երիս հեռի կալ՝ի վիճակէ իւրեանց առանց ինասու հօտին, որ՝ի խիղճ մտաց նոցա է ապաստան: Սակայն յորդորէ զնոսա ժողովրդին՝ կալ՝ի վիճակի իւրեանց՝ի քառասնորդս Ծննդեան և զատկի Հանդերձ տօնիւն, և՝ի Հոգեգալստեան: Սակ ժողովրդապետաց ոչ աւելի քան զամիս երկուս ներէ՝ի բաց կալ, բայց միայն վասն ծանր պատճառի. և յայնժամ պարտ է նոցա գրով ունել հրաման եպիսկոպոսէ: Եւ վասն երկուցն ևս ասնոց պարտ է նոցա ընդունել զհաճութիւն եպիսկոպոսին, ոչ միայն վասն բացակայութեանն՝ այլ և վասն փոխանորդին, զոր պարտ է նոցա միշտ կացուցանել՝ի մերկնելն իւրեանց: Յայտ առնէ դարձեալ և սահմանէ, զի հովիւք հոգևորք՝ որք՝ի բաց կան՝ի վիճակէ իւրեանց՝ ոչ միայն ծանր մեղանչեն, այլ և զհաստ հոգաբարձութեան իւրեանց ըստ ժամանակի բացակայութեանն կորուսանեն. և պարտ է նոցա հատուցանել զայն եկեղեցւոյն, կամ աղքատաց վիճակին:

15. Օգտաւոր քաջ՝ի միտ առեալ, ասեմք ընդ Նայն Ալ իւայ նախ՝ զի նմին մեղայ և հատուցման պարտապան գտանիմ հովիւք, որք թէպէտ կան յեկե-

ղեցիս իւրեանց՝ այլ ոչ ընուն զպարտս Հովուի ։ Ել միայն բնական օրինք զայս այսպէս յայտ առնեն, զի վասն հակողութեան ընտրհին վարձք Հովուաց և ոչ վասն անգործ կալոյ, այլ և ժողովն սուրբ յայնսպէս պարտս ՚ի վերայ նոցա դնէ պարապել պաշտաման իւրեանց ։ և Աղեքսիկտոս ՃԴ ՚ի կոնդակի իւրում ասէ ։ Ել է մերձակայութիւն ձշմարիտ, եթէ չիցէ տեսակաբար, այս ինքն կատարելով զպաշտօն Հովուի ։ Ի ման որոյ Պարպողա, Ալմատիկեանք և Ի ասգուէզ յայտարարութեամբ իւիք սրբոյ գահոն յուցանեն, զի ժողովրդապետ՝ որ երկամեայ ժամանակ ոչ կատարէ զկարևորագոյն գործս պաշտաման իւրոյ՝ այսինքն խօսել զբանն Ա՛ստուծոյ և մատակարարել զխորհուրդս, չհամարի կալ՚ի վիճակի իւրում ։

16 · Ա՛րկրորդ՝ զի ժողովրդապետ կամ եպիսկոպոս, որ ոչ կայ՚ի վիճակի իւրում, թէպէտ և բարեմտութեամբ համարելով ունել պատճառս իրաւացի, պարտապան է յետս դարձուցանելոյ զհասս պաշտաման ։ զի ոչ՚ի դրական ևեթ օրինաց պարտին կալ՚ի վիճակի իւրեանց, այլ և ՚ի բնական օրինաց վասն դաշինն՝ որ ընդ Հովիւն և ընդ եկեղեցի, որ վասն իսկ ընդունի ըզվարձան ։ զի ընդդէմ դաշինն գործէ բայակայութեամբն, թէպէտ և բարեմտութեամբ գործիցէ ։

17 · Ա՛րկրորդ՝ զի թէպէտ և ժողովն սուրբ պահանջէ զհրաման ևեթ եպիսկոպոսի առ՚ի կալ ժողովրդապետի հեռի ՚ի վիճակէ իւրմէ զամիս երկուս, սակայն չէ նման օրէն մեկնել անտի՝ ևս և երկամեայ ժամանակ և իրաւացի պատճառաւ՝ առանց հաճութեան եպիսկոպոսին ընդ պատճառն, և մանաւանդ ընդ փոխանորդն՝ զոր թողու նա ՚ի տեղի իւր ։ Ա՛յլ եթէ հարկ ինչ անակնկալ պատահեսցէ մեկնելոյ անյապաղ, մարթ է նման մեկնել սուղ ինչ ժամանակ, որպէս հաստատեն բարոյականք ըստ վճռոյ Հռովմէական ժողովոյն ։ Ա՛յլ պարտ է նման յայնժամ ծանուցանել եպիսկոպոսին զմեկնել իւր, զի եթէ հարկ լիցի նման յամել՚ի բացեայ՝ հրամանաւ եպիսկոպոսին յամեսցէ · իսկ եթէ չիցէ հարկ, և՚ի վաղիւ անդր կամ՚ի միւս վաղուին դառնալոյ իցէ, չիք ինչ պարտ ծանուցանելոյ, զի դոյն ինչ ըստ հասարակաց կարծեաց բարոյականաց համարի ։ Ա՛մենք հա-

մարին դուշնաքեայ լինէ և զեօթնեակ մի, ոչ սակաւք և զերկուս, իմա կացուցանելով միշտ զոք փոխանորդ. այլ ՚ի ժողովն՝ որ եղև ՚ի Հռոմ առ Ղենեդիկտեաս ԺԴ. արգելաւ ժողովրդապետաց մի ինչ աւելի քան զաւուրս երկուս յամել ՚ի բացեայ անհրաման յեպիսկոպոսէ կամ ՚ի փոխանորդէ նորին։

18. Իսկ յաղագս տեղւոյ քնակութեան հովուաց և հովուապետաց յայտ է, զի Պապին և կարդինալաց բնակութիւն է ՚ի Հռոմ։ Իսկ եպիսկոպոսաց համարին ոմանք զաթոռանիստ եկեղեցի, այլ ժողովն տրիդենտեան սահմանէ նոցա կալ յաթոռ էպիսկոպոսութեան կամ ՚ի ընդ. զնոյն և Ղենեդիկտոս ԺԴ յայտ առնէ ՚ի կոնդակի իւրում։ Ժողովրդապետին տեղի քնակութեան է եկեղեցատունն. և առ ՚ի չգոյէ եկեղեցատան, յորմէ և իցէ տան՝ որ իցէ բարոյապէս ՚ի վիճակի իւրում, ուստի դիւրին իցէ նմա գնալ յեկեղեցի իւր ՚ի մատակարարութիւն խորհրդոց, և ուր ժողովուրդն դիւրաւ կարիցէ դիմել առ նա։ Ո՛ւ ասն որոյ ոչ ըստ բաւականին համարի կալ ժողովրդապետ ՚ի վիճակի իւրում, եթէ անդ իսկ քնակէ ՚ի տեղւոջ՝ ուր չիցէ դիւրին ժողովրդեան դիմել առ նա. իսկ որ երկու մղոնիւ չափ հեռի ՚ի վիճակէ իւրմէ քնակէ, չհամարի կալ ՚ի վիճակի իւրում ըստ Պոնաչինայ և ըստ Ալմանտիկեանց։

19. Վառեակ պատճառս սահմանէ ժողովն տրիդենտեան մեկնելոյ հովուաց ՚ի վիճակէ իւրեանց։ Ա՛ռաջինն՝ եղբայրսիրութիւն. այսինքն յորժամ պէտք իցեն հովուի գնալ այլուր առ ՚ի ցածուցանել զթշնամութիւնս ծանուցանս, մանաւանդ հզօրաց, և ազատել զեկեղեցի ՚ի հերձուածոյ և յեղեռանէ։ Երկրորդ՝ յորժամ վտանգ նախու ՚ի վերայ կայցէ հովուի. և մանաւանդ ժողովրդապետաց հրաման իսկ է ՚ի սրբոյ գահէն կարել վասն այսր վտանգի ՚ի բաց կալ և զամիսս վեց՝ կացուցանելով իւրեանց փոխանորդ հրամանաւ եպիսկոպոսի, որ ըստ օրէնն է յերկարաձգել ևս զբացակայութիւն նոցա ցամ մի. այլ յետ այնորիկ պարտ է նոցա հրաժարել ՚ի ժողովրդապետութենէ։ Ա՛յլ վտանգ ոչ զհասարակացն է իմանալ, որպէս ասեն բարոյականք և ինքն իսկ սուրբ ժողովն տրիդենտեան սահմանադրութեանց ասանդապահ յայտ առնէ, այս ինքն զպաճուճութեան կամ

զարշաւանաց Թշնամեաց և այլն, այլ պարտ է իմանալ զառանձնական վտանգ ժողովրդապետին կամ եպիսկոպոսի՝ի Թշնամեաց իւրեանց կամ՝ի միաբանակարուԹենէ օդոց վասն խօԹուԹեան իւրեանց: Կայց եԹէ անբաժշկելի իցէ խօԹուԹիւն նոցա, և բացակայուԹիւն նոցա միաբանակար հօտին, պարտ է նոցա կամ հրաժարել՝ի հոգաբարձուԹենէ և կամ ղվտանգ յանձն առնուլ: Յորորդ՝ հնազանդուԹիւն՝է պարտուց. այս ինքն յորժամ ժողովրդապետն կամ եպիսկոպոս՝ի բաց կայ՝ի վիճակէ իւրմէ վասն հրամանի Պապին կամ Թեմական եպիսկոպոսի, յօգուտ եկեղեցւոյ կամ հասարակաց և կամ վասն այլ ինչ ծանր պատճառի. բայց վասն ընդհարկար բացակայուԹեան ինդրի հարկ օգտի հասարակաց: Լու գիտելի է ոլ չէ օրէն եպիսկոպոսի փոխանորդ առ իւր ունել կամ այցելու զմի՝ի ժողովրդապետաց, որպէս նոյն ինքն սուրբ ժողովն յայտ արար, եԹէ չիցէ հարկ ինչ յոյժ դժուարադիպ չկարելոյ այլոց ուրուք ընուլ զտեղի նորա: Յորորդ՝ յայնմ օգտակարուԹիւն եկեղեցւոյ կամ հասարակաց. այս ինքն յորժամ հարկ իցէ հովուելն գնալ՝ի ժողով, կամ պաշտպանել անձին կամ իւրոցն կամ եկեղեցւոյն յարքունիս՝է կարևոր իրս, որպէս ասեն ՅոԹոյ, Պոնաչինա, Ասգուէդ, Ռոնքիլեա, և Ասլմատիկեանք ըստ վճռոյ ՅոԹային Հռովմէական ատենին: Կ՚ելլ զայս իմա հրամանաւ, և առ՝ի չգոյէ այլոյ՝ որ կարիցէ ընուլ զտեղի նորա:

20. Կաւականն իցէ ժողովրդապետի բանիւ ևեԹ ընդունել հրաման եպիսկոպոսէ առ՝ի մեկնել՝ի վիճակէն: — Եսիոյ և այլք ոմանք բաւական համարին. զի գրաւոր հրաման վասն ատենի ինդրի, և ոչ վասն վաւերականուԹեան: Ասլ իւա և Ազբուա համարին հաւանական զայս կարծիս, և այլք զլռելեայն ևս հրաման եպիսկոպոսին շատ համարին:

21. Ժողովրդապետ կամ եպիսկոպոս, որ անհրաման այլ իրաւացի պատճառաւ հեռի՝է վիճակէ իւրմէ կայցէ, պարտի հրաժարել՝է հասից: — Ոայրն Ասլ իւա համարի ժողովրդապետին ընդդէմ գրական ևեԹ իրաւանց մեղանչել այնուիկ, այլ ոչ և ընդդէմ բնական իրաւանց. ուստի զՀետ բերե զի չէ պարտ նմա հրաժարել՝է հասից, բայց միայն՝է դատապարտելոյն:

Ա՛յլ այս ոչ Թուի հաւանական, որովհետև ժողովն արիզենտեան սահմանէ ժողովրդապետաց ընդունել զհաւանութիւն եպիսկոպոսին ոչ միայն վասն պատճառի բացակայութեանն, այլ և վասն փոխանորդին՝ զոր ի տեղի իւր կացուցանէ։ Այս գործեալ զի վասն եպիսկոպոսաց յայտ առնէ Ռենեդիկտոս ԺԴ. օրինազանցս գոլ, որք միանգամ ի բաց կան ի վիճակէ իւրեանց առեալ ոճն զպահս երիս առանձին երաւոցն պարտական և առանձին յայնմէ հրամանէ Պաւլին։ Անաւանդ զի ըստ սահմանի արիզենտեան ժողովոյն և ըստ կոնդակին Ռենեդիկտեայ՝ օրինազանցք ոչ միայն յետս պարտին դարձուցանել զընկալեալ հաստ, այլ և ոչ ստանալ զայնս։ Ասի Թուի թէ ըստ գրական իսկ օրինաց պարտ իցէ նոցա հրաժարել ի հասից. զի ի Թողուլ անհրամանն զվիճակ իւրեանց՝ ոչ ստանան զայնս, և չէն նոցա այնք։ Այս ամենայն գէթ երկբայելի առնէ՝ զիրաւունս հովուաց յայսպիսի դէպս. և ոչ ումեք օրէն է երկբայելի իրաւամբք տէր գոլ իրիք, որպէս ասացուք ի ստորև ի Ճառս գաշանց (գլ. ժ. 42)։ Այլ ներելի է ժողովրդապետի՝ որ վասն յայտնապէս իրաւացի պատճառի ի բաց մեկնեալ՝ Թողու ի տեղի իւր հոգաբարձու, ընդ որ վաղ իսկ յայլ նուագս լեալ իցէ հաւանութիւն եպիսկոպոսին։

22. Պարտ իցէ հովուի ի հեռանալն ի վիճակէ իւրմէ անհրամանն՝ հրաժարել յամենայն հասից ըստ աւուրց բացակայութեան իւրոյ։ — Հաւանականաբար և ըստ հասարակաց կարծեաց աստուածաբանից պարտի հրաժարել ի մնանել նեթ հասից՝ որ վասն յարակայութեանն ի վիճակի իւրում սահմանեալ է, և ոչ յայլոց մնասանց՝ որ վասն ժամակարգութեան և պատարագի և այլն. զի սրբոյ ժողովոյն ոչ ինչ ընդ հակառակն սահմանելոյ կան մնան բնական իրաւունք, զի որ կատարէ զպարտս այլոց մնասանց պաշտամանն՝ ընկալցի զվարձ այնոցիկ։

23. Ո՞ւմ պարտ իցէ հատուցանել զհասս, յորոց զրկի հովիւ բացակայութեամբն։ — Ա՛յլք ի ժառանգաւորաց վերջացեալք ի ժամերգութենէ կարեն բաշխել զայնս որոց և իցէ աղքատաց, կամ հատուցանել եկեղեցւոյն. այլ հովիւք բացակայք, ըստ սահմանելոյ

տրիդենտեան ժողովոյն, պարտին հատուցանել կամ ե-
կեղեցւոյն և կամ աղքատաց տեղւոյն. և ոչ է օրէն
վասն ննջեցելոյ տեղւոյն պատարագս կամ այլ նպաստս
մատուցանել, զի ննջեցեալք ոչ ևս այնր տեղւոյ համա-
րին։ Այլ Տէրն Աստուած և Քրիստոս օրէն համարին
ժողովրդապետի ունել իւր զոյնս, եթէ իցէ աղքատ.
բայց միայն եթէ չիցէ այնու մտօք՝ անձամբ անձին հա-
տուցանելոյ՝ հեռացեալ՚ի վիճակէ իւրմէ. զի նենգու-
թեան չէ և չէ պարտ օժանդակել ումեք։

24. Բ. Պարտ է ժողովրդապետաց և հոգաբար-
ձուաց իւրովին մատակարարել զնորհուրդս։ Ո՛չ խոս-
տովանութիւն ոչ միայն յաւուրս զատկական պատուի-
րանի և՚ի ծանր հարկի պարտի ժողովրդապետն լսել,
այլ և յամենայն ժամանակի՝ յորժամ դիմեն առ նա
ապաշխարողք, և ս և առ ջերմեռանդութեան. եթէ ոչ
տարաժամ ոք կամ կարի յաճախ գայցէ՚ի խոստովա-
նութիւն, և կամ թէ իցեն անդ այլ խոստովանահարք,
թէ և ոչ ինքն՚ի կարևորս պարագայ։ Այսոքա որոց ա-
սեն Աքրուա, Սոպաթոյ, Քոնչինա, և Ալմայի-
կեանք, մեղանչել ժողովրդապետի՝ որ դանդաղի և դը-
ժուարի լսել զխոստովանութիւն, մինաւանդ կոչեցեալ
՚ի հիւանդաց։ Այլ հաւանական է, որպէս ասեն
Սուարէզ, Աքրուա և Ղրիակա, ոչ ծանր մեղանչել
ժողովրդապետի՝ որ միանգամ կամ երկիցս վերջանայցէ
՚ի պարտուց աստի, եթէ միայն չիցէ վասն կարևոր
հարկի, կամ՚ի յոբելէնի, և կամ՚ի հանդիսաւոր տո-
նի։ Իսկ եթէ իցէ ժողովրդապետին օգնական հոգա-
բարձու հաստատեալ եպիսկոպոսէ, ոչ այնպէս խստիւ
պարտական է նա լսելոյ իւրովի զխոստովանութիւն։
Այլ պարտ է նմա գիտել հաւաստեաւ զբաւականու-
թիւն հոգաբարձուին ըստ գիտութեան և ըստ բարի
վարուց. ապա թէ ոչ, ինքն տալոց է համար յատենին
Աստուծոյ զամենայն վնասուց՝ որ՚ի տգիտութենէ և
յանբարի գնացից նորա հասցեն ժողովրդեան։ Այլ
միշտ իսկ իցէ յօգուտ՝ հրաւիրել երբեք երբեք խոս-
տովանահարս օտարս վասն ամբոխաժից, մինաւանդ
եթէ չգայցէ անդր քարոզիչ՚ի քառասնորդս։

25. Պարտ է ժողովրդապետի մատակարարել և ըն-
ծաղորդութիւն որոց խնդրենն. զի ոչ միայն՚ի պահպա-

նուիրեալն պատուիրանաց պարտի խնամել զորդիս իւր, այլ և յամենայնի՝ որ իցէն նոցա՝ի շահ հոգեկան։ Իսկ յաղագս վերջնին Թոշակի, Թէ երբ մարթ իցէ և պարտ տալ հիւանդաց, ասասցուք՝ի տօրէն յաղագս այցելութեան՝ի հոգեւարս։

26. Պարտ է ժողովրդապետի խնամ ունել և հաղորդութեան մանկտւոյ՝ի հասանել նոցա՝ի տիս սովորաբար տանն ամաց, կամ մինչև ցերկոտասան։ Նաղուստ այն է զի ժողովրդապետք առ՝ի խոյս տալ յաշխատութենէ ուսուցանելոյ մանկտւոյն զկարևորս յընդունելութիւն հաղորդութեան, յամեցուցանեն զհաղորդութիւն նոցա՝ անբաւական զիս նոցա համարելով։

27. Պարտ է ժողովրդապետաց մատակարարել և զօծումն վերջնին, և եթէ կոչեցեալ ոք և անիսպառ առցէ գնալ, մահուաւքն մեղանչէ։ Յուշ լիցի նոցա որ ինչ հռովմէական հրահանգն քրիստոնէական վարդապետութեան ազդ առնէ. "Անանուն մեղանչեն որք վասն օծանելոյ զհիւանդս սովոր են մնալ կորուսանելոյ նոցա զամենայն յոյս բժշկութեան, և սկսանելոյ պակասել՝ի կենաց և՝ի զգայութենէ։"

28. Ի ժամանակի ևս սրածութեան, հասարակաց կարծիք բարեյականաց պարտ համարին ժողովրդապետի կալ մնալ՝ի ժողովրդեան, և սուրբ Գրիգորիոս ասէ. "Ի պահանջել փրկութեան ժողովրդեան զմերձակայութիւն հովուին, ոչ է պարտ հովուի լքանել զհօտն վասն մօտալուտ վտանգի։" Եւ Թէպետ՝ի բաց առնու սուրբ վարդապետն զդէպս, յորում մարթ իցէ հովուի խնամել զհօտն՝ի ձեռն այլոց, այլ ոչ զժամանակէ ժանտախտի են բանք։ Իսկ Կրիգոր ԺԳ. պարտ՝ի վերայ դնէ ժողովրդապետաց կալ մնալ՝ի ժողովրդեան յաւուրս ժանտախտի. և եպիսկոպոսաց իսկ կալ՝ի վիճակի իւրեանց, այլ կարել յապահովագոյն վայրս Թեմի իւրեանց զկայ առնուլ, և անտի խնամել զպետս ժողովրդեան։

Իսկ յաղագս մատակարարելոյ յայնժամ զխորհուրդս, նոյն սուրբ ժողովն աւանդապահ տրիդենտեան սահմանադրութեանց սահմանէ այսպէս. "Պարտ է ժողովրդապետի՝ի ժամանակի սրածութեան զխորհուրդս կարևորս եթէ՝ի փրկութիւն մատակարարել իւրում ժո-

զովըդեան, այսինքն զմկրտութիւն և զապաշխարու-
թիւն,,: Որով աղատ կացուցանէ զնոսա 'ի պարտուց
հաղորդելոյ և օծանելոյ զըմբռնեալսն 'ի ժանտախտէ:
Պ'անաւանդ զի և յաւելու կարել ևս ժողովրդապետաց
'ի ձեռն այլոց մատակարարել զմկրտութիւն և զապաշ-
խարութիւն, պահելով ինքեանց զնոստովանութիւն
ողջոց՝ զի մի խուսեսցեն յերեսաց իւրեանց վասն ելի և
մտի նոցա առ ախտացեալս: Պ'այլ եթէ յախտացելոց
անտի ոք անդրդայեալ՝ 'ի բաղմաց հետէ չիցէ խոստով-
նեալ, և ժողովրդապետն հաւանականաբար դատեսցի
զնա 'ի մահացու մեղս, պարտական է յայնժամ և ևս
վտանգաւ կենաց իւրոց տալ նմա զվերջին օծումն:

29. Դ. Պ'ողովրդապետք և Հոգաբարձուք երիցունք
և կրօնաւորք, ևս առաւել եպիսկոպոսունք, պարտին
աղօթել և պատարագել, ոչ միայն 'ի լուր ժողովըր-
դեան՝ այլ և վասն նորա յամենայն կիւրակէս և 'ի
տօնս, որպէս սահմանեաց Պ'ենեդիկտոս ԺԴ, Թէպէտ
և չիցեն նոցա հասք ըստ պատշաճի, Թէպէտ և հակա-
ռակ սովորութիւն յանյիշատակ ժամանակաց ունիցի
ուրեք տեղի: Ի վախճանել իսկ ժողովրդապետի մինչև
ցընտրութիւն յաջորդին՝ նոյն ինքն իշխանութիւն ետ
եպիսկոպոսաց տալ Հոգաբարձուին մասն ինչ 'ի ժողո-
վըրդապետական հասից, որպէս զի կարասցէ 'ի տօնս պա-
տարագել վասն ժողովրդեան: Պ'իայն հրաման ետ ե-
պիսկոպոսաց տնօրինել ժողովրդապետի՝ որոյ չիցէ այլ
ապրուստ՝ ընդունելոյ պատարագիս 'ի տօնս, բայց կա-
տարելով ապա զպարտս իւրեանց 'ի լուր աւուրս: Իսկ
ընդ հակառակն ըստ սահմանելոյ նորին Պ'ահանայա-
պետի՝ ժողովրդապետք չեն պարտական յաւուրս ար-
գոյս պատարագել վասն ժողովրդեան, Թէպէտ և իցեն
նոցա հասք բաղումք: Պ'այն ինքն սահմանեաց մատու-
ցանել վասն բարերարաց այնր եկեղեցւոյ զՀանապազօ-
րեայ միաբանական պատարագն երգեալ յաւխատ եկե-
ղեցւոյն:

30. Դ. Պ'ողովրդապետք, ևս առաւել եպիսկոպո-
սունք, վտանգաւ իսկ կենաց իւրեանց պարտին յանդի-
մանել զայնոսիկ 'ի ժողովրդենէ, որք 'ի մահացու մեղս
անկեալ կան կամ 'ի մերձաւոր վտանգի անկանելոյ. ոչ
միայն 'ի վերջին կարօտութեան նոցա, այլ և 'ի ծանու-

եթէ միայն կայցէ յոյս ուղղութեան։ Եւ պարտին զայս ոչ միայն ՚ի սիրոյ, այլ և յարդարութենէ, զի վասն այսորիկ վայելէն ՚ի հասս՝ առ ՚ի խափանելոյ ըստ կարի զչարիս ժողովրդեան. վասն որոյ ՚ի վերջանալ ՚ի պարտուց աստի արդարութեան ՚ի ծանր ինչ իրս, պարտին և ՚ի հասից հրաժարել։

31. Ի գալ գայթակղութեան յումեքէ յաւագաց անտի՝ որում ժողովրդապետն չկոյր ձեռնհաս հնարս հայթայթել, պարտի ազգ առնել եպիսկոպոսին ՚ի դարմանն չարեացն։ Եւ եթէ երբեք եպիսկոպոսն անփոյթ արասցէ, պարտ է ժողովրդապետին դիմել ՚ի քաղաքական ատեան՝ եթէ յանցաւորն իցէ աշխարհիկ, կամ այլ ինչ ելի աղագս գտանել, և մի առ երկիւղի կամ ակնածութեան անդործ կալ։ Օ ի տերութեան է հրամանն, դնել հովուի զկեանս իւր ՚ի վերայ ոչխարաց։ Եթէ անկարգութիւնք ոչ գուշնաքեայք իցեն ՚ի վիճակին, որոց դժուարին կամ անհնարին իցէ դարման, պարտ է ժողովրդապետին կրթիչս հոգևորս հրաւիրել անգը, որպէս ժողովրդապետք հոգեսէրք յամենայն իսկ ՚ի հնգեակ ամի առնեն։ Իսկ ՚ի սպառել հնարից, թէպէտ և դադարեն պարտք յանդիմանութեան ուր չիցէ յոյս օգտի, սակայն ոչ է պարտ ժողովրդապետի լռել, այլ երբեք երբեք յանդիմանել վերըստին զյամառեալսն ՚ի մեղս, գէթ յորժամ չիցէ վտանգ ծանր ինչ ՚ի վնասու. զի յանդիմանութիւնն այն գէթ օգնեսցէ նմա առաջի այլոց, զի մի համարիցին ՚ի քուն կալ հովուին՝ ՚ի հանապազորդել գայթակղութեանն. օգնեսցէ և ՚ի զգուշութիւն այլոց՝ չառնուլ օրինակ չարեաց ՚ի տեսանել զյանցաւորն անկշտամբելի։

32. Ոչ միայն խափանել պարտ է ժողովրդապետի զմեղս և զգայթակղութիւնս՝ որ կան, այլ և զառաջս առնուլ զայնց՝ որոց մարթ է գալ։ Պարտ է նմա արգելուլ մանաւանդ խօսնարանց չյաձախել առ խօսեցեալս իւրեանց. զի թէպէտ և ՚ի սկզբան անդ ոչ առ չար ինչ սկսանին այցելութիւնք, այլ ՚ի փոքուոյ վկայեալ գրեթէ միշտ յանկին ՚ի մեղս, և զծնօղս երկաքանչիւրոցն առնեն մեղսակիցս՝ վասն ներելոյ նոցա յաձախել առ իրեարս։ Ոյ սան որոյ պարտ է ժողովրդապետի զամենայն դուն գործել առ ՚ի խափանելոյ զկործանումն երկաքան-

չիւրոց տանց, որ տեւէ մինչև ցՀարսանիս, մանաւանդ յետ տալոյ զնշանն. սմին իրի մի փութասցի ժողովրդապետն առնել զՀարսնախօսութիւն. զի՝ի փորձ վըկայեալ, ՚ի Հարսնախօսութենէ ցՀարսանիս՝ ժամանակ է մեղայ։

33. Պարձեալ պարտ է ժողովրդապետի աղդ առնել եպիսկոպոսին չտալ զձև եկեղեցական այնոցիկ՚ի պատահեալ՝ որոց վարք չիցեն՚ի շինութիւն այլոց, և ոչ բերեն յանձին բարս եկեղեցականս։ Օ՚ի՚ի լռել նորա եթէ առնուցուն նոքա միանդամ զձև եկեղեցական, ամենի Համարելով ապա մերկանալ զայն՝ Հանդերձ անարժան վարուքն գուն գործեն առնուլ զկարգ, և լինին՚ի կործանումն ժողովրդեան. և զոր յառաջագոյն մարթի էր ժողովրդապետին խափանել, յետ այնորիկ լիցի անկնարին։ Իսկ զայնոսիկ, որոց առեալ իցէ զձև եկեղեցական, գեթ ջանասցի խրատել և ուղղել՚ի Հոգևոր կեանս, որպէս զի լիցին բարի եկեղեցականք։ Այլ զոր Համար տալոց են ժողովրդապետք՝ որք վկայութիւն բարի տան անարժանից. զի ինքեանք գտանին պարտաւորք, ոչ նոցին և եթէ մեղայ, այլ և որոց պատճառք լինին նոքա մեղանչելոյ, որովհետև եպիսկոպոսունք ըստ վկայութեան նոցա առնեն զձեռնադրութիւն։

34. Պարտ է ժողովրդապետի ոչ միայն յանդիմանել և խափանել զմեղս և զգայթակղութիւնս՝ զորս տեսանէ, այլ և հետաքննել՝ եթէ իցէ՞ որ յոչխարաց իւրոց մոլորեալ, և խնդրել զնա. զայս այսպէս ուսուցանեն Կայեթանոյ, Այման, Սոթոյ, Ալմատիկեանք, և գրեթէ առ Հասարակ ամենայն բարոյականք։ Պարտ է նմա Հսկել մանաւանդ, զի ամենեքին կատարեսցեն զպատուիրանն զատկական. և եթէ գտցի որ վերջացեալ յայնմանէ, պարտ է ժողովրդապետին խրատել և յանդիմանել զնա. և՚ի ստուգանալ յանցուցելոյն՝ ծանուցանել եպիսկոպոսին ձեռնարկել՚ի բանադրանս։ Այն՚ի ժողովրդապետաց որք ընդ ոտիկին առնեն զայս, այլ ընդ աւագս աչառութեամբ վարեալ՝ անտես առնեն։ Այլ դարձեալ պարտ է նմա փոյթ և խնամ ունել՚ի Հարսնախօսութիւնս, զի մի արգել լինի՚ի միջի կայցէ. և եթէ կայցէ, աղդ առնել եպիսկոպոսին, և մի առանց նորին Հրամանի պսակել զայնպիսիս։ Այ

եթէ եպիսկոպոսն գիտիցէ հաւատեաւ արգել ինչ գաղտնի, թէպէտ և առանձինն գիտութեամբ՝ զոր չիցէ մարթ ցուցանել, պարտի արգելուլ զհարսանիսն։

35. Ե. Պարտ է զարձեալ ժողովրդապետի հրահանգել և քարոզել։ Նա մասին հրահանգաց պարտ է նմա ուսուցանել իւրոցն զհոգհուրդս հաւատոյ և վկաբևորս փրկութեան, այսինքն Ա. զմի Աստուած ամենակալ, ամենիմաստ, արարիչ և տէր ամենայնի, ողորմած և սիրելի՝ի վեր քան զամենայն, և մանաւանդ արդար վարձահատոյց բարեաց և պատուհասող չարաց. և սա և զհոգհուրդ ամենասուրբ Երրորդութեան, զմարդեղութեան, և զմահուանն Քրիստոսի։ Բ. Զմկրտութիւն, զՀաղորդութիւն, զապաշխարութիւն, և զայլ հոգհուրդս՝ գիթ՝ի ժամանակի ընդունելութեան, և զպատարաստութիւնս կարևորս յընդունելութիւն նոցին։ Գ. Զմասնս Հանգանակին, մանաւանդ զմիշտ կուսութիւն Տիրամօրն, զհամբարձումն Քրիստոսի և զնստել ընդ աջմէ Հօր, այսինքն զի է նա յերկինս հաւասար Հօր, զյարութիւն մարմնոյ՝ի վերջին դատաստանի՝ զոր առնելոց է Քրիստոս, զմիութիւն եկեղեցւոյ, և զի՝ի կաթուղիկէ հաւատակեան եկեղեցւոջ և եթէ է փրկութիւն, զյաւիտենականութիւն արքայութեան և զժոխոց, զորս առ հասարակ ընդ ծանր պատուիրանս պարտ է ամենայն ումեք գիտել։ Դ. Զտասնաբանեայ և զեկեղեցական պատուիրանս։ Ե. Զտերունական աղօթս, զողջոյնն հրեշտակային, և զներդծութիւնս հաւատոյ, յուսոյ, սիրոյ, և զղջման։ Երդ որպէս որ անփոյթ առնէ գիտել զայսոսիկ և խմանալ՝ ծանր մեղանչէ, նոյնպէս և ժողովրդապետին ծանր մեղք են ըստ հասարակաց վարդապետութեան առաքելաբանից՝ եթէ անփոյթ առնէ ուսուցանել զայսոսիկ իւրոցն անձամբ, և եթէ արդարև խափան ինչ իցէ նմա՝ որպէս ժողովէ տրիդենտեան սահմանէ, ուսուցանել՝ի ձեռն այլոց պատկանաւոր ուսուցչաց։ Վասն որոյ եթէ ծնօղք և տեարք ոչ յղեն զորդիս իւրեանց կամ զսպասաւորս՝ի քրիստոնէական վարդապետութիւն, պարտ է ժողովրդապետի զկարևոր հնարս՝ի մէջ առնուլ ընդ եպիսկոպոսին՝ որում՝ի նոյն ժողովոյ տուեալ է իշխանութիւն ստիպելոյ զնոսա և և բանա-

դրանօք ։ Յորովհետեւ փոյթք՝ի ընուլ զպարտս իւրեանց՝ ոչնին զգուշակ մանկտւոյ առ՝ի գիտել թէ ոյք ոմանք պակասեն՝ի լուր և՝ի վարժս քրիստոնէական վարդապետութեան ։ Եպրուա յաւելու ևս զի եթէ գուցեն տգէտք՝ որ չկարեն գնալ յեկեղեցի վասն չկարելոյ թողուլ զպահպանութիւն տան կամ զՀօտի, և իցէ նոցա ծանր կարօտութիւն հոգևոր, պարտ է ժողովրդապետի գնալ ուսուցանել զնոսա, զամենայն աշխատութիւն յանձն առեալ։ Իսկ եթէ կարի դժուարին իցէ այս վասն բազմութեան այսպիսեաց, պարտ է նմա գնել՝ի Յատկի կամ՝ի գալ նոցա՝ի խնդիր վկայութեան զրօշմի կամ վասն պակկի, յայնժամ քննել զնոսա և ուսուցանել ։ Զգնէ և զվարժապետս արս և կանայս քննել, զի կարող իցեն ուսուցանել ուստերայց և դստերաց զքրիստոնէական վարդապետութիւն և զկարևորս երկիւղիւն Աստուծոյ կենցաղավարելոյ ։

36. Իսկ ըստ մասին քարոզութեան պարտ է ժողովրդապետի յամենայն կիւրակէս խօսել զբանն Աստուծոյ առ ժողովուրդն, ըստ սահմանելոյ տրիդենտեան ժողովոյն. զորմէ տես որ ինչ՝ի վեր անդր ասացաք. (գլ. Զ. 5)։ Այլ գիտելի է զի ժողովն սուրբ հրամայէ ժողովրդապետաց ոչ միայն խօսել զբանն Աստուծոյ, այլ և խօսել ըստ բաւականութեան ժողովրդեան դիւրիմաց. զի հաւատք որպէս ծաւալի, նոյնպէս և պահպանի քարոզութեամբ. վասն որոյ սակաւ օգնեն ժողովրդեան ձառք՝ որ ոչ ըստ եղանակի քանից փրկչին և սրբոց առաքելոց նորա իցեն, որք ոչ ճարտարութեամբ բանէին քարոզելոյն, ոչ պատիր բանից՝ իմաստութեան, այլ արդեամբ՝ Հոգւոյն և զօրութեամբ. ոչ երբէք մարդկեղէն ուսմամբ՝ ճարտարութեամբ բանից, այլ վարդապետութեամբ Հոգւոյն, որպէս ասէ առաքեալն ։ Վասն որոյ Հայրն Աւիլա մանկիչ Քրիստոսի կոչէ զայնոսիկ, որք մնափառութեամբն քարոզեն. և Հայրն Գասպար Հալածիչս եկեղեցւոյ, զի այնպիսի քարոզութեամբն խափանեն զժողովուրդն՝ի լոյս առաքելական քարոզութեանց՝ որ բովք պատրաստի նմա փրկութիւն ։

37. Պարտ է ժողովրդապետի զկարևորսդ յաճախել զպարտս իւր. և նախ՝ զի յուղղութիւն վարուց ոչ է բաւական առաջադրութիւն փախչելոյ՝ի մեղաց,

պալ փախչել՝ի վտանգէ ևս մեղայ։ Երկրորդ՝ զի մի աղք երթիցեն՝ի գինետունս, ուր բայ՝ի վտանգի ապ-
բեցուԹեան՝ հայհոյուԹիւնք, կապ, գայԹակղուԹիւն, խեղկատակուԹիւն, և կործանումն ընտանեաց պատա-
հեն ստէպ։ Երրորդ՝ զի մի անպարկեշտս խօսիցին, մա-
նաւանդ՝ի լուր ուսաերաց և դստերաց՝ որոց յաձախ յայսպիսեաց խօսից ապականին բարք։ Չորրորդ՝ զի
սոսկալի մեղք են ծածկել ինչ ծանր առ ամԹոյ՝ի խոստովանուԹեան, և զի չարաչար լինի վախճան՝ ո-
րոց հաղորդինն այնպիսի անօրէնուԹեամբ։

38. Պարտ է դարձեալ ժողովրդապետի ցուցանել ստէպ՝ ԹէԹ քանի՛ կարևոր է զղջումն և առաջադրու-
ԹիւնՀ՝ի խոստովանուԹեան, ևս և զներելի մեղաց, և յորդորել զի մի՛ ոք ընկալցի արձակումն առանց զղջա-
նալոյ՝ի սրտէ գէԹ ընդ մի ինչ՝ի խոստովանելոյն նե-
րելեաց, կամ առանց վերստին խոստովանելոյ ինչ յա-
ռաջնոց մեղացն՝ ընդ որ ՀՀմարտապէս զղջանայցէ, առ
՝ի վաւերականուԹիւն խոստովանուԹեանն։ Եւ քան-
զի ոմանքն տխմար անգիտանայ՝ ԹէԹ որպիսի՛ ինչ պարտ
իցէ գոլ զղջման, ցուցցէ նոցա ժողովրդապետն և ստէպ բացատրեսցէ, զի՝ի վաւերականուԹիւն խոստովանու-
ԹեանՀ պարտ է ապաշխարողի, ԹէպէԹ կատարեալ և ԹէԹ անկատար իցէ զղջումն նորա, առել զմեղս, և գար-
շել անտի քան յայլ ամենայն չարեաց։

39. Յորդորեսցէ դարձեալ զսովորեալս յանէծ և՝ի հայհոյուԹիւն, զի՝ի սրտմտել իւրեանց ուսցին փոխա-
նակ այնց՝ ասել. Ինէծեալ մեղ. Երվէ սատանայէ. Տէր ո-
ղորմեա. Տուր ինչ համբերուԹիւն Տէրոմայդ, և այլ այսպի-
սի բանս։ Զգուշացուսցէ դարձեալ զնանրահաւատս
՝ի սնապաշտուԹեանց՝ որովք վարկին՝ի բժշկուԹիւն
ախտից, ՝ի գիւտ գողոնից, և այլն։ Սրատեսցէ զծնօղս՝
պատժել զորդիս իւրեանց, մանաւանդ՝ի մանկուԹե-
նէ, եԹէ անպատեհս ինչ բարբառիցին կամ հայհոյի-
ցեն կամ գողանայցեն և այլն. զգուշանալ նոցա՝ի չար
ընկերաց և՝ի յաձախելոյ ընդ պլասեռս. մի առ իւ-
րեանս ունել յանկողնի զորգեակս, վասն վտանգի մա-
նուանցն հեղձամղձուկս լինելոյ, և զարգացելոյ վեցա-
մեայց՝ գայԹակղելոյ. և մանաւանդ մի զուստերս և զդ-
դստերս ունել՝ի միում անկողնի։

40. Յորդորեսցէ միշտ զիւրան՝ ՚ի փորձութիւնս իւրեանց, մանաւանդ ՚ի մարմնականս, կարգալ զանուն Յիսուսի և զԱրիամոս, որ հզօր ընդդէմ փորձութեանց է դեղ. և յանկանել իւրեանց ՚ի ծանր ինչ մեղս՝ ղղջալ իսկ և իսկ առ ՚ի դառնալ ՚ի հնորհս Աստուծոյ, հանդերձ առաջադրութեամբ վաղագոյն խոստովանելոյ զայն. և բարձեալ ՚ի մտաց նոցա զպատրանս դիւին՝ հաւատարապէս ներելոյ Աստուծոյ զմի և զբազում մեղս, զի կարող է Աստուած ինալ դարձի նոցա յառաջնումն և յերկրորդ նուագի, այլ յերրորդումն Թողուլ զնոսա ՚ի ձեռանէ:

41. Ասասցէ նոցա որ ինչ յառաւօտու ՚ի յառնելն ՚ի քնոյ պարտ է առնել, գոհանալ զԱստուծոյ, նուիրել նմա զանձինս, և ապաւինել ՚ի Տիրամայրն՝ զհրեշտակային ողջոյնն երեքկնելով, հանդերձ առաջադրութեամբ զգուշանալոյ ՚ի մեղաց, և մանաւանդ ՚ի սովրականաց. և խրատեսցէ զմարս այսպէս սովորեցուցանելոյ զորդիս: Իսկ ամուսնացն արասցէ զնոսա, զի պարտ է նոցա տալ որդւոց իւրեանց յաձախել առ սուրբ խորհուրդս, քանզի ՚ի յամենն՝ դիւրաւ անկանին ՚ի հնորհացն Աստուծոյ, և զի ծնողաց պարտք են զառաջս առնուլ զբարեացս այսոցիկ. և դարձեալ զի մեղանչեն՝ եթէ առանց իրաւացի պատճառի արգելուն զամուսնանալ որդւոց իւրեանց և կամ չկրօնաւորել. կամ եթէ ընդ հակառակն ստիպեն զնոսա ամուսնանալ ակամայ. և որդիք մեղանչեն՝ եթէ ընդդէմ իրաւացի կամաց ծնողացն իւրեանց առնեն զամուսնութիւն, որպէս ՚ի ստորև ՚ի Ճառս Հարսնախօսութեան ասասցուք:

42. Եւ քանզի պարտ է ժողովրդապետի ոչ միայն զգուշացուցանել զիւրան ՚ի չարեաց՝ այլ և յորդորել ՚ի բարին, խրատեսցէ զնոսա ՚ի ստեպ այցելութիւն սուրբ Հաղորդութեան և Տիրամօր. և ս առաւել յաձախելոյ ՚ի սուրբ խորհուրդս արժանաւոր պատրաստութեամբ և գոհութեամբ ՚ի ձեռն ներգործութեան հաւատոյ սիրոյ և նուիրման անձին, ուսուցանելով նոցա զեղանակ սոցին:

43. Յորդորեսցէ զնոսա ՚ի ջերմեռանդութիւն առ սուրբ Տիրամայրն, ցուցանելով նոցա զհզօր զօրութիւն նորա և զգթութիւն ՚ի վերոյ այնոցիկ՝ որ ապաւինին

՚ի նա։ Ա՝ ան որոյ խրատեսցէ աղօթել նոցա Հանապազ ըօր ՚ի միասին ընտանեօք զսուրբ Ա՝ արդարանն, և պատրաստիլ առ ոտնս նորա ծոմապահօք, և ջերեքշաբաթի աւուրս պահել՚ի պատիւ նորա։ Այրանի ժողովըրդապետի՝ որ ջերմեռանդս զևրան յարդարեսցէ աստուածամօրն. զի օգնականութեամբն նորա կեցցեն նոքա բարեպաշտութեամբ, և ինքն բարեխօս Հզօր՚ի մեհու իւրում ունիցի։

44. Այ մի դադարեսցէ՚ի խրատելոյ զնոսա աղօթից ստէպ կալ, և խնդրել յ՚Աստուծոյ մանաւանդ զընօրհս յարատևութեան յանուն Ք՚րիստոսի բարեխօսութեամբ մօր նորա. ցուցանելով նոցա զի ամենայն շընորհք, և մանաւանդ յարատևութեանն պարգև մեծ՝ խնդրողաց ընօրհի. Ո՞ր խնդրէ, ասեմ. Հայցեցէ՛ք, և գտջէ՛ք։ Ասեսցէ նոցա ստէպ զխոստումն տէրունեան. Ա՝մէն ամէն ասեմ ձեզ՝ զէ որ ինչ խնդրիցէ՛ք ՚ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։ Յորդորեսցէ զնոսա և՚ի մտաւոր աղօթս, և գէթ ՚ի ոտնս արասցէ զայն յեկեղեցւոջ ընդ ժողովրդեան, ուսուցանելով նոցա զեղանակ մտածականաղօթից, զի և առանին զնոյն արասցեն. զի առանց այսորիկ յոյժ դժուարին է յարատևել նոցա ՚ի ընօրհս Ա՝ստուծոյ, և անհնարին գնալ՚ի Հանապարհ կատարելութեան։

45. Բայց՚ի գլխաւոր պարտուց աստի՝ են ժողովրդապետի և այլ կարևոր պարագ։ Ա՝յսի՝ լինել ժողովրդեան՚ի շինութիւն, ճրագ և լոյս՝ ըստ տէրունական բանին. Ճրագ՝ վառեալ աստուածայինն սիրով և նախանձու, և լոյս՝ օրինակաւ բարեաց։ Ա՝պա թէ ոչ, ընդունայն է քարոզութիւն նորա և յորդորել զայլս՚ի Հանապարհ կատարելութեան՝ եթէ նա ինքն ոչ կարապետ. եթէ ոչ առնէ ինքն զոր քարոզէին, ոչ օգ Հաւատասցէ բանից նորա. զի Ձգիանն է պեպել ալաց Հոն ղըՀ՚ աՀանջաց ըստ առածին։ Այրկրորդ՝ խնամով առնել թէր կալ Հիւանդաց՚ի Հոգեվարս, մանաւանդ սովրելոց՚ի մեզս, որոց կարօտութիւն մեծ է յայնժամ։ Ա՝պաքէն կարէ և այլոց երիցանց յանձնել զայս Հոգ. այլ ոչ է պարտ նմա վստահել անխտիր յայսմ մասին յամենայն օր. զի ՚ինասուց և գայթակղութեանց ծանուցից մարթի է պատահել յայսմ պաշտաման։ Այրրորդ՝

նպաստել աղքատաց ՚ի յաւելուածոյ հասիցն, զորմէ ասացուք ՚ի տուրև (գլ. ԺԳ.) ՚ի խօսելն զժառանգաւորաց։ Ողբորդ՝ քննել քաջ զմանկաբարձս թէ զի՞տիցե՞ն որ ինչ կարևոր է մկրտելոյ զաղայս ՚ի պահանջել հարկին. զի ստէպ իսկ պատահէ նոցա այս հարկ, վասն որոյ պարտականք են ընդ ծանր մեղօք գիտել զնիւթ և զձև մկրտութեան։

Պարտ է դարձեալ ժողովրդապետի արձանագրել ՚ի մատենի զանունս մկրտելոց և զծնողաց նոցա և զկընքահարց և զկնքամարց. ծանուցանել նոցա զհոգևոր ազգականութիւնն անտի ընկալեալ, և զպարտս նոցա. խրատել զմարս և զդայեակս չննջել ընդ մանկիկս յանկողնի՝ վասն վտանգին հեղձամղձուկս զնոսա առնելոյ։

46. Յաւ միանգամայն ասացեալ ՚ի քաջաց հովուաց է փրկութիւն ժողովրդոց. եթէ իցէ ուրեք ժողովրդապետ քարի և փրկութեան հոգւոց նախանձաւոր, անդ և ժողովուրդն բարեպաշտ է և կրօնասէր. և ընդհակառակն յաձախեն գայթակղութիւնք և ապականութիւն ՚ի ժողովրդեան, ուր անփոյթ ոք իցէ ժողովրդապետն և ոչ օրինակ բարւոյ։

ՅՕԴՈՒԱԾ Ե

ՊԱՐՏՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ

47. Ձեռնադրութիւն:
48–51. Քննել զկոչումն ձեռնադրելեաց:
52. Քննել զդիտութիւն նոցա:
53. Կղերանոց առ այս:
54. Ընտրութիւն ժողովրդապետաց:
55. Որ ինչ պարտ է եպիսկոպոսի ազգել նոցա:
56. Ընտրութիւն խոստովանահարց:
57. Միաբանութիւնք եկեղեցականաց:
58. Խնամք եղանակի մատուցման պատարագաց:
59. 60. Ա.յցելութիւն թեմի:
61. Հոգաբարձութիւն կուսաստանաց:
62. Կալ՛ի թեմին:
63. Ցանգիմանութիւն:
64. Ողորմութիւն:
65. 66. Պատարագ, ընդունելութիւն, բարի օրինակ՝ մանաւանդ ըստ հեզութեան, ըստ աղքատութեան, ըստ աղօթասիրութեան, և այլն:

47. Խաղումբ այլ ևս պարտք են եպիսկոպոսի առաջել քան զժողովրդապետաց: Այլ նախ՝ ըստ ձեռնադրութեան պարտ է նմա ընտրել պաշտօնեայս սեղանոյն արժանաւորս, ՛ի բաց մերժելով զանարժանս: Սուրբ Պաղեզացին սոսկայր ՛ի պարտուց աստի, և ոչ ընդունէր ՛ի սուրբ կարգ զայնոսիկ՝ որոց վարք չէին բարի, ոչ լինծայականաց ակն ածեալ, ոչ յաղնուականութենէ տոհմին, և ոչ ՛ի գիտնաւորութենէ անձին. զի գիտութիւն ընդ ոչ բարի վարս՝ ընտսակարագոյն ևս է, մեծարոյ առնելով զյոռութիւն: Ո՛ւ ասն որոյ ՛ի վերայ սակաւուց ոմանց ձեռս դնէր, որպէս և ամենայն եպիսկոպոսունք երկիւղածք. զի և սակաւք են, որոց Աստուածիմ իցէ կոչումն. ուստի զհետ գայ և սակաւուց՛ի քահանայից արժանապէս կալ՛ի կարգին և լինել յօգուտ հօտւոյ: Ոչ երիցունք բազումք կարևոր են եկեղեցւոյ, ասէր նոյն ինքն, այլ երիցունք բարիք:

48. Երկու ինչ պարտ է եպիսկոպոսի ընդրել յընծայեալս. զկոչումն և զգիտութիւն: Ըստ կոչմանն և ըստ բարի վարուց ոչ անվտանգ գործէ եպիսկոպոս՝ որ շատ համարի զվկայականս ժողովրդապետաց, որք բազումք այն է՝ զի վասն ակնառութեան չկարեն զանազատ

զայնս։ Այս ոչ օրէն է եպիսկոպոսի շատ համարել ըզբացատական բարուքթիւն վարուց, որպէս ասէ սուրբ Պաւղինացին, այսինքն զի չար ինչ ոչ ոք վկայիցէ զնծայելոյն. այլ պարտ է գիտել դրականապէս զբարուքթիւն վարուց նորա, խնդրելով տեղեկութիւնս՝ որ տայցեն բաւականապէս ցոյցս զՀնչմարիտ կոչմանն նորա և զեկեղեցական հնօրհն։ Յողոջիւ արիդենտեան պատուիրէ՝ զայնոսիկ ևեթ ընդունել՝ի սուրբ կարգ, որոց հաւաստեալ ծերութեան իցեն վարք վկայեալ. այսինքն զի ունակացեալ իցեն՝ի բարին, և ծերունիք առաքինութեամբ ըստ խնամատոյն բանի. Պահ խմասուխեան Տարեդ են։ Ոմանք որոց սովոր են եպիսկոպոսունք նախանձաւորք փառացն Պստուծոյ, մինչև զձեռնարկ իւրեանց յաղերսագիրս ընծայելոյն արարեալ, առնուլ՝ի ծածուկ տեղեկութիւն՝ի հաւատարիմ որերոյ՝ որ ճանաչէն զնա։ Յայժ կարևոր է այս՝ի հանդարտութիւն խղճի մնաց եպիսկոպոսի՝ի ձեռնադրել։ Ի տեղեկութեանց աստի պարտ է եպիսկոպոսին ստուգել, զի ընծայելոյն ոչ միայն չկոյ տուեալ գայթակղութիւն՝ի խաղս, ի խեղկատակութիւնս և լընկերշակութիւնս՝ այլ և զի իցէ հոգևոր, զի յաձախիցէ յեկեղեցի յաղօթս և՝ի սուրբ խորհուրդս, զի իցէ ներանձնացեալ կամ զկնի ընդ հոգեսէրս կենակից, զի պարապիցէ ուսմանն, զի իցէ համեստ՝ի զգենուլ և՝ի խօսել, այլովքն հանդերձ։ Այս եթէ երբեք իցէ ուրուք գայթակղութիւն ինչ տուեալ, ոչ ևս բաւէ վասն նորա փորձ սովորական, այլ պարտ է զամն քանի մի փորձել զուղղութիւն վարուց նորա, զի մի գուցէ կեղծաւորիցի առ սուղ ինչ ժամանակ առ ընդունելոյ զկարգ։

49. Յառաջին դարս եկեղեցւոյ, որպէս վկայեն սուրբն Հերոնիմոս, սուրբն Խիդոր և այլք, չկարէր առնուլ զսուրբ կարգ՝ որոյ մի ևեթ մահուամբ մեղս էր գործեալ։ Պայս յետ դարուց ինչ՝ չարահամբաւեալք ևեթ՝ի ծանր ինչ մեղս անընդունելի էին՝ի սուրբ կարգ։ Պպաքէն չիք զարգիս խստութիւնս այս, սակայն և ոչ ընդունելի է որ չկոյ վկայեալ յառաքինութեան, և մանաւանդ՝ի ժուժկալութեան՝ զոր պարտ է պահել ձեռնադրելոյն՝ի սուրբ կարգ։ Ոմն որոյ հրամայէ ժողովն արիդենտեան. Ոչ ոք ծառեղէ՝ի պաշտօն սեղանոյ,

ԵՒԷ ողջախոհութիւն նորա նախ քան զընդունելութիւն սրբոյ հոգւոյն էիցէ վկայեալ։

50. Համառօտ ասացեալ, ոչ է մարթ եպիսկոպոսի առանց ծանր մեղաց ընդունել զանարժան աք՝ի սուրբ կարգ. և է անարժան, որոյ բարեպաշտութեանն չկոյ ըստ բաւականին ցոյց դրական։ Օ՞ի որպէս ասէ սուրբ Ագաթնացին, առաւելադոյն սրբութիւն խնդրի առ սուրբ կարգ քան՝ի կրօնաւորութիւն, վասն բարձրագոյն պաշտամանցն՝ զորս հասանէ ձեռնադրելոյն կատարել. և որպէս ամբաւնան սուրբ կարգաւն գերասարձան քան զհաւատացեալս, նոյնպէս և սրբութեամբ վարուց պարտին գերազանցել։

51. Դարձեալ որպէս մեղանչէ նուիրեալն՝ որ չկոյ ունակացեալ՝ի բարի վարս, գէթ վասն վտանգին՝ յոր արկանէ զանձն չկարելոյ բառնալ զբեռն պաշտամանն, մանաւանդ զողջախոհութեան, նոյնպէս և առաւել և մեղանչէ եպիսկոպոսն՝ի ձեռնադրելն զնա առանց փորձելոյ ընդերկար զուղղութիւն վարուց նորա։ Օ՞ի կըրկին մեղանչէ. մի՝ ընդդէմ պարտուց պաշտամանն ձեռնադրելով զանարժանն, և միւս և՝ գործակից լինելով մեղաց, զոր գործեսցէ նա և տացէ գործել այլոց. վասն որոյ ասէ առաքեալն. Ձեռս վաղվաղակի յոչոք մի՛ դնիցես, և մի՛ կոյր լինիցես մեղաց օտարաց։

52. Յայսվայր զկոչմանէ ընծայելոց՝ի սուրբ կարգ, արդ ճնայ և զգիտութենէ նոցա ասել։ Տգիտութիւն եկեղեցականի ոչ անձին միայն վնասէ, այլ և այլոց. և չար և այն է՝ զի անբժշկելի են չարիքն, որպէս սուրբ Աղեքսացին ասէ. զի կամ յանընդունակութենէ ուսման է տգիտութիւն նոցա, և ոչ և այս կարասցեն ուսանել, և կամ յանսիրելութենէ ուսման, և յետ միանգամ ընդունելոյ զկարգ՝ ոչ և այս մարթ է ստիպել զնոսա յուսումն։ Վասն որոյ պարտ է եպիսկոպոսին քննել զնուիրեալն ոչ՝ միայն ըստ գիտութեան, այլ և ըստ սիրելութեան ուսման. զի որ չէն ուսումնասէր, ոչ լիցի երբեք պիտանի եկեղեցւոյ, և յաձախ և այս լիցի՝ի վնաս, զի դատարկութիւն մայր է ախտից։ Այժմ եպիսկոպոսունք շատ համարիցին զքննութիւն նուիրելոց, որպէս սովորութիւն է առնել՝ի վերայ կարևորաց և եթէ կարգին՝ զոր հանդերձեալ են ընդունել, գժուարին լինի նոցա ապա գտանել՝ի նոցունց խոստովանահարս։

53. Ա՛յսր աղագաւ պարտ է եպիսկոպոսի ունել կը-
ղերանոց բարեկարգ, ուր մանկտին՝ կոչեցեալ՛ի կարգ
եկեղեցական՝ կացցէ գէթ զերեսեամ մի, ուսանել ընդ
հոգևոր կեանս և զկարևորս պաշտամանն· յորոց ապա
մերթ իցէ ընտրել ժողովրդապետս և խոստովանա-
հարս: Ո՝ասն հոգևոր կենաց պարտ է՛ի կղերանոցի
անդ սահմանել կանոնս մտածական աղօթից, պատա-
րագի, ժամակարգութեան, հոգևոր ընթերցուածոց,
այցելութեան սրբոց խորհրդոյն, քննութեան խղճի մե-
տաց, լուսթեան արտաքոյ ժամուց պարապոյ· այս ամե-
նայն զօրէն հանապազօր: Ասկ միանգամ յեօթնեկի,
կամ գէթ երկիցս յամսեան խոստովանութիւն և հա-
ղորդութիւն· վասն որոյ պարտ է կարգել խոստովանա-
հարս բարիս, և երբեք երբեք հրաւիրել և այլս բաց
՛ի կարգելոց խոստովանահարց: Ի վերայ այսորիկ և
կրթութիւն հոգևոր ուսանօղաց առնել ամի ամի ՛ի
ձեռն ներհուն հարց հոգևորաց: Պարտ է եպիսկոպոսի
ոչ միայն կացուցանել անդ վերատեսուչ փորձ և հմուտ,
և՛ի ձեռանէ նորա վերակացուս զգուշաւորս՛ի վերայ
մանկտոյն, այլ և անձամբ երբեք երբեք այց առնել,
և՛ի զարգացելոց անտի տեղեկանալ՝ եթէ իցէ անկար-
գութիւն ինչ անդր յարամբի՛ի ներքս սպրդեալ:

Ասկ ըստ մասին գիտութեան պարտ է համբակաց
ուսանել նախ զգրոց բարբառ, զի առանց այսորիկ զը-
ժուարին է ուսանել նոցա զայլ գիտութիւնս: Պարտ
է ուսանել նոցա և զիմաստասիրութիւն, և մանաւանդ
զբարւոք տրամաբանել, զաստուածաբանութիւն տե-
սական, և մանաւանդ զբարոյականն՝ առ՛ի կարող լի-
նելոյ մատակարարել զխորհուրդ ապաշխարութեան:
Գտակար է յոյժ և հրահանգել նոցա անդստին՛ի
պաշտօն հովուական, երբեք երբեք առնելով մաս-
կըտաց քրիստոնէական վարդապետութիւն, կամ յորդո-
րակս, կամ լուծումն խնդրոց բարոյականաց, և կամ
բեմբասացութիւն· զի այսպէս արծարծանի՛ի նոսա ե-
ռանդն եկեղեցական գիտութեանց:

54. Հրկրորդ՝ պարտ է եպիսկոպոսին ընտրել ժողո-
վըրդապետս և խոստովանահարս բարիս: Ո՝ասն ժողո-
վըրդապետաց յայտ է՝ զի զարժանաւորագոյնս յերի-
ցանց պարտ է նախադասել· որպէս և վասն պարզ ժա-

ռանգութեանց եկեղեցականաց հատանականագոյն կար-
ծիք ըստ սրբոյ Աստուածայնոյն պարտ համարին զարժա-
նաւորագոյնս ընտրել. քանզի զայս պահանջէ օգուտ ե-
կեղեցւոյ: Այլ վասն ժողովրդապետաց և ժողովին տրի-
դենտեան պարտս ի վերայ դնէ եպիսկոպոսի ընտրել
զարժանաւորագոյնն ըստ անարատութեան կենաց, ըստ
գիտութեան, ըստ վաստակոց, ըստ տիոց, և ըստ խո-
հականութեան: Արդ է եպիսկոպոսին ի քննիչս ա-
պաստան առնել զդատաստան իւր ըստ գիտութեան,
այլ զսրբութենէ վարուց նոցա պարտ է նմա անձամբ
առնուլ յայլևայլոց գաղտ տեղեկութիւն. ի մի ու-
նելով միշտ զնորատ սրբոյ Պաւղեայեան, զի ի հոգա-
բարձութիւն հոգւոց պարտ է նախագասել զարի վարս
հանդերձ բաւական գիտութեամբ քան զառաւելագոյն
գիտութիւն նուազ բարութեամբ: Ոչ ի առաւել օգ-
տէ ժողովրդեան ժողովրդապետ սրբակեաց ի միում
ամենեան, քան գիտնագոյն ոք նուազ սրբութեամբ ի
միում տարօրէն:

55. Պարտ է եպիսկոպոսին հետաքննել և տեղե-
կանալ թէ կատարիցէ՞ն ժողովրդապետք զպարտս իւ-
րեանց, այսինքն զքրիստոնէական վարդապետութիւն
և զքարոզութիւն բանին Աստուծոյ. և յորդորել զնո-
սա ստէպ զի զսովորական հանապազօրեայ իրաց խրա-
տեսցեն զժողովուրդն, որպէս յաղագս ի բաց մերժե-
լոյ զվարձութիւնս, համբերելոյ վշտաց, ներելոյ անի-
րաւութեանց, և այլն. տեղեկանալ դարձեալ թէ ընդ-
դունիցի՞ն ըստ ժամանակի զմանկտին ի հաղորդութիւն,
հսկիցէ՞ն ի վերայ ժողովրդեան վասն զատկական պա-
տուիրանին, ունիցի՞ն հոգ և խնամ զհիւանդաց մանա-
ւանդ ի հոգեվարս, մատակարարիցէ՞ն զխորհուրդ ա-
պաշխարութեան անձամբ և ի ձեռն այլոց՝ առանց ըն-
դոսեսել տալոյ խոստովանողաց ընդերկար, այլովքն
հանդերձ՝ զրոս ի վեր անդր յաղագս պարտուց ժողո-
վրդապետացն ասացաք:

56. Արիցագոյն խնամ պարտ է ունել եպիսկոպոսի
յաղագս ընտրութեան խոստովանահարց, զի զնիւղ
մտաց ժողովրդեան ի ձեռս նոցա տալոյ է, և ի ոք
խոստովանահայր տգէտ կամ չարաբարոյ կարող է ա-
պականել բովանդակ զքաղաքն: Այս ոչ է պարտ ե-

պիսկոպոսի տալ ումեք զիշխանութիւնն զայն, առանց գիտելոյ հաւաստեաւ զբարւոյ վարս և զգիտութիւն նորա։

57· ()գտե մեծապէս սահմանել և ժողով եկեղեցականաց հոգեսիրաց, որք յաձախիցեն առ աղքատս և առ հիւանդս, և՝ ի հրահանգել զոգեկոս, որք անպատճոյճ զգենուցուն և հրաժարիցեն՝ ի խաղուց և այլն, յառաւելագոյն շինութիւն ժողովրդեան։ Իւ եպիսկոպոսին պարտ է խրախուսել զնոսա բարերարութեամբք և նախամեծար առնելով զնոսա՝ ի հոգևոր պաշտամունս։

58· Պարտ է դարձեալ եպիսկոպոսի, և ծանր պարտ՝ որպէս ազդ առնեն Յոնքալեա, Վրուարթի, և Փասքուալիկոյ, հսկել՝ի վերայ քահանայից՝ որք թեթևութեամբ պատարագեն, հարևանցի և շտապաւ զաղօթս և զարարողութիւնս սրբոյ պատարագին կատարելով՝ի գայթակղութիւն ժողովրդեան։ Իւ որպէս՝ի ստոր և՝ի ձառս սրբոյ Նաղորգութեան ինայ մեզ ասել (գլ· ժե· 84), որք կարի շտապեն՝ արագագոյն քան զքառորդ ժամու մատուցանելով զպատարագ, չիցեն ազգաք՝ի մահացու մեղաց։ Ոչ ան որոյ ժողովն տրիդենն տեան սահմանէ արգելուլ եպիսկոպոսաց զի մի՝ի թեմս իւրեանց այնպիսի անպատուութեամբ, որոմ ոչ է մարդ փոլ անկցորդ յամպարշտութենէն՝ որպէս լինքն ժողովն տրիդենտեան ասէ, մատուցին պատարագք։

59· Իրրորդ՝ պարտ է եպիսկոպոսին անձամբ առնել այցելութիւն թեմին, զոր մեծաւ խնամով պատուիրէ ժողովն տրիդենտեան, և կամ եթէ արդարև չկարիցէ անձամբ՝ առնել՝ի ձեռն ընդհանրական փոխանորդին կամ այցելուի, եթէ ոչ ամի ամի ընդ բոլոր թեմն՝ գէթ ընդ կէս նորին, որպէս զի զերկեամբ ընդ թեմն առ հասարակ լինի արարեալ զայցելութիւն իւրովի կամ՝ի ձեռն այցելուաց։ Վրանի անկարգութիւնք բառնին այցելութեամբ եպիսկոպոսի և ականատես լինելով չարեացն· անհնար է առանց այսորիկ առաջնորդել թեմի։ Ասուրբն Կարոլոս, Թէպէտ և էին՝ի ձեռանէ նորա հովիւք քաջք՝ի հոգաբարձութիւն հօտին, սակայն իւրովի ելանէր յայց տաժանաւոր ուղեգնացութեամբ մինչև՝ի հեռաւոր կողմանս թեմին։ Իւր երբ

բեմն զի ընդ ափափայս յափսիթերս գնայր ընդ տիզմ և ընդ ձիւն. և է տեսանել՝ի վարս նորա, որչափ ինչ արար այցելութեամբքն: Իսկ սուրբ Պաղեզային ընդ պնպիսի գժուարագնաց վայրս ուղևորելը յայց առնել թեմին, զի վիրաւորէին ոտք նորա մինչև ի կարելոյ կալ յոտին, և երբեմն գետնախաշտի՝ի քուն լինէր. և որոց խրատէինն զնա խնայել՝ի կեանս իւր, ասէր. "Զի ինչ կարևոր զի կեցից, այլ կարևոր իսկ է զի զպարտս իմ կատարեցից":

60. Պարտ է եպիսկոպոսին և զձայն իւր լսելի առնել յայցելութեան իւրում, խօսելով զբանն Աստուծոյ. քանի՛ առաւել ազդէ Հօտին ձայն Հովուի: Պարտ է դարձեալ քննել նմա զդիտութիւն մանկտւոյ, առ՝ի ընուլ զթերին անհոգութեան ժողովրդապետաց՝ կայցանելով հոգաբարձու տուժիւք նոցին առ՝ի խրատ այլոց: Պարտ է նմա քննել և զերիցունս գիւղից յաբարողութիւնս մատուցման պատարագի, և զխոստովանահարս իսկ և զժողովրդապետս ըստ իրաւացի պատճառաց. և լսել՝ի ծածուկ զեկեղեցականս տեղեաց ըստ իւրաքանչիւր պաշտաման, և մանաւանդ զժողովրդապետաց և զխոստովանահարց՝ Թէ օրպէս կատարիցեն զպաշտօն իւրեանց, և Թէ իցէ՞ն անդ տարաձայնութիւնք, անկարգութիւնք և գայթակղութիւնք: Սովորութիւն է և զերս յիշատակաց ունել քաջաց եպիսկոպոսաց զերիցանց իւրաքանչիւր տեղեաց, որ օգնեն՝ի բազում ինչ իրս, և մանաւանդ յընտրութիւն ժողովրդապետաց և խոստովանահարց և այլոց պաշտօնէից: Գնել և բազմել նմա երբեմն՝ի խոստովանարանի, և Թէ ոչ՝ի լուր խոստովանութեան՝ գէթ առ՝ի լսել որ ինչ որ՝ի ծածուկ ունիցի յայտնել նմա:

61. Յորրորդ՝ պարտ է եպիսկոպոսի ունել հոգ զկուսաստանաց. այսինքն նախ՝ հետազօտել քննել խնամով զկոչումն ընծայելոց՝ի կուսութիւն, զի բազումք՝ի նոցանէ ընծային՝ ոչ աստուածահրաւէրք, այլ՝ի ծնողաց և յազգականաց իւրեանց հրաւիրեալք. վասն որոյ և անխաղաղասէր կեանս վարեն, և Թուլութիւն՝ի միաբանութիւնս մուծանեն: Յորրորդ՝ այց առնել ամի ամի կուսաստանաց Թեմի իւրոյ, և լսել զմի մի՝ի կուսանաց՝ի ծածուկ, և գիտել եթէ գայթակղութիւն ինչ

դուցէ ՚ի նոսա կամ տարաձայնութիւն. այլ զգոյշ կայցէ միւ ՚ի կողմանց երևել: Իսկ յաղագս արգելականից՝ ազատաց յայցելութենէ եպիսկոպոսին՝ ասասցուք ՚ի ձառս արտունութեանց (գլ· Ի· 82): Նորոդ՝ դժուարաւ տալ հրաման օտարաց խօսել ընդ կուսանս, զի ընդ խօսարանս մնանեն գայթակղութիւնք ՚ի կուսաստանս. վասն որոյ եթէ կուսաստանն չիցէ յաթոռանիստ քաղաքի, ազդ արասցէ եպիսկոպոսն փոխանորդի իւրում՝ անդ՝ զգոյշ լինել չտալոյ ումեք դիւրաւ հրաման: Ցորրորդ՝ տալ կուսաստանաց խոստովանահարս արտաքոյ սովորականաց, առ ՚ի դարմանն տանել թերի խոստովանութեանց՝ եթէ երբեք լեալ իցեն առ տարապարտ ամօթազածութեան ուրուք ՚ի կուսանաց առ խոստովանահայր իւր. և մի մնասցէ խնդրելոց զայն կուսանաց. զի որոյ առաւելագոյն իցէ կարօտութիւն, առաւել զգուշանան ՚ի խնդրելոց զայն: Եւ ՚ի յղել զխոստովանահայրն՝ պարտ ՚ի վերայ յաւելցէ կուսանաց ամենեցուն գալ առ նա ՚ի խոստովանարան անդր, եթէ ոչ ՚ի խոստովանութիւն՝ գէթ առ ՚ի խօսել ընդ նմա, որպէս սահմանեաց Ղենեդիկտոս ՃԴ: Զայն որոյ մի և առանց հարկի վերստին հաստատեսցէ զնոյն սովորական խոստովանահայր ՚ի լրանալ սահմանելոց եռամեայ ժամանակի: Եւ գարձեալ ամի ամի յղեսցէ առ նոսա զոք յառաքինի երիցանց, որ հմուտ իցէ իրաց կուսաստանին, տալ նոցա կրթութիւն հոգևոր:

62. Հինգերորդ՝ պարտ է եպիսկոպոսին, որպէս և ՚ի վեր անդր ասացաք, կալ ՚ի թեմի իւրում. և խոտոր գոյն քան զժողովրդապետաց պարտաք են նմա կալոյ անդր, զի ինքն է գլխաւոր հովիւ հօտին: Զատանի ՚ի ձեռին կրէ ընկալեալ ՚ի ձեռնադրութեան, առ ՚ի յիշել զի ինքն ոչ ևս է իւր՝ այլ հարսին իւրում եկեղեցւոյ մինչև ցմահ: Զհպատ և հնորհեալ է նմա ՚ի տրիկենտեան ժողովոյ եռամեայ ժամանակ կալոյ հեռի ՚ի վիճակէ իւրմէ պատճառաւ իւիք, այլ խնդրի երաւոյէ պատճառ՝ որպէս ժողովոյն պայմանէ. և Ղենեդիկտոս ՃԴ մեկնեալ զբան ժողովոյն՝ ասէ. “Զէ առ զբօսանաց, և ոչ առ թեթև ինչ և սնոտի պատճառի„: Զուրբն Կարոլոս յորժամ հեռի ՚ի վիճակէ իւրմէ կայր, թուէր նմա

կալ՝ի չղթայս վասն ըղձիցն դառնալոյ անդր վաղագոյն։ Եւ կարգինաչն Պելլարմինոս՝ի հրամանէ Պապին յօ-գուտ ընդհանրական եկեղեցւոյ կալով՝ի Հռովմ ար-տաքոյ Թեմի իւրոյ, զի եպիսկոպոս էր Կապուայ, խըղ-ձէր ընդ այն՝ մինչև հրաժարեաց իսկ վասն այնորիկ յաթոռոյ իւրմէ։

63. Ա՝եղերորդ՝ պարտ է եպիսկոպոսի, և ծանրա-գոյն քան զժողովրդապետացպարտ, յանդիմանել կըշ-տամբել և բառնալ զպայթակղութիւնս. զի ինքն է հովուապետ, և զի կարող իսկ է դարմանս առնել չա-րեաց՝ ըստ հարկի իրաց դիմելով և առ քաղաքական իշխանութիւն։ Ա՝յսպիսին ատելի է այս պաշտօն, և դրդէ ընդդէմ նորին զարհամարհութիւն և զվտանգ իսկ կենացս. այլ Հովիւ *ոչ զանձն իւր դնէ՝ի վերայ ոչխարաց։ Ա՝սան որոյ պարտ է նման հետազօտել և տեղեկանալ որ ինչ անկարգութիւնք են՝ի Թեմին, ոչ՝ի ժողովըր-դապետաց և եթէ և յառաջնորդաց՝ որք երբեմն առ ակն-ածութեան կամ առ չերևելոյ Թերահոգս՝ լռեն, այլ և՝ի նախանձաւոր երիցանց՝ որ իցեն նմա ամենայն ու-րեք՝ի վիճակին։ Ա՝սան որոյ և՝ի գալ նոցա և ժողո-վըրդապետաց և առաջնորդաց առ ինքն, փութասցի ըն-դունել զնոսա մեծարանօք, և մի տացէ նոցա ապասել, որպէս զի յաձախեսցեն առ նա։

64. Ա՝օթևներորդ՝ պարտ է եպիսկոպոսի ողորմել աղ-քատաց։ Ա՝կեղեցի կամ ժողովուրդն տայ նմա զսահ-մանեալ տուրս ոչ առ՝ի ծախել ըստ հաճոյս, այլ առ՝ի նպաստել աղքատաց. Հասք եպիսկոպոսի ժառանգու-Թիւն կարօտելոց է։ Ողորմութիւն նախապատիւ՝ի բա-րեգործութիւնս հովուի է, ասէ մեծն Գրիգոր. քանի՛ չարիս մարթ է խափանել եպիսկոպոսի ողորմութեամբ. քանի՛ ուստերք և դատերք խաւն՝ի միում անկողնի նըն-ջեն վտանգաւ մեղաց առ կարօտութեան, քանի՛ք և յանկողնի ծնողացն. և քանի՛ք առ չկարելոյ ամուսնա-նալ կամ առ կարօտութեան կեան՝ի մեղս։ Ա՝յսպիսին բարոյականք ներբեն ժառանգաւորաց գյաւելուածս հա-սից իւրեանց (եթէ չիցեն աղքատք և՝ի ծանր կարօ-տութեան) ծախել յեկեղեցի, կամ պահել վասն ա-ռաւելագոյն իւրեանց պիտոյից։ Ա՝յլ հաւաստի այն է զի ոչ որ՝ի սրբոց եպիսկոպոսաց Թողու՝ի մահու գու-

մարս զրամոյ կամ ստացուածս, այլ պարտս· սուրբն Կարողոս ամեն համարէր եպիսկոպոսի ունել զրամս յարկեղ· և սուրբն Յովհան Ալեքսանդրեան ի դատապարտութիւն իւր համարէր Յողուլ զրամն ի մահուն։

65· Ի վերայ այսոցիկ պարտ է եպիսկոպոսին ի կիւրակէս և ի տօնս մատուցանել վասն Հօտին պատարագ։ Պինել տեսանել, ըստ սահմանի տրիդենտեան ժողովոյ, որ ինչ յետ մահու նախորդին ի ժողովական փոխանորդէ գործեալ։ Եւ մանաւանդ լինել ի չինութիւն և յօրինակ բարի ուխտի եկեղեցւոյն և ժողովրդեան։ Եթէ հովիւ չէանիկ ի լեառն, և ոչ հօտն էանիկ անդր· զհետ նորա գնան ոչխարքը։ Զրադ է նա եդեալ ի վերայ աշտանակի, զի որք ի վիճակի նորա են՝ զլոյս տեսցեն։ Գրաքեանն պատուիրէ Ցիմեթեայ՝ "Լինել օրինակ հաւատացելոյ՝ բանիւք, գնացիւք, սիրով, հաւատովք, սրբութեամբ,,։ Եւ Ցիտոսի պատուիրէ՝ "Ընդ ամենեցուն զանձն օրինակ կացուցանել գործոց բարութեան,,։ Եւ նախ օրինակ հեզութեան, բարերարելով ապերախտից և հակառակորդաց· որպէս ի վարս սրբոյն Կարողոսի և սրբոյ Աղեքսանդրոսի է ընթեռնուլ օրինակս առ այս հրաշալիս։ Օրինակ աղքատութեան, զի թէպէտ և օրէն է եպիսկոպոսի ծախել ի վայելուչ կենցաղավարութիւն իւր, այլ պարտ է նմա ցուցանել յամենայնի և զսուրբ աղքատութիւն, ի սպասաւորս ի զգեստս ի կահս տան և մանաւանդ ի ձաշ· չիք ինչ, որով ոք յեկեղեցականաց լինի ռամկին յառաւելագոյն շինութիւն, որպէս սակաւապիտութեամբ։ Ի վասն ո՞ր ոչ ժողովն տրիդենտեան պատուիրէ եպիսկոպոսաց "Ճ ատանալ չափաւոր կարասեաւ և ձաշիւ, սակաւապէտ կերակրովք,,։ Օրինակ աղօթասիրութեան· ոչ սակաւք ի սրբոց եպիսկոպոսաց ինձանէն յեկեղեցի առաջի սրբոյ սեղանոյն կալ յաղօթս՝ առ ի տալ այլոց օրինակ բարի, հրաժարեալ ի զբօսանաց ինչ՝ որ ոչ վայելէն եպիսկոպոսի։ Օրինակ ներանձնութեան, առ հարկի և եթէ և վասն պատշաճից ընդ աշխարհականս կենցաղավարելով։ Օրինակ պարկեշտութեան, ամենայն զգուշութեամբ առ հարկի ընդ կանայս վարելով։ Օրինակ հոգեսիրութեան և աստուածպաշտութեան, ջանալով յեռուլ միշտ ի խօսս հոգևոր ինչ և

աստուածային, որպէս սովոր էր սուրբն Կարոլոս և ընդ աւագանին իսկ առնել։

66. Եթէ ժողովրդապետ բարւոյն՝ի փրկութիւն ժողովրդեան իւրոյ է, իսկ եպիսկոպոսն է՝ի փրկութիւն բովանդակ Թեմին. զի ոչ միայն երիցունս, խոստովանահարս և ժողովրդապետս բարիս պատրաստէ, այլ և պահպանէ զնոսա բարիս՝ օրինակաւ իւրով, և բարեպաշտութիւն տիրէ նուաւս յաճենային վիճակի նորա։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՑ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

ՅՕԴՈՒԱԾ Ս.

ՅԱՂԱԳՍ ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ

1 • 2• Ե՞րբ օրէն էր դնել զկեանս ՚ի վտանգի :
3 • Ներքինացուցանել զորդիս :
4 • Աբբեցուհին :
5 • Օրէ՞ն էր արքենալ առ ՚ի դեղ :
6 • Առ ազատել ՚ի սպանուածենէ :
7 • Օրէն էր արքեցուցանել զոք առ ՚ի խափանել զնա ՚ի մեծագոյն եղեռանէ :
8 • Որ ինչ մեղայ պարտաւորը գտանի արքեալ ոք :

1 • Ոչ ուրեք օրէն է անձնասպան լինել ուղղակի, առանց աստուածային հրամանի կամ աղեղութեան՝ որով ումանք ՚ի վկայից եղեն անձնասպանք : Աստի և ոչ օրէն է արկանել դրակատապէս զանձն ՚ի ծանր վտանգ մահու. վասն որոյ մեղանչեն լարախաղացք՝ որք ՚ի վերայ ձգելոց չուանացդ գնան օդապարիկք, և որք դեղ մահու ըմպեն, կամ իժից Թունաւորաց տան խածանել զինքեանս վտանգաւ մահու : Քացաք ուղղակի և դրա-կանապէս. վասն զի օրէն է երբեմն վասն իրաւացի պատճառի տալ անուղղակի զանձն ՚ի մահ : Որպէս զինուորի օրէն է կալ ՚ի կայի իւրում անխուսելի, Թէ և մեռանել հասանիցէ նմա կալով անդ : Օրէն է դարձեալ ՚ի սովու զկերակրիչն ոգեպահիկ և ՚ի նաւաբեկու-Թեան զտախտակ փրկուԹեան Թողուլ բարեկամի. զի այլ է անձին առնել, և այլ չպաշտպանել անձին, զոր օրէն համարի հասարակաց վարդապետուԹիւն, ընդդէմ սակաւուց ումանց բարոյականաց. և սուրբ Քաւիւ նացին ասէ. "Տալ զանձն ՚ի մահ ՚ի վերայ բարեկամի, ամենակատար գործ է առաքինուԹեան, զոր առաւել

ընտրէ այր առաքինի քան զմարմնաւոր կեանս ,,: ()րէն է դարձեալ՝ի հրդեհել տան հոսել զանձն՝ի պատուհանէ առ՝ի խուսել վտանգաւ կենաց՝ի ստոյգ մահանէ, որպէս հաստատեն |այման, |եսիոյ, |ուկաս, Աալմատիկեանք, և այլք· յորոց |լսել օրէն հաստատի զնոյն և դատապարտելոյ յանցաւորի՝ի մահ կամ՝ի բանտ մշտնջենաւոր: Պոնաչինա, |ուկաս, |եսիոյ, Աալմատիկեանք և այլք, օրէն համարին և հրդեհել զնաւ յայտնի վտանգաւ մահու, զի մի՝ի միում հասարակաց անկցի՝ի ձեռս թշնամեաց: |այման, Պուսեմպայ և Աացցոթթա օրէն համարել կուսի զբաղել զանձն՝ի վտանգ մահու առ՝ի վերծանել՝ի բռնաբարութենէ, ոչ միայն վասն զգաստասիրութեան, այլ և զի վտանգ մեղայ է միշտ յայնպիսի դէպս:

2· ()րէն է յանցաւորի ոչ միայն ջնջել՝ի պատուհասէ մահու՝ եթէ կարէ, այլ և ինքնին յանդիման լինել առեանի՝ յորում մահապարտ դատելոյ է: |են և ոչ օրէն համարին նմա գահիճ լինել անձին՝ եթէ այնպէս դատաւորն հրամայիցէ· այլ Սուարէզ, Աալմատիկեանք և այլք ընդ սուրբ Ագուինացւոյն ոչ օրէն համարին զայս, զի անձնասպանութիւն ըստ ինքեան է չար: Ասայ միաբանին ամենեքեան օրէն համարել մահապարտի ելանել ինքնին՝ի բեմ պատուհասին և տալ զպարանոց իւր՝ի սուր, զի այսոքիկ հեռաւոր մնասուկ սպանութեան համարին: ()րէն է կարգաւորականաց, ըստ հաւանականագոյն կարծեաց աստուածաբանից, հրաժարել՝ի մնոյ, և ա և վտանգաւ կենաց· այլ եթէ կերիցեն՝ի վտանգի անդ, որ գէթ իցէ հաւանական, ոչ մեղանչեն՝ որպէս ասեն Ագորիոյ, Ասեփնա, և Ալեթթորիա· մանաւանդ զի եթէ չպատանիցեն այլ կենարուր բաց՝ի մնոյ, պարտ է նոցա ուտել զայն: ()րէն է դարձեալ վասն առաքինութեան համառօտել զկեանս ձգնութեամբք և պահովք, եթէ չիցեն անխնայ· զի այլ է կարճել դրականապէս զկեանս, և այլ առնուլ զայն յանձն՝ի սէր առաքինութեան: ()րէն է վասն խոնարհութեան տալ զանձն գնել գեհենախշտի յառաջ քան զմահ, որպէս սովոր են առնել Ցրապեան միաձոնք: |այեելոյն բարոյականք գրեթէ առ հասարակ, զի ոչ ոք պարտական է առ՝ի պահել զկեանս իւր, և-

թէ չիցէ կարևոր վասն բարւոյ հասարակաց, յանձն առնուլ ցաւս ծանուննայ՝ որպէս հատանել զոտս կամ ըզձեռս իւր և այլն, կամ կուսի առ՝ի բժշկութիւն իւր ներել վիրաբուժի շօշափել զմարմին իւր, թէպէտ և օրէն իցէ նմա այն. այլ պարտական է ներել կնոջ դարմանել զախտ իւր:

3. Որպէս ոչ է օրէն անձնասպան լինել, սոյնպէս և ոչ կրճատել ինչ յանդամոց՝ բայց միայն՝ի պահպանութիւն կենաց: Այսն որոյ ըստ հասարակաց կարծեաց աստուածաբանից և ոչ օրէն է մաղել զորդիս՝ առ՝ի պահել զգեղեցկաձայնութիւն նոցա: Բայց Աացցոթթա, Փասկուալիկոյ, Ամպուրինի և այլք ոմանք օրինաւոր համարին զայն, եթէ միայն հաւանեսցի մանուկն, և չիցէ վտանգ կենաց նորա. վասն զի պահպանութիւն ձայնի յօգուտ մեծ է աղքատի, մինչև փոխել զպայման կենաց նորա:

4. Այս և չէ օրէն ումեք արբենալ, և կատարեալ արբեցութիւն ոչ միայն ինքնին մահացու մեղք է, այլ և որ ինչ ըստ յարբեցութեանն գործիցէ չարիս՝ զորս մարթէրն նման հաւանականաբար կասկածել՝ համարին նման՝ի մեղս: Այլ որպէս սուրբ Աւգուստինոսին, սուրբն Ներսէսոս և այլք առ հասարակ ուսուցանեն, արբեցութիւն յայնժամ համարի կատարեալ և մեղք ծանր, յորժամ ըզ միտեալ և կամաւ արբենայ և զրկէ զանձն՝ի սպառ՝ի բանականութենէ: Այն որոյ ոչ ծանր մեղանչէ որ ոչ՝ի սպառ կորուսանէ զբանականութիւն՝ այլ միայ տակաւին՝ի նմա ընտրութիւն բարւոյ և չարի, թէպէտ և ամենայն ինչ նմա շուրջ գալ թուիցի: Այ ծանր մեղանչէ և որ անչափ ըմպէ, այլ ոչ կասկածելով թէ արբենայցէ, և չիցէ նորա զիտոյ առեալ զի յայնչափ ըմպելոյ զգլխիցէ: Այս ոչ զերծ՝ի մնհուչափ մեղաց ըզ գտանիցի, որ ըմպիցէ որչափ ինչ շատ է նմա յարբեցութիւն, թէպէտ և ապա՝ի քուն լինիցի. զի գործն ինքնին ծանրագոյն է չար:

5. Արդեօք օրէ՞ն իցէ արբենալ եթէ երբէք պիտոյ իցէ վասն առողջանալոյ՝ի մնհաբեր ախտէ: — Ասացուք ներեն զայն. զի ուտել և ըմպել մեղք են, յորժամ ըզ անչափութեամբ միասեսցէ առողջութեան. բայց վասն պահելոյ զկեանս ըմպել, ոչ է միասել առողջ-

ջուԹեան : Իսկ այլք ոչ ներէին, զի կամաւ զրկել ուրուք զանձն ՚ի բանաւարուԹենէ՝ ըստ ինքեան է չար : Այսն որոյ ասելի է զի ըմպել վասն արբեցուԹեան՝ է չար ինքնին, և ոչ է օրէն ամենևին արբենալ վասն չզգալոյ զցաւ հատման կամ խարելոյ անգամոյ . այլ է իսկ օրէն ըմպել վասն բժշկուԹեան, որպէս օրէն է մոր առնուլ վասն բժշկուԹեան դեղ այնպիսի՝ յորմէ վտանգ իցէ վիժելոյ անհոգի սաղմին . զորմէ ասացուք ՚ի ստորև . (23) : Իւ չէ մարԹ ասել, զի որպէս օրէն է եԹերաւ անզգայել առ ՚ի հանդուրժել խարման և հատանելոյ անդամոյ՝ նոյնպէս օրէն իցէ և արբենալ այնր աղագաւ : Օ ՚ի եԹէր բառնայ բոլորովին զզգայուԹիւն և աղատ ՚ի կրից կացուցանէ զանզգայեալն . իսկ արբեցուԹիւն Թողու զզգայուԹիւն յարբեցեալն, և զկիրս նորա և ևս զրգռէ, բարձեալ ևԹէ ՚ի նմանէ զիշխանուԹիւն ՚ի վերայ նոցին :

6 . Զորդեաք օրէն իցէ արբենալ առ ՚ի զերծանել ՚ի մահուանէ, ՚ի բռնադատել ուրուք սպառնալեօք մահու ըմպել անչափ : — Ասաղուիք օրէն համարիմն, եթէ զի ոչ է այն զրկել զանձն ուղղակի ՚ի բանաւարուԹենէ, այլ ըմպել վասն ապրելոյ ՚ի մահուանէ, և կրել զարբեցուԹիւն քան Թէ արբենալ : Զայլ հաւանական նագոյն ևս Զզրիայ, Վ իկանտ, Ծաբրնելի, Վալենտիկեանք և այլք ոչ օրէն համարին . զի այլ է վտանգ ներքին, որպէս ՚ի վերոյ ասացեալ դէպս՝ յորում որ ըմպիցէ առ ՚ի բժշկիլ յախտէն, և այլ վտանգ արտաքին . որպէս և ոչ օրէն է մոր յերկիւղ սպանուԹեան վիժել զսաղմն . զի այս ըստ ինքեան է չար, և հակառակին սորին վարդապետուԹիւն դատապարտեալ է : Օ այս այսպէս ուսուցանէ և սուրբն Թոմաս . “ Մէկ է և սպառնացի որ քեզ կամ ըմպել և կամ մեռանել, լաւ իցէ քեզ զի մարմնոյդ քո վասն ժուժկալուԹեան սպանցի, և մի հոգւով արբեցուԹեամբ մեռցի ,, :

7 . Զորդեաք օրէն իցէ արբեցուցանել զոք առ ՚ի խափանել զնա ՚ի մեծագոյն անօրէնուԹենէ, որպէս ՚ի սպանուԹենէ, ՚ի սեղանակատուԹենէ և այլն : — Այնք ոչ օրէն համարին, այլ ոչ անհաւանական Թուի այլոցն կարծիք ըստ որում ասացաքս ՚ի վեր անդր (գլ. Դ. 30), զի օրէն է յորդորել զոք ՚ի փոքրագոյնն չար,

և այլատեսակ, առ ի խափանել զնա ի մեծապոյն չարէ. զի փոքրագոյնն բովանդակի միշտ զօրութեամբ ի մեծագոյնն։

8. Արդեօք համարիցի արբեցելոյն ի մեղս ամենայն ազգ մեղաց, զոր գուշակէ Թէ գործելոյ է յարբեցու-Թեան։ — Աալմատիկեանք և Աոթոյ ընտրութիւն ինչ առնեն աստանօր գործոց չարաց՝ որպէս սպանութեան, ընութեան և այլն, որ համարին նման ի մեղս, և բանից չարաց՝ որպէս Թշնամանաց, հայհոյութեան, սուտ-միութեան և այլն, որք ի բերան արբեցելոյն ընչանակեն ինչ որպէս ի պատկառ հնչեալ։ Աուրբն Աւփոնսոս այսոցիկ և զարձեալ առնէ ընտրութիւն, ընդունելով զԹշնամանս որ առ մարդիկ՝ որք ի բերան արբեցելոյն չառնանեն ինչ համբաւոյ նոցա, եԹէ չայայտնիցեն զնա խաւխնս ինչ նոցա։ Աայլ ոչ ընդունի զհայհոյանս և զերդմունս՝ որովք Թշնամանի Աստուած. զի Թէպէտ և չիցեն կամաւորք ի գործն, այլ կամաւորք ի պատ-ճառն են։

Աայլ պարտ է աստանօր քննել զխնդիրն զայն, Թէ արդեօք առ ի համարել ի մեղս զհետևանս մեղանչա-կանս՝ հաճոկ իցէ նախատեսութիւն նոցա ի սկզբան գործոյն. զի կարևոր է գիտել զայս վասն ամենայն ազ-գի ազգի մեղաց։ Ասպրն Աքվյարատց ոչ համարի կա-րևոր, և ասէ Թէ չէ կարևոր առ ի մեղս՝ ներգործական մնացուածութիւն չարութեան նորա, այլ շատ իսկ է ամե-նայն ոտիտութիւն յառաջ եկեալ ի մեղաց ըստ սրբոյ Աւգուստինոսի՝ որ ասէ. "Ցգիտութիւն, որ յառաջ գայ ի մեղաց, ոչ անբասիր առնէ զմեղս"։ Աայլ հա-սարակաց և Ճշմարիտ վարդապետութիւն կարևոր հա-մարի ի պատճառն գէԹ աղօտ ինչ տեսութիւն չար հետևանացն, կամ գոնեա վտանգին կամ պարտուցն նախատեսանելոյ զայն, որպէս զի հետևանքն լիցին մե-ղանչականք, եԹէ ոչ ներգործական գիտութեամբ՝ գէԹ զօրութեամբ։ Այսպէս ուսուցանեն բարեյա-կանք գրեԹէ առ հասարակ ըստ վարդապետութեան սրբոյն Աստինոսի՝ որ ասէ. "Ոչ պնու զի ի բնէ անգիտանայ ոք կամ չկարէ գիտել Համարին նման ի մեղս, այլ պնու զի գիտել ոչ ջանայ"։ Եւ այլուր. "Հա-մարի քեզ ի մեղս՝ եԹէ ակամայ անգիտանաս, այլ

յորժամ անփոյթ լեալ իցես գիտելոյ ,, : Ա՛ստն որոյ և ղմեղայն Պ՛ողոսի ասէ . “Պ՛ետրեղէն է՝ ոչ որչափ մծղնիցն եթիէն է զատապարտելի , այլ որչափ արբեցու-թիւն ,, : Բ՛ստ այսմ արդասիք մեղանչականաք յայնժամ համարին ունել ՚ի մեզ , յորժամ յառաջ գան ՚ի մեղանչական անհոգութենէ իւրմէ ընդ այն՝ զորմէ խընդիրն է :

Եւ ոչ հակառակ այսմիկ է վկայութիւն սրբոյ Դ՛աւիթացւոյն . զի խօսի նա անդ , որպէս առաքեալն խաչեր , զանհաւատից . որք ՚ի Ձ՛ենգիրիտ հաւատոյ մոլորեալ , նախատեանէին գէթ ընդ աղօտ զամենայն մեղս որ մարթ էր նոցա զառածանել ՚ի թողուլն ՚ի բաց զՁ՛ենգիրիտ հաւատս , որով և յիրաւի համարէին նոցա այնոքիկ ՚ի մեղս : Որպէս և խոստովանաւորն , որ գիտելով զգիտութիւն իւր՝ մատակարարէ զնորհուրդ ապաշխարութեան , յիրաւի համարին ՚ի մեղս ամենայն վրիպակք գործեալք ՚ի նմին . զի ՚ի ձանձրանալ անդ զգիտութիւն իւր , նախատեանէ ընդ աղօտ զամենայն վրիպանս՝ յորս մարթ է նմա անկանել : Օ՛նոյն է ասել և զմերձաւոր պատճառաց՝ որոց հարկաւ ՚ի ձեռն գան բազումք այլ ևս սխալանք . զի է անդ գոնեա աղօտ տեսութիւն հետևանացն այնոցիկ : Ա՛յլ ոչ զնոյն է ասել և զհեռաւոր և զանհամեմատ պատճառաց , յորոց ՚ի ձեռն գայցեն ինչ վրիպակք . զի այսոքիկ չհամարին ՚ի մեղս , եթէ չիցէ ուրուք զգայս նախատեսեալ գէթ ընդ աղօտ , և կամ ՚ի պարտս նախատեսանելոյ զգայսոցիկ մոռախոհ լեալ և դրականապէս անփոյթ արարեալ իցէ զգայնոցանէ : Օ՛յս բազում ուրեք ուսուցանէ սուրբ Դ՛աւիթացին . “Գ՛իտութիւն , որ իցէ բոլորովին ակամայ , ոչ համարի ՚ի մեղս . և այս է զոր ասէն սուրբքն Գ՛րիգորիոս . Հ՛ակառակ ինչ ՚ի մեղս՝ եթէ ակամայ անփոյթ , այլ յորժամ անփոյթ լեալ իցես գիտելոյ ,, : Եւ այլուր ասէ՝ յայնժամ մեղանչել մարդոյ տգիտութեամբ , յորժամ մտաց հաւանութեամբ հրաժարէ ՚ի գիտելոյ որ ինչ պարտ է նմա գիտել , որպէս զի մի խափանեսցի ՚ի մեղաց՝ զոր սիրէ : Եւ այլուր ասէ զի տգիտութիւն՝ կամաւոր է անուղղակի , “յորժամ որ առանձնոհութեան չկամի գիտել որ ինչ պարտն է նմա գիտել ,, : Եւ բացատրէ իսկ զչկամէնն՝ ասելով . “Հ՛կա-

մեն ընթեռնուլ՝ հաւասար է ընդ կամելոյ չընթեռնուլ,,: Ձեր մարթ սրբոյ վարդապետին յայտնագոյնս բացատրել զի առ՝ ի մեղանչական լինելոյ տպիտութեան կարևոր է նախատեսանել զեթ ընդ աղօտ զբաս՝ որ՝ ի տգիտութենէ անտի կարէ յառաջ գալ: Նոյն ինքն՝ ի խօսելն զմեղանչական ախորժանաց՝ ասէ. "Ձև բանին կշռադատեալ զՀեշտութիւնն, չիք նորա մեկնողական հաւանութիւն, թէպէտ և ոչ ղեկմ կալցի Հեշտութեանն: Ա՛յլ՝ի կշռադատել բանին զզգացումն Հեշտութեանն և զինքսեսակար Հետևանս նորին, այս ինքն՝ ի խորհել զկործանումն պատրաստեալ նմա Հեշտութեամբն, եթէ ոչ զօրութեամբ կամացդ ղեկմ կալցի՝ յայտ է թէ հաւանի. և յայնժամ մեղքն փոխաբերի՝ ի բանն ներգործութեամբ նորին,,: Ապա ուրեմն առ՝ ի մեղանչել մարդոյ մեկնողական հաւանութեամբ՝ ի Հետևանս Հեշտութեան՝ կարևոր է միշտ զի բանն յեղանակաւ իմն նախատեսանիցէ զայն:

Օնոյն և Այեթանոյ Հաստատէ, և ասէ. "Որ՝ ի նախագրեալ պատճառէ յառաջագոյեալ գործ, կրկնակի կարէ գոլ զօրութեամբ կամաւոր. մի՝ յորժամ՝ ի սկզբանէ գործոյն խորհի զի զայն, և նախատեսանէ որ ինչ այնմ՝ զՀետեւան գան. և միւս ևս՝ յորժամ՝ ի միտ առեալ զպարտս նկատելոյ որ ինչ՝ ի պատճառէ անտի յառաջ գան գործք, ստգտանելն անհոգութեամբ անփոյթ առնէ,,:

Ապա ուրեմն առ՝ ի մեղանչել՝ ի Հետևանս չարեաց՝ որ յառաջ գան՝ ի գործոյ իմեքէ չարէ, պահանջի զի կամ՝ ի սկզբանէ գործոյն նախատեսանիցէ զչարն առաջիկայ կամ զվտանգ նորին, և կամ զի՝ ի մեղանչելն ունակաբար՝ չկամիցի տեղի տալ կշռադատութեան կամ խորհրդոյ, պիտելով զի պարտ է նմա կշռադատել կամ խորհել առ՝ ի Հանապազելոյ թէ իցէ՞ մեղանչական գործն՝ զոր առնէ, թէ ոչ: Այլոց որոց ունակութեամբն մեղանչեն, որպէս Հայհոյիչք, ոչ է պարտ Հաւատալ՝ թէ չխորհիցին՝ ի Հայհոյելն. զի թէպէտ և չիցէ նոցա խեղաթիւրութիւն և պայծառ ծանօթութիւն մեղացն որպէս այնոցիկ՝ որ չիցեն ունակացեալ, այլ է նոցա միշտ ծանօթութիւն ինչ զեթ աղօտ և այնպիսի՝ որ բաւական է կամաւոր զգործն կացուցանելոյ: Օ այսմանէ և լիւրում տեղւոջն ասասցուք. (գլ. ԺԹ. 19):

ՅՕԴՈՒԱԾ Բ

ՅԱՂԱԳՍ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ

9. 10. Սպանութիւն ՚ի հրամանէ պետութեան:
11. Ի պաշտպանութիւն անձին կենաց՝:
12. Ի պաշտպանութիւն պատուոյ:
13. Ի պաշտպանութիւն ընչից:
14. Ի պաշտպանութիւն պարկեշտութեան:
15. 16. Ի պաշտպանութիւն ընկերին:
17. Առ ՚ի զառաջս առնուլ յարձակման:
18. Օրէն էր եթէ սիրելի պաշտպանել զկեանս իւր ընդդէմ յարձակման առն չնացելոյն:
19. Օրէն էր երբեք սպանութիւն անվեղին:
20. Օրէն էր տալ պատճառս վիժման:
21. Անհանիցի ՚ի բանադրանս կին որ կամաւ զսաղմնն վիժիցէ:
22. Եթէ երկբայելի էր հոգևորութիւն սաղմին:
23. 24. Թէ օրէն էր մօր առնուլ դեղ վանդաս վիժման սաղմին:

9. Ոչ ումեք օրէն է սպանանել զոք, բայց միայն ՚ի հրամանէ պետութեան կամ ՚ի պաշտպանութիւն կենաց իւրոց: Ի հրամանէ պետութեան օրէն է աներկբայապէս սպանանել զմահապարտս. այլ Թիկնապահաց իշխանին չէ օրէն սպանանել զոք ՚ի չարագործաց փախուցելոց կամ դիմամարտից, եթէ չիցէ նոցա յայտնի հրաման իշխանին առ այն: Իսկ մարթ իսկ է իշխանին տալ այսպիսի հրաման, եթէ չարագործն դատապարտեալ էր կամ եւ ըմբերանեալ, կամ չարահամբաւեալ յանցանօք մահապարտութեան, և ՚ի փախչել նորա՝ մեծագոյն եւս չարեաց էր վտանգ: Առ այս ընդ հակառակն չէ օրէն իշխանի հրամայել մահ յանցաւորի՝ որ կայ ՚ի բանտի եւ եւս դատապարտեալ, թէպէտ և մահապարտութիւն նորա յայտնի էր առանձնական դիտութեամբ, և որպէս Սալմանտիկեանք յաւելուն՝ եթէ չիցեն յանցանքն աշխարհաբարոյ, կամ եթէ դուրս վըտանգ խռովութեան ՚ի յամել սահենական քննութեան:

10. Վիտելի է աստանօր զի ոչ կարեն եկեղեցականք, թէպէտ և իցէ նոցա իշխանութիւն քաղաքական, դատապարտել զոք ՚ի մահ առանց ունելոյ յայտնի տնօրինութիւն ՚ի Պապէն: Բայց եպիսկոպոսունք, որոց

իւրէ իշխանութիւն քաղաքական, կարէն ՚ի դատաստանս արեան աւանդել աշխարհականաց զիշխանութիւն իւրեանց: Վնտեղի է դարձեալ զի պարտ է դատաւորի ընդ ծանր մեղաւք տալ ամենապարտին ժամանակ խոստովանելոյ, և հաղորդելոյ նմա՝ եթէ չիցէ ծանր ինչ վտանգ ՚ի յամեցմանէ պատժոյն: Օ՚ի աստուածային պատուիրանաց են անդ պարտք՝ կալալ նորա մերձ ՚ի մահ, որպէս զի մարթի իսկ է նմա և անծամ հաղորդել: Նակ եթէ յամառեալ կայցէ մահապարտն և չկամիցի խոստովանել, յետ խրատելոյ զնա՝ օրէնն է առնել զարդարութիւն:

11. Օրէնն է և՚ի պաշտպանութիւն անձին սպանանել ումեք և զյարձակեալն ՚ի վերայ իւր յանիրաւի. բայց միայն այնչափ ինչ առնելով նմա ինաս, որչափ կարևորն է առ ՚ի զերծանել՚ի ինասուէ և ոչ աւելի: Օ՚այս այսպէս ուսուցանեն աստուածային և մարդկային իրաւունք: Նա ոչ է մարթ ասել՝ եթէ պարտ իցէ նախադասել զհոգևոր կեանս ընկերին քան զժամանակաւոր կեանս անձին. զի այս եղբայրսիրութեան օրէնք զօրեն, ուր զոհ կենացս ամենևին կարևոր իցէ՚ի փրկութիւն ընկերին՚ի յետին կարօտութեան, որպէս յորժամ՚ի մերձաւոր վտանգ մնհու կայցէ մնանուկ անկինուք, յայնժամ և զնհ պարտ է յանձն առնուլ առ՚ի մկրտել զնա. այլ ոչ յորժամ յարձակեալն անձամբ զանձն կամաւորութեամբ դնէ՚ի վտանգ դատապարտութեան. զի անօրէն կամք նորա չկարէ բառնալ զիրաւունս այլոց պաշտպանելոյ զկեանս իւրեանց:

12. Ոմանք այսորիկ ոչ սակաւք՚ի բարեյականաց օրէն համարին՝ աղնուականի սպանանել զյարձակեալն ծանր նախատանօք ընդդէմ պատուոյ իւրոյ, որպէս թէ սպառնալով աքացել զնա կամ ապտակել: Ոյլ իմաստութեամբ ասէ Վիլլիամ, զի "Վնդպէտ և լաւ իցէ պատիւ քան զմեծութիւնս բազումս, սակայն ոչ երբեք, և կամ կարի դուն ուրեք մարթ է պատահել՝ զի՚ի պաշտպանութիւն պատուոյ եթէ օրէն իցէ սպանանել զյարձակեալն":

13. Նայց հասարակաց կարծիք աստուածաբանից օրէն համարին սպանանել զգող, որ մեծագին ինչ յարձակիցի գողանալ, և ոչ՚ի սպառնալեաց մնհու կամիցի

տեղի տալ. որպէս և ’ի մահկանական օրէնս է գրեալ. “Եթէ յակաս գտանիցի գող, և խոցեալ մեռցի, չէ այն նման ’ի սպանուԹիւն,,: Յայսցաք ՌեՃագին ինչ. և զայս ոչ ըստ գնոյն գատելի է, այլ ըստ այնմ՝ զի ’ի բառնալ զայն գողոյ՝ չինայցէ ումեք կարեւորն ’ի կեալ և ’ի կեցուցանել զներան: Ոչնոյն է ասել ըստ Հաւանականացն կարծեաց և վասն բառնալոյ զայնպիսի գողնոյ ’ի ձեռանէ գողոյն, եԹէ չիցէ այլ ինչ հնար յետս առնելոյ զայն: Որ ինչ օրինաւոր ասացաք աշխարհակալնոց ’ի պաշտպանուԹիւն ընչից, օրէն է և եկեղեցականաց և կրօնաւորաց, և ոչ յանկանոնուԹիւն անկանէին նոքա այնուհետև: Յոր զոր վասն անձին օրէն է տանուտեառն առնել, կարէ և վասն ծառայիցն իւրոց առնել:

14. Եթէ օրէն է սպանանել զյարձակեալն ’ի յափշտակուԹիւն ընչից, առաւել ևս օրէն է առնել զայն ’ի պաշտպանուԹիւն պարկեշտուԹեան անձին առ ’ի չգոյէ այլոց հնարից: Յոր ԹէպԹ յետ Թշնամանացն ընդունելոյ ոչ ևս օրէն է սպանանել զյարձակեալն, այլ օրէն է Թշնամանելոյն և իսկ և իսկ զհետ Թշնամանացն հարկանել զԹշնամանօղն, և վէրս իսկ ոչ ծանուցանս վիրաւորել զնա, որպէս զի ծանիցի հաստատուԹիւն իւր և դժկամակուԹիւն, և ոչ ևս Թշնամանօղն իշխեսցէ ’ի նոյն:

15. Յոր որպէս օրէն է պաշտպանել կենաց անձին, նոյնպէս օրէն է և զանմեղն կեցուցանել սպանուԹեամբ յարձակելոյն ’ի վերայ նորա: Յոր չէ մարԹ ասել ԹԷ կարօղ իցէ անմեղն հրաժարել ’ի պաշտպանուԹենէ կենաց իւրոց. զի ԹէպԹ և յիրաւանց պաշտպանելոյ զկեանս իւր կարիցէ հրաժարել, այլ ոչ և ’ի կենաց իւրոց՝ որոյ չէ ինքն տէր: Յոր ոչ միայն օրէն է՝ այլ և պարտ պաշտպանել նմին, եԹէ իցէ նա հայր կամ որդի կամ եղբայր և կամ կարևոր բարւոյ հասարակաց: Իսկ գատաւորք և արբանեակք նոցա պարտականք են յօրինաց արդարուԹեան պաշտպանել զկեանս անմեղին. և վտանգաւ իսկ կենաց իւրեանց, ուր իցէ օգուտ հասարակաց՝ որպէս ’ի բառնալ զաւազակս:

16. Ըստ այմ և զյարձակեալն ’ի վերայ պարկեշտուԹեան ուրուք՝ հասարակաց կարծիք բարոյականաց

օրէն համարին սպանանել. եւ եթէ չիցէ կինն հա-
ւանեալ յայտնապէս կամ լռելեայն: Այլ և յայնժամ,
Եսիոյ, Սալմատիկեանք, Փորեր և այլք, օրէն հա-
մարին վերաւորել զյարձակեալն, եթէ ի վերայ կա-
րևոր ազգականի իցէ յարձակեալ, և այլազգ չիցէ մարթ
խափանել զնախատինան: Նմանապէս բազումք ի բա-
րոյականաց օրէն համարին սպանանել զյարձակեալն ի
յափշտակութիւն ընչից ուրուք, եթէ չիցէ հնար այլ
ազգ խափանել զնա: Ո՛ի յամենայն ի դէպս յայսո-
սիկ օրէնք եղբայրսիրութեան նախադասելոյ ընչից զգ-
կեանս ընկերին ոչ եւս զօրէ. զի նա յայսոսիկ ոչ գտա-
նի ի վերջին կարօտութեան՝ այլ ինքնակամ դնէ
զանձն ի վտանգ մահու:

17. Ոչ՞ երբէք օրէն կանխել սպանանել զյարձա-
կողն ի վերայ: — Եթէ ի միջի կայցեն բարոյական
հաւաստիք դիտաւորութեան յարձակելոյն, որպէս
պատրաստել նորա զինս առ այն, սպառնալ և կամ պա-
տուէր տալ զայն աւազակի, օրէն է յայնժամ կանխել՝
եթէ չիցէ հնար խոյս տալ ի վտանգէն: Այլ վասն
կասկածանաց եւեթ ոչ է օրէն սպանանել զոք:

18. Օրէ՞ն իցէ հոմանւոյ ի պաշտպանութիւն կե-
նաց իւրոց սպանանել զայր կնոջն ընացելոյ յարձակեալ
ընդդէմ իւր: — Եթէ ընացողն տեսանելով առաջի ա-
չաց զմերձաւոր վտանգ՝ յանդգնեսցի զչար կամս իւր
կատարել, ոչ եւս իրաւունք են նմա սպանանելոյ զյար-
ձակեալն ի վերայ. իսկ եթէ հեռաւոր իցէ վտանգն,
և նախահոգ զգուշութեամբ կենացն համարձակիցի ի
ընութիւն, և չիարիցէ խոյս տալ ի յեղակարծ վտան-
գէն, օրէն է նմա պաշտպանել զկեանս իւր:

19. Ոչ՞ երբէք օրէն սպանանել զանմեղն: — Ա-
յո երբեք է օրէն սպանանել ուղղակի, այլ ի դէպս ինչ
օրէն է անուղղակի մատնել զնա ի մահ: Ասպա ի
սպառնալ բռնաւորի ուրուք կործանել քնաջինջ առնել
զքաղաքն՝ եթէ ոչ սպանանիցեն զանմեղն, թէպէտ և
չիցէ օրէն և ոչ յայնժամ սպանանել զնա, սակայն օ-
րէն է տալ զնա ի ձեռս բռնաւորին, եթէ հրաժարես-
ցէ անձնատուր լինել, որպէս հաւանականապէս ու-
սուցանեն Մոլինա, Եսիոյ, Այման, Ուկոյ և այլք
ընդդէմ Սոթոյի և այլոց: Ասն զի պարտ է նմա յայն-

ժամ տալ զանձն վասն հասարակաց փրկութեան. և եթէ ինքն վերջանայ ի պարտուց իւրոց, օրէն է պետութեան տալ նմա բանի կատարել զպարտսն։ Երկրորդ՝ ի խուսել հեծելոց ուրուք յերեսաց սպանողի ընդ անձուկ ուղի, եթէ հարկ լինի նմա կոխել զմանուկ, հասարակաց կարծիք աստուածաբանից ներեն նմա ապրեցուցանել զանձն փախստեամբ, եթէ միայն իցէ մանուկն մկրտեալ։ Երրորդ՝ օրէն է ի պատերազմի ուղղել զհրացէն և զայլ զէնս ի թշնամիս, թէպէտ և հարկ իցէ այնու մեռանել անմեղաց։

20. Ո՞ւր իցէ երբեք վիժել զաղջիկ։ — Ուղղակի չէ երբեք օրէն, թէպէտ և չև իցէ հոգևորեալ. զի թէ և միաւս ումեք անտի ոչ հասանէ, այլ հասանէ գէթ օրինաց ծննդագործութեան։ Վասն որոյ Ալեքսանդր Ե. ոչ միայն զրկէ յեկեղեցական արտօնութենէ և՛ի հասից և յընդունակութենէն նոցին, այլ նովին իսկ գործով՝ի բանադրանս և յանկանոնութիւն դատապարտէ զայնոսիկ՝ որք գէթ ամբ հայթայթեն զվիժուածն սաղմին, թէպէտ հոգևորեալ իցէ և թէ անհոգի, գործակից իւրհրդակից կամ օգնական լինելով՝ի նոյն, վերապահեալ սրբոյ գահին զարձակումն՝ի մեզաց անտի։ Նայց Դիդիմոս ԺԲ. ամիսսիեաց զբանադրանսն և զանկանոնութիւն՝ի պատիժ վիժման հոգևորեալ և եթէ սաղմին, և եպիսկոպոսաց և որոց անկն է՝ետ իշխանութիւն արձակելոց՝ի բանադրանաց անտի։ Այս ըստ հաւանականաց կարծեաց՝ կարող է եպիսկոպոսն աւանդել և այլոց զիշխանութիւն իւր։ Արօնաւորաց ևս իշխանութիւն է արձակելոց յայսմանէ, որպէս ասասցուք՝ի տեղւ (գլ. Ի. 102)։

Նշացաք գէթ ամբ. զի որպէս առաջի կայ մեզ ասել և՛ի Հառս բանադրանաց, ոչ անկանիլն՝ի բանադրանս և յանկանոնութիւն որք թանձր տգիտութեամբ պատճառս տան վիժման։ Իսկ յաղագս ժամանակի հոգևորութեան սաղմին՝ հասարակաց կարծիք նախ քան զաւուրս քառասուն չհամարին հոգևորեալ զարու. և նախ քան զուԹսուն աւուրս զէպ. և զայս կանոն ունի սուրբ Ժողովն ապաշխարութեան՝ի դատել զպատիժս այսր մեզաց։

21. Երդեօք յղի կանայք, որք հայթայթեն զվիժ-

ժուժն սաղմին, անկանիցին ՚ի բանադրանս։ — Խա-
զուքք Համարին անկանել և նոցա, ընդ որս և Պօնաչի-
նա, Ալ լուա, Սփորեր և այլն, վասն բանի սիքստեան
կոնդակին՝ "Լուր ինքեանք իսկ կանայք, որ գիտելով
առնուն զդեղ,, և այլն։ Խայց Լուկց, Ֆլիլա, Լեզա-
նա, Սալմատիկեանք և այլք յոյժ հաւանականաբար
ազատս Համարին զնոսա ՚ի բանադրանայ, զժամանա-
կաւոր պատժոյ իմանալով զայն բան կոնդակին, զի յետ
այնորիկ ասէ. "Լուր զի մի զայսպիսւոյ ոճիր եղելոյն
ժամանակաւոր ևեթ պատժովք զառաջս առնուցուք,
այլ և Հոգևորօք,, և այլն։

22. Որք Հայթայթենն զվիժուժն սաղմին, որոյ երկ-
բայելի իցէ Հոգևորութիւն, անկանիցին յանկանո-
նութիւն։ — Ակնք ՚ի բարոյականաց Համարին անկա-
նել նոցա, յեցեալք ՚ի բան կոնդակին որ յաղագս մար-
դասպանութեան՝ ուր սահմանին անկեալ յանկանո-
նութիւն և այնօրիկ, որոց երկբայելի իցէ գործակցու-
թիւն սպանութեան։ Ալ Հակառակն Թուի ստոյգ
ըստ բազմաց. վասն զի անդ ստոյգ է մարդասպանու-
թիւնն, և գործակցութիւն ևեթ երկբայելի. այլ աստ
Հոգևորութիւն սաղմին երկբայելի, վասն որոյ և մար-
դասպանութիւնն անստոյգ. որով և չիք զայսմանէ օ-
րինք ինչ բացայայտ. իսկ ուր չիցեն օրինք բացայայտ,
չիք և պատիժ։ Ալ եթէ գործակցութիւն վիժմանն
իցէ երկբայելի, և Հոգևորութիւն սաղմին աներկբայ,
յայտ է թէ ընդ նովին օրինօք մարդասպանութեան
անկանի։ Խայց եթէ բանիւ չափ լեալ իցէ գործակ-
ցութիւն, և այն երկբայելի, զայսմանէ ասացուք ՚ի
Հաւս անկանոնութեան (գլ. ԺԹ)։ Որ ինչ զանկանո-
նութենէ ասացաք, զնոյն իմն և զբանադրանայ։ Տնօ-
րինել զանկանոնութիւն վերապահեալ է Պապին. բայց
Լուկէ, Սփորեր և Ռոնքալեա Համարին եպիսկոպո-
սաց ևս ունել իշխանութիւն տնօրինելոյ զանընդունա-
կութիւն եկեղեցական Հասից վասն անկանոնութեան։
Տե՛ս և որ ինչ ասացաքս զայսմանէ ՚ի վեր անդր (գլ.
Բ. 58)։

23. Որ՞ն իցէ մօր առնուլ դեղ ուղղակի առ ՚ի վի-
ժել զսաղմն անՀոգի։ — Խայտ է զի, որպէս ասացաքս
՚ի սկզբանէ, չէ երբեք օրէն վիժել ուղղակի զսաղմն

և և անհոգի, (եթէ չիցէ յայտնապէս ապականեալ)։ Թէպէտ և այնու հասցէ մօրն վտանգ մահու, կամ յազգականացն զայրացելոց կասկածանօք յղութեան նորա՝ որ դատապարտեալ իսկ է յինքնակենդանեայ ժա, և կամ վասն վտանգի երկանցն՝ զորոց յայլ նուազս առեալ իցէ զիորձ։ Այլ և՛ի հակառակն յայտ է ըստ հասարակաց կարծեաց, զի օրէն է մատուցանել մօր դեղ՛ի բժշկութիւն մահացու ախտին, թէպէտ և անուղղակի գուցէ վտանգ վիժման սաղմին։ Յատի զհետ բերեն բազումք զի օրէն իցէ յայնժամ և ուղղակի տալ վիժել զսաղմն անհոգի՝ մահաբեր մօրն, որպէս զսպանօղ՛ի վերայ յարձակեալ. զոր առաւելագոյնք ոչ ընդունին։ Այլ բարւոք ասէ Հայրն Պուսեմպայ, զի զինչ պէտք իցեն վարել կարծեօք ուղղակի վիժման, ուր ըստ ամենեցուն կարծեաց օրէն է վիժել անուղղակի զսաղմն անհոգի։

24. Որ՞ն իցէ մօր առնուլ դեղ՛ի բժշկութիւն վտանգաւ վիժման հոգևորեալ սաղմին։ — Եթէ բացայայտ իցէ ստոյգ՝ զի՛ մեռանել մօրն մեռանելոյ իցէ և սաղմն, օրէն համարի առ ամենեսեան։ Ընդհակառն այն է՝ եթէ իցէ յոյս կարելոյ միրտել զսաղմն՛ի մեռանել իսկ մօրն։ Ոմանք օրէն համարին և ասա այնու, զի տալ զնարմնաւոր կեանս վասն յաւիտենական կենաց ընկերին յայնժամ է պարտ՝ յորժամ հաւաստի իցէ փրկութիւն նորա, և ոչ ուր երկբայելի իցէ։ Այլ անդնման է պատճառաբանութիւնս նոցա. զի այլ է տալ զկեանս՛ի փրկութիւն հոգւոյ ընկերին, և այլ վասն պաշտպանելոյ զկեանս իւր դնել զկեանս ընկերին դրաւ կանապէս՛ի վտանգ յաւիտենական մահու. զի ուր հաւասար իցէ վտանգ մահու մօրն, և զաւակին մեռանելոյ անկնութ, թուի թէ օրէնք եղբայրսիրութեան պահանջիցեն նախադասել զյաւիտենական կեանս զաւակին։ Այսն որոյ հետևելի է կարծեաց այնոցիկ, որ յայնժամ միայն օրէն համարին տալ մօր դեղ վտանգաւ հոգևորեալ սաղմին՝ յորժամ չգոյէ ինչ յոյս կենաց և փրկութեան նորա՛ի մեռանել մօրն։ Այսն զի յայնժամ միայն թուի եղբայրսիրութեան ոչ ածել պարտս՛ի վերայ մօրն՝ հրաժարելոյ՛ի յետին վտանգի՛ի կենսատու դեղոյ, վասն հեռաւոր ինչ յուսոյ կենաց

զաւակին : Ա՝ ման որոյ Աղմատիկեանք ոչ պարտ հա-
մարին կարի ինն խղձել բժշկաց տալոյ մօրն դեղ ՚ի
բժշկութիւն . զի դժուարագիպ և բարդապէս անհնա-
րին իսկ է կեալ զաւակին ՚ի մեռանել մօրն , որպէս և
հմուտք ՚ի բժշկայ հաստատեն : Ո՞չ ՚ի մահացու ախ-
տէ մօրն ապականեալ հիւթք՝ խանգարեն զսնունդ
սաղմին , և ամենահաւանական է մեռանել նմա յար-
դանդի՝ թերևս յառաջ իսկ քան զմօրն մահ : Իսկ հա-
տանել զարգանդ մօրն հաւանական վտանգաւ մահու
նորա առ ՚ի մկրտել զսաղմն՝ ոչ է օրէն և նորին ին-
քեան մօրն հաւանութեամբ : Ա՛յլ ՚ի հմուտ թենէ
վիրաբուժի եթէ հեռաւոր գտեսցի վտանգն , որ դը-
ժուարագիպ թուի , յայնժամ ոչ միայն օրէն է հա-
տանել , այլ և պարտ իսկ է մօրն յանձն առնուլ զհա-
տումն :

ՅՕԴՈՒԱԾ Գ

ՅԱՂԱԳՍ ՄԵՆԱՄԱՐՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ

25 . Մենամարտ , և որ ինչ զայնմանէ վարդապետութիւնք գտատպար տեալք :
26 . Ե՞րբ մենամարտ իցէ օրինաւոր :
27 . Օրէն իցէ դրդել պատերազմ հաւանական կարծեօք :
28 . Օրէն իցէ կոչել յօգնութիւն զիշխամիս հաւատոյ :
29 . Օրէն իցէ զինուորի դնալ ՚ի պատերազմ, որոյ արդարութիւն իցէ երկբայելի :
30 . Որ ինչ ՚ի պատերազմի օրինաւոր :

25 . Մենամարտ է երկուց կամ աւելի ևս որերոյ ընդ իրեարս մարտ , պայմանեալ օր՝ վայր և զէն : Ոչ է օրէն մենամարտ , թէպէտ և առ ՚ի ցոյց ինչ արարեալ , ոչ ՚ի խնդիր ձշմարտութեան , ոչ առ ՚ի հերքել զզըր-պարտութիւն , և ոչ առ ՚ի զերծանել ՚ի նախատանաց . իսկ վարդապետութիւն օրինաւոր գոլոյ մենամարտու-թեան , վասն չառնոյց յանձն զկեղտ վատութեան , դա-տապարտեալ է Ա՛ղեքսանդրէ Ը : Ո՞այս այսպէս ու-սուցանեն աստուածաբանք առ Հասարակ . վասն որոյ Ա՛ղեքսիկոս ԺԴ . դատապարտեաց զՀնգեսին զայսո-սիկ թիւր վարդապետութիւնս .

Ա . “Ա՛յլ զինուորական , որ ոչ ձայնատուր լինի

կամ չընդունի զմենամարտ, ընդ երկչոտս համարեսցի վատ և անարգ և առ աստիճանս զինուորութեան անպատկանաւոր։

Բ. "Ընդհատրելի են, որք ի պաշտպանութիւն պատուոյ իւրեանց կամ առ ի խորշել ի մարդկային նախատանաց ընդունին զմենամարտ կամ ձայնատուր լինին ի նոյն, գիտելով հաւաստեաւ զի չգայցէ ի գործ խափանեալ յայլոց։"

Գ. "Օրաւար կամ գնդապետ, որ առ մեծի երկիւղի կորստեան համբաւոյ կամ աստիճանի յանձն առնու զմենամարտ, ոչ անկանի յեկեղեցական պատիժս սահմանեալս առ այն։"

Դ. Օրէն է մարդոյ ըստ բնական օրինաց ընդունել և ձայնատուր լինել ի մենամարտ, առ ի պահել զպատիւ և զմեծութիւնս յորժամ չիցէ նմա մարթ այլազգ զառաջս առնուլ կորստեան նոցա։"

Ե. "Նոյն ազատութիւն օրէն է ըստ օրինաց բնութեան ի կիր արկանել յանբարեկարգ քաղաքի, յորում յանհոգութենէ կամ ի չարութենէ իշխանաց արդարութիւն համարձակ հարստահարի։"

26. Երկուս են եթէ դէպս օրինաւոր է մենամարտ։ Մի՝ առ ի վախճան առնել արդար և հասարակաց պատերազմի նուազ վնասուք. կամ որպէս ոմանք ասեն, առ ի պահել զհամբաւ բանակին առաջի թշնամեաց։ Եւ միւս և՝ օրէն է յանձն առնուլ զմենամարտ, եթէ այր թշնամի սպանանել կամիցի զոք, և առ ի պարծանս իւր ընդհատեցէ նմա մենամարտիւ պաշտպանել անձին. զի յայնժամ մենամարտն այն է պաշտպանութիւն կենաց, զոր այլազգ ոչ է մարթ նմա վրկել։

Երբեակ են պատիժք ի տրիդենտեան ժողովոյ սահմանեալք ընդդէմ մենամարտողաց։ ա. Ընդանարկութիւն հանդերձ տարագրութեամբ գոյից։ բ. Ընկումն յեկեղեցական թաղմանէ, եթէ ի մենամարտի անդ անկանիցին, թէպէտ և զղջացեալ էցեն և ընկալեալ զսուրբ խորհուրդս նախ քան զմահ։ գ. Նահատակք պատրանք պատական՝ յոր նուիրին իսկ գործել անկանին մենամարտողք և մարտադիրք նոցին, և խրատուք իսկ՝ ի գալ յարդիւնս խրատուն, և այնոքիկ գարձեալ՝ որ տան տեղի և օգնեն, և որք կանն ի զինի. ոչ որք

ըստ պատահման գտանին ընդ այն անցաւորք, այլ որք կան անդ որպէս հանդիսատեսք՝ որոց մերձակայութիւն խրախուսէ զնոսա ՚ի մեռանելոտ։

Եւ այլ ևս անկանելոց ընդ պատժովքս և ընդ բանադրանօք՝ պարտ է զի իցէ մեռնելոտ ձշդիւ իմացեալ, այսինքն զի իցէ կանուխ խորհրդով սահմանեալ մարտկացն օր՝ վայր և ձևն, թէ և չիցէ նոցա ոք մարտագիր։ Ոմանց որոց ազատ գտանին ՚ի պատժոց աստի՝ որ յանկարծօրէն ինչ կրիւք զրգռին յայն, թէպէտ և ՚ի յոյզս կրիցն խնդրեալ իցէ նոցա վայր պատեհագոյն։ Այլ թէպէտ ՚ի բանից ժողովոյն թուի թէ պարտ իցէ և յարդիւնս գալ մեռնամարտին, սակայն Ղեմէս Ը. յայտ առնէ զի և առանց յարդիւնս ածելոյ զմեռնամարտն՝ անկանին ՚ի բանադրանս, ոչ միայն ինքեանք՝ այլ և գործակիցք նոցա։ Պիտելի է զի եթէ չիցէ մեռնամարտն հռչակեալ և յատեան ածեալ, իշխանութիւն է եպիսկոպոսաց արձակելոյ զնոսա ՚ի բանադրանաց անտի։ Ասկ կրօնաւորաց յՈտալիա ևեթ արտաքոյ Հռովմայ։

27. Յորեակ պայմանք խնդրին յարդարութիւն պատերազմի. իշխանին գերագունի հրաման, հասարակաց բարւոյ ուղիղ դիտաւորութիւն, և ծանր և իրաւացի պատճառ։

Օրէն իցէ առնել պատերազմ ըստ հաւանական ևեթ կարծեաց ընդ իշխանի, որ անխիղճ մտօք ժառանգէ զթագաւորութիւն։ — Ամանք օրէն համարին ասելով, զի որպէս իւրաքանչիւրոց ընծրհեալ է վիճել հաւանական կարծեօք՝ այսպէս և թագաւորաց օրէն է պատերազմել, առ ՚ի չգոյէ դատաւորի՝ որ իրաւ արասցէ նոցա։ Ասկ այլք պահանջեն գեթ հաւանականագոյն կարծիս. զի որպէս պարտ է դատաւորի ըստ հաւանականագոյն կարծեաց դատել ՚ի նպաստ իւրաքանչիւր ումեք, այսպէս և իշխանի մարթ է պատերազմաւ առնուլ զոր ըստ հաւանականագոյն կարծեաց իւրոյն հաստատի, առ ՚ի չգոյէ դատաւորի՝ որ իրաւ արասցէ։ Այրորդ կարծիք, որ յոյժ առաւել թուի հաւանական, ոչ օրէն համարի առնել պատերազմ առանց ստոյգ պատճառի. զի է կանոն հանրական, որպէս ՚ի վեր անդր ասացաք (գլ. Ա. 20), չշրկել զոք ՚ի ժառանգութենէ՝ յոր անխիղճ մտօք վայելէ, առանց ունելոյ հաւաստիս

անիրաւութեամբ ժառանգելոյ նորա զայն։ Այնաւանդ զի այնպիսի և այնչափ միասք են պատերազմի առ կրօնս, և այնչափ եղերութիւնք և սգիրք՝ի նմա, զի գեթ դժուարաւ յոյժ մարթի ի համարել արդարացի զպատերազմ առանց հաւաստի իրաւանց։

28. Որո՞ն իցէ ուղղափառ թագաւորի յարգար պատերազմի կոչել՝ի թիկունս զանհաւատս կամ զբարափառս։ — Ակնք օրէն համարին, եթէ չիցէ ինչ անտի միասք կրօնից։ Այլ քանզի յարդիւնս իրացն անհնարին ի թէ չիցեն միասք այսպիսիք, վասն որոյ Հոլնա, Ավստրիա, Տիանա, Սալմատիկեանք և այլք ոչ օրէն համարին։

29. Որո՞ն իցէ զինուորի երթալ՝ի պատերազմ, որոյ երկբայելի իցէ արդարութիւն։ — Որո՞ն է, և պարտ իսկ ըստ Հասարակաց կարծեաց, և ըստ վարդապետութեան սրբոյն Գրոտինեայ՝ որ ասէ. "Որո՞ն է զինուորի պատերազմել, յորչափ չգիտիցէ հաւաստեաւ զանիրաւութիւն պատերազմին"։ Ոմանք՝ի հպատակի պարտ են հնազանդել ուր ոչ տեսանեն յայտնի ինչ մեղս, որպէս՝ի վեր անդր ասացաք (գլ. Ա. 18)։ Իսկ որ չիցէ հպատակ և չգիտիցէ ստուգիւ զարդարութիւն պատերազմին, չկարէ զինուորել. զի ոչ ումեք օրէն է գործակից լինել յափշտակելոյ որ ինչ ոք ժառանգէ, առանց գիտելոյ ստուգիւ զի անիրաւ է ժառանգութիւն նորա։ Ոմանք ասել և զօտար զինուորաց՝ որ Թոշակաւ ածին՝ի ծառայութիւն, եթէ չիցեն ածեալ նախ քան զյառնել պատերազմին։ Գիտելի է աստանօր զի մեզանչեն զինուորք փախստեայք՝ի պատերազմ, մինչեւ իցէ հատեալ յուսոյ յաղթութեան. և՝ի բանակէ, առանց իրաւացի պատճառի։

30. Ո՞րինչ յարդար պատերազմի է օրինաւոր։ — Նախ՝ սպանանել և առնուլ զինչս թշնամեաց. բայց զանմեղս ոչ է օրէն սպանանել ուղղակի, այլ կողոպտել զնոսա եթէ իցեն մասնակիցք հասարակապետութեան թշնամեաց, և չիցէ մարթ այլազգ առնուլ զյաղթութիւն։ Իսկ զինչս եկեղեցականս, եթէ չիցեն ցբուեալ և կորուսեալ, պարտ է հատուցանել։ Երկրորդ՝ օրէն է կործանել զեկեղեցիս, եթէ թշնամիք ամրանան՝ի նոսա։ Երրորդ՝ հնարս հնարել՝ի միասս

Թշնամեաց, այլ ոչ զաղեւերս Թուննաւորել, և ոչ այլ ինչ այսպիսի, զոր խոհական զգուշութիւն չկարիցէ գուշակել։ Ղորրորդ՝ ի ծանր հարկի և դուն ուրեք օրէն է զօրաւարի հրամանն տալ աւար հարկանելոյ զքաղաքս։ Հինգերորդ՝ օրէն է պերելոց զերծանել փախըստեամբ, եթէ կարիցեն առանց դնելոյ զկեանս իւրեանց ի յայտնի վտանգ։ Վեցերորդ՝ օրէն է հրամանաւ իշխանին յափշտակել ինչ ի քաղաքաց Թշնամի պետուԹեան հաւասար միաւսն՝ զոր իցէ կրեալ ի նոցանէ։ Յաւարէ պատերազմի անշարժք անկ են Թագաւորի, իսկ շարժունք առողին, եթէ չիցէ այլազգ ինչ ուրեք սովորութիւն։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՑ ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

ՑՕԴՈՒԱԾ Ա.

ՑԱՂԱԳՈՒ ՇՕՇԱՓՄԱՆՑ, ՀԱՑԵՑՈՒԱԾՈՑ, ԵՒ ՁՆԶԻՐ ԲՆԻՑ

1 • 2 • Իցէ՞ ընդունելի դուշնաքեութիւն նիւթոյ ՚ի մարմնաւոր կամ ՚ի զգայական հեշտութեան :
3 • Ձշօշափմանց :
4 • Ձպարուց :
5 • Կին որ Թողու շօշափել զանձն :
6 • Պա՞տա իցէ օրիորդի բանաբարելոյ բառնալ զաղաղակ :
7 • Իցէ՞ երբեք օրէն Թողուլ զանձին բանաբարութիւն :
8 • Ձհայեցուածոց :
9 • Ձաղտեղի բանից :
10 • Ձլսելոյ զայնպիսի բանս :

1 • Յաձախագոյն նիւթք խոստովանութեան են մեղք ընդդէմ այսր պատուիրանի գործեցեալք, և սոքա ընդուն զգաժոխս դատապարտելովք • վասն որոյ հարկ է մեզ առաւել մանրամասնաբար զայսցանէ Ձառել, որպէս զի որք պատրաստինն լսել զխոստովանութիւն՝ ուսցին զկարևորս : Ա՛յլ քանզի և ընթեռնուլ իսկ զայսպիսիս ապականէ զմիտս, պարտ է նորընծայելոց՚ի պաշտօնս յայս՝ ուսանել նախ զայլ ամենայն մասունս քաղոյականին, և ապա իբրև հասանել նոցա պարապել այսմ պաշտաման՝ յայնժամ ՚ի միտ առնուլ զայսոսիկ, ինդրելով ՚ի տեառնէ զօրութիւն՝ զի իբրև զՁառագայթս արեգական այնպէս անշաղախ ՚ի տղմուտ խղճիս յայսոսիկ յածիցին մտօք :

2 • Ա՛յս քան զամենայն դիտելի է զի ՚ի մարմնաւոր և զգայական հեշտութեան չիք ինչ դուշնաքեայ, որպէս զի ամենայն հեշտութիւն մարմնական ընկալեալ լիով իմացմամբ մտաց և հաւանութեամբ կամաց՝ է մեղք մահու չափ : Ա՛սան որոյ դատապարտեալ է յա՛ղեքսան-

զրե՛ Ի. վարդապետութիւնն այն՝ որ չհամարի մահու-
չափ զհամբոյր տուեալ վասն մարմնաւոր և զգայական
ախորժանաց, որ անտի գայ յառաջ։ Ա՛ սոն որոյ խո-
տելի է և կարծիք այնոցիկ՝ որ դուշնաքեայ ինչ համա-
րին զզգայական ախորժանս ընկալեալ՝ի շօշափմանէ ձե-
ռին կնոջ, որպէս թէ հանդոյն փափուկ ինչ ծաղկան.
զի եթէ ոչ այլ ինչ, սակայն մերձաւոր վտանգ է՝ի շօ-
շափման անդ անկանելոյ՝ի մարմնական հեշտութիւն։
Ա՛յլ այլ է առնել ինչ վասն հեշտութեան, և այլ
հեշտութեամբ ինչ բնականաւ՝ որ ինքնին զարթնու՝ի
հանդամանաց մարմնոյ.զի յայսմ ընդունելի է դուշնա-
քեութիւն նուիրեալ, որպէս՝ի բժիշկ՝ որ առ հարկի շո-
շափիցէ զմարմին կնոջ, եթէ միայն դիմամարտիւ և ա-
կամբ զհեշտութիւնն զայն կրիցէ։ Օ՛ի զգայականն
այն ախորժ՝ որով ոք շօշափիցէ, թէպէտ և բնական
ինչ է՝ այլ ոչ ազատ՝ի մերձաւոր վտանգէ անկանելոյ
՝ի մարմնական հեշտութիւն, որպէս ասացաք։

3. Ա՛մենայն շօշափումն, համբոյր և գրկախառնու-
թիւն, զորս արտաքոյ ամուսնութեան վասն մարմնա-
կան ախորժանաց ոք առնիցէ, մահու չափ մեղք են. զի
այս ամենայն նոյն են՝ի քնէ ընդ լացեալ ներգործու-
թեան։ Ա՛ սոն որոյ պարտ է բացատրել՝ի խոստովա-
նութեան՝ ընդ արուի թէ ընդ իգի, ընդ ամուսնացելոյ
թէ ընդ ազատի, ընդ ազգականի կամ ընդ ուխտելոյ
իցէ արարեալ։ Ա՛յնպէս մահու չափ մեղք են շօշա-
փել զանձին ծննդականս, մանաւանդ ոգւոյն շարժ-
մամբ, եթէ չիցէ առ հարկի։ Ա՛յլ եթէ առ հետաքըր-
քրութեան կամ թեթևամտութեամբ ինչ՝ի հարևանցի
առնիցէ առանց ոգւոյն շարժման կամ վտանգի հեշտու-
թեան կամ դայթակղութեան, մարթի գոլ ներելի։
Ա՛յլ զայլոյն շօշափել, մանաւանդ մերկս, և առաւել
տարասեռս, թէպէտ և առանց ցանկութեան, հազիւ
երբեք ուրեք մարթի առանց մահու չափ մեղաց։ Ա՛յլ
զանասնոյն շօշափել ոչ է ըստ ինքեան մահու չափ, այլ
սովորաբար չէ ազատ՝ի մահու չափ մեղաց՝ վասն կարի
լինն՝ի ցանկութիւն գրգռելոյ զերևակայութիւնն։

4. Պար համեստ, առանց անպարկեշտ և վտանգա-
ւոր շարժմանց և շօշափմանց և գրկախառնութեանց,
օրէն է աշխարհականաց։

5. Կին կամ օրիորդ յընդունելն ըստ սովորութեան երկրին համեստաբար զհամբոյր կամ զգգուանս ձեռին կամ զգրկախառնութիւն, ոչինչ մեղանչէ. բայց միայն եթէ գիտիցէ զչար բաղձանս ուրուք, և կարիցէ զգուշանալ՝ի նմանէ առանց չարահամբաւութեան նորա և առանց տալոյ այլոց գայթակղութիւն, պարտի հրաժարել: Իսկ՝ի ներել անհամեստ գգուանաց, և երկար կամ դաղտագողի համբուրից, մեղանչէ:

6. ՊաՓրտ իցէ օրիորդի՝ի բռնաբարելն զաղաղակ բառնալ, եթէ այլազգ չկարիցէ զերծանել՝ի պղծութենէ: — Կէսք ազատ կացուցանեն զնա յաղաղակել՝ եթէ այլոյ ամենայն հնարիւք զդէմ կալցի, և եթէ վտանգ նախատանաց յաղաղակէ անտի կարիցէ հասանել նմա. բայց միայն եթէ չկայցէ նմա վտանգ հաւանութեան մեղայն: Իւ ոչ հակառակ բանի երկրորդ օրինաց (ԻՒ. 23) համարին զայս վարդապետութիւն, ուր դատապարտի աղջիկն՝ զի ոչ Էողոջեաց. քանզի պատուիրանն այն վասն արտաքին ատենի է, յորում համարէր աղջիկն հաւանեալ՝ի չբողոքելն: Իսկ այլք պարտ համարին նմա աղաղակել, և սուրբն Ղևիոնոս ապահովագոյն համարի զայս կարծիս, թէպէտ և զհակառակն ևս ոչ եպերելի՝ մինաւանդ ուր չկայցէ մերձաւոր վտանգ հաւանութեան մեղայն:

7. ՊաՓրտ իցէ կնոջ մահուամբ չափ զդէմ ունել սիղեխին՝ի վերայ իւր յարձակելոյ, քան զպղծութիւն յանձն առնուլ: — Կէսք յաստուածաբանից ոչ պարտ համարին, եթէ միայն չիցէ նմա վտանգ հաւանութեան: Ղայլ այս կարծիք ոչ հաւանելի թուի՝ի գործնականին. զի դժուարին յոյժ է կնոջ առանց վտանգի հաւանութեան կրել զբռնաբարութիւն: Իսկ յաղագս ամուսնացն և խօսեցելոց ընդ իրեարս վարելոյ, ասացուք՝ի ստորև՝ի Ճառս ամուսնութեան:

8. Հայել յառականս տարասեռից գժուարաւ մարթի առանց մահացու մեղաց, եթէ չիցէ՝ի կարի հեռաստանէ և այնպէս հարևանցի՝ զի չիցէ վտանգ հեշտութեան: Ի տամասեռից իսկ հայել յառականս՝ չէ ազատ՝ի մահուչափ մեղաց, մինաւանդ եթէ՝ի պատանի գեղեցիկ և՝ի մերկանդամ յառեալ կայցէ ոք ա խորժանօք: Ղայլ պարզ հայեցուած չար, առանց ըղձից

շօշափելոյ՝ չառնու զտեսակ մեղաց՝ ի հանդամանաց անձինն աղջականի կամ սրբազանի կամ ամուսնացելոյ. զի մծղնխուԹիւն սրբապղծուԹիւն և շնուԹիւն առնուն զտեսակ իւրեանց՝ ի գործոյ, որ կրօնից կամ ամուսնական իրաւանց հակառակին: Այլ, ՝ի խառնս առն ընդ կնոջ մահուչափ մեղք են աներկբայապէս. իսկ ՝ի կենդանեացն վտանգաւոր յոյժ, վասն որոյ ոչ ումեք է օրէն՝ բայց միայն որոյ գործ է հայԹայԹել զսերունդ կենդանեաց, եԹէ չիցէ նոցա վտանգ հաւանուԹեան: Իսկ ՝ի բազուկս՝ ի սրունս և ՝ի կուրծս կնոջ հայել ոչ միշտ մահուչափ մեղք են ըստ ինքեան. այլ յառել ՝ի նոսա կամաւ, կամ եԹէ իցէ հայեցողն մէտ ՝ի ցանկուԹիւն, գժուարաւ մարԹի առանց մահուչափ մեղաց. զնոյն է խմանալ և զյառելոյ ՝ի դէմս կնոջ գեղեցկի, գԹէ անկարդ սիրով սիրեցելոյ: Այել ՝ի նըկարս անպարկեշտս առ հետաքրքրուԹեան ոչ համարին բարեպականք ՝ի մահուչափ մեղս, եԹէ չիցէ վտանգ հեշտուԹեան. այլ չգիտեմ արդեօք կարիցէ ոք գոլ ապահով ՝ի վտանգէ աստի, մանաւանդ ՝ի յառեալ հայել յամօԹոյս տարասեռս, ԹէԵ և ՝ի նկարեալս կամ ՝ի քանդակեալս: Իսկ որք նկարենն կամ քանդակեն կամ ունին առանձին կամ աճեն ՝ի տեսիլ զայսպիսիս, ծանուսս մեղանչեն տալով պատճառս գայԹակղուԹեան. զի նկարք այսպիսիք և քանդակք կարի յոյժ զրգռեն զպատանիս ՝ի ցանկուԹիւն:

9. Ստօք անհամեստք ՝ի բարկուԹեան կամ ընդ խաղ ասացեալ, որպէս սովորուԹիւն է ոմանց և գեղջկաց, ոչ են մեղք մահուչափ. բայց միայն եԹէ որ յոյժ քարուկանս և զազիրս խօսիցի, կամ ՝ի խօսելն հեշտանայցէ, կամ ՝ի գայԹակղուԹիւն այլոց, կամ ՝ի լուր աղջկանց և մանկտւոյ խօսիցի, և մանաւանդ եԹէ որ յայնպիսի ինչ մեղս իւր պարծեսցի: Օ՜ի այնպիսին երրակի մեղանչէ. մի՝ զի ՝ի չարիս իւր պարծի. երկրորդ՝ զի գայԹակղուԹիւն մեծ տայ այլոց. և երրորդ՝ զի դիւրին ևս է նմա հաՃել և հեշտանալ ընդ գործեցեալն: Օ՜այս ևս աստանօր յառելոլիք ընդ սրբոց Աղուինացւոյն, զոր և Ալէքսանդրիկեանք և Յունքալեա և այլք ազգ առնեն, զի յերկար խօսակցուԹիւն ընդ աղջկան անկարդ սիրով սիրեցելոյ, ոչ է ազատ ՝ի ծանր վտանգէ:

10. Խակ լսողք զայնիր խօսից և անհամեստ կատակերգութեանց առ հետաքրքրութեան կամ զբօսանաց՝ կարեն երբեմն աղատ ի մահուչափ մեղայ գոլ, եթէ չհեշտանայցեն ի լսելն կամ չիցէ նոցա վտանգ հեշտանալոյ, որ դժուարին է պատանեաց և աներկիւղաց որերոյ. և կամ եթէ չիցէ ի գայթակղութիւն այլոց: Այսան որոյ Հոլզմանն և Տաքրուա մահուչափ մեղս գայթակղութեան համարին մեղանչել այնոցիկ՝ որք դրամով կամ ծափիւք և գրուատեօք գործակից լինին լիսի թատերգութեանց և պարուց, և որք պարտականն են կամ դիւրաւ կարեն խափանել զայնս, և անփոյթ առնեն. և առաւել որ զայնպիսիս յանդիման առնեն: Նմանունս մեղանչեն և որք յօրինեն կամ տպագրեն մատեանս գրգռիչս ի տափանս և ի պղծութիւն:

ՅՕԴՈՒԱԾ Բ

ՅԱՂԱԴՍ ՊԱՐԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՐՆԱԿԱՆԱՑ

11. Ջգուշութենէ:
12. Օրէն ևցէ Թողուլ զբողս:
13. Պոռնկութիւն խօսեցեալոց ևցէ արդեօք մեղք այլատեսակ:
14. Յաղագս կուսապղծութեան:
15. Յաղագս առևանգութեան:
16. Յաղագս շնութեան:
17. 18. Յաղագս մծղնկութեան:
19. Ջինչ մեղս գործեն անօրինեալք՝ որ ընդ իրեարս նախ քան զըզհարսանիս պսակին:
20–23. Յաղագս սրբապղծութեան:

11. Յայսվայր զանլռացեալ պղծագործութեանց. աստացուք արդ և զտեսակս լռացելոց: Պոռնկութիւն է աղատի առն և կնոջ կամակար ընդ իրեարս շաղաշարութիւն: Հանապազորդութիւն առն ընդ նմին կնոջ պատնէկի իբր ընդ ամուսնոյ, ասի ունել հարճ: Օրաբակմանէ և զպատժոյ այսր մեղաց, մանաւանդ յեկեղեցական, ճնայ մեզ ասել ի տեղւոջ իւրում:

12. Օրէն ևցէ Թողուլ զբողս: — Կէսք օրէն համարին, առ ի խափանել զծանրագոյն և զյաճախագոյն եղերուսն. բայց հաւանականագոյն ևս այլք ոչ օրէն համարին վասն անթիւ անօրէնութեանցն ի նոցանէ

յառաջ եկելոց, և չընդունին իսկ զի նոքօք ծանրագոյն եղերունք խափանիցին: Այլ եթէ օրէն իսկ ՚ի մեծա-մեծ քաղաքս համարեսցի Թողուլ զնոսա, այլ ՚ի փոքրիկ քաղաքս և յաւանս ոչ երբեք է օրէն:

13. Յօսեփեղոյն պոռնկութիւն ընդ այլս իցէ՞ ինչ արդեօք մեղք այլատեսակ: — Կէսք հաստատեն վասն Հարսին իսկ և փեսային, այլք վասն Հարսին և եթէ. բայց առաւելագոյնք վասն երկաքանչիւրոցն իսկ չհամարին այլազգ ինչ գործել ՚ի պոռնկութենէ. զի թէպէտ և խոստացեալ երկաքանչիւր նոցա իրերաց, այլ չև ևս իրաւունս ինչ առեալ է ՚ի վերայ մարմնոյ իւրեանց՝ որով անիրաւեսցին ՚ի վարել նոավաւ ընդ այլս:

14. Կուսապղծութիւն ՚ի վերայ պոռնկութեան յաւելու և զանիրաւութիւն. այլ ՚ի հաւանել կուսի ընդ այն՝ իցէ՞ ինչ մեղք այլատեսակ: — Կէսք հաստատեն. այլ առաւելագոյնք ժխտեն: Այլ մարթ իսկ է ըստ այլոց մասանց գոլ այլատեսակ, այսինքն ըստ նախատատնաց ընտանեացն, ըստ վշտի ծնողացն, և ըստ զրդռելոյ կագ և կռիւ: Իսկ զպարտուց կուսապղծիցն տես ՚ի ստորև (գլ. ժ. 91):

15. Բռնանկութիւն է յափշտակութիւն իգի կամ արուի վասն պղծագործութեան, բռնութիւն ՚ի գործ արկեալ ՚ի վերայ յափշտակելոյն կամ նորայոյն, այս ինքն ծնողաց կամ ազգականաց կամ հոգաբարձուաց նորա: Պարտուց առևանկաց տես ՚ի ստորև (գլ. ԺԸ. վասն ամուսնութեան):

16. Ընութիւն է շաղաշարութիւն ընդ ամուսնացեալ, և է տեսակ ինչ մեղաց անիրաւութեան, թէպէտ և հաւանութեամբ առնն գործեցեալ. քանզի ընութեամբն ոչ միայն նմա անիրաւի կին, այլ և զաւակաստերութեան: Ոմն որոյ ունկոյ և եսխոյ կրկին անիրաւութիւնս համարին զընութիւն ընդդէմ կամաց առն գործեալ. բայց Ոմն իւս, Կայեթանոյ և Մուրրիանոյ մի միայն անիրաւութիւն համարին ընդդէմ որդծնութեան, այնու զի ընութեամբ անիրաւի կին առն իւրում ոչ որպէս վայրապար ուժեք, այլ որպէս ամուսնոյ՝ որում անկ է հոգ սերնդեան, և չկարէ հրաժարել յայնմանէ, որպէս և ոչ ներել զի խեղեսցէ զնա յիմեքեան յանդամոյն: Որ զոգոնաբար ընդ կնոջ իւրում

վալի, գործէ մեղս չնութեան, և պարտ է նմա բացատրել՝ի խոստովանութեան անասելիս ընդ կնոջ իւրում մեղուցեալ։ Իսկ զպարտուց չնացողն՝ի ծնանելն՝ի չնութենէ անտի զաւակ, տես՝ի ստորև (գլ. ժ. 98. յղ. հատուցման)։

17. Պծղնէութիւն է ննջել ընդ ազգականի, կամ ընդ խնամոյ ցչորրորդ աստիճան ըստ օրինաւոր ամուսնութեան, և ցերկրորդ՝ ըստ օրինազանց զուգաւորութեան։

Պծղնէութիւն ընդ ազգականի իցէ՞ ինչ այլատեսակ՝ի մծղնէութենէ ընդ խնամոյ։ — Կէսք հաստատեն հաւանականաբար, զի ազգականաց արենակցութիւն է զօդ, իսկ խնամեաց՝ ամուսնութիւն, ուստի այլևայլ յերկաքանչիւրոյն յաւաջ գան անկարգութիւնք։ Այլք այլք հաւանականագոյն ժխտեն, զի երկոքին ևս հաւասարապէս արգելեալ են՝ի կրօնից. զսոյն հաստատէ և սուրբ Գրիգորիոս։ Միաբանին զի ամենայն աստիճանք մծղնէութեան ընդ խնամիս համատեսակ մեղք են, բաց յայնմանէ՝ որ ընդ ուրջու և ընդ մօրու, ընդ աներ և ընդ նու։

18. Իսկ մծղնէութիւն ընդ ազգականս որոյ և իցէ աստիճանի՝ իցէ՞ն մեղք համատեսակ։ — Այսեթանոյ, Փոնցիոյ, Սոթոյ, Կաւարրոյ, Վասթրփալ և այլք համատեսակ համարին զամենայն աստիճանս՝ բաց յառաջնմէ ընդ ուղիղ գիծ. զի ամուսնութիւն ընդ այլ ազգականս յեկեղեցւոյ Լեթ է արգելեալ և ոչ՝ի բնական իրաւանց, յորում Լեթ է տեսակարար զանազանութիւն։ Մուարիզ, Վասգուէզ, Այման և այլք զամենայն աստիճանս մինչև ցչորրորդ՝ համարին այլ և այլ տեսակս մեղաց, իբր զի առաւել քան զհեռագոյնս են պատկառելի մերձաւորագոյնք։ Այլք Էսպիոյ, Ուլկոյ, Անքէզ, Աղմանիկեանք, Ռոնքալեա և այլք զառաջին աստիճան Լեթ ուղղագիծ և շեղագիծ համարին այլատեսակ, զի անդստին՝ի բնութենէ ասեն արգելեալ և զնաւնուումն եղբօր ընդ քեռ։ Իսկ հոգևոր ազգականութեան, և օրինականին իսկ՝ այսինքն որդեգրութեան, աներկբայապէս այլատեսակ է մծղնէութիւն յազգականացն և՝ի խնամեաց։

19. Ազգականք յետ ընդունելոյ զանօրինութիւն յա-

մուանութիւն, եթէ յառաջ քան զպատկ գիտիցեն զի-
բեարս, գործիցե՞ն մծղնկութիւն: — Այնք ժխատեն,
զի ՚ի բառնալ անօրինման զարգելս ազգականութեան՝
չիք տեղի մծղնկութեան: Բայց այլք Հաստատեն, զի
անօրինութիւն բառնայ զարգելս վասն ամուանութեան և-
եթ, և ոչ վասն պոռնկութեան:

20. Արբապղծութիւն ե պղծել զսրբութիւնս զաշ-
րագործութեամբ, և ե երրակի. զի մարթ ե պղծել
զանձն կամ զվայր և կամ զիրս սրբազանս:

Ա. Պղծէ զանձն սրբազան՝ որ մեղանչէ ուխտեալ գո-
ղով ողջախոհութիւն, կամ ընդ ուխտելոյ: Ա այն որոյ
քահանայ, որ ընդ այլում սրբազան անձին մեղանչէ,
կրկին մեղս գործէ սրբապղծութեան: Բայց աբեղայ՚ի
մեղանչել ընդդէմ ողջախոհութեան՝ ըստ հաւանակա-
նագոյն կարծեաց մի միայն գործէ մեղս. զի քահանայի
ղողջախոհութեան պարտս ածէ ուխտն յարակից սրբոյ
կարգին ըստ հաւանականագոյն կարծեաց. և եթէ պա-
տուիրան իսկ եկեղեցւոյ ածէր նմա զայն պարտս, սա-
կայն մեղք նորա լինէր միշտ ընդդէմ կրօնից, զի և ե-
կեղեցի վասն կրօնից պատուիրէ քահանայի ղողջախո-
հութիւն: Քահանայ՝ որ հրապուրէ զոք յաշխարհա-
կանաց ՚ի պոռնկութիւն, եթէ առ ցանկասիրութեան
հրապուրէ՝ գործէ սրբապղծութիւն, իսկ եթէ առ այ-
լոց իրիք չարութեան՝ ըստ այնմ գտանի պարտաւոր:

21. Բ. Պղծէ զվայր սրբազան՝ որ պոռնկին ՚ի սուրբ
տեղւոջ, այսինքն յեկեղեցւոջ կամ ՚ի գերեզմանս, այլ
ոչ ՚ի գաւիթս եկեղեցւոյ կամ ՚ի մենաստանս կամ
յառանին մատրան՝ որ չիցէ օրհնեալ յեպիսկոպոսէ:
Այլ վասն ամուանական կամ գաղտագողի զուգաւո-
րութեան ՚ի սրբազան վայրի՝ երրեակ կարծիք են, երե-
քին և Հաւանականք: Այնք զամուսնականն չհամա-
բին սրբապղծութիւն, այլք զգաղտնածածուկին: Իսկ
առաւելագոյնք Հաւանականագոյնս զերկաքանչիւրն և
համարին սրբապղծութիւն, զի երկոքումբք և անարգի
և պղծի եկեղեցի, թէպետ և վասն ծածկութեան եղե-
բանն ոչ լինի խափան աստուածային պաշտամանց:
Այս այսպէս Հաստատեն Ուարեզ, Անքեզ, Լե-
սիոյ, Տոլետան, Լաբրուա, Պոնաչինա, Ալմատիկեանք
և այլք. բայց նոքին իսկ անբասիր առնեն զամուսինս,

եթէ հարկ լինէ ստիպեսցէ զնոսա՝ (որպէս վտանգ անձուժկալութեան), մերձենալ առ իրեարս յեկեղեցւոջ, և կամ եթէ պարտ իցէ նոցա կալ անդ ընդ երկար: Իսկ զընդերկարն համարին ոմանք իբր աւուրս տասն, այլք հաւանականագոյնս զամիս մի կամ գոնեա զաւուրս քսան. և եթէ յայտնի իցէ նոցա ճնալ իւրեանց անդ զամսօրեայ աւուրս, օրէն է նոցա և անդստին 'ի սկզբանէ գալ առ միմեանս:

22. Զմնայն իսկ գործք անհամեստք յեկեղեցւոջ, այս ինքն շօշափումն, հայեցուած և բանք, իցէ՞ն սըրբապղծութիւն: — Կէսք ժխտեն, համարելով սերմնահեղութեան և եթէ պղծել զեկեղեցի. բայց առաւելագոյնք հաւանականագոյնս հաստատեն. զի թէպէտ և ոչ պղծիցի սոքօք եկեղեցի, այլ անարգի: Իսկ խորհուրդք բղջախօհութեան չեն սրբապղծութիւն, եթէ չիցեն ըղձիւք գործելոյ զանարժանս յեկեղեցւոջ. զի իղձք այսպիսիք և արտաքոյ եկեղեցւոյ ներգործեալ 'ի միտս՝ սրբապղծութիւնք են:

23. Գ. Պղծել զկրս սրբազանս՝ է խառնաւալր առնել զայնոսիկ 'ի գործս զազրութեան: Ոչնչացն է իմանալ և զերիցուէ՝ որ քահանայական զգեստիւք գործէ զանարժանս, կամ զսրբութիւն կրելով յանձին, և կամ յետ ընդունելութեան խորհրդոյն կիսով չափ ժամու:

ՅՕԴՈՒԱԾ Գ.

ՅԱՂԱԳԴՍ ՊԱՂԱՏԱԳՐՈՒԹԻՒՆՑ ԸՆԴԴԷՄ ՌՆՈՒԹԻՒՆ

24–26. Ձարուագիտութիւնէ :
27. Ձանամնագիտութիւնէ :
28. Ձդիւագիտութիւնէ :
29. Ձգիջութիւնէ :
30. Ձսերմնակաթութիւնէ :
31. Օրէն իցէ արտաքսել զերծին ապականեալ :
32. Պաճրա իցէ արգելուլ զգիջութիւն ինքնեկ :
33. Պաճրա իցէ զգուշանալ յամենայն իսկ պատճառաց գիջութեան :
34. Եթէ կարևոր կամ օգտակար իցեն պատճառքն :

24. Ձարուագիտութիւն, որ կոչի և սոդոմականութիւն, է ինքնուրոյն տեսակ ինչ մեղաց. այլ խնդիր է առ բարոյականս թէ յինչ սահմանիցի : Ակնք սահմանեն զայն գիջանալ յանօթ տարապարտ. այլ ըստ հասարակաց և ըստ Հաւանականադոյն կարծեաց, և ըստ սրբոյ Ձգուխնացւոյն, է գիջանալ՝ի սեռ տարապարտ : Ձպա ուրեմն պղծութիւն իցի ընդ իցի և արուի ընդ արուի է կատարեալ սոդոմականութիւն, յոր մանն մարմնոյ իւրեանց և շաղաշարիցին. զի միշտ իսկ սովորաբար զուգընթանան տիւիք առ սեռ տարապարտ : Ա՝ան որոյ չեն ինչ պէտք բացատրելոյ՝ի խոստովանութեան արտաքոյ թէ՝ի ներքս տարապարտ անօթոյ իցէ գիջացեալ, թէպետ և՝ի վերապահութիւն մեղացն խնդրի սերմնարկութիւն յանօթ անդր, որպէս ասէ Ձայրն Ա՝ացցոթեա : Ձայց պարտ է բացատրել թէ գործող ոք լեալ իցէ եթէ կրօղ. զի կրօղն ոչ միշտ գիջանայ՝ որպէս գործողն, ըստ որում ոչ ուղղապէս հասարինն Ա՝ալմատիկեանք, վասն որոյ և ոչ կարևոր վարկանին զայս բացատրութիւն : Ա՝անաւանդ և զայն պարտ է բացատրել եթէ բռնի՞, կամ ընդ ամենայնի, կամ ընդ ուխտելոյ զմեղն իցէ գործեալ :

25. Ձպա ուրեմն և գիջանալ առն՝ի տարապարտ անօթ կնոջ՝ է սոդոմականութիւն անկատար, այլատեսակ՝ի կատարելոյն : Ակ եթէ ոք՝ի ծոց կնոջ կամ՝ի մէջ սրունցն գիջանայցէ, կրկին մեղս գործէ զանազանեալս տեսակաւ. մի՝ պոռնկութիւն անկատար, միւս

և ս ընդդէմ բնութեան ։ Ա՛տանել առ կին մեռեալ՝ ոչ է նոյն ընդ անասնագիտութեան , որպէս ամանք հաստատին . այլ գիջութիւն , և տուփանք պոռնկութեան ։ Պի՛տի ջանալ շօշափմամբ պատանւոյ կամ կնոջ՝ որ ՚ի քուն կայցեն՝ առանց գիտելոյ զնոսա , զպարզ գիջութեան բերել զբարութիւն ըստ Հաւանականագոյն կարծեաց , որպէս ասեն Ա՛լմատիկեանք , Կայէթանոյ , Ո՛զորիոյ , Պոնաչինա և այլք ։ Դարձեալ և որ ՚ի շօշափմանէ այլոց գիջանայ , կրկին մեղս գործէ՝ գործակից և մեղայ նոցա լինելով , այլ ոչ է պարտական բացատրելոյ յառնէ թէ ՚ի կնոջէ շօշափեալ , բայց միայն եթէ յարամբ բերայ կամ յուխտելոյ ։ Դարձեալ ըստ Հաւանականագոյն կարծեաց , եթէ սոդոմականութիւն և եթէ ամենայն շօշափմունք անհամեստք ընդ աղգականս և ընդ խնամիս , կամ ընդ հոգևոր և ընդ օրինական աղգականս , բերեն զտեսակ մծղնեղութեան , հաղորդս գոլով չարութեան մեղացն լսացելոյ ։

26 . Ո՛գործօնեայս սոդոմական մեղայ զչքնարհականս քաղաքական օրէնք դատապարտեն ՚ի մահ և յայրումն . իսկ եկեղեցականք և կրօնաւորք կոնդակաւ Պիոսի Ե . զրկին յամենայն պաշտամանց , ՚ի հասից և յարտօնութեանց , այլ ըստ այսոցիկ պայմանաց . նախ՝ զի ընդ առն , և ոչ ընդ կնոջ կամ ընդ անասնոյ իցեն անկղնատացեալ . երկրորդ՝ զի իցէ կատարեալ սոդոմականութիւն , հանդերձ սերմնարկութեամբ յանօթն . երրորդ՝ զի իցէ նոցա յաձախեալ , քանզի ասի ՚ի կոնդակին՝ յաձախեալք ՚ի սոդոմականութիւն ։ Ըստ Հաւանականագոյն կարծեաց անկանին ընդ պատժոյքս և կրօդք սոդոմականութեան , զի և նոքա իրապէս են սոդոմականք ։ Իսկ ՚ի հակառակին ըստ Հաւանականագոյն և ըստ Հասարակաց կարծեաց ոչ անկանին սոդոմականք ընդ պատժոյքս առանց վճռոյ կամ յայտարարութեան ։

27 . Ո՛նանագիտութիւն է խառնակիլ ընդ անասնոյ , գարշելի քան զսոդոմականութիւն ։ Ո՞ն ինչ պէտք բացատրելոյ ընդ այսմ՝ թէ ընդ իգի ոք անասնոյ իցէ անկղնատացեալ . զի ըստ Հասարակաց կարծեաց՝ ամենայն չարութիւն եղերական է ՚ի լինելն ընդ անասնոյ ։

28 . Պիւագիտութիւն է անկանել ընդ դիւի , ՚ի

կերպարանս առն կամ կնոջ երևելոյ : Ասա Հասարակաց կարծեաց՝ ընդ մեղաց անասնագիտութեան անկանի անօրինութիւնս այս, Հանդերձ չարութեամբ ամպարշտութեան, յաւելեալ՝ի նոյն և գաղտնութիւնս պոռնկութեան, սոդոմականութեան, չնութեան և մծղնկութեան՝ ըստ դիմաց՝ զորս բերէ դևն, զկնոջ, զպատանուոյ, զարամբուոյ կամ զաղգականի, որպէս զըղձից բըղձախոհութեան՝ի վեր անդր ասացաք. (գլ. Գ. 34):

29. Պիղծութիւն է սերմնահեղութիւն առանց լինելոյ ընդ այլում: և է արգելեալ՝ի բնական օրինաց, որպէս յայտ է՝ի դատաստարտութենէ հակառակ վարդապետութեան՝ զոր դատապարտեաց Ինոմկենտիոս ԺԱ: Այն որոյ ծանրագոյն է ըստ ինքեան քան զպոռնկութիւն, որպէս ընդդէմ բնութեան : Յաւելու՝ի նոյն և չարութիւն սրբապղծութեան, եթէ ուխտեալ ոք իցէ դիջացեալն. և չնութեան, եթէ կանամբի կամ արամբ բի ոք իցէ. և պոռնկութեան, եթէ՝ի դիջանալն հեշտանայցէ իբր ընդ կնոջ ննջելով. և սոդոմականութեան, եթէ ընդ պատանուոյ խորհեսցի անկեալ:

30. Սերմնականութիւն կամաւոր, այս ինքն ծորումն հիւթոյ՝ որ ոչ սերմն և ոչ մեզ է՝ այլ միջին ինն հոյզ, իցէ՞ մեղք մնհուչափ: — Եթէ իցէ կից ընդ հեշտութեան կամ ոգւոյն շարժման, հաւասար է դիջութեան, և որ չարգելու զայն՝ մնհուչափ մեղանչէ: Իսկ եթէ իցէ առանց շարժման և հեշտութեան, հասարակաց կարծիք օրէն համարին զթոյլտուութիւն, այլ ոչ և ըզկամաւորաբարն բերիլ՝ի նոյն:

31. Որո՞ն իցէ արտաքսել դեղովք զսերմն ապականեալ, (զի շշափմամբ ոչ երբեք է օրէն): — Ամանք ոչ օրէն համարին. այլ հասարակաց վարդապետութիւն ներէ զայն, եթէ մարթի իցէ արտաքսել առանց գրգռելոյ զվատաշ հեշտութիւն, և եթէ այլազգ չիցէ հնար բժշկութեան:

32. Որո՞ն իցէ չարգելուլ զինքնօրէն սերմներթութիւն, որպէս զսկսեալն յերազափոքձութեան: — Հասարակաց կարծիք օրէն համարին զայն, եթէ չիցէ ումեք վտանգ հաւանելոց ընդ հեշտութիւնն: Այսպէս՝ զի յոյժ դժուարին է արգելուլ զայն յետ միանգամ սկսանելոյ. և երկրորդ՝ զի չէ պարտական ոք վտանգաւ

ապականութեան սերմանն և ախտակրելոյ արդելուլ զայն. զի յայնժամ ոչ եթէ կամի, այլ կրկ զայն: Այլ պարտ է նմա ջանալ ամենայնիւ զդեմ ունել ախորժա- նային, կնքել զանձն նշանաւ խաչին, շրջել զմիտս այ- լուր, կարդալ զանուն Յիսուսի և զՏիրամօրն յօգնու- թիւն, զի մի՛ անկցի՛ ի մեղս: Պիտելի է և սա, զի եթէ ոք՝ ի կիսարթմնի հեշտանայցէ ընդ ցայգուն թեան բըղ- խումն, ոչ է դատապարտելի՛ ի մահուսէ մեղս. զի խնդրի առ այս կատարեալ խնացումն և լիուլի հաւա- նութիւն ըստ ասացելոցս՛ի վեր անդր (գլ. Գ. 24. 26) յորոց պակասէ աներկբայապէս կիսարթմունն, վասն ո- րոյ և չիք նմա կատարեալ ազատութիւն:

33. Պարտ իցէ զգուշանալ և հրաժարել յամենայն պատճառաց գիջուն թեան: — Այլ եթէ ծանր և գրգռիչք ցանկութեան իցեն պատճառքն, որպէս շօշափմունք և հայեցուածք անհամեստք, յամեալ հեշտութիւն և այլն, չիք տարակոյս զի պարտ է զգուշանալ յայնցանէ. ապա թէ ոչ, գիջուն թիւնն թէպէտ և ակամայ՝ այլ զեթ ընդ աղօտ նախատեսեալ, համարի՛ ի մեղս: Ոչնայն է ի մանալ և զգիջուն թենէ, որում՝ ոք պատճառս տայ ընդել- կար խօսակցութեամբ ընդ օրիորդի անկարդ սիրով սի- րեցելոյ. կամ գործով իւիք, որ եթէ չիցէ իսկ ըստ ին- քեան մահուսի՝ այլ է իսկ վասն նորա, որ սովոր է հաւանել ընդ այն:

34. Այլ եթէ պատճառք այսպիսիք գրգռիչք գի- ջուն թեան հարկաւորք իցեն կամ օգտակարք, և չիցէ վտանգ հաւանութեան ընդ այնս, գիջուն թիւնն անտի յառաջ եկեալ չհամարի՛ ի մեղս, որպէս ամենայն բա- րոյականք ուսուցանեն: Վասն որոյ նախատեսանելով իսկ զգիջուն թիւն, (իմա զակամայ), օրէն է քահանայի լսել զխոստովանութիւնս և ընթեռնուլ զգիրս բարո- յականս, վերաբուժի հայել և շօշափել զառականս հնոյ ախտակրի, և յուսումն բժշկութեան այնոցիկ մնասուց պարապել ընթերցմամբ և անդամահնու- թեամբ: Այլ եթէ պատահիցէ իսկ վերաբուժի՝ որում պարտ իցէ՛ ի պաշտամանէ դարմանել, կամ ժողովրդա- պետի՛ ի լսել զխոստովանութիւն, հաւանել երբեմն ընդ գիջուն թիւն, օրէն է նոցա հանապազորդել՛ ի պաշ- տամանն, առաջադրելով զգուշանալ այնուհետև ամե-

նայն հնարիւք ընդդէմ մեղայ։ Օ՞յս այսպէս ուսուցանեն Դաւարդոյ, Ոնքալեա, Ղևղել, Սիմոբը, Սալմանաիկեանք և այլք. բայց ազատ վերաբուժի, և խոստովանահօր ազատի, պարտ համարին յայնպիսի դէպս հրաժարել՝ի պաշտամանէն, եթէ կարիցէ առանց ծանր ինասու։ Իսկ եթէ միշտ կամ գրեթէ միշտ պատահէ երկաքանչիւրոցն անկանել, և չիցէ յուսալ հաւանականաբար ոչ ևս անկանելոյ, պարտ է նոցա և ծանր տուժիւք հրաժարել՝ի պաշտամանէն։

Դայսպէս և զմարմնաջ սաստիկ յառականս օրէն համարին բազումք ցածուցանել զորելով, թէպէտ և զիջուԹեան լիցի տալ պատճառս այնուիկ։ Դայց Ոնքալեա ոչ օրէն համարի զայս, եթէ չիցէ կարի յոյժ նեղիչ մարմնոյն այն. և թէպէտ ներէ զքորելն, այլ եթէ ոչ աւելի ինչ քան զշարժուն անտի գՀետ գայցէ։ Օ՞սդն և սուրբն Դլիոնսոս Հաստատէ. այլ յաւելու զի ոչ է պարտ հաւատս ընծայել աղջկանց, յորոց ոմանք պատճառանօք ցածուցանելոյ զմարմնաջ՝ սովոր են գիջանել շշափմանբ. քանզի քաջ քննեալ, բազում այն է՝ զի՝ի չար խորհրդոյ կամ յանզգայշ շօշափմանէ անձին յառաջ գայ մարմնոյն այն։

Դարձեալ օրէն է և ձիաւարել վասն առողջուԹեան և առ զբօսանայ իսկ. Հանդերձ ըստ գրոյ՝ որ՝ի գիւղ իցէ անձին. Ճաշակել չափով կերակուրս և ըմպելիս ջերմինս թէպէտ և իցէ վտանգ գիջուԹեան. ՝ի Հանդէս պարուց երթալ՝ի Համեստս, և պարել իսկ անդ Համեստաբար։

35. Իսկ եթէ թեթև իցեն պատճառքն, ըստ Հասարակաց և Հաւանականագոյն կարծեաց՝ չածեն պարտս ծանուցանս զգուշուԹեան, եթէ չիցեն մեղանչականք ընդդէմ ՀամեստուԹեան, և եթէ ոչ ստէպ ոք յայնցանէ կրիցէ գիջուԹիւն։ Մեղանչականս իմա ոչ ծանուցնս ըստ ինքեան, որպէս ընդԹեռնուլ գիրս անհամեստս առ հետաքրքրուԹեան, տեսանել նկարս մերկս և անդրիս, և այլ այսպիսի իրս, որ ոչ ամենեցուն կարի ինն գրգռիչք են՝ի գիջուԹիւն. այլ որոց զգիտոր առեալ իցէ՝ զի գրգռիչք են վասն իւր, մանաւանդ մեղանչէ՝ եթէ չՀրաժարէ յայնցանէ, ուր չիցէ Հարկ կամ իրաւացի պատճառ չՀրաժարելոյ։ Դայլ՝ի բոլորովին Թե-

Թե պատճառաց բարոյապէս է անհնարին զգուշանալ և հրաժարել, որպէս և Յանքելզ և Յալմատիկեանք յաւելուն : Երազափորձութիւն ոչ համարի ՚ի մեղս, եթէ ուրուք չիցէ յառաջագոյն տուեալ պատճառս, և ՚ի զարթնուլն չհաւանեցոյն ընդ այն : Իսկ յաղագս հաճութեան ընդ թեթևանալ այնուիկ փորձութեանն, տես ՚ի վեր անդր (գլ· Գ· 38) :

36· Յս բանից գլուխ խօսից՝ զամենայն խստութիւն պարտ է ՚ի վար արկանել առ ՚ի զգուշութիւն վեցերորդ պատուիրանիս, յորում ամենայն իսկ զգուշութիւն չէ բաւական· և բազումք ՚ի կարծեաց բարոյականաց, որ տեսականապէս են հաւանականք, անհաւանականք յարդիւնս իրացն գտանին : Յայսմ որոյ ՚ի տեսանել խոստովանահօր զվտանգ ապաշխարողին, թէպէտ և չկարիցէ զգործ նորա ՚ի մահուչափ մեղս դատապարտել, այլ մի՛ ներեսցէ նմա առնել զայն· մինչև անդ եթէ յանցեալ կեանս իւր սովորեալ իցէ յայսպիսի մեղս : Վասն այնպիսիք ոչ միայն ՚ի մերձաւոր վտանգս, այլ և ՚ի հեռաւորաց պարտին զգուշանալ· ապա թէ ոչ, վասն տկարութեան՝ որով ՚ի սովորութենէ անտի մեղաց զգածեալ են՝ անկանին միշտ ՚ի նոյն :

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՅ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

ՅԱՂԱԳԴ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ, ԻՐԱՒՈՒՆՑ, ԵՒ ՏԷՐՈՒԹԵԱՆ

1 • Բաժանումն այսոցիկ :
2 • Ինչ՞ որդւոյ, զննուորականք և իբր զննուորականք :
3 • Ցընչից կամ յանուն հօրն շահեալք • 'ի հօրէ ժառանգեալք, կամ շահեալք յորդւոյ 'ի տուրևառս :
4 • Եկամուտք :
5 • Օժիտք կնոջ :
6 • Ինչք եկեղեցականաց • հայրենականք • 'ի վաստակոց • յեկեղեցւոյ • 'ի խնայուԹենէ :
7 • Իցէ՞ ժառանգաւորի ազատ իշխանուԹիւն 'ի վերայ հասիցն :
8 • Ո՛ր ոչ ըստ օրինի ընդունի ինչ՝ 'ի հասից ժառանգաւորի :
9 • Քանի՞ օրինակաւ մարԹ լիցի առանձաւ զտէրուԹիւն :
10–13 • ՆախագրուԹիւն :

1 • Երկակի է արդարուԹիւն, օրինական, պրոմաՔաղխանական և փոխարինական : Օրինականն հայի յիրաւունս և 'ի պատիժս ըստ օրինացս : Տրամաբաշխականն 'ի վաստակս անձանց ըստ վարձուց և արժանապատուուԹեան : Փոխարինականն 'ի չարգ իրաց, զի տացի իւրաքանչիւր ումեք իւրն : Յոկ իրաւունք կրկին են, յերն և առ երն • իրաւունք առ իրն է, զոր ստանայ ոք գործով առ իր ինչ՝ չև անկ ումեք • իրաւունք յիրն է, զոր ստանայ ոք գործով 'ի վերայ իրիք՝ որ այլում է անկ, որպիսի է իրաւունք գնողին 'ի վերայ իրիք վաճառելոյ, կամ եկեղեցականին 'ի վերայ հասից տուեալոյ նմա : Այսն որոյ իրաւունք յիրն բաժանի 'ի պէրուՔեան և 'ի վայելս պաղոց : Այլ և այլ ազգք են տէրուԹեան • այլ է տէրուԹիւն իրաւասուՔեան 'ի վերայ Հպատակաց, և այլ տէրուԹիւն սեփհականուՔեան 'ի վերայ իրաց • այլ է ուղղակի տէրուԹիւն իշխանի 'ի վերայ երկրի իւրոյ, և տանուտեառն

'ի վերայ տան տուելոյ 'ի վարձու, և այլ տեսակն կալուա-
ծոյ և վարձուորի տան: Իսկ վայելումն պտղոյ է ունել
իրաւունս ընդունելոյ և տալոյ այլոց զպտուղ ստացուա-
ծոյ իրիք, զանազանեալ 'ի պէսպէսութենէ՝ որ տայ իրա-
ւունս 'ի կիր առնելոյ զպտուղ նորին ըստ կարօտութեան
իւրում և ընտանեացն, այլ ոչ և տալոյ այլոց:

2. Ոստ այսոցիկ պէտ է մեզ արդ տեսանել՝ 'ի վերայ
որոց ընկնի տէրութիւն իցէ որդւոյ, կնոջ, և եկեղեցա-
կանի: Սակաւակ ազգք են ընկնի որդւոյ. զինուորականի,
եթէ զինուորականի, հայրենի կամ յանուն հօրն շահեալ, և
եկամուտ: Ա. Զինուորականք՝ զորս որդի 'ի զինուո-
րութեան կամ 'ի զինուորութենէ ստանայ: Բ. Իբր
զինուորականք՝ զորս 'ի հասարակաց պաշտամունս դա-
տաւորութեան, փաստաբանութեան վարժապետու-
թեան, բժշկութեան, նօտարութեան, և Ճարտարա-
պետութեան ստանայ: Ի վերայ երկաքանչիւրոց ընկնի
լուծն տէրութիւն է որդւոյ, ըստ սեփականութեան և
ըստ վայելից պտղոյ: Զնոյն է իմանալ և զորդւոյ ե-
կեղեցականէ 'ի վերայ ամենայնի՝ զոր ստանայ յեկե-
ղեցական պաշտամանէն, կամ յորոց և իցէ վաստակոյ,
բաց յեկեղեցական հասիցն՝ զորմէ ասացուք 'ի տող
րև (7):

3. Գ. Հայրենի կամ յանուն հօրն շահեալ ինչք են,
զորս որդի յարգելով զդրամն հօրն և կամ 'ի ընդհս
հօրն 'ի պարգև ընկալեալ շահի: Ոչ յոլովիկ հօրն են բո-
լորովին ըստ սեփականութեան և ըստ վայելից պտղոյ:
Այլ գիտելի է նախ՝ զի ուր երկբայելի իցէ 'ի ընդհս
հօրն՝ թէ իւրովի ընկալեալ իցէ որդւոյ զպարգևս,
կարէ նա ունել իւր զայնոսիկ՝ եթէ սկսեալ իցէ ան-
խիղճ մտօք ժառանգել զայնս: Գիտելի է երկրորդ՝
զի ինչք տուեալք որդւոյ 'ի հօրէ 'ի ժառանգութիւն
վասն մտանելոյ 'ի կարգ եկեղեցական, ոչ ևս են հօրն,
այլ ընդ եղեալս իւր պարտ է նմա իրաւախոհ լինել
զայնմանէ 'ի խնդրելն զբաժին հայրենի ժառանգու-
թեանն: Գիտելի է երրորդ՝ զի եթէ որդի յանուն իւր
և ոչ հօրն յարգել զինչս հայրենիս, իւր է շահն. և ե-
թէ երկբայելի իցէ յընկնէ հօրն թէ այլոց իցէ շահեալ
ինչ, յայնժամ և եթէ համարի հօրն՝ յորժամ 'ի ձեռս
որդւոյն իցէ տնտեսութիւն հայրենի ընկնէն: Գիտելի

է յորրորդ՝ զի եթէ որդի յարդիւ զինչս հօրն, արտաքոյ կալով՝ի հայրենի տանէ, և ոչ՝ի հօրէ իւրմէ կերակրելով, իւր է յայնժամ շահն. իսկ եթէ կալով՝ի հայրենի տան, և՝ի նմանէ կերակրելով, հօրն է շահեալն: Այլ յառաւելուլ ծառայութեան իւրոյ քան զընկալեալն՝ի հօրէ բնակութիւն և ապրուստ, կարէ պահանջել փոխարէնս. զորմէ տես՝ի ստորև (գլ. Ժ. 228):

4. Կամաւտ ինչք են՝ զորս այլուստ ստանայ որդի, կամ ընդունի վասն իւր՝ի պարգև: Եթէ ծախելի իցեն՝ կարէ հայրն՝ի կիր արկանել զայնս, այլ պարտի հատուցանել զայն նմա՝ի մահուն: Իսկ եթէ իցեն հաստատուն՝ որդւոյն է այնոցիկ սեփական տէրութիւն, իսկ պատուէր՝ հօրն, թէպէտ և՝ի ստանալն զայնոսիկ իցէ լեալ ձերբազատ: Այլ՝ի դեպս ինչ և պատուէրն են որդւոյն. որպէս նախ՝ յորժամ պատուէրն ևս յանուանէ պարգևեալ իցեն որդւոյն, և կամ եթէ հակառակելով հօրն՝ տուեալ իցէ նմա պարգևն: Երկրորդ՝ եթէ որդի ժառանգէ ընդ հօր իւրում զինչս եղբարցն: Երրորդ՝ եթէ որդի առանց երաշխաւորութեան հօրն ընդունի զօժիտ հարսինն: Ոչ առանց այսոցիկ էէ օրէն որդւոյ՝ի կիր արկանել զինչս եկամուտս անհրաման՝ի հօրէն, և հրամանաւ իսկ նորին չկարէ թողուլ ուժեք կտակաւ՝ բայց միայն՝ի բարեգործութիւն: Իսկ վայելումն պտղոց անկ է հօր ցորչափ կեայ, թէպէտ և աղատ իցէ որդին յիշխանութենէ հօրն, միայն թէ չիցէ ընտրեալ յեպիսկոպոսութիւն թեմի կամ յայլ ինչ բարձր աստիճան: Այլ եթէ հայրն ինքնակամ աղատ կացուցանիցէ զորդին, և ոչ վասն ամուսնութեան, կէս պտղոցն նմա է անկ: Եթէ հայրն ներէ որդւոյն երթալ՝ի տանէ, ոչ վասն այսորիկ համարի տալ ինչ նմա՝ի վայելից պտղոցն. բայց միայն եթէ արձակէ զնա հայթայթել այլուստ զապրուստ իւր, և կամ եթէ՝ի կիր առնուլ նորա զայնս՝ լաւ հայրն:

5. Կանանց ինչք են օժիտ և վարձանք, յորոց վերայ լիուլի իշխանութիւն է նոցա: Պատուէր և տնտեսութիւն օժտին անկ է առն, իսկ սեփականութիւն նորա՝ կնոջ. վասն որոյ՝ի մեռանել առնն, առաւել քան զամենայն պարտատէրս նորա՝ կնոջ են իրաւունք՝ի վերայ ընչից նորա. և՝ի կենդանութեան իսկ նորա կարէ

պահանջել ՚ի նմանէ զօժիտ իւր, եթէ իցէ այնմ վը-
տանգ կորստեան: Եթէ օժիտ կինոջն զրամ իցէ կամ
ծախելի ինչ, ստանայ այրն լիուլի իշխանութիւն ՚ի վե-
րայ այնորիկ՝ հանդերձ պարտականութեամբ հատու-
ցանելոյ զգինս նորին: Ոչնոյն է իմանալ և զհաստա-
տուն իրաց տուելոց առն սակիւ արժէից ՚ի վաճառս. որ-
պէս զի ՚ի կորնչել այնոցիկ՝ ոչ կինոջն է կորուստն, այլ
առնն:

6· Եկեղեցականաց քառեակ աղգք են ընդից· Ա·
Հայրենականք, այսինքն յօր և իցէ աշխարհական իրաց
ստացեալք: Բ· Իբր հայրենականք՝ որ ՚ի վաստակոց
ստացեալք, այս ինքն յեկեղեցական պաշտամանց, ՚ի
պատարագեաց, ՚ի բեմբախօսութեանց և այլն: Գ·
Եկեղեցական ժառանգութեանց: Դ· Ի խնայութե-
նէ, այսինքն որ ինչ եկեղեցականն ՚ի պաշտաձ ծախուց
իւրոց հատանէ՝ սակաւապիտութեամբ կեցեալ: Ընդ
՚ի վերայ հայրենականացն ընդից լիուլի իշխանութիւն է
նորա աներկբայապէս: Ոչնոյն է իմանալ և զընդից իբր
հայրենականաց, ըստ հասարակաց վարդապետութեան.
զնոյն հաստատեն Պալմատիկեանք և այլք բազումք
յաստուածաբանից զհանապազորդ բաշխոյից՝ որ բաշ-
խին կանոնիկոսաց, զի այսոքիկ ոչ իբր հասք ժառան-
գութեան հասանեն նոցա, այլ իբր վարձք սպասաւո-
րութեանն: Պարձեալ և ընդից որ ՚ի խնայութենէ՝
տէր է եկեղեցականն ՚ի կիր արկանել զայն ըստ հաճոյս,
որպէս զրեթէ առ հասարակ հաստատեն բարոյականք
ընդդէմ սակաւուց ոմանց:

7· Այնպ զժուարութիւնն ՚ի վերայ երրորդին, այս
ինքն հասից եկեղեցական ժառանգութեանց՝ որ յաւե-
լուն քան զպաշտաձ ապրուստ ժառանգաւորի: Ընդ
խնդիր է, թէ ՚ի վատնել զայն եկեղեցականին, պար-
տական՞ իցէ ՚ի հատուցումն: — Ընդ տարակոյս զի մե-
զանէ նա մահուչափ ՚ի վատնելն զայն, ուր պարտ էր
նմա բաշխել զայն աղքատաց կամ ՚ի հոգևորս ՚ի կիր
արկանել, որպէս ուսուցանեն բարոյականք առ հասա-
րակ: Ընդ խնդիր այն է, թէ իցէ և պարտական ՚ի
հատուցումն: — Կաւարրոյ, Լայման, Պոնաչինա, Ռոն-
քալեա, Հաբերտ, Վինչինա և այլք, պարտական
զնա համարին. և սուրբն Թովմաս Հաւանական հա-

մարի զկարծիս նոցա։ Այլ ոչ ինչ նուաղ Համարի Հաւանական, մանաւանդ ՚ի գործնականին, զհակառակն՝ զոր Հաստատեն սուրբ Ագուինացին, Եսիոյ, Մոլինա, Լուկոյ, Անքեզ, Վիւա, Ալմատիկեանք և այլք։ Այլ չարի՚ ՚ի սմա ծանր՝ այսինքն չափ վաստեցոյ Հասին՝ առաւելագոյն պարտի գոլ քան զպղծնիդ, որպէս ուսուցանեն բարոյականք առ Հասարակ. ոմանք զերիր կամ զչորիր մասն Հասից ժառանգութեանն սահմանեն չափ. բայց այլք չընդունին զայն, և զքսանեերորդ մասն շատ Համարին, եթէ մասն այն չիցէ դուշնաքեայ ինչ։

8. Որ ոչ ըստ օրինի ընդունի ինչ յայնպիսեացս Հասից ժառանգաւորի ՚ի պարգև, պարտականն իցէ բաշխել զայն աղքատաց։ — Համարեալ՝ ըստ Հաւանական կարծեաց սրբոյ Ագուինացւոյն և այլոց՝ ազատ զժառանգաւորն ՚ի Հատուցմանէ վաստեցոյ Հասից, գտանի ազատ և ընդունօղ նոցին, և սա եթէ խղճիւ կամ երկբայանօք իցէ ընկալեալ։ Իսկ յաղագս տնտեսութեան Հասից եկեղեցականաց տես ՚ի ստորև (գլ. ԻԳ. 45)։

9. Արգելի է ստանալ ինչ. կամօք տեառն իրին, բնական իրաւամբք ազգայ, և դրական իրաւամբք։ Ընդ նախ՝ ՚ի կամաց տեառն իրին եթէ արդէս ստացանի տեսութիւն, ասելոց ետքն ՚ի ստորև ՚ի Ձառս դաշանց։ Երկրորդ՝ բնական իրաւամբք ազգայ։ Արդէս Ա. գրաւմամբ. զի որ ինչ ոչ ուրուք է, լինի նախկին գրաւողի։ Բ. Ննդեւամբ, զի ծնունդք կենդանւոյ նորա են՝ որոյ է մայր նոցա։ Գ. Ձնմամբ երկրի ՚ի նուաղել տակաւ ջուրց, (այլ ոչ ՚ի յանկարծն ցամաքել), զի ածէ այնմ՝ որոյ է երկիրն յարակից։ Դ. Յօրինեալ ինչ ՚ի նիւթոյ այլոց, օրինակ իմն զգեստ յասուէ օտարին։ Ե. Ընդաժանելի կցորդութեամբ, օրինակ իմն եթէ ՚ի ձորձ քոյին իցէ ուրուք ասղնագործեալ ինչ։ Զ. Կառուցմամբ, զի որ յերկրի իւրում կառուցանէ ինչ շինուած ՚ի նիւթոյ այլոց՝ իւր է շինուածն, այլ պարտի կրկին Հատուցանել տերանց նիւթոյն. իսկ յերկիրը այլոց կառուցեալ գիտութեամբ՝ կորուսանէ զամենայն, զի Համարի պարգեւել նմա. այլ եթէ յայտնի իցէ չկամել իւր պարգեւել նմա, տէր է նիւթոյն, և կարէ բառնալ զայն։ Է. Ջնկագործութեամբ, որպէս որ զայլոց ծառ տնկէ յերկրի իւրում. այլ եթէ յերկրի իւրոյ ՚ի գետին

այլ տնկեալ իցէ և արմատս ևեթ յերկիր իւր արձակեալ, հասարակաց երկաքանչիւրոցն լինի ծառն. իսկ եթէ արմատքն ևս չհասանիցեն յերկիր իւր, այլ ոստքն ևեթ անդր արձակիցին, և ազդ արարեալ դրացւոյն՝ չկամիցի հատանել զայնս, կարող է ինքնին հատանել: Ը. Ընդունելով՝ անխիղճ մտաք՝ զպտուղս: Թ. Հանդամանք իրին, այսինքն յորժամ տէր իրին աւանդէ այլում զիշխանութիւն իւր ի վերայ այնորիկ:

10. Յրրորդ՝ ըստ դրական իրաւանց նախագրութեամբ ստացանի տէրութիւն: Այլ վասն նախագրութեան պահանջին պայմանք չորս: Առաջ՝ անխիղճ միտք, որով աք իւր համարի ստուգիւ զիրն զոր ունի: Երկրորդ՝ իրաւունք, որպէս որ գնէն կամ ընդունի ի պարգև, գէթ հաւանականաբար կամ վեր ի վերոյ այնպէս համարեալ: Յրրորդ՝ ժառանգութիւն անընդհատ ընդ ամն երից վասն շարժուն իրաց, թէպէտ մերձ և թէ հեռի իցեն ժառանգողն և պահանջող ըստ հասարակաց կարծեաց, ընդդէմ Պոնաչինայ՝ որ ընդ մէջ հեռաւորաց պահանջէ քառեամ: Այլոց ի վայելումն պաղոց՝ պահանջեն ոմանք զերկեամ ընդ մերձաւորս, և քառեամ ընդ հեռաւորս: Իսկ վասն հաստատուն իրաց խնդրի ժառանգութիւն անընդհատ զամս տասն ընդ մերձաւորս, և քսան ընդ հեռաւորս՝ այսինքն որք ի տար աշխարհս բնակեն: Ոմն որոյ եթէ աք մերթ հեռի և մերթ մերձ բնակեալ իցէ, պարտ է զբացակայութեան ամն հաշուել: Իսկ եթէ ժառանգողին չիցեն ինչ իրաւունք, թէ ի վերայ շարժուն իրաց և թէ ի վերոյ հաստատնոց, պահանջին ամք երեսուն: Ընդհակառակ ամք խնդրին և ի նախագրութիւն գործոց: Ոմն եկեղեցական իրաց խնդրին ամք քառասուն, վասն հովուական եկեղեցւոյ հարիւր: Իսկ վասն շարժուն իրաց եկեղեցականաց կէսք զնոյն հաստատեն զամս քառասուն, օրինաց ոչ ինչ զանազանութիւն ի մէնջս յայտնիկ առնելով. իսկ այլք շատ համարին զերեամ. երկաքանչիւրոցն կարծիք հաւանականք են: Պիտելի է աստանօր զի որ վայելէ զերեամ ի հասս եկեղեցականս կամ ի պտուղս նոցին՝ համարի նման ի նախագրութիւն, թէ և չիցեն նորա լեալ իրաւունք, միայն թէ չիցէ բանի կամ սխալականութեամբ ժառանգեալ զայն:

11. Ընդհապ ասացաք ժառանգութիւն, զի մարթ է ընդհատել այնմ բնականապէս՝ դադարմամբ նորին, կամ քաղաքականապէս՝ յորժամ վէճ իրաւացի շարժի զժառանգութենէ իրին, կամ եթէ անգիտութեամբ յայտնի լինէ օրինաց տեւէ ժառանգութիւնն, որպէս հաստատեն հաւանականադոյնս Ոմիլնա, Աքրուա, և կէսք ի բարոյականաց ընդդէմ այլոց. վասն զի յայնժամ առ ի չգոյէ անխիղճ մնաց ըստ քաղաքական մասին, օրէնքն՝ որոց անկ է տալ ղտէրութիւն՝ ժխտեն զնախագրութիւն: Սակ եթէ սկիզբն ժառանգութեան անխիղճ մտաք իցէ լեալ, և ապա երկբայութեան ի վերայ հասեալ, և քննութեամբ խակ չյմարտութեան իրացն ոչ ի յայտ եկեալ, ոչ համարի ընդհատումն նախագրութեանն ըստ հասարակաց կարծեաց:

12. Պիտելի է նախ՝ զի յաջորդն խղճիւ ժառանգող զինչ, որպէս գնող կամ հրետակատար և այլն, ընդունակ է նախագրութեան. այլ ոչ ժառանգն, և ոչ ժառանգին ժառանգ՝ որպէս հաւանականադոյնս հատատեն Ռուկոյ, Աքրուա և այլք ընդդէմ Եսոյի: Պիտելի է երկրորդ՝ զի անխիղճ ժառանգութեան մարթ է նախագրել և զազատութիւն ի հատուցմանէ պարտուց, եթէ պարտապանն անյաղթելի տգիտութեամբ անգիտանայցէ զայն, որպէս ասեն Ռուկոյ և Աքրուա: Պիտելի է երրորդ՝ զի բարեգործական տեղեաց, որքոց, այրեաց, օժտի կանանց, և որոց չէ ևս յազատութիւն ելելոյ, արտունութիւն է պահանջելոյ զհատուցումն քառեամ մի յետոյ քան զլրումն նախագրութեան: Պիտելի է չորրորդ՝ զի առ ի նախագրութիւն պահանջի ընդունակութիւն նախագրութեան իրին ժառանգելոյ. վասն որոյ որ ինչ դողութեամբ կամ յափրշտակութեամբ է ժառանգեալ, անընդունակ է նախագրութեան: Այլք երրորդն ժառանգ՝ որոյ անխիղճ ժառանգեալ իցէ ինչ՝ ի գողոյ, ընդունակ է նախագրութեան՝ այլ յետ երեսուն ամաց ընդ մերձակայս, և քառասնից ընդ բացակայս. խնդրի ևս իրաւունք, զի առանց այսորիկ չիք նախագրութիւն:

13. Ոչ կարևորագոյն պիտելի է, զի ըստ հասարակաց կարծեաց աստուածաբանից և իրաւագիտաց՝ նախագրութիւն ևս և ըստ խղճի մտաց տայ տէրութիւն

'ի վերայ իրին ժառանգելոյ. զի կարել կարէն օրէնք փոխաբերել զտէրութիւն իրաց յումեքէ յայլ վանս բարւոյ Հասարակաց, առ 'ի խափանել զվէճս :

ՅՕԴՈՒԱԾ Բ

ՅԱՂԱԳՍ ԳՈՂՈՒԹԵԱՆ

14. Սահման գողութեան :
15. Աղքատ 'ի յետին կամ գրեթէ 'ի յետին կարօտութեան :
16. Փրկանք քրիստոնեայ գերեաց :
17. Պա՞րտ իցէ աղքատի մուրանալ :
18. Օրէ՞ն իցէ նմա առնուլ ինչ մեծատնէն :
19. Գող որ 'ի յետին կարօտութեան սպառէ զգողօնն :
20. Մեծատունն, որ ոչ ողորմի աղքատին, պարտական իցէ հատուցման :
21. Փոխարինուածն :

14. Գողութիւն է գաղտ և անիրաւ բարձումն իրաց այլոց, ընդդէմ իրաւացի կամաց նորա : Վասն զի անիրաւութեամբ և 'ի ծածուկ բառնալ ինչ յումեքէ հակառակի իրաւանց նորա : Գողաց ասի առ 'ի զանազանել զգողութիւն 'ի յափշտակութենէ՝ որ գործի բռնութեամբ, միւս ևս անիրաւութիւն յաւելեալ թշնամանօք 'ի գողութիւնն : Իսկ եթէ սրբազան ինչ գողնքն իցեն, յաւելու և սեղանակատութիւն : Գարձեալ ասի և անէրաա. զի առանց անիրաւութեան բարձումն ոչ է գողութիւն և ոչ մեղք. վասն որոյ կէին, որ բառնայ յառնէն զդրամն՝ զի մի վատնեսցէ 'ի միսս որդւոցն, կամ զգինի՝ զի մի արբենայցէ, ոչ մեղանչէ՝ այլ բարեգործէ : Իսկ ևս ընդդէմ էրաաոյէ կացոյ նորա. զի 'ի յետին կարօտութեան, կամ վասն սրդար փոխարինի, մարթի է ումեք բառնալ ինչ յայլմէ յակամայս նորին :

15. Որ 'ի վերջին կարօտութեան իւրում կամ այլոց՝ բառնայ յումեքէ որչափ ինչ կարևոր է առ 'ի ընուլ ըզկարօտութիւն իւր կամ զնորայն, ոչ մեղանչէ, զի հասարակաց են յայնժամ ինչք, որպէս ուսուցանեն բարոյականք առհասարակ ըստ վարդապետութեան սրբոյ Աւգուստինոսի : Այդ օրէնք են և վասն գրեթէ յետին կարօտութեան, որպէս ուսուցանեն Արևմտականք, և այլք գրեթէ առ հասարակ : Այս կարօտութիւնս գրեթէ

յեւին՝ համարի այն, յորում հասանէ ուխտք հաւանական վտանգ կորուսանելոյ զկեանս կամ զմի ի գլխաւոր անդամոց, գնալոյ ի գերութիւն, մատնելոյ ի կապանս, կրելոյ սխտ մշանջենաւոր կամ անուանարկութիւն։ Եւ սակաւք ի բարեյականաց հաւանականագոյնս օրէնն համարին եւ աղնուականի բառնալ ինչ յայլմէ ի յեւին կարօտութեան, եթէ ծանր քան զմահ Թուեսցի նմա մուրանալ։

16. Պաղատ իցէ մեծատանց փրկել զքրիստոնեայս ի գերութենէ անհաւատից։ — Հաւելագոյնք պարտ համարին, այլք ոչ. այլ եթէ օրէն իցէ բառնալ զօտարին վասն չանկանելոյ ի գերութիւն, որպէս ապա կարիցեն Հոխք լինել ազատ յողորմութենէ ի փրկանս այնոցիկ՝ որ անկեալ իսկ են ի գերութիւն։ Այլոն։ Զինա յոյժ հաւանականաբար ասէ, զի եթէ օք ի մեծատանց գիտիցէ ստուգիւ զուրուք ի գերեաց կալ ի վտանգի կորուսանելոյ զհաւատս կամ զկեանս, ծանրագոյն են պարտք իւր ի փրկել զնա։ Եւ զհասարակաց գերեաց քրիստոնէից, եթէ ծանր փրկանաց պետք իցեն՝ չիշխէ պարտս ի վերայ դնել մեծատան, զի յայնժամ գերեվարք առաւել եւս բռնանան ի վերայ գերեաց քրիստոնէից, եւ զառաւելագոյնս ի նոցանէ գերեն. Եւ ողորմութիւնն այն յաճախէ զգերութիւն եւ զտոյժս հասարակաց։

17. Զքաթա, որ ի յեւին կարօտութեան իցէ, մեղիցէ՞ ի բառնալ ինչ զօտարին՝ առանց խնդրելոյ նախ զայն ի նմանէ։ — Եթէ զոր բառնայն չիցէ նման անհրաժեշտ կարեւոր, ծանր մեղանչէ ի բառնալն զայն առանց խնդրելոյ նախ. զի յայնժամ աղքատաց ամենեցունն օրէնն լինէր առնուլ զայլոցն առանց խնդրելոյ։ Իսկ եթէ իցէ անհրաժեշտ կարեւոր, ոչ ինչ մեղանչէ ըստ վարդապետութեան սրբոյ Գրիգորեան. զի իրաւունք են նորա յայնժամ առնոլոց զայն։ Յացաք ի յեւին կարօտութեան, զի ի ծանր եւեթ կարօտութեան չէ ուխտք օրէնն բառնալ զօտարին, եւ գատապարտեալ է այս վարդապետութիւն յՍինոդիկենտեայ ԺԱ։

18. Եթէ աղքատին ի յեւին կարօտութեան անհրաժեշտ կարեւոր ինչ իցէ առ ի պահել զկեանս իւր, եւ այն մեծագին, կարիցէ՞ առնուլ զայն։ — Զաքրուա

և ։ Քանչինա ոչ օրէն համարին առնուլ նմա զայն, այլ Լուկիոյ և Ափոլեր արդարապէս օրէն համարին, և Աքրուա հաւանական կոչէ զկարծիս նոցա. զի՝ ի յետին կարօտութեան իրաւունք են աղքատի՝ ի վերայ ընչից այլոց, որչափ և այնոքիկ մեծապինք լինեն։ Եւ ոչ ինչ զօրէ ասել թէ մեծատունն չիցէ պարտական ըստ հասարակաց և ըստ հաւանականագոյն կարծեաց օգնել աղքատին այդքան ծանր տուժիւք, բայց միայն հօր իրում կամ որդւոյ, եղբայրսիրութեան ոչ՝ ի վերայ աճելով այդպիսի ծանր պարտս։ Քանզի պատասխանէ առ այս կարդինալ Լուկիոյ. զի որպէս՝ ի սկզբան աշխարհի մինչև ելին քաժանեալ ինչք և բերք, իրաքանչիւր ումեք օրէն էր առնուլ իւր զկարևորն, այլ ոչ ոք պարտական էր ըստ արդարութեան ընուլ զպետս այլոց, սոյնպէս և՝ ի յետին կարօտութեան՝ յորում ինչք համարին հասարակաց՝ օրէն է աղքատին առնուլ զինչս մեծատան, թէպետ և չիցէ պարտ մեծատան ըստ արդարութեան ընուլ զպետս նորա. ըստ եղբայրսիրութեան և եթէ պարտք են նմա, և սա ոչ՝ ի վերայ աճէ այդքան ծանր պարտս։ Բայց միայն եթէ մեծատունն արգելուցու դրականապէս չառնուլ զայն աղքատին, ինքն մեղանչէ յայնժամ մեծապէս. զի եթէ իրաւունք են աղքատին առնուլ զայն, ապա ընդդէմ իրաւանց նորա գործէ յարգելուլն։

19. Կողմ, որ՝ ի յետին կարօտութիւն անկեալ՝ ծախէ զդողօնն, պարտականն իցէ՝ ի հատուցումն։ — Առաւելագոյնք պարտական զինա համարին հաւանականագոյնք, իբր զի կարօտութիւնն յետոյ՝ ի վերայ հասեալ՝ ոչ բառնայ զառաջինն պարտս հատուցման։ Այլ կայ չէ մարթ անհաւանական համարել զհակառակ կարծիս, զոր և Լեսլիոյ հաւանական կոչէ. զի՝ ի յետին կարօտութեան նոյն իրաւունք են և գողոյ որ ինչ այլոց ուրուք աղքատի՝ ի վերայ օտարին իրաց։ Սակայն եթէ գողոյն անհրաժեշտ պէտք իցեն այնը իրի, որպէս՝ ի վէր անդր ասացաք. և զարձեալ եթէ գողն այն ոչ միայն իցէ՝ ի յետին կարօտութեան, այլ և չգուցէ նման յոյս այլուստ։ Զի յայնժամ, որպէս պարտ է մեծատան տալ յողորմութիւն զպետս նորա, և ոչ ընու ըզպարտս իւր տալով եթէ՝ ի փոխ, սոյնպէս և աղքատն

եթէ երբեք լեցի ապա ձեռնհաս հատուցանելոյ, ոչ է պարտական։ Եւ այլ գտանէր պարտական՝ եթէ գոյին նմա ինչք այլուր, և կամ թէ գոյր նմա յոյս հաւանական։

20. Իւճատուն՝ որ ոչն ողորմի աղքատի ՚ի յետին կարօտութեան, յանցանել կարօտութեան նորա՝ պարտական իցէ հատուցման։ — Իմանք պարտական զնա համարին, իբր զի աղքատին եղեն միանգամ իրաւունք ՚ի վերայ ընչից նորա։ Եւ այլ հասարակաց և ողջախոհ կարծիք չհամարին զնա պարտական. զի որպէս ՚ի վեր անդր ասացաք, եղբայրսիրութեան պարտք ՚ի բառնալ կարօտութեան ոչ և այս պահանջէն զհատուցումն, և աղքատին թէպէտ և իրաւունք լեալ յայնժամ ՚ի կիր առնել զինչս մեծատան, այլ ոչ երբեք ստանայ ՚ի վերայ այնոցիկ տերութիւն։

21. Որքէն է ուժք և վասն արդար փոխարինի առնուլ զինչս այլոց յակամայս նորին։ Եւ առ այս գաղտ փոխարինումն պահանջին երկեակ պայմանք։ Ի՝ զի իցէ առանց տուժից պարտապանին. երկրորդ՝ զի պարտք նորա իցէ ստոյգ և յայտնի. և երրորդ՝ զի չլցէ մարթ այլ ազգ ընդունել զհատուցումն։ Այսուամենայնիւ որոյ պարտ է պարտատեառն պահանջել նախ զայն դատաստանաւ. այլ եթէ այս ընդ իւր ածէ ծախս և ատելութիւն և տոյժս, օրէն է՝ որպէս սովորաբար ծառայից, առնուլ փոխարինս ՚ի ծածուկ՝ ՚ի ժխտել նմա տեառն իւրոյ զսակեալն վարձ, կամ ՚ի բռնադատելն զնա ՚ի ծառայութիւն դոյզն ինչ վարձուք. այլ յայնժամ պարտ է նմա առնուլ փոխարինս ըստ նուազագոյն սակի ծառայութեան։ Սակ յաղագս փոխարինի անպարտ ծառայութեանց, տես որ ինչ ՚ի վեր անդր ասացաք (գլ. Ի. 11)։

ՅՕԴՈՒԱԾ Գ

ԹԷ ՈՐՉԱՓ ԻՆՉ ԳՈՂՕՆՔ ՀԱՄԱՐԻՆ Ի ԾԱՆՐ ՄԵՂՍ

22. Ծանրութիւն գողոնից ըստ այլ և այլ պայմանի անձանց:
23–25. Գողոնք այգեաց և անտառաց:
26. Գողոնք մանուանք:
27. Գողոնք նշխարաց սրբոց:
28. 29. Գողոնք մանուանք ՚ի բազմաց, մանաւանդ կրպակաւորաց:
30. Գողոնք մանուանք ՚ի բազմաց միանգամայն:
31. Որ գողանայն գոյն ինչ լեալ ծանր գողոնից:
32. Գողոնք որդւոց:
33. Կանանց:
34. Ծառայից:

22. Ա՛ր ՚ի գատել թէ որչափ ինչ գողոնք համարին ՚ի ծանր մեղս, ոչ ՚ի քանակն ևեթ պարտ է հայել, այլ և ՚ի պայման անձինն և ժամանակի և տեղւոյ: Ո՛ր գողանալ զաստղն գերձակի մարթի գոլ ծանր, եթէ չիցէ նմա հնար գտանել անդ աստղն այլ առ ՚ի շահել զպէտս իւր: Նմանապէս մարթ է թէ իցէ ծանր, գէթ ընդդէմ եղբայրսիրութեան, գողանալ ինչ յումեքէ որ թէպէտ չիցէ մեծագին՝ այլ վիշտ մեծ իցէ նմա կորուսանել զայն: Ա՛յլ քանակ գողոնից ըստ ինքեան նկատեալ, չափի ըստ պայմանի տեառն իրին. և քանզի չափս այս ՚ի գտանել իմաստնոյ սահմանի, վասն որոյ արդարապէս ասեն Արիստիկեանք՝ զի յայսմ մասին հասարակագոյն կարծիք բնականապէս հաւանա- կանագոյնք գտանին: Ա՛րդ վասն մուրացիկ աղքատաց սահմանեն հանրագոյն կարծիք երկուս ղուռուշս, դուն ուրեք և մի: Ա՛ման աղքատ ձեռարուեստից, որպիսիք են հերկահարք և որմաշէնք և այլն, չորս ղուռուշս. իսկ այլոց ձեռարուեստից վեց, և կամ որչափ իցեն առօ- րեայ վարձք նոցա: Ա՛ման այնոցիկ՝ որ յեկամտից կեան առանց Հոխուեթեան, տան. Հոխիցն Հնգետասան: Իսկ Հոխագունից վաճառականաց քսան: Ա՛ծափարթամ աւագանւոյ, երեսուն. իշխանաց և թագաւորաց, քա- ռասուն:

Ասացեալ գիտելի է նախ՝ զի վասն իրաց, որ առանց պահ- պանութեան կան՝ որպէս պտուղք այգեաց և փայտք

անտառաց, պահանջի առաւելագոյն չափ առ՚ի ծանրաբեռնացուցանել զգողօնս։

23. Երբ՚ն իցէ ձաշակել զայգւոյ օտարին։ — Կէսք օրէն համարին ըստ բանի գրոց. «Մի՛ մինանիցես յայգի ընկերի քո, կերիցես խաղող մինչև յագեալ անձին քո, բայց յամանս մի՛ ամանայցես»։ (Բ. օր. ԻԳ. 25)։ Ոչնոյն իմա և զայլոց պաղոց։ Այլք ոչ օրինաւորս համարին զայն, մեկնելով զբանս գրոյն զաշխատաւորացս և ևթէ այգւոյն. այլ կարի բացայայտ զանցաւորս ցուցանէ բանն այն։ Եւ կարդինալ Ուկոյ ներէ ձաշակել իւրաքանչիւր ումեք ողկոյզս լինչ կամ պտուղս երկուս յայգւոյ, ընդ որ անցանէ. զի՛ ի տարդումիւն համարի չտալ ումեք Թոյլ այնչափ լինչ յանցանելն ընդ այն առնուլ՚ի ձաշակ։ Այսոյ ոչ անհաւանելի Թուի առաջնոյն կարծիք։

24. Երբ՚ն իցէ հարկանել փայտ զմայրւոյ օտարին։ — Պարտ է աստանօր զանազանել զանտառս հասարակաց և զիւրաքանչիւր ուրուք։ Ի հասարակաց անտառս, Թէպէտ արգելք կայցեն չհարկանելոյ փայտ, սակայն բարոյականք չհամարին փայտահարաց ծանր մեղանչել. մանաւանդ Թէ Ոմիոյ, Անքետ, Ալենիոյ, Ընկլէս, Վորտուպա և այլք, և ոչ՚ի ներելի մեղս համարին նոցա զայն. վասն որոյ և չէն նոքա պարտականք՚ի հատուցումն, բայց միայն յետ վճռոյ դատաւորի. զի արգելքն այն համարին որպէս պատժական օրէնք, որ չդատապարտեն՚ի մեղս։ Ոչնոյն է իմանալ և զահմանակից անտառաց հասարակաց։ Այայց և այսոցիկ չափ է և պայման. զի ոչ է օրէն նախձիրս գործել անտառաց՚ի վնաս մեծ հասարակաց. վասն որոյ Անքետ և Ընկլուէց այնչափ լինչ օրէն համարին, որչափ վասն առօրեայ պիտոյից իւրաքանչիւր ումեք. կամ որչափ լինչ պիտոյ իցէ ումեք առ՚ի կերակրել զընտանիս իւր՚ի վաճառէ նորին։

25. Իսկ վասն անտառաց իւրաքանչիւր ուրուք՝ Ոմիոյ, Ա՛ոլինա, Պոնաչինա և այլք բազումք հաստատեն, զի որ հարկանէ անտի փայտ՝ պարտական է հատուցման. զի տեարց անտառացն անպայման իրաւունք են՚ի վերայ այսոցիկ, և իշխանութիւն է նոցա վաճառելոյ զփայտս ծառաստանին։ Ոչնոյն իմա և զհասարակաց

անտառաց, որ ՚ի վարձու առեալ իցեն, զնոսին և զարօ-
տից։

26. Վիտեալն է երկրորդ՝ զի և վասն մանուանց գող-
նից խնդրի առաւելագոյն չափ առ ՚ի կացուցանել մեղս
մահուաւք։ Օ՚ի թէպետ և յինովկենտեայ ԺԱ գա-
տապարտեալ է վարդապետութիւնն այն՝ թէ “Ոչ ոք
պարտի ընդ պատժով մահուաւք մեղաց հատուցանել
զառաքն ՚ի մանր գողոնս,,, վասն որոյ և ծանր համարի
գողութիւն, թէպետ և գողնքն իցեն լեալ թեթեւք,
և յայլ և այլ տեարց իսկ՝ որպէս ասելոց եմք ՚ի ստո-
րև, սակայն ըստ հասարակաց կարծեաց բարոյականաց
խնդրի առաւելագոյն քանակ վասն մանր գողնոյ հա-
սանելոյ ՚ի չափ ծանրութեան, և առաւելագոյն և՝ ե-
թէ գողնքն յայլ և այլ տեարց և յայլ և այլ ժամա-
նակս իցեն լեալ։ Ոյն որոյ առաւելագոյնք ՚ի բարո-
յականաց խնդրեն կիսով և աւելի, եթէ գողնքն
լեալ իցեն յայլ և այլ ժամանակս կամ յայլ և այլ տե-
րանց. այսինքն եթէ չափ ծանրութեանն իցէ տասն
ղուռուշից, խնդրեն հնգետասան։ Ոմն եթէ գողոյն
անգամին ՚ի սկզբանէ չիցէ լեալ դիտաւորութիւն բա-
զում գողանալոյ. զի յայնժամ նուիրն կանոնիւ դատի,
որպէս թէ միանգամայն գողանայր։ Ոմայց եթէ առանց
այսր դիտաւորութեան, ՚ի մէջ գողնոյին անցեալ իցէ
երկայն ժամանակ, այսինքն իբր երկուց ամաց, գողնք
մանուանք չհամարին գալ ՚ի միութիւն, և չկացուցանեն
զչափ ծանրութեան։

Վիտեալն է երրորդ՝ զի որպէս ոչ ծանր մեղանչէ
որ սուղ ինչ ժամանակ յապաղէ զհատուցումն, նոյն-
պէս չմեղանչէ մահուաւք և որ գողանային գումար ինչ
մեծ՝ դիտաւորութեամբ հատուցանելոյ զայն փութով։

27. Վիտեալն է չորրորդ՝ զի որ ՚ի սահմանս Հռոմայ
գոյն իսկ նշխարս սրբոյ գողանայցէ, անկանի ընդ բա-
նադրանաւք Կղեմայ Ը։ Ոմն որ այլոյր մասն ինչ փոքրիկ
բառնայցէ աննուազ մնալով յարգի բոլորին, ոչ ծանր
մեղանչէ՝ եթէ չիցէ անդիւտ ինչ և երևելի, որպէս
մասն սրբոյ խաչափայտին, կամ փշեայ պսակին, կամ
անկար պատմուճանին, կամ ՚ի հերաց սրբոյ կուսին,
և այլն։

28. Վիտեալն է հինգերորդ՝ զի մանր գողնաք, և

յայլ և այլ տերանց գողացեալք, որ Հասանեն ՚ի չափ ծանրութեան՝ որպէս ՚ի վեր այսր ասացաք (22), պարտս Հատուցման ՚ի վերայ ածէն ընդ ծանր մեղաց: Քանզի պատուէրն չգողանալոյ արգելու ոչ միայն չվնասել ընկերին, այլ և չմեծանալ օտարին գոյիւք. Թէպէտ և խըղդրի յայսմիկ առաւելագոյն քանակ առ ՚ի չափ ծանրութեան, որպէս ասացաք (26): Այլ ոմ պարտ իցէ առնել զՀատուցումն: — Եթէ տեարք գողնիցին չիցեն ծանօթ, յայտ է զի աղքատաց և բարերարութեան տեղեաց պարտ է Հատուցանել, որպէս լիագոյն ասացաք ՚ի սորև (67): Իսկ եթէ ծանօթք իցեն տեարքն՝ ըստ Հանրական կանոնի պարտ է նոցին իսկ տերանցն Հատուցանել, Թէպէտ և բաժինք դուստրեացք իւրա-քանչիւրոց անկանիցին: Այլ օրէն է և բարեգործական տեղեաց և աղքատաց քաղաքին առնել զՀատուցումն, եթէ դժուարին իցէ Հատուցանել տերանցն. զի գող այնպիսի ոչ այնչափ տերանց գողնիցին է վնասակար, որչափ Հասարակաց: Ոմանք են ասել և զմանուկն գողնիցի կրպակատուրաց ՚ի վաճառս ձիթոյ, գինւոյ, և այլն. զի Թէպէտ և պարտ է նոցին իսկ քաղաքացեաց դնողաց առնել զՀատուցումն ըստ Հասարակաց վարդապետութեան աստուածաբանից, այլ եթէ որ աղքատաց իսկ կամ բարեգործական տեղեաց Հատուցանիցէ, աղատ գտանի ՚ի ծանր մեղաց. և ՚ի ներելոյ իսկ, եթէ դժուարութիւն և վտանգ անուանարկութեան առնչի կայցէ:

29. Կտեսիլ է վեցերորդ՝ զի Թէպէտ և առ ՚ի ծանր պարտս Հատուցման խնդրին մեղք ծանունք, որպէս ասացաք աստ ՚ի սորև (30), սակայն ՚ի մանր գողնս յորժամ որ ժամանէ ՚ի չափ ծանրութեան, գտանի պարտական ՚ի Հատուցումն ընդ ծանր մեղաց: Ոչ ի Թէպէտ ՚ի վերջնումն և գողութեան վասն անպիտանութեանն չիցէ մնահուչափ մեղուցեալ, այլ պիտութեամբ զգողնան առնելով ծանր մեղանչէ. բայց Եսիոյ, Յանքեզ, Պռնաչինա, Ասգուեզ, Կպելլիոյ և Աքրուա, օրէն համարին Հատուցանել զվերջին և եթէ գողնն՝ որով լցեալ իցէ չափ ծանրութեան մեղացն:

30. Կտեսիլ է եօթներորդ՝ զի եթէ բազումք գողնս մանունս յումեմնէ գողանայցեն, բայց առանց Հա-

մխոհուԹեան, ոչ ոք ՚ի նոցանէ ծանր մեղանչէ, Թէ պէտ և գիտակ իցեն գողուԹեան իրերաց և ծանր վըճասուն՝ որ անտի հասանիք նմա: Այսպէս ուսուցանեն Հաբերտ, Լուկիս, Եսիոյ, Անքեզ, Ալմատիկեանք և այլք: Յաւելուն Եսիոյ, Սոթոյ և Անքեզ ընդդէմ Լուկիսի և ՚ի միանգամայն գողանալն ազատ առնել զնոսա ՚ի ծանր մեղաց, իբր զի ոչ ոք ՚ի նոցանէ ըստ ինքեան առԹիՀ տուժից տեառն իրին՝ որում ըստ պատահման ծանրանան տոյժքն: Օ՞ի եԹէ չար օրինակաւ ևս իրերաց գայցեն ՚ի նոյն գողուԹիւն, սակայն ըստ Հասարակաց կարծեաց՝ ԹէպետԹ և մեղանչել մեղանչեն ծանրապէս ընդդէմ եղբայրսիրուԹեան տալով միմեանց գայԹակղուԹիւն, այլ ոչ և ընդդէմ արդարուԹեան. զի օրինակն ոչ տայ զրական պատՃառս տուժից օտարին:

31. Կ՚իտենլի և ուԹերորդ՝ զի կէսք յաստուածաբանից ՚ի ծանր մեղս Համարին և զմի մի ՚ի մանուանց գողանիցն, զորս որ գործիցէ յետ ժամանելոյ առաջնոյ գողանիցն ՚ի չափ ծանրուԹեան: Այլ Եսիոյ, Պոնաչինա, Ֆաւիիա և Ալմատիկեանք Հաւանականագոյնս ազատ առնեն ՚ի ծանր մեղաց զՀետևորդ գողնս, մինչ չև անդրէն ժամանեալ այնոցիկ ՚ի չափ ծանրուԹեան:

32. Կ՚իտենլի և իննևերորդ՝ զի առ՚ի ծանրուԹիւն գողնից ընտանեաց, այս ինքն որդւոց, կնոջ և ծառայից, լինդրի առաւելագոյն չափ, վասն տանուտեառնն նուազ դժկամակուԹեան ընդ վայելս ընտանեացն քան օտարաց. մանաւանդ զի և յաձախագոյնս ոչ ընդ առնուլ նոցա դժկամակին, այլ ընդ գաղտագողն առնուլ: Ալ ասն որոյ ՚ի գողնս որդւոց Հօր մեծատան ոչ ՚ի ծանր ՚ինչ Համարին բարոյականք զվաԹառն կամ զեօԹանաառն զուռուշս. և Հողման զերկերիւր իսկ զուռուշս ոչ ՚ի ծանր ինչ Համարի որդւոյ մեծափարԹամ Հօր, և Անքեզ զՀարիւր յիսուն: Յաւելու Եսիոյ զի և ՚ի մեղանչել որդւոյ ծանր ինչ գողնիւք, ոչ է պարտական ՚ի Հատուցումն՝ եԹէ ծախեալ իցէ զայն. զի չՀամարի Հօր այնչափ ինչ պարտս ՚ի վերայ դնել որդւոյ: Ասկ ԹէՀ կարիցէ արդեօք որդի ՚ի յարգել զղրաման Հայրենիս՝ առնուլ իւրովի զիսոխարէնս վաստակոյն, ասացուք ՚ի ստորև (227):

33. Վարձեալ և առ՚ի ծանրութիւն գողանից կնոջ խնդրի առաւելագոյն չափ: Որչափ է կնոջ առնուլ որ ինչ կարևորն է՚ի ծախս ընտանեաց, եթէ չիցէ ինչ փոյթ առնն՚ի հոգս նոցին: Վարձեալ եթէ իցեն կնոջ ծնօղք և որդիք յայլմէ առնէ աղքատք, օրէնն է նմա առնուլ՚ի հասարակաց ընչից ևս և՚ի գոյից առնն որչափ ինչ պիտոյ է նոցա առ՚ի կեալ ըստ պայմանի իւրեանց վայելչապէս, Թէպէտ և չկամիցի այրն. զի այդ չկամութիւն չէ իրաւացի: Այլ այլք յաստուածաբանից օրէնն համարին զայս կնոջ՝ ևս և վասն եղբարց իւրոց կարօտելոց: Օրէնն է դարձեալ կնոջ ծախել յողորմութիւն և՚ի պարգևս որչափ ինչ վայելուչ պայմանին իւրում է:

34. Խակ գողօնք մանուանք ծառայից, ըստ հասարակաց վարդապետութեան բարոյականաց, ի կերակուրս՝ որ արտաքոյ փականաց պահին, չհասանեն երբեք՚ի չափ ծանրութեան՝ եթէ չվաճառիցեն զայնս կամ չըտայցեն այլոց՚ի դուրս, և կամ եթէ չիցեն ծանրագինք:

ՑՕԴՈՒԱԾ Դ

ՑԱՂԴԴՈՒ ՀԱՑՈՒՑՄԱՆ

35. 36. Ե՞րբ ումեք՚ի վերայ կայցէ պարտք հատուցման:
37. Պատճառք հատուցման:
38. 39. Աստուածաբանական և իրաւաբանական օրինազանցութիւն:
40. Ներելի մեղք ածիցէն պարտս հատուցման:
41. Ի դաշնադրութիւնս և՚ի պաշտամունս քաղաքական ածիցէ պարտս օրինազանցութիւն իրաւաբանական:

35. Կարևոր յոյժ է խնդիրս, և արժանի առաւելագոյն ուշադրութեան. ոչ միայն վասն բազմակնճիռն իրաց որ՚ի սմա, այլ զի և հաւասարապէս խղճելի է խոստովանահօր արձակել զոք՚ի պարտուց, և պարտս տարապարտ՚ի վերայ դնել ումեք. և մանաւանդ այնոցիկ՝ որք անխիղճ մտօք ժառանգեն ինչ, որք և ըստ խիստ բարոյականաց չեն պարտական հրաժարել յընչից իւրեանց՝ և յայտնապէս ցուցեալ՚ի հակառակին զի յանիրաւի ժառանգիցեն զայնս:

36. Հատուցումն է փոխարինական արդարութեան,

որով փոխարինէ ոչ ինասուն՝ յանիրաւէ հասուցելոյ այլոմ։ Այլ գործ արդարութեան, զի ոչ ամենայն ինաս՝ զոր հասուցանէ ոք այլում՝ ածէ պարտս հատուցման. այլ միայն որ ինչ ինասէ իրաւանց նորա յիր ինչ կամ ա՛ւ իր ինչ։ Այլ զարձեալ փոխարինական արդարութեան, վասն զի ինաս օրինական արդարութեան՝ որ հայի՛ ի պահպանութիւն օրինաց, և ինաս տրամաբաշխական արդարութեան՝ որ հայի՛ ի վաստակս առ՛ի մրցանակ կամ՛ի պատիժ, ոչ ածէ պարտս հատուցման։ Այլ և փոխարինել ինասուն յանիրաւէ հասուցելոյ այլոմ, զի պարտք հատուցման ոչ՛ի գողութենէ եւեթ յառաջ գայ, այլ և՛ի ինասուէ հասուցելոյ նմա անիրաւութեամբ։

37. Պատճառք կամ արմատք, յորոց յառաջ գան պարտք հատուցման, են երկու. բարձումն յանիրաւի, որ նոյն է ընդ հասուցանելոյ ուժեք ինաս յանիրաւի. և պահել ինչ առ իւր յանիրաւի, որ նոյն է ընդ պարտս դաշնի։

38. Պարտ է զարձեալ զանազանել զսոփոստաճախանական օրինազանցութիւն՝ որ հայի՛ ի խիղճ մտաց, և է յատկապէս մեղք, յերոստաճանական օրինազանցութենէ՝ որ հայի յօրէնս, և բաժանի յերիս։ Ի ծանր, այս ինքն յորժամ վերջանայ ոք՛ ի ջանից՝ զոր ամենայն ոք սովոր է՛ ի կիր արկանել. ՛ի ներեա, այս ինքն յորժամ վերջանայ ոք՛ ի ջանից՝ զոր ջանասէրք սովոր են՛ ի կիր արկանել. և յանիսարելիս, այս ինքն յորժամ վերջանայ ոք՛ ի ջանից կարի ջանասիրաց։ Ասա այսմ՝ զիրաւաբանական օրինազանցութենէ միաբանին բարոյականք, զի եթէ դաշինքն իցեն՛ ի նպաստ ընդունողի զիրն՝ որպէս զփոխս, պարտական է փոխառուն՛ ի հատուցումն ընդ ամենայնի օրինազանցութեամբ. եթէ դաշինքն իցեն՛ ի նպաստ տուողի զիրն՝ որպէս զաւանդ, պարտական է աւանդապահն ընդ ծանր օրինազանցութեամբ. իսկ եթէ դաշինքն են՛ ի նպաստ երկոցունցիւրոյ և կողմանց, ընդունող իրին պարտական է ընդ ներեա օրինազանցութեամբ։

39. Ընդ ըստ այսոցիկ ուսուցանեն բարոյականք առ հասարակ՝ զի վասն իրաւաբանական եւեթ օրինազանցութեան, և ս ծանուց, ոչ ոք պարտական գտանի՛ ի խղճէ մտաց՛ ի հատուցումն ընդ ծանր մեղաց, եթէ

չկեն նորա և աստուածաբանական ծանր մեղք։ Օ՛ի առ՝ի պարտականութիւն խղճի մտոյ՝՝ի նմին իսկ խըղճի մտոյ պահանջի օրինազանցութիւն. և քանզի ծանր է պարտականութիւնն, հարկ է օրինազանցութեանն և ինքն ծանր։ Այսոյ որոյ սուր չիք դիտաւորութիւն ձեռնհաս ումեք, և ոչ նախատեսանել զինաս նորա պէտ ընդ աղօտ, թէպետ և այլով իւիք մեղկեցեալ՝ ոչ զտանի պարտական՝՝ի հատուցումն այնր ականայ ձեռնհասն. որպէս զող եթէ՝՝ի գնալ իւրում՝՝ի գողութիւն՝ լսոյր ըստ դիպաց պատահառ հրդեհելոյ որպիսի, ոչ է պարտական հատուցանելոյ զինաս արտավարին։

40. Առ՝ի ներելի մեղաց գտանիցի ոք պարտական հատուցման։ — Եթէ վասն սակաւութեան իրին ներելի իցեն մեղքն, ածեն պարտս հատուցման՝ այլ ընդ թէ և մեղաց։ Սակ եթէ առ՝ի չգոյէ կատարեալ իմացման մտոյ կամ լիուլի հաւանութեան կամաց, որպէս ասացաք՝՝ի վեր անդր (գլ. Դ. 24. 26), մեղքն իցեն ներելի, հանրագոյն և հաւանականագոյն կարծիք համարին և ոչ մի ինչ պարտականութիւն հատուցման՝՝ի վերայ ածել. ոչ ընդ ծանր մեղաց, զի պարտականութեան ծանրոյ չիք համեմատութիւն ընդ թէ և մեղաց. և ոչ ընդ թէ և մեղաց, զի թէ և պարտականութեան չիք համեմատութիւն ընդ ծանր իրի։ Այսպէս որամբաւանէ ներհուն կարդինալն Տէլուգոյ. մանաւանդ զի մեղք թերակատար չկարեն՝՝ի վերայ ածել պարտականութիւն կատարեալ։

41. Հաւանին իւրէ օրինազանցութիւն իրաւաբանական՝՝ի դաշնադրութիւնս ածել պարտականութիւն հատուցման։ — Հաստատեն հաւանականաբար Այսման, Լաւարրոյ, Ասգուէդ, Մոլինա և այլք, զի օրէնք դաշանց զորս յանձն առնու՝ ստիպեն զնա՝՝ի նոյն. այլ ոչ անհաւանականաբար Ժխտեն զայն Ռոմոյ, Վոլետոյ, Էսսիոյ, Ռուկոյ, Աբրուա, Ռանքաբեա Վալմատիկեանք և այլք, ոչ արդարացի համարեալ պարտս ծանուցս՝՝ի վերայ ածել խղճի մտոյ առանց ծանր ինչ մեղաց, բայց եթէ չիցէ ուրուք վասն իրաւաբանական ևեթ մեղաց յանձն առեալ զպարտս խղճի մտոյ՝՝ Օնոյն հաւանականաբար ասեն և այլք բազումք զօրինազանցութեանց՝՝ի քաղաքական պաշտամունս գործելոյ։

ՅՕԴՈՒԱԾ Ե

ԹԷ Ո՛ՅՌ Ի ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ԻՑԷՆ ՊԱՐՏԱԿԱՆՔ

42. 43. Գործակից պատուիրանաւ :
44. 45. Խրատատուք :
46. Եթէ գործոյն վաղ խակ 'ի մակ եգեալ էր գործել :
47. Եթէ ոք խրատեսցէ 'ի փոքրագոյն միաս :
48. Եթէ նահանջեսցէ զնրատ իւր :
49. Եթէ առ ոգիտութեան տուեալ լցէ զնրատան :
50. Որ տայ քուէ անօրէն :
51. Հրապուրիչք :
52. Որք տանն ապաստան :
53. Օրէն լցէ որոց գնենն ինչ 'ի գողոյ՝ հատուցանել զայն նմին :
54. Գործակից :
55. Եթէ բաղուածք 'ի միասին հուր հարկանեն զտանէ :
56. 57. Որ գործակից լինի յահէ միասու անձին :
58. Որ արգելու չնափանել զնրատան :
59. Աւելիք բացատականք :
60. Ո՞յք 'ի գործակցայ առաւել լցեն պարտականք, և եթէ պարտատէրն Թողցէ ումեք 'ի նոցանէ զբաժին պարտուցն :
61. Որ արգելու զբարի ինչ ուրուք :
62. Որ խափանէ զգանձ հասարակաց յերաւանց իւրոց :
63. Որ խափանէ ումեք զբարի ինչ առ առեւրտեան, այլ առանց չարարուեստ հնարից :

42. Ոչ միայն գործաներայք միասուց պարտականք են 'ի հատուցումն, այլ և գործակիցք նոցին՝ որ օգնեն և տան պատճառս միասու այլոց, և կամ պարտականք գողով ըստ արդարութեան խափանել զայն՝ չխափանեն : Այս ամենայն եօթն եղանակք գործակցութեան բովանդակին 'ի տողըս յայսոսիկ .

Պատուէր և խրատ, հաւանութիւն և հրապոյր,
Տալ ապաստան, հաղորդըս գող և կալ լուռ :

43. Արդ պարտական է 'ի հատուցումն նախ՝ որ պատուէրն տայ յայտնի կամ լռելեայն միաս ինչ գործելոյ . այլ ոչ որ հաւանին ընդ միաս ինչ գործեցեալ, կամ որ չէ 'ի գործ եկեալ միասուն՝ նահանջէ զպատուէր իւր, յայտնելով գործողին զհակառակ կամս իւր :

44. Արկղորդ՝ պարտական է 'ի հատուցումն և որ խրատն տայ կամ խորհուրդ միասելոյ այլում : Եւ թէ-

պէտ իրատիէ՝ որոյ չիցէ մնհուչափ մեղուցեալ՝ի տալն
ղնորհուրդ ջար՝ ոչ է պարտական՝ի հատուցումն, այլ
պարտ է նմա ըստ արդարութեան խափանել ըստ կարի
ջինսան, զպիսի պարտական է շինուցանել ղհրդեհ՝ որ
ոք առանց ծանր մեղաց առիթն լինի բորբոքելոյ նորին:
Այլ պիտելի է զի եթէ գործիչ ինսաուն վաղ իսկ
հատատեալ էր՝ի գործել զայն, յայնժամ իրատուն
չէ պարտական՝ի հատուցումն՝ որպէս ուսուցանէ սուրբ
Գրիգորեան, Եսիդոս, Օռլինա, Ասպուէղ, Իւա
և այլք: Ինա եթէ ինասիչն չիցէ շարժեալ և՝ի իրա-
տուց նորա, զի յայնժամ գործակիցք գտանի լեալ և նա:

45. Երկբայել իրատուին թէ իցէ կամ թէ չիցէ
լեալ և ինքն առիթ ինսաուն, պարտականն իցէ՝ի հա-
տուցումն: — Ունք յաստուածաբանից անպարտական
առնեն զնա, և սուրբ Գրիգորեան յայնժամ ևթէ
պարտական զնա համարի՝ յորժամ մարթի իցէ հաւանա-
կանաբար գտեալ՝ի իրատուց նորա շարժեալ զգործիչ
ինսաուն: Ու պատճառս ածեն, զի չէ մարթի վասն
անբաւոյգ ինսաու ստոյգ պարտս հատուցման՝ի վերայ
դնել ումեք: Իսկ այլք, ընդ որս և Ջաբերտ, Ռուիզ,
Մանքէզ, Ազբուա, Ռոնքալեա և այլք ասեն՝ զի յերկ-
բայս անդ զօրանան իրաւունք՝ի հաւանեցուցանել թէ
աղգեալ իցէ իրատն՝ի գործն: Այլ սակայն սուրբն
Գրիգորիոս ոչ անհաւանական համարի զառաջինն կար-
ծիս, զի նոյն ինքն սուրբ Գրիգորեան յաւելու անդ՝
ոչ միշտ իրատուց ազդել՝ի գործն: Իսկ եթէ իրատ-
տուն արդարև լեալ իցէ առիթ ինսաուն՝ ոչ զերծանի
՝ի պարտականութենէ՝ այնու զի եթէ իւր չէր տուեալ
զնորատն զայն՝ այլ ոք տալոց էր զնոյն: Որ ինչ ասա
զնորատուէն ասացաք, իմն և զայլոց գործակցաց առ
հասարակ՝ որոց գործակցութիւն իցէ երկբայելի:

46. Եթէ ոք վաղ իսկ հատատեալ իցէ առնել ինչ
ինաս, և այլ ոք նմա զեղանակն ևթէ թելադրեսցէ
կամ ջժամանակ, օրինակ իմն՝ գեղով քան թէ սրով,
այսօր քան թէ վաղիւ սպանանելոյ, իցէ պարտական՝ի
հատուցումն: — Ունք յաստուածաբանից պարտական
համարին զնա, զի առանց թելադրութեան նորա մար-
թէր թէրևս փոխել նմա՝ի խորհրդոյն. այլք ազատ
կացուցանեն զնա՝ի պարտականութենէ, իբր զի թէ-

լաղրաւթիւն եղանակին և ժամանակի ոչ է հակառանդ գործոյն։ Այլ քանզի մարթ է միշտ կարելի համարել զփոփոխումն մտաց գործողին կամ զփափանումն գործոյն առանց այնր թէ լաղրաւթեան եղանակին և ժամանակի, սուրբն Աւգիոստոս պարտական զթելադրիչն համարի ՚ի հատուցումն, զի զօրանայ կողմն չար խրատուն՝ վասն գալոց նորա յարդիւնս։ Այլ զայս պարտ է իմանալ, եթէ չիցէ բարոյապէս ստոյգ, առանց թելադրաւթեան իսկ նորա գալ իրին յարդիւնս։

47. Եթէ ուրուք մեծագոյն ինչ միաս ՚ի մոլ եւ դեալ իցէ առնել ումեք, օրէն իցէ խրատել զնա ՚ի փոքրագոյն ինչ։ — Անքեզ, Պոնաչինա, Պուսեմպաց, Վիւա և այլք օրէն համարին, միայն թէ նոյն անձին իցէ միասն. զի ոչ է օրէն խրատել զնա այլոմ ումեք հատուցանելոյ միաս, թէպէտ և փոքրագոյն. և ոչ այլոց ոմանց անորոշաբար, զի և այն հաւասար է պատճառս տալոյ միասու այլոց։

48. Որ վնասատ իւր նահանջէ միանչեւ յարդիւնս եկեալ միասուն, ազատի՚ ի պարտականութենէ հատուցման։ — Ռաւելագոյնք՚ ի բարոյականաց, ընդ որս Եսսիոյ, Ռուկոյ, Նաբերտ, Աքրուա, Նոլզման, Միխըեր և այլք ազատ կացուցանեն զնա եթէ խորհուրդ եւթէ տուեալ իցէ, այլ ոչ նոյնպէս՝ եթէ յաւելեալ իցէ և պատճառս և զնարս գործոյն ուսուցեալ. զի յայն ժամ՝ թէ և նահանջեսցէ զխորհուրդն՝ սակայն կան և միան պատճառքն և թելադրաւթիւն հնարից գործոյն առ ՚ի շարժել զգործողն. որպէս զի զի հուր զտանէ հարեալ, թէպէտ և ջանայցէ ապա շիջուցանել զնա, սակայն ինքն գտանի առիթ միասուն։ Այլ Վիլհելմ, սուրբ Աւգոստինոս, Աղբիոյ, Աւաարրոյ, Ալմաւիկեանք և այլք, զորոց կարծիս հաւանական կոչեն Այման, Պոնաչինա, Ռոնքալեա, և նոյն ինքն Եսսիոյ, առանց իսկ պայմանի ազատ կացուցանեն ՚ի պարտականութենէ հատուցման զնրատիչն, որ ջանայ ըստ կարի հակառակ առաջնոյ խորհրդոյն տալ խրատ՝ զայս իմեռնական փրկութիւնն յուշ առնելով, որ գերիվերոյն է այլոց առ հասարակ պատճառաց։ Այս ոչ զօրէ օրինակ հրոյն. զի հուրն հարկաւորապէս ներգործէ, այլ մարդ ազատաբար. և ՚ի նահանջել խրատուին

զնրատ իւր , ոչ ևս յիւրմէ յառաջ գայ ՚ի ՚ևասն՝ այլ՚ի չարութենէ գործողին : Այսրբն Ա՚ղեքսոս ընդունի զՀաւանականութիւն այսր կարծեաց , այլ Համարի Հաւանականագոյն զառաջինն կարծիս : Այլ յայսպիսի դէպս պարտական է ըստ արդարութեան խրատտուն ազգ առնել այնմ՝ որում Հասանելոց է ՚ևասն՝ որպէս զի զգուշասցի :

49. Որ մեղադրելի տգիտութեամբ խրատէ զոք ՚ի ՚ևաս նորին , պարտական՚ն իսկ ՚ի Հատուցումն : — Ա՚ստիոյ , Ա՚յմոն , Հոլգման և Ա՚իւա ասեն . եթէ խրատտուն ՚ի պաշտամանէ իւրմէ իցէ Համարեալ ընդ խորհրդականս , որպէս պաստաբան ոք կամ օրէնսգէտ կամ խոստովանահայր և այլն , պարտական է . իսկ եթէ իցէ ՚ի Հասարակաց մարդկանէ , յայնժամ անխոհեմութեան միւսոյն Համարելի է ՚ևասն՝ որ խորհրդով տգիտի առաջնորդի : Այլ միայն եթէ խրատտուին չիցէ տուեալ չարութեամբ զնրատն զայն առ ՚ի ՚ևասել նմին . զի յայնժամ գտանի պարտական ՚ի Հատուցումն :

50. Երրորդ՝ պարտական է ՚ի Հատուցումն որ Հաւանի ընդ իր ինչ քուէարկութեամբ , և զինի այնուիկ պատՀառ ՚ևասու . զի որք ոչն լինին պատՀառք՝ որպէս վերջինք ՚ի քուէարկուացն՝ չեն պարտական ՚ի Հատուցումն , եթէ յառաջ քան զքուէարկութիւնն չիցէ նոցա Հասարակաց Հաւանութեամբ զանիրաւութիւնն Հաստատեալ : Այլ եթէ իւրաքանչիւր ոք ՚ի քուէարկուացն չգիտիցէ սուտ թէ քուէիւն իւրով լեալ իցէ առիթ ՚ևասուն , զի՞նչ պարտի առնել : — Կէսք զամենեսեան իսկ Համարին պարտականս յամենողջ Հատուցումն . այլք ոչ զոք ՚ի նոցանէ : Այլ Ա՚ոկոյ , Ա՚ոլինա և Ափորեր իրաւամբք զիւրաքանչիւր ոք ՚ի Հատուցումն բաժնի իւրոյ դատապարտեն . և ՚ի չՀատուցանել այլոց զբաժին իւրեանց՝ յայնժամ ՚ի Հատուցումն բոլորին : Այս ոչ զօրէ ասա որ ինչ ՚ի վեր անդր (45) ասացաք աղատ ՚ի պարտականութենէ Հատուցման գոլ զգործակիցն ՚ևասուն , եթէ չգիտիցէ պատՀառս տուեալ այնմ . զի ասանօր իւրաքանչիւր ոք ՚ի քուէարկուացն դէթ նուազեցուցանէ զիրաւունս ՚ևասեցեալին ՚ի ստանալ զտոյժս իւր յայլոց քուէարկուացն . վասն որոյ և ամենայն ոք պարտական է ՚ի Հատուցումն ամենողջ ՚ևասուն ՚ի չՀատուցանել զայն այլոց :

51. Ջորրորդ՝ պարտական է ՝ի հատուցումն հրապուրիչն, որ յորդորէ և քաջալերէ զոք ՝ի վնաս այլոց՝ գովելով զնա կամ զվատասրտութիւն նորա յանդիմանելով։

52. Չինգերորդ՝ պարտական է ՝ի հատուցումն, որ գողոյ կամ գողնոյ նորա պատրաստէ ապաստան։ Բայց աղատ է ՝ի պարտականութենէ աստի, որ առանց աղաչելոյ ՝ի գործ գողնոյին եղելոյ կամ լինելեաց՝ ապրեցուցանէ զգողն փախստեայ, որպէս ուսուցանեն Չայրն Վրանչինա և Ալմատիկեանք ընդ այլս։

53. Բայց որ անգիտութեամբ գնէ ինչ ՝ի գողոյ, կարիցէ դարձուցանել զայն ՝ի նա՝ առ ՝ի ձեռս բերելոյ զարծաթ իւր։ — Չասարակաց կարծիք աստուածաբանից օրէն համարին զայն, եթէ չիցէ հնար այլապէս ՝ի ձեռս բերել զկինս գողնոյին. իբր զի գնօղն ոչ ինչ անիրաւի տեառն իրին, դարձուցանելով զայն ՝ի վտանգ կորուստեանն՝ յորում կայր։ Բ. Լայման, Կայեթանոյ, Մոլինա, Լաքրուա, Վրանչինա և այլք պարտական համարին զգնօղն դարձուցանելոյ ՝ի տէր իւր զգնեացն, որ զերծ ՝ի ձեռաց գողոյն՝ ՝ի լաւագոյն հանգամանս է, ուր դարձուցանել զայն ՝ի գողն՝ է գնել զայն ՝ի յոռեգոյն հանգամանս։ Չաւանական է կարծիքս այս, այլ ոչ ինչ նուազ հաւանական և առաջինն. քանզի պատասխանէ Լուկոյ, զի չէ պարտական գնօղն զերծուցանել զինչս այլոց տուժիւք անձին. զի թէ բարձցէ զբ, ասէ, զինչս այլոց՝ ընկերեալ ՝ի Ձանապարհի, և ապա տեսեալ զի լիցի այն իւր պատճառք տուժոյ, կարէ իսկ Թողուլ զայն անդրէն ուստի էառն։ Վարձեալ պատասխանի՝ զի գնօղին իրաւունք են լուծանելոյ զդաշինս՝ առ ապահովելոյ զարծաթ իւր, և տուժոյ այլոց ուրուք՝ որ չայնմանէ ըստ պատահման գայ յառաջ՝ չէ մարթ զրկել զնա չիրաւանց անտի։ Չաւելուն Լեոնէտոյ, Փրատոյ, Չոզմեան, Սիլուեսթրոյ և այլք օրէն համարել զայն՝ եւս և գիտութեամբ գնօղի զգողնան. զի և նորա նոյն իրաւունք են լուծանելոյ զդաշինս առ ՝ի զերծուցանելոյ զարծաթ իւր։ Չեթէպէտ մեղանչէ ՝ի գնելն զայն գիտութեամբ ՝ի գողոյ, այլ ոչ գնելովն և ոչ յետս տալով գտանի լեալ պատճառք վնասու տեառն իրին։ Մանաւանդ զի անիրաւութիւն եւ

արարեալ այլում՝ ոչ ածէ պարտս Հատուցման, եթէ չիցէ և միասեալ նմին՝ որպէս ի վեր անդր (44) վկայեալ սրբոյ Աղուինացւոյն ասացաք։

54. Եգերորդ՝ պարտական է ի Հատուցումն որ Հաղորդ գտանի գողոյն։ Արկին օրինակաւ մարթ է Հաղորդ գտանել. մի՝ մասնակցութեամբ գողնիցին, և յայնժամ պարտական է Հատուցանելոյ զընկալեալ և եթէ բաժինն, եթէ չիցէ տուեալ պատճառս գողութեան բոլորին, զի յայնժամ պարտական է բոլորին. միւս և՝ գործակցութեամբ գողութեանն, զորմէ այլևայլ խընդիրք են։

Խնդիր Ա. Իւրաքանչիւր ումեք ի գործակցաց գողութեան պարտ իցէ Հատուցանել ամբողջ զվնասն։ — Եթէ բաժանելի իցէ գողնն, որպէս այգի կամ շեղջ կալոյ և այլն, յայնժամ պարագլուխ գողութեանն պարտական է ի Հատուցումն բոլորին, իսկ այլք իւրաքանչիւրոյ մասին, թէպէտ և Համախոհութեամբ իցէ նոցա գողացեալ։ Ասա եթէ չիցէ նոցա զիրեարս Հրապուրեալ և քաջալերեալ, և եթէ ի Հրաժարել միոյ ուրուք՝ չէր մարթ յաջողել գողութեանն. զի յայնժամ ամենեքին իսկ պարտական գտանին Հատուցանելոյ ամբողջ զվնասն։ Այլ քանզի ոմանիկն չառնու ի միտ ըզպարտս Հատուցանելոյ որ ինչ այլոց ուրուք իցէ գողացեալ, և զի դարձեալ նոքին իսկ տեարք իրին շահանան ընդ Հատուցումն մասին՝ զոր իւրաքանչիւր ուրուք իցէ գողացեալ, թէ գուցէ զընաւն կորուսանիցեն ի ստիպելն զնոսա Հատուցանել ամբողջ, լաւ է խոստովանաՀօր յորդորել զգործակիցս՝ մանաւանդ ոչ յոյժ երկիւղածս՝ ի Հատուցումն եւթէ պարտուցն, առանց բացատրելոյ զորչափն, ի խիղճ մտաց նոցա ապաստան արարեալ զայն։

55. Իսկ եթէ զանբաժանելի իրաց իցէ խնդիրն, որպէս եթէ այրեալ իցէ նոցա զտուն ուրուք կամ զնաւ, պարտ իցէ իւրաքանչիւր ումեք ի նոցանէ Հատուցանել ամբողջ զվնասն։ — Ասաղումք պարտականս զնոսա Համարին Հաւանականաբար, իբր զի իւրաքանչիւր ոք ի նոցանէ բարեյաջողեալ գտանի լեալ պատճառ բոլոր վնասուն։ Այլ Աիլուեսեթրոյ, Աւարրոյ, Ղուկոյ, Սփոբեր և այլք նոյնպէս Հաւանականաբար ազատ կացու-

յանեն զնոսա յամբողջ հատուցմանէ, զի ասեն թէ ոչ պէս գործակիցք գողնոյ բաժանելեաց՝ մասին և եթէ ընտուն պարտականք են ի հատուցումն, նոյնպէս և ընտուց անբաժանելեաց ըստ մասին և եթէ հաղորդք՝ մանաւանդ և եթէ գտանին պարտականք ի հատուցումն։ Այլ ասա ես իմն՝ եթէ առանց իւրաքանչիւր ուրուք և գործակցութեան գործելոյ էր ընտուն. զի եթէ ի հրաժարել ուրուք չէր մարթ յարդիւնս գալ ընտուն, յայնժամ իւրաքանչիւր և ոք պարտական գտանի ի հատուցումն բոլորին։

56. Ինդիր Բ. Որ առ ահի ծանր ընտուս անձին՝ գործակից լինի ընտուս այլոց, իցէ ազատ ի մեղաց և ի պարտականութենէ հատուցման։ — Պարտ է զանազանել զգործակցութիւն մեղաց գողոյն, ի գործակցութենէ ընտուս ընկերին. արդ ըստ այսմ երկրորդ մասին ոչ ումեք օրէն է գործակից լինել ընտուս օտարին առ ի խափանել զընտս իւր, ուր ուրեք ի նմին կարդի իցեն իւրն և նորայն ընտոք. վասն որոյ ոչ է օրէն տալ ումեք սուտեր՝ որ խնդրէ սպանանել զընչնամին, թէպէտ և ի չտալոյ զայն հասցէ ինքեան մահ. զի առ ի փրկել զանձն ի մահուանէ՝ չէ օրէն գրականապէս գործակից լինել մահու օտարին։ Իսկ եթէ ընտս ուրուք իցէ ի բարձրագոյն կարգի, օրէն է յայնժամ գործակից լինել ընտուս օտարին. որպէս եթէ հարկ իցէ ումեք կորուսանել զկեանս իւր կամ զանուն բարւոյ առ ի չհատուցանել այլումն կորուստ ընչից. զի պարտ է համարել զնա յայնժամ ի յետին կարօտութեան, յորում օրէն է նմա և ընդդէմ կամաց ընկերին ի կիր առնուլ զինչս նորա։

57. Իսկ ըստ գործակցութեան մեղաց գողոյն, օրէն է՝ առ ի փրկել զկեանս և զանուն բարւոյ՝ առնել զինչ-թականգործակցութիւնս՝ որ ըստ ինքեան ոչ բարւոյ են և ոչ չար, որպէս ի վեր անդր ասացաք. (զլ. Դ. 31. 32)։ Իսկ զի չարութիւն գողոյն զեղծանի նոքօք, գործակիցն անտի ոչ մեղք են և ոչ պարտականութիւն հատուցման։ Ո՞ւ եթէ ըստ ինքեան էր չար տալ ի ձեռս գողոյ զբանալի՝ որով գողանալոյն է և մեղս գործելոց, չլինէր ումեք օրէն տալ զայն և ոչ առ ի կողոպտել զտուն իւր, և հարկ լինէր նմա ընդ ընչից և զկեանն կորուսանել. այլ ո կարասցէ հաստատել զայս։

Ալան որոյ այն ևեթ գործակցութիւնք ըստ ինքեան են չար, որք յաւելուն կամ հաստատեն զչար կամն պողջոյն. որպէս դէտ կալ չհասանելոյ ումեք ի վերայ, աղդառնել նմա զդէպ ժամ կամ զպատեհ եղանակ գողութեան և այլն. զի այսոքիկ օժանդակեն չար կամացն նոյա, և չեն երբէք օրինաւոր՝ թէ և մեռանել ումեք հասանիցէ: Ո՞այս այսպէս օրինակօք և վկայութեամբք հաստատէ սուրբն Աւգոնոս:

58. Ինդիր Դ. Արդեօք ոք խափանել կամիցի զվնաս ընկերին, և այլ ոք արգելուցու վնա, պարտականն իցէ արգելոյն ի հատուցումն վնասուն: — Արդեօք արգելու բռնութեամբ կամ նենգաւ, պարտական է. իսկ եթէ խորհրդով ևեթ կամ աղերսանօք, ոչ է պարտական. զի թէպէտ և մեղանչէ ընդդէմ եղբայրսիրութեան, այլ ոչ և ընդդէմ արդարութեան: Ուստի եթէ արգելեալն չիցէ պարտական ըստ արդարութեան խափանել զվնասն:

59. Ծօթնեորդ՝ պարտական է ի հատուցումն և որ լուէն, և ոչ ընդդէմ դառնայ. որովք զբացասական պատճառս է իմանալ, այս ինքն որ կարէ արգելուլ զայլոյ վնաս՝ խօսելով կամ յայտնելով զվնասակարն, և պարտական գողով իսկ ըստ դաշանց կամ ըստ պաշտամանն առնել զայն, և չառնիցէ: Որպիսի են իշխանք, զօրավարք, հոգաբարձուք, տնտեսք եկեղեցեաց, պահապանք, արբանեակք և ծառայք. բայց ծառայից զարտաքինս ևեթ պարտ են յայտնելոյ, որպէս ի վեր անդր ասացաք (գլ. Ե. 8): Իսկ թէ պարտականն իցէ ի հատուցումն խոստովանահայր՝ որ ոչ պատուիրէ ապաշխարողն զպարտս հատուցմանն, տես ի օտրևէ ի Ճառս խորհրդոյ ապաշխարութեան. (գլ. ԺԲ):

60. Վիտելի է զի ի գործակցաց աստի պարտականք ի հատուցումն են նախ՝ որք առ իւրեանս ունին զգողոնն. երկրորդ՝ պատուիրողք, եթէ գողոնն չիցէ ի միջի. երրորդ՝ կատարողք գործոյն. չորրորդ՝ պատճառք դրականք, որպէս խրատատուն և հաղորդն և այլն. հինգերորդ՝ պատճառք բացասականք: Վիտելի է զարձեալ՝ զի եթէ վնասեալն Թողուցու զվնասն գլխաւորի վնասապարտին, համարի Թողեալ և այլոցն նուազ վնասակարաց. եթէ վնասեալն խոստանայցէ ումեք ի

Հաւասար ինասապարտից չնեղել զնա, համարի Թո-
ղեալ նմա զաժին ինասուն։

61. Ասաց ի գործակցաց աստի պարտականք են ի հատուցումն և որք խափանեն զբարի ինչ ուրուք։ Այլ պարտ է զանազանել զի եթէ ըստ արդարութեան անկ է նմա իրն, որում օրինակաւ և արգելուցու զգայն՝ պարտական է ի հատուցումն։ Իսկ եթէ ոչ է նմա անկ, յայնժամ պարտական է որ բռնութեամբ և եթ կամ նենգաւ խափանէն զգայն։ Օ ի թէպէտ և չէին նորա իրաւունք ունելոյ զգայն, սակայն ամենայն ումեք իրաւունք են՝ զի չխափանեսցէ զգազանակի ըզբարի ինչ, որում չէ անարժան դրականապէս։ Օ նոյն հաստատեն Յալմատիկեանք, եթէ զգա ժիտ և յոգնաթախանձ աղերսիւք կամ երկիւղիւ ակնածութեան խափանեսցէ զբարի ինչ ուրուք. և յայնժամ պարտ է կշռել նմա զհատուցումն ըստ ակնկալութեան յուսոյ նորա ի նոյն։

62. Որ չարարութեամբ հնարիւք խափանէ զիրաւունս ինչ հասարակաց գանձուն, պարտականն իցէ ի հատուցումն։ — Պարտական է յետ ատենական վճռոյ, զի ոչ ստանայ գանձն իրաւունս ի վերայ պատժոյ՝ մինչ չև վճռեալ զգայն ատենին։

63. Որ խափանէ առ ատելութեան, այլ առանց չարաբաղձութեան հնար արուեստից, զբարի ինչ ուրուք՝ որ չիցէ նմա անկ ըստ արդարութեան, պարտականն իցէ ի հատուցումն։ — Կէսք հաստատեն, անիրաւ վարկանելով զգործ յառաջ եկեալ յանիրաւ դիտաւորութենէ։ Այլ հասարակաց և հաւանականագոյն կարծիք ազատ կացուցանեն զնա ի պարտականութենէ հատուցման. զի առ այս բաց յանիրաւ դիտաւորութենէ՝ խնդրի և գործ արտաքին ծանրապէս անիրաւ, որ յայտնի ինասեսցէ իրաւանց այլոց, և իցէ առիթ ինասուս նորա. ապա թէ ոչ՝ մեղանչել մեղանչէ ատեցողն, այլ ոչ ընդդէմ արդարութեան։

Պատի է ի միտ առնուլ զի չէ պարտական ի հատուցումն, որ առ ատելութեան՝ այլ առանց նենգութեան կամ բռնութեան արգելու մեծատան՝ չառնել հրիտակ ատելոյ իրում, կամ եպիսկոպոսի՝ չտալ նմա զժառանգութիւն եկեղեցական, իմա զպարզից, զի զայլն՝

որպէս զԺողովրդապետութիւն և այլն, պարտական է եպիսկոպոսն յարգարութենէ՝ ըստ Հաւանականագոյն կարծեաց՝ տալ արժանագունին յետ մտանելոյ նոցա ՚ի Հարցփորձ. զորմէ տես ՚ի ստորև (գլ. ԺԳ. 37):

ՅՕԴՈՒԱԾ Զ

ԹԷ ԱՒ Ո՛ ՊԱՐՏ ԻՑԷ ԱՒՆՆԵԼ ԶՀԱՑՈՒՑՈՒՄՆ

64. Եթէ ստոյգ իցեն ինչք, և տէր նոցին հետ:
66. Եթէ տէր իրին առնու զայն ուժգնի ՚ի դնողէն:
67. Եթէ ինչքն անստոյգք:
68. Ցնօրինումն անստոյգ պարտուց Հաստուցման:
69. Զգաեալ իրաց:
70. Զգանձուց գաղտոյ:
71. Զանանոյց որսացելոյ:
72. Ո՞ր յորսոց չիցէ օրէն եկեղեցականաց և կրօնաւորաց:

64. Պարտ է զանազանել զինչս ստոյգս յանստուգից՝ որոց չիցէ յայտ տէր նոցա: Այդ եթէ յայտնի իցէ տէր իրին, նմա Հաստուցանելի է աներկբայապէս. իսկ եթէ ՚ի ձեռանէ այլոյ ուրուք առեալ իցէ զայն, որպէս ՚ի պահապանէ, ՚ի կառավարէ և այլն, պարտ է ՚ի ձեռս նոցին իսկ Հաստուցանել, եթէ չիցէ վտանգ ինչ զեղծանելոյ նոցա նոքիմբք ընդդէմ տեառն իրին:

65. Եթէ տէր իրին իցէ ՚ի բացեայ, ո՞ իցէ պարտական ծախուց Հաստուցանելոյ զայն ՚ի ձեռս նորա: — Եթէ անգիտութեամբ առեալ ուրուք իցէ զայն, տեառն իրին անկ է զծախսն առնել. իսկ եթէ անիրաւաբար, գողոյն է անկ: Այլ որչափ ինչ ծախս պարտ իցէ նմա առնել: — Ակնք պարտական զնա Համարին որոյ և իցէ ծախուց կարևորաց առ ՚ի Հաստուցանել ըզգողոնն առ տէրն. այլք այնչափ ինչ ծախուց, որչափ արժէ գողոնն: Այոյ Մոլինա, Ալփորեր, Ծամպուրինն և Տէլուկոյ պարտական Համարին զնա Հաւանականագոյնս մինչև ցկրկնապատիկ ծախս արժէից իրին. իսկ եթէ առաւելագոյն ևս ծախուց պէտք իցեն, Հասարակաց կարծիք օրէն Համարին առ աղքատս առնել զՀաստուցումն: Նմա եթէ չիցէ յոյս կարելոյ յետ ժամանակի նմին իսկ տեառն իրին Հաստուցանել զայն կամ զգինս

նորին : Պարթ է և այս գողոյ յամեցուցանել զհատուցումն՝ եթէ ծանր միասս ի վաղ հատուցանելոյ հասանիցէ ընդ այլոյ ինքեան . շատ է զի և տեառն իրին չհասանիցէ նոյնպիսի միասս ի յամելոյ հատուցմանն , զի ամենայն ոյժք նորա՝ ի յամեցմանէ անտի յառաջ եկեալ՝ յաւելուն ի պարտս գողոյն :

66 . Եթէ ոք անգիտութեամբ գնեալ ինչ յումեքէ՝ վաճառեսցէ զայն այլում; և ապա գիտասցէ զընդիկ տէր իրին , ուր պարտի հատուցանել : — Եթէ տէր իրին պահանջեալ և թափեսցէ զայն ի գնողէն , պարտական է վաճառօղն դարձուցանել ի նա զարծաթն , թէ և դաշնադրեալ իցէ ազատ գոլ ի տուժից նորա . զի ոչ է արդարութիւն՝ շահել վաճառողի տուժիւք գնողին : Յերիս եւեթ դէպս ազատ է նա ի հատուցմանէ ասի . ա . Եթէ պայման բացայայտ եղեալ իցէ չհատուցանելոյ և ոչ զգինան : բ . Եթէ յանդիպեսս սպառեալ իցէ զգինան ի պարգեւս կամ յողորմութիւն և այլն : գ . Եթէ գնօղն գիտութեամբ գնեալ իցէ՝ գիտելով զի գողօնք են . քանզի յայնժամ ի պատիժ չարութեան իւրոյ տուժի , և չկարէ պահանջել զգինան , (եթէ ոչ պայմանն բացայայտ ի դաշինսն յաւելեալ իցէ հատուցանելոյ) : Այլ յայնժամ և ոչ վաճառողին օրէն է առ իւր զգինան ունել , զի ի խղճէ մտաց պարտական գտանի առանց իսկ ատենական վճռոյ հատուցանել զայն գնողին : Իսկ եթէ գողօնն կայ մնայ առ գնողին , ոչ է պարտական վաճառօղն ի հատուցումն . զի ոչ ինքն է առեալ տուժից տեառն իրին , և ոչ պարտական է տուժիւք իւրովք տալ նմա ստանալ զիւրն :

67 . Այս ամենայն , եթէ տէր իրին իցէ ծանօթ : Իսկ եթէ չիցէ , պարտ է դարձեալ զանազանել՝ գիտութեամբ եթէ անգիտութեամբ իցէ գնեալ գողօնն : Որ գիտութեամբ ոք գնէ զգողօնն , յետ ինդրելոյ իւրոյ նամակ զտէր իրին և ոչ գտանելոյ՝ պարտի հատուցանել զայն աղքատաց կամ բարեգործական տեղեաց : Ինդրել ասացաք ինամով . զի եթէ առանց այսորիկ բաշխեսցէ ոք զայն աղքատաց , ի յայտնել ապա տեառն իրին՝ պարտական գտանի հատուցանելոյ նմա զիւրն :

68 . Ասացի գիտելի է զի յաղագս անստոյգ պարտեացս այսոցիկ օրէն է ինդրել անօրինութեամբ ի Պապէն , եթէ

իցեն իրաւացի պատճառք ՚ի միջի, և տէր իրին ամենևին անյայտ։ Ա՝ան որոյ իրաւապէս աղգ առնեն Աթոյ և Հենրիկոսէզ, զի ոչ է օրէն խնդրել անօրինութեամբ, ուր մարթի իցէ հատուցանել աղքատաց վասն հեռաւորութեան տեառն իրին, որպէս ՚ի վեր անդր ասացաք (66)։ և ոչ վասն հատուցման մանուանց գողոնից պարենավաճառաց և այլոց, զոր մարթի է առնել աղքատաց տեղւոյն։ Ա՝անաւանդ զի ըստ Հասարակաց կարծեաց աստուածաբանից՝ պարտ է նոցին իսկ քաղաքացեաց յաձախելոց ՚ի կրպակ անդր առնել զհատուցումն. թէպէտ և որպէս ՚ի վեր անդր ասացաք (28), ոչ ծանր մեղանչէ, եթէ ոք աղքատաց քաղաքին առնիցէ զհատուցումն։

Ա՛յլ եթէ յետ անօրինմանն ՚ի յայտ եկեսցէ տէր իրին, աղա՛տ իցէ պարտապանն ՚ի հատուցմանէ։ — Հասարակաց կարծիք ազատ համարին զնա. զի յայնպիսի դէպս Պաւլն իշխանութեամբն իւրով ՚ի վերայ ժամանակաւոր ընչից ըստ հոգևորական մասին՝ կարող է բառնալ զամենայն պարտականութիւն նորին անօրինմամբն։

69. Յայսվայր եթէ ուրուք զգողն գիտութեամբ գնեալ իցէ. իսկ եթէ անգիտութեամբ գնեալ կամ վրիպակաւ առեալ ընկալեալ իցէ զգինս իրիք ՚ի վաճառէն, կամ գտեալ ինչ յուղղօք, և չգիտիցէ զտէր իրին, պարտի հատուցանել ինչ ունիք, և ո՞ւմ։ — Ա՝անիք յաստուածաբանից օրէն համարին նմա յետ խնդրելոյ խնամով զտէր իրին և չգտանելոյ, ունել զայն առ իւր. իսկ այլք բազումք պարտ համարին ՚ի գործս բարիս ՚ի կիր արկանել զայն, զկամ տեառն իրին այսպէս մեկնեալ։ Ասայ Տէլուկոյ, Աքրուա, և Հոլզման ըստ վարդապետութեան սրբոյ Ագուինացւոյն զանազանեն այսպէս. եթէ անհնարին իցէ զտէր իրին գտանել, օրէն է ունել զայն իւր, զի է այն հաւասար անտէրունչ իրի՝ որ առաջնում գտողի է անկ։ Իսկ եթէ կայցէ ինչ տակաւին յոյս ՚ի յայտ գալոյ տեառն իրին, պարտ է պահել զայն կամ զգինս նորին յաւանդի. զի ցորչափ գոյ յոյս՝ տէրն տեառն իրին իրաւունք, և ՚ի բառնալ յոսոյ ՚ի սպառ՝ դադարէն։ Ա՝ան որոյ և աղքատ, որոյ ընկալեալ իցէ զգողն այնպիսի յողորմութիւն, ՚ի յայտ գալ ապա յանկարծ տեառն իրին՝ ոչ ևս է պարտական

հատուցանելոյ նմա զայն . զի ՚ի բառնալ ամենայն յու֊
սոյ , անցանէ տերութիւն իրին յաղքատն ։

70 · Մ՚ամանկ իցեն գանձք գտեալք ։ — Ա · Ոստ հա֊
սարակաց օրինաց , որ զգտանէ զայն յերկրի իւրում ,
տէր է նորին ։ Բ · Եր զգտանէ զայն յերկիր այլոյ
ըստ պատահմանն՝ տէր է կիսոյ նորին և ՚ի խղճէ մտաց
պարտի տալ տեառն երկրին զմիւս կէսն ։ Ոսկ եթէ
ձարտարութեամբ գտանէ զայն , պարտի տալ զայն բո֊
վանդակ տեառն երկրին . այլ զի պատճականք են օ֊
րինքս , յետ ատենական վճռոյ պարտս ՚ի վերայ ածեն .
իսկ առանց այնորիկ՝ զկէս գանձուն գտելոյ պարտի ըստ
խղճի մտաց տալ տեառն երկրին ։ Գ · Եթէ ՚ի հա֊
սարակաց կամ ՚ի սրբազան տեղւոջ գտանէ , պարտի
զկէս նորին տալ ՚ի գանձն հասարակաց կամ թեմական
եպիսկոպոսի ։ Դ · Ոսկ եթէ մոգական հնարիւք գտա֊
նիցէ , բովանդակ պարտի զայն տալ ՚ի գանձ հասարա֊
կաց՝ այլ յետ ատենական վճռոյ ։

71 · Մ՚ամանկ իցեն անասունք կալեալք յորս ։ —
Եթէ յումեմնէ հարեալ և յայլոյ ումեմնէ կալեալ իցէ
անասունն , ունողին է անկ՝ եթէ առանց ունելոյ զնա
կարէը փախչել · իսկ յերկբայս , կէս ՚ի կէս բաժանելի
է ։ Ընասունք ՚ի ցանցս անկեալք՝ ցանցօրդին են անկ ։
Եթէ զբ որսայ լինչ յանտառս՝ որ չեն հասարակաց ,
ծանր մեղանչէ ըստ ոմանց , և պարտական է ՚ի հատու֊
ցումն զնոց երէցոյն . այլ Սոթոյ և Մ՚ոլինա պայմանաւ
ընդունին զայս , այս ինքն եթէ փակեալ իցէ անտառն .
իսկ եթէ պատիժ ՚ի վերայ կայցէ որսողայ անդ , ազատ
յամենայն պարտականութենէ հաճարի զնոսա Լես֊
սիոյ ։

72 · Վիտելի է աստանօր զի ոչ ամենայն որսք օրի֊
նաւորք են եկեղեցականաց և կրօնաւորաց , այլ որք ա֊
ռանց աղվիի աստպականեաց և գիշատիչ հաւուց դոր֊
ծին ։ Ոստ ոմանց ՚ի բարոյականաց և ոչ այսոքիկ ընդ
ծանր մեղսք արգելեալ են նոցա , եթէ չյաձախիցեն ՚ի
նոյնս , և լիցին առիթք գայթակղութեան և ծանր
ծախուց ։ Ոսկ որք չափով և առ հարկի կամ առ ՚ի կըր֊
թութիւն մարմնոյ գան զնովքին , ոչ լինչ մեղանչեն ։

ԾՕԴՈՒԱԾ Ի։

ՈՐ ԻՆՁ ՊԱՐՏԻՆ ՀԱՏՈՒՑԱՆԵԼ, ՈՐՔ ԺԱՌԱՆԳՆԵՆՆ ՁՕՑԱՐԻՆ ԱՆԳԻՏՈՒԹԵԱՄԲ ԵՒ՝ ՈՐՔ ԳԻՏՈՒԹԵԱՄԲ

73. Որք ժառանգենն ինչ անգիտութեամբ։
74. Պատուիրք բնականք, քաղաքականք, խառն, և որ Ճարտարութեամբ յառաջ բերեալ։
75. Որ գողնոյ խառն ընդ իւրն ընդունի ՚ի գողոյ։
76. Որ առնէ միայն ինչ այլում համարեալ նուազ քան զոր էն։
77. Որ ժառանգէ զայլոյ ինչ գիտութեամբ։
78. Եթէ ածէ դէն նորա, և եթէ ծախս ինչ պիտանիս արարեալ իցէ գողոյ ՚ի նմին։
79. Եթէ գողնոն կորնչէր և ՚ի ձեռս տեառն նորին։
80. Եթէ կասկածանօք ոք դնեսցէ։
81. Որ նենդէ ՚ի տուրս արքունի։

73. Որ ժառանգէ ինչ անգիտութեամբ, այս ինքն որ նիւթապէս ևեթ առանց մեղաց անիրաւի տեառն իրին, պարտական է զիրն ևեթ հատուցանելոյ՝ եթէ կայցէ. իսկ եթէ չկայցէ կամ ընդ իւրն խառնեալ իցէ, զայն ևեթ պարտի հատուցանել՝ զոր շահեալ իցէ այնուիկ. զոր օրինակ եթէ զձորձ այլոյ ՚ի կիր արկեալ և մաշեալ իցէ, պարտի հատուցանել որ ինչ ծախեալցին էր առ ՚ի յօրինել իւր ձորձ։ Ապա եթէ երկբայելի իցէ շահ իւր անտի, ոչ ինչ է պարտական հատուցանելոյ. զի առ երկբայութեան ոչ ոք պարտի տուժիլ։ Սակ որ ինչ պարտ իցէ առնել այնմ, որ ժառանգէ ինչ անգիտութեամբ, և կասկած ՚ի միտս նորա զայնմանէ անկանի, ասացաք ՚ի գլ. Ա. 20։

74. Պարտ է դարձեալ հատուցանել ոչ միայն զիրն անիրաւութեամբ ժառանգեալ, այլ և զպատուղս նորին վայելեալս։ Այլ պարտ է զանազանել զպատուղս բնականս ՚ի քաղաքականաց և յայնցանէ՝ որ են խառն կամ Ճարտարութեան արդասիք։ Բնականք են՝ որ բնաւորապէս յառաջ գան, որպէս յերկրէ բերք, յանասնոց ծնունդք և այլն։ Քաղաքականք են՝ որ ՚ի վարձուց տանց և գրաստուց յառաջագային, և և ՚ի գրենոյ, ՚ի հանդերձանուոյ և այլն։ Խառն են՝ որ ըստ մասին ՚ի բնութենէ և ըստ մասին ՚ի Ճարտարութենէ պատաքե-

բին, որպես ձկեր, գինի, պանիր և այլն: Իսկ Հարտա-
րութեան արգասիք՝ որպես՝ ի յարգելոյ զարծաթ, ի
կատարելագործելոյ զնրս, և այլն: Եւ զարգասիս
Հարտարութեան չեն ինչ պարտք հատուցանելոյ, և ոչ
ժառանգողացն գիտութեամբ զայլոյ ինչ. զի չեն ինչ՝ ի
վերայ այնոցիկ իրաւունք տեառն իրին: Պատուղս քա-
զաքականս և զբնականս (Հանեալ՝ի բաց զծախս) պարտ
է բովանդակ հատուցանել, ոչ միայն գիտութեամբ
ժառանգողաց զայլոյ ինչ, այլ և ժառանգողացն անգի-
տութեամբ. բայց միայն զի յետինքս չեն ինչ պարտա-
կան հատուցանելոյ, եթէ չիցէ ինչ ընկալեալ նոցա
պտուղս կամ սպառեալ իցէ զայնս յանգիտութեան, և
չիցէ մեծացեալ նոքօք, և կամ եթէ՝ի նմին անգիտու-
թեան լցեալ իցէ զժամանակ նախապրութեան ըստ ա-
սացելոցս՝ի վեր անդր (10): Իսկ որ գիտութեամբն
ժառանգէ զայլոյ ինչ, պարտի հատուցանել բովանդակ
զպտուղսն, թէպէտ և չիցէ ընկալեալ զայնս. զի եթէ
՝ի ձեռս տեառն իւրոյ էր այն, պտղաբերէր: Իսկ եթէ
՝ի ձեռս տեառն իւրոյ ոչ պտղաբերէր, և առ անիրաւ
ժառանգողին պտղաբերէ, դարձեալ պարտական է սա
հատուցանելոյ տեառն իրին զպտուղս. զի ամենայն ինչ
տեառն իւրում միշտ պտղաբերէ: Տառն և այս պտուղք
ընդ նովին օրինօք են, բայց միայն ըստ բնական մասին
պարտ է հատուցանել զպտուղս և ոչ ըստ արդեանց
վաստակոց և Հարտարութեան. զի արժէք վաստակոց
և Հարտարութեան՝ անկ են ժառանգողին:

75. Պարտական իցէ օք հատուցանելոյ զդրամս, ըզ-
ցորեան և զսոցին սակի գողոնս ընկալեալս՝ի գողոյ, ո-
րոյ ընդ իւրան խառնեալ իցէ զայնս: — Այլ է պարտա-
կան, եթէ գողն յետ տալոյ նմա զայն՝ իցէ ձեռնհաս
հատուցանելոյ տեառնն զգողոնսն. զի զոր տայն, հա-
մարի յիւրոյ անտի տալ: Իսկ եթէ գողն՝ի տալ զայն
նմա ոչ ևս բաւական իցէ՝ի հատուցումն գողոնիցն,
ընդունօղ դրամացն կամ ցորենոյն և այլն, գտանի պատ-
ճառ միասու տեառն նոցին:

76. Որ արկանէ՝ի ծով զգոհար այլոյ՝ համարելով
զայն հարիւր դրամոց, ուր իցէ այն եկերիւրոց, որչափ
ինչ պարտի հատուցանել: — Ուկիք և այլք համարին
զնա պարտական երկերիւր դրամոց, զի որ ծանր մեղօք

ինասէ այլում՝ պարտական է բովանդակ հատուցանել զինեան։ Այլ Փոնցիոյ, Լսփարսա, Հոլզման, Լաքրուա, Տիանա, Վայցոմէթա և այլք, հաւանակա- նագոյնս պարտական համարին զնա հարիւրոյ ևեթ դրամոց. զի որպէս որ Թեթև մեղօք ոք զինասէ այլում՝ ընդ Թեթև մեղօք պարտական է հատուցման, այսպէս և ծանուցեալն ևս մեղք ըստ համեմատութեան ծանրութեանն ածէն պարտս հատուցման. և յայնժամ պարտական գտանի ոք հատուցանելոյ բովանդակ զվնասն, յորժամ գէթ ընդ աղօտ տեսանէ զինասն՝ զոր առնէ, և ոչ յորժամ անյաղթելի տգիտութեամբ անգիտանայցէ զառաւել ծանրութիւն զինասուն։

77. Որ գիտութեամբ զայլոյ ինչ ժառանգէ, պարտական է հատուցանելոյ ոչ միայն զկորն և որ ինչ նուազ շահեալ իցէ, այլ և զինասն հասեալ տեառն իրին և զշահ դադարեալ, որոց գէթ ընդ աղօտ կանխատես լեալ իցէ նորա։ Նմա եթէ տեառն իրին իցեն լեալ իրաւունք չկրն, և ոչ առ էրն ևեթ. զի յայնժամ պարտի հատուցանել ըստ համեմատութեան յուսոյն՝ զոր ունէր ժառանգելոյ զայն։

78. Եթէ գողնիցն ածեն գինք մինչդեռ անիրաւաբար ոք ունի առ իւր զայն, ածեն տեառն իրին, թէ և հասանէր նմա ծախել զայն նախ քան զաձումն գնոցն՝ եթէ էր այն առ իւր։ Այն որոյ եթէ տէր գառինն վաճառելոյ էր զայն՝ յորժամ արժէր այն հինգ դրամ, և ի ձաշակել զայն գողոյն արժէր տասն դրամ, պարտական է գողն տասանց դրամոց, զի ամենայն ինչ տեառն իւրում պտղաբերէ։ Այլ Հայրն Վաճչինա ասէ, զի եթէ յետ ածելոյ գնոյն ի տասն դրամն՝ նուազէ անդրէն ի հինգ, հինգ և եթէ պարտական է գողն հատուցանելոյ. այլ չէ այս ընդունելի, զի մարթէր տեառն գառինն վաճառել զայն ի բարձրանալ գնոյն, և գողն յամեցմամբ իւրով ի հատուցումն՝ գտանի հասուցեալ նմա ինաս։ Այլ եթէ ոք սպանցէ զգառն ուրուք յորժամ գին նորա իցէ հինգ դրամ, ոչ ինչ աւելի քան զայն ի բարձրանալ իսկ գնոց նորա պարտի հատուցանել այնու, զի տէր գառինն պահէր զայն բարձրանալոյ գնոցն. զի մարթէ և նմա ստանալ դիւրաւ այլ գառն հնգից դահեկանաց, եթէ չիցէ ի կարի աղքատացս ոք։

Որ գիտութեամբ զայլոց ինչ ժառանգէ, ի հատուցանելն զայն՝ չէ նմա օրէն պահանջել որ ինչ ծախեալ իցէ յայն, վասն որոյ Յանքէզ և Ուկոյ օրէն համարին տեառն իրին զանալ նմա զծախսն։ Այլ այլք հաւատնականադոյն համարին զհակառակն. զի օրինքն այն պատժականք ոչ ածեն պարտս առանց վճռոյ ատենին։

Որ զաղքատութիւն կեղծաւորի, պարտի հատուցանել զընկալեալն ողորմութիւն առ տուօղն՝ որպէս ասէ Մոլինա, կամ առ աղքատս՝ որպէս ասէ Վասթրոփալ։

79. Պարտականն իցէ գող հատուցանելոյ զգինս գոզօնիցն կորուսեալոյ, եթէ այնոքիկ կորնչելոյ էին և առ տեառն իւրում։ — Եթէ առանց յանցանաց գողոյն իցեն կորուսեալ՝ի նմին ժամանակի և՝ի նմին վտանգի՝ որպէս՝ի հրայրեացս՝ յորում կորնչելոյ էր և առ տեառն իւրում, չեն ինչ պարտք գողոյն. զի կորստեանն պատճառ ոչ է յայնժամ գողութիւնն, և զրկումն կամ կորուստ և՛եթ ոչ ածէ պարտս հատուցման, որպէս՝ի վեր անդր ասացաք (44)։ Իսկ եթէ յանցանօք գողոյն կամ այլոց՝ նախ քան զհասարակաց արկածն կորուսեալ իցէ, պարտական է գողն հատուցանելոյ զայն. զի արկածքն՝ի վերայ հասեալ ոչ ազատ կացուցանեն զնա՝ի պարտուց։ Այլ եթէ գուշակելով զմօտալուտ արկածն՝ աճապարեալ՝ի կիր առնուցու զայն, անպարտ՝ի հատուցմանէ համարին զնա հաւանականաբար Եսսիոյ, Ուկոյ, Ասպուէզ, Փորէր և Այման։ Այլ խնդիր այն է, եթէ յետ հասարակաց արկածիցն կորիցէ յայլում հաւասար վտանգի։ Վասթրոփալ, Եսսիոյ և Ալմաիկեանք պարտական զնա համարին՝ի հատուցումն վասն մեղաց յամեցմանն. այլ Աքրուա անպարտ առնէ զնա հաւանականաբար, վասն հասարակաց գողոյ երկրորդի ևս վտանգին՝ յորում կորնչելոց էր այն և առ իւրում տեառն. վասն որոյ ոչ յամեցումն գողոյն՝ի հատուցումն՝ գտանի լեալ առիթ կորստեանն, այլ վտանգն հասարակաց։ Իսկ Թէ պարտականն իցէ գող՝ի հատուցումն եթէ՝ի յետին կարօտութեան իւրում՝ի կիր արկանիցէ զգողօնսն, տես որ ինչ՝ի վեր անդր ասացաք (19)։

80. Որ զնէ ինչ յումեքէ կասկածանօք Թէ չիցէ այն նորա, և խուզարկեալ՝ չկարիցէ ստուգել զկասկա-

ծանան, զինչ պարտ իցէ նմա առնել։ — Նմանք պարտ համարին նմա տալ զայն՝ որում կարծէ անկ, և կամ աղքատաց։ Եւ հայր հասարակաց և հաւանականագոյն կարծիք պարտ համարին նմա բաժանել զայն ըստ երկբայութեանն. զի ունել զայն բովանդակ չէ նմա օրէն՝ վասն երկբայութեամբ սկսանելոյ իւրոյ ժառանգել զայն. և ոչ դարձեալ իրաւացի է զրկել զանձն յայնմանէ բոլորովին, ուր և իւր իրաւունք են՝ ի վերայ այնորիկ՝ թէ և երկբայելի։

81. Որ նենգէն՝ ի տուրս արքունի, պարտական իցէ՝ ի հատուցումն։ — Հասարակաց կարծիք պարտական համարին, զի՝ ի պէտս աշխարհին սահմանեալ են տուրք, և զի առաքեալն ասէ. "Երդ հատուցէք ամենեցուն զպարտս, որում զհարկ՝ զհարկն, որում զմաքս՝ զմաքսն,,։ Այլք անպարտ առնեն զնա վասն պատժոյն՝ ի վերայ յաւելոյ, և ասեն. Թէպէտ և պարտ է հպատակաց հատուցանել պետութեան զպատշաճ տուրս, և պետութեան օրէն է այսպիսի պարտս դնել՝ ի վերայ հպատակաց, այլ ոչ է համարելի յաւելուլ պետութեան և պարտս մեղաց՝ ի վերայ նոցա հանդերձ տուժիւքն՝ զոր պահանջէ՝ ի նոցանէ՝ ի շահ իւր, և նոքա յանձն առնուն զայն։ Վարձեալ և ըստ այնմ կարծեաց զի խառն օրէնք՝ ածիցեն պարտս մեղաց և պատժոյ՝ յայնժամ մեղանչէ օրինադանցն, յորժամ չկամի հատուցանել զտոյժս յետ ընդունելոյ նորա յօրինադանցութեան. զի օրէնքն այն զտանին յայնժամ տրոհաբար յընտրութիւն հպատակին ապաստան, այս ինքն կամ զտուրսն հատուցանել և կամ զտոյժս։ Եպիսկոպոսքն վարդապետեն կէսք յաստուածաբանից, և յաւելուն զի դէթ ընդ երկբայութեամբ մնայ խնդիրն. և օրէնք երկբայականք չկարեն ստոյգ պարտս՝ ի վերայ ածել։

Հանդերձ այսու ամենայնիւ վասն վանդի վաստահմբաւութեան պարտ է ամենայն ումեք և ըստ խղճի մտաց զգուշանալ յայսմանէ՝ ի վաճառաշահս. վասն ոչ ոք Աստուածոյ, տուրքն Կեսարինոս և այլք ներելի համարին զայս այնոսիկ և՛ եթէ՝ որք՝ ի պէտս իւրեանց կամ ընտանեաց ածեն ինչ, և աղքատաց՝ որք չկարիցեն այլ ազգ կերակրել ընտանիս իւրեանց։

ՑՕԴՈՒԱԾ Ը

ՈՐ ԻՆՉ ՊԱՐՏ ԻՑԷ ՀԱՑՈՒՑԱՆԵԼ, ԸՆԴ ՄԱՐԴԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ

82. Որ ինչ պարտք մարդասպանին :
83. Որ ինչ ընդ կենաց և ընդ համբաւոյ հատուցումն :
84. Որ ոք այլ ընդ այլոյ սպանանէ, պարտական իցէ հատուցման :
85. Անհանի՞ նա ընդ բանադրանաց և ընդ անկանոնութեամբ :
86. Որ 'ի սպանելոյն ընդունի Թողութիւն, պարտական՞ իցէ որդւոյ նորա :
87. Ջինչ պարտի ժառանգաց սպանելոյն. պարտի և զոյժս նոցա և զպարտատէրսն :
88. Ջինչ 'ի համարել սպանութեանն այլում ումեք :
89. Որ սպանանէ զոք՝ անցեալ ըստ երեսաց պաշտպանութիւն անձին :
90. Ժառանգք պատուհասելոյն 'ի մահ՝ պարտական՞ իցեն տուժիլոյն :

82. Պարտ է մարդասպանին հատուցանել զամենայն տոյժս՝ որ 'ի սպանութենէ կամ 'ի հարուածոյ իւրմէ յառաջ գան. ոչ միայն զծախս՝ որ 'ի հոգ և 'ի դարմանն վիրաց հարուածելոյն կամ սպանելոյ լեալ, քաց 'ի ծախուց թաղման, այլ և զկորուստ շահուց՝ որ 'ի մահուանէ կամ 'ի խեղելոյ նորա զկետ եկեալ ըստ չափոյ ակնկալութեան սպանելոյն : Եւ ոչ պատուհասիւ յանցաւորին քաւին տուգանքս, թէպէտ և համարիցին Թողեալ վասն չպահանջելոյ ուրուք զայնս 'ի պահուն : Ի շահուցն խոստանելոյ պարտ համարին ամենք 'ի քաց առնուլ զգինս աշխատանաց, զոր հարկ էր աշխատել սպանելոյն կամ խեղելոյ. այլք չընդունին զայն. իսկ Պօնաչինա օրէնն համարի 'ի քաց առնուլ որչափ ինչ հաւանականաբար յանձն առնոյր նա առ 'ի վերծանելոյ յաշխատութենէ անտի :

83. Ի քաց 'ի տուժից ասի պարտական իցէ սպանողն հատուցանել զգինս ընդ կենաց և ընդ համբաւոյ սպանելոյն : — Կէսք յաստուածաբանից պարտական համարին զնա. զի որ չիցէ ձեռնհաս բովանդակ հատուցանելոյ, պարտական է ըստ մասին. որպէս և սուրբ Գրիգորիոսին ասէ. "Որ խեղէ զոք, պարտի փոխարինել նմա արծաթ կամ պատիւ,, : Ապակին Հաւանականագոյն և հանրագոյն կարծիք զհակառակն հաստատեն.

զի փոխարինական արդարութիւն պահանջէ զհաւասարութիւն միաւորն. իսկ ուր միաւն և փոխարէնն չիցեն ի նմին կարգի, չիք ի նոսա հաւասարութիւն՝ ոչ ըստ բոլորին և ոչ ըստ մասին. վասն որոյ չէն ինչ պարտք փոխարինելոց գինս ընդ կենաց և ընդ համբաւոյ, որ բարձրագոյնք են կարգաւ: Այլ հաստատի այս ի բանէն Աստուծոյ. "Ընպարտ լիցի որ եհարն, բայց զկատարածոյ նորա և զբժշկութեան տուժեսցի,,: Այս ինքն զի ի հատուցանել զտոյժս, միայ հարկանողն ազատ ի փոխարինելոց այլ ինչ ընդ հարուածոյն:

84. Որ զքնամին կամելով սպանանել՝ վրիպակաւ զբարեկամն սպանանէ, պարտի հատուցանել ինչ: — Այս խնդիր հաւասար է այնմ թէ կամելով ուրուք այրել զտուն թշնամւոյն՝ այրեցէ զբարեկամին: Արդ կէսք պարտական համարին զնա հատուցանելոց բարեկամին զնաան, զի ամենայն միաւ՝ որ ընդդէմ արդարութեան է՝ պահանջէ զհատուցումն: Այլ այլք, ընդ որս Տհլուկոյ, Մոլինա, Վփորեր, Լաքրուա, Նորնի և այլն, զհակառակն հաստատեն. զի առ ի հատուցումն չէ բաւական անիրաւութիւն նիւթական, այլ կամաւոր ընդդէմ անիրաւելոյն: Վասն որոյ եթէ ոք միաւ ինչ ակամայ հասուսցէ բարեկամի իւրում, ոչ գործէ ընդդէմ նորա անիրաւութիւն տեսական յորմէ և եթ յառաջ գայ պարտ հատուցման: Օնոյն և զգողութենէ է իմանալ ըստ նոցին բարոյականաց. զի եթէ գողանայ ինչ ոք զբարեկամին՝ կարծելով զայն թշնամւոյ, և սպառէ զայն, ոչ է պարտական հատուցման ըստ նոցա: Այլ Անքէզ իրաւապէս չընդունի զայս զգողութենէ, ընդ գողութիւն և ընդ միաւ զայս ինչ նկատեալ խոիր՝ զի ի գողութեան գլխաւորապէս է իմանալ զշահ անիրաւ, և երկրորդաբար զանիրաւութիւնն հասեալ տեառն իրին. իսկ ի միաւակարութեան՝ գլխաւորապէս է իմանալ զանիրաւութիւնն հասեալ նմա, և երկրորդաբար զմիաւ նորա. վասն որոյ ի միաւակարութեան՝ վրիպակն զղոյացութենէ իրին է, իսկ ի գողութեան՝ զհանգամանաց նորա:

85. Որ այլ ընդ այլոց զեկեղեցականի ուրուք հեղգութիւն զարիւն՝ այս ինքն յեկեղեցականաց զոք փոխանակ այլոց եկեղեցականի հարեալ, անկանիցի ընդ բանա-

դրանօք : — Վրանչինա , Տիանա , Սուարէզ և այլք զբ-
համարին անկանել նման ընդ բանադրանօք , իբր զի ա-
նիրաւութիւն նորա չէ կամաւոր ընդդէմ անիրաւելոյն :
Բայց հասարակաց կարծիք զհակառակն ունին . զի պա-
տիժն այն ոչ վասն թշնամանաց անձինն անիրաւելոյ է
սահմանեալ , այլ վասն թշնամանելոյ գործոյն այնուիկ
զկարգ նորա , թէպէտ և վրիպեալ ըստ անձինն : Այս
հարկանօղն թէպէտ և ազատ ի հատուցմանէ ճշմարտն
գտանիցի՝ որպէս ի վեր այսր ասացաք , վասն ակամայ
անիրաւութեանն ընդդէմ այնր անձին , այլ ոչ և ի բա-
նադրանաց : Այս առաւել գտանիցի անկեալ յանկանո-
նութիւն , որ արիւնհեղութեանց առ հասարակ է պա-
տիժ . և որ այլ ընդ այլոց զոք հարկանէ , թէպէտ և
վրիպի ըստ անձինն՝ այլ անվրէպ գործէ զեղեռն կա-
մաւոր արիւնհեղութեան :

86 . Այժ սպանողն ընկալցի ի սպանելոյն Թողու-
թիւն ճշմարտի ի մեռանել նորա , իցէ՞ այնուհետև
պարտական հատուցանելոց որդւոց նորա : — Տէլուկայ
և Լաքրուա պարտական վնաս համարին , զի ոչ է օրէն
հօր զրկել զորդիս իւր յիրաւանց իւրեանց : Այլ հա-
սարակաց կարծիք զհակառակն ունին . զի անիրաւու-
թիւնն , զոր կրեն որդիք , է ի ճշմարելոյ հօրն իւրեանց .
և զի ի հօրէ իւրեանց ստանան զիրաւունսն , նուաւ և
կորուսանեն : Բայց ոչ բարւոք գործէ հայր ի ճշմա որ-
դւոց չքաւորաց Թողութիւն առնել տուժիցն :

87 . Ո՞ր հատուցումն պարտի սպանողն առնել ժա-
ռանգաց սպանելոյն : — Ժառանգաց ոչ կարևորաց պար-
տի հատուցանել զամենայն ծախս դարմանոյ , որպէս ի
վեր անդր ասացաք , և զշահ խափանեալ յաւուրս հի-
ւանդութեան նորա մինչև ցմահ : Իսկ ժառանգաց կա-
րևորաց , այս ինքն որդւոց և ծնողաց և կնոջ , պարտի
հատուցանել և զշահ՝ զոր հաւանականաբար մարթի էր
շահել սպանելոյն ի կեանն և կերակրել զնոսա , եթէ
ոչ յայլոց՝ վասն մահու նորա կերակրեսցին : Իսկ եղ-
բարց նորա և քերց , որ ի նմանէ կերակրէին , ոչ պար-
տի ինչ սպանողն . թէպէտ և կանխատես այսր ճշմաու
նոցա իցէ լեալ , որպէս հաւանականագոյնս հաստատեն
Լեսիոյ , Վրանչինա , Սոթոյ , Լուկոյ , Պոնաչինա ,
Մալմատիկեանք և այլք : Այս ոչ զօրէ ասել՝ զի որ խա-

փան լինի բարւոյ, որ անկ է ընկերին, պարտական է հատուցման, որպէս ասացաք ի վեր անդր (61)։ Օ՞ի զայն պարտ է իմանալ յորժամ ոք ուղղակի ածէ ՚ի ընկերին, և ոչ յորժամ ըստ դիպաց հասուցանէ նմա ՚ի նա։ Ա՞ան որոյ և յաւելուն այլք յաստուածաբանից, զի եթէ սպանողին իցէ դիտաւորութիւն ՚ի նա հասելոյ զաղգականս սպանելոյն, կամ զնո՛ր և է ոք՝ որ սպանութեամբ նորին կորուսանէ ինչ, պարտական է յայնժամ հատուցանելոյ զինն։ զի իւրաքանչիւր ումեք իրաւունք են ՚ի վերայ բարւոյ՝ որ անկ է նմա, և չէ օրէն ումեք խափանել զայն ուղղակի։ Օ՞նոյն հաստատեն Ա՞եսիոյ, Պէքանոյ, Ա՞ալմատիկեանք, Վ՞ռնչինա, Ա՞իւա, Ա՞ամպուրինի և այլք զպարտատուրոյ սպանելոյն։ այսինքն զի սպանողն յայնժամ և՛ եթէ պարտական զբատանի հատուցանելոյ զպահանջս նորա, յորժամ դիտեալ իցէ զինն նորին։

88։ Պարտակա՞ն իցէ սպանողն հատուցանելոյ զինն հասեալ այլում, որ պարտաւոր դատեալ իցէ սպանութեանն։ — Ո՞ստուածաբանք, բայ ՚ի սակաւուց ումանոյ, ոչ պարտական համարին զնա, թէպէտ և ծանիցէ ըզինն զայն։ զի բայ ՚ի չար դիտաւորութենէ, որպէս ասացաք ՚ի վեր անդր (63), պահանջի և արտաքին և ծանր անիրաւութիւն ընդդէմ զինն առ ՚ի պարտական առնել զինն ՚ի հատուցումն։ Ո՞յլ իմա եթէ հանգամանք սպանութեանն չիցեն լեալ պատճառք պարտաւոր դատելոյ միւսոյն. որպէս եթէ սպանողն ծպտեալ ՚ի ձև նորին, կամ յերկրի նորա արարեալ իցէ զսպանութիւնն, և այլն. զի յայնժամ յաւելու իսկապէս և պահանջեալն արտաքին գործ անիրաւութեան։

89։ Ո՞ր սպանանէ ոք զյարձակեալն ՚ի վերայ իւր, այլ անցեալ ըստ չափ իրաւացի պաշտպանութեան անձին, իսկ՝ պարտական ՚ի հատուցումն։ — Ո՞մանք ոչ համարին զնա պարտական, զի յայնժամ յարձակեալն կորուսանէ զիրաւունս իւր։ Ո՞այց Ա՞ուկոյ, Ո՞անքէզ, Լ՞աւարրոյ, Ա՞աքրուա և այլք զրեթէ առհասարակ զհակառակն ունին. զի զանցանելով նորա ըստ չափ իրաւանցն՝ անիրաւութիւն մեծ գործէ թշնամւոյն, որում ոչ է մարթ յարձակմանն և՛ եթէ կորուսանել զիրաւունս կենաց իւրոց։ Ո՞այց Ա՞ուկոյ, Ո՞ասգուէզ և այլք հա-

ւանակականաբար անպարտ համարին 'ի հատուցումն ըղձայնատուր ոսոխին 'ի մարտ եթէ սպանցէ զնա. զի հրաժարէ նա յայնժամ յիրաւանց իւրոց, յանձն առեալ զվճռատարտ։

90. Պարտականք իցեն ժառանգք սպանողին 'ի հատուցումն ջնջասուց նորա 'ի պատուհասել նորա մահուամբ։ — Պարտականք են ըստ հասարակաց կարծեաց. բայց եթէ չգահանջիցեն զայն ժառանգք սպանելոյն, համարի հրաժարել նոցա յիրաւանցն. իսկ եթէ չկայցեն առ ժառանգս սպանողին ինչք սպանելոյն։

ՅՕԴՈՒԱԾ Թ

ԶԻՆԶ ԸՆԴ ԿՈՒՍԱՊԱՂՈՒԹԵԱՆ ՊԱՐՏ ԻՑԻ ԱՌՆԵԼ, ՀԱՏՈՒՑՈՒՄՆ

91. Իցէն ինչ պարտք կուսապղծին, եթէ կոյս հաւանեալ իցէ։
92. Եւ զինչ եթէ բռնաբարեալ իցէ կամ սպառնալեօք հաւանեցուցեալ զնա։
93. Զինչ եթէ խնկապէս կամ կեղծեօք խոստացեալ իցէ առնուլ զնա 'ի կին։
94. Եթէ մարթ էր աղջկանն գուշակել զնաբէնութիւնն։
95. Եթէ գոյք վասնզ չարաչար եղեց. եթէ աղջիկն Թողցէ նմա. եւ թէ իցէ 'ի նախատինս ընտանեացն. եթէ չշաւիեալ եւեթ իցէ. եթէ գոյք զնա վաղ իսկ ապականեալ։
96. Եթէ աղջիկն չկամիցի լինել նմա կնութեան։
97. Եթէ կուսապղծին իցէ ուխտ ողջախոհութեան։
98. Եթէ աղջիկն իցէ ազգական նորա։

91. Պարտ է զանազանել զպարտս կուսապղծին, եթէ խոստմամբ առնելոյ զնա 'ի կնութիւն, կամ առանց այսր խոստման պղծեալ իցէ զնա։ Եթէ չիցէ նորա խոստացեալ, եւ աղջիկն հաւանեալ իցէ ընդ պղծութիւնն, չէն ինչ պարտք կուսապղծին՝ ոչ առ նա, եւ ոչ առ ծնօղս նորա, զի տէր է աղջիկն մարմնոյ իւրոյ։ Այլ սուրբն Նիտոնինոս, Կաւարրոյ, Վալոն եւ այլք պարտական զնա համարին թողութիւն խնդրելոյ 'ի նոյանէ, եւ կամ այլով իւիք մեծարանօք փոխարինելոյ թշնամանացն նոցա։ Այլ հասարակաց կարծիք աղատ կացուցանեն զնա 'ի հատուցանելոյ զինեաս հօր աղջկանն 'ի յաւելուած օժտի դստերն՝ վասն կարելոյ ամուսնացուցանել զնա. բայց յաւելուն՝ եթէ չիցէ նորա յայտ-

նեալ զանարգանս աղջկանն, և եթէ չիցէ ինքն մեծատուն և աղջկին աղքատ. զի համարի յայնժամ յուսալ հատուցման գնոյ առեալ զհաւանութիւն աղջկանն։ Պարտական է և՝ եթէ առեանն դատապարտեսցէ զնա ՚ի տուգանս. զի օրէնք հրամայեն կուսապղծի կամ առնուլ զաղջկին ՚ի կին և կամ տալ նմա օժիտ, զի համարին խաբէութեամբ կամ բռնաբար պղծեալ զնա՝ ցորչափ չկարիցէ ցուցանել զհակառակն։ Այլ եթէ արդարև հաւանեալ իցէ աղջկին և մտադիւր յանձն առեալ զանարգանս իւր, չեն ինչ պարտք անարգողին զնա, որպէս ՚ի վեր անդր ասացաք (գլ. Ե. 26)։

92. Իսկ եթէ բռնի կամ նենգաւ կամ սպառնալեօք իցէ ուրուք լեալ զկեալ զկոյս, պարտի հատուցանել և նմա և ծնողաց նորա զտոյժս պատուոյ և ընչից, տալով նմա օժիտ կամ զյաւելուած օժտին։ Այլ թէպէտ չիցէ նմա պարտ առնուլ զնա կնութեան, որպէս ուսուցանեն քաջ բոյականք զրեթէ առ հասարակ, սակայն իշխանութիւն է ատենին դատապարտել զնա յայն ՚ի պատիժ եղեռանն, ըստ պատուիրանի Ելից. (գլ. ԻԲ. 16)։ Իսկ եթէ չկարիցէ այլազգ առնել հատուցումն, պարտական իսկ է առնուլ զնա ՚ի կնութիւն, որպէս հաստատեն Եսիոյ, Ղուկիոյ, Ամբակումեանք, և այլք առ հասարակ։

Այլ ազատ է նա ՚ի պարտուց աստի, եթէ աղջկանն վաղ իսկ կորուսեալ իցէ զկուսութիւն, և եթէ չիցէ նա լեալ պատճառ անուանարկութեան աղջկանն. և զարձեալ՝ եթէ գտանիցէ աղջկին զայր որպէս ՚ի կուսութեան։ Այլ և յայնժամ պարտ է բռնաբարողն առնել ինչ նմա փոխարէնս, եթէ այր նորա ՚ի ձանձրացել զանարգանս նորա՝ նեղեսցէ զնա։ Իսկ եթէ պարգեւօք կամ գգուանօք ածեալ իցէ զնա ՚ի հաւանութիւն, չէ ինչ պարտական հատուցանելոյ՝ եթէ չիցէ յաւելեալ և սպառնալիս, զի յայնժամ ըստ մասին ինչ պարտի զտոյժն հատուցանել, որպէս հաստատեն Անքէզ, Եսիոյ, Ղուկիոյ, Ասքուէզ, Ամբակումեանք, և այլք առ հասարակ։

93. Իսկ եթէ խոստացեալ ևս իցէ առնուլ զնա ՚ի կին, պարտի կատարել զխոստումն իւր. ոչ միայն եթէ ձշմարիտ իցէ խոստացեալ, այլ և ՚ի խոստանալն կեղ-

ծեօք : Ո՛չ այս այսպէս ուսուցանեն սուրբն Ա՛գուինայ-
ցին , և բարոյականք գրեթէ առ հասարակ , ընդդէմ
սակաւուց ոմանց՝ որք ՚ի հատուցումն տաժից եւթ
պարտական առնեն զնա . Ա՛ի՝ զի զոյժս եղեւանն ոչ
է մարթ այլազգ հատուցանել հաւասարապէս , բայց
միայն ամենանուեթեամբ . և երկրորդ՝ որ զօրաւորագոյն
ևս է և զբաղում խնդիրս լուծանէ , զի ՚ի դաչինս՝ որ
սահմանին փոխ ընդ փոխոյ՚ի դնել ուրուք զիւրն , և դաշ-
նակիցն՝ թէպէտ և կեղծեօք խոստանայցէ՝ սակայն
պարտի ըստ արդարութեան դնել և ինքն զիւրն , որ-
պէս թէ չէմարտիւ խոստանայցէ . քանզի կարևոր է
այս առ ՚ի բառնալ ՚ի դաչնադրութեանց զնենգու-
թիւնս , որոյ ՚ի զեան հասարակաց մարթէր խափանել
զմարդկան կցորդութիւն : Ո՛չդն է ասել եթէ որ վէր
՚ի վերոյ խոստմամբ ամենանուեթեան գիտիցէ ղայրի բա-
րեհամբաւ :

94. Ա՛կայն զադարէ պարտականութիւնս այս ա-
մենանուեթեան , Ա՛յսու՝ եթէ աղջիկն կամ կին ՚ի բանից
կամ ՚ի հանգամանաց առնն դիւրաւ կարիցէ զուշակել
զնաբեղութիւնն , որպէս սուրբ Ա՛գուինացին և աս-
տուածաբանք գրեթէ առ հասարակ ուսուցանեն . օրի-
նակ իմն՝ եթէ այրն ՚ի կարի ազնուականաց որ իցէ կամ
մեծատուն , և աղջիկն դուստր դարբնոյ կամ կրպակա-
ւորի . զի չհամարի յայնժամ թէ աղջիկն կամ կին իցէ
խաբեալ՝ այլ պատճառեալ զնաբեղութիւն : Ո՛չդն յա-
ւելուն հաստատել հաւանականաբար Անքեզ , Ո՛ւ-
կոյ , Ո՛ւեսիոյ , Աղմատիկեանք , Ա՛իա և այլք յոր-
ժամ անպիտանայցէ ևս աղջիկն ՚ի սպառ զանհաւա-
սարութիւնն զայն : Ո՛՚ի եթէ պարտական վասն այ-
նորիկ գտանէը այրն առնուլ զնա կնութեան , առաւել
քան զանիրաւութիւնն լինելին պարտք հատուցանին .
քանզի համարելով զնա աղջկանն հաւասար իւր , ընդ-
ունի զարդար հատուցումն ՚ի տալ նորա իւր օժիտ առ
՚ի պատշաճ ամենանուեթիւն ընդ հաւասարի ումեք իւր :
Ո՛ւ այն զի եթէ կարէը աղջիկն գիտել զանհաւասա-
րութիւնն զայն , հաւանական ևս էր՝ որպէս ուսուցա-
նեն Ո՛ւեսիոյ , սուրբն Ո՛ստինինոս , Ո՛ուկոյ , Անքեզ ,
Ա՛իւռեսթրոյ և այլք , չլինել առնն պարտական և ոչ
՚ի հատուցանել զվնասն , զի ասէ սուրբ Ա՛գուինացին .

“Ղանղի օրէն է համարել հաւանականաբար ոչ եթէ խաբեալ աղջկանն, այլ պատճառեալ զխաբէութիւն ,,։

95. Երկրորդ՝ դադարէ պարտք ամուսնութեան, եթէ կայցէ վտանգ չարաչար ելից, որպէս ասեն Լուկէյ, Սանքեզ, Պուսեմպոյ, Հենրիկուէզ և այլք։

Դադարէ երրորդ՝ եթէ աղջիկն Թողցէ առնն ըզպարտս առնելոյ զինքն ի կնութիւն, որպէս կարող իսկ է ըստ հաւանական կարծեաց՝ թէ և հասցէ անտի նախատինք ընտանեացն. զի իրաւունք ամուսնութեան նմա յատկապէս են անկ, և վասն այնորիկ կարող է հրաժարել յայնմանէ։

Չորրորդ՝ դադարէ, եթէ չիցէ մարթ առնն ամուսնանալ ընդ աղջկանն՝ առանց հասուցանելոյ նախատինս ընտանեաց իւրոց. զի յայնժամ թէպէտ և խոստացեալ իցէ զայն ձգմարտիւ, անվաւեր է խոստումն իւր որպէս ոչ օրինաւոր։ Այլ ոչ դադարէ պարտականութիւն նորա, եթէ ձգմարտիւ խոստացեալ իցէ, և անհաւասարութիւն պայմանի՝ի ձոխութիւն ևեթ իւր սահմանիցի, որպէս մեայ մեզ ասել՝ի ձառս հարմնախօսութեան (գլ. ԺԸ)։

Հինգերորդ՝ դադարէ, եթէ այրն շօշափմամբ ևեթ մեղուցեալ իցէ ընդ կուսի, որպէս ասեն Սանքեզ, Կաւարրոյ, Լուկէյ և Աքրուա. զի շօշափմունքն ևեթ չեն այնպիսի ծանր անիրաւութիւն, մինչև ածել՝ի վերոյ զպարտս կատարելոյ զվէր՝ի վերոյ խոստումն ամուսնութեան, և ոչ բաւականք անկասկած առնելոյ զաղջկին զկեղծեաց խոստմանն, միայն եթէ չիցէ աղջկին աչնուատոհմիկ և մեծարոյ, և եթէ չիցէ առնն ընդ շօշափման ևեթ խոստացեալ զամուսնութիւն, և եթէ ոչ անտի իսկ հասցէ օրիորդին յայտնութեամբ իրացն անուանարկութիւն։

96. Վեցերորդ՝ դադարէ պարտք ամուսնութեան, եթէ այրն գոցէ փորձ զկարծեցեալն անփորձ։ Այլ յայնժամ ըստ հաւանականագոյն կարծեաց ոչ է պարատական այրն հատուցանելոյ ինչ, եթէ չիցեն բացայայտ դաշինք՝ի միջի, և եթէ ոչ հասցէ անտի անուանարկութիւն օրիորդին։

Յոթներորդ՝ դադարէ, եթէ օրիորդն յանձն առեալ զկորուստ կուսութեան իւրոյ վասն կեղծ խոստման

առնն ամուսնանալոյ ընդ իւր, չկամիցի պահել ընդ նմա: Այլ եթէ այրն նուաստագոյն գոլով քան զնա՝ աղնուականագոյն կամ հաւասար նմին իցէ կեղծաւորեալ խաբէութեամբ, ՚ի չկամել իսկ օրիորդին լինել նմա կնութեան, պարտի հատուցանել նմա զյաւելուած օժտին առ ՚ի կարելոյ նմա ամուսնանալ ընդ այլում: Օնոյն հատուցումն պարտ համարին նմա Լաւորդոյ, Պասգուէղ, Սիլուեսթրոյ և Հենրիգուէց, եթէ օրիորդին կամիցի ամուսնանալ ընդ նմա, և ծնօղք օրիորդին ոչ ներեսցեն զայն· զի խոստումն նորա կեղծեալ հայի պլխաւորապես ՚ի հատուցումն գնասուն: Օնոյն է ասել եթէ օրիորդն իցէ բռնաբարեալ, և չկամիցի լինել բռնաբարողին կնութեան: Իսկ եթէ սորա չիցէ արարեալ ինչ խոստումն, ոչ ձևմարտիւ և ոչ կեղծեօք, ոչ է պարտական առնուլ զնա կնութեան, բայց միայն եթէ չկարիցէ այլազգ առնել հատուցումն, և չիցէ ՚ի միջի անհաւասարութիւն մեծ:

97· Եթէ իցէ ուրուք ուխտ ողջախոհութեան և ապականիցէ զկոյս, պարտական իցէ առնուլ զնա կնութեան: — Ոչ պարտական համարին զնա Թայման, Վրանչինա և Պալմատիկեանք· այլ Ուկոյ, Պանքէզ, Եսսիոյ, Պասգուէղ, Թամպուրինի, Սփորեր և Ազքուա զՀակառակն հաստատեն, և սուրբն Լփոնսոս չիշխէ հաւանական իսկ համարել զառաջնոցն կարծիս: Օի որպէս ՚ի վեր անդր (93) ասացաք, առ ՚ի պահել զՀաւատս դաշանց՝ պարտ է խոստացողացն իսկ կեղծեօք հատուցանել զխոստումն իւրեանց որպէս Ճշմարտիւ խոստացեալ, ՚ի դնել դաշնակցին զմանն իւր: Եւ ոչ զօրէ ասել անվաւեր զխոստումն զայն վասն ուխտին ողջախոհութեան· զի առաւելապէս պարտաք են կատարել զկարևոր քան զաղատ պարտս· և դարձեալ՝ զի եթէ չկարեր խոստանալ զամուսնութիւն, սակայն կարէր խոստանալ զինպիր տնօրինման ուխտին, յոր պարտական իսկ զանձն կացուցանէ խոստանալովն զամուսնութիւն· զի որ պարտականն է իմիք, պարտական և կարևորացն է առ այն: Իսկ եթէ չկարիցէ առնուլ զտնօրինութեն, պարտական է հատուցանելոյ զՊնան, որպէս հաստատեն Ուկոյ և Պփորեր:

98· Օ՞րինչ պարտաք իցեն ապականողն զկոյս ազգա-

կան իւր, խոստմամբ ամուսնութեան: — Եթէ Ճշմարտիւ իցէ արարեալ զխոստումն դաշամբ խնդրելոյ զաղջնօրինութիւն, ըստ Հասարակաց վարդապետութեան առաուածաբանից վաւեր է խոստումնն, և պարտ է նմա խնդրել զանօրինութիւն և առնուլ զօրիորդն կնութեան: Իսկ եթէ կեղծեաց խոստացեալ իցէ, և չէր մարթ օրիորդին՝ ի վերայ կալ կեղծեացն, պարտական է ըստ ամենայնի՝ որպէս թէ Ճշմարտիւ արարեալ էր զխոստումն: Այլ եթէ չիցէ ամենևին՝ ի միտս եկեալ նմա արգել աղգականութեանն, և դժուարութիւն մեծ և ծախք ծանուցեալ առ՝ ի տնօրինութիւն՝ ի վերայ կայցեն, ոչ է ցայնվայր պարտական. այլ պարտ է նմա զտոյժն հատուցանել հանդերձ այլոց անիրաւելոց բռնաբարողաց:

ՅՕԴՈՒԱԾ Ժ

ՅԱՂՋԱՑ ՊԱՐՏՈՒՑ ՇՆԱՑՈՂԱՑ

99. Զինչ պարտք իցեն կնոջ շնացելոյ. պարտականն իցէ նա յայտնել որդւոյ իւրում անհարազատի զնութիւն իւր:
100. Պարտ իցէ որդւոյ հաւատալ նմա:
101. Զինչ պարտք իցեն շնացողն, թէ և չիցէ իւր հրապուրեալ զկինն շնացեալ՝ ընդ հարազատ որդիս առն իւրոյ խառնել զզաւակին:
102. Եթէ կեղակարծ իցէ զաւակին հարազատութիւն:
103. Եթէ յանկեանոց զնա արիցէ:

99. Արդ են պարտք կնոջ շնացելոյ՝ ի պարտուց առն շնացողի: Կին շնացեալ եթէ չկարիցէ հատուցանել զվնաս յեկամուտ զաւակէ անտի հասեալ առն իւրոյ և որդւոյ հարազատաց, պարտի դնել փոխարէնս ինչ՝ ի գոյից իւրոց առնել, կամ զրկելով զանձն յարդար ծառայուց, կամ Ճարտարութեամբ առանին վաստակոց, և կամ յորդորել զորդին՝ ի կրօնաւորութիւն՝ եթէ իցէ նորա կոչումն: Արդ պարտ իցէ նմա յայտնել առն իւրում զյանցանս իւր: — Այլ է պարտական եթէ վտանգ մահու կամ անուանարկութեան առաջի կայցէ, և եթէ առաւելագոյն վնաս իցէ անձին՝ ի յայտնելոյ քան զվնաս առնն և զորդւոյ հարազատաց: Արդ եթէ վնասք երկաքանչիւր իցեն հաւասարք կամ փոքր ինչ իցէ առաւելութիւն վնասու կնոջն, պարտի նա յայտնել զվնաս

իւր, ըստ Հասարակաց կարծեաց աստուածաբանից ընդդէմ ամենց ևեթ։ Ալ ասեն որոյ չէ օրէն նմա ծածկել զընտրութիւնն, նախ՝ եթէ վաղ իսկ կորուսեալ իցէ զանուն քարի, և կամ որպէս ասեն Եսիոյ և Յուկայ՝ այնպիսի սինդքոր ոք՝ի կանանց իցէ, զի համբաւ իւր չիարիցէ գալ՝ի կշիռ ընդ այնքան տոյժս այլոց։ Երկրորդ՝ եթէ գուցէ վտանգ Հասարակաց, որպէս եթէ չարաբարոյ ոք իցէ եկամուտն որդի, և առաջի կայցէ նմա ժառանգել զիշխանութիւն։ Երրորդ՝ եթէ մարթ իցէ կնոջն առանց ծանր ինչոյս իւրոյ յայտնել զայն առն իւրում. այլ որպէս բարւոք յաւելուն ուկիոյ և Փիլբերը, դժուարին է նմա այնուհետև չկրել նեղութիւն յառնէն. վասն որոյ՝ի վճիռս ժողովոյ ապաշխարութեան սահմանի. «Ոչ է պարտ զրկել յարձակմանէ զկին, որոյ՝ի չնութենէ ընկալեալ զաւակ՝ երկիւղ յայտնել զայն առն իւրում»։ Այլ Հասարակաց կարծիք են աստուածաբանից, զի պարտ է նմա յայտնել զայն որդւոյ իւրում եկամտի, եթէ իցէ յայս՝ զի դիտելով նորա զայն՝ հրաժարեսցէ՝ի հայրենի ժառանգութենէ։ Եւ ոչ ինչ զօրէ ասել՝ թէ կորուստ համբաւոյ մօրն ծանրագոյն իցէ քան զտոյժս որդւոյն հարազատ։ զի խոստովանել զյանցանս միւմ ումեք կամ երկուց՝ ոչ է ստուգիւ ծանր ինչ կորուստ համբաւոյ, որպէս տեսցուք՝ի ստորև (գլ. ԺԱ. 12)։ և զի մայրն ստուգիւ պարտական է՝ի հատուցումն տուժից նորա. վասն որոյ ցօրէսդ՝ ինաս իւր չիցէ ստուգիւ մեծագոյն յոյժ քան զնորայն՝ պարտական է՝ի հատուցումն։

100. Այլ ինդիր այն է զի յայսմ չէ պարտական որդին հաւատալ բանից մօրն, որպէս ուսուցանեն աստուածաբանք առ հասարակ. զի ոչ ոք պարտական է հաւատս ընծայել միւմ ևեթ վկայի, որչափ և արժանահաւատ ոք իցէ. զի կարևոր իսկ է այս առ՝ի խափանել զնենգութիւնս, որոց մարթ է դիւրաւ՝ի ներքս մտանել՝ի տալ հաւատարմութիւն միոյ ևեթ ուրուք վկայութեան։ Ալ ասեն որոյ Լչլել և այլք յաստուածաբանից ասեն, զի դուն ուրեք պարտական գտանի մայր յայտնել որդւոյ իւրում զյանցանս իւր, զի և դուն ուրեք պարտական է որդի հաւատալ մօր իւրում։ Այլ եթէ անհարազատութեան որդւոյն այնպիսի ապացոյցք

լեցն, որովք մարթ լիցի դատապարտիլ նման յատենի, զոր օրինակ եթէ յայտնի լիցի առնն բացակայութիւն կամ անկարողութիւն ի ժամանակի յղութեան մօրն, յայնժամ պարտական գտանի որդին հաւատալ նմա, և նա յայտնել որդւոյ իւրում զգաղտնիսն։

101. Յայս վայր զկնոջէ ընացելոյ. իսկ այր ընացող պարտի հատուցանել որդւոց հարազատաց զժառանգութիւնն թողեալ զաւակի իւրում. և որ ինչ՝ի մնուցդ նորա յետ եռամեայ տիոց ծախեալ. զի ցերիս ամն պարտական է մայր նորա դիւեցուցանել զնա, եթէ կարէ. իսկ եթէ չկարէցէ, սիղեխի նորա պարտք են և զայն ծախս հատուցանել։ Այսեն ումանք յաստուածաբանից զի եթէ հոմանուց չլիցի սաղրեալ կնոջն ընացելոյ մեծանալ՝ի հարազատ որդիս իւր զեկամուտն, այլ լուռ ևէթ կացեալ ընդ այն, չլիցի պարտական զպէտս նորա կամ դէթ զժառանգութիւնն հատուցանելոյ։ Այլ Եսոիոյ, Մոլինա, Այէթանոյ, Ռոնչինա, Լաքրուա, Սալմատիկեանք և այլք առ հասարակ պարտական համարին զնա հատուցանելոյ զերկաքանչիւրն. զի ինքն է միշտ մերձաւոր պատճառ բարոյական՝ այն ամենայն տուժից, արկանելոյ զկինն ընացեալ՝ի բարոյական հարկ ընդ հարազատ որդիս խառնելոյ զեկամուտն։

102. Ի՞մ իմիք պարտական գտանի այր ընացող յերկբայել զորդւոյն թէ իւր իցէ նա եթէ առն ընացելոյ կընոջն։ — Այս հասարակաց կարծեաց ոչ իմիք է պարտական ցորչափ չիցէ զաւակն հաւաստեալ իւր որդի. քանզի յերկբայս՝ ամուսնոյն են անկ իրաւունք, վասն որոյ և ազատ է սիղեխն՝ի հատուցանելոյ զվճռեսն։ Օնոյն է ասել և զերկուց հոմանեաց հակառափողաց՝ի չգիտել ստուգիւ յումմէ՞ յերկոցունցն սերեալ իցէ զաւակն. զի չէ օրէն ընդ անստոյգ պարտուց ածել՝ի վերոյ ուրուք բեռն ստոյգ։ Այլ միայն եթէ երկրորդն հոմանի գիտիցէ զի մեղաքն իւրովք անստոյգ կացուցանէ զպարտականութիւն առաջնոյն, ինքն պարտական զբոտանի հատուցանելոյ զտոյժս՝ որ նմա անկ էին, ըստ ասացեալսն՝ի թիւ 50։

103. Եթէ ընացեալք իցեն ունևւորք, և զգաւակ իւրեանց յանկեալնոյ արկանիցեն, պարտականք իցեն հատուցանելոյ զծախս անկեալնոյին։ — Կէսք յա-

տուածաբանից պարտականս զնոսա համարին, վասն
զքաւորաց եւեթ համարելով սահմանեալ զանկեալանոցս
և զօրբանոցս։ Այլ հաւանականագոյնս զհակառակն
հաստատեն այլք, զոր և առաջինք համարին հաւանա-
կան, զի այնպիսի վայրք բարերարութեան ոչ վասն աղ-
քատաց եւեթ ճնողաց են սահմանեալ, այլ թերևս ա-
ռաւել վասն պոռնկորդեաց, յաղագս վտանգի հոգևոր
և մարմնաւոր կենաց նոցա։

ՅՕԴՈՒԱԾ ԺԱ.

ԹԷ Ե՛ՐԲ ԵՒ Ո՛ՐՊԷՍ ՊԱՐՏ Ի՛ՑԷ ԱՌՆԵԼ, ԶՀԱՏՈՒՑՈՒՄՆ

104. Պարտք վաղագոյն հատուցանելոյ, և տուժելոյ զինսա յապաղ-
մանն։
105. Ոչ է պարտ արձակել զապաշխարողն մինչ չև զպարտսն հա-
տուցեալ։
106. Մարթ է՛ի ձեռն այլոց ուրուք հատուցանել, այլ զինչ եթէ նա
ոչ հատուցէ։ Եւ զինչ եթէ խոստովանահայրն պատուիրէ տալ
զայն՛ի պատարագիս, յայտնի գոլով տեառն նորին։

104. Պարտ է գողոյ վաղագոյն ըստ կարի հատու-
ցանել զգողոնն. ապա թէ ոչ՝ ծանր մեղանչէ, և ըստ
ոմանց այնքանիցս՝ որչափ դէպք յաջողէն նմա զհատու-
ցումն, այլ հաւանականաբար ըստ այլոց՝ մի միայն մեղս
երկարաձգեալ. զորմէ տես՛ի վեր անդր (գլ. Գ. 47)։
Նոկ որ կամիցի՛ի մահուն իւրում հատուցանել՝ կարե-
լով՛ի կենդանութեան, կամ հատուցանել ըստ մահին՝
ձեռնհաս գոլով ըստ բոլորին, ոչ է ընդունակ արձակ-
մանն։ Այլ օրէնն է երբեմն պարտապանի վասն իրաւա-
ցի պատճառաց յապաղել զհատուցումն, որպէս առ՛ի
ջատագ գայթակղութիւն, առ՛ի չկորուսանել զանուն
բարւոյ, և կամ վասն այլոց պատճառաց, զորոց ասաս-
ցուք՛ի յաջորդ յօդուածիս։

Պիտեալի է, զի որպէս հասարակաց կարծիք ուսու-
ցանեն ընդդէմ ոմանց, յորժամ՛ի մեղաց յառաջ գան
պարտք՝ թէպէտ և վասն իրաւացի պատճառաց յամե-
ցի պարտապանն՛ի հատուցումն՝ պարտի և զինսա յա-
մեցմանն տուժել պարտատեառն. զի ինասու այնորիկ
ինքն է միշտ պատճառ մեղացն գողութեան։ Նոկ որ՛ի

տուրևառից և ի ժառանգութեանց անգիտութեամբ յառաջ եկեալ պարտք՝ զերծ են ի տուժից աստի, ի յապաղել հատուցմանն վասն իրաւացի պատճառի։

105. Պարձեալ օրէն է յապաղել զհատուցումն ամ սօրեայ ժամանակ, եթէ չիցէ այն ի միասս պարտատեառն։ Այլ եթէ ապաշխարողն կարէ իսկ և իսկ հատուցանել՝ ոչ է պարտ խոստովանահօր ըստ կարգի, ասէ Հայրն Վռնչինա, արձակել զնա մինչ և զպարտսն հատուցեալ։ Վասնզի դժուարին յոյժ է առնել զհատուցումն. և եթէ ապաշխարողն մինչ և զպարտսն հատուցեալ՝ ընկալցի զարձակումն, կայ միայ ի մերձաւոր վտանգի չհատուցանելոյ։ Այսացաք ասա կարծէ. զի եթէ ապաշխարողն չկարիցէ նոյնհետայն հատուցանել, և մարթ իցէ վստահել ընդ խոստումն նորա, օրէն է արձակել զնա միանգամ և երկիցս, և աւելի իսկ ըստ հանգամանաց նորա՝ տալով նմա ժամանակ ի հատուցումն պարտուցն։ Տես զայսմանէ ի Ճառս խորհրդոյ ապաշխարութեան (գլ. ԺԶ)։

106. Որ կարիցէ ոք առանց անուանարկութեան առնել անձամբ զհատուցումն, պարտի ի ծածուկ ի ձեռն խոստովանահօր կամ այլոյ ուրուք հաւատարմի հատուցանել։ Այլ եթէ յանկարծ չհատուցանիցէն նոքա, պարտ իցէ նմա վերստին առնել զհատուցումն։ —Ոսկիոյ, Եսսիոյ, Կաւարրոյ, Սիլուիոյ, Սփորեր, Աքրուա, Մալմատիկեանք և այլք բազումք հաստատեն ընդդէմ սակաւուց զպարտս վերոյհին հատուցման։ Օրի պարտական է գողն ամենայն իսկ միասուց՝ որ վասն գողութեան իւրոյ հասանէն պարտատեառն։ Օնոյն է ասել և յորժամ յայտնի իցէ պարտատէրն, և խոստովանահայրն անխորհրդաբար պատուիրեսցէ պարտապանին տալ զպարտս իւր ի պատարագիս. զի իրն բողոքէ միշտ առ տէր իւր, և տէր իրին ըստ հաճոյս իւր և ոչ ըստ հաճոյից այլոց կամի տնօրինել զայն։ Այս որպէս ի վեր անդր ասացաք (65), պարտական է գողն ծախիւք իւրովք հասուցանել զգողօնն առ տէր նորա։

ՅՕԴՈՒԱԾ ԺԲ

ԹԷ ԱՒ Ո՞ՅՍ ԸՍՏ ԿԱՐԳԻ Է ԱՒՆԵԼ, ՉՀԱՏՈՒՑՈՒՄՆ

407 • ԵԹԷ գոյ իրն , պարտ է տալ զայն տեառն իւրում• այլ զինչ է եթէ իցէ վաճառեալ :
408 • Պարտ է նախագասել զպարտս քան զխոստումն :
409 • ԵԹԷ բնաւք իսկ իցեն պարտք :
410 • ԵԹԷ իցեն պարտք ըստ յանցանաց կամ ըստ դաշանց :
411 • ԵԹԷ իցեն պարտատէրքն յայտնի :
412 • Պարտք գրաւականեալք և պարտք անձնականք :
413 • Օրէն իցէ պարտապանին նախագասել զո՛ և կամիցի , կամ եթէ պարտատէրն պահանջիցէ :
414 • ԵԹԷ ծառայ ընդունի զվարձս 'ի պարտապան տեառնէ :

407 • Եթէ պարտապանն կարէ հատուցանել ամենեցուն միանգամայն , չէն ինչ պէտք պահելոյ զկարգ• այլ եթէ չիցէ կարող հատուցանել ամենեցուն , պարտ է նմա ունել զայս կարգ : Նախ՝ եթէ կայցէ իրն , և յայտնի իցէ տէր նորա , պարտ է դարձուցանել զայն 'ի նա աներկբայապէս• իսկ եթէ չիցէ յայտնի , պարտ է հատուցանել զգինան աղքատաց : Օ՞նդն է ասել և զգնելոց իրաց , եթէ երկբայիցի ոք թէ չիցէ զգինան հատուցեալ• զի տէրութիւն իրին կայ մնայ յայնժամ'ի վաճառականն : Եւայց եթէ վաճառականն գրաւ 'ի ձեռին ունիցի կամ երաշխաւորութիւն կամ մուրհակ , յայնժամ տէր իրին գնօղն է , որպէս ասասցուք 'ի ստորև (166–169)• վասն որոյ և աղատ է յօրինաց աստի : Նոյնպէս և զգրամ գողունի խառնեալ ընդ իւրումն՝ պարտ է դարձուցանել 'ի տէր իւր• զի ըստ գողունի մասին գումարն այն բազմանդակ առանձինն իմն օրինակաւ առ տէր իւր բողոքէ :

408 • Երկրորդ՝ պարտ է հատուցանել զպարտս պարտականութեան յառաջ քան զպարտս խոստման• զի 'ի խոստմունս լռելեայն է իմանալ զպայման չեռ հաստատելոյ զպարտս :

409 • Երրորդ՝ եթէ պարտքն առ հասարակ պարտականութեան են պարտք , պարտ է հատուցանել նախ զայնս՝ վասն որոյ գրաւեալ են մուրհակաւ ինչք պարտապանին• երկրորդ զայնս՝ որոյք լռելեայն գրաւեալ

իցէն ինչք նորա, և մանաւանդ օժիտ կնոջն. երրորդ՝ զաւանդս կորուսեալս առ պարտապանին. չորրորդ՝ ըզպարտս որբոց, այրեաց, բարեգործութեան տեղեաց, և այլոց սոցին սակի արտունաւոր պարտատէրց։ Այս պարտ է նախադասել սոցա ամենեցուն, եւս և եթէ գրաւականս մուրհակաւ ի ձեռին ունիցին, զայնոսիկ՝ որոց տուեալ իցէ գրաւն առ ի գնել ինչ, կամ առ ի բեգեկ տան, կամ ի միակութիւն երկրի, կամ առ ի ժողովել զարմից։

110. Օրս ի պարտուց պարտ է կանխել ի հատուցանել, զոր ողորմիս թէ զգաշանցն։ — Հասարակաց և հաւանականագոյն կարծիք օրէն համարին տակաւ զերկաքանչիւրսն հատուցանել, զի և ոչ մի օրէնք խափր առնեն ընդ պարտս գողոմիս և ընդ պարտս գաշանց։

111. Պարտ իցէ նախադասել զպարտս՝ որոց յայտնի իցէն տեառքն, քան զայնս՝ որոց անյայտ։ — Եսկիպ, Պռնաչինա, Պուսեմպաղ, Սալմատիկեանք և այլք զառաջինն հաւանականաբար հաստատեն. զի զյայտնի պարտս ըստ բնական օրինաց պարտ է հատուցանել պարտատէրց, իսկ զանյայտս ըստ դրական օրինաց առ աղքատս։ Սակայն բաւականապէս հաւանականք են և կարծիք Սոլինայ և այլոց, զոր Ռուկոյ ամենահաւանականս կոչէ, այսինքն տակաւ երկաքանչիւրոցն հատուցանել. զի յոյժ հաւանականաբար պարտս բնական օրինաց համարին այլք յաստուածաբանից և զհատուցումն պարտուց անյայտից առ աղքատս. քանզի և պարտատէրց անյայտից կամք այն են, զի որ չկարիցեն ոք հատուցանել նոցա՝ հատուսցէ աղքատաց ի նպաստ հոգւոց նոցա։

112. Պարտ իցէ նախադասել միշտ ըստ երիցուԹեան ժամանակի զպարտատէրս։ — Ի պարտատէրց դրաւականելոց մուրհակաւ կամ լռելեայն, չիք երկբայուԹիւն զի պարտ է նախադասել զայնս՝ որոց յառաջագոյն իցէն պահանջք։ Իսկ զանձնական պարտեաց հաւանական իսկ է վարդապետուԹիւն կիսոց յաստուածաբանից՝ զի տակաւ պարտ իցէ հատուցանել ամենեցուն անխտիր. զի չիք ուրուք ի նոցանէ դրաւական, և պարտապանին հաւասարապէս յանձն առեալ է հատուցանել ամենեցուն։ Այլ հասարակաց և հա-

ւանականագոյն կարծիք պարտ համարին նախադասել և յանձնական պարտեաց զինագոյնս. զի թէպէտ և առանձն որ երէցագոյն է քահանայէ՝ երէցագոյն է չբառուհս, ՚ի գրաւականեալ պարտս լեզի զօրէ ըստ քաղաքական օրինաց, այլ ըստ եկեղեցականին զօրէ և յայլս առ հասարակ՝ հաստատեալ ՚ի բնական օրէնս: Ո՛չ ի յանձնական պարտս թէպէտ և զանձն և եթէ ուղղակի գրաւականէ պարտապանն, այլ անուղղակի գրաւականէ և զինչս իւր:

113. Որ՛ն իցէ պարտապանի նախադասել զքաւորագոյնն յանձնական պարտատեարց: — Կիսք յաստուածաբանից ընդ սրբոյ Աւգուստինոսէ օրէն համարին զայն, վասն առաւելագոյն ջնասուն՝ որ հասանէ աղքատին ՚ի յապաղելոյ: Հաւանական են կարծիքս, այլ հաւանականագոյն այլոցն աստուածաբանից՝ որ ոչ օրէնն համարին զայն, եթէ չիցէ աղքատն յայնպիսում՝ կաըօտութեան՝ զի պարտական իցեն ողորմել նմա այլք ՚ի պարտատեարց:

114. Որոյ զամենայն արծաթ իւր պահանջեալ և առեալ իցէ ՚ի պարտապանէ, օրէ՛ն իցէ նմա ունել զայն առանց մանաւորելոյ այլոց պարտատեարց անձնական նոց: — Հասարակաց կարծիքս օրէն համարին, թէպէտ և առանց դատաստանի իցէ առեալ զայն. զի օրէնք նպաստեն ջանացողաց ՚ի պահանջել: Յորմէ զհետ բերեն այլք յաստուածաբանից, զի եթէ յանձնական պարտատեարց հաւասարից ոք խնդրէ զպահանջս իւր, պարտ է պարտապանին տալ նմա զայն. իսկ եթէ ոչ ոք ՚ի նոցանէ պահանջիցէ զիւրն, չէ օրէն պարտապանի՝ որ չիցէ ձեռնհաս ՚ի հատուցումն ամենայն պարտուց իւրոց՝ հատուցանել ըստ հաճոյս միում ՚ի նոցանէ բովանդակ զպարտս: Այլ եթէ հատուցանիցէ, չկարէ յայնժամ պարտատէրն ունել առ իւր բովանդակ զարծաթն ընկալեալ: Այլ ոչ ինչ զօրէ ասել թէ օրէնք ոչ յետս պահանջին զհատուցեալն. զի դիտաւորութիւն օրինաց է նպաստել եւթէ փութոյ պարտատեառն՝ որ պահանջէ, և ոչ թէ տալ նմա իրաւունս ունելոյ առ իւր՝ զոր պարտապանն տայ նմա անիրաւաբար, և ոչ օգնել նմա ՚ի մասինս յայսմիկ ընդունել իւր անպիտութեամբ:

115. Որքո՞ն իցէ ծառայի, որ չիցէ կարեւոր յոյժ տեառընն, ընդունել վարձ՝ի տեառնէ՝ որ իցէ ընդ պարտեօք: — Եթէ անգիտութեամբ ընկալեալ իցէ զվարձսն, օրէն է նմա ունել զայն. բայց՝ի տեսանել զի տէր իւր գտանի այնուիկ անիրաւաբար առանց հարկի անձեռընհաս՝ի հատուցանել զպարտս իւր, պարտական է թողուլ զայն, և չպահանջել. զի ինքն գտանի պատճառ վնասու պարտատիրոջն, ըստ որում ասացաք՝ի վեր անդր (75): Իսկ կնոջ և որդւոց օրէն է ընդունել՝ի նմանէ զապրուստ իւրեանց, եթէ չիցէ նոցա այլազգ կեալ. զի պարտ է հօր ըստ արդարութեան կերակրել զկինն և զորդիս իւր. մանաւանդ զկնոջէ ասեն Պողինա, Լաւարրոյ, Վասգուէզ և Լայման, զի եթէ իցէ իսկ նորա ապրուստ՝ օրէն է նմա առնուլ զպարկեշն իւր և յառնէ վաշխառուէ, որ չիցէ ձեռնհաս՝ի հատուցումն. վասն զի հաւասար այլոց պարտուց՝ պարտական է այր կերակրելոյ զկինն իւր: Յաւելու Լայման զի զվարձս սպասաւորաց կարեւորաց պարտ է պարտապանի նախադասել և քան զպարտս գրաւականեալս:

ՑՕԴՈՒԱԾ ԺԴ

ՈՐ ԻՆՉ ՊԱՏՃԱՌՔ ԱԶԱՏ ԿԱՑՈՒՑԱՆԷՆ ԶՊԱՐՏԱՊԱՆՆ Ի ՀԱՏՈՒՑՄԱՆԷ

116. Ի կողմանէ պարտատեառն՝ Ա. Հատուցանել առ պարտատէրն նորա: Բ. Գիտութիւն հաւանութեան նորա: Գ. Նախատեսութիւն զեղծանելոյ նորա այնուիկ:

117. Ի կողմանէ պարտապանին՝ Ա. Եթէ առանց մեղաց հասուցեալ իցէ ուժգին վնաս: Բ. Եթէ ընկալեալ իցէ անօրինութեամբ: Գ. Եթէ յոյժ առաւել ծանր իցէ վնաս իւր՝ի հատուցմանէ: Դ. Եթէ վտանգ հոգւոյ՝ի վերայ կայցէ: Ե. Եթէ կենաց կամ համբաւոյ: Զ. Եթէ հրաժարէ յընծայից իւրոց:

118. Աղաս՝ի հատուցմանէ կացուցանէ և ազքատութիւն:

119. 120. Զինչ եթէ պարտատէրն ևս իցէ աղքատ:

116. Յն պատճառք ինչ՝ որք ազատ՝ի հատուցմանէ կացուցանեն զպարտապանն. և նախ՝ ՚ի կողմանէ պարտատեառն, եթէ և նա ինքն իցէ պարտապան, և առ պարտատէրն նորա ոք զպարտս իւր հատուսցէ: Յրկ-

ըորդ՝ եթէ մարթ իցէ գուշակել խոհեմութեամբ ըզ-
հաւանութիւն տեառն իւրմէ, առնուլ ուժեր զայն կամ
ունել առ իւր: Օ՞ի ամենայն չարութիւն գողու-
թեան է յառնուլ ինչ ընդդէմ կամաց տեառն նորա·
վասն որոյ որ գուշակութեամբ հաւանութեան նո-
րա ունի զայն առ իւր, ոչ ևս գործէ գողութիւն:
Ըստ այսմ սուրբ Աւգուստինոս օրէն համարի կրօնա-
ւորի պարտևել ինչ այլոց, գուշակելով զհաւանու-
թիւն մեծաւորին· այսինքն զի եթէ կարէր հարցա-
նել զնա, տայր նա հրաման: Երրորդ՝ էէ պարտ պար-
տապանին հատուցանել զպարտսն, եթէ պարտատէրն
մեղանչելոց է նովաւ· զայս այսպէս բացայայտակի ու-
սուցանէ սուրբ Աւգուստինոս: Որ՞ինչէ պարտապանին
չէ իսկ օրէն հատուցանել զայն, եթէ չիցէ անտի վը-
տանգ ծանրագոյն մեծաւոր անձին, որպէս ի վեր անդր
ասացաք (56) մի դարձուցանել զսուբ առ տէր իւր
պատրաստեալ ի սպանութիւն· զի որ դարձուցանէ
զայն, մեղանչէ՝ ոչ միայն ընդդէմ եղբայրսիրութեան,
այլ և ընդդէմ արդարութեան՝ որպէս ուսուցանեն ա-
տուածաբանք առ հասարակ· քանզի իրաւունք են ա-
մենայն ուժք՝ զի մի ոք գործակից լիցի մեծաւոր նորա:

117· Իսկ ի կողմանէ պարտապանին ազատ ի հա-
տուցմանէ կացուցանէ զնա, նախ՝ եթէ ի մեծաւորն ու-
ժեր չիցէ մեղուցեալ մահուամբ, որպէս ասացաք ի
Թիւն 39: Երկրորդ՝ եթէ զհատուցումն պարտ իցէ
առնել առ աղքատս վասն անցեալ գողոյ պարտատեառնն,
և պարտապանին ընկալեալ իցէ տնօրինութիւն ի Պապէն,
որպէս ասացաք ի Թիւն 68· և կամ եթէ ինքն իսկ աղ-
քատ ոք իցէ, և անձին ողորմելոյն: Երրորդ՝ եթէ չկա-
րիցէ հատուցանել առանց ծանրագոյն յոյժ մեծաւոր ան-
ձին, որպէս եթէ աւելի ևս քան զկրկնապատիկ կրիցէ
ինքն մեծաս· զի յայնժամ օրէն է նմա յապաղել զհա-
տուցումն, եթէ միայն ի յապաղմանէ անտի ոչ հասցէ
և պարտատեառնն հաւասարապէս մեծաս, որպէս ասա-
ցաք ի Թիւն 65: Ա՞ման որոյ առ ի չկորուսանել և եթէ
զշահ իւր ոչ է օրէն պարտապանի յամել ի հատու-
ցումն, բայց եթէ ի յամեցմանէ անտի չիցէ և ոչ մի
ինչ մեծաս պարտատեառնն: Չորրորդ՝ եթէ չկարիցէ
պարտապանն հատուցանել զպարտս իւր առանց հո-

պէտք ինասու իւրոյ կամ իւրոցն. զոր օրինակ եթէ առաջի կայցէ կնոջն կամ գտեերայ վտանգ անառակութեան կամ գողութեան։ Երկրորդ՝ եթէ չկարիցէ հատուցանել առանց վտանգի կորստեան կենաց կամ համբաւոյ, եթէ միայն կորուստ համբաւոյ իւրոյ ծանրագոյն քան զտոյժս պարտատեառնն իցէ, որպէս ասացաք ի թիւն 99։ Եւ երրորդ՝ եթէ հրաժարէ յընչից իւրոց. զի օրինք ներեն պարտապանի, որ չկարէ ձեռնհաս հատուցանելոյ զամենայն պարտս իւր, պահել որչափ ինչ կարեւոր իցէ անձին առ ի կեալ ըստ պայմանի իւրում, և զինացորդս ընչից իւրոց թողեալ պարտատերացն՝ վերծանել ի հատուցմանէ, եթէ միայն չյաղեցոյն նմա անդրէն մեծանալ։ Այլ այսման պարտական զնա համարի և ի նմին իսկ պայմանի աղքատութեան վատնակել ըստ կարի ի հատուցումն պարտատերոց իւրոց։ Այս գիտելի է զի ոչ վասն գողոց է կանոնս այս հրաժարելոյ յընչից իւրեանց. թէպէտ և նեղելի և նոցա համարին զայն Եսեխոյ, Սաւարրոյ և Սալմն, եթէ զպարէն և եթէ իւրեանց պահեսցեն՝ յայլմէ ամենայնէ հրաժարեալ։

118. Զատ ի հատուցմանէ կացուցանէ զպարտապանն և աղքատութիւն, եթէ ի հատուցանելն՝ ոչ ևս կարասցէ կալ ըստ պատշաճի պայմանին իւրոյ։ Զոյսպէս ուսուցանեն բարոյականք զրեթէ առ հասարակ, եթէ միայն չիցեն գողունի և չարաշահ ստացուածք իւր. զի այնպիսւոյն պարտ է հատուցանել զպարտս իւր, թէպէտ և հասցէ նմա անկանել ի պայմանէ իւրմէ։ Զոյնպէս և որ յանցանօք իւրովք ի խաղուց և ի զինեբուաց անկեալ իցէ ի կարօտութիւն։ Այլ և որք առանց իւրեանցն յանցանաց անկեալ գտանին ընդ պարտեօք, պարտին ամփոփել զծախս իւրեանց՝ առ ի հատուցանել ըստ կարի զպարտս իւրեանց։

119. Իսկ զինչ, եթէ պարտատէրն ևս իցէ աղքատ։ — Զատանօր պարտ է զանազանել զչեռին կարօտութիւն ի ծանր աղքատութենէ։ Եթէ պարտապանին առաջի կայցէ ի հատուցանելն արկանել զանձն և զիւրսն՝ այսինքն զորդիս զծնօղս և զկին՝ ի չեռին կարօտութիւն, ազատ է նա ի հատուցմանէ՝ ի կիր արկանելով զայլոց ինչ որպէս թէ անդստին իսկ ի չեռին

կարօտութեան գտանէը, թէպէտ և իրն այն օտարին՝ ամբողջ առ նմա ըստ տեսակի իւրում կայցէ, և թէ տէր իսկ նորին 'ի յետին կարօտութեան գտանիցի. զի յայնպիսում կարևոր ժամանակի ամենայն ինչ հասա- րակաց է, և լաւագոյն պայման ստացողին է: Այլ միայն պարտ է 'ի բաց առնուլ յօրինաց աստի, եթէ տէր ևս իրին՝ 'ի գողութենէ անտի պարտապանին հա- սեալ իցէ նոյնպէս 'ի յետին կարօտութիւն. զի յայն- ժամ իւր են իրաւունք որպէս նախկին ստացողին: Իսկ թէ պաւրա իցէ գողոյն յաղատել 'ի կարօտութենէ ան- տի հատուցանել զպարտս իւր, տես 'ի վեր անդր 'ի թիւն 19:

120. Իսկ եթէ պարտապանն 'ի ծանր կարօտու- թեան կայցէ, կամ 'ի հատուցանել զպարտսն հասանէ անկանել նմա 'ի պայմանին՝ զոր արդարութեամբ ստա- ցեալ իցէ, և պարտատէրն չիցէ 'ի ծանր կարօտութեան, օրէն է նմա յապաղել զհատուցումն: Այլ եթէ պար- տատէրն ևս կայցէ 'ի նմին ծանր կարօտութեան, պար- տականն իցէ պարտապանն յանյապաղ հատուցումն: — Հասարակաց կարծիք պարտական զնա համարին, թէ և հասցէ նմա 'ի նոյն ծանր կարօտութիւն պարտա- տեառնն անկանել: Իսկ եթէ երկոքին ևս, այս ինքն պարտապանն և պարտատէր, իցեն 'ի նմին ծանր կա- րօտութեան՝ մինչև չկարել նոցա կեալ ըստ պայմանի իւրեանց, յայնժամ ևս ունինք պարտական համարին զնա 'ի հատուցանել, դէթ 'ի գտանելն անիրաւու- թեամբ ընդ պարտեօք: Այլ այլք հաւանական հա- մարին կարել նմա յապաղել. զի յայնժամ հասանէ պարտապանին անկանել հատուցմանն 'ի միւս ծան- րագոյն չոյժ, այս ինքն 'ի ծանր աղքատութենէ 'ի յե- տին կարօտութիւն: Իսկ եթէ պարտատէրն չիցէ ան- կեալ յայն ծանր աղքատութիւն գողութեամբ պար- տապանին, կամ եթէ գողոյն չկայցէ առ պարտապանին անվաճառ:

Վայելչ է զի որ երկբայի ընդ միւսն արարեալ՝ ծա՞նր իցէ թէ թեթև, պարտական է զթեթև եւեթ միւսն հատուցանելոյ. այլ եթէ գողոյն կայ և միայ, և երկբայիցի գողն ընդ պինս նորա՝ աւելի թէ նուազ ար- ժիցէ, պարտական է հատուցանելոյ զգողոյն. ապա թէ

ոչ, Ճանր մեղանչէ՝ դնելով զտէր իրին անիրաւաբար ի վտանգ կրելոյ Ճանր վնաս : Իսկ որոյ ստացեալ ինչ առանց նենգութեան՝ և ապա կասկածիցէ ընդ այն, ա֊ սացաք ի վեր անդր (93 և գլ· Ա· 20) որ ինչ պարտ իցէ նմա առնել :

ՅՕԴՈՒԱԾ ԱԴ

ՅԱՂԱԳՍ ԴԱՇՆՑ

121· Վճռապատիկ են դաշինք :
122· Որ դնէ դաշն առանց կամելոյ յանձն առնուլ զպարտս դաշին :
123· Յոռի դաշինք :
124· Նենգաւ կամ վնասակաւ եղեալ դաշինք :
125· Առ ահի կռեալ դաշինք :
126· Դաշինք առանձնականք :

121· Վճռապատիկ են դաշինք : Ա· Հաւանու֊ թեամբ նեթ, որպէս ի տուրևառս, ի վարձս և այլն : Բ· Ընծիւք, որպէս յամենայն դաշնակցութիւնս : Գ· Վճռով, որպէս ի զետեղել զդրամագլուխս և այլն : Դ· Տուգանաւորութեամբ, որպէս ի պարգևէն, ի տալ ի փոխ, ի դնել յաւանդի և այլն :

122· Վիտելի է նախ՝ զի որ առանց հաւանութեան կամաց վեր ի վերոյ նեթ կռէ դաշն, ոչ անկանի ընդ պարտեաւք՝ եթէ չիցէ այն ի վնաս դաշնակցին, որոյ լցեալ իցէ զիւր պարտս· որպէս ի վեր անդր ասա֊ցաք (93) :

123· Վիտելի է երկրորդ՝ զի յոռի դաշինք, որպէս աւազակութեան և պոռնկութեան և այլն, ոչ արկանէն ընդ պարտեաւք նախ քան զվերջն· այլ յետ գործելոյ գայն, ըստ Հասարակաց և հաւանականապէս կարծեաց՝ ածեն ի վերայ զպարտս դաշանցն, այսինքն հատուցանել֊ լոյ զնուաստացեալ վարձան կամ զկապչնս, և որ ընդունին գայն՝ ոչ է պարտական դարձուցանելոյ յետս : Տես գայս֊ մանէ ի տոմարև (գլ· ԻԳ· 67) : Վասն որոյ որ կապչնս տայ կնոջ առ ի գործել ընդ նմա մեղս, չկարէ ունել գայն կինն ի չգործելն ընդ նմա վերջն· բայց եթէ առնն տուեալ իցէ նմա գայն առ ի հրապուրել եթէ գկամն նորա : Հանդերձ այսու ամենայնիւ Աստիանոյ,

Վամիհոլոյ, Ֆուրնելլի և Վանչինա հաւանականապաար հաստատեն՝ այնպիսի դաշանց և ոչ մի ինչ պարտս ումեք ի վերայ ածել։

124. Վիտելլի Է երրորդ՝ զի դաշն ըստ էական մասին նենգաւ կամ վրիպակաւ եղեալ, անվաւեր է. թէպէտ և ոչ ի պատճառս վրիպակին իցէ եղեալ այսինքն թէպէտ և դաշնակցին գիտացեալ իսկ եր զվրիպակն՝ կռեր զայն դաշն։ Իսկ եթէ վրիպակն իցէ ձգանգամանաց իրին, և ոչ պատճառս տուեալ դաշինն, վաւեր է։ Մանաւանդ անվաւեր համարին և յորժամ ձգանգամանաց իրին իցէ վրիպակն, և ի հանգամանաց անտի պատճառս առեալ իցէ դաշնն. այլ հասարակաց և հաւանականագոյն յոյժ կարծիք վաւերական համարին զայն։ Ոչ ի ոչ ըստ բնական օրինաց է անվաւեր դաշն այնպիսի՝ երկոցունց կողմանց հաւանելով ընդ էութիւն իրին. և ոչ ըստ դրական օրինաց, զի յուստինիանեան օրէնք վաւերական սահմանեն զայն, բայց միայն օրէն համարին դաշնակցին պատրելոյ՝ եղծանել զդաշնն։ Սակայն եթէ անյաղթելի լեալ իցեն պատրանքն, և իրքն դեռ ամբողջ, ի ծսիոյ, ի ցյման, Վհասթրոփալ և այլք հաւանականաբար ազատ համարին զդաշնակիցն պատրեալ ըստ խղճի մտաց չկալ՝ի դաշինն. զի դաշնակցայ ամենեցուն լռելեայն դիտաւորութիւն է չառնուլ յանձն զպարտս դաշին, յորում իցէ խաբէութիւն։

125. Վիտելլի Է չորրորդ՝ զի զդաշն կռեալ առ ահի, եթէ միայն ծանր իցէ և անիրաւ երկիւղն, օրէն է եղծանել՝ ոչ միայն դատաւորի, այլ և դաշնագրին ահաթեկելոյ, թէպէտ և յայլոյ ձեռս իսկ անցեալ իցեն իրքն անգիտութեամբ՝ի ժառանգութիւն։ Որպէս զի եթէ դաշնակիցն ճշմարտեալ կամիցի եղծանել զդաշնն, և միւսն չկամիցի, օրէն է ճշմարտելոյն զիսխարէն ճշմարտն ծանկապէս առնլոյ՝ի նմանէ։ Բայց դաշինք այսպիսիք վաւերականք են ըստ ինքեան, որպէս ուսուցանեն աստուածաբանք գրեթէ առ հասարակ. ՝ի քաց առեալ Ա. զՊատակ և զհարմնախաստութիւն։ Բ. Օ կրօնաւորութիւն։ Գ. Օ ուխտ։ Դ. Օ խոստումն կամ զորութիւն եկեղեցական իրաց։ Ե. Օ ընտրութիւն յեկեղեցական առաջնորդութիւն։ Զ. Օ խնամակալութիւն որբոց՝ ահարկութեամբ առեալ։ Է. Օ իրաւա-

սուԹիւն նոյնպէս ահընկէցուԹեամբ՝ի ձեռս ածեալ։ Ը. Օ՝արձակումն՝ի բանադրանաց։ Թ. Օ՝հրաժարումն յեկեղեցական ժառանգուԹեանց։ Իսկ յաղագս այլոց գաշանց վաղ իսկ ասացաք, զի որ առ ահի յանձն առնու՝ օրէն է նմա եղծանել զայն. այլ ինա՝ եԹէ ծանր իցէ լեալ երկիւղն, և ոչ ԹեԹև լինէ, որպէս ունին հաւանականագոյն կարծիք. ԹէպէԹ և զհակառակն և՛ս ոչ անհաւանական դատին Լեսլիոյ, Կաւարրոյ, ՄոԹոյ, Մանքեզ, ՎրասԹրոփալ, Մալմատիկեանք և այլք։ Ա՛յլ՝ի բաց առնուն զՊսակ և զուխտ կրօնաւորական, որոց չէ մարԹ առ ԹեԹև լինէ երկիւղն գոլ անվաւեր։

126. Ինդիր է առ աստուածաբանս ԹԷ արդեօք գաշն առանց օրինաւոր արարողուԹեանց կռեալ՝ ածիցէ պարտս խղճի մտաց։ — Ի՛տաղուածք հաստատեն զայն, իբր զի օրէնք մարդկայինք ԹէպէԹ և բառնան զնիրաւունս այնպիսի գաշանց, այլ ոչ և զբնական պարտս՝ առ որ շատ իսկ է հաւանուԹիւն։ Ա՛յլք չընդունին, իբր զի մարդկային օրէնք առ՝ի խափանել զվտանգ խաբէուԹեան՝ կարէ բառնալ և զբնական պարտս։ Ա՛յս քանզի երկոքին և՛ս կարծիքս այսոքիկ հաւանականք են, այլք՝ի բարեյականաց լաւ համարին յայսպիսւո՛ երկբայուԹեան նախադասել զնիրաւունս ստացողին ցորչափ չիցէ դատաւորին զհակառակն վճռեալ։

ՅՕԴՈՒԱԾ ԺԵ

ՅԱՂԱԳՍ ԽՈՍՏՄԱՆ ԵՒ ՊԱՐԳԵՒԵԼՈՑ

127 • Պարտք խոստման :
128 • Որ ոչն ունի իշխանութիւն պարգևելոյ • որ ընդունի պարգևս ՚ի պարտաւորանէ :
129 • Պարգևք ամուսնացս առ միմեանս • հօր և որդւոյ առ իրեարս :
130 • Պարգև ոչ ընկալեալ • արարեալ ՚ի ձեռն նուիրակի կամ նամակաւոյ :
131 • Եթէ իցէ վասն բարերարութեան , և թէ կարիցէ ընդունել ժառանգն :
132 • Տուչութիւն • կատարումն • պարգև շռայլեալ • վախճանական պատճառ ,
133 • Վասն որոյ իրաց օրէն է նահանջել զպարգև , մանաւանդ զզրկողական :
134 • Պարգևք հրեաւականք :

127 • Խոստումն , եթէ չիցէ բացայայտ կամօք ըզպարտս յանձն առնելոյ ընդ ծանր մեղաց , ածէ և եթէ պարտս զթեթև մեղաց • զի այնպիսի խոստումն ոչ է պարտք արդարութեան , այլ հաւատարմութեան և լաւութեան՝ որպէս ասէ սուրբ Գրիգուրնայիոն , և Համանձայն նմին Այեթանոյ , Պաննէդ , Ետեսիա , Հենրիգուէդ , Այալմատիկեանք և այլք : Իսկ եթէ խոստացեալն պատահէ միաստակար կամ դժուարին կամ անօգուտ կամ անարժան , և ոչ մի ինչ պարտս ՚ի վերայ ածէ խոստացողին : Այնապէս եթէ դէպք այնպիսի ՚ի վերայ հասանիցէն , որում եթէ կանխաւտես լեալ էր խոստացօղն՝ ոչ խոստանայր • որպէս ուսուցանէ սուրբ Գրիգուրնայիոն և այլք գրեթէ առ հասարակ :

128 • Իսկ յաղագս պարգևաց գիտելի է նախ՝ զի չըկարէն պարգևել ինչ ումեք , ա • Որոց չիցէ բանաւորութիւն : բ • Խել և համերք ՚ի ծնէ : գ • Որք և չև ևս յարբունս հասեալք , բայց միայն ՚ի բարեգործութիւն : դ • Ցատապարտեալք ՚ի մահ : ե • Տնտեսք միաբանութեանց , բայ ՚ի վարձատրական պարգևաց և յողորմութեանց : Ցարձեալ չկարէն և պարտապանք • և որք ընդունինն ՚ի նոցանէ պարգևս , պարտականք են յետս առ նոսա դարձուցանելոյ՝ եթէ նոքա պարգևատրութեամբն այնուիկ գտանին անբաւականք հատու-

ցանելոյ զպարտս իւրեանոյ առ պարտատեարս. զի այսպիսի պարգևընկալք դրական պատճառք են ձեռնհաս պարտատեարց, վասն որոյ և պարտականք՝ ի հատուցումն:

129. Կ՚ասէզի ե երկրորդ՝ զի պարգևք ամենայն առ միմեանս ոչ զօրեն առանց առնլոյ հաստատութիւն երդմամբ, կամ մահուամբ պարգևատուին՝ յետ աւանդելոյ՝ ի կենդանութեան զպարգևն: Այլ վաւեր են հրիտակք և պարգևք վարձատրականք, կամ՝ ի վաստող առնել պարգևեալք, կամ՝ ի կնոջէ տուեալք առնն վասն հասանելոյ յաւագութիւն: Որ ինչ զամենայն՝ զնոյն ե իմանալ և զպարգևացն հօր առ որդիս. բայց վաւեր են որ ինչ վասն ամենանութեան կամ՝ ի վարժս ուսման պարգևեալ՝ ի հօրէ, զի չհամարի այն տուեալ՝ ի հաշիւ օրինաւոր ժառանգութեան. կամ եթէ որդին չիցէ հարազատ, և կամ եթէ յեկամուտ ընչից իցեն պարգևքն:

130. Կ՚ասէզի ե երրորդ՝ զի պարգև, մինչչև լեալ ընդունելի, ոչ ածէ ինչ պարտս պարգևողին. բայց վասն տղայոյ օրինք ընուն զտեղի ընդունելութեան: Ոչ ի առանց երկաքանչիւր կողմանց հաւանութեան չմարթին լինել պարտք, թէպէտ և երդմամբ հաստատեալ իցեն՝ ի պարգևողէն. զի երդումն չիրաւունս պարգևատրութեանն ե հաստատեալ, որ միշտ ե նահանջելի ցորչափ չիցէ լեալ ընդունելի: Ոչ ասն որոյ եթէ՝ ի ձեռն նուիրակի իցէ լեալ պարգևն, ցորչափ չիցէ լեալ առաջի նուիրեալն իսկ նուիրակի ընդունելութիւնն, մարթ ե նահանջել զայն. իսկ եթէ՝ ի ձեռն նամականուոյ, ցորչափ չիցէ դրեալ պատասխանի ընդունելութեանն: Ոչ ասն որոյ ըստ հաւանականադոյն կարծեաց չէ մարթ ընդունել զպարգև, որոյ լուր յետ մահու պարգևողին հասանիցէ առ պարգևընկալն. զի ոչ ևս յայնժամ մարթ ե կցորդել երկոցունց կողմանցն հաւանութեան, յորում ե հաստատութիւն դաշին: Այլ ըստ այսմ կարծեաց, նըշիրակ՝ որ յամէ կամաւ՝ ի հասուցանել զպարգևն առ որ ուղղեալն ե, ՝ի մեռանել պարգևողին պարտական գտանի ոչ միայն դարձուցանելոյ առ ժառանգ նորին զպարգևն յղեալ, այլ և զկորուստ այնորիկ՝ առ որ պարգևն այն յղեալ էր:

Այլ Եսայի, Մանբեղ, Ղուկաս, Իւա և Սա-

մաթիկեանք Համարին, և չէ անհաւանելի կարծիք նոցա, զի և յետ մահու պարգևողին օրէն իցէ ընդունել զպարգևն. իբր զի կամք պարգևողին յարատևէ զօրութեամբ՝ ի նուիրակին կամ՝ ի նամականաւորն։

Ընդ ձերկոսին ևս զայսոսիկ կարծիս Հաւանական Համարեալ՝ եթէ յանգէտս հաւանեալ ուրուք իցէ ընդկամս պարգևողին և ընկալեալ իսկ զպարգևն, օրէն է նմա ունել զայն. մանաւանդ եթէ յընդունելն զայն ոչ ինքն և ոչ նուիրակն գիտիցեն զմահ պարգևատուին, զի յայնժամ վաւեր է ընդունելութիւնն, որպէս հաստատեն Յանքէզ, Լուկաս և Յալմատիկեանք։ Իսկ եթէ նենգաւ ոք կամ երկբայանօք ընկալեալ իցէ, պարտի դարձուցանել զայն. զի ոչ է մարթ գրական կասկածանօք կամ Հաւանական կարծեօք ստանալ օրինաւոր ժառանգութիւն։

131. Որ ինչ ասացաքն զպարգևատրութենէ զի ոչ ածէ պարտս նախ քան զընդունելութիւն, պարտ է իմանալ և զսրբազան պարգևացս. բայց գիտելի է զի սրբազան վայրք կարեն ընդունել պարգևս յոյց և իւրեանց։ Իսկ եթէ ուղղակի առ Քաւուած արարեալ է պարգևն, ոչ ևս խնդրի ընդունելութիւն, զի Համարի այն յուխտ. իսկ եթէ երկբայելի իցէ, Համարի և յայնժամ յուխտ, այլ Հաւանականաբար օրէն է եպիսկոպոսի տնօրինել զայն, և ս և յետ ընդունելութեան պարգևին։ Իսկ եթէ պարգևընկալն՝ որպիսի և իցէ պարգևի՝ չև ընկալեալ զպարգևն՝ մեռանիցի, ժառանգ նորա ըստ ոչ սակաւուց աստուածաբանից կարէ ընդունել զպարգևն. բայց Լեսիոյ, Վասքոփալ, Ռեպելլիոյ և Յալմատիկեանք զհակառակն Հաւանականագոյնս Հաստատեն։ իբր զի ժառանգն յիրական ևեթ իրաւունս վախճանեցոյն յաջորդէ, և ոչ յանձնակատս։

132. Պիտելի է չորրորդ՝ զի յետ տուչութեան պարգևին ստանայ պարգևընկալն՝ ի վերայ այնորիկ տէրութիւն։ Հինգերորդ՝ զի եթէ գիտաւորութիւն պարգևատուին լեալ իցէ գլխաւորապէս պարտս ինչ՝ ի վերայ գնելոյ ընդունողի զպարգևն, ՝ի չիատարել նորա զպարտսն՝ ոչ զօրէ պարգևատրութիւնն. բայց ոչ նոյնպէս՝ եթէ առ՝ ի յորդորել ևեթ՝ ի նոյն լեալ իցէ պարգևատրութիւնն։ Վեցերորդ՝ պարգևատրութիւն շուայ-

լեալ ոչ է վաւերական։ Յօթներորդ՝ ի պակասել դլխաւոր պատճառի պարգևատրութեանն, եթէ անյեալ իցէ և եթէ ներկայ, ոչ է վաւերական պարգևն. իսկ ի պակասել երկրորդական մակեղծաւ պատճառաց, վաւերական է։

133. Վիտելի է ուրեմն որք՝ զի որք առ կենդանութեամբ իւրեանց պարգևեն ինչ իւրեանց, օրէն է նոցա յետս առնուլ զպարգևն վասն երից պատճառաց։ Նախ՝ եթէ ապաշնորհ չարաչար առ պարգևատուն գոցի պարգևընկալն։ Երկրորդ՝ եթէ պարգևատուին լինի զաւակ, յորմէ զուրկ ի պարգևելն էր. իմա եթէ զմեծ մնան ընչիցն՝ օտարի ումեք իցէ պարգևեալ. զի եթէ հօր կամ նախահօր կամ՝ի սրբազան ինչ պէտս իցէ պարգևեալ, այնչափ ինչ օրէն է յետս առնուլ, որչափ բաւական իցէ յօրինաւոր բաժին ժառանգութեան որդւոցն։ Նայց եթէ հայրն ոչ յետս առնուցու, ոչ է օրէն որդւոց յետս պահանջել զայն։ Երրորդ՝ եթէ իցէ զրկողական պարգևն, այսինքն՝ի վնաս օրինաւոր բաժնի ժառանգութեան որդւոցն. և յայնժամ եթէ՝ի հօրն չարութենէ առ օտարս իցէ լեալ պարգևն, օրէն է բռնանդակ յետս պահանջել զայն. իսկ եթէ առանց չարութեան կամ առ թողուն՝ և այլն, ըստ մասին և՝ եթէ օրէն է յետս պահանջել։ Սակայն ոչ է պարտական պարգևընկալն՝ի հատուցումն մինչ չև վճռեալ յատենէ։ Վեցք յաստուածաբանից օրէն համարին հօր՝ի վնաս օրինաւոր բաժնի որդւոց պարգևել զինչս՝ի սրբազան պէտս, եթէ միայն մնասցէ նոցա բաւական յապրուստ։ Պաւլ Անքէզ, Թեսիոյ, Վրանչինա, Սալմատիկեանք և այլք չընդունին զայն, և Թուի Հաւանականագոյն կարծիք սոցա. զի ուրուրեք օրէնք քաղաքականք չիցեն հակառակ կանոնականաց, պարտ է պահել զայնս. որպէս ասացաք՝ի վեր անդր (գլ. Բ. 14. 15. 43)։

134. Վիտելի է իններորդ՝ զի հրիտակք առ հասարակ, այս ինքն կտակաւ թողեալ պարգևք, նահանջելիք են մինչև ցմահ պարգևատուին։ Եւ համարին հրիտակք որ ինչ՝ի պարգևատուէն սահմանեալ են՝ի տուրս յետ մահու, կամ վասն մահու. իսկ յերկբայս՝ չհամարին՝ի հրիտակ, վասն որոյ և աննահանջելիք են։

ՅՕԴՈՒԱԾ ԺԲ

ՅԱՂԱԳՍ ՅԱՆՕԹ ԵՒ ՅԱՒԱՆԴԻ ՏԱՂՈՑ

135. Վանիպատիկ է տալ ինչ յանօթ:
136. Ջինչ է աւանդ:
137. Պա՞րտ իցէ առաւելագոյն ունել հոգ զաւանդից քան զսեփհական իրաց:
138. Ե՞րբ օրէն իցէ աւանդառուի չհատուցանել զաւանդն:

135. Արկակի մարթ է տալ ինչ յանօթ. մինչև ՚ի յայտնի ինչ ժամանակ, կամ մինչև ՚ի պահանջել անպրէն տուողին: Յետինս դադարէ մահուամբ առողին, այլ ոչ և տուողին՝ մինչև ժառանգք նորա պահանջեսցեն: Իսկ զառաջինն չէ օրէն պահանջել յետս մինչ չև իցէ լցեալ պայմանեալ ժամանակին, բայց միայն եթէ հասցէ անտի միասս տուողին: Սովորական ծախք իրին տուեալց յանօթ՝ անկ են առողին, իսկ անսովորք տրւողին:

136. Պէտք է ՚որ ինչ դնի առ ումեք ՚ի պահեստ. վասն որոյ ոչ է օրէն աւանդառուի ՚ի կիր արկանել զայն առանց հրամանի աւանդատուին. ապա թէ ոչ, պարտի հատուցանել զկինս սպասաւորութեանն:

137. Պիտեալն է ըղ յարկածս հրդեհի և նաւակոծութեան և այլն, չեն պարտք աւանդառուի երիցագոյն ունել խնամ ՚ի պահպանութիւն աւանդից քան իւրոցն իրաց, եթէ չիցէ աւանդն կարի յոյժ ծանրագին քան զնւերան: Այլ եթէ վասն պահպանութեան աւանդիցն զնւեր ինչս կորուսանիցէ, օրէն է նմա ընուլ յայնցանէ զկորուստ իւր: Իսկ որոյ առեալ ինչ իցէ յանօթ, պարտի նախադասել զպահպանութիւն այնորիկ քան զնւերոյն իրաց. ապա թէ ոչ, պարտական գտանի հատուցանելոյ զկինս այնորիկ տուողին: Այլոյ եթէ սա և եթէ աւանդասէրն հաւանականաբար չեն պարտական ՚ի հատուցումն իրին, եթէ առանց յանցանաց իւրեանց կորիցէ. և յանցանս նմա ոչ զմեղս, այլ իրաւաբանական յանցումն, որպէս ուսուցանեն Ուլպ, Պօմպէնեա, Պալմատիկեանք և այլք: Տես զայսմանէ ՚ի թիւն 41:

138. Պիտեալն է դարձեալ, զի աւանդառուի ոչ է

պարտ Հատուցանել զաւանդն, եթէ գիտիցէ Հաւատաւեաւ՝ զի գողնըք են, կամ եթէ իցեն իւր Հաւատոյ պահանջք յաւանդատուէն, և կամ եթէ վտանգ Հաւանական կայցէ՝ ի չարիս զայն՝ ի կիր արկանելոյ աւանդատուէն ընդդէմ արդարութեան՝ որպէս զսուր՝ ի սպանութիւն, և կամ ընդդէմ իսկ եղբայրսիրութեան՝ որպէս Հաստատէ Եսսիոյ ընդ սուրբ Գրիգորիոս ընդդէմ Անգղէղի և Պոնաչինայ։

ՅՕԹՈՒԱՆ ԺԼ

ՑԱՂԱԳՍ ՓՈԽԱՏՈՒԹԻԱՆ ԵՒ ՎԱՃԵԻ

139. Ե՞րբ պարտ իցէ Հատուցանել զփոխ։
140. Որդւոց չէ ևս ազատացելոց տուեալ փոխ։
141. Որդւոյ չէ ևս զատուցելոց՝ ի տանէ՝ տուեալ փոխ։
142. Չվաշխից։
143. Տալ փոխ յուսով շահու։
144. Շահ տուեալ ձրի։
145. Տուեալ առ ահի։
146. Դաշն չպահանջելոյ զդրամագլուխն ընդ երկար ժամանակ։
147. Վնաս ծագեալ։
148. Շահ խափանեալ։
149. Պայման ա. ազգարարութիւն փոխառուին։
150. Պայման բ. մի աւելի լինչ քան զանկատելոյն շահ պահանջել։
151. Պայման գ. զի՝ ի փոխատուութենէ անտի առցէ պատճառս վնասոն ծագեալ կամ շահն խափանեալ։
152. Պարտ իցէ վերատուն կամ շահու գոլ Հաւատոյ։
153. 154. Վտանգ դրամագլխոյն։
155. Գրաւականք։
156. 157. Տոյժ պայմանեալ։
158. Պահանջ բարեկամութեան։
159. Պայմանք Հարկեցուցիչք։
160. Պայման Հատուցանելոյ նոյնչափ քանակաւ։
161. Հատուցանելոյ որ լինչ պարտն է ըստ արդարութեան կամ ըստ եղբայրսիրութեան։
162. Պարտք վաշխառուաց և ժառանգաց նոցա։
163. 164. Գործակիցք վաշխառուաց։

139. Փոխ է տալ սպառելի լինչ ուժիք Հանդերձ կալողութեամբ՝ ի կիր արկանելոյ զայն, պարտ՝ ի վերայ եդեալ նմա Հատուցանելոյ զայն՝ ի պայմանեալ ժամանակի նոյնին տեսակաւ և Հանդամանօք։ Իսկ եթէ չիցէ սահմանեալ ժամանակ, պարտի փոխառուն Հատուցա-

նել զայն յետ ժամանակի ինչ ՚ի պահանջել փոխատուին. մանաւանդ թէ առանց պահանջելոյ իսկ նորին, եթէ փոխատուն մոռացմամբ կամ ակնածութեամբ կամ վասն բացակայութեան չպահանջեցէ զայն:

140. Կ՚իտելի է զի զփոխ տուեալ որդւոյ չէ ևս հասելոց ՚ի տիս աւագութեան, կամ եկեղեցեայց կամ համալսարանաց կամ այլոց բարերարութեան տեղեաց, ոչ է օրէն պահանջել յետս, եթէ չիցէ մարթ ցուցանել թէ իսկապէս յօգուտ նոցին է՚ի պէտս պատշաճապէս ՚ի կիր արկեալ է այն. կամ թէ հաճութեամբ և հրամանաւ եպիսկոպոսին տուեալ ուրուք իցէ զայն ումեք եկեղեցեաց կամ ուխտի կանոնիկոսաց:

141. Կ՚իտելի է դարձեալ, զի որդիք չէ ևս զաւակ ցեալք յընտանեաց, որոց չիցեն ստացուածք զինուորականք կամ իբր զինուորականք, չեն պարտական հատուցանելոց զառեալ դրամն ՚ի փոխ. ոչ միայն ըստ ատենական իրաւանց, այլ և ըստ խղճի մտաց. բայց միայն եթէ երդմամբ խոստացեալ իցէ ոք զհատուցումն, այլ և վերդումն զայն իշխանութիւն է մեծաւորաց եկեղեցականաց տնօրինելոց: Այլ եթէ դիտաւորեամբ հօրն առեալ իցէ նորա զփոխն, կամ եթէ փոխն՚ի շահ հօրն իցէ լեալ, այս ինքն ՚ի կիր արկեալ ՚ի պէտս՝ զորս պարտ էր նմա հայթայթել որդւոյն, պարտական է յայնժամ հայրն՚ի հատուցումն, եթէ իցէ դրամ առեալն ՚ի փոխ. զի զայլ իրս ոչ է պարտական հատուցանելոց:

142. Ի աչս է շահն այն արժէից փոխոյն, որ պահանջի փոխանակ պիտառութեան նորին: Հակառակ է բնական և դրական օրինաց վաշխառութիւն. զի յայլս իրաց զանազանի տերութիւն ՚ի պիտառութենէ, այլ ՚ի սպառելի իրս ոչ զանազանի, զի նովքն իսկ պիտառութեամբ սպառի իրն. վասն որոյ ՚ի փոխատուութեան քանզի հարկաւ անցանէ տերութիւն իրին ՚ի փոխառուն, ՚ի պահանջել փոխատուին զշահ՝ պահանջէ որ ինչ ոչ ևս իւրն է, և որ անբնական է ըստ ինքեան, որպէս դրամ կամ ցորեան և այլն:

143. Ի պա ուրեմն ոչ է օրէն պահանջել զվաշխ որպէս վաշխ. և ոչ իսկ օրէն է տալ փոխ յուսով շահու, բայց եթէ առ՚ի ստանալ զբարեկամութիւն ուրուք ասպէ ոք նման փոխ, և յարակից բարեկամութեան նո-

բա իցէ երկրորդաբար և յոյս ինչ շահու։ Օ՞չ տալ փոխ գլխաւորաբար վասն շահու, որպէս եթէ ոք առանց այնը ակնկալութեան չտայր փոխ, չէ և չէ օրէնն ըստ տերունեան հրամանին. "Ցմուք փոխ ուստի ոչ ակն ունիցիք առնուլ"։ Նա յՀնոսիկենատեայ ԺԱ. դատապարտեալ է թիւր վարդապետութիւնս այս. "Ոչ է վաշխ՝ պահանջել ինչ՝ի վերայ դրամագլխոյ իբրև պարտս բարեկամութեան"։ Օ՞չ բարեկամութիւն ոչ երբեք ածէ պարտս հատուցման շահու, բազում այլ օրինակօք կարելով ընծայել զհաւաստիս սերոյ։

144. Ոսկ եթէ փոխառուն ձրի և անպարտ ամենևին տացէ ինչ փոխատուին, օրէն է նմա առնուլ զայն։ Այլ զի՞նչ եթէ իցէ երկբայելի տուրք փոխառուին։ — Եթէ փոխատուն բարեմտութեամբ ընկալեալ իցէ զայն, և ապա յերկբայս անկեալ՝ չկարիցէ ստուգել զերան, օրէն է նմա ունել զայն։ Ոսկ եթէ երկբայանօք իցէ ընկալեալ, չէ օրէն. զի ոչ ոք կարէ երկբայութեամբ սկսանել ըստ օրինի ժառանգել ինչ։ Այլ միայն եթէ փոխառուն չիցէ աղքատ ոք և ոչ ժլատ, և եթէ ոչ յաղերսանացն ինչ և ոչ՝ի սպառնալեաց փոխատուին գայցէ՝ի տուրս, մարթ է վստահել բարեյապէս զի ձրի տայ. մինաւանդ եթէ յետ հատուցանելոյ ըզդրամագլուխն տացէ։

145. Եթէ փոխառուն յաւելցէ՝ի վերայ դրամագլխոյն տալ ինչ, զի մի ապաշնորհ առ փոխատուն երևեսցի, կամ զի մի գուցէ՝ի կարօտեալն միւսանգամ՝ չկամիցի նա տալ անդրէն փոխ, ըստ բազմաց յաստուածաբանից՝ օրէն է փոխատուին առնուլ զտուրսն. զի անպ փոխառուն ոչ շարժի յարտաքին ինչ պատճառէ յերևսաց փոխատուին, այլ յիւրոց անտի ներքինն պատճառաց՝ որք ինքնակամ զտուրսն կացուցանեն։

146. Պիտեալի է ասա զի յՂեբսանդրէ Ե. դատապարտեալ է և թիւր վարդապետութիւնս այս. "Ո՞չ է օրէն է փոխատուի պահանջել ինչ՝ի վերայ դրամագլխոյ, եթէ պարտ յանձն առնուցու չինդրել յետս առ ժամանակ մի ղդրամագլուխն"։ Օ՞չ պարտ իսկ է փոխատուի, և պարտ յարակից փոխատուութեան, թողուլ առ ժամանակ մի ղդրամագլուխն առ փոխառուին. վասն որոյ չէ մարթ պահանջել ինչ վասն որ և իցէ ժամա-

նակի, որպէս անսահմանաբար ուսուցանէ վարդապետութիւնդ դատապարտեալ։ Այլ եթէ փոխատուն պարտ յանձն առնուցու սպասել ընդ երկար ժամանակ, որպէս զերեամ մի կամ զքառեամ, ոչ սակաւք յասուածաբանից օրէն համարին նմա պահանջել ինչ. զի պարտականութիւնն այն այլ ինչ է ՚ի փոխատուութենէ, և արժանի վարձուց. և զի անհնարին իսկ է բացայայտս չկրել ինչ նմա տոյժ կամ նեղութիւն ՚ի սպասելոյ ընդ այնչափ ժամանակ։ Այլ եթէ օրէն է պահանջել ինչ ՚ի տալ փոխ երկարաժամանակեայ ըստ հասարակագոյն կարծեաց, ընդէ՞ր ապա չիցէ օրէն և նմա՝ որ պարտ յանձն առնու չպահանջել զիւրն ընդ երկար ժամանակ։

147. Այլ վասն չորից պատճառաց օրէն է փոխատուի պահանջել շահ ՚ի վերայ դրամագլխոյն։ ՚Նախ՝ վասն տուժից, զոր կրէ փոխատուն ՚ի պատճառս փոխատուութեանն. զի յայնժամ ոչ եթէ զպիտառութիւն դրամագլխոյն վաճառէ, այլ զփոխարէն տուժից ինդրէ։

148. Երկրորդ՝ վասն խափանաճոյ շահուն իւրոյ, այս ինքն եթէ ՚ի պատճառս փոխատուութեանն դադարէ շահ փոխատուին։ Օ՛ի որպէս սուրբ Գրուինայինն ասէ, երկակի մարթ է ումեք կրել զնաս. զրկելով յորոց ունին, կամ խափանելով ՚ի ստանալոյ որ ինչ հասանէ նմա ունել։ Այս Ինեղիկտոս Ա.Պ. յայտնապէս ՚ի կոնդակին յաղագս այսորիկ օրինաւոր համարի զշահ ՚ի խափանել դրամագլխոյն "Եթէ ՚ի ստանալոյ զբերս նորին տարեկանս, և եթէ յօրինաւոր տուրեւառս ՚ի կիր արկանելոյ զայն և շահելոյ ըստ օրինի"։

149. Վասն առ ՚ի պահանջել զշահ, և ս և վասն զնասուն ծագելոյ և շահուն խափանելոյ, ինդրին պայմանք երեք։ ՚Նախ՝ զի դաշն շահուն կանխեսցէ քան զդադնագիր փոխատուութեան, (եթէ չիցէ փոխատուն ստիպեալ ականջ ՚ի տալ վաղագոյն, և կամ եթէ փոխատուն ՚ի լրանալ ժամանակին չիցէ յամեալ ՚ի հատուցանել զփոխն) . պարտ է և ս նախ քան զփոխատուութիւն ազդ առնել փոխառուին զօրինաւոր պատճառս շահախնդրութեան։ Այլ չէ բաւական պիտել դուշակութեամբ զհատանութիւն փոխառուին ընդ այն. զի՛ ի դաշինս չգտանի կամք մեհնողականք, այլ խնդրին ներ-

գործական կամք։ Այլ Եսիոյ, Մուրնելի, աքրուա և Սալմատիկեանք հաւանականաբար օրէն համարին պահանջել զխոստացեալն շահ, եթէ երկաքանչիւր կողմանց հաւանեալ իցէ ընդ դաշնագիրն՝ և ըստ ամենայն օրինաւոր պայմանաց յանձն առեալ զայն։

150. Երկրորդ պայման՝ չպահանջել վասն խափանածոյ շահուն իւրոյ աւելի ինչ քան զակնկալեալն շահ, ի բաց բարձեալ յայնմանէ և զծախս և զվարձ աշխատանաց՝ զորս հասանէր կրել վասն ի ձեռս բերելոյ զակնկալեալն շահ, որչափ ինչ փոխատուին հաճոյ էր հատուցանել առ ի վերծանել յաշխատանաց անտի։

151. Երրորդ պայման՝ զի արդարև ի փոխատուութենէ անտի յառաջ գայցէ խափանած շահուն. զի եթէ փոխատուն հայթայթէ վնասն շահ այլով պահեստ դրամով կամ ձարտարութեամբ՝ յոր չէր մարթ նմա պարապել եթէ յարգէր զդրամն տուեալ ի փոխ, չէ օրէն նմա պահանջել ինչ ընդ փոխոյն։ Այլ եթէ փոխատուին՝ ի տալն ի փոխ զարծաթն զոր յարգելոյն էր՝ վասն դիտաւորութիւն յարգելոյ զդրամն պահեստ առ ի պէտս ընտանեաց կամ արկածից ճեպսու և կամ առ այլ ինչ, բազումք յաստուածաբանից հաւանականաբար օրէն համարին նմա պահանջել զշահն խափանեալ փոխատուութեամբն, թէպէտ և փոխեսցի ապա ի խորհրդոյն և ի կիր արկցէ զարծաթն զայն պահեստ. զի չէ պարտական փոխատուն վտանգելոյ ի վաճառաշահ զարծաթն պահեալ յայլ պէտս։

152. Յաւելու Այսն Ռոնչինա և չորրորդ ինն պայման, այսինքն զի հաւատեաւ ի վերայ կայցէ վճռնան կամ խափանած շահուն։ Այլ հասարակաց կարծիք աստուածաբանից շատ համարին թէ հաւանականք ևս իցեն այնպիսիք, միայն թէ ըստ համեմատութեան վտանգի տուժիցն կամ յուսոյ խափանեալ շահուն պահանջեսցի շահ. զի և արկանել զանձն ի վտանգ անբաւոյգ տուժից, և զրկիլ ի յուսոյ անստոյգ շահից վասն փոխատուութեան, վարձուց են արժանի։

153. Չորրորդ պատճառ պահանջելոյ փոխատուի ըղշահ, է վտանգ կորստեան դրամագլխոյն։ Այսմ ուժգին հակառակ կան ոմանք յաստուածաբանից. այլ հասարակաց վարդապետութիւն, ևս և հետևողաց հա-

ւանականագոյն կարծեաց, ընդունին զայն՝ եթէ միայն ծանր իցէ վտանգն և ոչ սովորական։ Ո՞ի յանձն առնուլ զվտանգ այնպիսի, վարձուց արժանի է աներկբայապէս, որպես ուսուցանէ սուրբ Աստուածային. և ժողովէ լատերանեան առ Լևոնիս Ա. ի դատապարտելն զվաշխ՝ յաւելու. «Եթէ միայն չգուցէ վտանգ կորըստեան դրամագլխոյն, կամ ծախուց առ ի փրկել զայն»։

154. Այլ եթէ փոխառուն կամիցի տալ դրաւական ապահովութեան, պարտ է փոխատուին ընդունել զայն և չպահանջել շահ։

155. Ի նմին լատերանեան ժողովի ընդունելի եղեն դրաւարանք, յորս պահանջի շահ ինչ ի վերայ դրամոյն տուելոց ի փոխ՝ առ ի ծախս պաշտօնեից դրաւատանն, և ի պահպանութիւն դրաւուցն՝ որ ի լրանալ սահմանեալ ժամանակին վաճառին ի հատուցումն փոխոյն, և յաւելեալն անտի գնայ առ տէր գրաւոյն՝ եթէ գոյր, ապա թէ ոչ՝ բաշխի աղքատաց, կամ յաւելու ի նպաստ դրաւատանն։ Ամենք վասն կարօտելոց եւեթ համարին սահմանեալ զդրաւարանս, և նոցա եւեթ օրէն զայս պիսի փոխատուութիւն. այլ զայս պարտ է իմանալ զաղքատ դրաւատանց, զի մի գուցէ պակասեսցեն դրամք ի փոխատուութիւն կարօտելոց՝ որոց վասն զվաւաշպէս են սահմանեալ։

156. Զորրորդ պատճառ պահանջելոյ ինչ ի վերայ դրամագլխոյն՝ է տոյժ պայմանեալ, այսինքն զի եթէ փոխառուն ոչ հատուսցէ ի պայմանեալ ժամանակին զդրամագլուխն, տուժեսցի ինչ ի վերայ նորին։ Ո՞այս եւս շահ օրինաւոր համարին հասարակաբար աստուածաբանք. զի տոյժն այն ոչ ի շահ փոխոյն սահմանի, այլ ի զգուշութիւն հատուցման նորին ի պայմանեալ ժամանակին։ Ապակայն և առ ի պահանջել զայս՝ խընդրին պայմանք երեք։ Առաջին՝ զի յամեցումն հատուցմանն չիցէ սուղ ինչ և ակամայ. երկրորդ՝ զի իցէ տոյժն չափաւոր և համեմատ յանցանաց փոխառուին. և երրորդ՝ զի յանձն առցէ փոխառուն հատուցանել զփոխն ի ժամանակի՝ յորում արդարև կարիցէ հատուցանել. ապա թէ ոչ, ի վաշխս համարին դաշինքն։

157. Ամենք զտոյժս զայս ոչ պարտ համարին փոխառուի հատուցանել նախ քան զվճիռ առենական.

այլ Եսոիոյ, Թուրնելի, Միլուեսթրոյ, Սալմասի կեանք և այլք պարտ համարին զայն և առանց ատենա- կան վճռոյ. զի տոյժն այն մեռն է դաշինն և ոչ՝ի պա- տիժ համարեալ:

Պետելի է աստ, զի չէ ըստ ինքեան օրինաւոր պայ- մանն այն ժառանգելոյ փոխատուին բովանդակ զգրա- ւականն՝ ի չհատուցանել փոխառուին՝ի պայմանեալ ժամանակի զփոխն: Այսն որոյ պարտ է փոխատուին զյաւելուած գնոյ գրաւականին դարձուցանել առ փո- խառուն, հանդերձ պտղովքն՝ եթէ իցէ գրաւականն պտղաբեր:

158. Խակ առ՝ի դիտել եթէ իցէ օրինաւոր դաշն փոխատուութեան թէ ոչ, պարտ է ըստ ուսուցանելոյ սրբոյ Գաբինայոսին համարել՝ի վաշխ զամենայն վարձ՝ զոր գնոյ է ստանալ. վասն որոյ չհամարի՝ի վաշխ, եթէ որ պահանջիցէ ընդ փոխոյ զբարեկամութիւն՝ զոր չէ մարթ գնոյ ստանալ: Այլ ոչ է օրէն պահանջել բարերարութիւն ինչ իբրև պարտս բարեկամութեան և շնորհակալութեան, որպէս յաւելու Հնովկենտիոս ԺԱ. ՚ի նմին դատապարտեալ վարդապետութեան՝ զոր ՚ի վեր անդր (143) ածաք. թէ «Ոչ է վաշխ՝ պա- հանջել ինչ ՚ի վերայ դրամադրելոյ իբրև պարտս բա- րեկամութեան և շնորհակալութեան,,. որպէս եթէ փոխատուն պարտս ՚ի վերայ դիցէ փոխառուին տալ ինչ իւր պաշօն. զի մարթ է և այլազգ շնորհակա- լեաց ընծայել զառհատաչեայ, դրուատեօք և մեծա- բանօք բարեկամին, և այլն. իսկ պարտք հատուցանե- լոյ ինչ նմա՝ է վարձատրութիւն, վասն որոյ և վաշխ:

159. Պատ այսմ չէ օրէն և պարտս ՚ի վերայ դնել փոխառուին գնելոյ այնուհետև ՚ի փոխատուէն զկա- րևորս, կամ տալ նմա ՚ի վարձու զտուն իւր, վաճառել նմա զցորեան իւր, տալ ինչ նմա ՚ի փոխ և այլն. զի այս ամենայն ՚ի վարձուց համարի են, քեռն ՚ի վերայ փոխառուին դաշամբն ածելով: Խակ եթէ օք ՚ի տալ զփոխն խնդրիցէ ՚ի փոխառուէն այսպիսի ինչ՝ ոչ որպէս պարտս՝ այլ որպէս շնորհս բարեկամութեան, օրէն է ըստ ուսուցանելոյ աստուածաբանից առ հասարակ:

160. Ոչ օրէն և պարտս ՚ի վերայ դնել փոխա- ռուին, զի ընդ արծաթոյն կամ ընդ ցորենոյ և այլն՝ զոր

'ի փոխ առնու, հատուսցե այլ ինչ. զի և այս համարի 'ի վարձ՝ գնոց ստանալի: Մնդիր է աստանօր թէ օրքո՞ն իցէ դաշն՝ հատուցանելոյ յետ պայմանեալ ժամանակի զփոխին նովին տեսակաւ և քանակաւ, որպէս թէ զցորեան առնուլ 'ի փոխ յամենան օգոստոսի՝ դաշամբ հատուցանելոյ զայն նոյնչափ 'ի մայիսի: — Եթէ հաւասար իցէ կասկած նուազելոյ և առաւելելոյ գնոց ցորենոյ 'ի մայիսի, զնոյն իմա և զայլոց իրաց, և եթէ փոխատուին դիտաւորութիւն իցէ պահել զայն ցմայիս, օրէն է յայնժամ աներկբայապէս. բայց 'ի բաց առեալ զծախս և զվտանգ պահպանութեանն: Այլ եթէ չիցէ վտանգ նուազելոյ գնոց ցորենոյն 'ի մայիսի, և փոխատուին չիցեն կամք պահել զայն, ասելի է ընդ առաւելագոյնս յաստուածաբանից՝ թէ չէ օրէն, և 'ի վաչխ համարի դաշն այնպիսի: Օ՞ի գնել պարտ 'ի վերայ փոխառուին հատուցանելոյ նովին չափով 'ի մայիսի ըզցորեանն՝ յորժամ առաւել արժէ, հաւասար է խնդրելոյ զշահ. վասն որոյ 'ի հատուցման անդ ցորենոյն պարտ է 'ի բաց առնուլ մասն ինչ ըստ յաւելուածոյ գնոյն: Այլ 'ի փոխատուութեան դրամոյ օրինաւոր է պայման հատուցանելոյ զնոյն ըստ թուոյ և ըստ տեսակի, եթէ գէթ չիցէ բարոյապէս ստոյգ տոյժ փոխառուին:

161. Ասկ պահանջել 'ի փոխառուէ որ ինչ պարտք են նմա ըստ արդարութեան, օրինաւոր համարի առ բարոյականս առհասարակ. որպէս պահանջել փոխատուի զի դադարեսցէ փոխառուն 'ի վրէժխնդրութենէ կամ 'ի հարստահարութենէ, և կամ զի հատուսցէ զայլ ինչ պարտս իւր: Ապացաք պարտս արդարութեան, զի ոչ զնոյն է ասել և զպարտուց եղբայրսիրութեան. վասն որոյ ոչ է օրէն 'ի տալ փոխ ումեք 'ի բժշկաց կամ 'ի փաստաբանից՝ պարտս 'ի վերայ գնել նոցա դարմանն տանելոյ կամ զդատ փոխատուին պաշտպանելոյ. զի այս հաւասար է վարձս 'ի նոցանէ պահանջելոյ, պարտս ըստ արդարութեան 'ի վերայ նոցա ածելով որ ինչ սիրոյ ևեթ պարտք են նոցա: Ըստ այսմ Ասուկոյ, Այսման, Պռնաչինա և այլք ոչ օրէն համարին փոխատուի պահանջել 'ի փոխառուէ զթողութիւն անիրաւութեան, զոր ըստ սիրոյ պարտ է նմա ներել, այլ ըստ արդարութեան իրաւունք են նմա խնդրելոյ զհատուցումն

162. Ա՝ աշխատուք և որք միանգամ գործակից լինին նոցա դրականապէս և ծանրապէս ընդդէմ փոխառուացդ, պարտականք են հատուցանել նոցա զվաշխս առեալս. այլ ոչ և զշահս՝ի վաշխից անտի Ճարտարութեամբ խրեանց շահեալս։ Այս հաւանական է զի ժառանգք վաշխառուացդ չիցեն պարտականք՝ի հատուցումն։

163. Պաշտօնեայք վաշխառուացդ, որք գործակից լինին նոցա յիրս ոչ գժպհիս փոխառուացդ, որպէս կրել զարծաթ, ունել զհամար, խնդրել քաղցրութեամբ զհատուցումն վաշխից և այլն, աղատք են՝ի հատուցմանէ. այլ ոչ և որք ստորագրեցան զմուրհակս, և որ պահանջեցին խստիւ և սպառնալեօք զվաշխս։

164. Իսկ որք խրատ կամ արծաթ մատուցանեն վաշխառուի, չեն պարտական՝ի հատուցումն ըստ հասարակաց վարդապետութեան աստուածաբանից, եթէ առնիցեն զայն՝ի նպաստ փոխառուին։

Պիտելի է զի վաշխառուք հրապարակայայտ անուանարկք համարին, կտակ նոցա ոչ է վաւերական, ոչ է օրէն ընդունել զնոսա՝ի հաղորդութիւն, և ոչ՝ի սուրբ տեղւոջ թաղել զնոսա. և որ պիտութեամբ թաղէ զնոսա, անկանի նովին իսկ գործով՝ի բանադրանս։

ՅՕԴՈՒԱԾ ԺԸ

ՅԱՂԱԳՍ ԳՆԵԼՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԵԼՈՑ

165 • Որպուսիմ սակի և իրին :
166 • Առհասարակեայ :
167 • Երբ տէրութիւն իրին անցանիլ ի գնօղն :
168 • Գնել պայմանաւ :
169 • Վաճառք և շահ իրին գնողին միշտ իցէն անկ :
170 • Դաշն վայելելոյ ի պտուղս մինչև ցհատուցումն գնոցն :
171 • Եթէ ոք գնեսցէ արծաթով այլոյ , կամ զայլոյ իր վաճառեսցէ :
172 • Գին արդար :
173 • Ձմուսին և նուազումն գնոյ :
174 • Վաճառ կամակար , և երբ օրէն իցէ վաճառել ծանրագնի :
175–177 • Հասարակաց վաճառք :
178 • Վասն վաղ կամ անագան հատուցման օրէն իցէ այլայլել զգինս :
179 • Գնել զմուրհակ :
180 • Դաշն անդրէն վաճառելոյ :
181 • Դաշն անդրէն գնելոյ :
182 • Որ ինչ յայսոսիկ օրինադանցութիւնք :
183 • 184 • Մենավաճառ :
185–187 • Յոռութիւն վաճառաց :
188 • Որ գիտակն է ածման կամ նուազելոյ գնոյ :
189 • Միջնորդք վաճառաց :
190 • Եթէ երկուց ոմանց վաճառեալ իցէ ինչ :
191 • Ի կորնչել իրին վաճառելոյ :

165 • Որ ի վաւերականութիւն դաշին գնելոյ ինչ՝ կարևոր է սահմանել զգինս իրին , և զիրն վաճառելի՝ ըստ չափոյ կամ ըստ կշռոյ կամ ըստ ակնկալութեան , որպէս որ այսչափ ինչ խոստանայցէ վասն ձկանց՝ որ ի մի արկուած ցանցի ըմբռնիցին :

166 • Երբ իցէ յետ տալոյ առհասարակեայ հրաժարել ի դաշանց , կորուսանելով և եթէ զայն : — Երբ է , այսպէս ի սովորութենէ ընկալեալ , եթէ չիցէ այն վասն առաւելագոյն զգուշութեան տուեալ : Այլ յերկբայս իրին՝ կարէ տուօղն հրաժարել կորստեամբ գրաւոյն . զի ամենայն դաշն համարի եղեալ ըստ ընկալեալ սովորութեան :

167 • Դաշն գնելոյ կատարի հաւանութեամբ և եթէ . այլ տէրութիւն իրին գնելոյ անցանէ ի գնօղն տուչութեամբ նորին , և ընդունելութեամբ գնոյն կամ գէթ

գրաւականի նորին կամ երաշխաւորութեան։ Տես ՚ի վեր անդր (107)։

168. Եթէ պայմանաւ ինչ ոք գնեսցէ, ՚ի կատարել պայմանին՝ համարին գաղինքն վաւերական ՚ի վայրկենի գնելոյն, և յայնմհետէ գնողին են անկ պտուղք, եթէ ոչ այլազգ պայմանեալ իցէ։

169. Եպիսկոպտ և կորուստ և շահ սովորաբար տեառն իրին են անկ, սակայն ՚ի վաճառս յայտնի որշեալ իրաց՝ չև տուեալ իրն գնողին, կամ տուեալ իսկ առանց ցուցակի գնոյն, այս ինքն չև անցեալ տէրութեան իրին ՚ի գնողն, կորուստ և շահ գնողին են անկ։ Այլ միայն եթէ յայտնապէս այլազգ պայմանեալ իցէ նոցա, կամ չև ևս յանձնեալ վաճառն գնողին՝ յամեալով վաճառականին տալ նմա զայն, կամ յանիրաւի առնելոյ վաճառականին՝ կորուսեալ վաճառն կամ ապականեալ յայնժամ վաճառականին է անկ կորուստն։ Բաց առեալ զայսոսիկ պայմանս, որպէս կորուստ իրին անկ է գնողին՝ նոյնպէս և պտուղք նմա են անկ. և քաղաքական օրէնք ՚ի մասին յայսմիկ հակառակք՝ մերժեալ են ՚ի կանոնական իրաւանց որպէս նպաստաւորք վաճառուոյ։

170. Որ՞ն իցէ վաճառականի վաճառել ինչ պայմանաւ ինքնին վայելելոյ ՚ի բերս նորա միանչ չև զգինան ընկալեալ, թէպէտ և տէրութիւն նորին անցեալ իցէ ՚ի գնողն տուչութեամբ իրին և ցուցակի գնոյն։ — Ոմանք ոչ օրէն համարին. այլ հասարակաց և հաւանականագոյն կարծիք զհակառակն հաստատեն, զի օրէն է վաճառականի պահել իւր զտէրութիւն պիտառութեան մինչև ընկալեալ զգինան։

171. Եթէ ոք գնեսցէ ինչ օտարին զրամվք յանուն իւր, իւր է գնեալն. ՚ի բաց առեալ զդրամն եկեղեցւոյ, կամ զորդւոյ չև ազատացելոյ, կամ զգինուորի, զի նոցա է յայնժամ գնեալն։ Ընդ հակառակն եթէ ոք վաճառէ զօտարին ինչ, թէպէտ և անվաւեր է վաճառումն, սակայն տէր է գնոյն. որ եթէ գիտութեամբ իցէ վաճառեալ, պարտական է հատուցանելոյ զամենայն տոյժս գնողին՝ ՚ի դառնալ վաճառին ՚ի բնիկ տէր իւր. իսկ եթէ անգիտութեամբ, ոչ է պարտական՝ ոչ զտոյժս հատուցանելոյ, և ոչ դատաստանաւ զվաճառեալն յետս պահանջելոյ ՚ի գնողէն, այլ դարձուցանելոյ

Եւթն զգինսն առ գնօղն՝ ի պահանջել առեւին ի նմա-
նէ զգնեալն : Սակայն ազատ և յայսմանէ գտանի եթէ
ի վաճառելն դաշնագրեալ իցէ յայսոսպէս չգարձու-
ցանել զգինսն . կամ եթէ վնաս ինչ յաւելեալ այնուիկ
ի մեծութիւն՝ պարզևելով այլում յանգիտս ըզնկա-
լեալ գինսն , և այլն . և զարձեալ եթէ գիտիցէ գնօղն
զի այլոց ուրուք է գնեալն , և ոչ վաճառողին : Այլ եր-
բորդս այս զօրէ յարտաքսին առենի . իսկ ըստ խղճի մե-
տոց պարտական է վաճառօղն ի հատուցանել զգինսն ,
եթէ վնաս առենին տայժս ի վերայ արկեալ գնողին տա-
լոց զայն ի գանձ արքունի վասն նենգամտութեանն :

172. Աթէ պետութեան սակ հատեալ իցէ իմիք ,
պարտ է ամենեցուն՝ և և եկեղեցականաց՝ պատկառ
կալ նմին : Իսկ այլոց իրաց երբակի գինք են , խոնար-
հագոյն , միջին և բարձրագոյն , երեքեան և օրինա-
ւորք : Գինս իրաց վաճառելոյ պարտ է հատանել
ըստ ժամանակին յորում վաճառի և ըստ տեղւոյն ուր
վաճառի : Գինք իրաց պատուականաց և գժուարագիւ-
տից ընդարձակագոյնք քան զսովորականացն հաշուին .
զոր օրինակ զգինի , որոյ չափ ինչ վաճառի հնգից զու-
ռուշից , օրէն է գնել չորից կամ վեցից . որոյ չափ վա-
ճառի տասանց , օրէն է գնել ութից կամ երկոտասա-
նից . որոյ չափ վաճառի հարիւրոց , օրէն է գնել իննը-
սուն և հնգից կամ հարիւր և հնգից : Իսկ զծանրագինն
և զաղնիւ իրաց ոչ գնոյն է ասել . զի զգոհար վաճա-
ռեալ քսան հազար զուռուշից , օրէն է գնել երկոտա-
սան հազարաց : Աթէ որ աւելի քան զկէս գնոյ իրիք
տուժեալ իցէ ի վաճառեն , օրէն է նմա եղծանել զգ-
դաշինսն , և պարտ է գնողին հատուցանել զթերին մին-
չև յօրինաւոր գինս . իսկ եթէ երկոքին և այ չգիտիցեն
զօրինաւոր գինս իրին , օրինաւոր այն է՝ յոր միաբանին :
Գիտելի է ասա զի սովորաբար չընծայեն գնօղք հա-
ւատս բանից վաճառողացն . վասն որոյ վաճառականք ի
ստեղն չեն պարտական հատուցանելոյ զյաւելուած գնոյ
վաճառացն , եթէ չիցէ նոցա առաւել քան զբարձրա-
գոյն գինսն պահանջեալ , և եթէ ոչ ստուգիւ գիտաս-
ցեն՝ զի գնօղն հաւատացեալ բանից իւրեանց տուեալ
է զայն գինս :

173. Գինք վաճառաց ածեն ի յաձախութենէ գը-

նողայ կամ՝ ի նուազութենէ իրաց. և ընդ հակառակն՝ նուազեն՝ ի սակաւութենէ խնդրողաց կամ՝ ի յաձախութենէ վաճառաց: Պարտ է՝ ի մտի ունել զկանոնս զայս՝ ի լուծումն խնդրոց բազմաց, զորոց առաջի կայ մեզ ասել: Պիտելի է և զայն, զի հասարակաց վարկ երկրին՝ ուր իրն վաճառի՝ օրինաւոր կացուցանէ զնր և է գինս:

174. Որչն է գնողի նուազ քան զխոնարհագոյն գինս տալ իմիք՝ որ չէ նման պիտանի, և գնէ զայն՝ ի ընորհս վաճառողին: Ասն որոյ ոմանք՝ ի բարոյական նայ հանարին կէս՝ ի կէս նուազել գնոյ կամակար վաճառելոյ իրաց. այլ հասարակաց և հաւանականագոյն կարծիք նուազեցուցանեն զերիր մասն արժէքոյ նոցա, զի յայսպիսի յօժարական՝ վաճառս նուազագոյն է քան գնողայ: Այս այսմ և որ բազում՝ ինչ գնէ՝ ի միասին, օրէն է նմա նուազ քան զխոնարհագոյն գինսն հատուցանել. իսկ վաճառողին ոչ է օրէն պահանջել աւելի քան զբարձրագոյն գինս վասն կարօտութեան կամ ցանկութեան գնողին, այլ մերթ է նմա պահանջել ըստ այլոց պատճառաց: Ցախ՝ վասն տուժից կամ խափանածոյ շահուն, որ՝ ի վաճառաց անտի հասանել նմա, թէպէտ և սակ հատեալ իցէ այնոց՝ ի պետութենէ. այլ պարտ է նմա զեկուցանել զայն գնողին: Յերկրորդ՝ եթէ վաճառողին յոյժ սիրելի ինչ իցէ վաճառեալն: Յերրորդ՝ եթէ անգիւտ ինչ կամ հանձարոյ ստեղծք իցեն, որպէս գոհար ականք, նկարք ձարտարաց և այլն. զորս թէպէտ և կէսք՝ ի բարոյականաց օրէն հանարին վաճառել որոց և իցէ բարձրագոյն գնոց, բայց հաւանականագոյն կարծիք և այսմ սահման հատանեն: Չորրորդ՝ եթէ մանրամասնաբար ոք վաճառիցէ ինչ, վասն առաւելագոյն աշխատանացն և կորստեանց:

175. Ի հասարակաց վաճառս, ուր գնողք երևելս առնեն զիրերօք՝ ի գինս, օրէն է վաճառել և գնել որոց և իցէ գնոց՝ յոր ոք առնուն վաճառք, եթէ միայն չիցէ ինչ նենդ՝ ի կողմանէ վաճառողին ծածկելոյ զթերութիւն վաճառոյն, կամ գինընծայս կեղծս՝ ի ներքս մուծանելոյ առ՝ ի յաւելուած գնոցն. կամ՝ ի կողմանէ գնողին՝ սպառնալեօք կամ ժառանգեամբ խափանելոյ զայլս մի առաւելագոյն գինս ընծայել:

176. Խայց Թէպէտ և ամենք ի բարոյականաց ոչ օրէն համարին ի հասարակաց վաճառս և զաղերս իսկ ի կիր արկանել՝ զի մի յաւելցեն այլք զգինս, սակայն հասարակաց կարծիք աստուածաբանից ներեն զայս։

177. Այլ օրէն լինէ ի հասարակաց վաճառս միաբանել գնողաց առ ի չյաւելուլ զգինս։ — Ակնք յաստուածաբանից օրէն համարին զայս, յետ ընծայելոյ գէթ զխոնարհագոյն գինս վաճառացն. բայց կարգինալ Ուկոյ և այլք ի հմուտ բարոյականաց զհակառակն ունին։ Զի ի խոնարհագոյն գինս անդ կամ ի միջինն իսկ զկայ առնլով գնողաց, խափանեն զառաւելագոյն շահ վաճառողին՝ զոր մարթ էր ումեք ի նոցանէ ընծայել, և գործեն ընդդէմ իրաւանց վաճառողին՝ հարկեցուցանելով զնա տալ զկին խոնարհագոյն գնոյ։

178. Իչ է օրէն յաւելուլ կամ նուազել զգինս վաճառաց վասն վազ կամ անագան հատուցման նոցին, եթէ չկացեն այլ օրինաւոր պատճառք վասնզի կամ տաժից կամ խափանածոյ շահից, զորս պարտ է միշտ զեկուցանել գնողին՝ որպէս ասացաք ի թիւն 149։ Այն օրոյ վաճառականք, որ առաւելագոյն գինս պահանջեն իրաց ի հաւատ վաճառելոյ, դժուարաւ արդարանան. զի ի վաճառելն այնպէս՝ առաւելագոյն վաճառս տան ի դուրս, և ընդն այնուիկ զնափանած շահից։ Խայց Ուկոյ, Լեսիոյ, Վրանոյ, Մոլինա, Մոլետոյ, Սանքէզ, Վասթրոփալ, Պոնաչինա և Սալմատիկեանք, ներելի համարին զայն նոցա ըստ հասարակաց վարկի՝ որ հաւանականաբար արդարացուցանէ զայնպիսի վաճառս վասն յաճախութեան գնողաց և նուազութեան վաճառողաց, և վասն վտանգի կորստեան պահանջից։ Զնոյն է ասել և զգնողաց, որք ի կանխիկն հատուցանել՝ նուազագոյն ընծայեն գինս. զի յայսպիսի տուրս առաս բազումք են վաճառողք, և գնողք սակաւք. և վտանգ իսկ է ոչ ունելոյ զընտիրս ի վաճառաց։

179. Ըստ այսմ օրէն համարին բազումք յաստուածաբանից գնել նուազագոյն գնոյ և զմուրհակս պարտուց, և ս և զապահովս. զի այլ է ունել զգրաման, և այլ զիրաւունս ունելոյ, որոյ նուազագոյն են արժէք առ հասարակաց վարկ. զի այսպիսի իրաւանց ոչ պակասեն վտանգք, նեղութիւնք և ծախք ի պահանջելն։ Այլ

ոչ գնայն է ասել և զմուրհակաց սեղանաւորաց, ուր չիք
ինչ բալսյապես վտանգ կորստեան, և միայն բացակա-
յութիւն անձինն և նեղութիւն պահանջման օրինաւոր
կացուցանեն զշահ։

180. Օրէն է և վաճառուածն պայմանեալ՝ այն է վա-
ճառելոյ անդրէն նմին ինքեան, յորմէ գնի ինչ. այլ
խնդրին առ այս պայմանք երեք՝ Նախ՝ նուազել զգինան
երիր կամ չորիր մասամբ, և յայնժամ օրինաւոր է դաշն
պարտականութեան գնողին՝ վաճառելոյ զայն անդրէն
նովին գնով. և ա՛ւ ի բարձրանալ գնոյ իրին։ Երկրորդ՝
զի վտանգ իրին անկ իցէ գնողին։ Երրորդ՝ զի ի վա-
ճառելն անդրէն տացէ ոք զիրն որպէս և ընկալաւ ի
գնելն՝ պտղովքն հանդերձ կամ առանց պտղոց։

181. Օրէն է դարձեալ, ըստ հաւանականագոյն
կարծեաց աստուածաբանից, դաշն անդրէն գնելոյ զը-
վաճառն. այսինքն պարտ ի վերայ դնել վաճառողին
գնելոյ զայն անդրէն յորժամ կամք իցէն գնողին. բայց
և առ այս խնդրին պայմանք երեք՝ Նախ՝ զի մի իցէ ի
նմա դիտաւորութիւն վաշխառութեան։ Երկրորդ՝ զի
առաւելագոյն գնոց տացի իրն յառաջնումն վաճառման
համեմատ պարտուցն, զոր յանձն առնու վաճառօղն։
Երրորդ՝ զի վաճառօղն չիցէ պարտական գնելոյ անդրէն
նովին գնով. այլ ի նուազել գնոց իրին՝ հատուցանել
որ ինչ արժէ ի գնելն անդրէն. իսկ յառաւելուլ գնոց
նորին՝ առաւելցի ի նպաստ վաճառողին։ Ըստ այսմ
լինի իսկապէս առևտուր և ոչ փոխատուութիւն, զի
մինչև ցանդրէն վաճառումն՝ գնողին է անկ վտանգն,
որ ի փոխատուութեան ոչ է այսպէս։

182. Արժէ և չէ իսկ օրէն վաճառել ինչ ումեք՝
յայտնի կամ լռելեայն դաշամբ գնելոյ զայն անդրէն նը-
ւազագոյն գնոց. և դատապարտեալ իսկ է յանդիմանե-
տեայ ժԱ. հակառակն վարդապետութիւն։ Ըստ այսմ
ընդդէմ օրինաց է և՛ ի վաշխառութեան համարի՝ հակա-
ռակափոխն անուանեալ դաշն, այս ինքն առնուլ ինչ յու-
մեքէ ի վայելումն պտղոց իրին, և աւանդել նմա դրամն
ի սիրառութիւն, որ է իսկապէս վաշխառութիւն։

183. Վճռավաճառութիւն ոչ է օրինաւոր ըստ եր-
կուց այսոցիկ օրինակաց։ Վ՛ի եթէ արգելուցու ոք չը-
մուծանել ի նեղքս այլ վաճառ, որպէս զի ինքն աւելի

վաճառեսցէ ՚ի միում հասարակաց : Այլ եւս՝ եթէ ոք կամ ոմանք գնեսցեն բազմադակ ղվաճառն , առ ՚ի պահանջել ապա առաւել քան զարժէքն գինան՝ զոր արժելոյ էր վաճառն , եթէ չէր մենավաճառութեան համագրաւեալ գայն : Այլ եթէ ոք կամ ոմանք գնեսցեն ղվաճառս ինչ յետ ընդդէմ հասարակաց պիտոյից՝ առ ՚ի վաճառել ապա չափաւոր շահիւք , օրէն է ըստ հասարակաց վարդապետութեան բարեյականաց : Յաւելուն Ռուկոյ , Մոլինա , Լեսսիոյ և Հոլզման , զի ոչ ընդդէմ արդարութեան գործեն՝ ՚ի վաճառելն եւս ըստ բարձրագոյն գնոյ , և ոչ ընդդէմ ինչ եղբայրսիրութեան՝ եթէ միայն չտայցեն պատճառս այլոց եւս ծանրագնի վաճառելոյ : Այսան որոյ եթէ միաբանեսցեն ՚ի չվաճառել նուազագոյն գնոյ քան զբարձրագոյնն , թէպէտ և չմեղանչեն ընդդէմ արդարութեան ըստ հաւանական կարծեաց կիսոց ՚ի բարեյականաց , սակայն ոչ է մարթ աղատ համարել զնոսա ՚ի ծանր մեղաց ընդդէմ եղբայրսիրութեան ըստ ամենեցուն միաբան վարդապետութեան :

184 . Ասացե ՚ի միաբանել ոմանց յանիրաւ մենավաճառ , և յամբառնալ զգինս վաճառաց ՚ի բարձրագոյնն , օրէ՞ն իցէ և այլոց վաճառել նովին գնով : — Պոնսէնա , Վեռինա , Սալմատիկեանք և այլք օրէն համարին վասն լինելոյ գնոյն ՚ի սովորութիւն : Ասացե Վեպել Լոյ , Ծատիխա , Վոնչինա և այլք չընդունին զայն . քանզի անիրաւ գինն այն , թէպէտ և հասարակաց լեալ , սակայն միշտ է անիրաւ . և ոչ է պարտ համարել արդար որ ինչ յանիրաւութենէ գայ յառաջ :

185 . Յոռութեան ՚ի վաճառս մարթ է ունել տեղի ըստ գոյացութեանն , ըստ չափոյ և ըստ հանգամանաց : Եթէ ըստ գոյացութեանն իցէ յոռի , անվաւեր են դաշինքն . և նենգաւորին պարտ է դէպ զոյժս գնողին հատուցանել : Ասացե գիտելի է զի չէ անիրաւ զվաճառս , կատարելագոյնս քան զորս վաճառինն սովորաբար , վաճառել ըստ հասարակաց գնոյ՝ եթէ և խառն ՚ի նոսա կայցէ և հասարակագոյն ինչ . որպէս զգինի ամենաւագոյն , այլ ջրախառն , օրէն է վաճառել ըստ հասարակաց գնոյ . բայց միայն մանրամասնաբար յարբեալն առ օրին , և մի առ ՚ի պահեստ , զի գիւրագոյն ապականի գինի ջրախառն :

186. Եթէ ՚ի չափն իցէ յոռւԹիւնն, պարտ է վաճառականին հատուցանել զԹերին. բայց եԹէ սակ անիրաւ հատեալ իցէ վաճառացն, կամ գին անիրաւ վասն գնողացն մեծավաճառուԹեան, ոչ անհաւանելի Թուի ըստ ուկցի, այմանայ, ՎասԹրոխալի, Աղմատիկեանց և այլոց՝ Հապ Թերի ՚ի կիր արկանել, որ Հապ բաւական իցէ առ ՚ի ՀայԹայԹել զնոսաւորացն գինս:

187. Սակ եԹէ յոռւԹիւն ՚ի Հանգամանն իցէ, պարտ է զանազանել: ԵԹէ յայնի իցէ յոռւԹիւնն, զիք ինչ պարտք ծանուցանելոյ գնողին. զի առանց իսկ ծանուցանելոյ՝ վաւեր են դաշինքն, եԹէ միայն չգիտէ գնողին, և կամ յոռւԹիւնն այն չիցէ յայնպիսի ինչ Հանգամանս՝ զոր գնողին յայտ արարեալ իցէ չկամել: Սակ եԹէ անյայտ իցէ յոռւԹիւնն, պարտ է վաճառականին ծանուցանել զայն գնողին, և կամ դէԹ յայտ առնել՝ զի չերաշխաւորէ Հանգամանաց վաճառոյն:

188. Որչ՞ն իցէ ուժգին վաճառել ինչ ըստ Հասարակաց գնոյ, եԹէ գիտիցէ զի ընդ Հուպ վաճառելոց է այն գիւրագնի: — Ասուրբ Գրիգորիոսին և աստուածաբանք գրեԹէ առ Հասարակ, ընդդէմ սակաւուց ումանց, յորժ Հաւանականաբար օրէնն Համարին զայն. զի ՚ի վաճառականուԹեան ոչ նկատին Հանդերձեալ գինք, այլ առժամայնք. և այսոքիկ ոչ ըստ առանձինն ինչ գիտուԹեան, այլ ըստ Հասարակաց վարկի: Ետ այսմ օրէնն է և այս գնել ուժգին զվաճառս ըստ առժամայն գնոցն, ԹէպԹ և գիտիցէ զի ընդՀուպ ծանրագնի վաճառելոց իցէն: Եսիոյ, Ոռնալինա, Ասուրնելի, Հանքալեա, և Այմատիկեանք, և ոչ իսկ ընդդէմ եղբայրսիրուԹեան Համարին զայսպիսի տուրԹառ, եԹէ միայն չիցէ վանգ գնողին անկանելոյ այնուիկ ՚ի ծանր կարօտուԹիւն, և կամ չվաճառիցէ այնմ՝ որ գնէ առ ՚ի պահել, կարելով վաճառել այլում՝ որ գնէ առ ՚ի վաճառել:

189. Որ ընդունի ինչ զի առ ՚ի վաճառել, ԹէպԹ և սակ ՚ի տեառնէ իրին Հատեալ իցէ, չկարէ ունել իւր գործելուածն՝ եԹէ առաւելագոյն գնոց վաճառեսցէ զայն. Թէ և տարադէմ գնայցէ առ ՚ի վաճառել

զան և աշխատեսցի։ Այլ միայն եթէ նախ՝ այնպիսի անսովոր ջան ի գործ արկանիցէ, որ աբժանի իցէ շահիցն՝ որ ի յաւելուածոյ անտի. երկրորդ՝ եթէ յաւելցէ աղնուացուցանել զվաճառն. երրորդ՝ եթէ գուշնաքեայ ինչ իցէ շահն. չորրորդ՝ եթէ գուցէ ինչ լաւագոյն դաշն շահելոյ զաւելին քան զսահմանեալն սակ. հինգերորդ՝ եթէ յետ զսովորական ջան ի գործ առնելոյ, ինքնին իսկ միջնորդ վաճառոյն գնեսցէ զայն գնոյ՝ զոր գտանէ, և ապա վաճառեսցէ զայն շահիւք։ Օրէնսդիր է իմանալ և գնոցանել, որ վասն այլոց գնեն ինչ. վասն որոյ և դերձակք, որք ինքնին գնեն զնիւթ զգեստուցն յօրինելեաց, չկարեն պահանջել աւելի ինչ քան զգինս՝ զոր հատուցանեն, եթէ չիցէ վաճառականին վասն բարեկամութեանն ընդ նմա և վասն յաճախելոյ նորա առ ինքն՝ նուազեցուցեալ ինչ ի գնոցն։

190. Եթէ երկուց ոմանց իցէ ինչ վաճառեալ, նմա է անկ՝ որում տուեալ իցէ իրն ընդունելութեամբ գնոցն կամ գրաւականի, որպէս ասացաք ի թիւն 167։ Այլ եթէ սա գիտելով զի վաճառեալ է իրն այն այլում, և գնեսցէ, պարտական է հատուցանելոյ զայն նախնումն գնողի. այլ յետ ատենական վճռոյ, եթէ միայն չիցէ իւր հրապուրեալ զվաճառականն ի վաճառել զայն ինքեան. կամ եթէ նախկին գնօղն չիցէ սրբբաւայր, կամ մանուկ չև յաւագոյթ հասեալ, և կամ համալսարան. և կամ դարձեալ եթէ ոչ զայն ի պարդև ընկալեալ իցէ. զի պարտական է յայնժամ հատուցանելոյ զայն միւսումն գնողի, ի խնդրել նորա զայն յառաջ քան զլրումն ամի։

191. Եթէ վաճառն յայտնի և որոշեալ ինչ իցէ, որպէս տուն կամ հօտ և այլն, ի կորնչել յարկածից պատահարաց՝ գնողին է անկ կորուստն, եթէ միայն չիցէ վաճառողին տարապարտ յամեալ ի յանձնել նմա զայն։ Իսկ եթէ չիցէ յայտնի ինչ և որոշեալ՝ որպէս տասն ոչխար ի հօտէ, կամ ըստ չափոյ և եթէ իցէ որոշեալ՝ որպէս յայս ինչ տակառէ գինի, այսչափ ինչ գնոց առ ստոմանն, յայնժամ վաճառականին է անկ կորուստն մինչև աւանդեալ զոչխարսն կամ չափեալ զգինին. եթէ միայն չիցէ գնողին յամեալ տարապարտ յընդունելութիւն գնելոց իրացն։ Այլ յաւելուած և նուազումն

իրին՝ գնողին միշտ է անկ, եւ և յառաջ քան զընդունելութիւն նորին. իսկ յետ ընդունելութեան՝ և կորուստ իրին նմա է անկ, թէպէտ և չէ իւր զգիենան հատուցեալ, և ոչ գրաւ տուեալ։

ՑՕԴՈՒԱԾ ԺԹ

ՑԱՂԱԳՍ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

192. Ո՞ւմ իւր արգելեալ վաճառաշահ, և ե՞րբ իւր ծանր մեղք. զինչ եթէ եկեղեցական ոք ՚ի ձեռն այլոց ուրուք առնիցէ վաճառաշահ, և կամ ՚ի շահ այլոց։

193. Սահմանալ խաչն վասն արօտի իւրոյ։

194. Վաճառել առաւելագոյն գնոց, առ ՚ի գնել սակաւագին. գնել շատ և այլն. և զինչ եթէ հարկ ՚ի վերայ կայցէ։

195. Իգ՞ օրէն եկեղեցականի հոգաբարձութիւն, գործակալութիւն և այլն։

192. Վաճառականութիւն է յատկապէս՝ գնել ինչ առ ՚ի վաճառել զայն շահիւ, առանց փոփոխութեան իրին։ Վաճառաշահ այսպիսի արգելեալ է ընդ ծանր մեղաց կրօնաւորաց և եկեղեցականաց՝ որոց ընկալեալ իցէ զսուրբ կարգ, այլ ոչ և փոքր աստիճանաւորաց՝ եթէ չվայելիցեն ՚ի հաս եկեղեցական, ըստ Հասարակաց վարդապետութեան աստուածաբանից։ Վասն որոյ ծանր մեղանչէ եկեղեցական կամ կրօնաւոր, որ ՚ի գին և ՚ի վաճառս հատանի, թէպէտ և առանց դայթակղութեան, թէպէտ և ոչ ՚ի ծանր և ոչ ՚ի վատթար տուրս առնու, որպէս ուսուցանեն քարոզականք առ հասարակ ընդդէմ սակաւուց ոմանց։ Այլ ՚ի մանուշակի մեղաց հաւանականաբար զերծ համարին, եթէ ոք երկիցս կամ երիցս ՚ի նիւթ գուշակեայ, կամ միանգամ ՚ի նիւթ ծանր յանցանիցէ։ Այլ ՚ի մեղաց իսկ ազատ համարին, որ ՚ի ձեռն այլոց արասցէ վաճառաշահ, եթէ միայն ոչ յոյժ զբաղիցի ՚ի վերատեսչութիւն իրացն։ Իսկ որ ընդ հակառակս ՚ի շահ այլոց առնէ վաճառականութիւն, ըստ յայտարարութեան Կենեդիկտոսի ԺԴ, անկանի ՚ի նոյն պատիժս որպէս թէ առնէր վասն իւր. բայց միայն եթէ յաշխարհականաց անտի սկսեալ իցէ այն, և չիցէ մարթ առանց տուժից լքանել,

օրէն է յայնժամ եկեղեցականի ընդ սուղ ինչ ժամանակ ի ձեռն այլոց և հրամանաւ սրբոյ գահին պարապել ի նոյն։

193. Այլ օրէն է եկեղեցականաց ստանալ խաչինս վասն արօտոյ իւրեանց, և ապա տալ գայնս ի վաճառ, կամ զննունդս նոցա կամ զասր, որպէս ուսուցանեն աստուածաբանք առ հասարակ. եթէ միայն իւրեանց իցէ արօտն, և ոչ ի վարձու առեալ։ Իսկ առ ի ձարակ անասնոց իւրեանց ունել ի վարձու զարօտս այլոց ոչ օրէն համարին այսման և միտրեր. բայց Աղմատիկեանք և իա ներեն զայն՝ եթէ չիցէ ինչ պատճառ գայթակղութեան. և յոյժ հաւանելի թուին կարծիք նոցա, զի ոչ ուրեք գտանի արգելեալ զայն օրինաց։

194. Օրէն է զարձեալ եկեղեցականաց վաճառել ինչ առաւելագոյն գնոց, առ ի գնել այլ ընդ այնր սակաւագին։ Ըստ այսմ օրէն է նոցա և զգնեալն վասն պիտոյից իւրեանց դիւրագնի, յառաւելուլ գնոց նորին վաճառել. զի չիք յայսմանէ հոգի վաճառականութեան, որ է գնել ինչ դիւրագնի առ ի վաճառել ծանրագնի։ Ըստ այսմ օրէն է նոցա զարձեալ գնել առատագոյն ըզ հնամբարս վասն առանձին պիտոյից, և վաճառել ապա զյաւելեալն։ Օրէն է նոցա գնել և ներկս առ ի վաճառել նկարս, գնել և զասր առ ի վաճառել զասուիս, եթէ միայն չծառայեցուցանիցեն ոստայնանկս, որպէս ուսուցանեն ուկայ, Աղինա, Աալմատիկեանք և այլք։ Զարձեալ օրէն է եկեղեցականի և վաճառականութիւն իսկ առնել յատկապէս ի պահանջել հարկին՝ առ ի հայթայթել զպարկեշտ իւր և զիւրոցն. և առ այս շատ իսկ է ծանր կարօտութիւն առ ի կեալ ըստ պատշաճի կարգին իւրոյ, ըստ հաւանականագոյն և ըստ հասարակաց կարծեաց, ընդդէմ այսմանի՝ որ առ ի հայթայթել զպարկեշտ և եթէ կենաց օրինաւոր համարի եկեղեցականի զվաճառականութիւն։

195. Արգելեալ է եկեղեցականաց և ոհպաբարձութիւն և յանձանձանք՝ որոց վասն հարկ իցէ նոցա տալ աշխարհականաց զհամար անտեսութեան իւրեանց։ Այլ եթէ ի փոքր աստիճանաւորաց ոք յայսպիսի սում պաշտաման իցէ, չկարէ ընդունել զսուրբ կարգ՝ և տուեալ զհամար կամ ապահովութիւն գայնմանէ։ Այլ

ոչ է իմանալ զայս յաղագս սրբազան տեղեաց տեսչութեան, որքոյ և այրեաց հոգաբարձութեան։ Արգելեալ է նոցա և գործակալութիւն աշխարհականաց, եթէ խափանիցին այնուիկ յեկեղեցական պաշտամանց. և եկեղեցական՝ որ յայսպիսի զբաղմունս տայ զանձն՝ կախումն յեկեղեցական պաշտամանց հատանէ նմա, թէպետ և ոչ նովին իսկ գործով՝ այլ՝ի տալ վճռոյ։

ՅՕԴՈՒԱԾ Ի

ՅԱՂԱԳՍ ԴՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ

196. Զինչ է դրամավաճառ։
197. Պայմանք սահմանեալք առ այն։
198. Օրէն իցէ դրամավաճառ անձնական։
199. Օրէն իցէ դրամավաճառ, կարելով դնողին յետս դարձուցանել զայն։
200. Զինչ՝ի կորնչել դրամավաճառոյ՝ կորստեամբ կալուածոյն։
201. Օրէն իցէ վաճառել փոխանակ դրամոյ զպահանջս։

196. Դրամավաճառ է դասն վաճառելոյ զտարեւոր հասս, այս ինքն տալ ուժգին դումար ինչ դրամոյ՝ որպէս բիւր մի զուրուշից, և առնուլ փոխարէն Թ ոչակ տարեկան այսչափ ինչ առ հարիւր՝ի պտղաբեր ստացուածոյ։ Օրինաւոր է այս դասն, եթէ միայն պահեսցին սահմանեալ սորին պայմանք. զի է իսկապէս գնել, ոչ վճաս՝ այլ զկրաւունս հաղորդ գոլոյ պտղոյ կալուածոյ իրիք։ Պայմանք դասինս սահմանեալ են կոնդակաւ Կլիմենտեայ Ե, և Պիոսի Ե։

Սահմանեալք՝ի Կլիմենտեայ են, նախ՝ հաստատել զայն՝ի ստոյգ ինչ օրոշակի, և ընդհանրապէս՝ի վերայ այլոց ևս իրաց։ Երկրորդ՝ զի մարթ իցէ նովին ևեթ գնով դարձուցանել զայն՝ի վաճառօղն։ Երրորդ՝ զի հասքն չիցեն աւելի քան զտասն առ հարիւր։

197. Խոկ սահմանեալք՝ի Պիոսէ են, նախ՝ զի դրամագլուխն՝ի հաստատուն ինչ և՝ի բերրի իցէ զետեղեալ, որպէս՝ի տուն ինչ կամ՝ յագարակ կամ՝ի պաշտօն ինչ մշանջենաւոր և այլն։ Երկրորդ՝ զի գինքն տուչութեամբ դրամոյ հատուսցին։ Երրորդ՝ զի մի իցէ դասն՝ կանխիկ վճաս հատուցանելոյ։ Չորրորդ՝ զի մի հատու-

յօղին պարտք՝ի վերայ կայցեն փոխանակելոյ այլ ինչ կա-
լուածի կորնչել առաջնոյն։ Ինդերորդ՝ զի մի զրկեսցի
նա յիրաւանց վաճառելոյ զկալուածն զայն։ Եղերորդ՝
զի՝ի չկարելն հատուցանել զհասս, չիցէ պարտական
հատուցանելոյ տոյժս կամ շահ ինչ վասն խափանածոյ
շահից։ Քօթներորդ՝ մի՝ի հասից չհատուցելոյ առնել
այլ դրամավաճառ։ Ութերորդ՝ զի ընկալուչ հասին
չկարիցէ ըստ իւրոյ կամաց յետս պահանջել զգինսն,
իսկ հատուցօղն կարիցէ միշտ յետս դարձուցանել զայն.
այլ ըստ բնական իրաւանց օրէն համարի յամենեցունց
դաշն չկարելոյ և նմա յետս դարձուցանել։ Ինն երորդ՝
զի չիցէ մարթ վաճառել այլում զդրամագլուխն. ոչ ա-
ռաւելագոյն և ոչ նուազագոյն գնով, բայց միայն եթէ
ոչ ևս իցէ ստոյգ։ Այլ յաղագս կոնդակիս այսորիկ
սրբոյն Պիոսի ասեն աստուածաբանք զրեթէ առհա-
սարակ, ոչ յամենայն տեղիս լեալ ընդունելի. և ուր
չէ ընկալեալ, ոչ ածէ պարտս ըստ հասարակաց վար-
դապետութեան աստուածաբանից։

198. Որինաւոր իցէ դրամավաճառ անձնական,
այսինքն հաստատեալ՝ի ձարտարութիւն և՝ի վաստակս
ուրուք։ — Կէսք՝ի բարոյականաց ոչ օրէն համարին
զայն. բայց այլք բաղումք և քաջահմուտք հասարակա-
բար և հաւանականագոյնս օրէն համարին ըստ բնական
իրաւանց, եթէ միայն՝ որպէս յիրական դրամավաճառի
ե ստանալ իրաւունս ընդունելոյ պատուոյ՝ի կալուա-
ծոյն, նոյնպէս և յանձնականին իցէ ստանալ իրաւունս
ընդունելոյ պատուոյ՝ի ձարտարութենէ և՝ի վաստակոյ
ուրուք՝ որոյ իցէ գործ ինչ կամ արուեստ, որպէս նը-
կարչի կամ վաճառականի և այլն։ Հայոց ըստ բնա-
կան իրաւանց. զի ըստ կոնդակի սրբոյն Պիոսի խնդրի
կալուած հաստատուն։

199. Որո՞ն իցէ դրամավաճառ յերկաքանչիւրոց իսկ
կողմանց ազատ, այսինքն զի որպէս գնօղն ազատ է՝ի
դարձուցանել զայն յետս, նոյնպէս ազատ իցէ և վաճա-
ռողն՝ի պահանջել զայն յետս, այսպէս միաբանելով
նոցա՝ի դաշն։ — Եսիոյ, Այմանն, Վրաստրոփալ և
այլք օրէն համարին, եթէ միայն պահեսցին պայմանք՝
զորս՝ի վեր անդր (181) ասացաք վասն անդրէնգնե-
լոյ զվաճառեալն։ Հայոց այլք ոչ օրէն համարին, և ա-

պահվածոյն սոյայն է կարծիք՝ ամենեցուն միաբանելով զի վտանգ վաշխի է՝ի միւսումն, զկնի մնալոր։

200. Ի կորնչել կալուածոյն առանց յանցանաց վաճառողի պտղոց նորին, կորնչիցի՛ն իրաւունք գնողի նոցին, իմա ըստ բնական իրաւանց՝ առանց սահմանադրութեան կանդակի սրբոյն Պիոսի։ — Յոթոյ, Վրաստրոփալ, Յալմատիկեանք և այլք անկորուստ համարին զիրաւունս գնողի նոցին, վասն որոյ և պարտ վաճառողին այլ ընդ այնր փոխանակել կալուած։ Իսայ Եսսիոյ, Ուռկոյ, Ինոքաչեա և այլք զհակառակն հաստատեն. զի՛ի դաշինս դրամավաճառի ոչ՝ որպէս նոքայն համարին՝ գլխաւորաբար պարտ՛ի վերայ անձին անկանի և երկրորդաբար՛ի վերայ իրին, այլ՛ի վերայ իրին և եթե՝ վաճառելով զնրաւունս պտղոց նորա. վասն որոյ՛ի բառնալ իրին կամ կալուածոյն, բառնան և պարտք հատուցման։ Ըստ այսմ յաւելուն զի թէ և օրինաւոր է դաշն հատուցանելոյ զհաս և յաւն անպտղութեան, եթէ միայն նուազագոյն քան զայլոց ամայն պայմանեսցի, այլ չէ օրինաւոր դաշն հատուցանելոյ զայն՝ ևս և՛ի կորնչել կալուածոյն։

201. Որ՞ն իցէ վաճառել փոխանակ դրամոյ զպահանջս զոր ունիցի ոք՛ի գնողէն՝ այն է՛ի տեառնէ կալուածոյն։ — Ըստ կոնդակի սրբոյն Պիոսի չէ օրէն, զի պահանջի անդ տուչութիւն դրամոյ. այլ ըստ բնական իրաւանց չէ ինչ անհաւանական օրինաւորութիւն նորին, որպէս հաստատեն Լաւարրոյ, Եսսիոյ, Ալենցիա, և այլք. զի և դրամավաճառ հաւասար է այլոց տուրևառից, որ առնին և դրամովք պահանջից։

ՅՕԴՈՒԱԾ ԻԱ.

ՅԱՂԱԳՍ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԴՐԱՄՈՑ, ԵՒ Ի ՎԱՐՁՈՒ

ՏԱԼՈՑ ՉԿԱԼՈՒԱԾՈՒ

202· Ա՛յլ և այլ ազգ փոխանակութեան դրամոց:
203· Որ ընդունի տարագիծ դրամս:
204· Որ տայ ի վարձու:
205· Որ յաջորդէ տուողին ի վարձու:
206· Ձինչ յարիածս անպատշաճութեան:
207· Օրէն էցէ տալ ի վարձու ղերաւունս մուրհակաց:
208· Սուրհանդակ, որ առ երկուս ոմանս գնայ ի նոյն տեղի:
209· Պարտ էցէ տալ ղվարձ ծառայի ի հիւանդութեան նորա:
210–212· Ա՛յլ և այլ ազգ տալոց ի վարձու:

202· Փոխանակութիւն դրամոց է դաշն ինչ, յորում տուօղն շահի ինչ ի խնդրողէն փոխանակել: Վասն եակ է փոխանակութիւն դրամոց· | ումայափոխութիւն, փոխանակագիր, | րական և Պօս: | ումայափոխութիւն է մանուանց ընդ ստուար դրամ կամ ստուարաց ընդ մանունս փոփոխութիւն. և է այս օրինաւոր: Փոխանակագիր է դրամոց ընդ մուրհակի փոխանակութիւն, այս ինքն տալ ումեք գիր ընդ դրամոց՝ առ ի հատուցանել զայն ապա այլուր, և այս ևս է օրինաւոր, հատուցանելով ի պայմանեալ ժամանակին զդրամն: | րական փոխանակութիւն է տալ ումեք դրամ՝ առ ընդունելոյ զայն այլուր ի ձեռն գործակալի. որ և այս է օրինաւոր: | սկ գօս փոխանակութիւն է կեղծել այլուր զհատուցումն, առ ի պահանջել զշահ դրամոյն՝ զոր ոք ումեք տայ. և է այս ընդդէմ օրինաց, որպէս և ամենայն փոխանակութիւն՝ յորում առանց ինչ վաստակոյ կամ վըտանգի կամ տուժից կամ խափանածոյ շահից՝ պահանջիցէ ոք շահ:

203· Վայելի է աստ, զի եթէ ընդունիցի ոք երբեք յումեքէ դրամ տարագիծ կամ նենգեալ, չկարէ զայն տալ այլում. և եթէ տայցէ, պարտական է հատուցմանն:

204· Տալ ի վարձու է դաշն ինչ, որով աւանդէ ոք ումեք զանձն կամ զիւր ինչ ի սպասաւորութիւն նո-

բին, փոխարէն ընդունելով՝ ի նմանէ վարձ։ Ա՛ր այս գիտելի է նախ՝ զի՝ ի լինել իրին տուեալ անպիտան՝ ի սպասաւորութիւն, ոչ ևս է պարտական առօղն տալոյ վնասատուեալն վարձ։ Գ՛երկրորդ՝ զի ծախք իրին սովորականք և դուշնաքեայք անկ են առողին. իսկ անսովորք, եթէ իցեն կարևորք, անկ են տուողին, եթէ վարձուորին չիցէ պարտ յանձին կալեալ կատարելագործելոյ զընկալեալն՝ ի վարձու։ Գ՛երրորդ՝ զի՝ ի կորնչել իրին՝ չեն ինչ պարտք վարձուորին, եթէ չիցէ յանցանօք նորա կորուսեալ։ Գ՛երրորդ՝ զի չէ օրէն տուողին պահանջել յառաջ քան զպայմանն ժամանակին զտուեալն, բայց միայն Ա. Եթէ վարձուորն յամեսցէ զերկեամ՝ ի հատուցումն վարձուց։ Բ. Եթէ տուեալն կարևոր լիցի տուողին։ Գ. Եթէ այլազգ չիցէ մարթ նորոգել զայն։ Դ. Եթէ վարձուորն զեղծանիցի նուաւ, որպէս եթէ առնիցէ զտունն բոզանոց։

205. Յառանգ տուողին ինչ՝ ի վարձու չկարէ եղծանել զդաշն եդեալ՝ ի կատակողէն, այլ օրէն է եղծանել զայն ժառանգակցի՝ որպէս որ հրիտակ ինչ կամ պարգև՝ ի նմանէ ընդունի, և կամ գնոյ ստանայ ինչ։ Ամանք՝ ի բայ առնուն՝ եթէ զերկիրն մշակեալ իցէ վարձուորին կամ սերմանեալ. այլ օրէնք չթողուն այսմ բացառութեան տեղի, տալով վարձուորին իրաւունս պահանջելոյ՝ ի ժառանգէն զոյժս իւր։

206. Տոյժք անպտղութեան անկ են ըստ ինքեան վարձուորին. այլ ըստ արդարութեան, ուր չիցեն յանցանք ինչ նորա, և արկածք անպտղութեան ծանունք իցեն, որպէս թէ նուազ քան զկէս պտղաբերիցէ երկիրն, պարտ է և վարձուն նուազել ըստ նմին համեմատութեան. որպէս զի՝ ի չպտղաբերել ինչ երկրին, դադարել և վարձուն։

207. Օրէն իցէ տալ՝ ի վարձու զիրաւունս մերանալոյ։ — Ոսա հասարակաց կարծեաց ոչ է օրէն։ Այլ միայն եթէ զբաղքատաց չկարիցէ շրջել՝ ի մոյ, և՝ ի ձեռն այլոյ ուրուք մերանայցէ։

208. Ուրհանդակի՝ ի նոյն տեղի առ երկուս ումանս երթելոյ օրէն իցէ յերկաքանչիւրոյն իսկ պահանջել բովանդակ զվարձս։ — Ա՛ռաւարաց օրէն է աներկբայ-

ապէս ըստ ընկալեալ սովորութեան. իսկ այլոց հա-
ւանականաբար օրէն համարի Հայրն Յովհննա պահան-
ջել յերկրորդէն կէս ի կէս: Բայց Եսթիր, Այման,
Վասթրոփալ և Աքբուա հաւանականաբար օրէն
համարին պահանջել յերկաքանչիւրոց բովանդակ ըղ-
վարձն, իբր զի ըստ դիպաց պատահումն է հրեշտակու-
թեան սուրհանդակին երկոցունցն ևս սպասաւորել:

209. Պարտ իցէ տանուտեառն տալ ծառայի զվարձ
տարեւոր, եթէ զամիսս ինչ անպիտան լեալ իցէ նա ի
ծառայութիւն վասն խօթութեան: — Հասարակաց
կարծիք, ընդդէմ սակաւուց ոմանց, ոչ պարտ համա-
րին՝ եթէ չիցէ այլազգ ինչ ուրեք սովորութիւն. և ա-
ռաւելագոյնք ի բարոյականաց և ոչ զծախս հիւանդու-
թեանն պարտ համարին տանուտեառնն, եթէ չիցէ
ծառայն ի ծանր կարօտութեան:

210. Եւ այլ ազգ տալոց ի վարձու զերկիր կամ
զտուն. այս ինքն ի վարձ մշտնջենաւոր կամ երկարա-
ժամանակեայ՝ գէթ ընդ ամն տասն, զաշամբ լաւա-
յուցանելոյ զայն: Ոչ ի թէպէտ և ուղղակի տերու-
թիւն կալուածոյն կայ և միայ ի տէր նորին, այլ տե-
րութիւն պիտառութեան անցանէ ի վարձուորն՝ պար-
տականութեամբ հատուցանելոյ տուրս տարեկան: Ե-
թէ զամն 3 ոչ հատուսցէ զտուրսն, իրաւունք են
տեառն կալուածոյն լուծանել և զդաշն մշտնջենաւոր,
և առնուլ յետս զկալուածն. իսկ վասն կալուածոյ ե-
կեղեցականաց բաւէն և ամք 2: Եթէ կորիցէ ևս
կալուածն ըստ մասին, շատ է զի մի սպառնսպուռ իցէ
կորուստն, ոչ է օրէն նուազել ինչ ի տրոյն. նմանապէս
եթէ և պտղոյն պատահեսցէ կորուստ ծանր, իմա եթէ
տուրքն իցեն թեթև առ համեմատութեամբ պտղոյն.
ապա եթէ ծանունք իցեն իբր հաւասար պտղոյն, ար-
դարութիւն ինքնին պահանջէ զնուազումն նոցին:

211. Հանգոյն սմին է և դաշն տալոց հպատակաց
երկիր, հաւատարմութիւն և մեծարանս ի նոցանէ փո-
խարէն պահանջելով:

212. Յե երկաքանչիւրոց սոցա, եթէ մշտնջենաւոր
վարձաւորաց և եթէ պէսպակութեան պարտ չանձն
առելոց, օրէն է առ այլս նոյնին դաշամբ տալ զերկիրն
կամ զտուն ի վարձու:

ՅՕԴՈՒԱԾ ԻԲ

ՑԱՂԱԳՈ ԳՐԱՒԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԽԱՂՈՒ

213. Օրէն իցէ գրաւ դնել:
214. Զինչ եթէ ի կողմանց գիտիցէ զերն հաւաստեաւ:
215. Եթէ մանկունք կամ կրօնաւորք կորուսանիցեն ի խաղն:
216. Նենգ ի խաղն:
217. Արգելեալ խաղք, և թէ օրէն իցէ յաղթօղին յայնս՝ ունել զչահն:
218. Պարտականն իցէ հատուցանել զպարտեալն: Իսկ զինչ եթէ երդուեալ ևս իցէ հատուցանել և չպահանջել յետոյ:
219. Խաղք արգելեալք եկեղեցականաց:
220. Կրօնաւորաց:
221. Եպիսկոպոսաց:

213. Պրաւադրութիւն է, ի վիճել զերաց ինչ՝ խոստանալ գումար ինչ այնմ՝ որոյ բանքն Ձմարիտ գտցին: Այս չէ այս արգելեալ (գԹ ընդ ծանր մեղս), եթէ ոչ յաւելցին յայն հանգամանք մեղանչականք. որպէս եթէ գրաւ ոք ումեք զնիցէ առաւել քան զնա ըմպելոյ զինի, կամ անիրաւութիւն ինչ ումեք հատուցանելոյ:

214. Յօրինաւորութիւն գրաւադրութեան ինդրի հաւաստարութիւն, ոչ միայն գրաւոյ՝ այլ և իրին երկբայութեան. այլ եթէ ոք յայտ արասցէ գիտել զայն հաւաստեաւ, և սակայն միւսն պնդեսցի դնել գրաւ, օրէն է ըստ ոմանց՝ յաղթօղին ունել զգրաւն, զի յայնժամ հաճարի հրաժարել միւսոյն յիրաւանց իւրոց: Բայց ուրկից և աքրուա ոչ օրէն համարին զայս, քանզի և որ պնդէն՝ որպէս առ Ձմարիտ ունի զգան իւր և ի պատրութենէ մտաց է յայնժամ պնդել նոքա: Բայց եթէ երկբայեսցի և նա ընդ բանս իւր, յայնժամ հաճարի հրաժարել նմա յիրաւանցն:

215. Պարտ է զանազանել զխաղս սովորականս յարգելեալ խաղուց: Զաղագս սովորականացն գիտելի է զի որ յաղթէ մանկան կամ պատանւոյ չև հասելոյ յասպոյթ, պարտի հատուցանել նմա զչահեալն, եթէ չիցեն նորա ինչք զինուորականք կամ իբր զինուորականք, կամ եթէ ոչ հրամանաւ հօրն խաղայցէ, և կամ եթէ չիցէ դուշնաքեայ ինչ չահն: Օ սոյն է խմանալ և զա-

բամբեաց, և զկրօնաւորսդ. որոց պարտ է և զշահեալն յայլոց դարձուցանել՝ի նոսա, Թէպէտ և զիտիցեն նոքա զի չեն ինքեանք ազատ, և զի չիք իւրեանց ինչ։

Եւ այլ կրօնաւորք, որոց հրաման է զևւրեանցն ծախել, մեղիցե՞ն ընդդէմ ուխտի աղքատութեան՝ի ծախել ինչ՝ի խաղս. և պարտ իցէ յաղթողաց հատուցանել նոցա որ ինչ շահինն՝ի նոցանէ։ — Եւ սակաւք՝ի բարեյականաց, ընդ որս Սուարէզ, Լուկէս, Վէգելէս, Սալաս և Մետինա, չհամարին մեղանչել նոցա, վասն որոյ և ոչ յաղթողաց դարձուցանել՝ի նոսա զշահեալն։ Նայց Նաւարրոյ, Մանքէզ, Սալմատիկեանք և այլք բազումք հաւանականագոյնս զհակառակն հաստատեն. զի հրամանն այն չհամարի տուեալ նոցա՝ի մեծաւորաց վասն ծախելոյ զևւրեանցն՝ի խաղս, և ոչ մեծաւորք՝ եթէ կամիցեն և՝ կարեն տալ նոցա զայն հրամանն, զի մատակարարք են և ոչ տէրք ընչից միաբանութեանն։

216. Լթէ ոք՝ի խաղս նենգիցէ՝ նշանելով զթուղթըս կամ փոխոխելով և այլն, պարտի հատուցանել զշահեալն և զակնկալութիւն խոչ շահելոյ խաղակցին։ Նայց հնարք և ձարտարութիւնք ընկալեալք՝ի սովորութենէ՝ի խաղս, որպէս զիտել զթուղթս այլոց կամ զպատահական նշանս թղթոց և այլն, օրինաւորք են։

217. Խաղք բախտի ընդհանրապէս արգելեալ են յեկեղեցական և՝ի քաղաքական օրինաց։ Եւ այսմ պարտ է զանազանել զաշխարհիկս յեկեղեցականս։ Ոստ հասարակաց կարծեաց բարեյականաց ոչ ընդ ծանր մեղս են արգելեալ աշխարհականաց խաղք այսպիսիք. զի եկեղեցականն արգել խափանեալ է՝ի սովորութենէ, և քաղաքական օրէնք՝ի պատիժ յաղթողին՝ տան պարտեցեալն իրաւունս յետս պահանջելոյ զկորուսան։ Եւ ըստ այսմ օրէն է յաղթողին ունել զշահեալն չև սահպեալ յատենէ՝ի հատուցումն, Թէպէտ և պարտեցեալն՝ դիտաւորութեամբ յետս պահանջելոյ զկորուստ իւր՝ի կորուսանելն՝ ձեռնարկեալ խղէ՝ի խաղ։

218. Ընդ հակառակն, ըստ հաւանականագոյն և ըստ հասարակաց կարծեաց (ընդդէմ սակաւուց ոմանց), ոչ է պարտական պարտեալն՝ի հատուցանել զոր պար-

տին առ յաղթողն. զի օրէնք ՚ի տալն նմա իրաւունս պահանջելոյ զկորուստն, տան նմա և զՀատուցանելոյն։ Իսկ եթէ կամիցի իրաւախոհ լինել, օրէն է նմա՝ թէ պէտ և հրաժարեալ իցէ յատենէն և ՚ի նպաստիկ օրինացս. զի օրէնք վասն հասարակաց օգտի են սահմանեալ, և հրաժարել իւր անտի զօրէ ինչ ոչ։ Այլ միայն եթէ չիցէ երկաքանչիւրոցն խոստացեալ միմեանց երդմամբ՝ ոչ միայն Հատուցանել այլ և չպահանջել յետս զկորուստ իւրեանց. զի օրէնք արգելուլ արգելուն զայգպիսի խաղս, այլ ոչ և զտոյժս պարտելոյն. վասն որոյ և ոչ օրէն է նմա զանօրինութիւն երդման խզնդրել ՚ի տոյժս այլոց։ Իսկ եթէ պարտելոյն Հատուցեալ իսկ իցէ զպարտսն, չկարէ անձամբ անձին զփոխարէնսն Հայթայթել առանց դիմելոյ յատեան, թէպէտ և չիցէ երդուեալ չպահանջել զկորուստն։ Իսկ եթէ խնդրեսցէ լուծանել զդաշինսն, և ոչ յանձն առցէ զայն դաշնակիցն, տես զայսմանէ որ ինչ ասացաք ՚ի Թիւն 125։

219. Եկեղեցականք՝ որոց ընկալեալ իցէ զսուրբ կարգ, և փոքր աստիճանաւորք՝ որք յեկեղեցական Հասս վայելեն, ծանր մեղանչեն ՚ի խաղալ զնաղս սոսկապէս բախտի յաձախ և երկար, թէպէտ և զուշնաքեայ ինչ դրամոյ խաղայցեն. զի խաղք այսպիսիք կարի դժպատեհք են եկեղեցական կարգի։ Սմանապէս եթէ զուն ուրեք՝ այլ բազում դրամոյ խաղայցեն, գոնէ ուր ուրեք գայթակղութեան այլոց իցէ վտանգ, որպէս յաւելու Այմանն։ Նոսկապէս ասացաք բախտի. զի խաղք Թղթոյ և նարտի, յորս Հաւասարապէս ներգործեն բախտ և Ճարտարութիւն, չեն ինչ խոտիւ արգելեալ եկեղեցականաց, զկնի ըստ այժմու սովորութեան, ուր չիցէ ինչ վտանգ գայթակղութեան։

220. Նանձուկք խոտակրօնք՚ի խաղալ զնաղս բախտի, և ս և միանգամ, չեն ազատ ՚ի ծանր մեղաց. և առաւել քան զնոսա պարտաւոր գտանին մեծաւորք, որ ներեն նոցա խաղալ։ Օ՞նդն է ասել և զյաձախելոյ նոցա յայլ խաղս Թղթոյ, եթէ վասն տալոյ նոցա գայթակղութիւն աշխարհականաց, և եթէ վասն մեծաւնելոյ չար սովորութիւն ՚ի մեծատանս։ Իսկ այլ կրօնաւորք, որպէս զեկեղեցականաց առ Հասարակ ասացաք, ծանր մեղանչեն ՚ի խաղալ զնաղս սոսկապէս բախ-

տի, 'ի յաձախեն 'ի խաղս, և 'ի խաղալն բազում դրամոց։ Ոչ ղմեղս նոցա ընդդէմ ուխտի ալքատութեան, զորմէ ասացաւ 'ի տառև (գլ. ԻԳ. 13. 14)։ Իսկ եթէ վասն զբօսանացս և հանգստեան՝ առանց արծաթոյ խաղայցեն, ազատք են և ա և 'ի ներելի մեղաց. թէպէտ և կէսք յաստուածաբանից անվայել համարին զայն կրօնաւորական կարգի, և ոչ երբէք սովորութեան կարել զայն առնել վայելուչ։

221. Իսկ եթէ եպիսկոպոս ոք միանգամ և եթ զխաղ բախտի, կամ յաձախ զայլ խաղս թղթոյ խաղայցէ, դժուարաւ լինի ազատ 'ի գայթակղութենէ։ Վասնա պէս եթէ ստեպ 'ի զնին կայցէ խաղուց բախտի։ Իսկ զեկեղեցականաց և զկրօնաւորաց կալ 'ի զնին այնպիսի խաղուց, թէպէտ և արգելուն կանունք, սակայն համարակաց կարծիք աստուածաբանից զերծ համարին 'ի ծանր մեղաց։

ՅՕԴՈՒԱԾ ԻԳ

ՅԱՂԱՏՍ ՇԱՀԱԿՑՈՒԹԵԱՆ

222. Պայմանք արդար շահակցութեան։
223. Չի պարտ է նախ 'ի բաց առնուլ զդրամագլուխն, որոյ էգէ այն։
224. Պարտ է կշռադատել զարժանս աշխատութեանն։
225. Տոյժ դրամագլխոյն անկ է առաւն նորին։
226. Շահակցութիւն յանդեայս, դաշամբ ընդ շահակցին զթերի թողեայ նոցին։
227. Երրակի դաշինք։
228. Չինչ եթէ որդի հայրենի գրամոյն առնիցէ վաճառաշահ։
229. Շահակցութիւն եղբարց։ Քանիպատիկ օրէն է վախճան առնել շահակցութեան։

222. Պատճն շահակցութեան է երկուց ոմանց դնել 'ի միասին զդրամս կամ զաշխատութիւն, առ 'ի բաժանել ապա յիւրեանս զշահ կամ զվնաս։ Պայմանք արդար շահակցութեան են երեք։ Ա. Միաբանել յօրինաւոր շահավաճառ։ Բ. Համեմատութիւն վաստակոց ընդ տուրս դրամագլխոյն։ Գ. Շահակցաց բաժանել յիւրեանս զտոյժս և զծախս 'ի վաճառաշահ անդր ապրարելոյ, այլ զվնաս դրամագլխոյն կրել առաւն նորին միայնոյ։

223. Յայսցանէ զՀետ գայ նախ՝ զի եթէ ոք դնէ ՚ի միջի զգլուխ դրամոյ, և այլ ոք զաշխատութիւն, ՚ի կատարած շահավաճառութեան պարտ է՝ տեառն դրամագլխոյն հատուցանել զիւրն, և զշահեսան բաժանել յիւրեանս. որպէս ուսուցանեն Ռուկոյ, Պռնաչինա և այլք ընդդէմ սակաւուց ոմանց։ Ո՞ի որպէս ՚ի կորընչել դրամագլխոյն, տէր նորին կրէ բովանդակ զկորուստն, այսպէս և ՚ի պահելն անկորուստ՝ նմա է անկ բոլորովին։ Եւ ոչ զօրէ ինչ ասելն, զի միոյն զդրամանն դնելով և միւսոյն զվաստակս՝ ՚ի կատարել վաճառաշահութեան արդարութիւն այն իցէ՝ բաժանել յիւրեանս զդրամագլուխս և զշահ։ Ո՞ի առ այս ասելն. յայսպիսի շահավաճառս մատուցօղ դրամագլխոյն ոչ եթէ զդրամանն մատուցանէ, այլ զօժանդակութիւնն դրամոյն. և որպէս ոք զի վնաս իւր մատուցանէ ՚ի շահավաճառ, ՚ի կատարած վաճառաշահութեան ընդունի յետս ամբողջ վնաս իւր և շահուն լինի բաժանորդ, այսպէս է և որ զդրամն իւր տայ ՚ի շահավաճառ։

224. Ո՞Հետ գայ երկրորդ՝ զի, յետ ՚ի բաց հանելոյ զդրամագլուխն, պարտ է բաժանել զշահն ըստ աշխատութեան շահակցին, և ըստ օժանդակութեան դրամոյն՝ զոր հասարակաց վարկ համարի ՚ի շահավաճառս։ Այն որոյ մտրթ է պատահել զի աշխատութիւն շահակցին այնչափ առաւելագոյն իցէ քան զպետս դրամագլխոյն, մինչև արդարապէս և զդրամագլուխն բաժանել, որ ըստ ինքեան անիրաւն է։ Եւ ընդհակառակն՝ ՚ի տեղիս ուրեք այնչափ սակաւագոյն է աշխատութիւն ըստ սովորութեան երկրին և ըստ բազմութեան գործառոյց, մինչև արդարապէս և աշխատասիրին հաղորդս լինել տուժից դրամագլխոյն՝ որ ըստ արդարութեան անկ է տեառն եւեթ նորին։

225. Ո՞Հետ գայ երրորդ՝ զի կորուստ դրամագլխոյն անկ է բովանդակ տեառն նորին, թէ և յառաջ քան զաշխատութիւն շահակցին պատահեսցէ կորուստն, զոր տարապարտ ՚ի բաց առնուն ոմանք։ Ո՞ի որպէս ՚ի վեր անդր ասացաք, տէր դրամոյն զպետս եւեթ նորին մատուցանէ, և եթէ շահակցին չէ իցէ ՚ի կիր առեալ զդրամագլուխն, չէն ինչ նորա պարտք։

226. Ո՞Հետ գայ չորրորդ՝ զի անիրաւ է շահակցու-

Թիւն ՚ի վաճառաշահ անդէոց, դաշամբ Հատուցանելոյ զանդեայն ՚ի կատարածի նովին Թուով և նովին Հանդամանօք՝ այլ ընդ վտեղոյն և ընդ մեռելոյ փոխանակելով, և ապա զմնացեալն բաժանելոյ։ Օ՚ի կորուստ դրամագլխոյն, որպէս ասացաք, անկ է տեառն նորին և ոչ հովուին։ Նմանապէս անիրաւ Համարիմ Յամպուրինի, Միլուեսթրի և այլք ընդդէմ Մոնքալեայ և այլոց ոմանց, ընուլ զԹիւ պակասելոյն ծննդովք նոցին. զի ծնունդք արդասիք են ընկերութեան բաժանելի ՚ի շահակիցս, վասն որոյ ՚ի ընուլ նոքիմիք զԹերի անդէոյն՝ տուժի անդէորդն։ Այլ ՚ի պակասել անդէոց աւանդելոյ նմա, պարտի նա ցուցանել՝ զի առանց իւրոց յանցանաց իցէն պակասեալ։

227. Ըէն իցէ տեառն դրամագլխոյն՝ ապահովութեամբ Հանդերձ դրամագլխոյն՝ պահանջել շահ ինչ ստոյգ երբակի դաշամբ, այսինքն շահակցութեան, ապահովութեան շահու, և Հրաժարելով յառաւելագոյն շահից՝ որ Հաւանականաբար անկանելին նմա առանց այսոցիկ պայմանաց։ — Խաղումբ ՚ի բարոյականաց ոչ օրէն Համարին զայս. իբր զի դէն այսպիսի յապահովել դրամագլխոյն և շահից՝ ոչ ևս է շահակցութիւն, որում պարտ է ներքոյ կալ և վտանգին, այլ փոխի ՚ի վաշխ։ Այլ Հանրագոյն կարծիք օրէն Համարին զայն. զի երբակի դաշանցն եթէ մի մի օրինաւոր է ինքնուրոյն, ապա և ՚ի միասին պարտ է նոցա գոլ օրինաւոր. և չիք տեղի անդ վաշխի. զի ՚ի փոխատուութեան օրէն է փոխառուի ըստ կամ իւր ՚ի կիր արկանել զարծաթն. այլ ՚ի շահակցութեան պարտ է նմա ՚ի շահավաճառ անդր ՚ի կիր արկանել, որով այլ ինչ գտանի ՚ի փոխատուութենէ շահակցութիւն։ Այս գիտելի է զի յաստուածաբանից Կոլընիոյ, Սալամանկայ, Սոպոնտիոյ և այլոց ինչ գաւառաց, ընդունելի գտեալ են երբակի դաշինքս. այլ առանց խորհրդոյ գիտնոց վտանգաւորք են։

228. Արդի եթէ դրամովք հօրն արասցէ վաճառաշահ, կարիցէ առնուլ զմասն շահից ըստ աշխատութեան իւրում։ — Մոնքալեա օրէն Համարի, ՚ի վաճառաշահ լինել որդւոյ յանուն իւր. իբր զի յայնժամ ՚ի բաց Հանեալ որ ինչ ՚ի հօրէ իւրմէ ընդունի յապրուստ, օրէն

է նման առնուլ որչափ ինչ պարտ էր հօրն տալ այլում ումեք վասն աշխատութեանն զոր ինքն յանձն առնու : Հաւանական է այս վարդապետութիւն, այլ հաւանականագոյն և այլոցն աստուածաբանից՝ որք ոչ օրէնն համարին զայն : Զի որպէ՛ի տան հօր իւրոյ վաստակել չկարէ առնուլ որ ինչ օտարի ումեք անկ էր. զի որդւոյ պարտ է ըստ իրաւանց վաստակել վասն հօրն, եթէ չիցէ անօգտվոր ինչ վաստակ ծանրագոյն քան զպարտս որդւոյ : Ասն որոյ՛ի չտալ նման հօրն բաժին, չէ օրէն նման առնուլ ինքնին փոխարէն. զի առ այս խնդրին ստոյգ և յայտնի իրաւունք :

229. Կիտելի է զի՛ի մէջ եղբարց չհամարի գոլ շահակցութիւն, եթէ ոչ ամենեքին իսկ պարապեն՛ի շահաւաճառ, և կամ ոմանց պարապելով՝ եթէ չմատուցանեն նոցա այլք՛ի վերայ հասարակաց դրամոյն և գնուրեանցն սեփական :

230. Ասարի է այլ և այլ օրինակաւ առնուլ շահակցութեան կատարած : Ալա՛ի կատարել վաճառաշահութեան և պայմանեալ ժամանակին : Երկրորդ՝ հաւանութեամբ շահակցաց, և և լռելեայն. որպէս եթէ ոք՛ի նոցանէ սկսանիցի ինքնուրոյն պարապել՛ի շահավաճառ : Այլ չէ ումեք օրէն հրաժարել՛ի գործանց անտի, բայց միայն եթէ գործ օգտի հասարակաց հասցէ նման, կամ եթէ շահակիցն չկարէ՛ի պայմանս գաշինն և կամ տոչոր հասուսցէ նման : Երրորդ՝ մահուամբ ուրուք՛ի շահակցաց. զի շահակցութիւն ոչ անցանէ՛ի ժառանգս, բայց միայն եթէ լցէ պայման այսպիսի հաստատեալ երդմամբ : Չորրորդ՝ աքսորմամբ շահակցին, կամ հրաժարմամբ յաշխարհէ : Հինգերորդ՝ եթէ մին՛ի շահակցաց վասն խոշտութեան կամ այլ ինչ անհրաժեշտ իրաց չկարիցէ ընուլ զպարտս իւր : Վեցերորդ՝ կոտտեամբ դրամագլխոյն : Յոթնեւորդ՝ ի չեղաշրջել իրաց այնպէս, զի ոչ և մարթ լցէ յաջողել շահակցութեանն :

ՅՕԴՈՒԱԾ ԻԴ

ՑԱՂԱԳՍ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ, ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՆ, ԳՐԱՒԱԿԱՆԻ, ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՏԱԿԻ

231. Ձինչ է դաշն ապահովութեան:
232. Երաշխաւորութիւն:
233. Գրաւական:
234. Հոգաբարձութիւն. օրէն ըսել որոց պարտ յանձն առնուլ կամ պարգեւս տալ:
235. Կտակ. եթէ յայտնի ըսեն կամք կատարողին. եթէ մի ևեթ ըսէ վկայ:
236. Հրիտակ վասն կուսանաց. օրէն ըսել սրբազան Պատրիարքին կամ եպիսկոպոսի փոխել զկտակ:
237. Պարտք թողլոյ ժառանգութիւն որդւոց, եղբարց, կամ աղքատ ազգականաց:
238. Օրէն ըսէ հօր անժառանգել զորդի, և ընդ:

231. Դաշն ապահովութեան է յանձն առնուլ արդար փոխարինաւ զվտանգ իրիք, պարտական զանձն առնելով հատուցանելոյ զտոյժս կամ զկորուստ: Յօրինաւորութիւն այսր դաշին խնդրի անստուգութիւն եղից, զեթ 'ի ժամանակի դաշինն հաստատելոյ:

232. Երաշխաւորութիւն է պարտ յանձն առնուլ հատուցանելոյ ընդ պարտապանին, 'ի չհատուցանելոյ նորա զպարտս իւր: Ոմն որոյ պարտ է քննել զպարտս պարտապանին. զի եթէ չիցէ ինչ նորա պարտք, և ոչ երաշխաւորն է պարտական: Երաշխաւորին օրէն է միշտ պահանջել ինչ փոխարէն, թէպէտ և չիցէ ինչ վտանգ 'ի միջի, որպէս ուսուցանեն աստուածաբանք բաց 'ի սակաւուց ումանոց. վասն զի յանձնառութիւն այնպիսւոյ բեռին արժանի է վարձուց:

233. Գրաւական է՝ պարտապանին տալ ինչ ցայտարատաէրն յապահովութիւն պարտուցն, եթէ շարժուն ինչ իցէ տուեալն, և եթէ հաստատուն: Բայց է օրէն պարտատեառն առանց հաւանութեան պարտապանին 'ի կիր արկանել զգրաւականն. և եթէ արկանիցէ, զպատուէն շահեալ անտի պարտի հատուցանել ընդ գրաւականին: Բայց եթէ առանց ինչ միջամուխ պարտապանին մարթի իցէ վաղել նովաւ, որպէս ընդ եռանուլ զմա-

տեան գրաւականեալ, կամ զանօթ արծաթի ՚ի կիր արկանել, համարի անդ հաւանութիւն պարտապանին, որպէս ասէ Հայրն Ալ իւս: Օրբազան սպասս, որպէս զկի, զշուրջառ և այլն, ոչ է օրէն գրաւականել, բայց միայն յօգուտ եկեղեցեաց և աղքատաց: Իսկ հաւատարափոխ դաշն, զորմէ ասացաք ՚ի թիւ 182, չէ օրինաւոր առանց արդարացի պատճառաց, որպիսիք են վճաս ծագեալ կամ խափանած շահից, կամ տոյժ պայմանեալ:

234. Հօգաբարձութիւն է դաշն, որով ոք յանձն առնու զհոգ ուրուք յորոց կամ ՚ի կրտսերաց՝ այսինքն ՚ի մանկանց և հասելոց յաւագոյթ, եթէ ըստ դասու հարակութեան մասին, և եթէ ըստ անտեսութեան: Պիտելի է ասա, զի որբք և կրտսերք չկարեն անօրինել զինչս իւրեանց, բայ ՚ի զինուորականացն կամ իրը զինուորականաց. վասն որոյ առ ՚ի անօրինել զհաստատունս ՚ի գոյից իւրեանց, պէտք են նոցա ատենական հրամանի. իսկ զշարժունս օրէն է նոցա անօրինել հրամանաւ հոգաբարձուին: Այլ խնդիր է թէ արդեօք ՚ի անօրինել նոցա զայնս անհրաման՝ գտանիցին պարտականք ըստ բնական իրաւանց: — Ուսումնագոյնք յաստուածաբանից պարտականս զնոսա համարին, եթէ դնեա մերձ յարբունս իցեն, և դաշն չիցէ ընդ հոգաբարձուին: Պարտեալ և է օրէն որբոց և կրտսերաց պարգևել այլոց աւելի ինչ քան զոր սովոր են պարգևել հաւասարք նոցին. բայց ընդունողք պարգևացն չեն պարտական ՚ի հատուցումն առանց ատենական վճռոյ, զի պարգևք այսպիսիք վաւերականք են ըստ բնական օրինաց:

235. Օրկատակ Ճառել անկ է իրաւագիտաց քան աստուածաբանից. բայց ինչ ինչ կարևոր է գիտել զայնմանէ խոստովանահարց: Ուր նախ՝ զի եթէ ժառանգն գիտիցէ զկամս կատակագրին յաղագս բարեգործական հրիտակաց, պարտական է ՚ի խղճէ կատարել զայնս, թէպէտ և չիցեն հաւաստիք արտաքինք: Այլ եթէ չգիտիցէ զայն, չէ ինչ պարտական միւմ և եթէ հաւատալ վկայի, թէպէտ և արժանահաւատ ոք իցէ. զի օրինք պահեն զերկուց խնդրեն վկայութիւն, և այսպէս է ընդունելի բարոյականաց առ հասարակ:

236. Երկրորդ՝ զի հրիտակք թողեալք վասն կու-
սից, իրաւունք են նոցա՝ թէ և կորուսեալ իցէ նոցա
զկուսութիւն, եթէ միայն չիցէ այն լեալ հրապարա-
կագոյժ: Երրորդ՝ զի զհրիտակս թողեալս օրիորդաց
քաղաքացոց, ոչ է օրէն տալ այնոցիկ՝ որ ըստ դիպաց
ծնեալ իցեն անդ: Չորրորդ՝ զի զհրիտակս բարեգոր-
ծութեան ոչ ումեք իշխանութիւն է փոփոխելոյ, բայց
սրբազան Պապին՝ եթէ գուցէ ինչ իրաւացի պատճառ
փոփոխութեան: Ոսկ եպիսկոպոսունք յորժամ պատ-
ճառ այնպիսի կայցէ 'ի միջի, զոր եթէ գիտեր կտակա-
դիրն՝ այլազգ տնօրինէր, կարող են մեկնել զկամն նո-
ցա, և ըստ այնմ փոխել յայլ ինչ զհրիտակն:

237. Հինգերորդ՝ զի ըստ խղճի մտաց պարտ է կը-
տակագրին թողուլ զօրինաւոր բաժին, ոչ միայն ժա-
ռանգաց կարևորաց՝ որ են որդիք, ծնօղք և նախածը-
նօղք, այլ և եղբարց և քերց՝ որք իցեն 'ի յետին կամ
'ի ծանր կարօտութեան: Ո՞ի սէր և նպաստ առ եղ-
բարս և առ քորս կարօտեալս պարտք են արենակցու-
թեան. որպէս զի որ թշնամանէ զեղբայր իւր կամ ըզ-
քոյր՝ կրկին մեղանչէ, մի՝ ընդդէմ արդարութեան, և
միւս և՝ ընդդէմ սիրոյ և գթութեան: Ոչդ եթէ 'ի
կեանս է պարտականութիւն 'այսպիսի, ընդհէր չիցէ և
'ի մահու: Ոյսոցի 'ի յետին կամ 'ի ծանր կարօտութենէն. զի
եթէ աղքատք միայն իցեն՝ այլ ոչ յայնպիսւոյ կարօ-
տութեան, և կամ եթէ ազգականք և եթէ իցեն՝ այլ
ոչ եղբարք կամ քորք յայնպիսւոյ կարօտութեան, թէ-
պէտ և գնոսա ևս անտես առնել մեղք են՝ այլ ոչ ծանր:

238. Վեցերորդ՝ զի օրէն է հօր անժառանգել զոր-
դի վասն իրաւացի պատճառաց, որպէս եթէ դարանա-
կալ հայրենի կենացն իցէ լեալ, կամ խափանել կամե-
ցեալ զհայր իւր 'ի կտակագրելոյ, և կամ այլ ինչ ծանր
թշնամանս նմա գործեալ: Ոչյլ չէ օրէն հօր անժա-
ռանգել զորդի վասն աճելոյ նորա կին անարժան. և
ընդհակառակն օրէն է նմա անժառանգել զդուստր
խառնագնաց, որոյ չէ իցեն առք քսան և հինգ: Ոայց
իմն եթէ իցէ նոցա ապրուստ. ապա թէ ոչ, պարտա-
կան է հայր տալոյ որդւոց միշտ իսկ զկարևորս առ 'ի
կեանս:

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՅ ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

ՑԱՂԱԴՍ ՑՍՆԴՈՒԿՆ ԴԱՏՈՂԱԿԻԹԵԱՆ

1. Դատողութիւն և կասկած :
2. Խրատք առ այս :

1. Դատողութիւն յայնժամ է ծանր մեղք, ուր ա-ռանց բաւական պատճառի դատիցէ ոք գործեալ ու-րուք ստուգիւ ծանր ինչ չար : Այսն որոյ դատողու-թիւնք յաձախագոյնս ազատ են ի մահու չափ մեղաց. զի կամ է ինչ նոցա հիմն, և կամ զի կասկած միայն են, որ թէ և յանդուգն իցէ՝ այլ չհասանէ ի մահու չափ, բայց եթէ ոք զբարեհամբաւ որեցոյ տարապար-տուց կասկածիցէ ծանուցնս՝ որպէս զանաստուածու-թիւն կամ զմծղնէութիւն և այլն :

2. Այսր աղագաւ պարտ է խոստովանահօր ի խոս-տովանել տպիտաց յանդուգն դատողութեամբ ծա-նուցնս մեղուցեալ, աղդ առնել նոցա՝ զի ուր գուցեն պատճառք դատելոյ, ոչ է յանդուգն դատողութիւն՝ այլ արդար, վասն որոյ և ոչ մեղանչական : Այս դար-ձեալ՝ զի չէ այն դատողութիւն, այլ կասկած՝ զոր պարտ իսկ է բազում ուրեք ունել ծնողաց և տանուտեարց, առ ի խափանել զդողութիւն ծառայից, զմեղս դատե-րաց և այլն : Այս միայն յաւելուլ նոցա խրատ, զի զայս-պիսի կասկածանս իւրեանց մի առանց հարկի յայտնես-ցեն այլոց :

ՅՕԴՈՒԱԾ Բ

ՑԱՂԱԴՍ ԹՇՆԱՄԱՆԱՑ

3. Զի՞նչ են Թշնամանք, և որպէս պարտ իցէ առնել Թշնամանաց հատուցումն:
4. Որ ինչ՝ ի հատուցմանէ ասի ազատ կացուցանեն զԹշնամանօղն:
5. Բանալ և վերծանել զնամականին այլոց:
6. Ո՞ւմ օրէն իցէ առնել զայս:

3. Թշնամանք, որով զբ ծանուցնս նախատէ զընկերն յերեսս նորա, և մեղք մահու չափ: Ապա որոյ եթէ հրապարակաւ զԹշնամանս իցէ արարեալ, հրապարակաւ և զհատուցումն պարտի առնել՝ խնդրելով Թողութիւն՝ ի նմանէ, և կամ գնթ պատուելով զնա մեծապանօք առաջի ամենեցուն՝ որոց առաջի զԹշնամանան ապար, և կամ գոնեա յունկն նոցա հատուցանելով զհատուցումն Թշնամանացն: Իսկ եթէ առանձինն ուրեք զԹշնամանան իցէ արարեալ, առանձին և զհատուցումնն պարտի առնել ըստ հասարակաց կարծեաց աստուածապանից:

4. Ասացե ազատ է Թշնամանօղն՝ ի հատուցմանէ ասի, նախ՝ եթէ Թշնամանեալն տայ ցոյցս հաւաստիս ներելոյ իւրոյ և չիամելոյ զհրապարակական հատուցումն առ՝ ի խնայել զանձն՝ ի շառագունանաց. և յայնժամ բաւէ մեծարել զնա այլազգ: Երկրորդ՝ եթէ իցէ հաւանական վտանգ արծարծանելոյ վերստին ատելութեան այնպիսի հատուցմամբ: Երրորդ՝ եթէ Թշնամանելոյն ինքնին իսկ խնդրեալ իցէ՝ ի վրէժ, կամ Թշնամանօղն կրեալ իցէ՝ ի դատաւորէ պատուհաս բաւական՝ ի հատուցումն պատուոյ Թշնամանելոյն:

5. Թշնամանք են և բանալ զնամականին ուրուք և ընթեռնուլ, առանց յայտնի կամ լռելեայն հաւանութեան նամակագրին, կամ այնորիկ՝ առ որ գրէն: Ապա որոյ ծանր մեղանչէ ըստ ծանրութեան իրաց քովանդակելոյ՝ ի նամականէնդ, կամ ըստ ծանրութեան Թշնամանացն՝ զոր հանդրի առնել նոցա: Իսկ եթէ դուշնաբեալ ինչ իրք իցեն՝ ի նամականին, որ լուծանիցն զկնիք նորա և ընթեռնու՝ ոչ մեղանչէ ընդդէմ արդա-

րութեան, այլ սիրոյ ևեթ, ըստ Տասարակաց վարդապետութեան ընդդէմ Պոնաչինայ։

6. Այլ օրէն է Թագաւորաց բանալ զնամականին Թշնամեաց, ևս և զայլոց՝ յաւուրս պատերազմի գրեալս յերկրէ Թշնամեաց։ Օ՛նոյն օրէն է առնել և իշխանաց, ուր կարևոր Տանուրին զայն յօգուտ Տասարակաց։ Օրէն է և Հոգևոր առաջնորդաց բանալ զնամականի Տպատակաց իւրեանց, եթէ այսպէս իցէ սահմանադրութիւն կրօնին կամ սովորութիւն, և կամ եթէ գուցէ կասկած Տաւանական բովանդակելոյ չարեաց ինչ՝ ի նոսա։ Այլ զայս ոչ է իմանալ զնամականեայ որ առ ի գրագոյն առաջնորդս կամ՝ ի նոցանէ իցէն գրեալ։ Օրէն է դարձեալ բանալ զԹուղթս Տակառակորդաց, որք յանիրաւի Տալածեն զոք. որպէս ուսուցանեն Եսսիոյ, Այման, Մանքեզ, Գաւարրոյ, Մալմատիկեանք, Ռոքքալեա, և այլք։ Օ՛նոյն և վասն խափանելոյ զծանր անիրաւութիւն՝ ի վերայ Տասեալ անմեղի՝ օրէն Տամարին Ուսկոյ և Պուսեմպայ։ Ոսկ եթէ ոք գոցէ նամականի Տերձեալ և արկեալ՝ ի բաց, և առ Տետաքրքրութեան ընթերցողի զայն, ոչ ումեք անիրաւի, եթէ ոչ գաղտնի ինչ Տնաւսակար ումեք յայտնեսցէ։ Օ՛ այս այսպէս ուսուցանեն Այման, Պուսեմպայ, սուրբ Ընտանիսա, Միլուեսթրոյ և այլք. և յաւելուն Ուսկոյ և Ռոնքալեա, Թէպէտ և տեառն նորին Տերձեալ իցէ զայն՝ ի մանրամանր մասունս. այլ զայս ոչ ընդունին Աքրուա և Ռեպելլիոյ, զի Տերձանելովն այնպէս՝ յայտ առնէ չկամել Թէ ընթերցի ոք զայն, և չՏրաժարել յիրաւանց գաղտնեացն իւրոց։ Որ ինչ զնամականեայ ասացաք, զնոյն է իմանալ և զայլոց առանձնականն գրուածոց. զի ամենայն ումեք իրաւունք են՝ ի վերայ գաղտնեաց իւրոց, զորս չկամի յայտնել այլոց։

Այլ ընդՏանրապէս խօսելով զԹնամանեայ, Ստեփանոս Ժ. եպերկ՝ ի կոնդակի իւրում՝ որ յաղագս արգելեալ գրոց՝ զարաչար սովորութիւն արգի մատենագրաց, որ գոգցես իմն չկարեն զկարծիս իւրեանց պաշտպանել առանց Թշնամանելոյ զներՏակախոՏս, և դատապարտելոյ զկարծիս նոցա՝ մինչեւ դատապարտեալ յեկեղեցւոյ։ Ուս յաւելու զի Թէպէտ և անՏնար է ՏակաՃառութեանց բառնալ յաշխարՏէ, և Ճշմ

մարտութիւն իսկ երբեմն ՚ի յայտ գայ նոքիմք, բայց պէհզութիւն քրիստոնէական պատուիրէ յանձին բերել, յօրինակ ածեալ զսուրբ Գրիգուինացին՝ որ ՚ի խոսել ընդդէմ կարծեաց այլոց աստուածաբանից ոչ ուրեք կճանէ ինչ զնոսա, և ընդդէմ հերեսիովտաց իսկ մարդասիրաբար հակաճառէ։ Այլ ապա ՚ի քննիչս գրոց ապաստան առնէ՝ խոստիւ զայնպիսի գիրս քննել, և ՚ի ժողովս Կարդինալաց ածել զայնս՝ առ ՚ի սանձահարել զհամարձակութիւն գրողացն։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

ՑԱՂԱԳՍ ԲԱՄԲԱՍԱՆԱՑ

7· Մեղանչական բամբասանք։
8· Ղէնդաւ որսալ զգաղտնիս։
9· Պարտք լռելոյ զգաղտնիս։
10· Օրէն ՚ի կայանել զմեղս ուրուք ՚ի պաշտպանութիւն անձին։
11· Ի խնդիր խրատու և սփոփանաց· կամ խոհականի և առաքինւոյ ումեք։
12· Եթէ հաչակեալ ուրեք իցեն մեղքն։
13· Եթէ յառաջ ժամանակաւ իցեն հաչակեալ։
14· Եթէ ՚ի հանգոյն ինչ ոք վաղ իսկ իցէ չարահամբաւեալ։
15· Որ ոք պատմէ ինչ ՚ի լոյս։
16· Որ անուանէ զուխտ ինչ կամ զվանս։
17· Որ տայ պատճառս կամ լսէ բամբասանաց։
18· Հաստուցումն համբաւոյ։
19· Որ ինչ ազատ ՚ի հատուցմանէ աստի կացուցանեն զբամբասօղն։
20· Պարտ իցէ արծաթեալ փոխարինել չարահամբաւութեան։
21· Օրէն իցէ չարահամբաւեցոյն իւրովի առնուլ իւր փոխարէն։
22· Ցաւելուած յաղագս չարամատնից։

7· Բամբասանք յայնժամ է ծանր մեղք, յորժամ սուտ ինչ ոք չարիս հրատարակէ զումեքէ, կամ զծանր մեղս ուրուք՝ թէպէտ և ճշմարիտս՝ յայտնէ, առ ՚ի չարահամբաւել զնա։ Օ՞ի եթէ ոք վասն իրաւացի պատճառի զճշմարիտ ինչ մեղս ուրուք յայտնեսցէ, յուղղութիւն նորին, կամ ՚ի խափանումն ծանր մեղաց անձին և այլոց՝ չկարելով այլազգ զառաջս առնուլ չարեաց, չանիրաւի ինչ է եթէ ճշմարտ չարահամբաւութեան նորա չիցէ ծանրագոյն յոյժ քան զիւրն ճշմարտ։ Օ՞ի որպէս սուրբ Գրիգուինացին ասէ, բամբասանք իսկապէս այն է՝

որ ՚ի չարահամբաւութիւն ուրուք արարեալ, և ոչ առ հարկի բարւոյ իրիք։

8. Որքո՞ն իցէ առ ՚ի խափանել զծանր մեղս ինոյ անձին յայտնել զծածուկ մեղս ուրուք, զոր բռնի և անիրաւաբար դիտացեալ իցէ ոք, որպէս լուծանելով զինիք նամականւոյ։ — Ուրկոյ, Այսման, Մուրնելլի, Աքրուա և Վիտրեր ոչ օրէն համարին, և պարտական կացուցանեն զայնպիսին ՚ի հատուցումն ամենայն ինասուց՝ որ անտի հասանեն չարահամբաւելոյն։ Բայց առեալ զդէպս՝ յորում օրէն իցէ բռնի իսկ հետազօտել զյանցանս ուրուք, որպէս եթէ օգուտ հասարակաց պահանջիցէ զայտնութիւն նոցին, կամ եթէ ծանր պարտ իցէ ումեք յայտնելոյ զգաղտնիսն առ ՚ի խափանել զչարիս։

9. Որբ իցէ ոք պարտական պահելոյ զգաղտնիս։ — Պարտ է աստ զանազանել զբնական գաղտնիս յայնցանէ, զոր խոստանայ ոք և կամ զոր ոք ումեք աւանդէ։ Գնահաննն է, զոր ոք ըստ դիպուածոյ իմացեալ դիտէ. Յոյսդ ունիմ, յորժամ ոք պարտս չանձն առնու չայտնելոյ զայն ումեք. իսկ ապանդեալն, եթէ ոք ումեք վստահանայ զգաղտնիս իւր, արգել՚ի վերայ եդեալ չայտնելոյ զայն ումեք։ Որդ բնականն ածէ պարտս ըստ արդարութեան՝ չայտնելոյ զայն ումեք, եթէ ՚ի յայտնութենէ անտի ինասս ընչից կամ համբաւոյ հասանէ ումեք. այլ ոչ ոք պարտական է մնհուամբ չափ պահելոյ զբնական գաղտնիս, եթէ ոչ՚ի վերայ կայցէ հասարակաց ծանր ինչ ինասս։ Յոստացեալն ըստ դիտաւորութեան խոստացողին ՚ի վերայ ածէ պարտս. այլ ոչ ծանր, եթէ չիցէ նորա չանձն առեալ ստուգիւ այնպիսի ինչ ծանր պարտս։ Նոկ աւանդեալն խստագոյն քան զբնականն պարտս ՚ի վերայ ածէ, և չէ օրէն յայտնել զայնպիսի գաղտնիս, բայց միայն նախ՝ լուսեցայն հաւանութեամբ աւանդողին. երկրորդ՝ եթէ գաղտնիքն արդարև հրատարակեալ իցեն։ Նայց կէսք յաստուածաբանից ոչ համարին ծանր մեղս՝ յայտնել զայն միւմ կամ երկուց ումանց բարեկրօնից, եթէ կամք աւանդողին չիցեն մանաւանդ ՚ի նոցանէ ծածկել զգաղտնիսն։ Եւ երրորդ՝ եթէ ՚ի պահելոյ զգաղտնիսն հասցէ ինասս հասարակաց, կամ անմեղի ումեք, կամ նմին իսկ աւանդողի.

զի յայնժամ ոչ միայն օրէնն է, այլ և պարտ, յայտնել զայնպիսի գաղտնիս՝ որչափ բաւական իցէ զառաջս ունելոյ չարեացն, եթէ երդուեալ իսկ ուրուք իցէ լուել զայն: Պարձեալ ըստ Հանրագոյն և ըստ Հաւանակա-նագոյն կարծեաց օրէնն է յայտնել զաւանդեալ գաղտնիս առ՛ի խափանել զծանր վնաս անձին, եթէ միայն՛ի յայտնութենէ անտի չիցէ վնաս հասարակաց, և եթէ չիցէ ուրուք պարտս յանձն առեալ՛ի ծածուկ ունել զայն և և՛ի վնաս անձին: Իսկ թէ օրէ՞ն իցէ յայտնել զայն՛ի վտանգի կենաց, թէպէտ և մահուամբ չափ յանձն առեալ իցէ ուրուք լուել զայն, կէսք յաստուա-ծաբանից օրէն համարին, այլք ոչ· երկաքանչիւրոյն ևս կարծիք են հաւանականք:

10· Պիտելի է նախ՝ զի օրէն է յայտնել զՀմարիտ յանցանս ինչ ուրուք, որչափ բաւական իցէ՛ի պաշտ-պանութիւն անձին ընդդէմ զրպարտութեան նորա:

11· Երկրորդ՝ զի օրէն է յայտնել զմեղս ուրուք, որչափ ինչ կարևոր իցէ վասն ընդունելոյ խորհուրդ կամ սփոփանս՛ի կրել ծանր ինչ անհրաւութիւն, որպէս հաստատեն աստուածաբանք առհասարակ: Այս բա-զում քաջահմուտ վարդապետք, ընդ որս և Եսսիոյ, Այեթանոյ, Կաւարրոյ, Պոնաչինա, ոչ համարին՛ի մեղս գնել՛ի ծանր՝ եթէ ոք յայտնեսցէ զծածուկ մեղս ուրուք միում կամ երկուց խոհական անձանց· զի բա-րեհամբաւութիւն՛ի հասարակաց վարկի է, և չհամա-րի չարահամբաւել՝ միում կամ երկուց ոմանց խորհրդ-դապահից յայտնել զմեղս ուրուք: Յամ համաձայնի և սուրբ Գուլիելմոս ասելն. "Եթէ յայտնէ ոք ա-ռաջնորդի զմեղս ընկերին առ՛ի զգուշութիւն նորա, և կամ յայլ ինչ օգուտ այնպիսի, ոչ մեղանչէ: Այս եթէ յանդգնութենէ յայտնեսցէ ումեք զնոյն առանձինն նմա անպէ անուանաբկոութեան, չմեղանչէ մահուչափ": Այսպէս յայտնել միում ումեք զմեղս՝ ոչ է չարահամ-բաւել:

12· Երրորդ՝ զի եթէ մեղք ուրուք՛ի տեղւոջ ու-րեք հրատարակեալ իցէ, ոչ ևս մեղանչէ որ գնէ մա-հուչափ՝ և՛ի յայտնելն զայն ուր չև ևս հասեալ է լուր նրին, և եթէ ընդ հուպ իսկ չիցէ հասանելոյ՝ որպէս յաւելուն Այեթանոյ, Կաւարրոյ, Լաքրուա, Սալ-

մատիկեանք և այլք։ Ա՛յլ զայս պարտ է իմանալ զյանցանաց, որով յանցաւորին մարթ է ինքնասկսը լինել անձանօթիւց, որպիսիք ոմանք զեղծագործքն են, կառաւտք, մարդասպանք, մատնիչք, և այլն։

13. Ա՛յլ զյանցանս, որ երբեմն իցէ հրատարակեալ, ոչ է օրէն յայտնել յորժամ ոչ ևս է հրապարակագոյժ։ Այլ չէ արգելեալ պատմագրաց մատենագրել զհրապարակական յանցանս յօգուտ հասարակաց, որպէս հաստատեն Ղոթիոյ, Պոլինայ, Վասգուէզ, և այլք։

14. Չորրորդ՝ եթէ կորուսեալ ուրուք իցէ զհամբաւ յանցանօք իւրիք, չհամարի՛ ի ծանր մեղս՝ յայտնել և զհանգոյն ինչ կամ զյարակից յանցանս նորա, որպէս զընացողն գրել Թուղթս տուփականս, կամ զգողոյ ստերգմնուԹիւն։ Ա՛յլ ծանր մեղանչէ որ զայլազգ ինչ մեղս նոցին յայտնէ, որպէս զպոռնկել գողոյ, կամ ըզհայհոյանս չնացելոյ. զի որ ըստ իւրիք չարահամբաւեալն է, ոչ կորուսանէ զնրաւունս բարեհամբաւուԹեան իւրոյ ըստ այլոց մասանց։

15. Հինգերորդ՝ զի ոչ մահուչափ մեղանչէ որ պատմէ զյանցանս ուրուք որպէս՛ի Թշնամեաց նորա լսեալ, կամ յայնպիսեաց՝ որ չեն արժանահաւատք, և կամ ուր լսողք չհաւատայցեն հաւանականաբար զայն։ Ա՛յլ մեղանչէ մահուչափ եթէ պատմեսցէ իբրև յարժանահաւատից լսեալ, զի և կասկած ինչ հաւանական տալ ումեք զայսպիսեաց՝ ծանր մեղք են։

16. Վեցերորդ՝ ծանր մեղանչէ որ չարահամբաւէ զմիաբանուԹիւն ինչ կրօնաւորական, կամ զմի՛ ի վանայ նորա. ևս և որ յայտնէ զմեղս ուրուք՛ ի կրօնաւորացս, անուանելով զվանս նորա կամ զմիաբանուԹիւն։ Այլ Հայրն Ռոնզինա ոչ համարի զայն՛ ի ծանր մեղս, եթէ միաբանուԹիւնն այն բազմաԹիւ իցէ և ոչ խըստակրօն։

17. ԼօԹներորդ՝ ծանր մեղանչէ որ պատճառս տայ այլում բամբասելոյ։ Ծանր մեղանչէ և որ մտադիւր լսէ բամբասանաց, այլ ընդդէմ եղբայրսիրուԹեան ևԹէ։ Իսկ որ մտադիւր լսէ բամբասանաց, ոչ վասն ինասուն՝ զոր կրէ բամբասեալն, այլ միայն վասն նորուԹեան իրին և առ հետաքրքրուԹեան, բազումք յաս-

տուաճաբանից չՀամարին նմա զայն ՚ի ծանր մեղս, և թէ չլիցէ նա մեծաւոր՝ որում պարտ իցէ խափանել զբամբասանս Հպատակաց։ Այսու որոյ ծանուննս մեղանս չեն մեծաւորք ընդդէմ եղբայրսիրութեան, եթէ չյանդգիմանեն զՀպատակս՝ ՚ի բամբասել նոցա զծանր և զծածուկ մեղս ուրուք։ Այլ որ չլիցէ մեծաւոր, և առ ակնածութեան կամ երկիւղի չխափանիցէ զբամբասանս, բազում երևելի աստուածաբանք ազատ կացուցանեն զնա ՚ի մահուլսի մեղաց, եթէ ՚ի բամբասանացն անտի՝ բաց ՚ի չարահամբաւութենէ չիցէ և այլ ինչ վնաս բամբասելոյն, և եթէ չիցէ Հաւաստի՝ որպէս յաւելու սուրբ Գրիգուրնայրին՝ զի յանդիմանութեամբն կարասցէ խափանել զբամբասանսն։

Դայց բարւոք ազդ առնեն Լուկոյ, Մատեմպայ և այլք, մի պարտ համարել անդէնն ՚ի սկզբան բամբասանացն զդէմ ունել. զի բազում անգամ օգտակարագոյն է որում բամբասին՝ լռել ցկատարումն բամբասանացն՝ որ նուազ ինչ տան իմանալ լսողաց, քան որ ինչ ՚ի սկզբանէ բանիցն մարթ է նոցա ՚ի միտ առնուլ։ Այլ առ ՚ի զերծանել յամենայն խղճէ մտաց, շատ է ՚ի բամբասել ուրուք զծանուննս և զգաղտնիս նորումբէ՝ լսոցս տալ ՚ի բաց, կամ շրջել այլուր զխօսս, կամ դժկամակութիւն ընդ այն ՚ի դէմս բերել, կամ զաչս ՚ի վայր արկանել, և կամ լուրջ և անժպիտ կալ։

18. Վերորդ՝ զի անիրաւ բամբասողն պարտական է ՚ի Հատուցումն Համբաւոյ բամբասելոյն, և միայն գոնէ ընդ աղօտ նախատեսեալ իցէ զայն։ Այլ ոչ միայն եթէ զրպարտութեամբ բամբասեալ իցէ զոք՝ պարտի յայտնել զՀերքմարտութիւն առ լսօղս բամբասանացն, և առ որս ՚ի նոցանէ պատահեալ, այլ և յորժամ ՃՀմարիտ լեալ իցեն բամբասանքն՝ պարտ է նմա ըստ կարի շինել զմիտս լսողաց, որպէս սխալեալ կամ վեր ՚ի վերոյ ինչ յայլոց լուեալ, և կամ այլովք սոյնպիսի բանիւք անբասիր ընդ բամբասեալն առնելով։

Այլ եթէ խոհականութեամբ կշռադատեալ՝ միտս կարագոյն բամբասելոյն Համարիցի զոր նորոգել ՚ի միտս լսողաց զանկեալն ՚ի մոռացօնս, որպէս պարտ իսկ է Համարել՝ եթէ ոչ սակաւ ինչ ժամանակ ՚ի վերայ բամ-

բասանացն իւրէ անցեալ, լաւ իւրէ յայնժամ գովու-
Թեամբ ևԷթ բամբասելոյն առնել նմա փոխարէն։
Նայց ԹԷպէտ և Հատուցումն Համբաւոյ դիւրագոյն
քան զդրամոց է, սակայն օգնէ յաձախագոյնս յառաջ
քան զարձակումն պահանջել զայն 'ի բամբասողաց. զի
յետ արձակմանն դժուարաւ առնեն զայն։

19. Պիտելի է ինձերոգ՝ զի ոչ միշտ պարտականք
են բամբասողք 'ի Հատուցումն. և նախ՝ եթէ յանցանք
բամբասելոյն հրատարակեալ իցեն յայլոց, կամ այլով
օրինակաւ ստացեալ իւրէ նորա վերստին զՀամբաւ իւր։
Երկրորդ՝ եթէ մարթ իցէ Համարել խոհեմութեամբ,
զի բամբասելոյն Թողութիւն արարեալ իցէ ինասուն և
չպահանջիցէ զՀատուցումն, և այն՝ երբ չիցէ 'ի միջի
գայթակղութիւն կամ ինաս Հասարակաց կամ իւրոցն,
զի յայնժամ ոչ ևս է տէր բամբասեալն չպահանջե-
լոյ զՀատուցումն։ Երրորդ՝ եթէ 'ի Հատուցանելն Հա-
սանիցէ ումեք վտանգ կենաց կամ ինասու ծանրագունի
յոյժ քան զբամբասելոյն։ Չորրորդ՝ եթէ Հաւանակա-
նաբար ոչ ուրուք իցէ Հաւատս ընծայեալ բամբասա-
նացն, որպէս եթէ բամբասողն յեռանդն կրիցէ իցէ բամ
բասեալ։ Հինգերորդ՝ եթէ 'ի մոռացօնս անկեալ իցեն
իրքն, որպէս 'ի վեր այսր ասացաք։ Վեցերորդ՝ եթէ
բամբասելոյն ևս զբամբասողն իցէ բամբասեալ, և ոչ
արարեալ զՀատուցումն. զի յայնժամ ըստ Հասարակա-
գոյն և ըստ Հաւանականագոյն կարծեաց աստուածա-
բանից՝ ոչ է պարտական բամբասողն 'ի Հատուցումն չև
ընկալեալ 'ի նմանէ զնոյն։

20. Երէկ չիցէ մարթ առնել զՀատուցումն Համբա-
ւոյ, պարտ իւրէ բամբասողին արծաթով առնել փոխա-
րէն։ — Վեցք յաստուածաբանից, ընդ որս և սուրբ Ա-
գուստինոսին, պարտ Համարին զայն Հաւանականաբար,
իբր զի են և Համբաւոյ աւելի կամ նուազ արժէք։ Նայց
ըստ Հանրագոյն և Հաւանականագոյն կարծեաց՝ Ռու-
կոյ, Վանքեզ, Լայման, Պոնաչինա, Լաքրուա և Վալ-
մատիկեանք, ոչ պարտ Համարին. զի Համբաւ և արծաթ
տարասեռ 'ի միմեանց են, և չպահամբաւեալն
յետ ընդունելոյ զարծաթն կայ և ինայ նոյնպէս անուա-
նարկ որպէս մինչ չև զայն ընկալեալ։ Տես զայսմանէ և
'ի վեր անդր. (գլ. ժ. 83)։

21. Եթէ բամբասօղն չկարիցէ կամ չկամիցի առնել հատուցումն, օրէնն իցէ բամբասելոյն առնուլ իւրովի փոխարէն արծաթով։ — Կէսք ոչ օրէն համարին, իբր զի հաւանական ևեթ կարծեօք ոչ է մարթ առնուլ զհատուցումն։ Այլք՝ ընդ որս Եսսիոյ, Մոլինա, Բրակոնա, Սալմատիկեանք և այլք օրէն համարին. զի ասեն՝ թէ զկանոնն զայն չկարելոյ հաւանական ևեթ կարծեօք առնուլ զհատուցումն՝ պարտ է խնամալ զերկբայելի պահանջից և ոչ զհաւաստեաց, որպիսի է պահանջ կորստեան համբաւոյ. իսկ աստ երկբայութիւն զեղանակէ ևեթ հատուցմանն է, և է ինչ եղանակ հաւանականաբար ընկալեալ յաստուածաբանից։ Սակայն սուրբն Լվինսոս առաւել ընդունելի համարի զառաջնոյն կարծիս. զի որովհետև բամբասելոյն պահանջք ոչ արծաթոյ են այլ բարւոյ անուան, եթէ հաւանական է, մանաւանդ թէ հաւանականագոյն՝ որպէս ասացաք, բամբասողին ոչ գոլ պարտական հատուցանել դրամս՝ի չկարելն հատուցանել զհամբաւ, ապա բամբասեալն առնուլ իւրովի զհատուցումն, զտանի առեալ զայն միշտ հաւանական կարծեօք, և ոչ հաւաստեօք։

22. Պարտ է յաւելուլ ինչ աստ և յաղագս չարամատենից։ Չարամատեան է՝ հրատարակել գրով ըզծանր և զպաղտնի ինչ նախատինս ուրուք։ Չարամատեան կոչի և անանուն գիր ամբաստանութեան տալ։ դատաւորի։ Հրատարակօղք այսպիսւոյ մատենի անկանին՝ի բանադրանս վճռելիս. և նովին իսկ գոծով՝ի վճռեալ բանադրանս, եթէ իցէ մատեանն ընդդէմ Պապին, կամ Արքեպիսկոպոսի, կամ Արքի փրանկիսկեանց և Դոմինիկեանց և այլոց նոցին կրօնակցաց. այլ ոչ ևս, եթէ իցէ ընդդէմ ուրուք՝ի նոցին միանձանց։ Ի նոցին պատուհաս անկանին, և որք ըզդրամբ ուրուք կախեն ինչ նշանակ անուանարկ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՑ ՊԱՏՈՒԻՐԱՆԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

1. Բազումք են պատուիրանք եկեղեցւոյ, այլ գլխաւորքն՝ ի նոցանէ և հաստատակաց ամենայն հաւատացելոց են հինգ։ Ա. Տեսանել զպատարագ՝ ի կիւրակէս և՝ ի տօնս հրամայեալս, զորմէ վաղ իսկ յերրորդումն՝ ի տանն աբանեալ պատուիրանաց ձառեցաք։ Բ. Պահել զբառանանորդական և զայլ ծոմապահս։ Գ. Հրաժարել՝ ի մոլ և՝ ի կիեղինաց՝ ի չորեքշաբաթի և յուրբաթու աւուրս։ Դ. Խոստովանել գէթ միանգամ՝ ի տարւոջ և հաղորդել՝ ի զատկի։ Ե. Ի՝ ի առնել հարսանիս յարգելեալ ժամանակս, զորմէ ասասցուք՝ ի ձառս ամուսնութեան։ Ի՝ սոյն որով ինայ մեզ աստ ձառել զծոմապահոյ, զպահոյ, զխոստովանութենէ, զհաղորդութենէ, և զյարակից նոցին իրաց։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

ՑԱՂԱԳՐ ՊԱՐՏՈՒՑ ԵՒ ՊԱՀՔԱՊԱՀՈՒԹԵԱՆ*

2. Հրաժարել՝ ի մոլ։
3, 4. Ի կիեղինաց։
5. Ի ձարսլոյ։
6. Երեքին կանդակք Բենեդիկտոսի ծդ զպահոյ։
7. Որոց հրաման է ուտելոյ զմիս, օրէն իցէ նոցա ուտել և ձուկն։
8. Եւ խոզենի՝ ի քառանորդս։
9. Չի միանգամ ևեթ պարտ է ձաշել։
10. Բաժանումն ձաշոյ։
11. Չքաղցրաւենից։
12. Չըմպելեաց։
13. Չգինւոյ և զգարեջրոյ։
14. Չպաղպաղակէ։
15. Չձկրտիթէ։
16–19. Չերեկոյաձաշկէ։
20, 21. Որ բազում անգամ յաւուր պահոց ձաշակէ զմիս կամ զայլ կերակուրս։

2. Կրեք ինչ խնդրին առ եկեղեցական պահս. հրաժարել՝ ի մոլ, միանգամ ևեթ ձաշել, և զայն՝ ի սահ-

* Զոր՝ ի յառաջաբանի մատենիս կանխեալ և ասացեալ եմք՝ զի ըզ-

մանեալ ժամանակի: Այլ առաջին պայման է հրաժեշտի մոց, և գլխաւոր մասն պահոց է չճաշակել զմիս այոց ի կենդանեաց՝ որ ծնանին ի ցամաքի և շընչեն, որպէս սահմանէ սուրբ Գրուհացին. կամ որք սովորաբար համարին միս և ոչ ձուկն, որպէս այլք սահմանեն: Այսն որոյ չէ արգելեալ միս կրայից, գորտոց, խղնջանեաց, և բադից ծովայնոց: Իսկ թըռչնոց միս, թէպէտ և կենք ի նոցանէ երկակենցաղք են, արգելեալ է և ընդ պարարտս համարեալ: Այլազատ են ի պատուիրանէ աստի յիմարք և մանկտին չև հասեալ ի բանաւարութիւն: Իսկ յաղագս մանկանց, որոց կանխէ բանաւարութիւն քան զՀասակ եօթնամեայ, տես ի վեր անդր (գլ. Ր. 37):

3. Ի քառասնորդական պահս արգելեալ է ջուրհասիոյ ընդ ծանր մեղաց չուտել և կթեղինս: Այլ արդեօք և յայլ աւուրս արգելեա՞լ իցեն կթեղինք: — Ոմանք արգելեալ համարին. այլ հասարակաց կարծիք աստուածաբանից յայնոսիկ ևեթ տեղիս համարին արգելեալ, ուր իցէ սովորութիւն չուտելոյ: Ո՞ի ոչ զօրեն ի հաստատել զՀակառակ կարծիս հարևանցի բանք ինչ կոնդակին Ղենեդիկտեայ Ի., զի նա ինքն՝ի պիրոն յաղագս ժողովոյ՝ ազգ առնէ եպիսկոպոսաց յայտնապէս՝ մի արգելուլ զկթեղինս ի պահս արտաքոյ քառասնորդաց ի տեղիս՝ ուր սովորութիւն է ուտելոյ. ապա յայտ է զի իմաստ կոնդակին ոչ է արգելուլ զայն:

4. Ոմանկիք տեղեաց, յորս չիք սովորութիւն ուտելոյ կթեղինս, պարտակա՞նք իցեն ընդ ծանր մեղաց հրաժարել յայնցանէ: — Ովսկիտ և Ժիտեն զայն ոմանք յաստուածաբանից, իբր զի սովորութիւնն այն չուտելոյ ոչ է յայտ թէ իցէ լեալ յանձն առնուլ ծանր

սրբոյն Ալեքսանդրի Թարգմանօրէն տամք մեբաղնեայց զբարոյական Աստուածաբանութիւն, զնոյն և աստ երկրորդել հարկ համարիմք, առ ի յայտ առնելոյ զի որ ինչ զՊահոց և զԾոմնապահոց աւանդէին աստ կանոնք և օրէնք՝ ըստ Արևմտեան Եկեղեցւոյ ծիսից և օրինաց են աւանդեալք ի հեղինակէն. յորս, որպէս և յայլ ծիսականս, իւիք իւիք զանազանին Արևելեան եկեղեցիք՝ ըստ սահմանելոյ և օրինադրելոյ առաջնորդաց իւրաքանչիւր՝ ըստ իրաւանց և ըստ իշխանութեան իւրեանց զոր ունէին և զոր ունին:

պարտականութիւն, այլ հասարակաց կարծիք պարտականս զնոսա համարին: Ո՞ւ որովհետև, (որպէս ասացաք ՚ի գլ. Բ. 79) ոչ թեթև ինչ է հրաժարել ՚ի կենդանեացս, ապա սովորութիւնն այն պահեալ հաստատուն՝ համարի մուծեալ և յարատևեալ որպէս պարտ, ապա թէ ոչ՝ դիւրին էր այնմ դադարել:

5. Որոց հրաման իցէ ձաշակելոյ զկենդանիս, օրի՞ն իցէ նոցա ձաշակել և զձարպ: — Ամենք ՚ի բարոյական նպաց օրէն համարին, և Հայրն Ա իւա հաւանական կոչէ զայն: Այլ հասարակաց կարծիք զհակառակն ունին, քանզի ձարպ հաւասար է մսոյ, և առանց հրամանի ոչ է օրէն ՚ի կիր արկանել զայն ընդ կենդանիս:

6. Որոց հրաման իցէ ձաշակելոյ միս կամ կենդանիս, օրի՞ն իցէ նոցա յաւուրս ծոմապահոց ձաշակել և ըզձուկն: — Կարևոր է դիտել առ այս որ ինչ Բենեդիկտոս ԺԴ յերեսին կոնդակս իւր յայտ առնէ: Յառաջնում՝ մի ումեք կարել ձաշակել զմիս «առանց օրինաւոր պատճառի, և առանց երկաքանչիւրոց բժշկացն՝ հրամանի,,, այս ինքն բժշկին և ժողովրդապետի կամ խոստովանահօր: Իսկ վասն կարելոյ ժողովրդեան՝ առ հասարակ՝ պահանջէ պատճառս ծանուսնս, և անօրինում յառաքելական գահէն. և յայնժամ ևս չկարել նոցա ձաշակել զմիս՝ բայց միայն ՚ի ձաշու, առանց միս և ձուկն ՚ի նմին ձաշու խառն ձաշակելոյ: Երկրորդում յայտ առնէ զի և անօրինելոյ իրաքանչիւր նոցն պարտք են չուտելոյ միս և ձուկն ՚ի միասին, ոչ միայն ՚ի քառասնորդս՝ այլ և յայլ աւուրս ծոմապահոց: Իսկ յերրորդումն սահմանէ անօրինելոյ ՚ի ձաշակումն մսոյ ՚ի ձաշու՝ կերակուր և ըմպելի զայն առնուլ յերեկոյեան ձաշկի, որ ինչ սովորութիւն է երկիւղածաց ծոմապահից առնուլ: Սահմանէ դարձեալ պահել նոցա զսահմանեալ ժամ ծոմապահութեան, և ՚ի կիւրակէս իսկ քառասնորդաց՝ մի միս ընդ ձուկն խառն ձաշակել. և յաւելու յայտ առնել զի օրէն է անօրինելոյ ՚ի ձաշակումն կենդանեացս խառն ձաշակել և զձուկն:

7. Ի բանից կոնդակացս այսոցիկ և յայլոց սահմանադրութեանց և ՚ի վճռոց սրբոց գահին, ումն ՚ի քաջահմուտ աստուածաբանից եղոյց և հրատարակեաց ՚ի Հռոմ, զի ձուկն ընդ միս խառն ձաշակել յաւուրս

Լեթ ծոմապահոց է արգելեալ. իսկ յայլ աւուրս, յորս չիցեն ծոմապահք, տնօրինելոց 'ի Ճաշակումն մեծ՝ օրէն է և ձուկն 'ի միասին Ճաշակել: Եւ յաւուրս ծոմապահոց իսկ ցուցանէ արգելեալ ընդ միս Լեթ չխառնել նոցա ձուկն, այլ ընդ արգանակի օրէն է նոցա խառնել:

8. Որո՞ւն իցէ տնօրինելոց 'ի Ճաշակումն մեծ ուտել 'ի քառասնորդս զհօղենի: — Ոչ այրն Ռոմէական ոչ օրէն համարի, 'ի վկայութիւն ածեալ զյայտարարութիւն Ղեւմայ ԺԱ, հրատարակեալ յամին 1702: Այլ հասարակաց կարծիք աստուածաբանից օրէն համարին զայն. զի յայտարարութիւնն այն Ղեւմայ վասն հռովմէական սահմանաց Լեթ էր, և ոչ վասն հասարակաց. և զի դարձեալ Ռենեդիկտոս ԺԴ 'ի յիշատակել զյայտարարութիւնն զայն 'ի կոնդակի իւրում՝ հաստատէ զայլ բանս նորա, այլ ոչ և զարգել Ճաշակելոց զանառողջ մնեղէնս:

9. Երկրորդ պայման ծոմապահութեան է միանգամ Լեթ Ճաշակումն. և թէպէտ չիցէ սա դէմառաւոր մասն նորին, սակայն և 'ի դադարել դէմառաւորին՝ որ է հրաժեշտ 'ի մոյ, սա ոչ դադարէ՝ բայց միայն որոյ վասն տկարութեան իցէ հրամանն Ճաշակելոց զմիս՝ որպէս նոյն ինքն Ռենեդիկտոս ԺԴ 'ի նմին կոնդակի իւրում յայտառնէ:

10. Բայց օրէն է առ հարկի գործառնութեան իրիք 'ի վերայ հասանելոց բաժանել զՃաշ, և յետ երկուց իսկ ժամուց դառնալ կատարել զայն: Եւ առանց իսկ հարկի, թէպէտ և ուրուք կատարեալ իցէ զՃաշ, օրէն է նմա յաւելուլ Ճաշակել մինչև իբր ցկէս ժամու: Իսկ յաղագս տևողութեան Ճաշու՝ Աքրուա, Ժամ պուրինի և այլք հաւանականաբար օրինաւոր համարին յերկարաձգել զայն ցերկուս ժամս. և Վզել և Պաեժոյ մինչև ցերիս և ցչորս ժամս օրինաւոր համարին, գնթ վասն գերմանացւոց ըստ սովորութեան նոցա:

11. Որն է և Ճաշակել դոյզն ինչ քաղցրաւենի արտաքոյ Ճաշու իբր 'ի դեղ մարսողութեան, 'ի զօրութիւն ձայնի, 'ի բուժումն գարշահոտութեան շնչոյ, և վասն այլոց սոցին սակի պատճառաց: Եւ առ տկարութեան իսկ օրէն համարին Աշորիոյ, Եսկոյ, Ժուլեոյ, Այման, և այլք առհասարակ, առնուլ դոյզն

ինչ կերակուր (իբր ունկի մի, այսինքն ուղի տրամ), միանգամ կամ երկիցս յաւուր տրտաքոյ Ձաշու։

12. Որքն ե դարձեալ առնուլ և զամենայն ըմպելիս, բաց 'ի կաթանէ և յարգանակէ. զի այսոքիկ 'ի կերակրոյ համարի են և ստածիչք։ Ոչնոյն է ասել և զհիւթեղ պտղոց, որպիսի են ձմերուկ, նարինջ, դեղձ, նուռն, խաղող և այլն. զի և սոքա համարին 'ի կերակուր, և չէ օրէն աւելի ինչ Ձաշակել յայնցանէ, և ոչ զհիւթ նոցին ծծել, և ոչ զօշարակ խաղողոյ այն ինչ քամեալ։

13. Եւ յն ինչ ասեմ քամեալ. զի Թէպէտ և նախնի հաւատացեալք և 'ի գինւոյ հրաժարէին յաւուրս Ծոմապահոց, այլ զարդիս օրէն է ըմպել զայն՝ և ս և առ 'ի բուժել զքաղց, որպէս ուսուցանեն բարոյականք առհասարակ։ Ոչնոյն է խմնալ և զկասկաջոյ, որ ընդ պարզ ըմպելիս է 'ի համարի։

14. Այսպէս օրէն է առնուլ և զամենայն օշարակս խառնեալս ընդ ջրոյ որպէս ըմպելի, զի գոյն ինչ 'ի նոսա է գոյացութիւն. և պաղեալ իսկ Թէ իցեն, ոչ փոխին 'ի բնութենէն. Հանգոյն ջրոյ սառուցելոյ, որ այն ինչ առեալ 'ի բերան՝ հալի և 'ի հեղական հանգամանս իւր դառնայ անդրէն։ Որ օրինակ գինի սրբագործեալ Եթէ պաղիցի 'ի բաժակի, ոչ այլ գինի վերստին քահանայագործեմք, որպէս պարտ էր առնել Եթէ փոխեր տեսակայն բնութիւն 'ի սառնուլն, այլ հրով զայն լուծանեմք, որպէս սրբոյն Պետրոսի հրամանաւն հրատարակեալ պատարագամատուցին աղդ առնէն խրատք։

15. Իսկ զչիքողաթէ խղճեն բաղումք յաստուածաբանից, և ոչ օրէն համարին առնուլ զայն յաւուրս Ծոմապահոց. բայց հասարակաց սովորութեամբ օրինաւոր համարի, որպէս վկայեն Աթիւա, Հոլշման, Ճամպուրինի, Մոնքալեա և Պալմատիկեանք։ Եւ յլ չափով պարտ է առնուլ զայն. և բարւոք սահմանեն Պալմատիկեանք և այլք զչափ իբր քսան տրամոց, յաւելեալ յայն որչափ ինչ ուժեք Հաձոյ Թուիցի զքուր։

16. Որքն է և գոյն ինչ ընդ երեկս առնուլ 'ի Ձաշակ, որպէս է իսկ արդ ընկալեալ 'ի սովորութենէ ամենայն ուրեք։ Ոչափ սորին հասարակաց կարծիք

աստուածաբանից սահմանեն ուղի ունկի, սուղ ինչ ա-
ւելի, այս ինքն իբր 70 կամ 80 տրամ. և զայս օրէն
համարին և այնոցիկ, որ սակաւուց կարօտին կերա-
կրոց:

17. Ասա որակի և կերակրոց՝ ընկալեալ են արդ՝ ի
սովորութենէ ոչ միայն պատուղք և խոտեղինք, քաղց-
րաւենիք և աղծեալ ձկունք, այլ և գալարք և մեծա-
մեծք, պահելով միշտ զքանակ երեկոյաձաշկի:

18. Ասա հասարակաց կարծեաց բարոյականաց՝ ի
քանակ հացի և ընդեղինաց եփելոց մանանեն՝ ի կշիռ և
ձեթ և քացախ և գինի, և ս և ջուր. որպէս զի հաղիւ
ներեալ է յերեկոյաձաշկի չորեքունկի նկանակ եփեալ
՝ի հինգ ունկի ջրոյ: Այլ թանալ և ևեթ զհաց՝ ի ջուր
կամ՝ի գինի՝ ի ձաշակել անդ՝ օրէն է:

19. Տնօրինելոց՝ ի ձաշակուճն մնոյ ոչ է օրէն ար-
տաքոյ ձաշու ոչ միս և ոչ կթեղէն ձաշակել, և ոչ
յերեկոյաձաշկի, որպէս յայտ է՝ ի կոնդակաց Յեւնե-
դիկտոսի ԺԴ, և Ալեքսիոյ ԺԳ. զի տնօրինուճն այն վասն
միանգամ ևեթ ձաշակելոց ընդրկեալ է: Նոյն մանկը-
տոյ, որ չև՝ ի տիս ծոմապահութեան հասեալ իցէն,
ոչ է արգելեալ. զի առ՝ ի չգոյէ նոցա պարտուց ծոմա-
պահութեան, զօրէ տնօրինուճն և արտաքոյ ձաշու:

20. Որ լուծանէ ոք զծոմապահս, պարտի բացա-
տրել՝ ի խոստովանութեան զորպիսի լուծանելոյն. այս
ինքն արտաքոյ ձաշու կերեալ ինչ իցէ, թէ զմիս ձա-
շակեալ. զի քանիցս ոք միս կամ կթեղէնս յաւուրն
ձաշակիցէ, նոյնչափ և մեղս գործէ. իսկ որ զպահոց
կերակուրս ևեթ ուտիցէ լուծանելով միանգամ զծոմ,
ոչ ևս պարտական գտանի ծոմապահելոց զայն օր:
Ո՛չ այս այսպէս ունին հասարակաց կարծիք աստուածա-
բանից, ընդդէմ սակաւուց ոմանց. զի էութիւն պա-
տուիրանի չուտելոց զմիս՝ի ժուժկալութեան է, վասն
որոյ և կայ և մնայ միշտ և յետ միանգամ ձաշակելոյ՝
պարտականութիւն ժուժկալութեան հրաժարելոյ՝ ի
մնոյ. իսկ էութիւն պատուիրանի ծոմապահելոյ՝ է՝ի
միանգամ ևեթ ձաշակուճն. վասն որոյ՝ի լուծանել
էութեան պատուիրանին ձաշակելովն միանգամ, ոչ
ևս մարթ է պահել զայն: Այլ եթէ երկիցս ուրուք
աւելի ինչ ձաշակեալ իցէ յանգէտս, պարտ է նմա

դարձեալ ծոմապահել։ — Այսման, Պենաէինա, Բրաս-
Թրոփալ, Հոլզման, Միփորը և այլք ոչ պարտ համարին
վասն նոյն նորին պատճառի. բայց այլք յաստուածա-
բանից հաւանականագոյնս պարտ համարին. զի որ
անգիտութեամբն լուծանէ զծոմապահս՝ թէպէտ և
լուծանէ զայն նիւթականապէս, սակայն թուի թէ
պարտ իցէ նմա հրաժարել՝ի լուծանելոյ զայն տեսա-
կապէս։

21. Ընդէ՞ր ինչ ասացաք ձաշակել, այս ինքն ուտել
քան զերկու ունկի, որ է իբր 15 տրամ։ Օ՞ի դուշնա-
քեայ ինչ համարի այս չափ, որպէս ասեն Անքիզ,
Ալիւա, Ալմատիկեանք, Ալիւալտոյ, Յամպուրինի,
Միփորը, Պուսեմպայ, Լչակել և այլք։ Եւ եթէ ոք
բազում անգամ նոյնօրին դուշնաքեայ ինչ ձաշակիցէ,
մինչև հասանել ձաշակացն՝ի չափ ծանրութեան, ման-
հուչափ մեղանչէ. և հակառակն սորին վարդապետու-
թիւն դատապարտեալ է Ալքեքսանդրէ Ե։ Պիտելի
է զի և՝ի լուծումն պահոց մարթի լինել դուշնաքեու-
թիւն նիւթոյ, այլ նուազագոյն յոյժ քան զծոմապա-
հոցն։ Տիանա, Ռոնքալեա, և Ալմատիկեանք զտրամ
մի մոյ բաւական համարին՝ի լուծումն պահոյ և՝ի
ծանր մեղս. այլ զկնիւծ մի ձուախառն կամ կոգե-
զանգ խմորոյ՝ դուշնաքեայ ինչ համարին. բայց այլք ոչ
աղատ կացուցանեն զայն՝ի ներբելի մեղացս։

ԳՕԴՈՒԱԾ Բ

ՈՐ ԻՆՉ ԱԶԱՏ ԿԱՑՈՒԾԱՆԷ Ի ՊԱՏՈՒ

22 • Տնօրինուածն, և ուժ անկ իցէ տնօրինել:
23 • Անկարողութիւն բնական:
24 • Անկարողութիւն բարոյական:
25 • Ժամանակաւոյ և ղծելոյ:
26, 27 • Ձաշխատաւորաց:
28–30 • Ձուլևորաց:
31 • ՁՀոխ ձեռագիտաց:
32 • Եթէ մարթ իցէ ձեռագիտին ծոմապահել առանց ծանր նեղութեան:
33 • Որ անպատճառ ձեռնարկէ յաշխատութիւն:
34 • Երբ վասն բարեգործութեան օրէն իցէ չծոմապահել:

22 • Ոորք են՝ որ ի պարտականութենէ պահոց ազատ կացուցանեն • պնօրինուածն, անկարողութիւնն, աղխապուածն և բարեգործութիւնն:

Ա • Տնօրինել անկ է նախ Պապին, և իշխանութիւն է նմա տնօրինելոյ ի պահոց զամենայն հաւատացեալս: Յորկորդ եպիսկոպոսաց ի թեմի իւրեանց տնօրինել զիւրաքանչիւր ոք • զի առ ի տնօրինել զամենեսեան ըստ որակի կերակրոց՝ պարտ է նոցա ունել հրաման ի սրբոյ դահէն, որպէս յայտ արար Ղևենեդիկտոս ԺԴ: Ոակ վասն տնօրինելոյ զամենեսեան ի ծոմապահութենէ կամ ի փոխադրելոյ զայն յայլ օր միանգամ առ հարկի, օրինակ իմն վասն վտանգի պատուիրանազանցութեան, թէպէտ և բազումք յաստուածաբանից համարին ունել նոցա իշխանութիւն, այլ նոյն ինքն Ղևենեդիկտոս ԺԴ զկաւառակն ըստ հանրագոյն և ըստ հաստատագոյն կարծեաց սահմանեաց: Իշխանութիւն է և ժողովրդապետաց տնօրինել զիւրաքանչիւր ոք ի հպատակաց իւրեանց, (որպէս ասացաք ի գլ • Բ • 59 •) եւս և ի մերձակայութեան թեմական եպիսկոպոսին, որպէս հաստատեն ըստ հասարակաց կարծեաց Անքեզ, Ալջորիոյ, Վրանչինա, Ամլմատիկեանք և այլք: Ոչնոյն և փոխանորդք ժողովրդապետաց կարեն, եթէ չիցէ այն հակառակ կամաց ժողովրդապետին: Իշխանութիւն է տնօրինելոյ և կարգապետաց և վանահարց

զՀպատակս իւրեանց և զանձինս։ Այլ սոքա ամենեքեան, բայ 'ի սրբազան Պապէն, չկարեն առանց իրաւացի պատճառի տնօրինել վաւերաբար։ Իսկ Հպատակը, որպէս սուրբ Աստուածային ուսուցանէ, եթէ պատճառք ազատութեան նոցա 'ի պահոց բացայայտք իցեն, կարեն իւրովի ազատանալ, մանաւանդ յորժամ չկարիցեն դիւրաւ դիմել առ մեծաւորս յառաւել հանդարտութիւն խղճի մտաց. իսկ եթէ երկբայելի իցեն պատճառք ազատութեան նոցա, պարտ է նոցա դիմել առ մեծաւորս։

23. Բ. Անկարողութիւն պահելոյ երկակի է, բնական և բարոյական։ Անբնականապէս անկարող են հիւանդք, որոց ընտանեկար իցեն պահք. նմանապէս և որք դեռ ևս զերծեալ իցեն 'ի հիւանդութենէ, և տկարք 'ի բնութենէն՝ որ չկարեն ընդունել սնունդ բաւական 'ի միանգամ ևեթ յաւուրն ձաշակելոյ։

Անկարող են և յղի կանայք և ստնտուք, որոց և ոչ հրամայ է ծոմապահելոյ (բայց միանգամ և երկիցս՝ եթէ զօրաւորք իցեն բնութեամբ)։ Օրէն իսկ է նոցա յաւուրս ծոմապահոց ձաշակել և զմիս, եթէ տկարք իցեն ինքեանք, և կամ ստնդեայն անառողջ։ Ազատ են և աղքատք, որոց չիք կերակուր բաւական առ 'ի միանգամ ևեթ ձաշել, որպէս ասէ սուրբ Աստուածային ընդ բարոյականս առհասարակ։ Նմանի հաւանականաբար զՀետ բերեն Յանքէզ, Անկլէս, Նոնքալեա և Յալմանտիկեանք, զի և որք հացիւ ևեթ և բանջարով և ընդեղինօք պարենաւորին, չեն պարտական 'ի մի ևեթ ձաշ. զի խոտեղինք և ընդեղինք չեն ինչ ստածիչք, և հարկ է ստէպ առնուլ յայնցանէ 'ի ձաշակ առ 'ի բաւական սնունդ։

24. Բարոյական անկարողութիւն ազատ կացուցանէ զայնոսիկ, որք չկարեն ծոմապահել առանց ծանր նեղութեան կամ արտաքին ինչ դժուարութեան։ Այսոքա են նախ՝ որք գլխացաւ ծանր 'ի ծոմապահելոյ կրեն։ Երկրորդ՝ որք 'ի ծոմապահելն չկարեն զիշերի ջերմանալ և 'ի քուն լինել։ Այսոքա որոց կէսք յաստուածաբանից պարտ համարին նոցա զերեկոյաձաշիկն առնուլ 'ի միջօրէի և ձաշել յերեկոյի. բայց այլք բազումք ոչ պարտականս համարին զնոսա

յանձն առնուլ զայսպիսի նեղութիւն։ Երրորդ՝ զի նուագը՝ ի պատերազմի և՝ ի խաղաղութեան։ Չորրորդ՝ արամբիք եթէ վասն ծոմապահելոյ կրեն ցաւումն ծանր յարանց իւրեանց, և կանամբիք եթէ՝ ի ծոմապահելոյ գտանիցին անկարողք՝ ի հատուցանել զամուսնական պարտս իւրեանց։ Իսկ եթէ տկար լինէ գտանիցի ոք կամ առ՝ ի խնդրել լինէ անկարող, ոչ են ազատ. բայց միայն եթէ՝ ի հրաժարելն՝ ի խնդրելոյ՝ ոչ տացէ պատճառս անժուժկալութեան կնոջն կամ կասկած սիրելոյ զայլ ոք՝ ի կանանց։

25. Հինգերորդ՝ ազատ են՝ ի ծոմապահելոյ և պատանիք մինչև՝ ի լրումն քսանևմիոյ ամի տիոց իւրեանց։ Վեցերորդ՝ ծերք անցեալք զվաթսնամեայսն, թէպէտ և ինչն դեռ ևս զօրաւորք։ Ամենք յաստուածաբանից չընդունին զայս. բայց այլք հաւանականագոյնս հաստատեն, եթէ վասն ընդհանուր սովորութեան, և եթէ վասն խղճի հանդարտութեան. զի տագնապ մեծ հասանէր ծերոց՝ ի քննել թէ արդեօք ունիցին բաւական զօրութիւն ծոմապահելոյ թէ չունիցին։ Այլ դարձեալ զի՝ ի նուազել ջերմութեան և զօրութեան՝ ի նոսա, չկարեն այնչափ ինչ՝ ի միում նուագի ձաշակել որ բաւական իցէ նոցա՝ ի սնունդ. և եթէ զօրաւորք ևս իցեն՝ զաղփաղփուն է զօրութիւն իւրեանց, և յանկանել՝ ի հիւանդութիւն ինչ՝ դժուարաւ դառնան՝ ի կատարեալ առողջութիւն. վասն որոյ Պաղենոս ասէ՝ թէ “Պարտ է ծերոց որպէս զդեռահասողս կերակրիլ։” Այսպէս՝ ի մեռս վաթսնամեայսն դադարէ պարտականութիւն ծոմապահելոյ ծերոց, որպէս հաստատեն Վասթրոփալ, Ընկլէս, Նալտոյ, Վիւա, Մաղոմեթի, Սալաս և այլք. զի՝ ի նպաստաւոր իրս լսացեալ համարի ամն սկսեալ։ Ամենք համարին վասն կանանց՝ ի յիսնամենի դադարել պարտականութեան ծոմապահոյ, այլ չէ ընդունելի, և զհաւանականութենէ իսկ նորա երկբայի Տիանա։ Իսկ եթէ ուխտեալ ուրուք իցէ բացայայտակի խոստմամբ մինչև ցմահ ծոմապահելոյ, նա և յետ վաթսնամեայն չէ ազատ. այլ որ առանց խորհելոյ ինչ՝ ի սահման պարտականութեան իւրոյ և՝ ի տկարութիւն ծերութեան արարեալ իցէ զուխտ իւր, ազատ է վասն յեղափոխութեան հանգամանաց՝ ի վերայ հաստա-

նելոյ, որպէս ասացաք ՚ի գլ. Ե. 35։ Օ՚նոյն է իմանալ և զծոմապահոց կրօնաւորաց։

26. Գ. Ազատ կացուցանէ ՚ի ծոմապահելոյ և աշխատութիւն։ Այլ նախ քան զամենայն գիտելի է զի վարդապետութիւնս այս՝ "Ամենայն պաշտօնեայք հասարակաց, որոց իսկ մարմնաւոր ինչ աշխատութիւն, ազատ են ՚ի պարտուց ծոմապահելոյ,,, դատապարտեալ է Աղեքսանդրէ Ե, վասն կարի հանրականութեանն՝ որ ազատ կացուցանէ և զայնոսիկ, որոց աշխատութիւն չէ ինչ ծանր կամ կարևոր։ Այլ միաբանին բարոյականք ազատ կացուցանել զարուեստաւորս, որ առանց բազում շարժմանց չկարեն ինչ գործել։ Ոմն որոց ազատ են երկրագործք, քարահատք, վիմակոփք, հիւսունք, դարբինք, ոստայնանկք, բրուտք, ներկարարք, թափիչք, բեռնակիրք, կառավարք, նաւաստիք, կարուակք, հացագործք, խոհարարք բազմաթիւ անձանց կամ բազմաձան կերակրոց, ծառայք՝ որոց ծանր իսկ աշխատութիւն. վասն որոց չեն ազատ աղախնայք՝ որ ՚ի պահ տրզայոց կան, կամ պարապեն ՚ի մանել։ Դարձեալ և որք ՚ի վաճառ կարևորաց շրջին ընդ քաղաքն, և որք զարդարեն զեկեղեցիս, և սոցին սակի աշխատաւորք։ Այլ սոքա ամենեքին յայնժամ գտանին ազատք, յորժամ զմեծ մասն աւուրն հասանէ նոցա աշխատել։

27. Ոմն արուաւիրայք հասարակօրէն չեն ազատ, բայց միայն եթէ ունիք ՚ի նոցանէ առ տկարութեան կամ առ յաձախելոյ եկաւորաց ծանր իսկ ծոմապահել։ Օ՚նոյն է իմանալ և զդերձակաց, զնօտարաց, զնկարչաց, զանդրիագործաց, զոսկերչաց և որք զժամացոյցս կրեվս յօրինեն. զորոց պարտ է ըստ հասարակաց կանոնի դաւել. զի ձեռագիտք արուեստից, որ ըստ ինքեան չեն ինչ բազմաձաստակք, ըստ տկարութեան և ըստ հանգամանաց իւրեանց կարեն ազատ գոլ ՚ի ծոմապահելոյ։

28. Ազատ են և որք զմեծ մասն աւուր հետևակեն, որպէս սայլորդք, ջորեպանք և այլն։ Այլ եթէ ուրուք կատարեալ զուղևորութիւնն յետ միջօրեի՝ կերիցէ ըզձաշ իւր, ոչ ևս օրէն է նմա ձաշակել, բայց եթէ ՚ի վաղիւ անդր ևս պարտ իսկ նմա հետևակել։ Դարձեալ եթէ չիցէ կարևոր ուղևորութիւնն, և կամ կարիցէ օր դիւրաւ թողուլ զայն յայլ օր, պարտ է նմա

առնել այնպէս առ՝ի կարելոյ ծոմապահել, որպէս մեռ
մեզ ասել՝ի ստորև (33)։ Այլ եթէ ուրուք յուղի ան-
կեալ իցէ, և ծոմապահք՝ի վերայ հասանիցեն, ոչ է
պարտական յամել ուրեք յուղոջ վասն ծոմապահելոյ՝
թէպէտ և կարիցէ դիւրաւ։

29. Որչափ ինչ երկարութիւն ուղևորութեան ա-
զատ կացուցանէ՝ի ծոմապահոց։ — Վասկուալիկոյ քա-
ւական համարի զեօթն մղոն. բայց այլք ոչ ընդունին
զայս, և պահանջեն գէթ երկոտասան մղոնս՝ որ է չո-
րից ժամուց գնացք ձանապարհի։ Եթէ չիցէ ձանա-
պարհն տաժանաւոր, կամ ուղևորն տկար, զի այնպի-
սումն բաւական համարի և վեց մղոն։

30. Ումբո իցէ՝ի ծոմապահելոյ որ՝ի կառս կամ հե-
ծեալ ուղևորի։ — Ի արդապետութիւնն այն թէ "Ու-
զած են բոլորովին՝ի ծոմապահոց ամենայն ուղևորք,
թէպէտ և ուղևորութիւն նոցա չիցէ կարևոր, և թէ
միոյ աւուր իցէ ուղևորութիւն,,, զատապարտեալ է
յԱղեքսանդրէ Ե։ Ումբ հասարակաց կարծիք աստուա-
ծաբանից ազատ կացուցանեն զայնոսիկ, որոց զաւուրս
ինչ առաջի կայցէ ուղևորել կառաջ կամ հեծեալ։
Այսման և Ի իւա պահանջեն առ այս ուխտօրեայ ու-
ղևորութիւն. այլ խիստ յոյժ թուի այս այլոց։ Ու յա-
ւելու Ի իւա, զի որ առանց ծանր նեղութեան կարիցէ
յուղևորել ծոմապահել, չէ ազատ՝ի պարտուց։ Ամ
ընդհակառակն՝ Ազորիոյ, Սանչեզ, Վոլէտոյ, Ռոնքա-
լեա, Ասբրուա, Սալմանտիկեանք և այլք զմիօրեայ իսկ
ուղևորութիւն շատ համարին, եթէ ծանր իցէ կամ
ըստ զժուարութեան ձանապարհին, կամ ըստ տկա-
րութեան ուղևորին, և կամ ըստ խստութեան եղանա-
կին։ Ու պարտ է զծոմապահութիւն նախադասել քան
զայլ պահս. որպէս զի եթէ ուրեք չիցէ կերակուր պա-
հոց բաւական առ՝ի ձաշ, և պարտ իցէ ուղևորին լու-
ծանել ապա զծոմապահս, պարտ է նմա ձաշակել կթէ-
ղինս՝ առ՝ի կարելոյ ծոմապահել, քան թէ միւսանգամ
ձաշել։

31. Ձեռագիտաց ձոխից, որոց բազմավաստակ իցէ
արուեստ, պարտ իցէ ծոմապահել թէ հրաժարել յաշ-
խատութենէ յաւուրս ծոմապահոց։ — Ումանք յաս-
տուածաբանից պարտ համարին հրաժարել նոցա յաշ-

խատուԹենէ. այլ հասարակաց կարծիք ազատ կացուցանեն զնոսա, զի օգուտ հասարակաց պահանջէ չխափանել նոցա՝ի ձեռնարուեստից իւրեանց. զի եԹէ ազքատաց ևԹէ ձեռագիտաց պարտ էր վաստակել յաւուրս ծոմապահոց, ՚ի նաս անտի հասանէր հասարակաց։

32. Ձեռագէտք, որոց մարԹ իցէ առանց ծանր նեղուԹեան ծոմապահել, պարտականք իցեն։ — Կէսք յաստուածաբանից չհամարին զնոսա պարտականս, եԹէ վասն սովորուԹեան, և եԹէ վասն չհայելոյ օրինաց յանսովոր դէպս։ Այլք առաւելագոյնք պարտականս համարին զնոսա, եԹէ միայն հաւաստի իցէ զբերել նոցա ծանր նեղուԹիւն. զի եԹէ երկբայելի իցէ, պարտ է՝ի նպաստ ազատուԹեան դատել։ Երկրորդս այս վարդապետուԹիւն հաւանականագոյն Թուի, որովհետև օրէնք հրամայեն ծոմապահել ամենեցուն, որոց կարէնն առանց ծանր նեղուԹեան։ Այլք գժուարաւ պատահէ զի աշխատաւոր ոք չպարտասիցի՝ի ծոմապահելն, և կամ գէԹ չզգայցէ՝ի վաղիւ անդր տկարուԹիւն յաշխատել։ — Ոմանք է իմանալ և զձեռագիտաց, որոց դէպ լինի օր մի կամ երկուս անգործ կալ՝ի քառասնորդս. զի ԹէպԹ և հասարակաց կարծիք չըհամարին զնոսա պարտականս, զառաջին օրն վասն երիկեան վաստակոյն, իսկ զերկրորդն վասն՝ի վաղիւ անդր հանդերձելոյն, սակայն եԹէ մարԹ իցէ նոցա առանց ծանր նեղուԹեան ծոմապահել, պարտական են՝ որպէս Պռնաչինա և Վ իւա հաստատեն։

33. Որ առանց ինչ հարկի ձեռնարկէ յաշխատուԹիւն յաւուր ծոմապահոց, մեղեցի՞ է՝ի չկարելն ծոմապահել։ — Ոմանք ազատ կացուցանեն զնա՝ի մեղաց, եԹէ միայն չիցէ նորա ձեռնարկեալ յայն վասն խոյս տալոյ՝ի ծոմապահոց. այլք և առանց այսր ամիսնման օրէնն համարին նոցա վարել իրաւամբք ազատուԹեան իւրեանց։ Այլ առաւելագոյնք յաստուածաբանից՝ի մեղս համարին նոցա զայն, ԹէպԹ և ոչ վասն խոյս տալոյ՝ի ծոմապահոց ձեռնարկիցեն յաշխատուԹիւն։ Ո՞ր որպէս՝ի վերջ անդր (գլ. Բ. 20) ասացաք, ամենայն օրէնք պահանջեն չդնել առանց իրաւացի պատճառի արգելս պահպանուԹեան իւրեանց։ Ոմն ուսուցանէ և սուրբ Աթանասիոս յասելն. «Որ կամի ինչ,

ընդ որում չէ մարթ առնել միւս այլ ինչ, նովին իսկ կամի վերջանալ ի միւսմն ,,։ Եւ զայս սուրբ վարդապետն վասն պարտուց տեսանելոյ զպատարագ ասէ. զի մեղանչէ եթէ պարապէ ոք իմիք, որով ապա խափանի ի տեսանելոյ զպատարագ։

Եայց եթէ ոք աշխատիցի դիտաւորութեամբ չապասկասելոյ ի ծոմապահութենէ, և ապա լուծանիցէ զծոմ, ոչ ինչ մեղանչէ. քանզի միաբանին բարոյականք առհասարակ, զի եթէ ոք առ ի խուսել իսկ ի պատուիրանապահութենէն և կամ այլով իւիք չար դիտաւորութեամբ աշխատիցի, մեղանչել մեղանչէ յաշխատելն, այլ ոչ ևս պարտական է ծոմապահելոյ. զի անկարող այնուհետև գտանի բարոյապէս ի ծոմապահութիւն։

Յաւելու Անքեզ զի եթէ աշխատիցի ոք վասն օրինաւոր ինչ իրաց, որպէս վասն այցելութեան բարեկամաց կամ աղգականաց, վասն որսոց կամ զբօսանաց, ոչ մեղանչէ. այլ այս չէ ընդունելի այլոց, եթէ միայն վասն զբօսանաց կամ վայելչութեան իցէ աշխատութիւնն։ Այլ որ վասն մեծի ինչ շահու աշխատ լինի, թէպէտ և չիցէ այն արուեստ իւր կամ գործ, սակայն չմեղանչէ ասեն հաւանականաբար Կաւարրոյ, Կայեդանոյ, Լայման, Անքեզ, Սիփորեր, Վզել և այլք։ Ցայսմանէ տես և որ ինչ ասացաքն ի գլ. Զ. 22. զի կորուստ մեծի շահու՝ համարի ի միտս մեծ։

34. Դ. Ասն բարեգործութեան ևս օրէնն է պակասել ի ծոմապահութենէ, թէպէտ և չիցէ այն հրամայեալ կամ գործ պաշտամանն, այլ ի բարեպաշտութենէ եւեթ, եթէ միայն չիցէ մարթ թողուլ զայն այլում ժամանակի։ Ասն որոյ ազատ են նախ՝ հիւանդապահքն. երկրորդ՝ ուխտաւորքն, որք ի փառս Աստծոյ, ի շինութիւն հասարակաց և յօգուտ անձանց իւրեանց պանդխտին. զի եթէ չիցէ մարթ նոցա յամել, կամ թէ վաղ իսկ ուղեւոյ լեալ իցեն, և մինչև հասեալ նոցա յուխտատեղին՝ պատահեսցէ օր ծոմապահոյ, ոչ է պարտ նոցա զկայ առնուլ առ ի ծոմապահել։ Երրորդ՝ քարոզիչքն, որ հանապազօր ի քառասնորդս կամ ի հոգևոր կրթութիւնս բեմախօսեն. թէպէտ և պարտ է նոցա գործով մանաւանդ քան թէ բանիւ քարոզել, և վասն այսորիկ ծոմապահել ըստ կարի։

Ջորդրդ՝ երգիչք և դասատուք, որոց նուագին ՚ի ծո-
մապահելոյ ձայնք։ Ոչնոյն և վասն փաստաբանից և
պատաւորաց ասեն բազումք ՚ի բարոյականաց. զի ծանր
է աշխատութիւն մնաց նոցա, և կարօտին եթէ ոչ քա-
զումն՝ այլ ստեպ Ճաշակելոյ։ Ոչնոյն և զխոստովանա-
հարց ասեն, եթէ վաստակ անսուղոր հասանիցէ նոցա
վասն բազմութեան դիմելոց ՚ի խոստովանութիւն։
Այլ որպէս բարւոք ազգ առնէ ձիամարուինի, սոքա ա-
մենեքին յայնժամ ազատք են ՚ի պարտականութենէ,
յորժամ չկարիցեն առանց ծանր նեղութեան ծոմապա-
հել։

ՅՕԴՈՒԱԾ Գ

ՅՈՂԱԴՍ ՋՈՏԿԱԿԱՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀՈԳՈՐԴՈՒԹԵԱՆ

35. Որոց չկայ գործել մահուչափ մեղս, պարտ կայ նոցա առնել
զտարևորն խոստովանութիւն. և եթէ դիտիցէ ոք զի խափանելոց է
՚ի զատկական խոստովանութենէ, պարտ կայ նմա կանխել խոստո-
վանել։
36. Որոց չկայ արարեալ զխոստովանութիւն զատկական, պարտ կայ
նմա վաղագոյն խոստովանել. ապա թէ ոչ, քանի՞ մեղս գործիցէ։
37. Խոստովանութիւն երկրորդի ամին ընդ զպակասութիւն առաջ-
նոյն։
38. Պատիժք պատուիրանազանցութեան։
39. Պատուիրան զատկական հաղորդութեան։
40. Որ չկայ հաղորդեալ ՚ի զատկի, պարտ է նմա հաղորդել վաղագոյն.
և որ գիտէ զի խափանելոց է ՚ի հաղորդելոյ ՚ի զատկի, պարտ կայ
նմա կանխել հաղորդել։
41. Եւ զինչ թէ կայ ոք ՚ի բանադրանս կամ ՚ի բանսի և այլն։
42. Ձի պարտ է ՚ի ժողովրդապետական եկեղեցւոջ հաղորդել։
43. Ձի յօրինաց ասի ազատ են քահանայք, պանդխտաք, և որք ՚ի
ծառայութեան կան ՚ի մենաստանս։ Երբ պարտ կայ մանկտւոյ հա-
ղորդել։
44. Երբ խելագարաց։

35. Պատ սահմանադրութեան լատերանեան ժողո-
վի, որ առ Ինոսենկենտեաւ Գ, պարտ է ամենայն հա-
ւատացելոյ՝ որ հասեալ իցէ ՚ի բանաւարութիւն՝ զա-
մենայն մեղս իւրեանց խոստովանել անկեղծութեամբ
զեթ միանգամ ՚ի տարւոջ։ Ընդհանուր հաստատեցելոյ. իսկ
մկրտելոց ամենեցուն, և և հերետիսմատաց։ Որ հասեալ
էցէն ՚ի բանաւարութենէն. այսինքն որ հասեալ իցեն ՚ի տիս

աստուածդիտութեան, դէթ ընդ աղօտ, և որք մեղուցեալ իցեն ընդդէմ Աստուծոյ, և պատժոյ արժանի լեալ։ Ա ան որոյ (որպէս ասացաք ի գլ. Բ. 37), անկանին ընդ պատուիրանաւս և մանկունք՝ որք նախ քան զՀասակ եօթնամեայ ընդունակ իցեն մեղաց, վասն կանխելոյ ի նոսա բանաւարութեան. քանզի սուրբ Ժողովն պարտ ի վերայ գնէ ամենեցուն, որք հասեալ իցեն ի տիս ընտրելոյ զբարի և զչար։ Ո՞ամենայն մեղս խոստովանիլ. խնդիր է զայսմանէ Թէ արդեօք պարտականք իցեն խոստովանելոյ և այնոքիկ, որոց չիցէ ինչ մեղուցեալ մահու չափ ընդ ամն ողջոյն։ — Ամենք պարտ հաստարին. այլ հասարակաց և Ձչմարտագոյն կարծիք աստուածաբանից ազատս զնոսա կացուցանէ։ Վանդի եկեղեցի սուրբ ըստ սահմանադրութեանցն Վրիստոսի տայ զպատուէրս իւր. արդ Վրիստոս զմահու չափ մեղս ևեթ հրամայէ խոստովանել, որպէս յայտ առնէ Ժողովն արիմինատեան, և որպէս ի պատուիրանէ իսկ աստի ի միտ առնուլ է. զի ջամենայն մեղս ասելով յայտ է Թէ զծանուցանն իմանայ, միաբանելով ամենեցուն զի զնեղելեան խոստովանել չեն ինչ պարտք։ Գէղն Դաւիթ ի սաղմոսէ. զատկէ ի զատիկ իմանալի է աստ զտարին, որպէս իմանան աստուածաբանք։ Այժս ևս խնդիր է աստ. այս ինքն որ գիտիցէ Թէ ի զատկի խափանելոյ է ի խոստովանելոյ, պարտ իցէ նմա կանխել զնոստովանութիւն։ — Պարտական է. զի ի մեղանչել իւրում մահու չափ ձգէ յանձն զպարտս խոստովանելոյ յայնմ ամի. վասն որոյ գիտենալով զի չկարէ ի զատկի կատարել զպարտս իւր, պարտի կանխել կատարել զայն յառաջագոյն։ Այլ և ոչ անկեղծութեամբ խոստովանել. վասն որոյ չկատարէ որ զպարտս իւր անվաւեր խոստովանութեամբ, և մանաւանդ սրբապղծութեամբ. զի խոստովանութիւն սրբապիղծ կամ անվաւեր, չհամարի ի խոստովանութիւն։

36. Ա՞ր պարտական որ իցէ խոստովանելոյ, և չխոստովանի, պարտ իցէ նմա յետ անցանելոյ զատկին առնել վաղագոյն զխոստովանութիւնն։ — Սուրբ Աստուածինոս, Ա՞ոմայ, Ա՞լբերտոս, Ա՞ոլեստոյ և այլք ոչ պարտ համարին. զի Թէպետ և պարտ է մարդոյ երբեք երբեք խոստովանել ի կեանս իւր, սակայն տարեւօրն խոստո-

վանութիւն պատուիրան եկեղեցւոյ է, և ժամանակ պատուիրանին սահմանեալ. վասն որոյ չկարացանել սահմանեալ ժամանակին՝ դադարէ պատուիրանն։ Այլ հասարակապոյն կարծիք պարտ համարին. զի եկեղեցւոյ սահմանել զժամանակն՝ վասն չկարացեալոյ է զխոստովանութիւն. ապա չդադարէ պատուիրանն ընդ ամին, այլ առաւել և ստիպէ։ Ասն որոյ որ չետ անցանելոյ ամին չխոստովանի, ըստ Հաւանականապոյն կարծեաց՝ այնքանիցս մեղանչէ, որչափ պատահէն նմա դէպք խոստովանելոյ, և զանց առնէ. զի որովհետև յառաջադրութեան կամաց նորա են մեղքն, բազմապատկին յերկարաձգելն՝ որպէս ի վեր անդր ասացաք (գլ. Դ. 46)։

37. Ի կատարել մեղաւորին ի յաջորդ ամի զխոստովանութիւնն Թողեալ ի նախորդին՝ համարի կատարել և զպարտս յաջորդ ամին։ — Կէսք հաստատեն և կէսք ժխտեն. այլ Ձեմարտապոյն կարծիք այն է, որով Բասիլիոփալ, Ի իւա, Ալմահիկեանք և այլք զանազանեն. զի եթէ ապաշխարողն ի խոստովանութեան անդ եթէ զնախորդ ամին և եթէ զյաջորդին մեղս ծանուսն խոստովան լինի, կատարէ զերկոսին և պարտս իւր, որ է հաշտել ընդ Աստուծոյ խոստովանութեամբ մեղաց ամի ամի։ Իսկ եթէ ի խոստովանել զմեղս ծանուսն նախորդ ամի՝ չև և գործեցեալ իցէ նորա մանուշափ ինչ մեղս ի յաջորդ ամի, և չետ խոստովանութեան գործիցէ, պարտական է միւսանգամ խոստովանելոյ ի նմին ամի։

38. Որք ոչն խոստովանին կամ չհաղորդին գէթ միանգամ ի տարւոջ, արգելեալ է նոցա չմտանել եկեղեցի և ոչ թաղումն եկեղեցական ընդունել։ Այլոց ոչ նովին իսկ պատուիրանազանցութեամբն անկանին ի պատիժս յայսոսիկ, այլ չետ վճռոյ։ Զատ է ի պատժոյ աստի մնկտին չև և հասեալ յարքունս։ Իսկ թէ երբ և յո՞ր այլ դէպս պարտական իցէ ոք խոստովանել, ասասցուք ի Ճառս խորհրդոյ ապաշխարութեան։

39. Պատուիրան զատկական հաղորդութեան աստուածային է և մարդկային։ Աստուածային ըստ տեղունեան հրամանին. «Եթէ ոչ կերիջիք զմարմին որ-

դէպ մարդոյ և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձին»։ Եւ եկեղեցական՝ վասն լատերանեան և տրիդենտեան ժողովոյն սահմանադրութեան։ Ամէն՝ ի զատիկ ըստ արդի սովորութեան սահմանեալ է կատարուիլն պատուիրանիս. և սկսանին աւուրբք զատկականք՝ ի Մաղկազարդէ և կատարին՝ ի նոր Կիւրակէի, որպէս սահմանեաց Գրիգորիոս Դ յամին 1440։ Բայց օրէն է եպիսկոպոսաց երկարաձգել զժամանակն զայն, որպէս և առնեն իսկ։

40. Որպէս զիաստուածանութենէ ասացաք, զնոյն յաւելումք և զհաղորդութենէ, զի եթէ չիցէ ոք հաղորդեալ՝ ի զատկի՝ պարտական է հաղորդելոյ վաղագոյն որչափ կարէ։ Ամի սոխակ զնա եթէ պատուիրանն աստուածային՝ սահմանեալ՝ ի ձեռն եկեղեցւոյ յաւուրս զատկի, և եթէ եկեղեցականն՝ որ ոչ դադարէ՝ ի զատկի, զի առ՝ ի չյապաղելոյ զհաղորդութիւն է սահմանեալ։ Բայց որ գիտիցէ զի յաւուրս զատկի խափանելոց է՝ ի հաղորդութենէ, կանխելոյն հաղորդել ոչ հաստուցանէ զպարտս իւր. զի՝ ի խոստովանութեան պարաք հաշտելոյ ընդ Աստուծոյ սոխակ զնա՝ ի կանխել, այլ հաղորդութեան պարաք ընդ աւուրս զատկի սկսանին, և որ յառաջագոյն հաղորդի՝ ոչ ընաւ այնուհետև զպարտս իւր։ Այս այսպէս ուսուցանեն Աւարկ, Զորիոյ, Նոլզման և այլք, ընդդէմ Լայմանի և Նաբերտի։

41. Բանադրեալք և բանտարկեալք պարտին զհետ լինել արձակման և ազատութեան առ՝ ի կարելոյ հաղորդել՝ ի զատկի, զի աստուածային է պատուիրանն՝ որպէս ասացաք։ Ամ հաղորդութիւն զատկական պարտ է ամենայն ումեք ընդունել՝ ի ժողովրդական եկեղեցւոջ իւրում, կամ՝ ի մայր եկեղեցւոջ ուր ուրեք իցէ այս սովորութիւն։ Բայց հրամանաւ ժողովրդապետին կամ եպիսկոպոսի և կամ փոխանորդի նորին օրէն է հաղորդել ուր և իցէ. և բաւէ առ այս մեկնողական ևս հրաման, որպէս Հաստատեն Աւարկ, Լուկոյ, Ալմատիկեանք և Պուսեմպայ, եթէ միայն իցէ հաստատի քարոյապէս հաւանութիւն նոցա։ Այլ և ոչ եկեղեցիս կրօնաւորաց օրէն է ընդունել առանց այսր հրամանի զհաղորդութիւն զատկական. և ընդ հակառակն օրէն է եպիսկոպոսի արգելուլ, զի և հաղոր-

դեալք ըստ զատկական պարտուց մի ընկալցին յաւուր զատկի յեկեղեցիս անդ՝ ի հաղորդութիւն, եւս և արտաքոյ պարտուց։

42. Յօրինաց աստի ազատ են նախ քահանայք, որք պատարագեն. այլ եթէ ոք՝ ի նոցանէ չպատարագէ, պարտական է և նա հաղորդել՝ ի ժողովրդապետական եկեղեցւոջ։ Երկրորդ՝ պանդուխտք, որոց օրէն է հաղորդել յամենայն եկեղեցիս, և չեն պարտական հաղորդել՝ ի ժողովրդապետական վիճակի՝ յորում բնակեն։ Ոչ այս այսպէս ուսուցանեն Կաթեթանոյ, Յոթոյ, Ղազրիոյ, Յուարէզ, Լուկիոյ, Ծուրնկլի, Յունքաքեա և այլք։ Երրորդ՝ որք՝ ի մենաստանս՝ ի ծառայութեան կան ընդ իշխանութեամբ վանահօրն։

43. Յանկարծ և հասեալ՝ ի բանավարութիւն և խելագարք միջնջենաւորք ազատ են՝ ի պատուիրանէ հաղորդութեան, մանաւանդ արգելեալ իսկ՝ ի լատերանեան ժողովոյն չհաղորդել զնոսա։ Այլ խնդիր այն է, թէ մանկունք այն ինչ հասեալք՝ ի բանավարութիւն և ընդունակք խորհրդոյ ապաշխարութեան՝ պարտական՞ իցեն, և օրէ՞ն իցէ նոցա հաղորդել։ — Հասակաւորակաց և հաւանականագոյն կարծիք ոչ պարտ նոցա և ոչ օրէն համարին զայն. զի առ սուրբ հաղորդութիւնն պահանջի առաւելագոյն ճանաչողութիւն և յարգութիւն, և՝ ի սովորութենէ իսկ եկեղեցւոյ այսպէս ընկալեալ է։ Այլ սուրբ Ղազարացին, և ընդ նմա Յոթոյ, Յուաբրեզ, Լայման, Պասթրոփալ և այլք, յոյժ հաւանականաբար ասեն, զի թէպէտ և իցեն մանկունք պարտական հաղորդելոյ, այլ օրէն է հաղորդել զնոսա՝ եթէ խորել եւեթ դիտիցեն ընդ երկնաւորն և ընդ երկրաւոր հաց։ Իսկ՝ ի վաղնդ մահու ոչ միայն օրէն է՝ այլ և պարտ իսկ հաղորդել զնոսա, որպէս ուսուցանեն նոյն վարդապետք առհասարակ, և Աւենդիկտոս ԺԴ (՝ի դիրն՝ 12. ժողովոյ)։ Ոչ ի յայնժամ որք միանգամ հասեալ իցեն՝ ի բանավարութիւն՝ պարտականք են աստուածային պատուիրանին։ Իսկ առանց այսր վանգի՝ պարտականութիւն մանկտւոյ սկսանի յինամենի, և չէ օրէն նոցա անդր քան զիս երկոտասան ամաց, կամ թէ՞ շատ՝ չորեքտասանից, յապաղել զհաղորդութիւն։ Ոչ այս այսպէս ուսուցանեն Յուարէզ, Լայման, սուրբն

Ընտանիսնս, | աքրուա, և այլք. և սուրբն Կարոլոս ՚ի տասնամեակի ընդունէր զմանկունս ՚ի հաղորդութիւն:

44. Ըստ ոչ իցէ հաղորդել զյիմարս: — Ոչացաք իսկ զի չէ օրէն տալ հաղորդութիւն յիմարաց միտքնեաւորաց, ևս և ՚ի հոգեվարս՝ որպէս հրամայէ մաշտոցն Հռովմէական: Այլ զոք երբեք երբեք զգաստանան, և կամ որպէս սուրբ Գուինացին ասէ, զոք միանգամ չեն յիմարեալ՝ մատչին հաւատով առ սուրբ խորհուրդն, զնոսա օրէն է և ՚ի յիմարութեան անդ հաղորդել, որպէս և մաշտոցն Հռովմէական յաւելու: Հաղորդեալք յաստուածաբանիւ բարւոք յայտնեն իմաստասիրեն, զի առ ՚ի հաղորդել զյիմարս ՚ի մահու՝ շատ է զի իցէ նոցա երբեմն ՚ի զգաստութեան բարեպաշտութեամբ կեցեալ: Ոչ զպակասամիտս, եթէ միայն խորհրդեն ըզմարմին տեառն, օրէն է հաղորդել և ՚ի զառիկ. զնոյն հաստատեն | այման, Վասթրոփալ և Ալմատիկեանք և վասն խուլ և համր ծնելոց, եթէ միայն տացեն նըշանս հաւատալոյ աստուածային խորհրդոյն:

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՅԱՂԱԳԴ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՊԱՏՃԱՌԻ ԿԵՆԱՑ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

ՅԱՂԱԳԴ ԿՐՕՆԱՒՈՐԱԿԱՆ ԿԵՆԱՑ

1. Չ֊ինչ է կրօնաւորութիւն, և ուստի է անկ հաստատել զկրօնս։
2. Չի պարտ է կրօնաւորի դիմել՝ի կատարելութիւն. և երբ մեղանչէ մեծաւորն՝ի չյանդիմանելն զնա։
3. Հասակ ընդունելութեան՝ի կրօն, կամաւորութիւն ուխտի, և որ ինչ անվաւեր առնեն զայն։
4. Եպիսկոպոսունք կրօնաւորք պարտական՞ք իցեն՝ի պահպանութիւն ուխտին և կանոնաց. զիմաստեից և զարտաքսելոց՝ի կրօնէ, և որ ինչ պատճառք արտաքսելոյ։

1. Կրօն, ըստ մանաւոր նշանակութեան կրօնաւորական կարգի, սահմանի Արդ ճաբանական կենաց հաւաքոյելոյ, հաստատեալ չեչեղեցոյ, դիմելոյ՝ի կատարելութիւն ողջախոհութեան և հնազանդութեան։ Այսի հաստատեալ չեչեղեցոյ, զի յառաջագոյն օրէն էր և եպիսկոպոսաց հաստատել զկրօնս, այլ՝ի լատերանեան ժողովն սահմանեցաւ առաքելականի ևեթ գահին հաստատել զկրօնս։

2. Այսի դարձեալ դիմելոյ՝ի կատարելութիւն. զի պարտ է կրօնաւորի դիմել՝ի կատարելութիւն ըստ պայմանի ուխտին, որով պարտ յանձին կալեալ է պահել զկանոնս կարգին, որ խրատաք են և ոչ պատուիրանք։ Այն որոյ ծանր մեղանչէ ընդդէմ պարտուց իւրոց կրօնաւոր, նախ՝ եթէ վասն արհամարհութեան չպահէ զկանոնս կարգին. այսինքն զի կամ մնոտիս համարի զայնոսիկ, և կամ չկամի հպատակել այնոցիկ։ Իսկ որ առանց արհամարհութեան կամ ստահակութեան վերջանայ՝ի պահպանութենէ կանոնաց, թէպէտ և ստէպ իսկ վեր-

Ջանայցէ, չմեղանչէ մահուչափ եթէ ոչ այնոքիկ պարտս ընդ մահուչափ մեղաց ի վերայ դնիցեն։ Օ այս այսպէս ուսուցանէ սուրբ Աստուածային, և ընդ նմա Յայման, Անքեզ, Ալենսիա, և այլք։

Երկրորդ՝ եթէ չար օրինակաւն իւրով մուծանէ Թուլութիւն կանոնաց ի կրօնն, կամ դէթ կարևորագունի իմիք կանոնի՝ որպէս լուծեան, աղօթից, և այլն, ի ծանր վնաս բարեկարգութեան կրօնին։

Երրորդ՝ եթէ հաստատութեամբ դնէ ի մտի ոչ ինչ փոյթ ունել կատարելութեան։

Այլ որ կամիցի պահել զայնս և եթ ի կանոնաց՝ որ պարտս մահուչափ մեղաց ի վերայ ածեն, և ոչ փոյթ ունել զայլոցն, մեղանչէ մահուչափ։ — Կէսք յաստուածաբանից ազատ կացուցանեն զնա ի մահուչափ մեղաց. բայց Անքեզ ընդ այլ զհակառակն հաստատեալ, յաւելու զի այնպիսին մահուչափ մեղանչէ՝ դէթ ի վտանգ արկանելով զանձն ուխտազանցութեան, կամ պատճառս տալով Թուլութեան կրօնին։

Այլ Համարեալ իսկ զի ոչ ծանուցնս մեղիցեն Քահանակք ի չափահել զկանոնս, սակայն մեծաւորք անփոյթք ի յանդիմանել զնոսա՝ ծանուցնս մեղանչեն, եթէ պատասխանութիւնք նոցա յաճախաւորք իցեն և այնպիսիք՝ որ կարեն լուծանել զբարեկարգութիւն։ Նոյնպէս և վերակացուք բարեկարգութեան ծանր մեղանչեն յանտես առնել զթերութիւնս և ի չյայտնել զայնս մեծաւորաց, որպէս հաստատեն Հայրն Ասարեզ և այլք։ Ասն որոյ սուրբ Աստուածային Համարի մեծաւորաց ունել իշխանութիւն զան իսկ Հարկանելոյ զպատահս կանոնազանցս, և բանիւք իսկ նախատանաց կշտամբելոյ զնոսա, բայց միայն առանց բարկութեան, և մի առաջի օտարաց կամ նորընծայից։

3. Յաւելու ոմանք աղաւաղեցան և այլն. զի յայսմ իսկ է էութիւն կրօնաւորութեան։ Զի վաւերականութիւն կրօնաւորական ուխտի ոչ է կարևոր՝ զի իցէ Հանդիսական. այլ կարևոր են երեք պայմանք։ Ա՛յն՝ զի ուխտաւորին լցեալ իցեն ամք վեցտասան, և ամ մի ողջոյն նորընծայութեան, և չիցէ նորա արգել ինչ երևելի մնանելոյ ի կրօն անդր՝ որպէս սահմանեաց Ժողովն տրիդենտեան, յաւելեալ վասն կուսանաց՝ մի յառաջ

քան զլըուծն երկոտասանամեայ տիոց տալ նոցա զձև, և յառաջ քան զառաջն հետազօտել զկամն նոցա եպիսկոպոսին կամ փոխանորդին նորին. զի թէպէտ և վաւեր է ուխտ օրիորդին, այլ ծանր մեղանչէն որք առանց երկուց այսոցիկ պայմանաց տան նմա ուխտել:

Երկրորդ՝ կարևոր է ընդունելութիւն մեծաւորին և ժողովոյ ըստ սահմանադրութեան կրօնի. որպէս զի վրիպակ ինչ էական մասին սահմանադրութեան անվաւեր առնէ զուխտն: Այլ գիտելի է զի՝ի վտանգ մահու օրէն է և առանց այսոցիկ պայմանաց, և և յառաջ քան զլըուծն ամի նորընծայութեան ընդունել զուխտ ուստերաց և դստերաց, և վաւեր է ուխտ նոցա ըստ սահմանելոյ Ինոմկենտեայ Գ:

Երրորդ՝ կարևոր է զի իցէ ուխտն ազատ և ինքնակամ, ոչ յահարկութենէ ծնողաց կամ այլոց ուրուք, և ոչ՝ի ստեպ և՝ի ժխտ թախանձանաց նոցա՝ յորոց որդիական ակնածութիւն առ պատկառանաց կամ առ երկիւղի կորուսանիցէ զազատութիւն: Իսկ որոյ ուխտ այսպիսի անվաւեր ուխտեալ իցէ, պարտ է նմա յառաջ քան զլըուծն հնգից ամաց բողոքել վասն լսելի լինելոյ, ըստ սահմանադրութեան տրիդենտեան ժողովոյն. ապա թէ ոչ, համարի հաստատեալ այնուհետև զուխտ իւր:

Պիտելի է աստանօր զի ըստ սահմանելոյ Ինոկենտիոսի ԺԴ, նախ՝ ոչ է օրէն մեծաւորի արտաքսել զոք՝ի միաբանութենէ, առանց օրինաւոր դատաստանի: Երկրորդ՝ զպատճառս անվաւերութեան ուխտին ոչ է բաւական գիտել վանահօրն և եթ, այլ և թեմական եպիսկոպոսին պարտ է գիտել զայն: Երրորդ՝ զի թէպէտ և ուխտելոյն չիցէ բողոքեալ զայնմանէ յառաջ քան զլըուծն ամաց հնգից, օրէն է նմա ընդունել՝ի սրբոյ գահէն զիրաւունս իւր: Իսկ չորրորդ՝ զի ուխտեալն չկարէ իսկ և իսկ յետ առաջնոյ վճռոյն ելանել՝ի կրօնէ, այլ պարտ է նմա ճնալ պատասխանւոյ առ բողոք փաստաբանին ուխտից:

4. Եպիսկոպոսունք կրօնաւորք չեն ինչ ազատք յուխտից, բայց միայն ըստ մասին՝ զոր չէ մարթ միաբանել ընդ եպիսկոպոսական պարտս. վասն որոյ ոչ է օրէն նոցա և կտակագրել: Այլ հաւանական է ազատ գոլ

նոցա ՚ի պահպանութենէ կանոնաց, և յայլոց առանձնական ուխտից կրօնից։

Յողովրդապետ կրօնաւոր պարտական է ոչ միայն ուխտին պահպանութեան, այլ և կանոնաց կարգին ըստ հաւանականագոյն կարծեաց։

Վախստեայ կրօնաւոր ոչ է ազատ և ոչ ՚ի միոյ ՚ի պարտուցն, և որ ինչ ստանայ՝ միաբանութեան է ամենայն։ Իսկ արտաքսեալք պարտական են ուխտին ողջախոհութեան. ըստ աղքատութեան, որ ինչ ստանանն՝ կալեն վարիլ նոքօք, այլ միաբանութիւնն է տէր նոցին. իսկ ըստ հնազանդութեան և կանոնաց պահպանութեան և ժամերգութեան ոչ են պարտական՝ չև ընկալեալ անդրկն ՚ի կրօն. և պարտ իսկ է նոցա խընդրել զհնարս ընդունելի լինելոյ անդրկն, այլ մեծաւորք չեն պարտական ընդունելոյ զնոսա։

Պատճառք արտաքսման կրօնաւորի են, նախ՝ եթէ ՚ի մտանել ՚ի կրօնն լռեալ իցէ նորա զկարևոր ինչ արգելս, կամ զվնասակար ինչ միաբանութեան՝ որպէս զբռոտութիւն կամ զայլ ինչ ախտ ածանցական։ Երկրորդ՝ եթէ իցէ գործեալ ինչ նորա ոձիր անուանարկ, վնասակար միաբանութեան։ Երրորդ՝ եթէ իցէ անուղղայ ՚ի յանցանս։

ՅՕԴՈՒԱԾ Բ

ՑԱՂԱԴՍ ՊԱՐՏՈՒՑ ՈՒԽՏԻՑ

5 • Ովխտ աղքատութեան, և յաղագս գրուածոց կրօնաւորի :
6 • Ջառանձին գրամոց նորա :
7 • Որ ինչ մեղք ընդդէմ աղքատութեան :
8, 9 • Ակդեղք պարգևատրութեան :
10 • Ե՞րբ իցէ ծանր, և պարտս հատուցման՝ի վերայ ածիցէ :
11 • Բաւական՞ իցէ առ այս լռելեայն հաւանութիւն մեծաւորի :
12 • Եթէ մեծաւորն յանիրաւի ժխտիցէ զհրաման • կամ եթէ տացէ առանց դիտելոյ ուժ առելոց է զպարգևն, զոր եթէ դիտէր՝ չտայր հրաման : Օրէ՞ն իցէ աբբասուհեաց պարգևել ինչ, կամ տալ հրաման պարգևելոյ :
13 • Եթէ կրօնաւոր՝ի չար ինչ կամ՝ի զուր ծախէ հանրական հրամանաւ մեծաւորի :
14 • Կարիցէ՞ մեծաւորն տալ հրաման խաղալոյ արծաթով :
15 • Ցաղագս ողջախոհութեան և փականաց :
16 • Ցաղագս հնազանդութեան, և յո՞րս ինչ և ե՞րբ ածէ պարտս :
17 • Եթէ ժողովն միաբանութեան հաստատէ զնախնին կանոնապահութիւն • զի անհնազանդութիւն կրկին մեղք են • պա՞րտ իցէ հնազանդել յերկբայականս :
18 • Եթէ զգաղտնիս հրամայիցէ յայտնել :
19 • Եթէ այլ հանգամանք՝ի վերայ հասանիցեն :
20 • Եթէ վանահայրն տացէ հրաման, զոր կարգապետին իցէ ժխտեալ :
21 • Ո՞ւմ պարտին հնազանդել կուսանք :
22 • Ցաղագս ընտրութեան աբբասուհւոյ :

5 • Ովխտիւ աղքատութեան արգելեալ է կրօնաւորի ունել և չվարել որ միանգամ արժիցէ ինչ • ՚ի բաց առեալ զգրուածս, որք հոգևոր ինչ համարին որպէս ծնունդք մտաց : Այսոյ որոյ ըստ եկեղեցական սահմանադրութեանց օրէն է կրօնաւորի ունել և տալ իսկ այլոց զգրուածս իւր առանց հրամանի մեծաւորաց : Օնոյն հաստատեն Ալամտիկեանք և զնշխարաց սրբոց :

6 • Ո՞րչափ ոչ է ընդդէմ ովխտի աղքատութեան ունել միաբանութեան ստացուածս, որպէս յայտ առնէ ժողովն տրիդենտեան • և ոչ կրօնաւորի առանձին ոգևպահիկն ՚ի բազում կրօնս հրամանաւ մեծաւորաց ընկալեալ ՚ի սովորութենէ, և ոչ արգելեալ ՚ի սրբոյ գահէն ՚ի կարևոր և ՚ի պատշաճ պէտս • եթէ միայն պատրաստ իցէ կրօնաւորն հրաժարել յայնմանէ ըստ հրա-

մանի մեծաւորին։ Օ՛ի թէպէտ և չէ օրէն բառնալ զաղքատութիւն ըստ էութեան, այլ մարթ է փոխել զայն ըստ եղանակի և ըստ հանգամանաց ըստ ընկալեալ սովորութեան՝ որ համարի օրինաւոր, վասն երկիւղածաց իսկ կրօնաւորաց վարելոյ նուաւաւ, և մեծաւորաց թոյլ տալոյ՝ որոց մարթ իսկ էր զիւրաւ զդեմ ունել այնմ։

Նայց գիտելի է զի եթէ ոք ՚ի մեծաւորաց առանց հարկի մուծցէ զայս սովորութիւն, դժուարաւ իցէ ազատ ՚ի ծանր մեղաց. ոչ վասն եղծանելոյ ուխտին աղքատութեան, այլ վասն թուլութեան՝ որ ՚ի սովորութենէ անտի մտանէ ՚ի կրօնս։ Վասն որոյ եթէ մեծաւորք կամիցին նորոգել ՚ի վանս ուրեք զհասարակաց կեանս և զառաջին կարգն աղքատութեան, չկարեն հպատակք ընդդէմ դառնալ, որպէս ուսուցանեն Յուսաբէկ, Նաւարրոյ, Եսիոյ և այլք առ հասարակ. եթէ միայն կարասցեն մեծաւորք ընուլ զկարօտութիւն իւրաքանչիւր ուրուք ՚ի հաստատէն զանընչութիւն։

7. Ո՞եղանչէ կրօնաւոր ընդդէմ ուխտի աղքատութեան, նախ՝ եթէ զընկալեալն առ ՚ի պէտս ինչ, յայլ ինչ ՚ի կիր արկանէ։ Երկրորդ՝ եթէ զընկալեալն վասն իւր, տայ այլում ՚ի փոխ. բայց Այսմանէ, Անքէզ և այլք ոմանք ասեն, զի որ հաւաստի իցէ ընդ հատուցումն տուելոյն՝ չմեղանչէ մահուչափ։ Երրորդ՝ եթէ առանց հրամանի ընդունի ինչ ՚ի պէտս իւր կամ ծախս կամ տայ այլում։ և պարտական իսկ է յայնժամ ՚ի հատուցումն։ Մանաւանդ որ առանց հրամանի ընդունի դրամս, ըստ հաճոյս իւր ՚ի կիր արկանել, թէպէտ և բարեգործիցէ նուաւ. զի ոչ է օրէն կրօնաւորի ունել ինչ սեփական, և ոչ ՚ի կիր առնուլ անհրաման։ Պարձեալ եթէ Թողու ինչ պարտապանի իւրում կամ հրաժարէ ՚ի ժառանգութենէ կամ ՚ի հրիտակէ. այլ ոչ և ՚ի պարգևէ, զոր ոք կամիցի պարգևել նմա։ Օ՛ի պարգևելոց իրաց տէրութիւն, յընդունել և եթէ զպարգևն, անցանէ ՚ի պարգևատուէ ՚ի պարգևընկալն. իսկ ժառանգութիւն և հրիտակ, ընդ մեռանել կտակագրին, անկանին միաբանութեան։ Ո՞արժ է կրօնաւորի մեղանչել այսուիկ ընդդէմ եղբայրսիրութեան, զրկելով զմիաբանութիւն իւր ՚ի բարութենէ անտի. այլ ոչ

ընդդէմ ուխտին՝ որով պարտական է պահելոյ զինչս միաբանութեանն, այլ ոչ և ստանալոյ։ Եւ ոչ կատարեալ ինչ Թողուլ ումեք օրէն է կրօնաւորի. բայց եթէ հրամանաւ մեծաւորի Թողուցու ինչ, և մեծաւորն խոստանայցէ առնել զկամն նորա, պարտական է կատարելոյ զխոստումնն, որպէս Հաստատեն Լեսիոյ և Սանքէզ։

8. Օպարգևատրութեանց առանձինն գիտելի է, զի Ալեմէս Ը. արդելու կրօնաւորաց Հպատակաց և մեծաւորաց, ընդ պատժով անկանելոյ նոցա՝ի պաշտամանէ նոցին իսկ գործով և կորուսանելոյ զներգործական և զկրաւորական քուէ, նախ՝ մի ումեք պարգևել ինչ, ոչ յանուն իւրեանց և ոչ միաբանութեան, եւս և կրօնակցաց և մեծաւորաց, առանց Հաւանութեան ընդհանուր ժողովոյ։ Ի բաց առեալ զպարգևս ուտելեաց կամ ըմպելեաց, կամ Հոգևորական դիւրագին իրաց, կամ զկարևոր ինչ ողորմութիւն, և կամ զհիւրընկալութիւն. այլ և ոչ մի ինչ առանց Հրամանի մեծաւորաց։ Երկրորդ՝ մի ընդդէմ կրօնաւորական սակաւապէտ կենաց առնել ինչ ջոյս բաղմածախս, մի միանձանց, և մի ամենայն ումեք և իցէ։ Երրորդ՝ զի որ ընդունի պարգև ինչ՝ի կրօնաւորէ, մի կարասցէ ունել զայն, այլ պարտական լինի Հատուցանելոյ վանացն. և մի կարասցէ ընդունել արձակումն՝ չև Հատուցեալ զայն, և մի Թողութիւն Հատուցմանն կամ փոխանակութիւն՝ Հատուցանելոյ զայն աղքատաց կարասցէ ընդունել։ Այլ Ալբբանոս Ը. Թուլացոյց փոքր մի զխստութիւն կղեմեան կոնդակին, և ներէ զպարգևս տուեալս առ՝ի վարձ կամ՝ի ընծայահալութիւն, եւս և վանն ողորմութեան, բայց Հրամանաւ վանահօր։ Ներէ և զինչս յընդունելութիւն Թեմական եպիսկոպոսաց և բարերարաց, այլ միշտ ըստ պատշաճի կրօնաւորութեան։ Իսկ վանն Հատուցման ընկալեալ պարգևաց ներէ Հատուցանել զայն մեծաւորագոյն վանաց, եթէ չկարիցէ դիւրաւ Հատուցանել բնիկ վանացն։ Եւ գիտելի է զի՝ի կղեմեան կոնդակի անդ վերապահեալ է այս Պապին, թէ պէտ և առանց բանադրանաց. և չկարեն խոստովանաՀարք արձակել զընկալուչ պարգևին։ Եւ եթէ իցէ պարգևն աւելի քան զչիսուն Ֆրանքաց, և ոչ իշխա-

նուիրեամբ սրբոյ Հոգւոյն ապաշխարութեան կարէ ոք ընդունել զարձակումն՝ չև հատուցեալ զպարգևն։ Օ՞այս և Յեհեզիկտոս ԺԴ վերստին հաստատեաց։

9. Յաղում աստուածաբանք, և մանաւանդ Յալեքսանդրիացիք, զկնդակն կղերական չհամարին լեալ ընդունելի, և կամ գէթ խափանեալ՝ի սովորութենէ։ Յորում քանզի ուրբանեանն բացատրութիւն է նորին, ՚ի խափանել առաջնոյն՝ գտանի խափանեալ և երկրորդն։ Յայց ուրբանեանն ոչ միայն բացատրէ և մեղմէ զկղերանն, այլ և հաստատէ զայն, և զամենայն հակառակ սովորութիւնս դատապարտէ. վասն որոյ սուրբն Յելփնսոս անընդունելի համարի զայս նոցա կարծիս։ Սակայն Յաքրուա և Յայրն Սացոյթիա յաւելուն զի կնդակացն այնոցիկ դիտաւորութիւն առ՚ի խափանել և զիշխանասիրութիւն և զշռայլութիւն. վասն որոյ ոչ անկանի ոք՚ի պատիժս սահմանեալս անդ. զոյն ինչ ծախիւք իւրք տան Ֆրանքաց. զի առ այնպիսի ծանր պատուհասիւք դոյզն ինչ համարի տան Ֆրանք։ Յե ոչ արգելուն անդ ընթրիք և պարգևք օրինաւորք, որպէս վասն յանկուցանելոյ զսիրտս, յաճուցանելոյ ըզթշնամութիւն, արծարծանելոյ բարեկամութիւն և զսէր, և վասն այլոց սոցին սակի պատճառաց։ Սակ թէ ոչ՝ արգել ինչ օրէն իցէ մեծաւորաց և հպատակաց ծախել՚ի պարգևս, համարին կշռադատել զայն՚ի սովորութենէ՝ որ՚ի կրօնս իւրաքանչիւր օրինաւորապէս ընկալեալ իցէ։

10. Սոչափ ինչ առանց հրամանի ծախեալ՝ համարի կրօնաւորի՚ի ծանր մեղս։ — Սոչիաբանին աստուածաբանք զի աստ աւելի ինչ խնդրի՚ի ծանրութիւն մեղացն քան յայլ դէպսս. այլ՚ի չափ նորին գարձեալ տարաձայնին։ Յզորիոյ, Կաւարրոյ, Վասթրոփալ, Սանքեզ և այլք՚ի ծանր մեղս համարին քան Ֆրանքս. այլք տան Ֆրանքս, զոր Յաքրուա աներկբայելի դատի. Յուկոյ ծանր համարի և զերիս, այլ եթէ ումեք՚ի կրօնակացս իցէ պարգևեալ՝ յաւելու մինչև ցքսանև հինգ Ֆրանքս, եթէ չիցեն պարգևքն դրամք։ Սակ վասն կերակրոց՝ Սանքեզ, Կաւարրոյ, Յուկոյ, Սալմանտիկեանք և այլք չհամարին ինչ ծանր՝ եթէ ոք երբեք երբեք դոյզն ինչ առցէ անհրաման, Թէպետ և՚ի չափ

ծանրութեան հասանիցեն գողնքն դուշնաքեայք. զի չհամարի մեծաւորաց սաստիկ դժկամակել ընդ այն, եթէ չլսէ ՚ի ծանր ինաս մեռնաստանին: Իսկ ՚ի ծախել աւելի ինչ կրօնաւորի անհրաման, պարտական իցէ ՚ի հատուցումն՝ ոչ ունելով ինչ աւելի քան զբաժինն տուեալ նմա ՚ի միաբանութենէ առ ՚ի ընուլ զկետս իւր: — Կէսք պարտական զնա համարին, բայց Սամատիկեանք ընդ այլս զհակառակն հաստատեն. զի չհամարի մեծաւորին այնպիսի ծանր պարտս ՚ի վերայ դնել հպատակին, զրկելոյ զանձն և ՚ի կարևորաց անտի իւրոց պիտոյից. և չէ այս անհաւանելի, եթէ արդարև տուեալն նմա ՚ի միաբանութենէ հազիւ բաւէ ՚ի ընուլ զկարևոր պետս նորա:

11. Խաւարկեն իցէ լռելեայն հրաման առ ՚ի չգործելոյ ընդդէմ աղքատութեան: — Խաւէ աներկբայապէս, եթէ տեսանէ մեծաւորն որ ինչ առնու և տայ հպատակին, և կարելով խափանել զայն դիւրաւ՝ ոչ արգելու: Այս կամ որպէս Սանքեզ, Ռասթրոփալ, Սամատիկեանք և այլք ասեն, եթէ ՚ի կրօնի անդ իցէ տուղորութիւն տալոյ և ընդունելոյ այսչափ ինչ, և մեծաւորն լռեսցէ. զի յայնժամ լռութիւն հաւասար է բացայայտ հրամանի: Իսկ եթէ անսովոր ինչ հասանէ ծախել, և չլսէ անդ մեծաւորն, օրէնն իցէ լռելեայն հրամանաւ նորա վարել: — Սանքեզ ոչ օրէնն համարի. բայց Սուարէզ, Ռասթրոփալ, Ազորիոյ, Կաւարրոյ, Վոլետոյ, Ալենսիա, Հոլզման, Լէոդել և այլք օրէնն համարին, եթէ միայն իցէ հաւանականաբար հաւատի, զի ՚ի հարցանել հպատակին՝ տացէ մեծաւորն հրաման. զի նա յայնժամ ըստ կամայ մեծաւորին գործէ, և այս զնա զերծ ՚ի սեփականութենէ կացուցանէ: Ի սոյն կարծիս և սուրբ Ագուինացին ոչ օրէնն համարի կրօնաւորի առնել ողորմութիւն աղքատաց առանց յայտնի կամ լռելեայն հրամանի աբբային: Այլ բազում այն է զի լռելեայն հրամանաւ գործեցեալ իրք չեն ազատ զեղի ՚ի ներելի մեղաց, զի յաճախագոյնս ընդդէմ կամայ մեծաւորաց գործին:

12. Յանիրաւել մեծաւորին և ՚ի չտալ հրաման ծախելոյ ՚ի կարևոր ինչ, գործիցէ կրօնաւորն ընդդէմ ուխտին աղքատութեան ՚ի ծախելն: — Սուրբ Ագու-

նոցին և այլք ազատ համարին զնա յուխտազանցու-
թենէ, եթէ վտանգ առաջի կայցէ ՚ի յամենէ և ՚ի պի-
ժել առ բարձրագոյն իշխանութիւն. զի յայնժամ հա-
մարի լռելեայն հաւանութիւն բարձրագունի մեծաւո-
րին, և ՚ի դէպս ինչ աղատութիւն իսկ յուխտին:

Որբն իցէ կրօնաւորի հրամանաւ մեծաւորի տալ
ինչ և այնպիսւոյ ուժիք, զոր թէ գիտէր մեծաւորն՝
չտայր վասն նորա հրաման: — Եթէ իցէ հաւանական
կամել մեծաւորին նահանջել զտուեալն հրաման, թէ-
պէտ և չտայր զայն եթէ գիտէր ՚ի սկզբան, օրէն է.
յերկբայելն՝ պարտ է հարցանել զնա. իսկ եթէ չիցէ
մարթ հարցանել, համարի տուեալ հրաման:

Որբն իցէ վանամարզ պարգևել ինչ ուժիք, կամ
հրաման տալ պարգևելոյ: — Որբն է ըստ չափոյ պատ-
շաճին, զի և նոցա իշխանութիւն է տնտեսութեան:
Որբն է դարձեալ առնել նոցա ողորմութիւն աղքա-
տաց, և ծախս վասն եկեղեցւոյ և ՚ի շինութիւն կո-
ստատանին, կամ ՚ի յաւելուած հասից:

13. Կրօնաւոր, որում հանրական հրաման է ՚ի մե-
ծաւորէն ծախելոյ գումար ինչ ըստ հաճոյս, և ծախիցէ
՚ի չարիս կամ ՚ի մնոտիս, մեղանչէ ընդդէմ ուխտին, և
պարտ իցէ նմա և ընդունելեաց զդրամն՝ անդրէն հա-
տուցանել: — Պարտ իսկ է ըստ հաստարակաց կարծեաց.
զի մեծաւորն վասն օրինաւոր և եթէ ծախուց տայ հրա-
ման, և եթէ այլազգ ինչ հրամայեսցէ՝ անվաւեր է
հրամանն. զի և ինքն ոչ է տէր ընչից միաբանութեանն,
այլ մնատակարար. և չէ տուեալ նմա այն իշխանութիւն
ոչ յեկեղեցական օրինաց, և ոչ ՚ի սահմանադրութենէ
կրօնին:

14. Որբն իցէ մեծաւորի տալ հրաման կրօնաւորի
խոպալ դրամիւ: — Որբն է, եթէ օրինաւոր իցէ
խոպն, և գումար սակաւ, և միաբանութիւնն ոչ խըս-
տակրօն. և յայնժամ լռելեայն իսկ հրամանաւ օրէն է
վարել կրօնաւորի: Իսկ եթէ գումարն չիցէ դաչնա-
քեայ ինչ, կամ խոպն լոկոյ բախտի ըստ ինքեան իցէ
արգելեալ, որպէս ՚ի վեր անդր (գլ. ժ. 220) ասացաք,
անվաւեր է հրամանն:

15. Ըստ ողջախոհութեան յայտ է զի ամենայն կրօ-
նաւոր, որ ընդդէմ նորին գործէ, կրկին մեղանչէ. բըղ-

ջախոհութիւն և սեղանակատարութիւն։ Պարձեալ զի տայ գայթակղութիւն, եթէ մեղաւք իւրովք չարա- համբաւի կրօնն։ Ի պահպանութիւն ողջախոհութեան սահմանեալ են փականք, ոչ միայն վասն կուսաստա- նաց՝ այլ և մենաստանաց, չելանելոյ միանձանց արտաքս անընկեր և անհրաման. ոչ հանրական առնելով հրա- ման, այլ յիւրաքանչիւր նուագի։ Եւ աստուածաբանք գրեթէ առ հասարակ ծանր համարին զպատուիրանա- զանցութիւն ընդդէմ կանոնիս, եթէ չիցէ միանգամ կամ երկիցս՝ի տուընջեան և առանց վտանգի գայթակ- ղութեան։

16. Այսպէս հնազանդութեան գիտելի է նախ՝ զի եթէ մեծաւորն չյաւելու ասել Հրամայեմ կամ պատուիրեմ, չեն ինչ անգ յատկապէս պարտք հնազանդութեան, որպէս հաստատեն Աուարիզ, Վալմատիկեանք և այլք։ Այլ պարտ է զանազանել զսովորութիւն այլևայլ միա- բանութեանց. զի յոմանս՝ի նոցանէ և աղաչելն հրա- մայել է։ Վասն որոյ միաբանին աստուածաբանք զի պատուէր մեծաւորի իւ և է բանիւ տուեալ, ոչ ածէ պարտս մինչուչափ մեղաց, եթէ ոչ յաւելուցու՝ Ով- բռնեմբ հնազանդեան, կամ յանուն Քրիստոսի, և կամ սպառնալեօք անկանելոյ՝ի բանադրանս նովին իսկ գործով։ Պահել է երկրորդ՝ զի օրէն է մեծաւորի հրամայել զամենայն, որ ինչ ուղղակի կամ անուղղակի հայեցի՝ի կանոնս և՝ի զգուշագոյն պահպանութիւն նո- ցին. այլ ոչ և ընդդէմ կանանց կամ աւելի ինչ քան զկանոնս հրամայել, այս ինքն յաւելուլ ձգնութիւնս կամ բեռինս անսովորս, բայց միայն՝ի պատիժ յանցա- նաց. և ոչ ստիպել՝ի յանձն առնուլ զժողովրդապե- տութիւն կամ զեպիսկոպոսութիւն կամ այլ ինչ պաշ- տօն եկեղեցական, կամ զառաքելութիւն՝ի կողմանս անհաւատից յայտնի վտանգաւ մինչուան կամ դերու- թեան, կամ զՀոգ օծարաց ըմբռնելոյ ժանտախտիս ուր չպակասեն երիցունք՝ որոց յանձն իցէ պաշտօն մա- տակարարելոյ նոցա զնորհուրդս կարևորս։ Նմեմ իսկ օծարաց, զի եթէ՝ի կրօնակցաց իցեն ըմբռնեալքն ախ- տիւ՝ պարտականք են յանձն առնուլ զՀոգ նոցա, որ- պէս ուսուցանեն Անքէզ, Այլեթանոյ, Վփորեր և այլք առ հասարակ։ Իսկ վասն երթևեկելոյ կրօնաւո-

քաց՝ սահմանեկ ժողովին տրիդենտեան. "Մի մեկնել նոցա ի բնակութենէ վանացդ իւրեանց, և ոչ պատճառանօք առ մեծաւորս երթալոյ, եթէ չիցեն ի նոցանէ առաքեալ կամ կոչեցեալ,,:

17. Պիտէլի է երրորդ՝ զի չմեղանչէն կրօնաւորք ի չափահել զնախինի կանոն իւրեանց, եթէ այլազգ ինչ սովորութիւն լեալ իցէ առ նոսա օրինաւոր: Ինդիր է միայն զի ի կամել ընդհանուր ժողովոյ նորոգել զնախնի կանոնն, պարտ իցէ նոցա հնազանդել: — Բասթրուխալ, Լայման, Փոլեր, և այլք չհամարին նոցա պարտ՝ բայց միայն եթէ առանց այնր նորոգութեան ձիաոսկար իցէ կրօն իւրեանց քան թէ օգտակար: Բայց այլք պարտ համարին, և հաստատեն զայն հաւանականաբար. և այն հաւատոի է զի ընդհանուր ժողովոյ իշխանութիւն է սահմանել ինչ օգտակար կրօնին, որ չիցէ օտար ի սահմանադրութենէ նորին:

Պիտէլի է յորրորդ՝ զի կրօնաւոր ի ստունգանել հրամանի մեծաւորին, կրկին մեղանչէ, որպէս հաւանականագոյնս հաստատեն Ռուարէզ, Բասթրուխալ, Ալմաճիկեանք և այլք. մի՝ ընդդէմ կրօնից ուխտազանցութեամբն, և միւս և՝ ընդդէմ խոստմանն հնազանդելոյ մեծաւորին, որով պարտ է նմա կալ յուխտին:

Պիտէլի է հինգերորդ՝ զի պարտ է կրօնաւորի հնազանդել ամենայնի, յորում չիցեն յայտնապէս մեղք: Այս այսպէս ուսուցանեն բարոյականք առհասարակ. զի մեծաւորին իրաւունք են հրամայելոյ, և չէ մարթ զրկել զնա յիրաւանցն՝ ցորչափ չիցէ հաւաստի զի ընդդէմ օրինաց է հրամայեալն: Տես զայսմանէ որ ինչ ասացաքն ի գլ. Ա. 18: Ոմանք է խմանալ և զհրամանաց, զորոց մարթ իցէ երկբայել թէ իցեն ի վեր քան զիշխանութիւն մեծաւորին, կամ օտար ի սահմանադրութենէ. և կամ եթէ իցէ երկբայելի օրինաւորութիւն իսկ մեծաւորին՝ որ կայ յիշխանութեան: Ի բաց առեալ ըստ հասարակաց կարծեաց աստուածաբանից, եթէ հրամանն դժուարին յոյժ իցէ, և հաւանականաբար ընդդէմ օրինաց կամ՝ ի վեր քան զիշխանութիւն մեծաւորն. և կամ եթէ ի հրամանէ անտի հասանէ հպատակին ծանր վնաս հոգևոր կամ մարմնաւոր:

18. Պարտ իցէ կրօնաւորի հնազանդել մեծաւորի՝ ի

յայտնել նմա զգաստնիս՝ զոր վստահացեալ ուրուք իցէ ի նա։ — Սուրբ Աստուածային, սուրբն Աստուածոս, Լաւարրոյ և այլք ոչ օրէն համարին մեծաւորի ստիպել, և ոչ պարտ հպատակի հնազանդել նմա յայսմ. զի հզօրագոյնք են իրաւունք բնութեան քան զհրաման մեծաւորի։ Լթէ միայն ի պահելոյ զգաստնիս չհասանիցէ ինչ վնաս միաբանութեանն կամ մեծաւորին կամ ումեք յանմեղաց։ Իսկ թէ օրէն իցէ ումեք յայտնել զգաստնիս առ ի խափանել զվնաս անձին, տես որ ինչ ասացաքն ի գլ. ԺԱ. 9։

19. Պարթև իցէ կրօնաւորի ազատ լինել յուխտիցն վասն ի վերայ հասանելոյ հանգամանաց ինչ ծանուննց, որոց եթէ լեալ էր նախատես՝ ոչ ուխտէր։ — Հաւանական ցուցաք զայս ի վեր անդր (գլ. Ե. 23, 35), ըստ սրբոյ Աստուածայնոյն, սրբոյն Աստուածոսի և այլոց, վասն պարզ ուխտից, ի բաց առեալ զուխտ ողջախոհութեան, որպէս ուսուցանեն Պալմատիկեանք և այլք բաղումք յաստուածաբանից՝ ընդդէմ Պոնաւենտայ՝ որ զծանր վասնգ անժուժկալութեան ի վերայ հասեալ բաւական համարի ի լուծումն ուխտի ողջախոհութեան. այլ ըստ այսմ նորա կարծեաց ի դերև լինելին գրեթէ ամենայն ուխտք այսպիսիք։ Այլ Հանդիսական ուխտք, եթէ կրօնաւորաց և եթէ ձեռնադրելոց՝ ի սուրբ կարգ, անլուծանելիք են ըստ միաբան վարդապետութեան ամենայն աստուածաբանից. և ոչ մի դէպք կարէն ազատ կացուցանել զնոսա յուխտիցն։ Ոչ ի այսպիսի ուխտաւորն կամ կարգաւոր ոչ ևս է անձն սոսկական՝ որում օգնէ լուծումն ուխտիցն, այլ անդամ հասարակութեան՝ զորոյ օգուտ պարտ է նա խաղասել օգտի իւրաքանչիւր ուրուք։ Ոչնոյն վասն նորին պատճառի է իմանալ և զպարզ ուխտից, որով՝ ի միաբանութիւնս ինչ կրօնաւորաց կամ հաւատաւորաց երկուստեք պարտ յանձն առնուն. զի որպէս միաբանութիւնն չկարէ արձակել զոք ի բաց վասն ի վերայ հասելոյ յեղակարծ հանգամանաց, իմա առանց յանցանաց նորին, նոյնպէս և նմա չէ օրէն ի բաց ելանել ի միաբանութենէ։

20. Ո՞ր ինչ հրաման ստորին մեծաւորի, եթէ վերադունին ժխտեալ իցէ զայն։ — Ո՞ր իսկ, եթէ

վեհագունին չիցէ արգելեալ զայն գրականապէս. զի չտալով Աեթ զՀրամանն՝ չհամարի վեհագունին եղծանել զիշխանութիւն ատորնագունին: Յարգելուլ իսկ վեհագունին չտալ ատորնագունին Հրամանն ինչ, Հրամանն սորա ըստ Հաւանական կարծեաց աստուածաբանից՝ վաւեր է, թէպէտ և ոչ օրինաւոր, եթէ ոչ անվաւեր զայն վեհագոյնն յայտ առնիցէ:

21. Ո՞ւմ պարտական են կուսանք ուխտիւն հնազանդութեան Հպատակել: — Ա՛խ՝ սրբազան Պապին. երկրորդ՝ թեմական եպիսկոպոսին եթէ չիցեն աղատք ի նմանէ. իսկ եթէ աղատք իցեն, պարտին հնազանդել կարգապետի իւրեանց. այլ ըստ վականաց մասին պարտական են և ս և աղատք հնազանդել եպիսկոպոսին. (տես զայսմանէ ի գլ. Ի. 82): Այլ եթէ սոքա և եթէ նոքա աղատք են ի հնազանդութենէ յընտրութիւն պաշտօնէից կուսաստանին ըստ յայտարարութեան սրբոց Ժողովոյն: Երրորդ՝ պարտական են կուսանք հնազանդելոյ վանամօրն յամենայնի, որ ինչ Հայի ի պահպանութիւն կանոնաց: Ամենք համարին ցկարել վանամօր Հրամայել ինչ կուսանաց զօրութեամբ հնազանդութեան, վասն չունելոյ իրաւասութիւն Հոգևոր՝ այլ վերատեսուչ Աեթ գոլով կուսաստանին: Այլ բազումք յաստուածաբանից ցՀակառակն Հաստատեն. զի ուխտիւն հնազանդութեան պարտական են կուսանք հնազանդելոյ ամենայն օրինաւոր մեծաւորաց, որպիսի են և վանամայրք Հաստատեալք ի քահանայապետաց Հաստատութեամբ սահմանադրութեան կարգին: Յս այսր իսկ աղագաւ վանամայրք Թէպէտ և չունիցին իշխանութիւն անօրինելոյ զառանձնական ուխտս կուսանաց, սակայն կարեն ի դէպ առնել զայն՝ Թէպէտ և Հաւանութեամբ իւրեանց լեալ իցեն:

22. Ըստ սահմանադրութեան տրիդենտեան Ժողովոյ՝ չէ օրէն ընտրել ի վանամայր, եթէ չիցեն ուրուք ամբ 40 ըստ տիոյն, և ամբ 8 ըստ կրօնաւորութեան. և պարտ է նոցա ընտրել զոք ի մարդ անտի, և ոչ յաշխատաւորաց: Իսկ ի տարաձայնել կուսանաց յընտրութիւն, պարտ է եպիսկոպոսին կամ կարգապետի սահմանել նոցա ժամանակ, և ապա ինքնին իսկ ընտրել նոցա վանամայր:

ՅՕԴՈՒԱԾ Գ.

ՈՉՑ ՈՄԱՆՑ ՉԻՑԻ ՕՐԻՆ ՄՏԱՆԵԼ Ի ԿՐՕՆՍ

23. Օրէն ի՛նչ որդւոյ կրօնաւորել՝ Թողեալ զծնօղս՝ի կարօտութեան. և ուխտելոյ պա՞րտ ի՛նչ եւնել՝ի կրօնէ վասն օգնելոյ նոցա:
24. Օրէն ի՛նչ որդւոյ կրօնաւորել Հակառակ կամաց նոցա, կամ Թողուլ՝ի կարօտութեան զնոսա, զեղբարս կամ զքոյր:
25. Որ խափանէ զոք՝ի կրօնաւորութենէ:
26. Որ զկոչումն իւր ապախտ առնէ:
27. Օրէ՞ն ի՛նչ պարտապանաց կրօնաւորել:
28. Եպիսկոպոսաց:
29. Ժողովրդականաց:
30. Ժառանգաւորաց:

23. Ոչ օրէն կրօնաւորել այնոցիկ, որոց պարտ է՝ի մնանելն՝ի կրօն՝ Թողուլ՝ի կարօտութեան զծնօղս իւրեանց, եթէ կալուլ յաշխարհի կարէն օգնել նոցա: Եթէ միայն, որպէս սուրբ Աթանաս եւ այլք յաստուածաբանից յաւելուն, չիցէ նոցա վըտանգ՝ի մեղս ծանուննս անկանելոյ՝ի կալ իւրեանց յաշխարհի: Վտանգաւ զմերձաւորն է իմանալ, իսկ կարօտութեամբ՝ ոչ միայն զչետինն՝ այլ եւ զծանր, որպէս նոքին իսկ յայտ առնեն: Ասոյ՝ի լքանել եւս որդւոյ զծնօղս իւր՝ի ծանր կարօտութեան, վաւեր է ուխտ իւր՝ Թէպէտ եւ ոչ ըստ օրինի. վասն որոյ ոչ է պարտական ելանելոյ՝ի կրօնէ յօգնութիւն նոցա, որպէս հաստատեն սուրբն Աթանինոս, Կայեթանոյ, Ամբրոսիոս, Պռնաչինա, Պուսեմպայ, Վալմատիկեանք եւ այլք, զի է նա յայնժամ որպէս որդի ամուսնացեալ, յանձն առեալ միանգամ զպարտս այնր պայմանի կենաց: Ոսոյն հաստատէ եւ սուրբ Աթանասիոս. "Կրօնաւորն համարի մեռեալ աշխարհի, վասն որոյ ոչ է պարտ նմա վասն կերակրելոյ զծնօղս իւր ելանել՝ի կրօնէ,,: Ասացաք լքանել զծնօղս՝ի ծանր կարօտութեան. զի վասն չեռին կարօտութեան նոցա պարտ է որդւոյ ելանել՝ի կրօնէ:

24. Ուստեր եւ առանց իսկ կարօտութեան ծնօղաց՝ի մեղս համարէր որդւոյ յակամայս նոցա կրօնաւորել: Այլ զհակառակն ուսուցանեն սուրբ Հարք, Հերոնի-

մոս, Աքերոսիոս, Աղաթոնիկոս, Ասկեթերան, տասնեւ-
երրորդ Ժողովին Տոլետեան, Աքսուինացին, և ամենայն
ուղղափառ վարդապետք. զի յընտրութիւն պայմանի
կենաց ամենայն ոք աղատ է աներկբայապէս: Այս թէ-
պէտ պատշաճ է, որպէս նոյն վարդապետք ուսուցա-
նեն, խնդրել որդւոյ զօրհնութիւն ծնողացն նախ քան
զմեկնիլ յաշխարհէ, այլ պարտ է իմանալ զայս՝ եթէ
չիցէ վտանգ խափանելոյ նոցա զկոչումն իւր. այլ քանզի
պատահէ յաճախ այս վտանգ, վասն որոյ սուրբ Աքսու-
նացին խրատէ՝ մի յայսմ մասին խորհրդով ծնողացն
վարել որդւոյ: Այս սուրբն Ալիւրեղ՝ի մեկնել զտերու-
նականն բան. Ալ ոչ արկանէ չեռն գամաճի, ի հայելի չեռո,
եթէ չաղաղեալ էջէ արչայութեան Աստուծոյ, ասէ. “Չայն
չեստ որ դանդաղի՝ի խորհրդակցել ընդ աղգականս,,:
Վարձեալ և ծնօղաց ոչ է օրէն կրօնաւորել Թողլով
զորդիս՝ի ծանր կարօտութեան, կամ առանց դաստիա-
րակութեան. այլ զայս պարտ է իմանալ զորդւոյ էև՝ի
չափ հասելոց: Իսկ զեղբարս և զքոյր չայնժամ միայն
չէ օրէն անտես առնել առ՝ի կրօնաւորել, յորժամ նո-
քա՝ի չեռին կարօտութեան իցեն: Այլ եթէ ծանր
եւեթ իցէ կարօտութիւն նոցա, ուխտելոյն մնանել՝ի
կրօն ոչ է օրէն յամել ընդերկար՝ի կատարումն ուխ-
տին առանց տնօրինման:

25. Ծնօղք, որք առանց իրաւացի և հաւաստի պատ-
ճառաց խափանեն իւ և է օրինակաւ զկոչումն որդւոց
իւրեանց՝ի կրօնաւորութիւն, ևս և աղաչանօք կամ
խոստմամբք, մահուչափ մեղանչեն, որպէս սուրբն Աղ-
տոնինոս, Ալաւարդոյ, Ծաուրնելի, Աքելլի, Ալամատի-
կեանք, Վրոնչինա, Ալիտրեր, Ա՝այցոթեթա, և այլք առ
հասարակ հաստատեն: Այս ոչ ծնօղք միայն, այլ որ և
իցէ ոք՝ որ զկոչումն ուրուք խափանէ՝ ծանր մեղանչէ՝
վասն ծանուս վնասուն՝ զոր հասուցանէ նմա. այլ ծնօղք
կրկին մեղանչեն, մի՝ ընդդէմ սիրոյ, և միւս ևս՝ ընդ-
դէմ կրօնից, պարտականք զոլով հայթայթել զառա-
ւելագոյն շահ նոցա հոգևոր:

26. Այլ մեղիցէ արդեօք, որոյ իցէ կոչումն՝ի կրօ-
նաւորութիւն, և ապախտ առնիցէ զայն: — Պատաս-
խանի Եսսիոյ, զի խրատք աւետարանականք ոչ՝ի վե-
րայ ածեն ումեք պարտս, վասն որոյ և ոչ մեղանչէ նա

ըստ ինքեան. այլ եթէ գիտելով զ՚ի վկայութենէ խղճի մտաց՝ զի՚ի կալ իւրում յաշխարհի պատապարտելոց է, և չհրաժարիցէ յաշխարհէ, չիցէ ազատ՚ի մեղաց։ Եթէ ծանր մեղանչէ որ խափանէ զկոչումն այլոց, ոչպէս կարիցէ ազատ՚ի մեղաց զիւրն ապահատ առնել, եթէ զիտիցէ զայն Հաւաստեաւ։ Այլ զչափ ծանրութեան մեղացն՚ի հանգամանաց անտի կոչմանն՚ի միտ առնուլ է. չիք երկբայել զի պատանին հրաւիրեալ՚ի Քրիստոսէ՚ի կատարելութիւն՝ ոչ թեթև ինչ մեղաւ յապահատ առնել զհրաւէրն. վասն որոյ զահագին պատգամն՚ի վերայ էած փրկչին, դիւրագոյն գոլ մալխոյ ընդ ծակ ասղան մտանել քան զմեծատս նորա յարքայութիւն երկնից։

27. Յայնմ օրէն պարտապանաց մտանել՚ի կրօն, եթէ կարիցեն կալով յաշխարհի հատուցանել զպարտս իւրեանց։ — Սուրբ Աւգուստինոս, սուրբն Անտոնինոս, Կայէթանոյ, Սիլուէոյ և այլք օրէն համարին՝ բաւական վարկուցեալ զհրաժարել նորա յամենայն ստացուածոց, զի առն ազատի անձն մեծագին քան զամենայն ստացուածս է։ Այլ Անքէզ, Կաւարրոյ և այլք ամիսոքեն զայս վարդապետութիւն՝ եթէ պարտապանն կարիցէ՛ի սուղ ժամանակի իբր երկուց ամաց հատուցանել զպարտս իւր կալով յաշխարհի։ Այլ և սոքա յաւելուն, զի եթէ վասնզ մեղաց՝ զի վերայ կայցէ նմա կամ կորուսանելոյ զկոչումն, օրէն է նմա փութալ՛ի կրօնաւորութիւն։ Գիտելի է ասա զի Ալիքսանոս Ե և Կղեմէս Ը արգելուն պարտապանաց մեծագումար պարտուց չմտանել՛ի կրօն մինչև հատուցեալ զպարտսն. մի և այնոցիկ՝ որ պարտին տալ համարս՝ մինչ չև տուեալ զայն։

28. Ոչ է օրէն եպիսկոպոսաց կրօնաւորել, զի չկան ընդ առանց իրաւացի պատճառի Թողուլ զվիճակ իւրեանց, եթէ՛ վասն ուխտին՝ զոր յընդունելն զայն ուխտեն, և եթէ վասն Հոգևոր Հարսանեաց՝ որով պակիկ եպիսկոպոս ընդ Հարսին իւրում եկեղեցւոյ։ Վասն որոյ փոփոխութիւն վիճակի եպիսկոպոսաց արգելեալ է յաստուածային օրինաց, և առանց իրաւացի պատճառի չէ օրէն և ոչ զլխոյն եկեղեցւոյ անօրինել զայն և ընդունել զհրաժեշտ եպիսկոպոսի կամ փոխել զաթոռ

նորա ։ Այս իրաւացի պատճառք են, նախ՝ օգուտ ընդհանուր եկեղեցւոյ, կամ ուրուք յեկեղեցեաց՝ որպէս եթէ չիցէ ոք այլ պատշաճագոյն այնմ վիճակի ։ Երկրորդ՝ եթէ հիւանդ իցէ եպիսկոպոսն, կամ օգք վիճակին այնորիկ վնասակար նմին, կամ զառամեալ կամ տգէտ կամ անկանոն ։ Երրորդ՝ եթէ ոչ ևս կարիցէ օգտել վիճակի իւրում վասն ժողովրդեանն հանգամանաց, կամ վարել անդ զիշխանութիւն իւր ։ Չորրորդ՝ առ ի խափանել զգայթակղութիւն, այլ ոչ զայնոցիկ՝ որ կամիցին առ ոտն կոխել զարդարութիւն ։

29. Խոկ ժողովրդապետաց օրէն է կրօնաւորել, ևս և ընդդէմ կամաց եպիսկոպոսին, որպէս յայտ արար Լեւբեանոս Բ ։ Այս սուրբ Գրիգորիոսին և ոչ կարօտ ինչ զնոսա Համարի Հրամանի Պապին, որպէս և Ինեդիկտոս ԺԴ Հաստատէ զայս . այլ Հրամայէ ժողովրդապետին կանխել առդ առնել զայն եպիսկոպոսին . և ժողովրդապետական վիճակին յայտ առնէ չգատարկանալ մինչև ցօր ուխտելոյ նորա , նորին ինքեան զՀասս պաշտամանն ընդունելով ի նորընծայութեան ։

30. Օ նոյն է իմանալ և զայլոց ժառանգաւորաց եկեղեցւոյ . բայց միայն, որպէս նոյն ինքն Ինեդիկտոս ԺԴ յաւելու , օրէն է սոցա և առանց ծանուցանելոյ եպիսկոպոսին մտանել ի կրօն, եթէ իցէ վտանգ խափանելոյ ի կոչմանէն ։ Այլ և զայս նոյն ինքն յայտ առնէ , զի որպէս օրէն է կարգապետի պահանջել յետս զՀպատակ իւր անցեալ ի խստագոյն կրօն, այսպէս և եպիսկոպոսի օրէն է պահանջել ի կրօնէ զժողովրդապետ կամ զոր և իցէ եկեղեցական , եթէ ի կրօնաւորելոյ նորա Հասանէ ծանր վնաս եկեղեցւոյն ։

ՅՕԴՈՒԱԾ Դ

Ո՛ՒՄ ՄԱՐԹ ԻՑԼ ԵՒ ՊԱՐՏ ՇՆՈՐՀԵԼ, ՋԹԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆ

31 • Քանիպատիկ են ժառանգութիւնք եկեղեցականք :
32 • Քանի՛ օրինակաւ է ստանալ զայնս • իրաւունք տալոյ ումեք զայնս :
33 • Պա՞րտ իցէ տալ արժանապատուին և զպարզ ժառանգութիւնս :
34 • Պա՞րտ իցէ տեարց առաջարկել զարժանապատս :
35 • Ջի՞նչ և՛ ի կրօնաւորական կարգս :
36 • Վաւե՞ր իցէ ընտրութիւն նուազ արժանւոյն :
37 • Պարտականն իցէ ընտրօղն՝ ի հաստուցումն :
38 • Մեղանչէ՞ նուազ արժանին ընդ արժանապատուին՝ ի խնդիր լինելով :
39 • Ջի՞նչ եթէ քննիչք ծածկեն զնշմարտութիւն :
40, 41 • Ջբազմապատիկ ժառանգութենէ :

31 • Ժառանգութիւն եկեղեցական է “ Ո՛րչափ ևեթ որ իրաւունք իշխանութեամբ եկեղեցւոյ սահմանեալ վարելոյ պաշտօն հոգևոր յեկեղեցւոջ, և ընդունելոյ վասն այն հասս՝ ի ստացուածոց նորին „ : Պարտ է զանազանել զպարզ ժառանգութիւնս՝ ի կրկնակաց : Պարզ են սահմանեալքն՝ ի ժամերգութիւն ևեթ և՝ ի սպասաւորութիւն սեղանոյ, որպիսի են կանոնիկոսացն և ժամարարաց սահմանեալք՝ ի Պապէն կամ յեպիսկոպոսէն, և փոքր աստիճանաւորացն առ՝ ի կատարել զսուսումն, և հանգոյն սոցին այլք : Իսկ կրկնակք են՝ որոց է և իրաւասութիւն լինել, որպէս եպիսկոպոսացն, ժողովրդապետաց, աւագերիցանց, սարկաւագապետաց, և այլոց • կամ որոց երիցութիւն լինէ առանց իրաւասութեան, որպէս նախագահութիւն՝ ի դասս կամ՝ ի թափօրի, որպէս դասապետին, աւագ աւանդապահի և այլն • և կամ որոց է պաշտօն լինել եկեղեցական, որպէս դանձապետին, մատակարարին, եկեղեցպանին, ՝ի ձեռանէ աւանդապահին, որք առանց լինել իրաւասութեան կամ գահերիցութեան ունին լինել տնտեսութիւն :

32 • Յորոկի է ստանալ զեկեղեցական ժառանգութիւն : Նախ՝ ազատ տուչութեամբ Պապին կամ եպիսկոպոսի • երկրորդ՝ ընտրութեամբ և՝ ի վերայ յաւելեալ հաւանութեամբ վերադունին • երրորդ՝ առաջարկու-

Թեամբ և ՚ի վերայ յաւելեալ հաստատութեամբ վե-
հագունին, յորժամ այլոց ուրուք են իրաւունք տուչու-
թեանն: Արկին է այս իրաւունք, աշխարհական և ե-
կեղեցական. և գիտելի է զի եթէ աշխարհական է ի-
րաւանցն տէր և յամէ առաջարկել զամիսս չորս, և եթէ
եկեղեցական է և յամէ զամիսս վեց, իրաւունք տուչու-
թեանն անցանեն ՚ի վեհագոյնն՝ որում անկ է հաստա-
տութիւնն: Եթէ երկուս կամ երիս առաջարկէ աշ-
խարհականն, տէր է եպիսկոպոսն ընտրելոյ զոր ոք ՚ի
նոցանէ կամի. իսկ եթէ եկեղեցականն, պարտ է ե-
պիսկոպոսին ընտրել զառաջինն յառաջարկելոյ անտի.
և զարժանագոյնն, եթէ յայլեւայլ եկեղեցականաց ի-
ցեն առաջարկեալք:

33. Պաշտ իցէ զամենայն իսկ ժառանգութիւնս ե-
կեղեցականս տալ արժանագունին: — Արգիլնալու-
թիւն, եպիսկոպոսութիւն, ժողովրդապետութիւն, ըստ
եկեղեցական կանոնաց՝ արժանաւորագունին են անկ.
և զարժանաւորութիւն պարտ է դատել ըստ առաւե-
լագոյն օգտակարութեան եկեղեցւոյ կամ հաւատա-
ցելոց: Յլ ՚ի հաւասարել ընտրելեացն ըստ այլոց մա-
սանց, պարտ է նախադասել զիանագունին զորբագոյնն
և զխոհեմագոյն՝ որպէս ասէ սուրբ Գրիգորիոս, զազ-
նուականն և զՀզօր՝ յորոց օգուտ մեծ է եկեղեցւոյ, զբ-
նիկն, զծերագոյնն, զչքաւորագոյնն, և զքահանայ չև
քահանայացելոյ:

Ինայ լինդիր զպարզ ժառանգութեանց, թէ ար-
դեօք մեղիցէ եպիսկոպոս ՚ի տալ զայն նուազ արժա-
նաւորի: — Հաւանականագոյն և հասարակաց կարծիք
աստուածաբանից, զոր և սուրբ Գրիգորիոս հաստա-
տէ, համարին ՚ի ծանր մեղս եպիսկոպոսի՝ տալ զայն
նուազ արժանաւորի: Ոչ ՚ի եկեղեցական ժառանգու-
թիւնք սահմանեալ են, ոչ միայն յօգուտ եկեղեցւոյ,
այլ և ՚ի վարձ վաստակաւորաց. վասն որոյ եպիսկո-
պոսն կրնակի մեղանչէ տալով զայնս նուազ արժանա-
ւորին: Ի՝ զի զրկէ զարժանաւորագոյնն յիրաւանց
իւրոց, ուր ինքն ոչ է տէր այնոցիկ՝ այլ մատակարար.
և երկրորդ՝ վնաս մեծ հասուցանելով եկեղեցւոյն. զի
ուր չիցեն նախամեծար արժանաւորագոյնք, սակաւք
ջանան այնպիսիս զանձինս յարդարել ՚ի ծանր վնաս հա-

սարակաց։ Սակայն՝ Լաւարդոյ, Սոթոյ, Եսսիոյ, Ղուկոյ և այլք ներելի համարին նախ՝ եթէ միանգամ միայն կամ երկիցս նուազ արժանւոյն տայէ ժառանգութիւն ինչ պարզ, և զկանոնիկոսութիւն իսկ առանց իրիք իրաւասութեան կամ երևելի ինչ պաշտամանն. երկրորդ՝ եթէ սակաւ ինչ իցէ առաւելութիւն արժանաւորութեանն. երրորդ՝ եթէ դուշնաքեայ ինչ իցէ ժառանգութիւնն. չորրորդ՝ եթէ ընտրեալն իցէ՛ի տանէ հաստատողի ժառանգութեանն. հինգերորդ՝ եթէ ընտրեալն՝ի սուղ ժամանակի հրաժարելոյ իցէ՛ի ժառանգութենէն։

34. Որոց իրաւունք են առաջարկելոյ, պարտ իցէ և նոցա զարժանաւորագոյնս առաջարկել։ — Պարտ իսկ է վանք ժողովրդապետութեան՝ որոց իրաւունք իցեն առաջարկելոյ, և թագաւորաց վանք եպիսկոպոսութեան ըստ սահմանելոյ արիդենտեան ժողովոյն՝ առաջարկել զարժանաւորագոյնս։ Օնոյն է իմանալ՝ ըստ բանից սրբոյ ժողովոյն, և վանք ամենայն ժառանգաւորաց հոգաբարձուաց։ Իսկ յաղագս պարզ ժառանգութեանց, որպէս պարտ է եպիսկոպոսի ըստ հաւանականագոյն կարծեաց ընտրել զարժանաւորագոյնս, այսպէս և որոց իրաւունք առաջարկութեան են՝ զարժանաւորագոյնս առաջարկել. ՚ի բաց առեալ զժամանարս, որպէս պարտ համարի Ղուկոյ։

35. Կրօնաւորք, որք զնուազ արժանաւորն ընտրեն յիշխանութիւն, մեղանչէն մահուաւոյ։ — Հաստատ կաց կարծիք աստուածաբանից համարին զայն նոցա ՚ի ծանր մեղս. զի կարդապետք և վանահարք հանգոյն եպիսկոպոսաց յօգուտ միաբանութեան կարգեալ են, և զնոցանէ կախի բարեկարգութիւն ուխտին։

36. Ընտրութիւն նուազ արժանաւորին ՚ի ժառանգութիւնս հոգաբարձութեան իցէ վաւեր։ — Այնքեզ, Բասէրթիալ, Ալմատիկեանք և այլք անվաւեր համարին. բայց հաւանականագոյնս զհակառակն ունին Ղուկոյ, Ասգուէզ, Լաքրուա և այլք. և հաստատեն զայն կոնգակաւ Պիոսի Ե, որ թէպէտ տեղի տայ բողոքոյ արժանաւորագունին, այլ առանց խափանելոյ այնուհիկ նուազ արժանաւորի ընտրելոյն, որով յայտ առնէ վաւեր զընտրութիւնն։

37. Ընտրօղք նուաղ արժանաւորին ՚ի ժառանգու-
թիւն եկեղեցական՝ պարտական՚ք իցեն ՚ի հատուցումն։
— Ծէսք և ոմանք պարտականս համարին, որպէս
Աիլուէոյ, Կայէթանոյ, Ասլմատիկեանք և այլք, այլ
հասարակագոյն կարծիք աստուածաբանից ազատ կա-
ցուցանեն զնոսա ՚ի հատուցմանէ, ոչ առ արժանաւորա-
գոյնն՝ որոյ չեն ինչ ըստ ինքեան իրաւունք ՚ի վերայ ժա-
ռանգութեանն, և ոչ առ եկեղեցին՝ որ այլ ինչ պարտս ոչ
՚ի վերայ դնէ նոցա, բայց զընտրել զանարժանս։ Ա՚ան
որոյ յընտրել և եթէ զանարժանն՝ պարտական գտանին
հատուցանելոյ եկեղեցւոյն զվնասն։ Ա՚ան առաւել
հաւանականութեան այսր կարծեաց ասացաք ՚ի վեր
անդր (գլ. Ա. 20 և գլ. ԺԴ. 44) զի որ անխիղճ մնօք
ժառանգէ ինչ, չէ պարտական հատուցանելոյ՝ ցորչափ
չիցեն հաւաստի պարտք իւր։ Ա՚այր եւս աղագաւ չէ
պարտական ՚ի հատուցումն և որ առանց խաբէութեան
շրջէ զմիտս եպիսկոպոսին չտալ առաւել արժանաւորին
զժառանգութիւնն, որպէս ասացաք դարձեալ անդ (գլ.
ԺԴ. 63)։

Ա՚այլ յորս հարցափորձիւ իցէ ընտրութիւնն, առա-
ւելագունից ՚ի բարոյականաց անտի կարծիք պարտական
համարին ՚ի հատուցումն զընտրօղ նուաղ արժանաւո-
րին. վասն զի անդ արժանաւորագոյնն յաղթութեամբն
՚ի հարցափորձին ստանայ իրաւունս ՚ի վերայ ժառան-
գութեանն, վասն դաշինն՝ որ մտանէ ՚ի մէջ ընտրողին
և ընտրելեաց։ Ա՚այս ամենայնիւ Սոթոյ, Կաւարրոյ
և այլք ազատ կացուցանեն զնա, ոչ ՚ի մեղաց, այլ ՚ի
հատուցմանէ, այնու զի դաշինն այն ոչ ածէ ՚ի վերայ
ընտրողին պարտս փոխարինական արդարութեան, այլ
յաւելու եթէ եպիսկոպոսին զպարտս տրամաբաշխա-
կան արդարութեան՝ նախադասելոյ զարժանագոյնն,
որ ոչ ածէ պարտս հատուցման։ Ա՚այս կարծիք եթէ
չիցէ եւս հաւանական, այլ չէ մերժելի. զի եթէ ար-
դարև չիցէ ստոյգ դաշինն այնմիկ ածել պարտս փոխա-
րինական արդարութեան, և ոչ պարտականութիւն հա-
տուցմանն լինի ստոյգ։ Այս հակառակ կարծեաց իսկ
պաշտպանք, Սանքեզ, Լուկոյ, Ռոնքալեա և Կարծիա,
ազատ ՚ի հատուցմանէ զընտրօղն համարին, եթէ առա-
ւելութիւն արժանաւորութեանն դուշնաքեայ ինչ իցէ։

38. Որ ընդ արժանապատուի քան զինքն լեալի՝ ի խնդիր եկեղեցական ժառանգութեան, մեղանչէ՛ թէ ոչ։ — Լեսիոյ, Սոթոյ, Ղզորիոյ, Այեթանոյ, Ասպուհզ, Մալմատիկեանք և այլք հաւանականաբար ազատ կացուցանեն զնա՛ ի մեղաց. զի եթէ արժանապատուիոյ եւեթ օրէն էր լինել այնմ՛ ի խնդիր, նոքին թերևս առաւել հրաժարէին՝ ի խնդիր լինելոյ՝ արժանաւորագոյն զայլս համարելով, և լինէր այն՝ ի միասս եկեղեցւոյ։

Որ քան զարժանագոյն ոք նախադասեալ՝ ընտրիցի, մեղանչէ՛ չընդունել զժառանգութիւնն, և իցէ՛ պարտական՝ ի հատուցումն։ — Լաւարոյ և Բասթրոփալ պարտական զնա համարին. բայց Սոթոյ, Անքէզ, Մալմատիկեանք և այլք հաւանականագոյնս զհակառակն հաստատեն։ Ըստ ընդունելով նորա զժառանգութիւնն՝ ոչ լինի գործակից անիրաւ ընտրութեան եպիսկոպոսին, որպէս համարին առաջինք. քանզի եպիսկոպոսն նախ քան զընդունել նորա առնէ զընտրութիւնն անիրաւ, և ընդունելութիւնն՝ ի վերայ եկեալ, պատահական ինչ է։ Այս ոչ պարտական՝ ի հատուցումն է, զի վաւեր է ընտրութիւն իւր՝ որպէս՝ ի վեր անդր (36). ցուցաք։ Ըստ կարծիս հաստատ և սուրբ Գուխնացին։

39. Մեղանչիցէ՞ն քննիչք, որք ոչ յայտ առնեն եպիսկոպոսին զարժանագոյնն՝ ի քննելոյ։ — Լուկոյ, Բասթրոփալ, Լաքրուա և այլք շատ համարին յայտ առնել նոցա զարժանաւորութիւն քննելոյն՝ թողլով եպիսկոպոսին ընտրել՝ ի նոցանէ զարժանագոյնն։ Այլ Հանրագոյն և Հաւանականագոյն կարծիք պարտ համարին նոցա յայտ առնել զարժանագոյնն. զի թէպէտ և եպիսկոպոսին է անկ ընտրել զարժանագոյնն, այլ սրբոյ Ժողովոյն այսր իսկ աղագաւ սահմանեալ է զհարցափորձ և զքննիչս, որպէս զի զարժանագոյնն ցուցցեն նոքա եպիսկոպոսին, և կարասցէ նա ըստ օրինի առնել զընտրութիւնն։ Այս պարտ իսկ է քննողաց երդնուլ զհաւատարմութիւն ըստ սահմանադրութեան տրիդենտեան Ժողովոյ. և առանց այսորիկ անվաւեր է հարցափորձն, ըստ յայտարարութեան սրբոյ Ժողովոյն՝ որ տրիդենտեան սահմանադրութեանցն է աւանդապահ։

40. Որ՞ն իցէ այլ և այլ ժառանգութիւնս միւս

ումեք տալ: — Պարտ է զանազանել աստ զժառանգութիւնս միաբնակիանս յանմիաբնակիանայ: Միաբնակիանք են պարզքն առ հասարակ, որք ոչ պահանջին կալ ինալ ուրեք. իսկ անմիաբնակիանայ երկու ազգ են. նախ՝ էրկնակ, զորոց ի վեր անդր ասացաք (31). այսինքն առաջնայն ժառանգութիւնք հոգաբարձութեան, և յանձանձեալք որք ի նմին տեղւոջ և ժամանակի կատարին, և ս և նախագահութիւնք և պաշտամունք՝ զորս անդ նշանակեցաք. և երկրորդ ազգ անմիաբնակիանայ են կանոնիկոսութիւնք և այլ ամենայն ժառանգութիւնք, որ պահանջին զառաքակայութիւն ի նմին տեղւոջ: Արդ որ ընդունի զերկուս ժառանգութիւնս անմիաբնակիանս, չընդունել զերկրորդն՝ գադարէ ըստ իրաւանց առաջինն. և եթէ կալցի նա զերկոսին ևս, նովին իսկ գործով յերկաքանչիւրոյն ևս անկանի, ըստ սահմանաց դրութեան տրիդենտեան ժողովոյ: Յայտ է այս վասն առաջնոյ ազգի անմիաբնակիան ժառանգութեանց, այլ վասն երկրորդի ևս ազգին կէսք ի բարոյականաց զնոյն հաստատեն: Ասայ Լայման, Պուսեմպայ, Լաւրրոյ, Սալմատիկեանք և այլք զհակառակն ունին. զի ժողովն տրիդենտեան զժառանգութեանց հոգաբարձութեան եթէ առնէ զյայտարարութիւնն: Լու դարձեալ օրէնն է սրբազան Պապին տնօրինել զայն ըստ հարկի կամ ըստ օգտի եկեղեցւոյ:

41. Այլ և այլ ժառանգութիւնս, ևս և պարզս, արգելեալ է ի կանանց միւսմ ումեք ունել՝ եթէ միայն մին և եթէ բաւէ նմա յապրուստ, որպէս յաւելու ժողովն տրիդենտեան. և ընդ այս չիք երկբայել: Այլ խնդիրն այն է, թէ իցէ և յաստուածային օրինաց արգելեալ՝ ունել այլ և այլ ժառանգութիւնս պարզս: Կէսք ժխտեն զայս, այլք հաստատեն. յորոց Պելլարմինոս յաւելու՝ զի և Պապն չկարէ տնօրինել զայն առանց ծանր պատճառի. քանզի անհնար է միւսմ ումեք բաւել երկուց եկեղեցեաց ի սպասաւորութիւն, և զի բարերարացն ևս այսպէս համարին լեալ կամք՝ զի որ վայելեն ի հասից այնր եկեղեցւոյ, նմա միայնոյ սպասաւորեսցէ: Իսկ սուրբ Աղուինացին, Ազորիոյ, Լայման, Տոլզման, Սալմատիկեանք և այլք առ հասարակ ընդդէմ բնական օրինաց համարին զայն, որպէս

զի և Պապին տնօրինմամբ չկարել ումեք ունել այլ և այլ ժառանգութիւնս՝ եթէ միոյն կարիցէ կեալ։ Ել միայն վասն ահա ասացեալ պատճառացս, այլ և զի անկարգութիւն մեծ այնուիկ մտանել յեկեղեցի, որպէս յայտ առնէ Յովհաննէս Ի՞ի կոնդակին։ Օ՞ի յայնժամ ոմն մեծանայ այլ և այլ ժառանգութեամբք, և այլ ոք՝ թերևս առաւել վաստակաւոր՝ տուայտի չքաւորութեամբ. և զարձեալ՝ որ այլ և այլ եկեղեցեաց կամ այլ և այլոց պաշտամանց պարտի սպասաւորել, զժուարաւ բաւէ ընուլ զպարտս իւր. և զարձեալ՝ յառաւելութենէ հասից՝ի ներքս մտանել զեղխութիւն և ցանկութիւն։

Այլ սակայն վասն իրաւացի պատճառաց օրէն է Պապին տնօրինել զայս։ Այս իրաւացի պատճառք են, նախ՝ Հարկաւորութիւն, այս ինքն այլ և այլ եկեղեցեաց կարօտել նմա։ Երկրորդ՝ օգտակարութիւն, այս ինքն եթէ ժառանգաւորն առաւել կարող իցէ օգնել՝ի բացատ իշխանութեամբ, գիտութեամբ և խոհականութեամբ իւրով քան այլ ոք՝ի մեծոց։ Երրորդ՝ վաստակք, այս ինքն եթէ ոք բազում վաստակիցի բանիւ և գրով վասն եկեղեցւոյ։

ՑՕԴՈՒԱԾ Ե

ՋՀԱՆԳԱՄԱՆԱՑ ԵՒ ՋՊԱՐՏՈՒՑ ԺԱՌԱՆԳԱԿԱՐԳԱՑ, ԵՒ Ո՛ՐՊԷՍ ՄԱՐԴ ԻՑԻ ԱՆԿԱՆԵԼ, ՆՈՑԱ Ի ԺԱՌԱՆԳՈՒԹԵՆՆ

42. Հանգամանք ժառանգաւորաց. դիտաւորութիւն ընդունելոյ յաւազանէն զամ մի զկարգ:
43. Որ ընդունի երկբայանօք կամ պայմանաւ զժողովրդապետութիւն:
44. Որ ընդունի զժառանգութիւն դիտաւորութեամբ հրաժարելոյ յայնմանէ:
45. Պարտք ժառանգաւորաց ըստ պաշտաման: Ըստ հասից: Եթէ կարէ կալ նոքօք:
46. Ցի՞նչ զաւելորդս հասից ժառանգութեանն՝ի կիր արկանել պարտ իցէ նմա:
47. Կարի՞ց տալ աղքատաց երկրին:
48. Կարի՞ց տալ ազգականաց:
49. Ձի՞նչ պարտ իցէ Թոշակելոյ առնել զաւելորդս Թոշակին:
50. Պարտք կալոյ կանոնիկոսաց՝ի դասու:
51. Պատիժ բացակայութեան:
52. Որ ինչ ազատ կացուցանէ զնոսա՝ի կալոյ անդ, և նախ հիւանդութիւն:
53. Երկրորդ՝ հարկաւորութիւն:
54. Բանադրեալն եթէ կայցէ՝ի դասու:
55. Եթէ անկանոնն:
56. Երրորդ՝ օգտակարութիւն, որպէս որ յանձանձէ զերս եկեղեցւոյն կամ զուսաւ կանոնիկոսաց, որ պարապէ՝ի պաշտօն ապաշխարահօր կամ աստուածաբանի:
57. Փննիչք և այցելուք:
58. Քանի՞ օրինակաւ մարթի է կորուսանել զժառանգութիւն, մանաւանդ հրաժարմամբ, և օրինօք՝ եթէ սիմոնականութեամբ իցէ ընկալեալ:
59. Ցաղագս Թոշակաց:
60. Որ ինչ արուեստ և պաշտօն արգելեալ է եկեղեցականաց:
61. Որ վաճառէ կամ տայ՝ի բաց զինչս եկեղեցականս:
62. Որ ինչ պայմանք խնդրին առ այս:

42. *Պարտ է ժառանգաւորի, զի դէթ զկարգ հերաց ընկալեալ իցէ: Պարձեալ զի իցէ յօրինաւոր

---

* Հաճոկ իցէ երկրորդել ասա դարձեալ՝ զոր երկիցս այլուր ազգ առարաք՝ զի մերս այս Թարգմանութիւն և եթէ է աւանդելոցն՝ի սրբոյն Աչիոնասէ Լիւսարեայ օրինադրութեանց՝ վասն Արևմտեան եկեղեցեաց, և ոչ եթէ վասն Արևելեան եկեղեցեաց ևս կանոնադրութիւն, զի այն ոչ մեզ է անկ, այլ վերադունից Հովուաց և Առաքելոցդաց. որոց՝ի կամէն ձգել և ձգտիլ զաղգայնոյ Եկեղեցւոյս մերոյ զանփակաս օրէնսն, և ըստ հարկի և ըստ հանդամանաց ժամանակիս սահմանել միօրինակ կանոնս բարեկարգութեան, ոչ ինչ անօգուտ Թերևս եղիցի վաստակս մեր այս՝ի սատարել և՝ի լուսաւորել զմիտս նոցա:

ամուսնութենէ ծնեալ, թէպէտ և օրէն է եպիսկոպոսի տնօրինել զայն ըստ փոքր աստիճանաց և ըստ պարզ ժառանգութեանց։ Կարձեալ՝ զի մի իցէ անկանոն կամ եղեռնաւոր կամ քանդրեալ։ Կարձեալ զի իցէ նմա դիտութիւն բաւական, և հասակ օրինաւոր. այս ինքն վասն պարզ ժառանգութեանց 14 ամ սկսեալ, վասն որոց պահանջեն զկիսասարկաւագութիւն՝ 21 ամ սկսեալ, վասն որոց պահանջեն զսարկաւագութիւն՝ 22 ամ, վասն որոց պահանջեն զքահանայութիւն՝ 24 ամ. վասն ժողովրդապետութեան՝ 25 ամ սկսեալ, իսկ վասն եպիսկոպոսութեան՝ 30 ամ կատարեալ։ Կիտելի է զի՝ի մայր եկեղեցիս վասն ժառանգութեանց՝ որ ոչ պահանջեն զքահանայութիւն՝ խնդրին ամք 22 սկսեալ։

Պարտ է ժառանգաւորաց նախ քան զլուսին ամին ընդունել զսուրբ կարգ. և եթէ ժամ մի ևս՝ի վերայ անցանիցէ, կորուսանէ զհասս ժառանգութեանն, և չկարէ ունել զայն՝ բայց եթէ անգիտութեամբ զերեամ կալեալ զայն և նախադրեալ իցէ, որպէս ասէն Եսիոյ և Պուսեմպայ։ Ումն որոյ որ ընդունի ժառանգութիւն եկեղեցական, առ որ խնդրի սուրբ կարգ, պարտ է նմա ունել դիտաւորութիւն ձեռնադրելոյ՝ի նմին ամի։ Իւ եթէ հոգաբարձութեան է ժառանգութիւն, և չունիցի դիտաւորութիւն քահանայանալոյ, ոչ միայն մահուչափ մեղանչէ՝ այլ և զրկի նովին իրաւամբք՝ի ժառանգութենէն, և պարտի դարձուցանել յետս զամենայն ընկալեալ հասս։ Կայց օրէն է եպիսկոպոսին վասն ծանր հարկի կամ կարևոր օգտի եկեղեցւոյն տնօրինել զամն եօթն, որպէս զի կարասցէ ժառանգաւորն պարապել յուսումն, կացուցանելով զոք փոխանորդ իւր։

43. Որ ընդունի ժառանգութիւն հոգաբարձութեան երկբայական կամ պայմանաւոր կամօք ձեռնադրելոյ՝ի նմին ամի՝ի քահանայութիւն, մեղանչէ մահուչափ, և պարտական է հատուցանելոյ յետս զհասս ժառանգութեանն։ — Ակսք յաստուածաբանից ժբխտեն բացէ՝ի բաց, այլք, ընդ որս Եսիոյ, Սանքեզ և Սալմատիկեանք՝ խոհիր զանազանութեան դնեն ընդ երկբայական և ընդ պայմանաւոր միտս, ըստ առաջնումն հաստատելով, իսկ ըստ երկրորդումն ժխտելով.

զի համարին Հմարիա կամ զպայմանաւորն։ Եւ Աղ-
թոյ, Հզորիոյ, Պահչինա և այլք ըստ երկոցունցն և
համարին մեղանչել նմա. զի թէպէտ պայմանաւոր կա-
ցիք, և թէ երկբայականաւ ընդունիցի, եթէ չիցեն
նմա կամք հաստատուն ձեռնադրելոյ ի քահանայու-
թիւն, նենգաւ մտանէ ի ժառանգութիւն, և պարտա-
կան է հաստուցանելոյ զհաս ժառանգութեանն ընկա-
լեալ։ Բայց ժառանգաւորին, յետ ընդունելոյ անպայ-
մանն կամք զժառանգութիւնն, մարթ է և օրէնն փո-
խել զկամս և հրաժարել ի ժառանգութենէն։

44. Որ ընդունի ժառանգութիւն ինչ պարզ, դիտա-
ւորութեամբ հրաժարելոյ յայնմանէ, մեղուցէ՞ և նա։
—Ոչ եղանէ մահուամբ, եթէ խնդրի վասն ժառան-
գութեանն այնմիկ սուրբ կարգ, և չիցեն նորա կամք
ձեռնադրելոյ։ Ո՞յս այսպէս ուսուցանեն աստուածա-
բանք առհասարակ. այլ եթէ ժառանգութեանն այն-
միկ չիցէ յարակից սուրբ կարգ, մեղուցէ՞ որ ընդունի
զայն դիտաւորութեամբ հրաժարելոյ ապա յայնմանէ
և ամենանանալոյ։ —Ծոլետոյ, Լեսիոյ և Վալմատի-
կեանք անկարգութիւն մեծ և ծանր մեղս համարին.
Պասթրոփալ և Կարծիա չհամարին զայն ի մեղս։
Եւ հասարակաց կարծիք աստուածաբանից ներելի
և եթէ մեղս համարին զայն, և թուի հաւանականա-
գոյն կարծիք նոցա, զի ըստ կանոնին՝ զոր սուրբն
Նռոնինոս և սուրբ Գրիգորիոսն սահմանեն, մի դա-
տապարտել ինչ ի մահացու մեղս "առանց յայտնի վը-
կայութեան սուրբ գրոց, կամ եկեղեցական կանոնաց
և սահմանադրութեանց, և կամ բացայայտ պատճա-
ռի „։

45. Պարտ է ժառանգաւորաց կրել զձև եկեղեցա-
կան և խուզումն հերաց ի գագաթան, կատարել ըզ-
ժամակարգութիւն, և ի չկատարելն՝ հատուցանել
յետս զհաս ժառանգութեանն։ Եւ զայսմանէ ձա-
ռնացուք ի քննութեան ձեռնադրելեաց. մնայ ասա-
սել զպիտառութենէ հասից, և զպարտուց մերձակա-
յութեան։ Ըստ պիտառութեան հասից՝ օրէնն է ժա-
ռանգաւորի կեալ նոքօք, թէպէտ և իցեն նորա ինչք
յապրուստ։ Ո՞յս այսպէս ուսուցանեն հասարակաց
կարծիք աստուածաբանից. զի որք սեղանոյն ծառայեն,

վայել է նոցա ի սեղանոյ անտի կեալ. “Որ երբէք ջինուորիցի իւրովք թոշակօք,,, ասէ առաքեալն: Այլ միայն եթէ աղքատ որ ի ծանր կարօտութեան կայցէ կամ ի գերութեան ի ձեռս բարբարոսաց, պարտ է ժառանգաւորի յաւելորդաց անտի իւրոց օգնել նմա: Իսկ թէ այս ոչ իցէ, օրէն է նմա ի հասից անտի կեալ, և զևրն զամենայն ծախել ըստ հաճոյս:

46. Իսկ եթէ հասք ժառանգութեանն յաւելուն քան զպէտս կենաց ժառանգաւորի, պարտ է նմա ծախել զայն յաղքատս կամ ի բարեգործութիւն, որպէս ուսուցանեն առ հասարակ աստուածաբանք. զի ժողովն տրիդենտեան չհրամայէ այլ ինչ, բայց միայն չվատնել ժառանգաւորաց զհասս ժառանգութեանն, այլ ի գործս բարիս ի կիր արկանել զայնս: Սակայն պարտ է նոցա նախադասել միշտ զաղքատս, որք ի ծանր կարօտութեան կայցեն, քան պահել զայնս վասն եկեղեցեաց կամ աղքատանոցաց իսկ չինութեան:

47. Ըստ հասարակաց վարդապետութեան աստուածաբանից՝ չիք ինչ պարտ նախադասել զաղքատս տեղւոյն. քանզի կանոնք անխտիր սահմանեն օժանդակել աղքատաց. այլ մանաւանդ պարտ է նախադասել ուր ուրեք ի ծանր կարօտութեան կայցեն աղքատք:

48. Ընդ աղքատս օրէն է իմանալ և զազգականս, եթէ արդարև իցեն կարօտք, և չկարիցեն ըստ պատշաճի իւրեանց կեալ, որպէս և ժողովն տրիդենտեան յայտ առնէ: Այլ զայս այսպէս պարտ է իմանալ, թէ պէտ և իցեն այլ աղքատք առաւել կարօտք, որպէս յաւելուն Քաղէտոն, Ղողինա և Վիւա ընդդէմ Այմանի. զի ապրուստ ազգականաց է մասն կենաց ժառանգաւորի, վասն որոյ Ջորիոյ, Բասէթոփալ, Քոլետոյ և Աքրուա ընդհանրապէս իսկ ասեն, կարել եկեղեցականի ի հասից ժառանգութեան իւրոյ կերակրել և զիւրան:

49. Ինդիր է թէ արդեօք պարտ իցէ և թոշակաւորի տալ աղքատաց, որ ինչ քան զպէտս կենաց իւրոյ յաւելու ի հասիցն: — Անդրէզ, Ղողինա, Վալմատիկեանք և այլք զանազանեն զթոշակ աշխարհական յեկեղեցականէն, որպէս բացատրեսցուք ի տողս ի թիւն 59. և անպարտ կացուցանեն զթոշակ աշխարհական,

այլ ոչ և զեկեղեցականն. զի զսա Հաւատսդ Համարին Հասից ժառանգութեան: Խոյց ոսկի, Ասգուեզ, Վրուալ, Ազորիոյ և այլք զերկոսին ևս անպատ առնեն, և բաւականապէս Հաւանական է կարծիք նոցա. զի Թոշակք՝ի Հասից ժառանգութեան առեալ՝ նուիրին իսկ գտանին՝ի բարի ինչ՝ի կիր արկեալ, և չեն ինչ պարտք վերստին բարեգործելոյ նոքօք:

Իսկ վասն ժառանգաւորաց՝ որք՝ի սնոտիս զՀասս ժառանգութեան իւրեանց ծախեն՝ Թէ արդեօք պատասխանիք իցեն՝ի Հատուցումն, ասացաք՝ի վեր անդր (գլ. ժ. 6. 7):

50. Յաղագս պարտուց ժողովրդապետի և եպիսկոպոսի կալոյ՝ի վիճակի իւրեանց ասացաք՝ի վեր անդր (գլ. է. 14 և այլն. 62 և այլն): Նոյ ատ ասել ըզպարտականութենէ կանոնիկոսաց կալոյ՝ի դասու: Կանոնիկոսք մայր եկեղեցւոյ և այլոց ուխտից եկեղեցեաց զամիսս երիս՝ի տարւոջ ազատք են՝ի դասուէ, որպէս սահմանեաց Ժողովն տրիդենտեան. և ընդունին յայնժամ զՀասս իւրեանց, այլ ոչ և զբաշխսյս: Եւ անգործ իսկ Թէ կացցեն և առանց իրաւացի պատճառի բացակայք, ոչ կորուսանեն զՀասս իւրեանց՝ որպէս յոյժ Հաւանականաբար Հաստատեն Անքէզ և այլք յաստուածաբանից. զի սուրբ Ժողովն առանց իրիք պայմանի ներել նոցա՝ի բաց կալ: Զայլ ոչ է օրէն նոցա առանց Հրամանի եպիսկոպոսին մեկնել՝ի Թեմէն, որպէս յայտ արար Ժողովն աւանդապահ տրիդենտեան սահմանադրութեանց: Եւ Թէպէտ եպիսկոպոսաց ոչ է օրէն զնախորդ ամին ամիսս ազատութեան յարել ընդ ամիսս յաջորդ ամին՝ ըստ յայտարարութեան Բենեդիկտեայ ԺԴ, այլ կանոնիկոսաց օրէն է՝ եթէ գայթակղութիւն ինչ կամ նուազութիւն աստուածային պաշտամանն չիցէ խափան:

51. Պարտ է սահմանել նոյն Ժողովն տրիդենտեան, կանոնիկոսի՝ որ աւելի քան զեռամեայ ժամանակ պակասէ՝ի դասուէ՝ զրկել՝ի կիսոյ տարեկան Հասից ժառանգութեանն. և եթէ յամեսցէ և ևս, զրկեսցի՝ի բովանդակ իսկ Հասից և՝ի ժառանգութենէն:

52. Յրեք ինչ ազատ կացուցանեն զկանոնիկոսս՝ի դասուէ. խօթութիւն, Հարկաւորութիւն, և յայտնի

օգուտ եկեղեցւոյ. որ այսոցիկ աղագաւ՝ ի բաց կայ՝ ի դասուէ, օրէն է նմա ընդունել և զՀասս ժառանգութեանն և զբաշխսոյս։ Զգատ առնէ նախ՝ խօթութիւն այնպիսի, որում մարթ է հաւանականաբար ծանրանալ։ Ոմանք որոյ ազատ են և ծերք՝ որ չկարեն առանց ծանր նեղութեան գնալ՝ ի դաս, կամ կալ՝ ի դասու։ Այլոց կուրաց պարտ է կալ՝ ի դասու, եթէ կարիցեն գնալ անդր առանց ծանր նեղութեան. նոյնպէս և խլից, որոց պարտ է և ևս զպակասութիւն լսելեացն ընդ անձայն արտասանութեամբ։

53. Զգատ առնէ երկրորդ՝ հարկաւորութիւն, որով է իմանալ զվանգ ամենայն իրիք ծանր ինասու։ Ոմանք այսմ աղագաւ են՝ ի դասէ որք՝ ի դարման առողջութեան կան դեղովք, կամ բաղանեօք, կամ սատճիչ օդովք։ Պիտելի է ասա, զի եթէ ոք յանիրաւի բանադրեալ իցէ կամ կախեալ, կամ յանիրաւի չարձակեալ՝ ի բանադրանացն կամ՝ ի կախմանէ, և վասն այնորիկ չկարիցէ կալ՝ ի դասու, չկորուսանէ նա ոչ զՀասս ժառանգութեան և ոչ զբաշխսոյս։ Պիտելի է դարձեալ՝ զի եթէ պղծեալ իցէ եկեղեցին կամ խափանեալ յաստուածային պաշտամանց, անկ են կանոնիկոսաց և Հասք և բաշխսոյք, եթէ ոչ նոքին ինքեանք լեալ իցեն պատճառք խափանմանն կամ պղծութեան։

54. Եթէ բանադրեալն կայցէ՝ ի դասու, զրկի ըստ իրաւանց՝ ի Հասից։ — Ասէր Վռնչինա Համարի զըրկել նմա. բայց Ասնքէզ, Պոնաչինա, Վասթրոփալ, Ալմատիկեանք և այլք ասեն, և ոչ անհաւանականաբար՝ զի թէպէտ և մեղանչել մեղանչէ նա կալով՝ ի դասու և արժանի դատի զրկելոյ՝ ի Հասից, սակայն և ոչ ամի ինչ օրինք սահմանեն զնովին իսկ գործով զրկումն նորա։

55. Ոսկ զինչ անկանոն։ — Ի լուծումն այսր խընդրոյ կարևոր է պիտել թէ իցէ վաւեր տուչութիւն ժառանգութեան առ անկանոն։ Եթէ չէտ տուչութեանն իցէ անկեալ յանկանոնութիւն, չայտ է զի վաւեր է. և ոչ զրկի չայնժամ կանոնիկոս անկանոն՝ որ կայ՝ ի դասու՝ ոչ՝ ի Հասից և ոչ՝ ի բաշխոյից։ Ոսկ եթէ նախ քան զընդունելութիւն ժառանգութեանն իցէ անկեալ յանկանոնութիւն, վաւեր Համարին զտուչու-

Թիւնն Պասեքրոփալ, Պոնքալեա, Նչպել Սալմասի-
կեանք և այլք: Նայց Պոնաչինա, Մուրնելլի, Պոն-
չինա, Հոլշման, և այլք առ հասարակ անվաւեր հա-
մարին, և առաւել հաւանականք են կարծիք սոցա. զի
եկեղեցական կանոնք օրէն համարին տնօրինել զեկե-
ղեցականս անկանոնս յընդունելութիւն ժառանգու-
Թեան. ապա չէ ընդունակ առանց տնօրինման: Նս
տրիդենտեան ժողովն սահմանէ "մի տալ զհաս եկե-
ղեցականս, բայց որոց իցէ հասակ և այլ բաւականու-
Թիւնք, ապա Թէ ոչ՝ անվաւեր լինի տուչութիւնն,,:
Հակառակ կարծեաց պաշտպանք բաւականութեամբ ի-
մանան ասա զբնական հանգամանս. այլ որպէս հասակ
'ի զրական կանոնս ակնարկէ, այսպէս և զայլ բաւակա-
նութիւնս պարտ է իմանալ: Ոմն որոց հաւանակա-
նագոյն, մնաւանդ Թէ հնմարտագոյն կարծիք են, զի
անկանոնք չեն ընդունակ եկեղեցական ժառանգու-
Թեան:

56. Նրրորդ աղատ կացուցանէ օգուտ եկեղեցւոյ,
իմն մեծ իմն օգուտ ըստ դատաստանի եպիսկոպոսին
կամ ուխտի կանոնիկոսաց, և օգուտ ոչ միայն այնը ե-
կեղեցւոյ՝ այլ և Թեմին և ընդհանուր եկեղեցւոյ, որ-
պէս ուսուցանեն առհասարակ աստուածաբանք: Ոմն
որոց կարէ վայելել 'ի հաս և 'ի բաշխոյս կանոնիկոս՝ որ
բացակայ 'ի Հռոմ կամ յարքունիս ուրեք պաշտպանէ
զիրաւունս ուխտին (ոչ զիւրն), կամ յուխտէ կանոնի-
կոսաց յղեալ իցէ 'ի յանձանձանս իրաց եկեղեցւոյն,
կամ եպիսկոպոսն փոխանակ իւր յայցելութիւն գե-
րեզմանի առաքելապետին, կամ 'ի նմանէ ածեալ անդր
ընդ իւր, որպէս օրէն է եպիսկոպոսի ածել 'ի նոցանէ
և երկուս. կամ եթէ փոխանորդ ուխտի կանոնիկոսաց
իցէ ընտրեալ, կամ փոխանորդ եպիսկոպոսին. այլ 'ի
յեռանումս պաշտաման կարէ ընդունել զհաս և եթէ, այլ
ոչ և զբաշխոյս: Նմանապէս ազատ է և կանոնիկոն
ապաշխարահայր՝ որ 'ի ժամ դասու ընդունի խոստովա-
նութիւն, կամ կայ 'ի խոստովանարանի ձնալով ապաշ-
խարողաց: Ոմնոյն հաւանականաբար հատատաւ Հայրն
Պոնչինա և զկանոնիկոսաց օրհնականաց ապաշխարա-
հօր տուելոց եպիսկոպոսին յաւուրս յաձախութեան
ապաշխարողաց: Ոմնոյն հաստատեն Պասեքրոփալ,

Այսմահիկեանք և Յովնչենա զկանոնիկոս ժողովրդա-
պետ՝ որ ՚ի ժամ դասու ՚ի գործ պաշտաման իւրոյ պա-
րապիցի ։ Նոյնպէս և կանոնիկոս աստուածաբան, որ ՚ի
ժամ դասու պարապիցի ՚ի վարդապետել, ՚ի քարոզել
կամ ՚ի պատրաստել ՚ի քարոզութիւն ։

57. Իսկ որոց օրէն է վայելել ՚ի հասս՝ այլ ոչ և ՚ի
բաշխոյս, այսոքիկ են. Ա. Կանոնիկոսք քննիչք, որ ՚ի
ժամ դասու պարապեն ՚ի քննութիւն ։ Բ. Նկեղուք
Թեմին ։ Գ. Նրկու ՚ի կանոնիկոսաց, զորս օրէն է ե-
պիսկոպոսի առնուլ իւր յօգնականութիւն ։ Դ. Կանո-
նիկոսք դասատուք, կամ որք ուսանին զաստուածա-
բանութիւն հրամանաւ եպիսկոպոսին ։

58. Պիտելի է զի քաւեսկ օրինակաւ մարթ է դա-
դարել ժառանգութեան ։ Ա. Ամահուամբ ժառանգո-
ւորին ։ Բ. Ի ձեռս դատաւորին ։ Գ. Հրաժարմամբ ։
Դ. Ընդ օրինաց սահմանելով ։ Յաղագս հրաժարման և
սահմանադրութեան օրինաց՝ են ինչ ինչ գիտելիք ։
Օ՚ի այլ է բացայայտ հրաժեշտ, և այլ ընդունելեաց, որպէս
մտանելով ՚ի կրօն և այլն. այլ է անպայման, և այլ պայ-
մանեալ, այսինքն այլում ումեք տալով զիրաւունսն. և
պայմանեալն երկակի է, պարզ և դաշամբ առնլոյ անդ-
րէն ։ Նայց ՚ի վաւերականութիւն այսր պայմանաւոր
հրաժեշտի բազում ինչ է կարևոր. Ա. Օ՚ի աղատ
ինչ հրաժեշտն, և ոչ առ ահի սպառնալեաց և այլն ։
Բ. Ընդունել զհրաժեշտն առ տուիչ ժառանգութեանն,
կամ առ սրբազան Պատն, և ընդունելի լինել նմա հրա-
ժարմանն ։ Գ. Օ՚ի ընդունելի ինչ հրաժեշտն և այնմ
վանն որոյ հրաժարէն ։ Դ. Օ՚ի ինչ հաւանութեամբ
այնորիկ, որոյ են իրաւունք ընտրութեան ժառանգա-
ւորին կամ տուչութեան ժառանգութեանն ։ Ե. Օ՚ի
հրաժարօղն եթէ վանն հիւանդութեան հրաժարէ,
կեցցէ յետ հրաժարելոյ զաւուրս գէթ քսան ։ Զ. Օ՚ի
կատարեսցի հրաժեշտն օրինաւոր ձևովն հրաժարման ։
Է. Օ՚ի հրատարակեսցի այն ըստ սահմանեալ տեղւոյն
և ժամանակի ։ Նոյն օրէնք են և վանն փոխանակելոյ
զժառանգութիւն ։

Իսկ ըստ սահմանադրութեան օրինաց, նովին իսկ
գործով կորուսանէ զժառանգութիւն՝ որ ամուսնանայն,
որ կրօնաւորի, կամ որ ընդունի այլ ժառանգութիւն

անմիաբանական ընդ այնմ՝ զոր ժառանգէ, որպէս ասաց յաջ ՚ի Թիւն 40։ Պարձեալ կորուսանէ զը զժառանգութիւն սիմոնականութեամբ, մանաւանդ այնուիկ՝ զոր ընդ քննիչս զը եթէ գործիցէ. զի եթէ ընկալցին ինչ նոքա պարգեւս վասն աչառանաց ՚ի քննութեան՝ թէ ինքեանք և թէ պարգեւատուն անընդունակք գտանին ժառանգութեան, և նովքին իսկ գործով զրկին յայնցանէ իսկ՝ զոր ժառանգէն. և զրկին առանց ինչ դատաստանի և վճռոյ, որպէս յայտ առնէ Ժողովն տրիդենտեան՝ "չկարել նոցա ընդունել արձակումն չե ՚ի բաց եղեալ զժառանգութիւնն"։

Զրկէ ՚ի ժառանգութեանց, և ոչ և ՚ի ժառանգելոց յառաջագոյն, սիմոնական տուչութիւն ժառանգութեան իրիք։ Այլ աստ պարտ է զանազանել զայլ և այլ ազգս սիմոնականութեան. այսինքն Նաւատոր, սակեալ, երկան և Նիերմական, զորոց ասացաք ՚ի վեր անդր (գլ. Դ. 40)։ Զրկոքքին առաջինքն զերծ են ՚ի պատժոց, այլ իրականն նովքին իսկ գործով անվաեր առնէ զտուչութիւն ժառանգութեանն, մինչև չկարել ընդունել արձակումն՝ չե ՚ի բաց Թողեալ զայն. և զրկէ ոչ ՚ի նախընկալ ժառանգութեանց, և չընդունակութենէ այլոց այնուհետև։ Այլ ըստ հանրագոյն և ըստ հաւանակագոյն կարծեաց՝ պատիժքս այսոքիկ ոչ զօրեն, եթէ չիցէ սիմոնականութիւնն երկուստեք կատարեալ։ Եւ եթէ իցէ ևս երկուստեք կատարեալ, սակայն երկոքքին չետին պատուհասք՝ այսինքն զրկումն ՚ի նախընկալ ժառանգութեանց և չընդունակութենէ այլոց, ըստ հասարակաց կարծեաց աստուածաբանից զօրեն չետ դատապարտութեան. զի չիք ուրեք սահմանեալ՝ նովքին իսկ գործով անկանել ՚ի պատիժս չայոսիկ։ Պարձեալ և մերձականն սիմոնականութիւն ածէ ՚ի վերայ զնոյն պատիժս, եթէ իցէ երկուստեք կատարեալ. այլ կայ զպաց զրկելոց ՚ի նախընկալ ժառանգութեանց, և անընդունակութեան այլոց այնուհետև, խնդրի գեթ վճռի չայտարարութեան չանցանայն, որպէս ուսուցանեն հաւանականաբար Կայեթանոյ, Եսոիոյ, Սանքեզ, Վասքոփալ, Սոթոյ, Ալմաինիկեանք և այլք։ Տե՛ս զայսցանէ և ՚ի գլ. Դ. 51. 52։

59. Կարևոր համարիմ չաւելուլ աստ ինչ ինչ վասն

Թոշակի, զորմէ՝ի վեր անդր (49) եղեն մեզ քանք։ Փոշակ է իրաւունք ընդունելոյ զմանն ինչ հասից ժառանգութեան այլոց. և է երրակի, այսինքն աշխարհան, հոփառոր և փղին։ Աշխարհական է՝ որ ընծրհի աշխարհիկ որեւէոյ, կամ եկեղեցականի՝ այլ վասն աշխարհական պաշտամանն, որպէս վասն զօրճակալութեան, փաստաբանութեան, երաժշտութեան և այլն։ Ընդհանր է՝ որ ընծրհի վասն հոգևոր վաստակոց, որպէս քարոզութեան և հոգաբարձութեան և այլն։ Խոկ միջին է՝ որ թէպէտ և ոչ վասն հոգևոր պաշտամանն ընծրհի, այլ՝ի հոգևոր ինչ հաստատեալ է. որպէս այն որ ժողովրդապետի ծերացելոյ ապիկարի ընծրհեալ, կամ աղքատի ումեք եկեղեցականի, և այլն։ Արդ գիտելի է նախ՝ զի որպիսի և իցէ Թոշակ՝ի հասից ժառանգութեան, սրբազան Պատին է սահմանել։ Խոկ թէ մանրթիւք և եպիսկոպոսի՝ի կարևոր դէպս ինչ, որպէս յիրաւաւխտութիւն վիճիցէ, կամ՝ի փոխարէն անհատասարութեան՝ի փոխանակութիւնս ժառանգութեանց, կամ՝ի նպաստ աղքատութեան ուրուք յեկեղեցականաց, տարաձայնին աստուածաբանք. և սովորութիւն, որ սահմանէ օրէնս, Պատին պահեալ է զնշանութիւնս զայս։ Յորմէրոդ՝ զի պարտ է Թոշակին գոլ չափաւոր, և մի աւելի քան զերիս մանն ժառանգութեանն։ Յորմէրոդ՝ զի եթէ այլոմ անկ իցեն իրաւունք տուչութեան ժառանգութեանն, խնդրի և հատանութիւն նորին որպէս՝ի վեր անդր (58) ասացաք, վասն հրաժարելոյ ժառանգաւորին պայմանաւ, այլ ոչ և վասն Թոշակին՝ որպէս Եսսիոյ, Պաւսեմպայ և այլք հաստատեն։ Զորմէրոդ՝ զի եթէ Թոշակեալն ընդունի զԹոշակն որպէս եկեղեցական, և ոչ որպէս աշխարհիկ, պարտական է կատարելոյ զժամերգութիւն Աստուածամօրն ըստ կոնդակի սրբոյն Պիոսի Ե, և՝ի չկատարելն՝ զրկի՝ի Թոշակէն։ Այլ ազատ են՝ի պարտականութենէ աստի որք կատարենն զժամերգութիւն քահանայական։

60. Գիտելի է դարձեալ՝ զի արգելեալ են եկեղեցականաց արուեստք անարգք. և՝ի պատուականաց իսկ վիրաբուժութիւն, ուր պէտք իցեն կտրելոյ և խածելոյ, եթէ իցէ անդ այլ ոք տեղեակ արուեստին. այլ զայս լսմն վասն նուիրելոյ՝ի սուրբ կարգ, և ոչ վասն

փոքր աստիճանաւորաց : Պրդելեալ է դարձեալ սուրբ աստիճանաւորաց և ժառանգաւորաց դատաւորութիւն ի դատ արեան, և վիճից ի քաղաքական ատենի. և և փաստաբանութիւն ի քաղաքական ատենի, եթէ չիցէ վասն որբոց և այրեաց, կամ անձին պաշտպանութիւն, կամ աղգականաց ցկորրորդ աղգ՝ կարօտելոց պաշտպանութեան : Իսկ փոքր աստիճանաւորաց օրէն է պաշտպանել յորում և իցէ ատենի, և և զյանցաւորս : Իսկ կրօնաւորաց զգատս և եթէ ուխտին օրէն է հրամանաւ վանահօրն պաշտպանել : Դարձեալ չէ օրէն եկեղեցականաց բնակել ընդ կանայս, բայց միայն եթէ ընդ մեր իւրում կամ ընդ քեռ կամ ընդ հօրաքեռ բնակիցի օք, կամ ուր չիցէ ոչ վտանգ ինչ և ոչ գայթակղութիւն : Չէ օրէն նոցա և ոչ կրել զէնս, բայց՝ի ձանապարհորդելն՝ որպէս ասէ Պօսեժնայ, և ոչ յաղմկաւոր որս ելանել՝ որպէս ասացաք (գլ. ժ. 72), և ոչ՝ի տուրևառս պարապել՝ որպէս դարձեալ ասացաք անդ (192 և այլն) :

61. Պիտելի է դարձեալ զի արգելեալ է եկեղեցականաց և կրօնաւորաց չվաճառել և չտալ՝ի բայ զինչս եկեղեցականս զորոյ և իցէ բարեպաշտական տեղւոյ առանց հրամանի սրբոյ գահին, չիրախանակել զայնս, չընդնել՝ի գրաւ, և ոչ վասն իրաւախոհութեան թողուլ ինչ յայնցանէ մասն : Եկեղեցական ընչիք է իմանալ ոչ միայն զգոյս հաստատունս, այլ և զպահանջս, զտաբեկան հասս, զիրաւունս և զբաժին՝ի վերայ ստացուածոց օտարաց, զհօտս և զնախիրս, զծառաստանս պըտղաբերս, զդումարս տուեալս՝ի ստացուածս հաստատուն գոյից, և և զշարժուն ստացուածս մեծագինս տևականս, որպէս զմատենադարան, զգոհարս, զանօթս ոսկեղէնս և արծաթեղէնս և այլն : Իսկ բարեպաշտական տեղեաք է իմանալ զամենայն, որ եկեղեցական իշխանութեամբ հաստատեալ են տեղիք, որպէս կղերանոցք, հիւանդանոցք, եղբայրութիւնք և այլն : Այլ եթէ ստացուած ինչ տուեալ իցէ եկեղեցւոյ իշխանութեամբ վաճառելոյ կամ փոխանակելոյ և այլն, ըստ դատման մատակարարողն ստացուածոյն, կարէ սա տնօրինել զայնմանէ առանց հրամանի Պապին, որպէս հաստատեն հաւանականաբար Պոնաչինա, Ռովար, Լա-

քրուա և այլք։ Եւ ընդ հակառակն եթէ տուեալ իցէ պայմանաւ մի երբեք վաճառելոյ կամ փոխանակելոյ զայն, և ոչ տնօրինուածն Պապին բաւէ ընդդէմ պայմանին, բայց միայն 'ի յեղաշրջել հանգամանաց այնպէս, զի մարթ իցէ համեմատ կամաց տուողին համարել զայը նօրինուածն։

62. Ո՞ւր 'ի վաճառել կամ 'ի բաց տալ զեկեղեցական ստացուածս, կարևոր են պայմանքս այսոքիկ։ Ա. Խորհուրդ հասարակաց։ Բ. Հաւանութիւն եպիսկոպոսին, կամ ուխտին, կամ կարգապետին, և կամ տուչին՝ եթէ իցէ ինչ ստացուած եկեղեցական ժառանգութեան։ Գ. Զեռնարկ հաւանութեան ամենեցուն նոցա։ Դ. Հրաման սրբոյ գահին։ Այլ եթէ սակաւագին ինչ իցէ, բաւէ առ այն և հրաման եպիսկոպոսին։ Սակաւագինս համարին ոմանք նուազ քան զ500 ֆրանքս. այլ հասարակաց կարծիք ոչ ինչ աւելի քան զկէս նորին սահմանեն։ Եթէ հարկ 'ի վերայ կայցէ, և չիցէ ժամանակ դիմելոյ առ սուրբ գահն, օրէն է եպիսկոպոսի տնօրինել ինքնին զոր և իցէ պինս։ Զանոյ պայմանացս այսոցիկ վաճառք և փոխանակութիւնք եկեղեցական ստացուածոց ըստ հաւանականագոյն կարծեաց ոչ միայն չեն օրինաւորք, այլ և անվաւերք են. բայց եթէ ամք 30 կամ 40 'ի վերայ անցեալ, և լցեալ իցէ չափ նահապետութեան, համարի յայնժամ օրինաւոր հրամանաւ լեալ վաճառումն կամ փոխանակութիւն։ Ո՛չ եկեղեցական ստացուածս չէ օրէն տալ 'ի վարձու աւելի քան զեռամեայ ժամանակ. այլ օրէն է ժառանգաւորի տալ 'ի վարձու զստացուածս ժառանգութեան իւրոյ մինչև ցմահ իւր։

ՅՕԴՈՒԱԾ Զ

ՋԴԱՏԱՒՈՐԱՑ ԵՒ ՉՀԱՒԱՏԱՒՈՂԱՑ

63, 64. Ե՞րբ օրէն իցէ դատաւորի դատապարտել կամ հարցափոր-
ձել կամ նուազեցուցանել զպատուհաս: Օրէ՞ն իցէ նմա առանձնա-
կան գիտութեամբ դատել:
65. Օրէ՞ն իցէ նմա դատել ըստ նուազ հաւանական կարծեաց:
66. Օրէ՞ն իցէ նմա մատնաւորել Թոշակի հրամատարին, կամ ընդու-
նել պարգեւս:
67. Օրէ՞ն իցէ նմա չտալ՝ բայ զպինս անիրաւ վճռոյ:
68. Վասն հարցաքննող դատաւորաց:

63. Օ՞ատեհնական իրօք աստանօր զանց արարեալ, ասասցուք և եթէ որ ինչ՝ ի խիղճ մտաց Հայկն:

64. Եթէ օրէն դատաւորի դատապարտել զոք՝ ի յանցաւորաց առանց դատախոզի. բայց միայն եթէ քրէական իցեն յանցանք նորա կամ ընդդէմ կրօնից, կամ հրապարակապոյժ, և կամ եթէ ինքնին յատենի առաջի երկուց վկայից խոստովանեսցի զյանցանս իւր: Բայց առ՝ի հարցափորձ բաւէ համբաւ և եթէ յանցանացն, կամ նշանք ծանօթք բաղմաց կամ դրացեաց, կամ ապացոյց թերակատար՝ որպէս վկայութիւն միոյ ուրուք առն հաւատարմի:

Դատաւոր՝ի ձեռանէ չկարէ առանց ծանր պատճառի նուազեցուցանել զպատիժ պարտաւորի, այլ վերհանդունի դատաւորին օրէն է նուազեցուցանել զայն ուր և է պատճառաւ:

Եթէ դատաւորն գիտիցէ առանձնական գիտութեամբ զյանցանս ուրուք, այլ ըստ ատենական օրինաց ցուցցի նա անպարտ, չկարէ դատապարտել զնա. զի Հասարակաց է ինքն պաշտօնեայ, և պարտի ըստ Հասարակաց գիտութեան դատել. և ընդհակառակն եթէ պարտաւոր ցուցցի ամբաստանեալն, և դատաւորն գիտակ իցէ անմեղութեան նորա, պարտի դատապարտել զնա: Օ՞այս այսպէս ուսուցանեն բազումք յաստուածաբանից ընդ սրբոյ Աղուինացւոյն. այլ զերկբոյր մանն կարծեաց նոցա յոյժ հաւանականաբար մերժեն Վիլուեսթրոյ, Լեսլիոյ, Տաւարրոյ, Մոլետոյ,

Պոնտիկինա, Հոլլանդ և այլք, զի դատապարտել զանձեղն է ըստ ինքեան չար, որպէս դատաւորի պարտ ՚ի վերայ դնել կնոջ քնակել ընդ առն՝ զոր առանձնական գիտութեամբ գիտիցէ զի չէ այր նորա։ Այլ ՚ի դրամական և յայլ ամենայն քաղաքական խնդիրս պարտ է դատաւորի ըստ ատենական ցուցակութեանց տալ վճիռ աներկբայապէս. զի վասն հասարակաց օգտի, որ ՚ի պահպանութենէ դատաստանական օրինացս յառաջ գայ, օրէն է նմա զտէրութիւն ընչից այլ յայլմէ փոխառեալ։

65. Ովարդապետութիւնս զայս թէ հաւանական իցէ կարել դատաւորի դատել ըստ նուազ հաւանականն կարծեաց, դատապարտեաց Ինոսենկենտիոս ԺԱ. զի եթէ պարտ է դատաւորի տալ իւրաքանչիւր ումեք զիւրաւունս իւր, ապա այնմ՝ որոյ հաւանականագոյնք են պատճառք՝ պարտի առաւելագոյն տալ իրաւունս։ Յորժամ դատն երկուստեք հաւասարապէս իցէ հաւանական, եթէ զքաղաքական ինչ իրաց իցէ վէճն՝ պարտ է բաժանել զայն. ՚ի բաց առեալ զիրաւունս որբոց, այրեաց, զաբեպաշտական տեղեաց և զայսպիսի. զի զայսոսիկ պարտ է նախամեծար առնել։ Իսկ եթէ զյանցանաց իցէ դատն, պարտ է ՚ի նպաստ յանցաւորին տալ վճիռ՝ ուր փաստք հաւանականք կայցեն ՚ի պաշտպանութիւն նորա։ Այլ խնդիր է թէ ՚ի քաղաքական դատս պարտ իցէ դատել ՚ի նպաստ յանցաւորին՝ որ ժառանգէ զնոյն։ — Յոթոյ, Վիլհելմոյ, Վանքեզ և այլք բազումք հաստատեն՝ զի ՚ի հաւասարութեան փաստից պարտ է դատել ՚ի նպաստ այնորիկ, որ ժառանգէ զնոյն. զի և ըստ օրինաց՝ ՚ի հաւասարութեան դատի հզօրագոյն են իրաւունք ժառանգողին։ Այլ յորժամ երկբայելի իցէ եթէ տէրութիւն և եթէ ստացուած իրին, պարտ է դատել ՚ի նպաստ այնորիկ, որոյ հաւանականագոյնք իցեն պատճառք, որպէս յայտ է ՚ի դատապարտութենէ վարդապետութեան՝ զոր ՚ի սկզբան եդաք. իսկ եթէ հաւասար իցեն երկուստեք պատճառք, պարտ է դատաւորին բաժանել զնոյն՝ որպէս ասացաք։

66. Ոչ օրէն դատաւորի բաժանակից լինել վարձուց՝ որ անկ են հրամատարի. զի պարտք պաշտամանն նորա է ընտրել զհրամատարն։ Ոչ օրէն նմա և պար-

գնա ընդունել և ոչ ՚ի միոջէ ՚ի կողմանց, եթէ գնաց ինչ իցեն՝ որ ըստ օրինաց կոչին կաշառք, զայսմանէ չէք երկեայուԹիւն. այլ կարիցէ արդեօք ընդունել ուտելի ինչ կամ ըմպելի: — Ամենք ՚ի բարեյականաց, ընդ որս Աթոյ, Գաւարրոյ և Ամմատիկեանք, ոչ օրինաւոր համարին և զայս. այլ առաւելագոյնք յաստուածաբա- նից անպարտ առնեն զայս ըստ ներելոյ եկեղեցական կանոնաց ընդունել զայնպիսի ինքնակամ նուէրս, եթէ չիցեն ուղղակի կամ անուղղակի խնդրեալ՝ որպէս յաւե- լուած անդ մեկնիչն, և օրինակ ածէ առ այս, զի չհա- մարի վանահօր ՚ի սիմոնականուԹիւն՝ ընդունել ինչ նուէր ինքնակամ յայնմանէ՝ որ կամի կրօնաւորել. զի որպէս չհամարի վանահօրն վաճառել զընդունելու- Թիւն նորա ՚ի կրօն ընդ ինքնակամ այնր պարգևի, այս- պէս և ոչ դատաւորի կամել ընդ դուշնաքեայ պարգևին վաճառել զՔիւ իւր:

67. Դատաւոր, որ կաշառով խոտորէ զիրաւունս, պարտական իցէ ՚ի խղճէ մեռց Հատուցանել կաշառա- տուին զարծաԹն առանց վճռոյ դատապարտուԹեան: — Ակնք յաստուածաբանից պարտական զնա համարին, և կէսք ոչ, և Ամմատիկեանք հաւասարապէս հաւա- նական համարին զերկաքանչիւր կարծիս: Այլ ըստ բը- նական օրինաց ՚ի կատարել դաշինն՝ ԹԷպէտ և չարի, ընդունելի են վարձք: Ոչ ՚ի ԹԷպէտ և ըստ օրինաց՝ դաշինք ընդդէմ օրինաց կամ բարեյականի զօրեն ինչ ոչ, և որ ընդունի ինչ այսպիսի դաշամբ՝ պարտի յետս տալ զայն, այլ օրէնքս այսոքիկ՝ որպէս ասէ Լեսլիոյ՝ ԹԷպէտ և անվաւեր առնեն զդաշինս չարս, նախ քան զկատարումն խոստմանն չարի՝ չածել ինչ պարտս, սա- կայն յետ կատարմանն ոչ բառնան (գէթ յայտնապէս) զբնական պարտս, և ոչ անվաւեր ըստացուած վարձույն կացուցանեն, ԹԷպէտ և յատենի չիցեն նմա փրաւունք պահանջելոց զայն: Համարեալ ևս զի հրամայիցեն օ- րէնք յետս դարձուցանել զայն նախ քան զվճիռ դա- տապարտուԹեան, սակայն պահանջի գէթ վճիռ յայտ- արար ըստ ասացելոցս ՚ի վեր անդր (գլ. Բ. 25):

68. Հարցաքննող դատաւորս իմն զայնոսիկ՝ որք հարցափորձիւ քննեն զվկայս, և զխուրսիշ ՚ի գրի առ- նեն՝ զհաւաստիս յանցանաց երկաքանչիւր կողմանց նը-

չանակելով։ Արդ մեղանչեն սոքա յայլայլել զվկայութիւնս, կամ՝ ի չքննել զվկայս, ի ծածկել երկուստեք զգլուածս մատուցեալս յատեան, կամ՝ ի չտալ նոցա զհատասարս այնոց։ Մեղանչեն դարձեալ՝ ի պահանջելն՝ ի նոցանէ աւելի ինչ քան զսակ կամ զվարձ սովորական, և ևս և յընդունելն զայն որպէս պարգև, եթէ ոչ յաւելցի նոցա անսովոր ինչ վաստակ։

Սակ հրամատարին, ՝ի կատարելն այլ և այլ հրամանս, օրէն իցէ պահանջել յիւրաքանչիւրոց պարտապանաց վարձ։ — Ուկեղ և Եսեխ օրէն համարին զայս, որպէս սուրհանդակի՝ որ այլ և այլ նամականի ուրեք առ այլ և այլս ածեալ, կարէ յիւրաքանչիւրոյն պահանջել բովանդակ զիւր վարձս, որպէս ասացաք՝ ի գլ· ժ· 108։ Սակս եթէ հրամատարին չիցէ սահմանեալ Թոշակ ամենական, և ըստ կատարման իւրաքանչիւր հրամանաց պարտ իցէ առնուլ վարձս։

ՑՕԴՈՒԱԾ Է

ԶՓԱՍՏԱՐԱՆԻՑ ԵՒ ԶՊՈՐԾԱԿԱԼԱՑ

69· Օրէն իցէ միանձանց և եկեղեցականաց առնել փաստաբանութիւն· Երբ պարտ իցէ փաստաբանի պաշտպան կալ։
70· Որ ինչ դատս օրէն է փաստաբանի պաշտպանել, և որ ինչ վարձս ընդունել։
71· Եթէ անիրաւ իցէ դատն· կամ՝ ի վարել զդատն սակ արկանել, կամ եթէ այսչափ ինչ մատն՝ ի գումարէն պահանջէ՝ ի յաղթելն։
72· Եթէ գործակալն ձրի իցէ փաստաբան, կամ եթէ ինքնին պաշտպանեսցէ զդատն։

69· Է՞ր օրէն միանձանց և սուրբ աստիճանաւորաց պաշտպանել դատս, բայց միայն զիւրեանցն կամ զիւրեանցայնոց զանտերունչ աղքատաց դատաւիճռելոյ, որպէս ասացաք՝ ի վեր անդր (60)։

Ի դատաստանս յանցանաց օրէն է փաստաբանի պաշտպանել և զպարտաւորս, զի օրէն է և պարտաւորի դուն գործել խոյս տալոյ՝ ի պատուհասէ մինչ չև իցէ դատապարտեալ կամ գեթ ըմբերանեալ· այլ՝ ի դատս յանցանաց երկբայելիս չէ օրէն փաստաբանի պաշտպանել զդատապարտեալս։

Պարտ է փաստաբանի պաշտպանել զդատ որոյ իցէն ՚ի յետին կարօտութեան, եւս և ծանր նեղութեամբ իւրով՝ այլ ոչ ամենածանուս։ Եւ ՚ի ծանր կարօտութեան աղքատաց պարտ է նմա պաշտպանել զդատ նոցա, այլ ոչ ծանր նեղութեամբ։ Իսկ ՚ի հասարակ կարօտութեան, շատ է՝ զի նպաստ ինչ յաւելցուցեալ ընչից իւրոց տացէ նոցա։

70. Օրէն է փաստաբանի՚ի դատս հաւասարապէս երկուստեք հաւանականս պաշտպանել զամբաստանեալն և զդատախազ. բայց զամբաստանեալն՝ եթէ նուազ իսկ հաւանական իցէ դատ նորա։ Այնքիւր այն է թէ կարի՚ցէ պաշտպանել և զդատախազ, եթէ զդատ նորա հաւմարի նուազ հաւանական։ — Ակնք ոչ օրէն համարին նմա զայն, բայց առաւելագոյնք ՚ի բարոյականաց հաւանականաբար օրէն համարին. զի որ նուազ հաւանականն Թուի նմա, մարթ է զի հաւանականագոյն Թուեսցի դատաւորին, և իցէ իսկ։ Այլ պարտ է նմա յայսպիսի դատս կանխել ծանուցանել դատախազին զնուազ հաւանականութիւն դատին։

Եթէ սակ արկեալ իցէ նորա զվարձուցն, և պաշտպանեալն կամիցի դադարել՚ի վիճելոյ, օրէն է փաստաբանին պահանջել ամբողջ զվարձս իւր, որպէս զսպասաւորաց՚ի վեր անդր ասացաք (գլ. Ե. 7), եթէ չիցէ՚ի վերայ հասեալ իրաւացի պատճառ դադարելոյ։ Իսկ եթէ տարեւոր իցէն վարձք փաստաբանին, օրէն է նմա պահանջել զվարձս իւր՝ Թէ և ոչ մի դատ՚ի տարւոջն պաշտպանեալ իցէ. զի և՚ի յաձախել դատից չկարէ աւելի ինչ պահանջել, եթէ չհասանիցէ նմա անսովոր ինչ վաստակ։ Իսկ եթէ չկարիցէ վասն ընդերկար հիւանդութեան պաշտպանել զդատս, պարտի հրաժարել՚ի վարձուցն՝ զկէս ցորչափ տեւեն դատք։

71. Ալ՝եղանչէ փաստաբան նախ՝ եթէ պաշտպանէ զդատ ստուգիւ անիրաւ ըստ տէրութեան առ իրն, Թէ պէտ իցէ արդար ըստ ժառանգութեան. զի որպէս չէ օրէն յայնժամ պարտաւորին ունել զժառանգութիւնն, այսպէս և ոչ փաստաբանին պաշտպանել զնա։ Իսկ՚ի պաշտպանելն զդատ անիրաւ, պարտական է հատուցանել զվնաս՝ ոչ միայն զոսոխին, այլ և զպաշտպանելոյն՝ եթէ չիցէ նա գիտակ անիրաւութեան դատին։ Ալ՝ եան

որոյ պարտ է նմա քննել զայն նախ, և ծանուցանել պաշտպանելոյն զհանգամանս նորին։

Եղանէ երկրորդ՝ եթէ յընթացս դատին սակ արկանէ. պարտ է նմա յառաջ կամ յետոյ քան զդատն պայմանել զվարձն, զի՝ ի մէջ դատին ստիպել պաշտպանեալն յանձն առնուլ որ ինչ և խնդրեսցէ նա, բայց եթէ ոչ աւելի ինչ քան զարժանն պահանջեսցէ, անպարտ առնեն զնա Յաւարայ և Յաղմատիկեանք։ Ընդունել և մեղանչէ, որ մասն ինչ զդատաստանաւորս գումարին պահանջէ իւր՝ ի վարձս, այսինքն է՝ զի՝ ի չաղթել դատին՝ առնուցու զերիր կամ զչորիր մասն գումարին. քանզի զանձն՝ ի վտանգ արկանել չանիրաւի իսկ զբաժանէ ածելոյ զչաղթութիւն։ Բայց եթէ պահանջեալն մասն չիցէ ինչ աւելի քան զվարձ արդար, եթէ պէտ և պաշտպանեալն չէ պարտական՝ ի հատուցանել զայն՝ վասն դատապարտելոյ օրինաց զայնպիսի գաշն, այլ և ոչ փաստաբանն յետ ընդունելոյ զայն՝ պարտական գտանի՝ ի հատուցումն. զի ոչ է պարտ զրկել նմա՝ ի վարձուց վաստակոյն վասն դաշինն դատապարտելոյ յօրինաց։

Եղանէ երրորդ՝ եթէ յանձն առնու այնչափ գատս, որոց չբաւէ ինքնին. բայց եթէ ծանուցանելով զայն ապաւինելոց կինքն։

Եղանէ չորրորդ՝ եթէ յայտնէ հակառակորդաց զդաղտնիս կողմանն, զոր առնու պաշտպանել։

Եղանէ հինգերորդ՝ եթէ խաբէական պատճառս ստայօղէ, և յերկարաձգէ տարապարտ զդատաստանն։ Բայց եթէ զյայտնի արդարութիւն պաշտպանէ, օրէնն է նմա երթեւեմն յերկարաձգել և իմաստակութիւնս իսկ՝ ի կիր արկանել առանց ստութեան, առ՝ ի հնարել զառաջս առնուլ անիրաւութեան։

72. Իսկ յաղագս գործակալաց պիտելի է, զի եթէ իցէ նոցա փաստաբան և նօտար՝ որ վասն բարեկամութեան առ ինքեանս՝ ձրի ծառայիցեն, օրէն է ինքեանց պահանջել՝ ի պաշտպանելոյն վարձս՝ որ անկ է վաստակոց նոցա, այլ ոչ նոյնպէս՝ եթէ վասն բարեկամութեան առ պաշտպանեալն զձրի ծառայութիւնն մատուցանիցեն։ Եթէ գործակալն կացուցանէ փոխանակ իւր զայլ զոք գործակալ, կարէ բաժանել ընդ նմա զվարձս

վաստակոց նորա · բայց միայն պարտի ծանուցանել նմա յառաջագոյն որ ինչ հասանիւ նմա գործ , և յանձն առնուլ վճռանգ դատին՝ եթէ անհոգութեամբ նորին կրիցէ ։

ՑՕԴՈՒԱԾ Ը

ԶԴԱՏԱԽԱԶԻՑ , ԶՎԿԱՑԻՑ ԵՒ ԶՊԱՐՏԱՒՈՐԷՆ

73 · Ե՞րբ օրէն իցէ դատախազել · պահապանաց պարտք ամբաստանելոյ ։
74 · Եկեղեցականաց Ե՞րբ օրէն իցէ ամբաստանել · պա՞րտ իցէ նոցա կանխել խրատել, մանաւանդ 'ի միաբանութեան ։
75 · Զազգարարաց ։
76 · Ե՞րբ պարտ իցէ ամբաստանել զհերետիկոս ։
77 · Ե՞րբ զհայհոյութիւնս հերետիկոսական ։
78 · Ե՞րբ զանապաշտութիւնս ։
79 · Զվկայից · Ե՞րբ պարտ է նոցա տալ վկայութիւն ։
80 · Որ չկայանէ զճշմարտութիւն ։
81 · Որ ծածկէ զայն ։
82 · Զպարտաւորաց · Ե՞րբ պարտ է նոցա խոստովանել զմեղանս ։
83 · Եթէ ծանր առաջի կայցէ պատուհաս ։
84 · Եթէ յանձն առնուցու սուտ մեղանս ։
85 · Եթէ զպարտիցէ զդատախազն ։
86 · Օրէ՞ն իցէ պարտաւորի զդէմ ունել իշխանութեան · պա՞րտ իցէ նմա փախչել ։
87 · Օրէ՞ն իցէ նմա խորտակել զբանտն , կամ կաշառել զբանտապան · օրէ՞ն իցէ և այլոց օգնել նմա ։

73 · Պարտ է զանազանել զամբաստանութիւն , յօբինուածոց և յաներեւութականն զնկուցմանէ ։ Ամբաստանութիւն է ամբաստանել զոք առ իշխան կամ մեծաւոր որպէս առ դատաւոր , որպէս զի պատժեսցի յանցաւորն · և պարտ է ամբաստանողն ցուցանել զյանցանս նորա , զոր եթէ չկարիցէ ցուցանել՝ կրէ պատուհաս ։ Օրինաւոր զնկուցումն է ծանուցանել մեծաւորի զյանցանս ուրուք որպէս դատաւորի , այլ առանց պարտականութեան ցուցանելոյ զայն ։ Իսկ աւետարանական զնկուցումն է ծանուցանել մեծաւորի զյանցանս ուրուք որպէս Տօր ։

Եթէ ինքս հասարակաց առաջի կայցէ , պարտ է ամենայն ումեք ամբաստանել զյանցաւորն , որպէս զապրստամբութիւն , զհերետիկոսութիւն , զաւազակու-

թիւն և այլն։ Որպէս իսկ է դատաւորի յայսպիսի դէպս պարտ՝ի վերայ դնել զնասելոյն յայտնել զնասօղն, առ՝ի խափանել զնաս հասարակաց։ Բայց Սոթոյ, Կաչեթանոյ, Սանքեզ, Լուկոյ, Ալմատիկեանք և այլք շատ համարին զդէկուցումն առ երկիւղի վտանգին չկալելոյ ցուցանել զամբաստանութիւնն։ Այդ պարտք են և առ՝ի խափանել զնաս անմեղին, եթէ մարթ իցէ առանց ծանր նեղութեան զդէկուցողին։ Այլ Թոշակելոց՝ի պետութենէ կամ՝ի տերանց իւրեանց վասն գուշակելոյ զյանցաւորս, պարտ է և ծանր իսկ նեղութեամբ ծանուցանել զյանցաւորս. ապա թէ ոչ, պարտական գտանին՝ի հատուցումն զնասուն՝ որ՝ի լռելոյ նոցա հասանէ այլոց։

Այնքիր է թէ արդեօք պահապանք անդաստանաց կամ մաքսատանց՝ի լռելն պարտականք իցեն՝ի հատուցումն պատժական տուժից, զոր պարտ էր յանցաւորաց յամբաստանելն հատուցանել։ — Այնք յաստուածաբանից պարտականս համարին զնոսա. բայց այլք, ընդ որս Ազրիոյ, Էսսիոյ, Լուկոյ, Սանքեզ, Նաւարրոյ, Ալմատիկեանք և այլք աղատ կացուցանեն զնոսա՝ի հատուցմանէ տուժիցն. զի թէպետ և մեղանչեն նոքա ընդդէմ օրինական արդարութեան, այլ ոչ ևս ընդդէմ փոխարինականին ըստ տուժիցն. զի դանձ հասարակաց կամ տեառնէ նոցա ոչ ստանան իրաւունս՝ի վերայ տուժիս յառաջ քան զվճիռ ատենին։ Այնուամենայնիւ զի դիտաւորութիւն օրինացն ոչ այլ ինչ է՝ բայց զերծս՝ի հատուց կացուցանել զնոսա. վասն որոյ շատ է պահապանաց հատուցանել նոցա զնասն, այսինքն զմաքս և եթէ՝ զոր պարտ էր տալ յանցաւորացն։

74. Եթէ հնաս անձին առաջի կայցէ, կամ աղգականաց ցաւորդոյ աղգ, և կամ եկեղեցւոյ, օրէնն է եկեղեցականի ամբաստանել զյանցաւորս, ևս և՝ի դատ առնել. բայց միայն յայտ առնելով զի չպահանջէ տալ նման պատիժ մարմնաւոր, այլ զհատուցումն եւեթ զնասուն։

Եթէ հասարակաց հասանէ զնաս՝ի յանցանաց ուրուք, թէպետ և զանխոտ իցեն յանցանքն, պարտ է ծանուցանել զոյն առանց ինչ կանխելոյ խորտել զյանցաւորն. մանաւանդ եթէ հերետիկոսութեան իցեն

յանցանք: Իսկ եթէ յանցաւորին եւեթ հասանէ ինաս, պարտ է կանխել խրատել զնա ըստ տերունեան հրամանին. եւ եթէ ոչ ինչ օգտեսցէ խրատ, սուրբ Գրիգորեան եւ սուրբն Գրիգորիոս լաւագոյն համարին վասն ուխտի կրօնաւորաց՝ ծանուցանել զայն մեծաւորի քան պլտոյ· զի նա առաւել քան զպլտս կարող է ածել զնա յուղղութիւն: Ապա որպ նոյն ինքն սուրբ Գրիգորեան, սուրբն Նատնինոս, Անքիզ, Ոթոյ, Քասթրոփալ, լայման եւ այլք յաւելուն՝ զի եթէ օգտակարագոյն թուիցի կրօնաւորի խրատ մեծաւորին քան զնուրն, օրէն է նմա առանց ինքնին խրատելոյ զայսպիսեաւորն՝ ծանուցանել մեծաւորի զյանցանս նորա: Ի յառաջնական յանդիմանութիւնս գլխաւոր վախճան է ուղղութիւն եղբօրն, որ լաւագոյն է քան զպահպանութիւն համբաւոյ նորա: Ապա անաւանդ զի եւ ամենայն յանցանք իւրաքանչիւր ուրուք ի միաբանութեան սովորաբար ի ինաս կամ ի գայթակղութիւն հասարակաց են, եւս եւ յանուանարկութիւն կրօնին:

75. Որժամ աշխարհաքարող յայտարարութեամբ հրամայի գուշակել յանցաւոր զոք, ոչ է պարտ ծանուցանել զնա՝ եթէ չիցէ չարահամբաւեալ, կամ գէթ կասկածելի լեալ, եւ կամ ինասակար հասարակաց կամ այլոց: Այլ այսու եւեթ ընտրութեամբ, զի եթէ յանցանքն ի ինաս այլոց եւեթ իցէ՝ պարտ է կանխել խրատել զնա, եւ չէն ինչ պարտք ծանուցանելոյ զնա ի ինաս անձին իւրոյ· իսկ յորժամ յանցանքն ի ինաս հասարակաց իցէ, չէն ինչ պարտք խրատելոյ զնա յառաջագոյն, այլ ամենայն ուժիւք պարտ է ծանուցանել զնա եւս եւ ի ինաս անձին: Այս ընդհանրապէս ի յայտարարութիւնս· այլ յայնոսիկ՝ զորս եպիսկոպոսունք ըստ ընդհարելոյ սրբոյն Պիոսի հրատարակեն սպառնալեօք բանադրանաց զգողօնից, ժամանակ սահմանեալ յայտնելոյ զայն ունողին կամ գտողն, չէն պարտականք յայտնելոյ զայն՝ ա· Գողն ինքնին: բ· Որ գիտէ զգողն, այլ չկարէ յայտնել առանց ծանր ինասու անձին: գ· Որ չկարէ տալ ընդդէմ նորա վկայութիւն, որպէս որդի, կին, հայր, մայր, եւ ամենայն ազգականք ցչորրորդ ազգ, եւ ընտանիք ունողն զգողօնն, բաց ի սպասաւորաց՝ որ առանց ծանր ինասու կարեն հրաժարել ի ծառայու-

ԹԵՆԿ նորա : Դ. Որ ինքն ևԵԹ իցէ իրաւեկ, և չկա-
րիցէ ածել վկայս կամ հաւաստիս : Ե. Որ ոչն գիտիցէ
հաւաստեաւ, կամ՝ի կեղակարծ որերոյ իցէ լուեալ,
կամ չգիտէ յումմէ, և կամ եԹԷ վաղ իսկ ծանուցեալ
իցէ նորա՝ յումմէ ինքն լուեալ է : Զ. Որոյ ընկալեալ
իցէ զարդար հատուցումն տուժիցն : Է. Որ՝ի հրատա-
րակել յայտարարութեանն գտանի արտաքոյ ԹեմԻն,
այլ ոչ որ ապա ելանէ : Թ. Որ ընդ քնական գաղտնեօք
գիտակ իրացն իցէ, որպէս ուսուցանեն Սոթոյ, Սուա-
րեզ, Ղազրիայ, Աալմատիկեանք, Հաւարրոյ, սուրբ Գ-
դունացին և այլք ընդդէմ ոմանց ևԵԹ աստուածա-
բանից :

76. Երբ և զմս՝ի մոլորելոյ պարտ իցէ ծանուցա-
նել, և զայս՝ ևս և ծանր միասուս անձին : — ԵրԹէ կաս-
կածելիք ևԵԹ իցեն՝ի մոլորութԻն, որպէս խոստովա-
նահարք հրապուրիչք, հմայողք, երկկանայք, որք ըզ-
խորհուրդս կատարեն առանց քահանայութԻան, որք
զեղծանիւնն նոքօք, որք հայհոյութԻնս մոլորականս
խօսին, ըստ ոմանց և որք լուծանեն զկնիք խոստովա-
նութԻան, (զոր առաւելագոյնք՝ի բաց առնուն). զոս-
սա առ հասարակ պարտ է ծանուցանել, այլ առանց
ծանր միասուս անձին. և որպէս կէսք յաստուածաբա-
նից ուսուցանեն, ազատ են՝ի պարտուց աստի և ազ-
գականք մինչև չորրորդ ազգ :

Այլ զտեսական հերետիկոս պարտ է ծանուցանել,
ևս և ծանր միասուս անձին. և չեն ինչ ազատ՝ի պար-
տուց աստի, ոչ եղբայրք, ոչ կինն, ոչ որդիք, և ոչ
ծնօղք, ըստ հասարակաց կարծեաց աստուածաբանից.
զի հերետիկոսութԻն ժանտախտ է ապականիչ հասա-
րակաց :

77. Յաղագս մոլորական հայհոյութԵանց կամ հե-
րետիկոսական նախադասութԵանց գիտելի է, զի եԹԷ
ղգաստութԵամբ և լրջմտութԵամբ օք ասիցէ զայնպիսի
բանս, պարտ է լսողաց յառաջ քան զամենայն աւուրս
ծանուցանել ումմ արժանն է : Զսեմ իսկ պճասպռնԵամբ
և լրջմտութԵամբ. զի չեն ինչ պարտք ծանուցանել որ
ինչ անգիտութԵամբ, կամ ընդ լրջմտնեն վազեալ, կամ
՝ի ցնորս ցասման, կամ ընդ խաղ ասիցին առանց յա-
մառութԵան՝ որ միայն ածէ պարտս ծանուցման. վասն

որոյ և 'ի գալ յանցաւորին իրաւունք յուղղութիւն, դադարեն պարտք ծանուցման։

78. Պարտ է ծանուցանել և զնաւապաշտութիւնս, յորժամ յայտնի դիւահարութեամբ առնիցին, կամ սաղմոսիւք և մաղթանօք առ դևն, կամ անսուրբք առնելով զսուրբ խորհուրդն, կամ զմիւռոն և զիւղ սուրբ, կամ եթէ որք վարդապետօրէն ուսուցանիցէ զայնս, կամ եթէ երբեք արդիւնք ինչ չարեացն 'ի վեր երևիցին։

Որք գիտութեամբ և կամաւ լռեն ինչ յայսպիսեացս՝ անկանին 'ի բանադրանս, այլ 'ի վճռելիս. և չեն վերապահեալ մեղք նոցա։

79. Յաղագս վկայից գիտելի է, զի ըստ խղճի մտաց չեն պարտական յայտնելոց զձշմարտութիւն, որպէս սուրբ Աստուածային ուսուցանէ, բայց միայն ուր կարևոր իցէ ըստ հզայրսիրութեան՝ առ 'ի խափանել զծանր վնաս հասարակաց կամ զմիոյ իսկ ուրուք։ Այլ առ 'ի հնազանդել հետ օրինաւոր իշխանութեան ոչ է պարտական յայտնել ինչ ոք 'ի վնաս անձին կամ իւրոյն, կամ եթէ գիտութիւն իւր իցէ ընդ բնական գաղտնեօք։

80. Որ ոք գիտութեամբ վկայէ ինչ սուտ, և հաստուցանէ այնուիկ վնաս ինչ ումեք, յայտ է թէ պարտական է 'ի հատուցումն։ Այլ խնդիր է՝ թէ մեղիցէ, և պարտականն իցէ 'ի հատուցումն, որ լռէ զձշմարտութիւնն՝ ուր արդարութեան կամ հզայրսիրութեան պարտք իցեն յայտնելոց զայն։ — Պարտ է զանազանել. զի եթէ խոյս տայ առ 'ի չկոչելոյ 'ի վկայութիւն, մեղանչէ ընդդէմ հզայրսիրութեան՝ այլ ոչ և արդարութեան. վասն որոյ և չէ պարտական 'ի հատուցումն, որպէս միաբանին ամենայն բարոյականք։ Իսկ եթէ կոչեցեալ և ապա խոյս տայ, պարտական զնա կացուցանեն ոմանք 'ի հատուցումն. այլ ըստ հանրագոյն և ըստ հաւանականագոյն կարծեաց՝ Լուկայ, Լեսլիոյ, Մոլինա, Միլոեսլերոյ և Պռնաչինա անպարտ առնեն զնա և յայնժամ 'ի հատուցմանէ. զի եկակոչ հնազանդութեան եթէ ածէ պարտս, և ոչ արդարութեան։

81. Խնդիր է դարձեալ՝ թէ պարտականն իցէ 'ի հատուցումն, որ ըստ օրինի հարցեալ՝ լռեսցէ եթէ զձշմարտութիւն։ — Որքին իսկ դարձեալ ընդ այլս վասն

նոյն նորին պատճառի աղատ՝ի հատուցմանէ կացուցանեն զնա. զի հրաման դատաւորի պարտ՝ի վերայ դնէ վկային հնազանդելոյ և ոչ թէ վկայելոյ արդարութեան։ Այն որոյ և ոչ՝ի վերապահեալ մեղս անկանի, որպէս որ երդնուն սուտ վկայութեամբ՝ի միաս այլոց. զի դրական սուտ ածիւն խնդրի առ այն։ Այլ Պանաչինա՝ի բաց առնու՝ եթէ ոք երդուեալ նախ վկայել զոր գիտէ, և լռեսցէ ապա զհմարտութիւն. զի յայնժամ պարտական է ըստ արդարութեան յայտնել զայն։ Այլ առ այս պատասխանէ Հաւանականաբար Լեսսիոյ, զի երդումն վկային ոչ արդարութեան ինչ պարտս՝ի վերայ դնէ նմա, այլ կրօնից և եթէ՝ որ ոչ պարտական առնէ զնա՝ի հատուցումն։

82. Յաղագս յանցաւորաց գիտելի է, զի չեն պարտական խոստովանելոյ յատենի զյանցանս իւրեանց, եթէ չիցեն հարցեալ ըստ օրինի, այսինքն եթէ չիցեն հրապարակագոյժ յանցանքն, կամ յայտնի նշանք և թերակատար ապացոյցք զայնմանէ։ Այլ երկբայելի իսկ թէ իցէ օրինաւորութիւն հարցափորձի դատաւորին, ոչ է պարտական յանցաւորն պատասխանելոյ. զի իրաւունք նորա՝ի վերայ կենաց իւրոց և համբաւոյ տեւեն ցորչափ չիցէ հաւաստի օրինաւորութիւն հարցափորձին։ Այս այսպէս ուսուցանեն հասարակաց կարծիք բարոյականաց, ընդդէմ սակաւուց ոմանց։

83. Յանցաւորն հարցեալ ըստ օրինի յառաջ քան զվճիռ դատապարտութեան, պարտական է խոստովանելոյ զյանցանս իւր յորժամ ծանր պատուհաս մարմնաւոր առաջի կայցէ նմա։ — Սուրբ Գրիգորիոսն և այլք յաստուածաբանից ոչ սակաւք պարտական համարին զնա, զի իրաւունք են դատաւորի՝ի հարցանելն ըստ օրինի գիտել զհմարտութիւն։ Այլ առաւելապոյնք յաստուածաբանից ասեն. չիք օրէնք այնպիսի խիստ և գրեթէ անհնարին տկարութեան մարդոյ՝ խոստովանութեամբ յանցանաց իւրոց անձամբ զանձն դատապարտել՝ի մահ, կամ՝ի միանձնաւոր կալանս և յանուանարկութիւն, ուր չիցէ հարկ խափանելոյ զվնաս հասարակաց, զմոլորութիւն, զապստամբութիւն և այլն։ Այլ եթէ չիք հաւանականաբար օրէնք այսպիսի, հաւանական է և չունել դատաւորին իրաւունս

պահանջելոյ անդ զիսոստովանութիւն ձեմարտութեան։ Ա՛ջնոյն կարծիք հաւանականագոյն է, այլ և սոցայս ոչ անհաւանելի։ Ա՛սեն որոյ աղդ առնեն Անքիզ և Ամմատիկեանք և այլք առ հասարակ՝ մի՛ ի դէպս յայսպիսիս ստիպել խոստովանահօր զյանցաւորն ի խոստովանութիւն յանցանացն, եթէ չկղձկե նա, և եթէ դժուարին իցէ ածել զնա ի հաւանութիւն։

Յաւելաք յոհաննէս ղեկեղ. դպրապետութեան. զի յետ դատապարտութեան ոչ ևս ամենևին է պարտական խոստովանելոյ զյանցանսն, զի կատարեալ է այնուհետև դատաստանն։

84. Եթէ անպարտ ոք զմահապարտութեան յանցանս յանձն առնուցու տարապարտուց առ ի զերծանել ի ծանր տանջանաց, մեղանչէ մահու չափ։ — Ամանք ըստ այնմ զոր ի վեր անդր ասացաք ի գլ. Ը. 2. ոչ պարտ համարին այնպիսի ծանր տանջանս յանձն առնուլ առ ի պահել զկեանս. բայց Ա՛ղինա, Ա՛ուկոյ, Կաւարրոյ և Վռովարրոյ յոյժ հաւանականագոյնս համարին մեղանչել նմա ծանր։ Ո՛ի թէպէտ և չիցէ պարտ ուժեք ծանր տանջանաք պահել զկեանս իւր, այլ և ոչ օրէն է նմա գործակից լինել դրականապէս անիրաւ մահուն իւրոյ։ Ա՛սեն որոյ իրաւապէս յաւելու Ա՛ղինա, զի որոյ այնպիսի լինչ տարապարտուց յանձն առեալ իցէ՝ պարտ է նմա նահանջել զիսոստովանութիւնն։

85. Ա՛յ ուժեք օրէն է, թէպէտ և տարապարտուց դատափետելոյ, զրպարտել զդատախազն կամ զսուտ վկայ՝ ի պաշտպանութիւն անձին։ Ա՛յլ օրէն է աներկբայապէս յայտնել զծածուկ յանցանս նոցա, եթէ անհրաժեշտ կարևոր իցէ ի ցոյց անմեղութեան անձին և առ ի զերծանել ի ծանր ՚ի՛նասուց։ Ո՛յս այսպէս ուսուցանեն բարոյականք առ հասարակ։ Իսկ Անքիզ, Ա՛նքալեա, Վռովրելեա, և Ամմատիկեանք յաւելուն հաստատել զնոյն և ուր յանցանք ամբաստանելոյն իցէ բնաւին զանխոտել. զի վկայութիւն վկային հաւասար է յայնժամ սուտ վկայութեան։

Ա՛յ է օրէն յանցաւորի յայտնել զմեղսակիցս իւր, եթէ զանխոտել բնաւին իցեն յանցանք նոցա. բայց միայն ստիպեալ ի տանջանաց։ Իսկ եթէ յանցանքն

իւեն ՚ի միջոց հասարակաց, ոչ միայն զմեղսակիցն՝ այլ և զիւրն պարտական է խոստովանելոյ, և և առանց հարցանելոյ դատաւորին։

86. Եթէ յանիրաւի և ոք իւր դատապարտեալ, ոչ օրէն է նմա հակառակ կալ արբանեկաց առնին՝ բռնութեամբ զբռնութիւն վանելով, հարկանելով և սպանանելով, որպէս յայտ է ՚ի դատապարտելոյ Ղեքսանդրի ի զհակառակ վարդապետութիւնն. զի եթէ օրէն էր այս, յաճախեին սպանութիւնք վասն դիւրաւ ամենայն ումեք ՚ի վտանգի անդ անիրաւ կործելոյ ըզդատապարտութիւն իւր։ Այլ օրէն է նմա գուն գործել զերծանելոյ ՚ի ձեռաց նոցա՝ և և ահարկութեամբ զինուց, եթէ չիցէ վտանգ խռովութեան կամ դայթակղութեան, որպէս ուսուցանէ սուրբ Աւգուստինոս։ Իսկ եթէ չև դատապարտեալ՝ կայցէ ՚ի բանտի, կամ յիրաւի դատապարտեալ իցէ ՚ի մահ, թէպէտ և օրէն է նմա փախչել, այլ ոչ գրականապէս զդէմ ունելով պաշտօնէից արդարութեան։ Օրինոյն հաստատեն Յոթոյ, Յոլետոյ, Կայէթանոյ, Ռոնքալէա, Սալմատիկեանք և այլք առ հասարակ զդատապարտելոյ յանիրաւի ՚ի գանս և ՚ի մեղանչաւոր կալանս, թէպէտ և ըստ առենական օրինաց իւեն դատապարտեալ։

87. Ո՞րն իւր յանցաւորի փախչել ՚ի բանտէ.— Եթէ ՚ի պահ և եթ կայցէ ՚ի բանտի, և չիցէ այն նմա սահմանեալ ՚ի պատուհաս յանցանացն, օրէն է. զի ոչ ոք պարտի նախ քան զդատակնիքն կրել պատուհաս։ Այսպա ուրեմն օրէն է նմա հաւանականաբար և խորտակել զբանտ. զի որում օրէն է վախճանն, օրինաւոր են և հնարքն նորին։ Ոչ չէ իսկ պարտական ՚ի հատուցումն խորտակելոյ իրացն, որ պատահականք համարին։ Այնք ՚ի բարոյականաց օրէն համարին և կաշառաբեկ զբանտապանս առնել. այլ թուի թէ չիցէ օրէն հրապուրել զոք ՚ի չարիս, որպէս է պահապանաց դրժել պարտուց պաշտամանն իւրեանց։ Իսկ եթէ օրէն է յանցաւորի փախչել ՚ի բանտէն, ապա օրէն է և այլոց հայթայթել նմա պարան կամ գործիս առ ՚ի կարելոյ փախչել, եթէ միայն չիցէ միջոցս հասարակաց՝ որպէս աւազակք և այլն։

ԳԼՈՒԽ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՑԱՂԱԳՍ ԽՈՐՀՐԴՈՑ ԱՌ ՀԱՍԱՐԱԿ

ՑՕԴՈՒԱԾ Ա.

1. Յաղագս մտադրութեան և դիտաւորութեան:
2. Որպիսի՞ ինչ դիտաւորութիւն պարտ է ունել պաշտօնեի խորհրդոյ:
3. Պաշտել զխորհուրդս պայմանաւ:
4. Պա՞րտ իցէ մերժել զմեղաւորս ի խորհրդոյ:
5. Ե՞րբ ի հաղորդութենէ:
6. Եթէ ոք ինդրէնն զպահ՝ ի մեղս կայցեն:

1. Ո՛չ խորհրդոյ միայ մեզ խօսել յիւրում տեղւոջ ի Հառս քննութեան ձեռնադրելեաց. այլ կարևոր է խոստովանահօր գիտել զայնցանէ ինչ ինչ մանրամասնաբար, զորոց անդ ի հարևանցի անցանեմք:

Ըստ հասարակաց վարդապետութեան աստուածբանից ոչ այլ ինչ խնդրի ի վաւերականութիւն խորհրդոյ, բայց Կիւթ և Ձև և Դիտաւորութիւն պաշտօնէին: Ա՝ան որոյ լինի պէտ և պաշտօնեայն ոչ մտադրութեամբ զխորհուրդն պաշտիցէ, այլ եթէ նայ ի նման դիտաւորութիւն, վաւեր է խորհուրդն աներկբայապէս: Հասարակաց կարծիք զկամաւոր անմտադրութիւն ի պաշտել զայլ խորհուրդս ի ներելի մեղս համարին պաշտօնէի, այլ ի քահանայագործութեան մահու չափ:

2. Ոչ է բաւական պաշտօնէի ունակական լինել ունել դիտաւորութիւն, և սուաբել չէ բաւական մեկնողականն. այլ խնդրի ներգործական դիտաւորութիւն, և կամ գէթ զօրութենական: Ներգործական դիտաւորութիւն է, եթէ ոք ներգործութեամբ դիտէ պաշտել զխորհուրդն: Զօրութենական է, որ կայ և մընայ ի պաշտօնեայն զօրութեամբ գործոյն՝ զոր գործէ միշտ նովին դիտաւորութեամբ. որպէս զի եթէ չէր ի նման զօրութեամբ դիտաւորութիւնն այն՝ չառնէր զոր

առնէին, զի դիտաւորութիւնն այն ածէ զնա յայն գործ։ Այսոցա որոյ նովին իսկ գործով, որով պատրաստի քահանայն ի մկրտել կամ ի պատարագել, նորագի ի նմա զօրութեամբ ներգործականն դիտաւորութիւն։ Եւ նախական է, որ յառաջագոյն լեալ է յաւժեք, և ոչ նահանջեալ. որպես որոյ իցէն լեալ երբեմն բաղձանք և դիտաւորութիւն ընդունելոց զխորհուրդս, այլ ոչ ևս իցէն ի նմա. և Թէպէտ աւնակականս այս դիտաւորութիւն բաւական է յընդունելութիւն խորհրդոյ՝ որպէս յանզգայեաքն և ի խելագարեալ, այլ ոչ և ի մատակարարութիւն։ Իսկ մեկնողական է՝ որ ոչ լեալ յաւժեք և ոչ է, այլ լինէր ի նմա դիտաւորութիւնն այն՝ եթէ ածեալ էր նորա զայն զմտաւ։

Բաւական է ի վաւերականութիւն խորհրդոյ և բանադատեալն դիտաւորութիւն, որպէս որ առ երկիւղի ձեռնադրեցեալ զոք ի քահանայութիւն. զի երկիւղ ոչ ի բաց բառնայ զկամն։ Եւ ինչ սանահանք վաւերականութեան խորհրդոյ և վերիպակ պաշտօնէին զընդունողէ խորհրդոյն, որպէս եթէ համարելով նորա մկրտել զՊետրոս՝ մկրտիցէ զՊօղոս։

Զինք ինչ երկբայել զորոյ ցայսվայր ասացաք. այլ խնդիր է՝ թէ իցէ՞ վաւերական խորհուրդ պաշտեալ ըստ ձևոյ և ըստ նիւթոյ, այլ առանց դիտաւորութեան առնելոց զայն զոր առնէ եկեղեցի։ Զուտեր առանց ինչ խորութեան համարէր խորհուրդս ևս և որ ինչ ընդ խաղ արարեալ ըստ ձևոյ և ըստ նիւթոյ նոցին. զոր ժողովն արիմենատեան դատապարտեաց։ Այլն ևս ոմանք՝ որք վաւերական համարեցան զխորհուրդս պաշտեցեալս ըստ օրինի, Թէպէտ և առանց դիտաւորութեան։ Եւ Ձիմարիտ վարդապետութիւն կարևոր համարի զդիտաւորութիւն պաշտելոյ զխորհուրդ, որպէս պաշտէ եկեղեցի Հռիստոսի։ Զայս այսպէս հաստատեն աստուածաբանք զրեթէ առ հասարակ, և ինքն իսկ Աւենեդիկտոս ԺԴ։ Կարդինալ Պելլարմինոս զՀաւատակ կարծիսն հաւասար համարի ընդ նորազանդիցն վարդապետութեան։ Յելուկոյ նմանապէս համարի զայն մերժեալ յամենեցունց, և ոչ յոյժ օտար ի լուտերական մոլորութենէ. և Ձայլն Վ ասպուէզ համարի զայն դատապարտեալ։ Զի արդարև դատապարտեաց

Ա՛ղեքսանդր ի զայս բան. "Ո՛ աւեր է մկրտութիւն ա-
բարեալ՝ի պաշտօնեէ, որ զամենայն արտաքին արարո-
ղութիւն և զձև մկրտելոյ պահէ անփոփոխ, այլ՝ինեբքս
՝ի սրտի իւրում ոչ զոր առնէ եկեղեցի՝ զայն կամի առ-
նել,,: Պ՛ղնաւոր պատճառ՝ի հաստատութիւն վարդա-
պետութեանս սուրբ Ա՛գուինացին ածէ զայս. զի զգոր-
ծողութիւն խորհրդոյ իրիք մարթ է այլ և այլ իրաց ա-
զագաւ առնել, որպէս զլուացումն մկրտութեան առ՝ի
մաքրել զաղտ մարմնոյ կամ զՀոգւոյ. վասն որոյ պարտ
է պաշտօնեի սահմանել դիտաւորութեամբն զվախճան
գործողութեանն, այս ինքն առնելոյ զոր առնէ եկեղե-
ցի: Ա՛յպ թէ ոչ, ՝ի լուանալ ուրուք զաղայ առ՝ի մաք-
րել զաղտեղութիւն նորա, եթէ ասիցէ զձև մկրտու-
թեան, ըստ հակառակ կարծեաց՝ կատարէ զխորհուրդ.
այլ պրպէս մարթ իցէ ասել զայս: Ո՛ւսն որոյ և ասէ
այլուր. "Ա՛ւթէ պաշտօնեին չիցէ դիտաւորութիւն կա-
տարելոյ զխորհուրդ, կատարի իսկ ոչ,,: Ա՛յս Ա՛ենե-
դիկտոս ՃՂ յաւելու խմաստութեամբ, զի ըստ հակա-
ռակ կարծեաց կատարեալն խորհուրդ՝ գէթ ոչ ըստ
օրինի կատարի, և պարտ է ստուգապէս երկրորդել
զայն գոնէ պայմանաւ:

3. Ո՛րքն է կատարել պայմանաւ, ոչ միայն զմկրը-
տութիւն՝ այլ և զամենայն խորհուրդս, որպէս ուսու-
ցանեն աստուածաբանք գրեթէ առ հասարակ. ոչ
միայն ըստ Տարկի, այլ և ըստ ծանր պիտոյից կամ ըստ
իրաւացի պատճառի: Ո՛րք առանց իրաւացի պատճառի՝
ծանր մեղք են: Ա՛յս թէպէտ առաւելագոյնք յաստուա-
ծաբանից շատ համարին ՝ի մահ ևեթ գնել զպայման,
այլ ապահովագոյն է քանիւ ևս բացատրել զայն:

4. Ո՛ւմ է օրէն զլանալ անյայտ մեղաւորի զխորհուրդ,
զոր խնդրէ նա հրապարակաւ. ՝ի բաց առեալ զեռնա-
դրութիւն, զորմէ յիւրում տեղւոջն ասացաք: Ա՛յլ
յայտնի մեղաւորի պարտ է զլանալ, թէպէտ և հրա-
պարակաւ խնդրիցէ, և եթէ ապաշխարեալ ևս իցէ՝
այլ՝ի ծածուկ: Ա՛յթէ մեղք նորա յայտնի իցէ ամենե-
ցուն որ անդ կայցեն, բաց ՝ի միջնէ կամ յերկուց ոմանց
լաւաց որք չգիտիցեն զայն, Ի՛աքրուա և Ջիանա հաւա-
նականաբար պարտ համարին զլանալ և անդ, այլ Ո՛ուա-
րիկ և Պ՛ոնաչինա հաւանականապէս զՀակառակն

հաստատեն· (տես ՚ի գլ· ԺԱ· 11)։ Իսկ եթէ խնդրեցէ ՚ի տէրտօղ՝ ուր մեղք նորա չիցեն յայտնի, թէպետ և այլոյր հրատարակեալ իցեն, չէ օրէն զլանալ· զի հաւասար է այն զլանալոյ անյայտ մեղաւորի, և նոյն գայթակղութեանց առիթ։

5· Պարտ է մերժել՚ի սուրբ հաղորդութենէ ըզյայտնի մեղաւորս, եթէ չիցէ նոցա յայտնապէս ապաշխարեալ և բարձեալ զգայթակղութիւն։ Այլ առ այս բաւական համարի զնալ նորա ՚ի խոստովանութիւն առաջի այլոց ոմանց, յորոց մարթ իցէ հրատարակել ընդ հուպ ապաշխարութեան նորա։ Այլ եթէ մեծաւոր առիթ մեղաց կայցէ՚ի միջի յայտնի ամենեցուն, ոչ է մարթ ընդունել զնա ՚ի հաղորդութիւն՝ չև բարձեալ նորա զայն՚ի միջոյ։ Այլ ոչ առ ահի սպառնալեաց մահու օրէն է քահանայի, որպէս ոմանք օրէն համարին, հաղորդել զնա։ Այլ ոչ զօրէ ասել թէ որպէս օրէն է տալ անյայտ մեղաւորի զհաղորդութիւն առ՚ի խափանել զանուանարկութիւն նորա, և առաւել իցէ օրէն տալ զայն առ՚ի փրկել զանձն՚ի մահուանէ։ Օ՚ի անդ զհասարակաց հոգևոր ճշմարտաց են բանք· զի՚ի տեսանել այլոց չարահամբաւեալ զբաւ առաջի ամենեցուն վասն զանխուսել մեղացն, խրճան այնուհետև մատչել՚ի հաղորդութիւն՝ թէ գուցէ և ինքեանց նոյն նախատինք հասցեն։

6· Ոչ է օրէն ժողովրդապետի պահակել զյայտնի մեղաւորս· զի թէպետ և ոմանք յաստուածաբանից օրէն համարին, այլ Գենեդիկտոս ԺԴ զհակառակն հաստատէ, զի սեղանակատարութեան նոցա լինի նմա գտանել գործակից։ Այլ այսր աղագաւ և ոչ վկայից օրէն է կալ անդ առընթեր· այլ մանաւանդ ժողովրդապետի՝ որում պարտ է ըստ արդարութեան խափանել զմեղս ժողովրդեան իւրոյ։ Այլ հարսին պահակել ընդ յայտնի մեղաւորի չհամարին՚ի մեղս Անքէզ, Ուկոյ, և Աքրուա· իսկ կէսք յաստուածաբանից ներելի ևեթ մեղս համարին։

Պիտելի է ասա զի Կղեմէս ԺԱ և Գենեդիկտոս ԺԴ հրամայեն ժողովրդապետի մի հրատարակել զառաջիկայ պահակ, մինչ չև քննեալ զպահակելիս թէ զիտիցէն ըստ բաւականին զհաւատոյս։

ՅՕԴՈՒԱԾ Բ

ՅԱՂԱԳՍ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

7 · Քահանայապետիկ է Միրոնւթիւն :
8 · Նիւթ նորին Հեռաւոր :
9 · Նիւթ նորին մերձաւոր · և թէ օրէն էցէ հատանել վասն միրոնւթեան զարգանդ մայրենի :
10–12 · Օրէն էցէ միրաել զմանուկ յարգանդէ մօր , և յորմէ յանգամոյ :
13 · Կարևոր էցէ երրակի հեղումն :
14 · Զև միրոնւթեան :
15 · Պաշտօնեայ նորին :
16 · Կարգ՝ զոր պարտ է ունել յայնմ պաշտօնէից :
17 · Զօտարայ միրոելոյ :
18 · Զյապաղմանէ միրոնւթեան , և զառանին միրոնւթենէ :

7 · Երրակի է միրոնւթիւն , ջրոյ , սիրոյ և արեան : Միրոնւթիւն ջրոյ է այն , զորմէ մեր բանքս են , և որ բուն միրոնւթիւնն է : Միրոնւթիւն սիրոյ է բաղձանք նորին բացայայտ կամ լռելեայն . և սա ևս շատ է առ ի փրկութիւն , ուր չէցէ հնար ընդունել զիրականն միրոնւթիւն : Իսկ միրոնւթիւն արեան է փոխանակել զկեանս ի վերայ հաւատոյ , կամ այլոց քրիստոնէական առաքինութեանց , որպէս ուսուցանէ սուրբ Գրիգորիոս , և որպէս սուրբ եկեղեցի ի 28 փետրուարի տօնէ զչարչատակ սրբոյ վկային՝ որք ի սպասաւորութիւն ըմբռնելոյ ի ժանտախտէ ի վերայ եղբայրսիրութեան նահատակեցան : Այս նահատակութիւն հաւասար է միրոնւթեան , զի քաւէ զմեզս և զպատիժ նոցին՝ իմն ի ձեռն կատարեալ զղջման կամ գերագոյն քան զանձին սիրոյն Աստուծոյ . զի չէ բաւական առ ի փրկութիւն վկայել անկատար զղջմամբ՝ առանց այսպիսի աստուածսիրութեան , որպէս ուսուցանեն սուրբ Գրիգոր Նազիանզեցի , սուրբն Պոնաւենտուրա , Կոմտ , Լայման և այլք , ընդդէմ Վիտալի և այլոց աստուածաբանից :

Պիտելի է ասել ի հարևանցի , զի ոչ է օրէն առանց յայտնի պղծութեան Հոգւոյն սրբոյ յառաջամտոյց լինել ի վկայութիւն , բայց միայն ուր վտանգ դադարակութեան առաջի կայցէ այլոց ի խուսեփն , որպէս

ուսուցանեն վարդապետք առ հասարակ։ Այսն որոյ յաւելու Յայմանի՝ մեղս իսկ համարել այնմ, որ՝ի մէջ չարափառաց վասն պահպանութեան ևթ պահոց՝ առանց այլ ինչ հարկի՝՝ի վտանգ մահու արկանել զանձն յայտնելով զուղղափառութիւն իւր։

8. Ջեռաւոր նիւթ օրինաւոր մկրտութեան է ջուր օծեալ. վասն որոյ ծանր մեղանչէ, որ առանց հարկի այլ ջուր՝ի կիր արկանէ՝ի մկրտութիւն, որպէս ուսուցանեն վարդապետք առ հասարակ։ Այլ յառանձնականացն մկրտութիւնս հաւանականաբար օրէն համարին Յաքրուա և այլք ոմանք յաստուածաբանից զջուր՝ որ չիցէ օծեալ։ Իսկ հեռաւոր նիւթ վաւերական մկրտութեան է ջուր բնական, ևս և ծովային և քաղցր, կամ՝՝ի սառամանեաց լուծեալ, կամ խառն ընդ այլ նիւթս՝ այլ ըստ առաւելութեան ջրեղէն մասին ջուր համարեալ։ Այսն որոյ չէ նիւթ վաւերական ոչ գինի, ոչ կաթն, ոչ հոյզ պաղոց և քանջարոց, և ոչ ջուր պաղեալ անլոյծ։ Իսկ նիւթ երկբայելի է արդանակ, մսից քաղջուր, կասկաջուր, և ջուր շիքեալ տարրաբաշխողն՝՝ի ծաղկանց և՝՝ի խոտոց. իսկ ջուր բնական պաղաբար անցեալ ընդ ցքեհան գործի խառն ընդ վարդ կամ ընդ այլ ծաղկունս է ջուր Ճշմարիտ. դարձեալ երկբայելի են և լորձունք և սառն և աւիշ ծառոց։ Նիւթ երկբայելի է և մի կամ երկու շիթ ջրոյ։ Ունիւթ երկբայելի չէ օրէն՝՝ի կիր արկանել, բայց միայն առ հարկի և պայմանաւ. և պարտ իսկ է պաշտօնեի յայնպիսումն հարկի վարել նուազ, թէ և հաւանականութիւն վաւերականութեան խորհրդոյն իցէ կարի իսկ սակաւ, որպէս ուսուցանեն աստուածաբանք։ Տես և որ ինչ՝՝ի ստորև (գլ. ԺԶ) առաջի կայ մեզ ասել և զարձակմանէ մեղաւորաց անզգայելոց՝՝ի հոգեվարս։

9. Ներձաւոր նիւթ մկրտութեան է լուացումն, զոր երբեակ օրինակաւ մարթ է առնել. ընկղմմամբ, սրսկմամբ, և հեղմամբ։ Զթէ ոք արկցէ զմանուկ՝՝ի գետ, և յարկանել անդ ասիցէ զձև մկրտութեան, հաւանականաբար վաւեր է մկրտութիւնն. այլ չէ երբեք օրէն առնել զայն, զի չէ օրէն սպանանել զոք վասն մկրտելոյ, թէպէտ և առանց այնր հասանիցէ նմա մեռանել անկնութ։ Պարձեալ չէ օրէն և ոչ հատանել զսրգանդ

մօր վտանգաւ մահու նորա առ ի մկրտել զմանուկն, թէպէտ և առանց այնր իսկ մեռանելոց իցէ մայրն, և տայցէ իսկ հաւանութիւն հատանելոյ. բայց միայն յետ մահուն օրէն է հատանել: Սրատ ինչ աստանօր յաւելու աքրուա, իսկ և իսկ ընդ մեռանել մօրն՝ բանալ զբերան նորա, զի մի հեղձնուցու մանուկն յարգանդի՝ եթէ դեռ կենդանի իցէ: Ա՝եղանչեն մերձաւորք և վիրաբոյժք յանփոյթ առնել կամ՝ի յամել՝ի հատուածն, եթէ կայցէ յոյս կենաց կամ մկրտութեան մանկանն: Ա՝ասն որոյ ոչ է պարտ ժողովրդապետի, որպէս հաստատեն ոմանք յաստուածաբանից, թաղել զմեռեալն՝ մինչեւ զամենայն հնարս՝ի գործ արկեալ՝ի փրկութիւն մանկանն. որպէս զի եթէ չգտցի ոք անդ, և անհմուտ իսկ ոք վիրաբուժութեան՝ որ զօրասցի հատանել, պարտական է ինքնին հատանելոյ:

10. Ո՞րքէն իցէ առ հարկի մկրտել զմանուկ յարգանդի մօրն, ՚ի ձեռն գործելոյ հասուցանելով՚ի նա ըղձալուր: — Կէսք յաստուածաբանից ոչ օրէն համարին զայն բանիւ սրբոյ Գ՚ուխնացւոյն՝ որ ասէ. "Ոչ է պարտ չէ ծնեալոյն յարգանդէ՝ մկրտիլ,,. և տէրունական բանիւն. "Եթէ ոչ ոք ծնցի վերուստին,, և այլն, զի առ՚ի ծնանել վերստին՝ պարտ է մարդոյ զի իցէ ՚ի մայր յարգանդի: Ա՚յլ բազմագոյնք ընդ Ա՚ղեքսանդրիոսի ծ՚ո՚յժ հաւանականաբար զհակառակն ունին. զի որ կեայն, թէ և յարգանդի մօրն իցէ՝ ծնեալ համարի, ըստ այնմ. "Ո՞վ որ՚ի նմանն ծնեալ է, ՚ի Հոգւոյն սրբոյ է,,: Ա՚ւ նոյն ինքն սուրբ Գ՚ուխնացին այլուր ասէ. "Արկին է ծնունդ մարմնաւոր, մի յարգանդի, միւս ևս յարգանդէ,,: Ա՚սկ զոր ասէն՝ եթէ ոչ է պարտ չէ ծնեալոյն յարգանդէ մկրտիլ, զի անհնարին համարի զայն. որպէս այլուր ասէ. "Ո՞չ ևս ծնեալոյն չիք հնար մկրտելոյ,,. ուրեմն եթէ իցէ հնար, պարտ է մկրտել: Ա՚սկ թէ գոյ հնար, յայտ իսկ է զարդիս՚ի վկայելոյ բժշկաց և մանկաբարձից. և Ա՚իլուիոյ և Ա՚ստուածոյ հաստատեն, և այսման և այլք հաւանական համարին՝ զի մարթի իցէ մկրտել մանկանն անդէն յաղաւին՝ որ իբր մասն նորին է յարեակից՚ի պորտն: Ա՚սն որոյ՚ի վտանգ մահու պարտ է մկրտել զնա պայմանաւ դեռ ևս յարգանդի. և եթէ հարկ լիցի մկրտել զնա ըստ մասին ելեալ յարգանդէ,

և մկրտիցի՝ ի գլուխն, յաւելու սուրբ Հոգւոյնացին՝ ոչ ևս օրէն է կրկին զնա մկրտել, որպէս պարտն է մկրտել պայմանաւ՝ եթէ իցէ յայլ ի մասանց մարմնոյն մկրտեալ։

11. Օրէն իցէ մկրտել զմանուկ, եթէ ի հերս ևեթ նորին մարթ իցէ հաստացանել զնորս։ — Դաւեալագունից կարծիք օրէն համարին. զի թէպէտ և հերք չիցեն հաղորդք հոգւոյ, սակայն և ոչ աւելորդք ինչ՝ այլ ձիմարիտ մասունք են մարմնոյ. որպէս և մարթ մարմնոյ թէպէտ և չիցէ հոգևոր, այլ ընդունակ է մկրտութեան։ Ասան որոյ ի պահանջել հարկին օրէն է և պարտ իսկ մկրտել պայմանաւ զմանուկն ի հերս իւր, ևս և յոտս կամ ի մատունս և յայլ ևս ի դուրսաքեայ մասունս մարմնոյ. այլ մկրտութիւն ի ձորձս անվաւեր է անեղկբայապէս։

12. Ասէր իցէ ստուգիւ մկրտութիւն, ոչ ի գլուխն՝ այլ ի կուրծս կամ ի թիկունս և կամ յայլ գլխաւոր մասունս մարմնոյ։ — Դաւելադոյնք յաստուածաբանից վաւեր համարին, բայց այլք ընդ սրբոյ Հոգւոյնացւոյն երկբայելի համարին զայն. վասն որոյ օրէն է կրկնել զմկրտութիւն պայմանաւ։

13. Կարևոր իցէ ի մկրտութեան երբակի հեղումն։ — Ի վաւերականութիւն նորին բաւ միակ հեղումն, այլ ծանր մեղանչէ՝ որ զանց զերբակի հեղմանէն առնիցէ, որ ի խորհուրդ ամենասուրբ Երրորդութեան է սահմանեալ, և մաշտոյք արևմտեան և արևելեան եկեղեցեաց խստիւ պատուիրեն։ Նա ազգ առնեն ապստաւածաբանք չկատարել զձևն մինչ չև կատարեալ զերբորդն հեղումն։

14. Զև մկրտութեան ըստ լատին եկեղեցւոյ այս է. Նա Դրէմ զքեզ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. իսկ ըստ արևելեան եկեղեցւոյ՝ Կրկի Ծառայ Քրիստոսի յանուն Հօր և այլն, կամ Նայս անուն Ծառայ Քրիստոս Դրէմ այժմ ի ջեռս իմ յանուն Հօր և այլն։ Իսկ ասել՝ թէ շատ իցեն բառքն յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, առանց յաւելլոյ ես Դրէմ կամ Դրէմ Ծառայս, դատապարտեալ է Կղեբսանդրէ ե։ Փոխոխութիւն ձևոյս ըստ հայկեան մասանցն, այս ինքն ըստ իմաստից նորին, անվաւեր կացուցանէ զմկրտութիւն. այլ ոչ և փոխ-

խուճիւն ըստ պատահական մնասանցն։ Ա՛ն որոյ եթէ ոք աշխարհաբառ ևս զձևն ասիցէ, և կամ խառն իսկ աշխարհաբառ և գրաբառ, ոչ ինչ սահանակ վաւերա-կանուճեան խորհրդոյն, առ որ խնդրի ևեթ զի ընդոյն նշանակիցեն բառքն, և ոչ թէ պաշտօնեացն կամ ընկալուչ խորհրդոյն իմանայցէ զայն։ Ա՛նաւանդ զի որպէս բազումք յաստուածաբանից ասեն, լաւ ևս իցէ կանանց և տգիտաց՝ի պահանջել հարկին աշխարհաբառ զձևն ասել, Այս ինչ կըմիրպեմ յանուն Հօր և այլն. զի մի սխալեսցեն։ Այլ եթէ փոխանակ Որդւոյ ասիցէ ոք Արբիսաոսէ, երկբայելի է վաւերականուճիւն խորհրդոյն։ Զմանապէս և ռամկական խեցբեկ հնչմունք բառից, որպէս ասել Յանըն Հօր ի Որդւոյ ի Հոգին սրբուռն, ոչ ինչ սահանակ վաւերականուճեան, որպէս յայտ արար Օ՛աքարիա Հռովմայ Հայրապետն։ Զարձեալ և փոխադրուճիւն կարգի բառից՝ որպէս ասել Յանուն Որդւոյ ի Հօր ի Հոգւոյն սրբոյ կամ յաւելուած ինչ բառից՝ որպէս ասել յանուն Հօր ամենակալի ի Որդւոյն դածնի և այլն, ոչ ինչ սահանակ վաւերականուճեան խորհրդոյն։ Այլ անվաւեր առնէ զխորհուրդն, եթէ ոք ասիցէ Ա՛ղբի ծառայս յանուն ամենասուրբ Երրորդութեան, կամ յանուանս Հօր ի Որդւոյ և այլն։ Իսկ երկբայելի առնէ, եթէ ասիցէ կրկնելով Յանուն Հօր, յանուն Որդւոյ և այլն, որպէս Համարին Պանաչինա, Ֆաուրնելի, Պուսեմպայ, Ալմատիկեանք և այլք։ Զարձեալ եթէ ոք լռեսցէ զառաս ևս կամ ամէն, ոչ ինչ սահանակ վաւերականուճեան խորհրդոյն. այլ անվաւեր առնէ զայն, եթէ լռեսցէ զբառն ծառայս կամ պէեղ։ Նմանպէս անվաւեր առնէ և լռուճիւն երկոցունցն ևս շաղկապից ի, ուր առաջնոյն ևեթ լռուճիւն ոչ բառնայ զվաւերականուճիւն, զի ըստ հասարակաց սովորուճեան իմանի այն զորուճեամբ։

Անվաւեր է և սկրտուճիւն յանուն Արբիսաոսի ևեթ, որպէս ուսուցանեն աստուածաբանք առհասարակ ընդ սուրբ Աղուինացւոյն։ Այս ոչ զօրէ ինչ ընդդէմ որ՝ի Պօթծս առաքելոյն ասի “Ա՛կրտեալք էին յանուն տեառն Յիսուսի,,. (Ը. 17)։ Օ՛ի այն առ՝ի զանազանել՝ի սկրտուճենէն Յովհաննու ասի այնպէս. զի այլուր (ԺԹ. 2) յասել եփեսացւոց՝ “Լա՛յլ և ոչ եթէ Հոգի

սուրբ գուցէ լուեալ է մեր,,, ասէր Պօղոս. "Խակ յինչ մկրտեցարուք,,. Որով քաջայայտ է զի յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ մկրտէին:

15. Ընդկըայելի է վաւերականութիւն մկրտութեան յումմէ և կատարեսցի. մարդ ուղևոր՝ որ կեայ ի վերայ երկրի, թէ այր իցէ և թէ կին, թէ հերետիկոս և թէ անհաւատ, կարէն կատարել զմկրտութիւն ի վտանգի մահուան առ ի չգոյէ քահանայի. այլ առանց այսր վտանգի՝ քահանայի և եթէ օրէն է մկրտել: Ոչ անաւանդ թէ օրինաւոր պաշտօնեայ մկրտութեան եպիսկոպոսն է կամ Ժողովրդապետ, որոց օրէն է աւանդել զնշխանութիւն իւրեանց և այլոց քահանայից, կամ սարկաւագաց՝ առ ի չգոյէ քահանայից: Այլ սարկաւագաց, ի պահանջել իսկ հարկին, չէ օրէն առանց հրամանի կատարել հրապարակաւ զմկրտութիւն. և որք կատարենն, անկանին ըստ հաւանական նագոյն կարծեաց յանկանոնութիւն. իսկ փոքր աստիճանաւորք անեղկըայապէս: Այլ ամենայն ոք, որ առանց հարկի անհրամանի ի Ժողովրդապետէ մկրտիցէ զոք, թէ և առանձնաբար, ծանր մեղանչէ. այլ որպէս Պաղմատիկեանք և այլք ոմանք հաստատեն, բաւէ առ այս և լռելեայն հրաման:

16. Ի պահանջել ևս հարկին՝ պարտ է պահել ըզկարդ ի պաշտօնեայս. զի եթէ գուցէ ոք անդ քահանայ, պարտի սարկաւագն տեղի տալ նմա. կիսասարկաւագն սարկաւագին, փոքր աստիճանաւորն կիսասարկաւագին, աշխարհականն փոքր աստիճանաւորին, և կին առն: Այլ ի դէպս ինչ վասն պարկեշտութեան պարտի այր տեղի տալ կնոջ. որպէս եթէ հարկ իցէ մկրտել զմանուկն չև ըստ բոլորին ելեալ յարգանդէ, մանկաբարձին անկ է մկրտել զնա. և կամ եթէ տեղեկագոյն իցէ կին քան զայր կատարելոյ զխորհուրդն, և կամ եթէ չգուցէ անդ այր բաց ի հօրէ մանկանն, զի ոչ է օրէն հօր մկրտել զորդի իւր՝ բայց միայն ի յետին հարկաւորութեան: Ոչ ասն որոց պարտ է Ժողովրդապետաց քաջ կրթել զմանկաբարձս ի կատարումն խորհրդոյս, զի ոչ դուն ուրեք պատահէ նոցա հարկ մկրտելոյ:

Այլ եթէ քահանայ ի բանադրանս կայցէ, պարտի տեղի տալ աշխարհականին. զի ի յետնում եւեթ հար-

կի օրէն է նմա տալ ումեք կնիք։ Իսկ աշխարհական եթէ մկրտեսցէ, ուր իցէ ոք եկեղեցական, ոչ աւելի ինչ քան զներելի մեղս գործէ։

17. Ի ժողովրդապետաց և ոչ եպիսկոպոսաց արտաքոյ վիճակի իւրեանց օրէն է մկրտել զոք առանց հրամանի Թեմական եպիսկոպոսի տեղւոյն կամ ժողովրդապետի։ Այլ օտարականաց, ուր և գտանիցին, օրէն է տալ անդ մկրտել զմանկունս իւրեանց։ Այսպէս եթէ ոչ կարի հեռի իցեն՝ի քուն քնակութենէ իւրեանց, օրէն իցէ նոցա ուր և իցեն տալ մկրտել զնոսա, և ընդունել զայլ ևս խորհուրդս։ — Իւրաքանչիւր ուրուք քնակութիւն համարի ուր ոչ անցաւորապէս՝ այլ զմեծ ինչ մասն տարւոյ կայ, կամ՝ի մոլ եղեալ է կալ, թէպէտ վասն վաճառականութեան իցէ թէ բժշկութեան, թէ ծառայութեան, և թէ որով և իցէ պատճառաւ։ Արդ հաւանականագոյն և առաւելագունից կարծիք օրէն համարի նոցա ընդունել զխորհուրդս և՝ի ժողովրդապետէ տեղւոյն, ուր և քնակեն յայնժամ։

18. Ոմանք մեղանչեն ժողովրդապետք, որք առանց իրիք պատճառի յապաղեն զմկրտութիւն աւելի քան զտասն կամ զմեւտասան աւուրս։ Ոմանք մեղանչեն և որք առանց հարկի մկրտեն զմանկունս՝ի տան, բաց յորդւոց Թագաւորաց և իշխանաց. և որ օրինաւոր հրամանաւ կատարին մկրտութիւնք յառանին մատրան։ Նպաւեր է մկրտութիւն, յորում ոմն զջուր՝ի գլուխ երախային հեղուցու, և ոմն զձևն ասիցէ։ Իսկ եթէ երկոքեան՝ի միասին և զջուրն հեղուցուն և զձևն ասիցեն, թէպէտ և ծանր մեղանչեն՝ այլ վաւեր է մկրտութիւնն, եթէ անկախ՝ի միմեանց կատարիցեն զխորհուրդն, և ոչ որպէս կատարողակից իրերաց։

ՅՕԴՈՒԱԾ Գ

ՀԵՐԱԽՕՏԻՑ

19 · Պատիժք վերստին մկրտողաց :
20 · Սաղմն վիժեալ, և որդիք անհաւատից իցէ՞ն ընդունակք մկրտութեան :
21 · Ջ՞ինչ եթէ կամիցին ծնօղք :
22 · Օրէն իցէ զարձուցանել անհաւատից զորդիս նոցա :
23 · Մկրտութիւն պայմանաւ :
24 · Ջմանկանց արկելոց ՚ի բաց :
25 · Ջմկրտելոց ՚ի ձեռն աշխարհականաց :
26 · Ջմկրտելոց ՚ի հերետիկոսաց :
27 · Եթէ մկրտութիւն իցէ երկբայելի :
28 · Պատրաստութիւն առ մկրտութիւն :
29 · Արարողութիւնք մկրտութեան, և նախ զօծեալ ջրոյ :
30 · Ջհեղեղեցւոյ :

19 · Որպէս զմանկունս, մկրտել և զ՚ի ծնէ խելագարս · այլ որք յետոյ խելագարին անկնուք, եթէ չիցէ նոցա յառաջ քան զխելագարելն խնդրեալ զմկրտութիւն, չէ օրէն տալ նոցա կնիք : Որ կրկին զոք մկրտէ, և ինքն և մկրտեալն անկանին յանկանոնութիւն · իսկ որ առանց իրաւացի պատճառի պայմանաւ զոք կրկին մկրտէ, կէսք զնա զերծ կացուցանեն ՚ի պատժոյ առաքելոց, իբր զի պայմանաւ մկրտելոյն՝ ոչ մկրտէ իսկապէս · և կէսք պարտաւոր զնա առնեն, զի ընդդէմ օրինաց եղեալն պայման՝ հաւասար է չընելոյ զայն : Երկաքանչիւր ևս կարծիք հաւանականք են :

20 · Ո՞ սաղմն վիժեալ, ցորչափ չիցէ յայտ թէ իցէ անհոգի, պարտ է մկրտել · իսկ պայմանաւ, եթէ երկբայելի իցէ գո՞ ՚ի նմա հոգւոյ : Այլք հմուտք ՚ի բժշկութիւն, հոգևորել սաղմին անդէն ՚ի յղութեան, կամ գէթ ՚ի սակաւ աւուրս :

Ոչ է օրէն առանց ծանր հարկի մկրտել միով բանիւ զբազումս, ասելով Այս պիտի դրեմ · կամ Ընդունի ծառայս ՚ի քեզ ես և այլն :

Ի աւետարան է մկրտութիւն որդւոց անհաւատից, ընդդէմ իսկ կամաց ծնողացն, որպէս ուսուցանեն առաքեալք առ Կոռնելիոս, և Ներեղիկոս յԴ, վկայութեամբ սրբոյն Ջոսթինոսի :

Յուրանալ ծնողաց զՀաւատս՝ օրէն է բառնալ ի նոցանէ զորդիս Հաւատացեալս. և առ այս շատ է զի մի իսկ ի ծնողացն լեալ իցէ յառաջագոյն Հաւատացեալ, որպէս ուսուցանեն Մուարկէ, Լայման, Խռնքալեա, Լաքրուա, Մալմատիկեանք և այլք։

Օրդիս հերետիկոսաց ընդդէմ կամաց իսկ ծնողացն օրէն է մկրտել, թէ և առ ծնօղս իւրեանց կալոց մնալոց իցեն։ Այլ զորդիս անհաւատից չէ օրէն ընդդէմ կամաց ծնողացն մկրտել, բայց միայն նախ՝ եթէ որդին ի բանաւարութիւն հասեալ, և կամիցի մկրտիլ, որպէս ուսուցանէ սուրբ Գրիգորիոսին։ Այս յայնժամ օրէն է և պարտ իսկ եկեղեցւոյ, եթէ կարիցէ, բաժանել ի ծնողաց իւրոց զմկրտեալն՝ որպէս ուսուցանեն Վասիլ Բոլիտ, Լայման, Մալմատիկեանք և Անենդիկտոս ծգ։ Այլ եթէ երկբայելի իցէ հասանել մանկանն ի բանաւարութիւն, պարտ է մնալ կատարելոյ նորա զեօթն ամ տիոյն՝ ունելով զնա միշտ ուրոյն ի ծնողացն ըստ յօժարութեան կամաց նորա։ Չկրկորդ՝ օրէն է մկրտել զորդիս անհաւատից ի վտանգ մահու։ Չրրորդ՝ եթէ լքեալ իցեն անխնամ ի ծնողացն, և լիցի իսկ վտանգ խնդրելոյ նոցա զորդիսն. նայնպէս և զորդիս անհաւատից յիմարս ի ծնէ։ Չորրորդ՝ եթէ ծնօղք նոցա ի դերութիւն վարեալ իցեն ի քրիստոնէից, կամ որդիք նոցա առաք առեալք ի պատերազմի։ Հինգերորդ՝ եթէ մի ի ծնօղացն կամիցի ընդ մկրտութիւն մանկանն, թէպէտ և միւսն ընդդէմ դառնայցէ։

21. Այլ եթէ երկոքին իսկ չկամիցին, և մանուկն լիցի հասեալ ի բանաւարութիւն, չէ օրէն մկրտել զնոսա՝ որպէս ասացաք, եթէ առ ծնօղս իւրեանց մնալոց իցեն, վասն առաջիկայ ստոյգ վտանգին։ Այլ եթէ երբեք դէպ լիցի կարելոց բառնալ զնոսա ի ձեռաց Հօրն, ոչ սակաւք յաստուածաբանից Հաւանականաբար օրէն Համարին մկրտել զնոսա. զի չիք իշխանութիւն ծնողաց ի վերայ որդւոց իւրեանց ի յաւիտենական դատապարտութիւն նոցա. և որպէս օրէն է բառնալ զորդիս ի ծնողաց՝ եթէ ի վտանգ մահու կայցեն առ նոսա, և առաւել իցէ օրէն զերծուցանել զնոսա ի հոգևոր մահուանէ։ Այլ վասն որդւոց Հրէից արգել Յուլիոս ծ

վան իրաւացի պատճառաց, չկրտել զնոսա ընդդէմ կամաց Ծնողացն՝ չև հասեալ նոցա ՚ի բանաւորութիւն։

22. Որպէս իցէ զգնաճոյ կամ զպերկանաւորեալ որդիս անհաւատից անկնուքս՝ դարձուցանել առ նոսա։ Հասարակաց կարծիք աստուածաբանից օրէն համարին վանն խաղաղութեան սրբոյ եկեղեցւոյ. ապա թէ ոչ և անհաւատք զորդիս հաւատացելոց գերեալս չտացեն ՚ի բաց, ուր առաւելապէս հոգ է եկեղեցւոյ զի հաւատացեալք կացցեն ՚ի հաւատս՝ քան անհաւատից գալ ՚ի հաւատս։

23. Զի ՚ի սկզբան զոք անդրէն պայմանաւ՝ խնդրել իրաւացի և խոհական երկբայութիւն զվաւերականութենէ առաքինոյ սկզբանէն, թէպէտ դրական և թէ բացասական իցէ երկբայութիւնն, որպէս ասացաք (գլ. Ա. 12)։ Իսկ եթէ երկբայութիւնն զընդունելութենէ սկզբանէ իցէ, եթէ ի և եթէ ոք ականատես վկայիցէ զսկզբանէն՝ չէ օրէն կրկնել զայն, բայց եթէ և զհակառակն իցէն՝ որ վկայիցէն դրականապէս։ Ոյս այսպէս ուսուցանեն Մուարէզ, Լայման, Բասիլիոս, Պոնաչինա, Հոլզման, Մալմատիկեանք, և այլք ընդ կարդինալ Լամպերթինեայ։ Եւ է օրէն սկզբանէ, և ոչ պայմանաւ, զորդիս քրիստոնէից մեռեալս ՚ի մէջ հաւատացելոց և ՚ի չափ հասեալ՝ առ ՚ի չգոյէ վկայի սկզբանէ նոցա, եթէ չիցեն ՚ի հակառակն պատճառք դրականք երկբայելոյ։ Իսկ եթէ ՚ի մէջ անհաւատից ծնեալ իցեն և մնեալ, և մարթ իցէ գուշակել հաւանականաբար զի չիցեն սկզբանէ, զնոսա պարտ է սկզբանէ պայմանաւ, որպէս հաստատեն Լայման և Պուսեմ պայ։

24. Ոչ ընկեցիկ մանկունս, թէպէտ և պիտակաւ սկզբանէ արկեալ իցեն ՚ի բաց, պարտ է սկզբանէ պայմանաւ՝ եթէ չիցեն այլ ինչ հաւատովք զսկզբանէ նոցա։ Ոչ ի միշտ օրէն է ունել զնոցանէ խոհական երկբայութիւն, որպէս հաստատեն բազումք յաստուածաբանից, և կարդինալ Լամպերթինի՝ որ և աճէ առ այս զվկայութիւն Ժողովոյն Տրիդենտեան սահմանադրութենէ։

25. Ոչ մանկունս սկզբանէ ՚ի մանկաբարձից և յաշ-

խարհականաց յայնժամ և եթէ պարտ է մկրտել վերըս-
տին պայմանաւ, յորժամ հաւանական երկբայութիւն
իցէ զսխալանաց ինչ գործելոյ ՚ի նոցանէ։ Օ՞այս այս-
պէս ուսուցանեն աստուածաբանք, բայ ՚ի սակաւուց
ոմանց։ Ա՞յլ եթէ ժողովրդապետին քննեալ զմկրը-
տօղն և գտանիցէ զնա տեղեակ կատարման խորհրդոյն,
ոչ ևս օրէն է անդրէն մկրտել. այլ զարաթողութիւնս
և եթէ խորհրդոյն կատարել յեկեղեցւոջ։ Իսկ ՚ի կըրկ-
նել զմկրտութիւն ՚ի չափահասակս՝ ոչ է պարտ խոստա-
վանել նոցա, այլ զղջալ և եթէ ՚ի մեղացն։

26. Օ՞մկրտեալս ՚ի հերետիկոսաց ոչ է պարտ ան-
զրկէն մկրտել, բայց միայն եթէ իցէ երկբայութիւն
զվաւերականութենէ խորհրդոյն. որպէս մարթի իսկ է
երկբայել զբազմաց ՚ի նորաղանդից. զի կէսք շինեցս ինչ
ջրոյ սրսկեն ՚ի Հաւատ երախայրին, այլք զձորձովք նորա
հեղուն զջուր. կէսք զջուր մղեալ ՚ի կիր արկանեն, այլք
բաժանեն զնիւթ ՚ի ձևոյ՝ ումեմն զջուրն հեղլով և այլ
ումեմն զձևն արտասանելով. կէսք յանուն Ա՞բրիստոսի
մկրտեն, և գրեթէ ամենեքին ոչ կարևոր զգիտաւո-
րութիւն վարկանին։

27. Ա՞եղանչէ պաշտօնեայն եթէ ոչ մկրտիցէ (իմա
պայմանաւ), ուր իցէ իրաւացի երկբայութիւն զմկրը-
տութենէ ուրուք։ Իսկ ՚ի վկայել զայնմանէ միոյ ու-
րուք ականատես վկայի, ոչ ևս օրէն է նմա մկրտել
վերստին։ Ա՞յլ թէպէտ ոչ սակաւք յաստուածաբանից,
որպէս ՚ի վեր անդր ասացաք, (գլ. ԺԴ. 3) շատ համա-
րին զմտաւոր պայման, այլ ապահովագոյն այն է ասել
բանիւ՝ Ա՞յնէ էիցես դրօեալ, և կամ Ա՞յս անուն ծառայ
Ա՞ստուծոյ, եթէ էիցէ դրօեալ, դրօի այժմ ՚ի ձեռս էմ և
այլն։ Ա՞յլ գիտելի է զի ՚ի մկրտելն անդրէն պայմանաւ,
չեն ինչ պէտք կնքահօր կամ կնքամօր։

28. Ա՞ռ ՚ի պատրաստութիւն մկրտութեան խնդրի
նախ՝ գիտաւորութիւն գեթ ունակական ՚ի չափահաս
երախայս. զի ՚ի տղայս և ՚ի յիմարս ՚ի ծնէ՝ եկեղեցի
սուրբ ընդ զթերին։ Ա՞սն որոյ վաւերական է մկրը-
տութիւն նոցա, որք ոչ բռնի՝ այլ առ ահի ընդունին.
նոյնպէս և ՚ի յետոյ յիմարեալս և որք ՚ի քուն մկրտի-
ցին, վաւերական է մկրտութիւն նոցա եթէ յառաջա-
գոյն խնդրեալ իցէ նոցա զայն ՚ի զգաստութեան։ Ա՞րկ-

զորդ՝ խնդրի ՚ի նոսա գիտուԹիւն իրաց Հաւատոյ, որ-պես ՚ի վեր անդր ասացաք (գլ. Դ. 3)։ Յերորդ՝ խնդրի ՚ի նոսա զղջումն մեղաց, և բաւական է անկատարն, որպէս ուսուցանեն աստուածաբանք առ Հասարակ ընդ սրբոց Պետրինացւոյն՝ որ ասէ. "Ի պատրաստուԹիւն ընդունելուԹեան ընծրհաց ՚ի ՔրիստուԹեան՝ խնդրին Հաւատք, այլ ոչ սէր. զի բաւական է կանխել բեկման, Թէպէտ և ոչ խորատակման,,։

29. Իսկ արարողուԹիւնք, որ խնդրին ՚ի Քրիստու-Թեան, այսոքիկ են։ Նախ՝ Ջուր օծեալ յորժամ Հան-դիպաւոր է ՔրիստուԹիւնն, որպէս ասացաք ՚ի վեր անդր (8). և որ առանց Հարկի՚ի բայ Թողուցու զօծումն միւռոնաւ, կամ Հերուէն միւռոնաւ օծանիցէ զերախայն, ծանր մեղանչէ, որպէս ուսուցանեն աստուածաբանք առ Հասարակ և մնշտոցն Հռովմէական։

30. Յերկրորդ՝ կատարել յեկեղեցւոջ զՔրիստու-Թիւն. վասն որոյ ծանր մեղք են Քրիստել առ անխն, բայց միայն նախ՝ զորդիս Թագաւորաց և իշխանաց։ Յերկրորդ՝ եԹէ չիցէ մարԹ աՃել զաղային յեկեղեցի առանց վտանգի չարահամբաւուԹեան ծնողացն կամ այլոց ծանր վնա-սու. և յայնժամ օրէն իսկ է կատարել Հանդիսաւոր ՔրիստուԹիւն ՚ի տան։ Յերորդ՝ եԹէ մանկանն վտանգ մաՀու ՚ի վերայ կայցէ, որպէս եԹէ գժուարաՃին լեալ իցէ, կամ անՃիչ անմեռնչ ծնեալ, կամ վաղաՃին յեօԹնեւերորդում կամ յուԹերորդում ամենան ՚ի լոյս ընծայեալ. այլ եԹէ կեցցէ մանուկն, պարտ է կատա-րել ՚ի վերայ նորա զարարողուԹիւնս յեկեղեցւոջ, և չէ մարԹ զանց գնաքօք առնել առանց ծանր մեղաց։ Իսկ եԹէ յետ զարարողուԹիւնն կատարելոյ գայցէ ՚ի չայտ անվաւեր լեալ ՔրիստուԹեանն, պարտ է ըստ Հանդա-գոյն և ըստ ապահովագոյն կարծեաց երկրորդել և զա-րարողուԹիւնս ընդ ՔրիստուԹեանն։ Պարտ է ժողովրդ-դապետաց զգուշանալ ըստ կարի չդնելոյ երախային ա-նուանս անսուրբս, այլ ՚ի կամել ծնողաց նորա կամ կնքահօր և կնքամօր այնպիսի ինչ անուն, պարտ է ժո-ղովրդապետին կոչել մանկանն անուն ինչ սուրբ, և զինդրեալն ՚ի նոցանց չաւելուլ որպէս մականուն։

Պիտելի է զի արձանագիր ՔրիստուԹեան զօրէ ՚ի վե-կայուԹիւն, և Հաւատարիմ չաւելնայն առեանս Համա-

բի։ Ա՛ման որոյ պարտ է ժողովրդապետայ արձանագրել զօր և զժամ ծննդեան մանկանն, և զծնողս նորա և զկնքահայրս կամ զկնքամայրս. և զայն իսկ եթէ երբեք պայմանաւ կամ առանց արարողութեանց մկրտեաւ իցէ մանուկն, կամ ընկեցիկ գտեալ, և ուրանօր։

Ասդրկեն առ՝ ի մկրտութիւն և կնքահայրս կամ կընքամայրս, զորոց՝ ի յաջորդ յօդուածդ միայ մեզ ասել։

ՅՕԴՈՒԱԾ Դ

ՅԱՂԱՑՈՒ ԿՆՔԱՀՕՐ ԵՒ ԿՆՔԱՄՕՐ, ԵՒ ՊԱՐՏՈՒԻՑ ՆՈՑԱ

31· Պարտք կնքահօր։
32· Հանգամանք նորա։
33· Աղգականութիւն հոգևոր՝ ի ձեռն մկրտութեան։
34· Զինչ եթէ ծնօղք մկրտիցեն զմանուկն։
35· Պարտ է կնքահօր զի իցէ սահմանեալ՝ ի ծնօղաց մանկանն։
36· Զկնքամօրէ։
37· Ո՞րմ չիցէ օրէն կալ կնքահայր կամ կնքամայր։
38· Ո՞ր ժողովրդապետին իցէ վանդ մեղանչել։

31· Կնքահայր է, որ ընդունի զմկրտեալն յաւազանէն, յանձն առեալ զխնամս նորին։ Ա՛ման որոյ եթէ չիցեն՝ որ ուսուցանիցեն մանկանն զհաւատս և զվարս քարիս, պարտական է ինքն ուսուցանելոյ։

32· Ոչ նուազ քան զհասակ եօթնամեայ իննդրի հաւանականաբար՝ ի կնքահայրն. վասն որոյ պահանջի նախ՝ զի հասեալ իցէ՝ ի քանաւարութիւն։ Երկրորդ՝ զի իցէ մկրտեալ։ Երրորդ՝ զի իցէ նորա դիտաւորութիւն լինելոյ մկրտելոյն՝ ի կնքահայր։ Չորրորդ՝ զի անձամբ կամ՝ ի ձեռն փոխանորդի կալցի զմկրտեալն յաւազանին, և ընկալցի զնա՝ ի ձեռանէ մկրտչին. և չէ աստ բաւական ընդունել զնա բարոյապէս, այլ ըստ հասարակաց կարծեաց աստուածաբանից՝ իննդրի ընդունելութիւն իրական։ Հինգերորդ՝ զի՝ ի ծնողաց մանկանն կամ գէթ՝ ի ժողովրդապետէն իցէ սահմանեալ կնքահայր. այլ ոչ է օրէն ժողովրդապետի սահմանել զոք, եթէ ծնողաց մանկանն զայլ ոք իցէ սահմանեալ։

33· Յառանձնական իսկ մկրտութեան ձգիցէ՞ն յանձն աղգականութիւն հոգևոր մկրտօղն և կնքա-

հայր։ — Օ՛ մկրտչէն չիք ինչ երկբայութիւն զի ձգէ. այլ զինքսիոքն հանրագոյն և հատանականագոյն կարծիք զհակառակն ունին. զի ըստ սահմանադրութեան տրիդենտեան ժողովոյ ընկալեալ ենէ՝ ի սոյնէ սուպանէն ձգեն յանձինս զաղգականութիւն. և այս՝ ի հանդիսաւոր մկրտութիւնս եւեթ ունի տեղի։

Ի պայմանաւոր մկրտութեան ձգիցէ՞ յանձն կինքսիոքն զաղգականութիւն։ — Եթէ զառաջնմէ մկրտութենէն բացասական եւեթ իցէ երկբայութիւն, ձգէ սուտգիւ. զի առ՝ի չգոյէ դրական ինչ պատճառի զվաւերականութենէ նորին, երկբորդն համարի վաւերական։ Իսկ եթէ դրական իցէ երկբայութիւն զառաջնոյն, այսինքն զի հատանական իցէ վաւերականութիւն նորին, յերկրորդումն ոչ ձգէ։

Որ վրիպակաւ զայլ ընդ այլոյ մանկան ունի՝ ի սուրբ աւազանին, ձգիցէ՞ զաղգականութիւն։ — Հատանականագոյն կարծիք հաստատեն, եթէ միայն չիցէ կինքսիոքն բացայայտեալ բանիւ չհամել երբեք զայլ ոք ընդունել յաւազանէն։

Որ փոխանակ այլոյ ուրուք բացակայի ընդունի զերեխայն՝ ի սուրբ աւազանէն, ո՞ յերկոցունցն ձգէ զաղգականութիւն։ — Հանրագոյն և ճշմարտագոյն կարծիք համարին բացակային եւեթ ձգել զաղգականութիւն, զի ըստ վերոյ տրիդենտեան ժողովոյն՝ սահմանեաւն եւեթ՝ի ծնողաց մանկանն ձգէ զաղգականութիւն։ Այս չէ ինչ փոյթ բացակայութիւն սահմանելոյ կինքսիոքն. զի որ՝ի ձեռն այլոյ գործէ, անձամբ համարի գործել։

34. Եթէ երբեք ծնօղք մկրտիցեն առ հարկի, կամ ընդունիցին՝ ի սուրբ աւազանէն զորդիս իւրեանց, ձգե՞ն ինչ արգելս խնդրելոյ զպարտս ամուսնութեան։ — Եթէ առ հարկի մկրտիցեն՝ ոչ ձգեն, ըստ հասարակաց վարդապետութեան աստուածաբանից և սրբոյ Կ՛գուիլնացւոյն. իսկ եթէ առանց հարկի մկրտիցեն, ծանր մեղանչեն, այլ տգիտութիւն ազատ կացուցանէ զնոսա՝ ի ձգելոյ յանձն արգելս։ Կ՛նայ ապա խնդրել եթէ ձգիցե՞ն զայն ծնօղք, զոր առանց հարկի և գիտութեամբ մկրտիցեն։ — Կէսք յաստուածաբանից համարին ձգել նոցա արգելս. զի նոյն օրէնք՝ որ սահմանէ ազգականութիւն

ընդ մկրտօղն և ընդ ծնօղս մկրտելոյն, ՚ի վերայ ածէ և արգելս ՚ի մէջ ծնողաց՝ որ մկրտեն զորդիս իւրեանց։ Բայց Աւարեզ, Փոնցիոյ, Վրանչինա, Ալիւա, Յալմատիկեանք և այլք չընդունին զայն հաւանականութեամբ ըստ բաւականին. զի և ոչ մի օրէնք սահմանեն զայն յայտնապէս, և ըստ ամենեցուն հաւանութեան՝ ոչ ոք անկանի իրաւամբք ՚ի պատիժ չսահմանեալ յօրինաց բացայայտակի։

35. Որ ՚ի ձգել յանձն զհոգևոր աղգականութիւն՝ պարտ իցէ կնքահօր զի իցէ սահմանեալ, և յումմէ։ — Սահման տրիդենտեան ժողովոյն է. "Եթէ բաց ՚ի սահմանելոյն կալցին և այլք (զմանուկն ՚ի սուրբ աւազանին), չձգեն ամենևին աղգականութիւն հոգևոր ,,։ Որ խնդրի ասա զի եթէ բազումք իցեն՝ որ ունիցին, և ոչ որ ՚ի նոցանէ իցէ սահմանեալ, ձգիցէ՞ն ամենեքին։ — Ակնպէտ և ոմանք յաստուածաբանից համարին ոչ ումեք ՚ի նոցանէ ձգել աղգականութիւն, իբր զի ժողովն տրիդենտեան պահանջէ՝ զի իցեն սահմանեալ, բայց հանրագոյն կարծիք համարին ամենեցուն իսկ ձգել ըստ յայտարարութեան սրբոյ ժողովոյն՝ որ տրիդենտեան սահմանադրութեանցն է աւանդապահ, և բանիւք նորին ժողովոյ ցուցանէ՝ զի զվճիռ նորին պարտ է իմանալ, ուր մի կամ երկու կնքահարք սահմանեալ կայցեն, և ոչ՝ ուր և ոչ մի որ սահմանեալ իցէ. զի յայտնապէս իսկ ասէ պլուր. "Եթէ բազումք կալցին, ձգեսցեն անտի աղգականութիւն հոգևոր ,,։ Իսկ ուր աւելի քան զերկուս իցեն սահմանեալ կնքահարք ընդդէմ սահմանադրութեան ժողովոյն, (ընդ որ ծանր մեղք են ժողովրդապետի հաւանել), հաւանականագոյն կարծիք համարին ամենեցուն նոցա ձգել աղգականութիւն եթէ ամենեքին միանգամայն կալցին զմանուկն. և սա առաւել եթէ չիցէ յայտ ոչ ՚ի նոցանէ կալեալ իցէ նախ. ապա եթէ մի ըստ միոջէ կալեալ իցեն, համարին երկուց և եթ առաջնոցն ձգել։

36. Սահմանէ դարձեալ նոյն ժողով, զի յերկուց անտի ընդունողաց զմանուկն ՚ի սուրբ աւազանէն՝ մին իցէ այր և միւսն կին, այսինքն կնքահայր և կնքամայր. վասն որոյ սահմանել երկուս կնքահարս, կամ կնքամարս երկուս՝ մեղք են, և կէսք յաստուածաբանից ծանր հա-

մարին զայն՝ եթէ մանկան արուի իցեն երկու կնքա-
մարք, կամ իցի կնքահարք կրկին, վասն յաձախելոյ
յայնժամ աղգականութեանց ընդդէմ դիտաւորու-
թեան սրբոյ ժողովոյն։ Նակ եթէ մի ոք իցէ ընդունօղն,
հաւանականապէս կարծիք ոչ դատապարտեն՝ եթէ ա-
րուի իցէ կնքամայր և եթէ, և իցի կնքահայր։

37. Պիտելի է զի չէ օրէն հրաժարելոց յաշխարհէ
արանց և կանանց, յոր և իցէ կարդ կրօնաւորելոց, լի-
նել կնքահայր կամ կնքամայր. իմն ընդունել՝ի սուրբ
աւազանէն, և ոչ թէ մկրտել։ Պարձեալ չէ օրէն ըն-
դունել՝ի կնքահայր կամ՝ի կնքամայր զարս անօրէնս
կամ զհերետիկոսս. վասն որոյ մեղանչէն ծնօղք՝ի սահ-
մանել զոք՝ի նոցանէ յընդունելութիւն որդւոց իւ-
րեանց՝ի սուրբ աւազանէն։ Նայլ ընդհակառակն օրէն
է ուղղափառի ընդունել՝ի սուրբ աւազանէն զորդիս հե-
րետիոսաց, որպէս հաստատեն Նայսմն, Նաքրուա,
Կոպաթ և այլք, եթէ միայն չիցէ վտանգ հաստատելոյ
ումեք այնուիկ զայլայլութիւն արարողութեանց խոր-
հրդոյն՝ եթէ իցեն այլայլեալ։ Նէ է օրէն ամենեցուն
լինել կնքահայր կամ կնքամայր միմեանց, և ծնօղաց՝ի
պահանջել և եթէ հարկին օրէն է։ Կայց օրէն է ամե-
նեցուն ընդունել՝ի միասին՝ի սուրբ աւազանէն զայլոց որ-
դի, և լինել մանկանն՝ի կնքահայր և՝ի կնքամայր։

38. Նեղք են ժողովրդապետի, նախ՝ մերժել զկըն-
քահայր կամ զկնքամայր սահմանեալ՝ի ծնողաց ման-
կանն, կամ ընդունել այլ ոչ՝ի նոցանէ սահմանեալս։
Երկրորդ՝ ընդունել աւելի քան զերկուս։ Երրորդ՝
մկրտել առանց կնքահօր կամ կնքամօր. և թէպէտ յա-
ռանձնական մկրտութիւնս ըստ հասարակաց կարծեաց
աստուածաբանից չեն ինչ պէտք կնքահօր կամ կնքա-
մօր, սակայն օրէն է ընդունել զնոսա։

ՑՕԴՈՒՄԱԾ Ե

ՑԱՂԱԳՍ ԴՐՈՇՄԻ

39. Հեռաւոր նիւթ դրոշմի :
40. Կարևոր իցէ իւղոյ դրոշմին օրհնութիւն , և յումիջ :
41. Մերձաւոր նիւթ դրոշմին . ձեռնադրութիւն եպիսկոպոսին իցէ նիւթ :
42. Օծումն բուրթիւ աջոյ կամ գործւով :
43. Զև դրոշմին :
44. Պաշտնեայ դրոշմին : Օրէն իցէ քահանայի դրոշմել :
45. Զի՞նչ եթէ իցէ օտարական , որ խնդրէ զդրոշմ :
46. Զի եպիսկոպոսի պարտք են դրոշմել :
47. Զի կարևոր է դրոշմ :
48. Որ առանց այնր ձեռնադրելցի :
49. Պա՞րտ իցէ դրոշմել զաղայս և զխմարս :
50. Արարողութիւնք դրոշմին :
51. Զկնքահօրէ :
52. Զայլոց ևս արարողութեանց խորհրդոյն :
53. Զօրութիւնք նորին :

39. Մուրբ Հաւատք ուսուցանեն զի Ջհմարտիւ խոր-հուրդ է դրոշմն, որպէս Դիոգինէսս Դ՚ի հրահանգս իւր առ Հայս, և ժողովն տրիդենտեան Հաստատեն, և որ-պէս ցուցեալ է յաւանդութենէ Հարց : Մեզ աստ միայ Ճառել զնիւթոյ և զձևոյ, զպաշտօնէից, զկարևո-րութենէ և զարարողութեանց նորին :

Հեռաւոր նիւթ դրոշմին է միւռոնն բաղադրեալ յապրաստամէ և՚ի ձիթոյ, և օրհնեալ յեպիսկոպոսէ վանն խորհրդոյս . և այլ է սա յիւղոյ երախայից և հի-ւանդաց : Իսկ թէ արդեօք նր և է յիւղոյ աստի զօրի-ցէ՚ի նիւթ այլոց խորհրդոց, Մուրհզ, Լայման և Հենրիկոս անզօր համարին . բայց Պելլարմինոս, Վրաս-թրոփալ, Պոնաչինա և Պարպոզա Հաւանականաբար ասեն զօրել : Այլ ընդ այն չիք երկբայութիւն, զի՚ի կատարումն դրոշմի կարևոր է ձէթ՚ի Հարկաւորութե-նէ խորհրդոյն . իսկ ապրասամ՚ի Հարկաւորութենէ պատուիրանի : Այլ թէ սա ևս իցէ կարևոր՚ի վաւե-րականութիւն խորհրդոյս, թէպետ կէսք յաստուածա-բանից Հաւանականաբար չհամարին կարևոր, այլ հա-ւանականագոյն կարծիք կարևոր համարին զայն ընդ

Պետրոսինեայ և ընդ սրբոյ Աթուինացւոյն։ Եւ հաստատեն զայն կոնդակաւ Գրիգինեայ Դ, զոր և ժողովիս փլորենտեան ընկալաւ. զի անդ քահանայապետն յայտ առնէ նուիէ դրոշմին զիաւն յօրինեալ՝ ի ձեռն և յապրաւամէ։ Եւ քանզի հաւաստի է գէթ երկբայականութիւն դրոշմին առանց ապրաւամի, ապա պարտ է կրկնել զոնէ պայմանաւ զնորհուրդն որպէս երկբայական։

40. Եպիսկոպոսին է անկ օրհնել զնւագ դրոշմին. այլ խնդիր է թէ արդեօք՝ ի հարկաւորութենէ խորհրդոյն իցէ կարևոր օրհնութիւն եպիսկոպոսական։ — Ակնաբ յաստուածաբանից ընդ սրբոյ Աթուինացւոյն կարևոր համարին վասն ասելոյ Գրիգինեայ՝ ի կոնդակին՝ թէ եաղ դրոշմին յեպիսկոպոսէն է օրհնեալ. այլ ասաի մարթ է և զնետ բերել զկարևորութիւն եւթ ըստ հարկաւորութեան պատուիրանի։ Ոմն որոյ հաւանական է կարծիք այլոց, զի որպէս օրէն է Պապին տալ քահանայից հրաման դրոշմելոյ՝ նոյնպէս կարիցէ տալ հրաման և օրհնելոյ զնւագ դրոշմին։ Բայց առաջնոյն կարծիք ապահովագոյն է, և՝ ի կատարումն խորհրդոյ զապահովագոյնն պարտ է ունել։ Ոչ է օրէն, և խստիւ արգելեալ է, մի զնետրուին օրհնեալ միւռոն՝ ի կիր արկանել՝ ի կատարումն խորհրդոյս, թէպէտ և ոչ ինչ կարիցէ այն ամանաել վաւերականութեան նորին։

41. Երձաւոր նուիէ դրոշմին է՝ օծումն ձակատու նուիրելոյն, օծումն խաչանիշ, և օծումն՝ ի ձեռն պաշտօնեի. երեքին և այսոքիկ կարևոր են ըստ հարկաւորութեան խորհրդոյն, որպէս ուսուցանեն աստուածաբանք առ հասարակ։ Ոչ սակաւք յաստուածաբանից վասն բանին՝ որ՝ ի Ծործս առաքելոց, «Յայնժամ եդին զձեռս՝ ի վերայ նոցա, և առնուին Հոգի սուրբ», կարևոր համարին՝ ի վաւերականութիւն խորհրդոյն զտարածումն ձեռաց եպիսկոպոսին զղկլսով նուիրելոյն յասել զաղօթսն նախ քան զօծումն, որպէս պատուիրէ լատին Աշտոցն, և որպէս ենթադրէ մերս զձեռնադրութիւն՝ յասելն զկնի օծման զաղօթսն Տէր Յիսուս Քրիստոս էր և ողորմած։ Բայց հանրագոյն կարծիք ոչ՝ ի հարկաւորութենէ խորհրդոյն համարին զայն, շատ համարեալ զձեռնադրութիւնն՝ զոր եպիսկոպոսն յօծանել անդ զձակատ նուիրելոյն առնէ։ Եւ զայս հաստատէ

նոյն ինքն Յուվինէոս քահանայապետ յասելն ՚ի կոն-
դակին. “Վոխանակ ձեռնադրութեան տայ եկեղեցի
զդրոշմ,,: Յե ՚ի կանոնս “Ո՛չ ծամբ ՚ի ձակատն նշա-
նակի ձեռնադրութիւն, որ այլով անուամբ ասի դրոշմ,,:

42. Պարտ է եպիսկոպոսին քուրթիւ աջոյ ձեռին օ-
ծանել. վասն որոյ մեղանչէ յօծանելն ձախոյ ձեռամբ,
և ըստ հանրագոյն կարծեաց ծանր մեղանչէ. թէպէտ
և ոչ սակաւք ևս յաստուածաբանից ազատ կացուցա-
նեն զնա հաւանականաբար ՚ի ծանր մեղաց, և ՚ի մե-
ղաց իսկ՝ եթէ ախտացեալ իցէ աջովն: Իսկ կարծիք ո-
մանց՝ թէ գործեալ ևս օրէն իցէ տալ զդրոշմ որպէս
զվերջինն օծումն ՚ի սրածութեան, չէ ամենևին ընդու-
նելի. զի ոչ ևս իցէ անդ ձեռնադրութիւն, կարևոր ՚ի
դրոշմի, որ ՚ի վերջինն օծմանն չէ կարևոր: Յե չափ մե-
ռանին, որչափ հինչ կարևոր է հինքելոյ խաչանիշ զձա-
կատ նուիրելոյն:

43. Օ՛ձևոյ դրոշմին այլ և այլ կարծիք են: Ոմք
միանգամ՝ ասեն ձեռնադրութեամբ կատարել խոր-
հրդոյն, զաղօթս ձեռնադրութեանն համարին ՚ի ձև:
Ոմք, որք և զձեռնադրութիւնն և զօծումն ասեն ՚ի
հարկաւորութենէ խորհրդոյն, թէ՛ զաղօթս ձեռնա-
դրութեանն և թէ որ ինչ յօծանել զձակատն ասէ ե-
պիսկոպոսն՝ համարին ՚ի ձև: Ոմք դարձեալ թէպէտ
և զձեռնադրութիւն կարևոր ասեն, այլ միայն զբանս
օծութեանն համարին ՚ի ձև: Ոայց հանրական և ճըշ-
մարիտ կարծիք քանզի օծումն ևեթ ձակատուն՝ յո-
րում է և ձեռնադրութիւն՝ որպէս ասացաք՝ համարին
՚ի նիւթ, վասն այնորիկ և զյարակից նորին բանս Ոչ
անույշ և այլն, համարին ՚ի ձև. որպէս և սուրբ Ոգու-
նայն հաստատէ, և նոյն ինքն քահանայապետն Յե-
պինեսս ՚ի կոնդակի իւրում յայտ առնէ: Յե պետէր է
զի այլ է ՚ի լատինականէն ձևն յունական, յորմէ և
մերս առեալ է. բայց Ուրբանոս ի վաւերական և զայն
յայտ արար:

44. Պաշտօնեայ խորհրդոյ դրոշմին է եպիսկոպոսն,
որպէս յայտ առնէ տրիդենտեան ժողովն. այլ առ ա-
րևելեայս վասն վտանգին անդրօրմ վախճանելոյ, և
վասն առաւելագոյն կարևորութեան խորհրդոյն քնա-
կելոցն ՚ի մէջ անհաւատից, սովորութիւն է և քահա-

նայից պաշտել զայն։ Այլ դուն ուրեք և առ արևմըտեայս իսկ ըստ պիտոյից ժամանակին՝ հրամանաւ սըրբազան Պապին լեալ է քահանայից պաշտել զնորհուրդս զայս, որպէս ցուցանեն հրամանադիրք մեծին Գրիգորի, Ալեքսեսարոսի Բ, Նիկողայոսի Դ, Յոհաննու ԺԲ, Ուրբանոսի Ե, Լևոնի Ա, Գրիգորիոսի Զ, Ակքստոսի Ե, Բենեդիկտեայ ԺԳ, Կղեմայ ԺԱ, Բենեդիկտոսի ԺԴ, և այլոց քահանայապետաց Հռովմայ. որպէս և ցարդ ի Հենաստան և յայլ կողմանս ուրեք անհաւատից, ուր սակաւք են եպիսկոպոսունք և հալածեալք, նոյն իշխանութիւն է քահանայից։

45. Եպիսկոպոս որ զրոշմէ ի վիճակի այլոց և զկպատակս իւր՝ ծանր մեղանչէ և կախեալ մնայ ի պաշտամանէն ըստ սահմանադրութեան տրիդենտեան ժողովոյ։ Իսկ որ յիւրում վիճակի զկպատակս այլոց զրոշմէ, ոչ գործէ ըստ օրինի. այլ համարի անդ սովորաբար մեկնողական հրաման հովուի նոցին։

46. Ծանր դարձեալ մեղանչէ ըստ հանրական կարծեաց, որ անպիտի առնէ զրոշմել զկպատակս իւր։ Ոչ ոք պարտ եպիսկոպոսի աւելի քան զտասնեակ մի ամաց յամել շրջելոյ ընդ վիճակ իւր։

47. Ո կարևորութենէ խորհրդոյս այլևայլ ազգ վարդապետեն աստուածաբանք։ Կէսք համարին ծանր մեղանչել որոց անպիտի առնիցեն ընդունել զայն, զանազանել զանձինս ի զօրութենէ՝ զոր խորհուրդս այս տայ ընդդէմ փորձութեանց։ Իսկ այլք ոչ ամենեցուն համարին զայս ծանր պարտս, սակայն ամենեքին միաբանին ասել թէ ծանունս մեղանչեն՝ որք ի վտանգի գոլով անկանելոյ ի շնորհացն Աստուծոյ, կամ առ արհամարհանաց և կամ վտանգաւոր գայթակղութեան այլոց՝ անպիտի առնեն ընդունել զնորհուրդս զայս։ Եւ Բենեդիկտոս ԺԳ հրամայէ եպիսկոպոսաց ազգ առնել ժողովոցդեան, զի «ծանր մեղանչեն այնոքիկ, որք կարեն ընդունել զգրոշմ և անպիտի առնեն»։

48. Այլ որ հաւանականաբար համարի ընկալեալ զգրոշմ, ոչ ևս պարտական է ընդունելոյ զայն. որպէս նոյն ինքն Բենեդիկտոս ԺԳ հաստատէ։ Կէսք յաստուածաբանից ծանր մեղս համարին ընդունել զխորհուրդն իսկ հերաց՝ մինչև ընկալեալ զգրոշմ. բայց հան-

բական կարծիք չընդունին զայն, և ոչ սակաւք զայլոց իսկ կարգաց ընդունելոց յառաջ քան զդրոշմ՝ ազատ կացուցանեն ի ծանր մեղաց։

49. Ծնեպետ և արեւմտեան եկեղեցիք չտան զհօրհուրդս զայս սովորաբար յառաջ քան զՀասակ եօթնամեայ, այլ հաստատեն աստուածաբանք և նոյն ինքն քահանայապետն Ինեդիկտոս՝ զի օրէն է տալ զայն տղայոց, ոչ միայն ի վտանգի կենաց՝ այլ և ի չկարել եպիսկոպոսին շրջել ստէպ ընդ վիճակ իւր, և կամ վասն այլոց պատճառաց։ Յե ի ծնէ յհինգերաց եւս օրէն հաստատի նոյն ինքն Ինեդիկտոս տալ անպատճառ զդրոշմն։

50. Իսկ եթէ ի պաշտաման խորհրդոյս անիծեալ լիցի ոք զսահմանեալ եկեղեցական զգեստուց և զտեղւոյ, ոչ ինչ աւելի քան զներելի մեղս գործէ. միայն ոմանք յաստուածաբանից ոչ ազատ ի ծանր մեղաց համարին զպաշտօնեայ, որ առանց իրիք եկեղեցական ըզգեստուց պաշտիցէ զհօրհուրդս։

51. Պարտ է և աստանօր ծնողաց մանկանն կամ պաշտօնէի խորհրդոյն սահմանել կնքահայր կամ կնքամայր. և ծանր մեղք են առանց այսորիկ պաշտել զհօրհուրդն, բայց միայն ի վտանգի կենաց առ ի չգոյէ ուրուք կալոյ կնքահայր։ Յե պարտ է կնքահօրն կամ կնքամօր, զի ընկալեալ իցեն զդրոշմ. և զի ուստերայ իցէ կնքահայր, և դստերայ կնքամայր. և որ ինչ այլ զկնքահօրէ և զկնքամօրէ մկրտութեան ի վեր անդր ասացաք (37)։ Յե շատ է նոցա ի խորհրդեանս յայսմիկ գնել զաջ յաջ ուս նուիրելոյն։

52. Պարտ է ժողովրդապետի արձանագրել զանուն դրոշմելոյն և զկնքահօր նորա կամ կնքամօր. ոչ միայն վասն հոգևոր ազգականութեան նոցա, այլ և առ ի կարօղ լինելոյ ընդունել ըստ օրինի զսուրբ կարգս։

53. Իսկ զօրութիւնք խորհրդոյս են, նախ՝ տպաւորել զկնիք. երկրորդ՝ տալ ընդհս զդէմ ունելոյ փորձութեանց. և երրորդ՝ հոգևոր ազգականութիւն կընքահօրն և կնքամօր ընդ դրոշմելոյն։

ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՑ ԽՈՐՀՐԴՈՑ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

ՋԵՈՒԹԵՆՔ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

1. Խնդիրք զԵուԹենէ սրբոյ ՀաղորդուԹեան:
2. Կարևոր իցէ ՀաղորդուԹիւն ՀարկաւորուԹեամբ միջնորդի:
3. Միով ևեթ տեսակաւ քահանայապործել իցէ անվաւեր Թէ ըստ ոչ օրինի միայն:
4. Դէպք ի բաց առեալ:
5. ՋօրուԹիւնք սրբոյ ՀաղորդուԹեան:
6. ՏևողուԹեան տեսակացն արդասիք:
7. Որ Հաղորդի ներելի մեղք:

1. ՀաղորդուԹիւն է Խորհուրդ սքանչելի և աբեհաս Երիսպոսէ ընդ պեսաչօք հայի և գինւոյ ի անուանդ Հոգեւոր սահմանեալ Աստուածոյ: Խնդիրս ոչ սակաւս յուզին զաս սականք զԵուԹենէ խորհրդոյս, զորս Թողեալ տեսականացն աստուածաբանից՝ ասասցուք աստ որ ինչ բարոյականի մասինն է:

2. Կարևոր իցէ ՀաղորդուԹիւն ՀարկաւորուԹեամբ միջնորդի, Թէ ՀարկաւորուԹեամբ պատուիրանի ևեԹ: — Ոչ է մարԹ երկբայել ընդ կարևորուԹիւն սրբոյ ՀաղորդուԹեան ՀարկաւորուԹեամբ պատուիրանի, ոչ միայն եկեղեցականի՝ այլ և աստուածայնոյ, զի տերունական է Հրամանն. "Օ՛այս արարէք առ իմոյ յիշատակի": Բայց և ընդունելի է ամենայն աստուածաբանից, զի ՀաղորդուԹիւն ըստ իրապես ընդունելուԹեան ոչ է կարևոր ՀարկաւորուԹեամբ միջնորդի: Այնպէս ապա խնդիրս՝ Թէ արդեօք իցէ այն դէԹ ըստ ըղձից կարևոր ՀարկաւորուԹեամբ միջնորդի: — Ծանեպէտ և կէսք յաստուածաբանից ժխտեն, իբր զի խորհուրդս այս ոչ է սահմանեալ առ ի տալ զառաջինն ընորհս, բայց Հաւանականապէսն Հաստատեն զայն

սուրբ Աստուածային, Սոթոյ, Քրոնչինա, Սալմատիկեանք և այլք վասն տէրունեան բանին. "Լեր ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձին,,:

Այլ այն հաւաստի է զի հաղորդութիւն իրական, կամ գեթ ըղձական, կարևոր է առ՝ի պահել զհոգևոր կեանս, որպէս սուրբ Աստուածային և աստուածաբանք առ հասարակ ուսուցանեն. զի որպէս մարմին չկարէ կեալ առանց նիւթական կերակրոյ, այսպէս և ոչ հոգի առանց հոգևորականին: Այսն որոյ յաւելուն Լուկոյ, Սոթոյ, Սալմատիկեանք և այլք, զի թէպէտ և պատուիրան է միանգամ՝ի տարւոջ հաղորդելոյ, այլ մարթ է պատահել՝ զի պարտ իցէ ումեք և այլևայլ անգամ հաղորդել, յորժամ հարկ լինի նման այն առ՝ի կալ՝ի ընդհս Աստուծոյ:

3. Լինի հաղորդութեան է հայ և զինի, և չէ երբեք օրէն որ և է պատճառաւ սրբագործել զհայ և առանց զգինի. զի այսպէս Քրիստոս աւանդեաց առաքելոց, զերկաքանչիւր միանգամայն: Այսն որոյ պատուիրանս այս ոչ եկեղեցական միայն է, այլ և աստուածային անեղիկայապէս՝ որպէս ուսուցանեն աստուածաբանք առ հասարակ. և ոչ գլխոյն եկեղեցւոյ օրէն է անօրինել զայս, վասն կարի հաւանականութեան՝ զի՝ի պատարագի առնի կատարի խորհուրդն, և զի առ այն կարևոր է ըստ ձշմարիտ կարծեաց՝ քահանայագործութիւն երկոցունց ևս տեսակաց. զի առանց այսորիկ ոչ բացատրի հեղումն արեան, վասն որոյ և ոչ բաւական նապէս յանդիման առնի զենումն որ՝ի խաչին, յորոյ՝ի յիշատակ աւանդեաց փրկիչն մեր զխորհուրդ պատարագին, որպէս ժողովն արիդենատեան աստուածաբանէ: Եւ ոչ անհաւանական ինչ կարգինաչն Լուկոյ ընդ բազում աստուածաբանս հաստատէ ընդդեմ այլոց՝ զի եթէ կամիցի քահանայն զմի առնի՝ի տեսակացն սրբագործել, անվաւեր է սրբագործութիւնն. քանզի պատճառ խորհրդոյս անբաժանելի է՝ի պատճառէ պատարագին, այնու զի քահանային առ՝ի պատարագել առնի տուեալ է իշխանութիւն խորհրդոյս, որպէս՝ի ձեռս իսկ ձեռնադրութեանն յայտ է. "Ա՛ր ընկալ, քանզի առեր կարողութիւն ընդհօքն Աստուծոյ կնքել և կատարել

զսուրբ պատարագս յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւդ եթէ սրբագործութիւն երկաքանչիւրոց տեսակացն ոչ յէութիւն եւթէ պատարագին է կարևոր, այլ և յէութիւն խորհրդոյն, ապա որ ոչն մատուցանէ զպատարագն, և ոչ զխորհուրդն կատարէ։

4. Բայց մարթ իսկ է պատահել, զի իցէ ստուգապէս վաւեր և օրինաւոր իսկ սրբագործութիւն միոյ եւթէ ի տեսակաց. որպէս եթէ քահանայն յետ սրբագործութեան ծանիցէ զի ջուր կամ քացախ փոխանակ գինւոյ սրբագործեալ է, և ոչ կարիցէ գտանել անդ այլ գինի, կամ գտանել առանց վտանգի կենաց կամ ծանր գայթակղութեան. և կամ յետ սրբագործութեան հացին՝ հուր անդ բորբոքեսցի կամ հէն անդր արշաւեսցէ, որպէս ուսուցանեն Սուարէզ, Ղեղիոյ, Պոնաչինա, Սալմատիկեանք, Պուսեմպայ և այլք առ հասարակ։

5. Օրութիւնք սրբոյ հաղորդութեան են, նախ և գլխաւորապէս՝ աճումն շնորհաց, որպէս յայտ արար Ժողովն տրիդենտեան. և ըստ պատահմանն՝ տալ և զանաչին շնորհս, այսինքն յորժամ ոք չգիտելով զի ի մահաւէժ մեղս կայ, կամ համարելով ունել զղջումն կատարեալ՝ անկատար ղղջմամբ հաղորդեսցի. որպէս ուսուցանեն սուրբ Ղեւնացին, Սուարէզ, Սոթոյ, Վոլեթոյ, Ռոնքաւեա, Սալմատիկեանք և այլք առ հասարակ։ Օրի յատուկ է ամենայն խորհրդոց տալ շնորհս՝ որոց ոչն դնեն այնմ խափան. և զղջացեալն, թէպէտ և անկատար ղղջմամբ, ոչ դնէ խափան՝ի բաց մերկացեալ զպանկութիւն մեղաց զներգործական և զնաևական։ Երկրորդ՝ տալ Թողութիւն ներելի մեղաց, որպէս ուսուցանեն աստուածաբանք առ հասարակ ընդ սուրբ Ղեւնացւոյն, զոր և Ժողովն տրիդենտեան յայտ առնէ կոչելով զսուրբ հաղորդութիւնն «Դեղեցիկ, որով սրբիմք՝ի ներելի մեղաց, և՝ի մահացուացն պահիմք»։ Ասն որոյ երրորդ զօրութիւն սրբոյ հաղորդութեան է՝ պահել զմեզ՝ի մահաւէժ մեղաց՝ սանձահարելով՝ի մեզ զպանկութիւն, զօրավիգն լինելով ընդդեմ փորձութեանց, և տալով մեզ գնալ՝ի հանապարհս պատուիրանացն Աստուծոյ։ Զորրորդ՝ Թողութիւն ժամանակաւոր պատժոց մեղաց. զոր

ոչ ուղղակի ընդհէ, այլ միջնորդաւ ներգործուԹեանց սիրոյ՝ զորս աղդէ ՚ի հոգի։ Հինգերորդ՝ քաղցրուԹիւն հոգևոր, այսինքն դիւրուԹիւն առնելոյ զհաճոյսն Աստուծոյ։ Վեցերորդ՝ միացումն ընդ Քրիստոսի, ըստ նորին իսկ բանի. "Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցէ և ես ՚ի նմա,,։ Յոթներորդ՝ ժառանգուԹիւն յաւիտենական կենաց, ըստ տերունեան դարձեալ հրամանին. "Եթէ ոք ուտիցէ ՚ի հացէ յայսմանէ, կեցցէ յաւիտեան,,։

6. Վիտելի է զի բազումք յաստուածաբանիցն յոյժ հաւանականաբար հաստատեն, զի ցորչափ տևեն տեսակք խորհրդոյս ՚ի ստամոքսի, ևս քան զևս աձեն ընդհք ՚ի հոգւոջ հաղորդելոյն։ Այլ Աննովկենտիոս ԺԱ արգել որպէս հակառակ բարեկարգուԹեան, չտալ ումեք ՚ի հաղորդուԹիւն կրկին մասունս, և մի մասունս քան զսովորականն ստուարագոյնս։

7. Որ ներգործական ներելի մեղաց հաղորդի, զործիցէ այնու մեղս։ — Եթէ մեղքն ուղղակի ՚ի սուրբ հաղորդուԹիւն անդր հայիցին, որպէս Թէ ոք ՚ի ցոյց մարդկան կամ կամաւոր զեաղմամբ մտաց հաղորդիցի, մեղանչէ ընդդէմ յարգուԹեան խորհրդոյն աներկբայապէս՝ Թէպէտ և ոչ ծանոյ ինչ մեղս. և որպէս սուրբ Աստուածային ասէ, զրկի այնուիկ ՚ի կազդուրանաց հոգւոյն, այլ ոչ ՚ի յաւելուածոյ շնորհաց և սիրոյ։ Իսկ եԹէ մեղքն այն ներելի ոչ հայի ՚ի սուրբ հաղորդուԹիւնն, որպէս եԹէ ոք ներգործական ըղձիւ առնելի մեղս ինչ հաղորդեսցի, ոչ ինչ մեղանչէ հաղորդելովն. զի մեղքն այն ոչ միայն չէ ինչ խափան շնորհաց որպէս ներելի, այլ և ոչ ընդդէմ յարգուԹեան խորհրդոյն է զրականապէս։

Իսկ զայլոց պիտելեաց յաղագս նիւԹոյ և ձևոյ հաղորդուԹեան, յիւրում տեղւոջն ձառեսցուք ՚ի քննուԹեան ձեռնադրելեաց (146—151)։

ՅՕԴՈՒԱԾ Բ

ՋՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԵՆՆ ԽՈՐՀՐԴՈՑ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

8. Պարաք Ժողովրդապետաց ունելոյ ՚ի պահեստի և մատակարարելոյ զսուրբ խորհուրդն:
9. Կարէ՞ն քահանայք առ հասարակ մատակարարել զհաղորդութիւն, կա և սարկաւագունք:
10. Օրէ՞ն էր վոքը ասպիճանաւորաց, և աշխարհականաց իսկ, ՚ի պահանջել հարկին հաղորդել զայլս և հաղորդիլ իւրովք:
11. Օրէ՞ն էր քահանայի վասն բարեպաշտութեան հաղորդիլ իւրովք:
12. Ո՞րպէս պարտ էր և օրէն տալ զԹոշակ:
13. Օրէ՞ն էր հաղորդել որովք և էր մատամբք:
14. Օրէ՞ն էր հաղորդել երկոքումբք կա տեսակօք:
15. Օրէ՞ն էր հաղորդել զայսանի մեղաւորս:
16. Օրէ՞ն էր հաղորդել ՚ի հոգեհանգստեան պատարագի:
17. Ե՞րբ օրէն էր հաղորդել:
18. Եթէ մնայցեն փշրանք:

8. Որպէս քահանայիս և եթէ իշխանութիւն է սրբագործելոյ, նոյնպէս և նոցա միայն անկ է մատակարարել զայն: Վասանզի թէ ժողովրդապետաց է անկ ըստ պաշտամանն. վասն որոյ պարտ է նոցա հոգ և խնամ ունել՝ զի սուրբ խորհուրդն հաղորդութեան կայցէ միշտ յեկեղեցւոջ ՚ի պահեստի մեծաւ յարգութեամբ, այսինքն ՚ի պատշաճ տապանակի, ձրագ առ նովաւ վառեալ զամիս և զղնիշեր: Ի ծանր մեղք են առանց ձրագի ունել զայն. բայց եթէ ժամաւ չափ անփոյթ ոք արասցէ զայնմանէ, ՚ի ներելի մեղս համարի:

Պարտ է նոցա դարձեալ մատակարարել զայն, ոչ միայն հիւանդաց ՚ի հոգեվարս, այլ և ամենեցուն իսկ խնդրողաց ըստ պատշաճի և ըստ ժամանակի: Այլ զարդիս ըստ հասարակաց ընդհանուր սովորութեան օրէն է և ամենայն քահանայիս մատակարարել զսուրբ հաղորդութիւն, բայց ՚ի յեղին Թոշակէ, և ՚ի զատիկան հաղորդութենէ: Ասն որոյ յաւագ հինգշաբաթի և յաւուր սրբոյ զատկին ոչ է օրէն յայլ եկեղեցիս բայց ՚ի ժողովրդապետականաց, և ոչ յեկեղեցիս կրօնաւորաց, հաղորդել զոք և յայնցանէ՝ որոց ընկալեալ էին զզատկական հաղորդութիւն:

9. Այլ սարկաւագաց չէ օրէն առանց յայսանի հրա-

մանի եպիսկոպոսին կամ ժողովրդապետի հաղորդել զոք· ապա թէ ոչ, անկանին յանկանոնութիւն: Զի թէպետ և ի հին ժամանակս և սարկաւագայ հրաման էր մատակարարելոյ զհաղորդութիւն, այլ արդ ի ժամանակի հարկաւորութեան ևեթ է հրաման, որպէս սահմանեցաւ ի ժողովն Կարթագինեայ: Այլ թէ հարկաւորութեամբ զոր իցէ խմանալ, Հաբերտ և Յուրնելի համարին զյետին· բայց այլք յաստուածաբանից Յուարէզ, Գայման, Վասթրոիալ, Ոսկէ, Վռնչէնա, Ալմատիկեանք և այլք գրեթէ առհասարակ, զոր և իցէ հարկաւորութիւն և պատճառ իրաւացի բաւական համարին· որպէս եթէ ժողովրդապետն զբաղեալ կայցէ ի մեծի տանի, և կամ եթէ յաձախութիւն մեծ իցէ հաղորդելեաց և այլն: Պարտ է սարկաւագի ի հաղորդելն արկանել շապիկ, և ուրար ուսըն դանութ:

10· Ի ժամանակի հարկաւորութեան օրէն է քահանայից առ հասարակ, և սարկաւագաց, տալ թոշակ հիւանդաց ի պակասել ժողովրդապետի, և ի հակառակել իսկ նորին յանիրաւի՝ որպէս ուսուցանեն աստուածաբանք գրեթէ առ հասարակ: Իսկ Յուարէզ, Ալէնցիա, Կայեթանոյ և այլք, զորոց կարծիս հաւանական համարին Ոսկէ և Վռնինքիոյ, հաստատեն զի յայնպիսւոյ կարևորագոյն հարկի և փոքր աստիճանաւորք և աշխարհիկք կարեն իւրովի հաղորդել: Զի յայնժամ ի միջէ կողմանէ ստիպէ հրաման աստուածային, և ի միւսմէ չիք բացայայտ արգել· և եթէ նախնի հաւատացեալք վասն ժամանակին հարկաւորութեան՝ ածէին ի տունս իւրեանց զսուրբ խորհուրդն առ ի հաղորդել, ընդէր ապա և արդ ի հարկաւորութեան մանաւ չիցէ օրէն: Եւ եթէ օրէն իցէ նոցա յայնժամ հաղորդել իւրովի, ապա օրէն է և հաղորդել զայլ՝ որպէս նոյն աստուածաբանք հաստատեն: Եւ ոչ հակառակն սովորութիւն զօրէ ինչ յայսմիկ· զի դուն ուրեք պատահել հարկիս չկարէ տեղի տալ սովորութեան:

Իսկ յաղագս պարտուց ժողովրդապետի ի հաղորդել զըմբռնեալս ժանտախտիւ՝ ասացաք ի վեր անդր (գլ· է· 28):

11· Հաւանական է զի և արտաքոյ վտանգի մահուան և առանց հարկաւորութեան օրէն իցէ քահանային, առ՝ի չգոյէ անդ այլոց ուրուք քահանայի որ զնա հաղորդիցէ, հաղորդել իւրովի վասն ջերմեռանդութեան· զի և ոչ մի ինչ օրէնք արգելուն զայս: Զմանք յաստուածաբանից օրէն համարին զայս և սարկաւագաց, վասն հնորհելոյ նոցա զայս նիկիական ժողովոյն՝ի ԽԴ կանոնի:

Իսկ յաղագս վանորէից թէ արդեօք և երբ օրէն իցէ նոցա մատակարարել զսուրբ հաղորդութիւն, ասացուք՝ի Հառս արտուստութեանց նոցա (գլ· Ի· 251): Եւ թէ ուր զզաւակականն հաղորդութիւն օրէն իցէ առնել սպասաւորաց վանորէից և օտարականաց, ասացաք՝ի վեր անդր (գլ· ԺԲ· 12):

12· Պարտ է յարգութեամբ և ըստ եկեղեցական արարողութեան մատակարարել զհաղորդութիւն: Ոմանն որոյ նախ՝ պարտ է քահանային, ուր իցէ ազատութիւն, մի առանց Հրագաց և շապկի և ուրարի, և կամ առանց շուրջառի, ածել զսրբութիւն առ հիւանդս: Յուարէզ, Յոնքալեա և այլք մահուամբ մեղս համարին զանց զշապկաւ և զուրարաւն առնել, և նեբելի և եթ մեղս զտանել առանց Հրագաց: Իսկ՝ի հարկաւորութեան ժամանակի օրէն է տալ զթոշակ առանց սպասուց իսկ և Հրագաց· զի չէ պարտ վասն արարողութեանց զրկել զհիւանդն յայնքան հնորհէ: Վասգուալիկոյ օրէն համարի հրամանաւ եպիսկոպոսի խոյր՝ի գլուխ ածել զսրբութիւն՝ի գիւղօրէս ընդ անդաստանս· և Լաքրուա, Պոնաչինա, Յալմատիկեանք և այլք օրէն համարին քահանային կրելոյ զսրբութիւն աձապարել իսկ զընթացս, առ՝ի ժամանել տալ զթոշակ· վասն որոյ և հեծեալ իսկ օրէն է նմա ածել զայն, մանաւանդ եթէ հեռի ուրեք աճիցէ, և կամ վասն անհարթութեան օդոյ դժուարին իցէ հետևակել· զոր և սրբոյն Կարոլոս Պորրոմեայ պատմի նեբեալ: Օրէն է դարձեալ ունելեաւ զթոշակ մատուցանել ըմբռնելոց ժանտախտիւ· նոյնպէս և որոյ չկարիցեն առ պապակի կանել ինչ՝ օրէն է տալ ջրախառն զթոշակ դրգալաւ: Իսկ առ հիւանդս, որ չկարեն հաղորդիլ, արգելեալ է՝ի սրբոյն Պիոսէ՝ մի ածել զսրբութիւն յերկրպագութիւն եթէ:

13. Ի յետին կամ՝ի յոյժ ծանր հարկաւորութեան հաւանականաբար օրէն է քահանայի և այլովք մատամբք հաղորդել, եթէ բոլթ մատն նորին կամ ցաւ ցամաքն իցէն ախտացեալ: Իւ կէսք յաստուածաբանից առանց իսկ հարկաւորութեան օրէն համարին զայս քահանայի, որոյ առաջին մատունք արգելեալ իցեն ձեռնադրութեամբ, իբր զի ամենայն իսկ մատունք քահանայի օծեալ են: Ասյց Պանագիա, Տիանա, Անձնցի և այլք ոմանք չընդունին զայս. զի Թեպետ և բովանդակ օծեալ են ձեռք քահանայի, այլ ըստ արարողութեան եկեղեցւոյ՝ առաջնովք մատամբքն պարտ է նմա պաշտել զնորհուրդն: Իսկ որոյ առաջին մատունք այնպէս իցեն արգելեալ՝ զի չկարիցէ բեկանել զնշխարն, միաբանին աստուածաբանք չկարել նմա պատարագել. քանզի արգելուն կանոնք չձեռնադրել զայնպիսին. և ընդհանուր կանոն է, զի որ ինչ խափանէ զոք չընդունելոյ զկարգ՝ խափանէ և՛ի պաշտելոյ զայն:

14. Պիտելի է զի ըստ արդի սովորութեան չէ օրէն, առանց հրամանի սրբազան Պապին, հաղորդել զոք ընդ երկոքումբք տեսակօք. և ոչ ընդ տեսակաւ և եթէ զինուոյ՝ առ հարկի չկարելոյ հիւանդին կլանել զմիսն տեսակ: Իւ լատինս արգելեալ է չհաղորդել զոք առանց իրիք պատճառի՛ի մանկ ժամարարին, այլ այլ մանուսն վասն հաղորդելեաց սրբագործել: Ոչ օրէն հաղորդել և զմանկունս չև հասեալ՛ի տիս ընտրութեան, և ոչ զի՛ ծնէ չիմասս, որպես՛ի վեր անդր ասացաք. (գլ. ԺԲ. 42. 43):

15. Ոչ է օրէն հաղորդել և զյայանի մեղաւորս, եթէ չիցէ նոցա յայտնապէս ապաշխարեալ, որպես՛ի վեր անդր և զայսմանէ ասացաք (գլ. ԺԴ. 5): Ոմանք մեղանչէ և որ ինքն՛ի մահուլսի մեղս՝ հաղորդէ զոք, որպես Հաստատեն Մուարիզ, Լայման, Ասնքալեա, Կոնեթ, Վիւա և այլք: Մեղանչէ և որ զրկէ՛ի հաղորդութենէ զդատապարտեալն՛ի մահ, եթէ իցէ զըղջացեալ և խոստովանեալ, Թեպետ և ոչ ինչ աւելի մընայցէ նմա քան զԺամ մի կենայ:

16. Ըստ լատին արարողութեան ոչ է օրէն սեապոյն սպասուք մատակարարել զհաղորդութիւն, վասն որոյ և ոչ՛ի պատարագի հոգեհանգստեան՝ որ առ նոսա սեաւ սպասուք միշտ մատուցանի:

17. Որչափ ես յամենայն աւուր՝ քայ յաւագ ուրբաթէ, և յամենայն իսկ ժամ տունջեան տալ զսրբութիւն. զի չկաց արգել ինչ առ այս սահմանեալ, որպէս հաստատեն Ազորիոյ, Սիլուիոյ, Վռասթրոփալ, Պոնաչինա, Սալաս, Լաքրուա, Ռոնքալեա և այլք: Այլ Հայրն Աւարեզ ածէ զվկայութիւն սրբոյն Ամբրոսիոսի՝ առ որով ընդ երեկս հաղորդիւն բաղումք: Այլ յետ մահոյ արևու և՛ի գիշերի չէ օրէն հաղորդել, բայց միայն՝ ի վերջին Թոշակ, և կամ վասն այլ ինչ օրինաւոր պատճառի՝ որպէս ասեն նոյն աստուածաբանք և այլք. զի և ոչ՝ ի ձրագալուցի գիշերին օրէն է լաւինաց առանց հրամանի հաղորդել:

18. Եթէ յետ ձաշակելոյ զլուացուկս բաժակին տեսցէ ժամարարն փշրանս ինչ՝ ի մաղզմայն սրբագործեալս, եթէ մանունք իցեն և եթէ մեծամեծք, պարտ է նմա ձաշակել զայնս: Այլ եթէ դարձեալ իսկ իցէ յաւանդատուն, և՛ի սուրբ սպասուցն մերկացեալ, օրէն է նմա ձաշակել զայնս՝ որպէս ուսուցանեն Կապադովկ, Կրանատոյ, Ջիանա, և այլք: Այլ Ռենեդիկտոս ԺԴ յաւելու՝ զի եթէ մերկացեալ իցէ քահանայն՝ ի սուրբ զգեստուցն, պարտ է նմա կամ դնել զայնս՝ ի տապանակի, կամ պահել այլում քահանայի՝ որ յայնմ առաւօտու պատարագիցէ. ապա թէ ոչ, պարտ է նմա ինքնին ձաշակել զայնս: Նոյնպէս և զնացեալս յայլմէ ումեք ժամարարէ, եթէ չիցէ մարթ ոչ այլում ժամարարի պահել, և ոչ յարգութեամբ առ վաղիւ, պարտ է նմին իսկ քահանայի ձաշակել: Դարձեալ և զփշրանս՝ որ գտանիցին՝ ի վերայ կամ արտաքոյ մարմնակալին երկայելիք, յառաջ կամ յետոյ քան զսրբագործութիւն անկեալք, պարտ է ձաշակել ընդ լուացուկս: Դարձեալ և յածել զթոշակ առ հիւանդս՝ եթէ մնայցեն փշրանք՝ ի մաղզմայն կամ՝ ի սրբատփին, և չիցէ մարթ տալ զայն հիւանդին՝ ի ձաշակումն, որպէս սովորութիւն իսկ է տալ նմա զլուացուկս սրբատփին, օրէն է և զայն նմին իսկ քահանային ձաշակել: Իսկ թէ ելք պարտ և օրէն իցէ տալ զթոշակ, ասասցուք աստ՝ ի ստորև (19 և 46):

ՅՕԴՈՒԱԾ Գ

ՊԱՐՏԻՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՑ ԶՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

19. Ե՞րբ պարտ իցէ ընդունել զթոշակ :
20. Զի՞նչ եթէ վտանգ իցէ հիւանդին վերբերելոյ զայն :
21. Եթէ նեղի հիւանդն ՚ի հաղոյ :

19. Պատուիրան հաղորդութեան երկիցս ստիպէ, մի ՚ի զատկի, և միւս ևս ՚ի վտանգ մահու : Զատկական հաղորդութենէն ասացաք ՚ի Հառեղն զպատուիրանաց եկեղեցւոյ (գլ. ԺԲ. 39). ասդ մեզ ասել աստ զթոշակին : Պարտ է ամենայն ումեք հաւատացելոց ընդունել զայն յամենայն իսկ ՚ի հաւանական վտանգս մահու. որպէս ՚ի ծանր հիւանդութեան, ՚ի դնալն ՚ի վտանգաւոր պատերազմ, ՚ի նաւարկելն ՚ի տար աշխարհ և այլն. և կանանց յառաջնուման որդեծնութեան, և դժուարածնայն՝ միշտ իսկ. որպէս ուսուցանեն բարեպաշտք առ հասարակ ընդ սրբոյ Աղուինացւոյն :

20. Հիւանդաց, որք ստէպ կրեն վերբերութիւն, ոչ է օրէն հաղորդել՝ եթէ դէթ ժամն իրք վեց չիցեն ազատ յայնմանէ. յերկբայս ևս վտանգին ոչ օրէն համարի յաքրուա ընդդէմ այլոց : Յայսպիսի դէպս պարտ է փորձ փորձել, տալով նախ հիւանդին նշխար ոչ սրբագործեալ. և եթէ ոչ տացէ զայն ՚ի դուրս, յայնժամ ապա հաղորդել զնա : Զնոյն փորձ պարտ համարին Ալամատիկեանք առնել և ՚ի ցնորս հիւանդութեան, առ ՚ի տեսանել թէ կարող իցէ հիւանդն հաղորդիլ ըստ օրինի :

21. Եթէ հիւանդն նեղի ՚ի հաղոյ, և ստէպ ՚ի հազալն բերէ խուխս, չիք ինչ անտի վտանգ, օրէն է հաղորդել զնա. զի այլ է սրկոր՝ որ զկերակուր ընդունի, և այլ հազագ՝ որ զխուխս բերէ : Այլ եթէ այնպէս սաստիկ և անընդհատ իցէ հազն, զի և կլանել զմասնիկն չկարիցէ, չէ յայնժամ օրէն հաղորդել զնա : Իսկ զհաղորդութենէն մանկանց և յիմարաց ՚ի մահու՝ ասացաք ՚ի վեր անդր (գլ. ԺԲ. 43. 44) :

ՅՕԴՈՒԱԾ Դ

ՅԱՂԱԳԱՑ ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵՍՆ Ի ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

22. Չի պարտ է խոստովանել նախ քան զհաղորդութիւն:
23. Որում ինչ ի մեղաց չետ խոստովանութեան անկանի ի միտս:
24. Որ ինչ զերծ կացուցանէ ի պարտուց խոստովանութեան նախ քան զհաղորդութիւն:
25. Որ ի պատարագէն չիշէ զմեղս ինչ իւր կամ զբանագրանս:
26. Եթէ չկայ անդ խոստովանահայր:
27. Եթէ վերապահեալ կայեն մեղքն:
28. Պարտ կայ ասել յայնժամ զվերապահեալն:
29. Չինչ եթէ բանագրանք ևս ի վերայ կայցեն:
30. Ո՞րպէս պարտ կայ խմանալ զվաղագոյնն:
31. Նոքօ թէ պատուիրանս այս չետ քահանայագործութեան ևս սահ-ման կայցէ:
32. Սոխակիցք և զանգանակապուտն պատարագիչ:
33. Սոխակիցք և զաշխարհիկս:
34. Օրէնն կայ յերկեսայս հաղորդել:

22. Որ հաղորդիլն կամիցի, և կայցէ ի խիղճ մա-հուսփ մեղաց, չքաւէ նմա զղջումն կատարեալ, այլ կարևոր է և խոստովանութիւն, եթէ ոչ հարկ ի վե-րայ կայցէ պատարագելոյ կամ հաղորդելոյ ուր չկայցէ խոստովանահայր. զի յայնժամ քաւէ զղջումն կատա-րեալ. այլ պարտ է քահանային վաղագոյն չետ պատա-րագին խոստովանել, որպէս սահմանեալ Ժողովն տրիդեն-տեան: "Որ հաղորդիլն կամիցի՝ յիշեսցէ զպատուիրան առաքելոյն. Փորչեսցէ մարդ զանձն իւր: Իսկ եկեղեցա-կան սովորութիւն չայտ առնէ կարևոր առ այս փորձ, զի ոչ աք գիտակից մահուսփ մեղաց ինչ իւրոց առանց խորհրդոյ խոստովանութեան առ սրբութիւնն մատի-կէ, թէպետ և թուիցի անձին՝ ունել զղջումն կատա-րեալ,,: Բանից ատի աստուածաբանք գրեթէ առ հասարակ հաստատեն՝ զի աստուածային է պատուի-րանս, և ոչ եկեղեցական ևեթ: Ման որոյ և չաւե-լու սուրբ Ժողովն. "Ձաւատացելոց ամենեցուն, ևս և քահանայից՝ որոց պարտ պաշտաման է պատարագել, սահմանեալ սուրբ Ժողովս պահել միշտ զպատուիրանս զայս՝ եթէ միայն չկայ անդ խոստովանահայր: Իսկ եթէ հարկ լինի քահանայի առանց խոստովանութեան պա-տարագել, վաղագոյն ապա խոստովանեսցի,,:

23· Ա՛ահաւասիկ մեղայ ասէ դիտակիւ· զի ներելի մեղք, յորոմէնք իսկ Թէ իցեն, չարգելուն՝ի հաղորդու- Թենէ, ոչ զրկելով զմեզ՝ի շնորհացն Աստուծոյ: Իսկ Թէ զրկիցեն՝ի զօրութենէ նորա, ասացաք՝ի վեր անդր (7):

Արդիւ է աստանօր, զի որ յետ խոստովանելոյ զըղջմամբ՝ի վերայ ամենայն մեղաց իւրոց՝ յիշելոյ ինչ՝ի մեղաց մոռացեալ՝ի խոստովանելն, պարտ իցէ նմա խոստովանել զայն նախ քան զհաղորդութիւն: — Հասարակաց կարծիք աստուածաբանից պարտական համարին զինա· այլ յոյժ հաւանականաբար զհակառակն հաստատեն ոչ սակաւք, և համաձայն իսկ է քանի կարծիք նոցա: Ո՛չ ի որ խոստովանին՝ կատարէ զպատուիրան խոստովանելոյ նախ քան զհաղորդութիւն, և փորձէ զանձն ըստ առաքելոյն· զի և մոռացեալն այն մեղք արձակեալ է անուղղակի: Այլ Թէպետ պարտ է ապաշխարողն խոստովանել ապա և զայն մեղս առ՝ի կատարել զնիւԹական ամբողջութիւն խոստովանութեան, այլ ոչ ևս յայնժամ ստիպէ զինա պատուիրանն խոստովանելոյ յառաջ քան զհաղորդութիւն: Ո՛չ ի խոստովանութեամբն այնուիկ հասանէ պատուիրանն այն իրուսն դիտաւորութեան, այսինքն ապահովելոյ՝ի հոգւոյ զընդրկս Աստուծոյ՝ զոր դիւրագոյն է ստանալ խորհրդով խոստովանութեան, յորում անկատար իսկ զղջմամբ քաւին մեղք: Այլ ոչ սովորութիւն հաւատացելոց զօրէ լինչ ընդդէմ. զի ոչ բան պարտուց է այն՝ այլ բան բարեպաշտութեան և գովելի յոյժ· յոր և պարտ է յորդորել զհաւատացեալս, ուր չիցեն՝ի հակառակին պատճառք: Իսկ Թէ ոք յերկբայս մահուչափ մեղաց պարտականն իցէ խոստովանելոյ նախ քան զհաղորդութիւն, տես՝ի Թիւ 34:

24· Ա՛յսացաք եԹէ չիցէ հարկ պապարտիլոյ կամ հաղորդելոյ: Այլ որ այն իցէ հարկ: — Ոչ է իմանալ հարկաւս այսուիկ ոչ զԵրեմ Եւանդն հաղորդելոյ, ոչ զաղքատութիւն քահանային՝ եԹէ չիցէ ծանր յոյժ որպէս ասէ Աքրուա, այլ պարտ է իմանալ հարկ սակապաշկան, որպէս նախ՝ Թաշակ՝ի վտանգ մահու մատուցանելոյ հիւանդի: Երկրորդ՝ եԹէ ծանր գայԹակղութիւն կամ չարահամբաւութիւն առաջի կայցէ, որպէս

եթէ մատուցեալ իցէ աք՝ի սուրբ սեղանն, և ոչ ևս կարիցէ մեկնել անտի առանց յայնմ անկանելոյ պլոյ։ Օ՞նոյն է ասել՝ եթէ քահանային ածեալ զթոշակ առ հիւանդին, և չիցէ ժամանակ կատարելոյ զխոստովանութիւնն առանց վտանգի կանխելոյ մահուն կամ չարաշտամբեալոյ հիւանդին. պարտ է յայնժամ քահանային՝ի լսել զմեղս ինչ նորա՝ տալ նմա զարձակումն, պարտ՝ի վերայ դնելով կատարելոյ ապա զխոստովանութիւնն՝ եթէ կեցցէ, և հաղորդել զնա։ Յղրոդ՝ եթէ պարտ իցէ ժողովրդապետի պատարագել՝ի լուր ժողովրդեան, և չիցէ աք անդ այլ ժամարար, և կամ չիցէ մարթ նմա առանց անուանարկութեան հրաժարել՝ի պատարագելոյ։ Ոայց Ղուկոյ, Վասիլոփալ, Ոնքալեա, Ամատիկեանք և այլք, ընդդեմ Տիանայ, ոչ բաւական համարին զայս վասն պլոյ քահանային, թէպէտ և առանց պատարագի հասանիցէ մնալ ժողովրդեան յաւուր տոնի։ Ըստ այսմ յաւելուն Յուարէզ, Ղայման, Ղուկոյ, Պոնաչինա, Թուրնելի, Վոնչինա և այլք՝ զի պարտ է քահանային, ևս և յաւուրս՝ յորս չէ օրէն Թողուլ զպատարագ, հրաժարել՝ի պատարագելոյ, քան պատարագել առանց խոստովանութեան. զի եկեղեցական պատուիրանին մատուցանելոյ կամ լսելոյ զպատարագ պարտ է տեղի տալ աստուածայնութեան։ Ոակ Թէ օրէն իցէ, առ՝ի չգոյէ խոստովանահօր, կատարեալ զղջմամբ ևեթ ընուլ զպատուիրան զատկական հաղորդութեան, տարաձայնին աստուածաբանք։ Կէսք օրէն համարին, իբր զի և այս աստուածային է պատուիրան. այլք չհամարին զատկական հաղորդութեան պարտ՝ի վերայ ածել յայնժամ։ Յրկոցունցն ևս կարծիք հաւանականք են, և ընդ վերջինս են և Յուարէզ և Պալմատիկեանք։

25. Ոակ զինչ եթէ քահանայ՝ի պատարագելն յիշեսցէ մահուչափ մեղս ինչ գործեալ։ — Յթէ յետ սրբագործութեան յիշեսցէ, պարտ է նմա կատարել զպատարագն ոլոպես ուսուցանեն աստուածաբանք առ հասարակ ընդ սրբոյ Պգուինացւոյն. իսկ կատարեալ զղջմամբ՝ի վերայ մեղացն։ Ոակ եթէ յառաջ քան զսրբագործութիւն յիշեսցէ, և մարթ իցէ նմա առանց դայթակղութեան Թողուլ զպատարագն, պարտ է նմա

Թողուլ զայն ընդհատ առ ՚ի խոստովանել. և առ ՚ի չըդդել խոստովանահօր՝ Թողուլ իսկ ՚ի սպառ զպատաճրագն : Ոչ այս այսպիսւ ուսուցանեն Լուկիոյ, Միլուես Թրոյ, Նուրնելի, Միլուիոյ և այլք. և սուրբ Գրիգոր Նարեկացին ապահովագոյն համարի զայս վարդապետուԹիւն : Նայց ՌասԹրոփալ, Մուարկ, Կաւարրոյ, սուրբն ՊոնաւենԹուրա և այլք զհակառակն հաստատեն. և ՚ի նոցունց իսկ յառաջնոց ոմանք միաբանին զի զրեԹէ անմարԹ է քահանայի Թողուլ ընդհատ զպատարագն առանց զայԹակղուԹեան :

26. Յաւելաք ոՒր էջեն խոստովանահայր. այսինքն եԹէ չիցէ մարԹ քահանայի գնալ այլուր ՚ի խնդիր խոստովանահօր առանց ծանր նեղուԹեան, որպէս ասեն ՌասԹրոփալ, Ասգուէդ, Մալմատիկեանք և այլք. իսկ ծանր նեղուԹիւն լինի զհեռաւորուԹիւն իբր երկուց ժամուց, զդժուարուԹիւն ճանապարհին, զանհարԹուԹիւն օդոյ և այլն : Ոարձեալ եԹէ իցէ անդ մի ոք և՛ եԹէ երէց՝ որոյ չիցէ հրաման ընդունելոյ զխոստովանուԹիւն կամ չգիտիցէ զլեզու քահանային, և կամ այնպիսի՝ որում չիցէ մարԹ քահանային առանց ծանր նեղուԹեան խոստովանել :

27. ՆԹէ ոք ՚ի վերապահեալ մեղս ինչ կայցէ, և չիցէ անդ խոստովանահայր ոք՝ որոյ իցէ իշխանուԹիւն արձակելոյ զայն, պարտ իցէ նմա խոստովանել միւսմ յայլոց խոստովանահարց առ ՚ի հաղորդել : — ՆԹէ չիցեն նորա այլ մեղք բաց ՚ի վերապահելոյ անտի, ըստ հասարակաց կարծեաց աստուածաբանից՝ ոչ է պարտ նմա խոստովանել, այլ կատարեալ զղջմամբ և եԹէ հաղորդել առ հարկի. բայց անկատար զղջմամբ չէ նմա օրէն հաղորդել առանց խոստովանելոյ ինչ յանցեալոց մեղացն, և անուղղակի ընդունելոյ զարձակումն վերապահելոյն : Իսկ եԹէ իցեն նորա և այլ մեղք ծանունք բաց ՚ի վերապահելոյն, հանրական և հատանականագոյն կարծիք պարտական զնա համարին խոստովանելոյ. զի պատուիրան խոստովանուԹեան նախ քան զհաղորդուԹիւն՝ պարտ ՚ի վերայ ածէ առնելոյ զխոստովանուԹիւն, զեԹ տեսակաբար ամբողջ, եԹէ չկարէ պահել զնիւԹական ամբողջուԹիւն :

28. ՈՒր ՚ի խոստովանել նորա ումեք յայլոց խոս-

տովանահալց, պարտական իցէ և զվերապահեալն զայն ընդ այլ մեղս խոստովանել նմա։ — Ակնք յաստուածաբանից պարտական համարին զնա, և հաւանական է կարծիք նոցա. զի կարևոր է խոստովանահօր ձանաչել զխիղճ մտաց ապաշխարողին առ՝ի դատել թէ իցէ նա արձակելի, թէ ունակացեալ՝ի մեղս լինել և այլն։ Նոյց այլք, ընդ որս և սուրբն Անտոնինոս, Վրաթրոփալ, Կերսոն, Սոթոյ, Սալաս, և Լուկց զհակառակն ունին, և ոչ ինչ նուազ հաւանական է կարծիք նոցա, թերևս և հաւանականագոյն՝ որպէս ասէ սուրբն Ավիտոս։ Զի թուի թէ չիցէ պարտ ամէն բաստանել զմեղս այնմ, որոյ չիք իշխանութիւն դատելոյ զայն. և դարձեալ զի բեռն կրկին անգամ խոստովանելոյ լինի յաւելուլ այսուիկ՝ի վերայ ապաշխարողին։ Եւ թէպէտ ունակացելոյն՝ի մեղս լինել, որոյ չիցէ բարոյական ստուգութիւն զընդունակութենէ իւրմէ ընդունի արձակման, պարտ է յայտնել բովանդակ զխիղճ մտաց իւրոց՝ առ՝ի կարող լինելոյ խոստովանահօրն դատել զնա թէ իցէ արժանի արձակման, սակայն պատահական ինչ են դէպք, և ոչ ըստ ինքեան կարևոր կացուցանեն անդ զնիւթական ամբողջութիւն խոստովանութեան։

29. Նակ եթէ՝ի բանադրանս ինչ վերապահեալ կացէ ոք, և չիցէ անդ՝ որոյ իցէ իշխանութիւն արձակելոյ զնա, միաբանին աստուածաբանք կարել նմա հաղորդիլ և՛ի բանադրանաց անտի արձակեալ. զի պատուիրան եկեղեցւոյ, որ արգելու բանադրելոյ զսուրբ խորհուրդս, դադարել ուր չիցէ մարթ պահել զայն առանց գայթակղութեան կամ անուանարկութեան։ Նոյց խնդիր է, թէ կարիցէ՞ յայնժամ բանադրեալն խոստովանել քահանայի՝ որոյ չիք իշխանութիւն արձակելոյ զնա՝ի բանադրանաց։ — Ակնք յաստուածաբանից համարին չկարել նմա խոստովանել՝ արգելեալ՝ի բանադրանաց անտի, այլ հաղորդել կատարեալ զըղձմամբ։ Նոյց հաւանականագոյնս Սուարէզ, Անդրէզ, Լուկց, Ալմատիկեանք և այլք պարտ համարին նմա խոստովանել. զի որպէս յայնժամ չարգելուն բանադրանք զհաղորդութիւն, նոյնպէս և ոչ զխորհուրդ ապաշխարութեան՝ որ յարակից է այնմ ըստ աստուա-

ծային պատուիրանի, այսինքն խոստովանելոյ մեղաւորին նախ քան զհաղորդութիւն։ Եւ կարի քաջ մարթ է բանադրելոյն վաւերաբար արձակիլ յայնժամ՝ի մեզայն. զի եկեղեցի բանադրանօքն չկարէ՝ի դերև առնել զզօրութիւն խորհրդոյ՝ որոյ աստուածային է սահմանադրութիւն, այլ արգելուլ եւթ զընդունելութիւն նոցին։ Այլ՝ի բառնալ հարկին զարգելն զայն, զկետ գայ վաւերաբար և ըստ օրինի ընդունել բանադրելոյն զարձակումն։

30. Յաւելու ժողովն սուրբ՝ զի եթէ հարկ լինի քահանայի խղճիւ մահուչափ մեղաց պատարագել առանց խոստովանութեան, վաղագոյն ապա յետ պատարագին խոստովանեսցի։ Եւ այս ոչ է խրատ, զի՝ զլեքսանդր Ե դատապարտեալ զվարդապետութիւնն՝ որ համարէր զայն խրատ, այլ իսկապէս և խիստ պատուիրան։ Երդ ոմանք զվաղագոյնն զայն պարտ իցէ լինանել։ — Կիսք լինանն յառաջ քան զմիւսանգամ պատարագելն. այլ անտեղի է այս լինատ, զի անպայման է պատուէր ժողովոյն և ոչ պայմանաւ չպատարագելոյ միւսանգամ մինչև խոստովանեսցի. որպէս զի Թեպէտ՝ և հրաժարել ևս առ ժամանակ մի կամք իցեն քահանային՝ի պատարագելոյ, սակայն պարտ է նմա խոստովանել։ Եւ կիսք կարի խստագոյնս իմացեալ զպատուիրանն, պարտ համարին նմա իսկ և իսկ՝ի խնդիր ելանել խոստովանահօր. այլ զայս պարտ է լինանալ, եթէ նոյն հարկ՝ի վերայ կայցէ՝ի վաղիւ անդր պատարագելոյ, կամ առ օրին իսկ զայլ խորհուրդս կատարելոյ, և կամ եթէ՝ի յամէն՝ ոչ ևս կարիցէ գտանել խոստովանահայր։ Այլ առանց այսոցիկ՝ հասարակաց կարծիք, առ որ Ի աքրուա և զյայտարարութիւն ինչ սրբոյ ժողովոյն տրիդենտեան սահմանադրութեանց առ՝ի հաստատութիւն, շատ համարին խոստովանել նմա յառաջ քան զաւուրս երիս. որպէս ոք՝ի վտանգ մահու արձակեալք՝ի բանադրանաց վերապահելոց՝ յերիս աւուրս պարտին դիմել առ բարձրագոյն իշխանութիւն, որոյ է արձակել զնոսա. որպէս և ոք զարգելեալ զերս՝ պարտին ապաշխարողք յառաջ քան զաւուրս երիս աճել առ եպիսկոպոսն։

31. Որ յետ սրբագործութեան յիշեցէ մահուչափ

մեղս ինչ գործեալ, պարտական՝ իցէ և նա վաղագոյն խոստովանելոյ։ — Որմանք չհամարին զնա պարտական, իբր զի պատուիրանն վասն յառաջ քան զսրբագործուԹիւն յիշողացն է։ Այլ հանրագոյն և հաւանականագոյն կարծիք պարտական համարին և զնա, զի դիտաւորուԹիւն սրբոյ Ժողովոյն է վասն ամենեցուն՝ որ խղճիւ մահուչափ մեղաց առանց խոստովանուԹեան ստիպին պատարագել։

32. Իսկ զինչ յաղագս այնոցիկ պարտ իցէ ասել, որք պարտին և կարեն դիւրաւ խոստովանել, և առանց խոստովանուԹեան խղճիւ մահուչափ մեղաց պատարագեն։ — Որպէտ և ոմանք և զնոսա ընդ պատուիրանաւս այսուիկ արկանեն, այլ հաստարակաց և ձշմարիտ վարդապետուԹիւն այլազգ զայնպիսիսն դատի։ Զի Ժողովն սուրբ վասն երկիւղածաց զպատուիրանն զայն աւանդէ, զի մի յամեալքն դարձեալ՝ի նոյն հարկ ըմբռնեսցին պատարագելոյ առանց խոստովանուԹեան, և ոչ վասն այնպիսեաց սեղանակապտից՝ որոց պատուիրանն այն չէ ինչ յօգուտ։ Զի որք զաստուածային պատուիրանն առոտն կոխեն պատարագելովքն՝ի մեղս, ոչ՛ջափ և աւազանել զեկեղեցականն վաղագոյն խոստովանելոյ արհամարհեսցեն. զնոսա այլ պատուիրան աստուածային ստիպէ դառնալ՝ի չար ձանապարհէ իւրեանց։

33. Պատուիրանս այս վաղագոյն խոստովանելոյ ստիպիցէ և զաշխարհականս, որոց հարկ լեալ իցէ առանց խոստովանուԹեան հաղորդել։ — Հաստարակաց և հաւանականագոյն կարծիք չհամարին զնոսա ընդ պատուիրանաւս. զի չզօրեն վասն նոցա պատձառք՝ որք վասն քահանայից. քանզի սոցա յաձախ հարկ՝ի վերայ կայ պատարագելոյ առ՝ի չտալ գայԹակղուԹիւն, ուր աշխարհականաց դուն ուրեք պատահէ հարկ հաղորդելոյ։

34. Որ յերկբայս ևԹէ մահուչափ մեղաց կայցէ, օրէնն իցէ նմա հաղորդել առանց խոստովանուԹեան։ — ԵԹէ ոք երկբայեսցի ընդ մեղս իւր՝ ԹէԹէ իցէ մահուչափ մեղս ցեալ ԹէԹէ ոչ, օրէնն է նմա առանց խոստովանուԹեան հաղորդել՝ Թէպէտ բացասական իցէ երկբայուԹիւն իւր և ԹէԹէ դրական, և բաւական է նմա զղջումն կատարեալ առ ընդունելոյ ապահովագոյնս զչնորհս խորհրդոյն։ Զի պատուիրան առաքելոյն Փօ-

յեսուէ մարդ պանդխտ էր, որով է իմանալ զխոստովանու-
թիւն ըստ յայտարարութեան տրիդենտեան ժողովոյ,
ստիպէ և եթէ զէպ ոակէցս մահո՞ւէ մեղս ինչ գործեալ և
չև և ևս խոստովանեալ։ Այն որոյ եթէ ոք ստուգիւ
դիտիցէ մեղուցեալ իւր մահուէսն, չէ օրէն նմա հաղոր-
դիլ երկբայանօք՝ մինչև փորձեալ զանձն խոստովանու-
թեամբ, թէպէտ բացասական և թէ դրական իցէ երկ-
բայութիւն իւր. որպէս եթէ երկբայեսցի ընդ վաւե-
րականութիւն խոստովանութեանն, կամ ընդ զղջումն
իւր, կամ ընդ իշխանութիւն խոստովանահօրն, և կամ
ընդ որ և իցէ թերութիւն պատրաստութեան իւրոյ
յընդունակութիւն խորհրդոյն. զի որպէս հաւաստի է
մեզքն, հաւաստի պարտ է գոլ և խոստովանութեանն։

ՅՕԴՈՒԱԾ Ե

ՑԱՂԱԳՍ ՄԱՐՄՆԱՒՈՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ Ի ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

35. Ջծոմապահուելենէ. երկբայուելիւն զայնմանէ. զինչ եթէ այլ ազգ յիւրեաց ցուցանիցեն ժամացոյցք. որ ինչ արտաքուստ մատնէ, այն է որ լուծանէ զծոմ:
36. Նշևարք միացեալք ի բերանի լուծանիցէ՞ն զծոմ:
37. Մնացորդք ջրոյ, չաքարի և այլն լուծանիցէ՞ն:
38. Բլթախոտ լուծանիցէ՞:
39. Ծխախոտ լուծանիցէ՞:
40. Ծամել զծխախոտ կամ զկաուկա լուծանիցէ՞:
41. Ջուր կամ այլ ինչ լոյծ ընդ ունգունս կամաւ կամ ըստ դիպաց ընկալեալ, լուծանիցէ՞:
42, 43. Մաղ, քար, թուղթ և այլն լուծանիցէ՞ն:
44. Օրէ՞ն էր հաղորդել չև մարսեալ զկերակուր:
45. Թքանել յետ հաղորդութեան մեզք էր՞ն:
46. Ե՞րբ օրէն էր անծոմ հաղորդիլ. և նախ յընդունել զթոշակ, և մանրե՞լ էր երկրորդել զայն:
47. Քանիցս օրէն էր ընդունել զայն:
48. Որ յառաջ քան զաւուրս ինչ վասն ջերմեռանդութեան էր հաղորդեալ:
49. Որ յայնմ իսկ առաւօտու:
50. Օրէ՞ն էր թողուլ ի բաց զբաւս Ա՛ի Նոչակ:
51. Օրէ՞ն էր անծոմ պատարագել վասն տալոյ զթոշակ:
52. Օրէ՞ն էր անծոմ հաղորդել առ ի զերծուցանել յանարգանաց զաւուրք խորհուրդն:
53. Եթէ ժամարարն յիշիցէ լուծեալ իւր զծոմ, և վասնզ դայթակղութեան առաջի կայցէ:
54. Եթէ հարկ լինի կատարել զպատարագ Թեբրակատար կամ երկբայելի վասն գինւոյն ոչ անխուսափութեան:
55. Օրէ՞ն էր վասն վասնզի կենաց անծոմ պատարագել:
56. Պա՞րտ էր վասն դիջութեան հրաժարել ի հաղորդութենէ:
57. Եւ վասն ամուսնական պարտուց կատարելոյ, կամ վասն ապրուհից:
58. Որ աղաւեղահանդերձ, կամ բորոտ, կամ անհամաստ մատչի ի հաղորդութիւն: Գահանայ որ զպակս աշխարհիկ զգ հաղորդեցի:

35. Ա՛սն հաղորդելոյ ըստ օրինի, ըստ եկեղեցական պատուիրանի ինդրի ծոմ բնական. այս ինքն՝ ի հասարակ դիշերոյ և անդր չառնուլ ոչ կերակուր և ոչ ըմպելի: Ա՛յլ երկբայութիւն, որպէս ի վեր անդր ասացաք (գլ. Ա. 19) թէ գուցէ կլեալ ինչ էր՞ն յետ հասարակ դիշերոյ, ոչ խափանէ զհաղորդութիւն: Ո՛չ պատուիրանս այս ոչ է գրական՝ ծոմ հաղորդելոյ, այլ բացատական՝ այս ինքն չհաղորդելոյ անծոմ.

վասն որոյ ցորչափ չգիտիցէ զբ Հաւատեաւ լուծեալ իւր զծոմ, ոչ զօրէն արգելքն՝ այլ ազատութիւն հաղորդելոյ։ Եւ ըստ այսմ աստուածաբանք առ Հասարակ օրէն Համարին հետևել այնմ՝ի ժամացուցիչ՝ որ յեռին Հարկանէ զժամ Հասարակելոյ գիշերոյն, եթէ միայն չիցէ ծանօթ սխալել ստէպ այնր ժամացուցի։ Բայց գիտելի է զի ոչ՝ի յեռին Հարուած ժամացուցին Հասարակ գիշեր, այլ՝ի նախկին բաղխիւն։

Եւ զարձեալ նովին իսկ պատճառաւ զի պատուիրանս այս է բացասական, այս ինքն մի՛ Հաղորդել անծոմ, ոչ է ընդունակ նիւթոյ զուգնաքէի՝ որպէս միաբանին աստուածաբանք գրեթէ առ Հասարակ, թէպէտ և եկեղեցական է պատուէրս։ Վասն որոյ որ ինչ և իցէ կերակուր կամ ըմպելի արտաքուստ՝ի բերան մտեալ, և որպէս կերակուր կամ ըմպելի կլեալ, լուծանէ զծոմ։ Բայց այսմ բարոյականք սահմանեն երիս կանոնս։ Ա. Օ՛ի կլեայն նիւթ՝ արտաքուստ ընկալեալ իցէ՝ի բերան։ Բ. Օ՛ի կլանիցի որպէս կերակուր կամ ըմպելի։ Գ. Օ՛ի կլեալն Համարիցի կերակուր կամ ըմպելի։

Այսպա ըստ առաջնումն կանոնի որ ինչ՝ի ներքուստ գայ՝ի բերան և կլանի, ոչ լուծանէ զծոմ. վասն որոյ որ կլանէ զարիւն իջեալ՝ի ներքուստ՝ի բերան կամ՝ի լընդերայց ելեալ՝ և ս և կամայ, կարէ Հաղորդիլ։

36. Այլ որ զնշխարս ինչ կերակրոյ մնացորդս՝ի բերանի կլանիցէ, լուծանէ՞ զծոմ։ — Ասարկ, Հենրիկոս, Վասիլիոսիալ, Յղկել, և այլք չՀամարին լուծանել նմա զծոմ, իբր զի Համարի այն բարոյապէս մանն երիկեան կերակրոյ։ Բայց Հանրապոյն կարծիք Համարին լուծանել զծոմ, եթէ աբ կամաւ կլանիցէ զայս. որպէս և սուրբ Գրիգորիոս ասէ. "Գիշատիչք կերակրոյ մնացեալք՝ի բերանի, եթէ ըստ դիպաց կլանիցին, ոչ արգելուն զՀաղորդութիւն,,։ Վասն որոյ և ըստ կարծեաց նորին արգելուն, եթէ կամաւ կլանիցին։ Երկրորդս այս Հաւանականագոյն Թուի, այլ և ոչ առաջինն անՀաւանելի. վասն որոյ ըստ խրատու Տօրն Ասարկի ոչ է պարտ կարի յոյժ երկիւղածութեամբ տեղի տալ յայսմիկ խղճահարութեան։

37. Օնոյն է խմանալ և զմնացորդաց Ջրոյ՝ի բերա-

նի՛ւ լուանալը զգայ. զի եթէ կամաւ ոք կլանիցէ զգայնա՛ լուծանէ զծոմ, այլ ոչ որ ակամայ կլանէ: Ո՛չայս այսպէս ուսուցանեն բարոյականք գրեթէ առ հասարակ, և սուրբ Գ՛ուիւայեին ասէ. "Գ՛այն բան է և զինայօրդայ ջրոյ կամ գինւոյ՝ որովք ոք լուանայցէ զբերան իւր, եթէ միայն գուշնաքեայք իցեն խառն ընդ լորձունս, յորմէ չէ մարթ զգուշանալ,,: Ո՛նոյն հաստատէ և լատին մաշտոցն, զի ասէ. "Ո՛չ լուծանէ զծոմ որ ոք՛ի լուանալ զբերանն՝ կամ թիլ ինչ ջրոյ ակամայ կլանիցէ,,: Գ՛պա ուրեմն որ ոք կամաւ կլանիցէ, լուծանէ զծոմ: Լ՛ուծանէ և որ նախ քան զկէս գիշերոյ առնու շաքարեղէնն ինչ ծուծ՛ի բերանի, և ապա յետ հասարակելոյ գիշերոյն զՏիւթ նորա կլանէ: Լ՛ուծանէ և որ զարիւն հատելոյ մատինն ծծիցէ, կամ զարտասուս իջեալս յաչացայ, որպէս ուսուցանեն բարոյականք:

38. Գ՛սա երկրորդումն կանոնի ոչ լուծանէ զծոմ որ առնու քԹախոտ, Թէպէտ և մանն ինչ ըստ գիպացն ընդ ունդունս գնայցէ՛ի ստամոքս. զի չէ այն առեալ որպէս կերակուր, այլ ընդ ունդունս՛ի վեր ձգեալ. զոր և Հենեդիկտոս ԺԴ հաստատ, զանէ վասն սովորութեան այսպէս ունելոյ առ հաւատացեալս:

39. Ո՛նոյն և զծխախոտոյ ասէն բարոյականք ընդ նմին Հենեդիկտեայ ԺԴ, որ և զայս համարի ընկալեալ արդ՛ի սովորութենն: Լ՛ու Թէպէտ Ալմատիկեանք համարին լուծանել զծոմ եթէ ոք կլանիցէ կամաւ ըզծուխն զայն, բայց այլոց ոչ է ընդունելի կարծիք նոցա. զի ծուխն այն ոչ որպէս կերակուր կլանի, և ոչ՛ի կերակուր համարի:

40. Լ՛ու ծամել իսկ զծխախոտ կամ զմաղտաքէ և զխունկս՝ Թքանելով՛ի բաց զլորձունս, ոչ լուծանէ զծոմ՝ ըստ հասարակաց կարծեաց. Թէպէտ և կլանիցէ ոք ակամայ գոյզն ինչ խառն ընդ լորձունս, որպէս յաւելոյն Լ՛ուկաս, Ա՛մպրոսիոսի, Ա՛իւա և այլք եթէ միայն չկլանիցէ հասս՛ի նոցանէ: Գ՛նոյց միաբանին ամենեքին զգուշացուցանել աստի զՀաւատացեալս վասն յարգութեան խորհրդոյն. վասն որոյ չեն ազատ՛ի նեղելէ մեղաց, որք առանց իրաւացի պատճառի զԱստուածային այսպիսեօք նախ քան զսուրբ Հաղորդութիւն:

41. Ա՛ուարկէ, Ա՛մպրոսիոսի և այլք ոմանք չհա-

մարին լուծանել զծոմ և որ ընդ անգուսս ջուր ի ստա-
մքս ձգիցէ ։ Եւ այլ եթէ չիցէ ականջ, որպէս
պատահէ ի ձգելն զքթախոտ, չէ ընդունելի այլոց. զի
թէպէտ և ոչ իբրև կերակուր ինչ կամ ըմպելի կլանէ
զայն, սակայն կամաւ առաքէ ի ստամքսն, որ բարեա-
պէս հաւասար է ձաշակելոյ և ըմպելոյ ։ Օնոյն հաս-
տատեն բարեպաշտութիւն առ հասարակ և զամենայնի՝ որ
ընդ տուրևառս ընդոյ կլանի ականջ, որպէս փոշի կամ
մժղուկ կամ շիթ անձրևոյ և այլն. զորս եթէ կամաւ
ոք կլանիցէ, լուծանէ զծոմ։

42. Ի՞նչ երրորդումն կանոնի խնդիր է՝ թէ կլանել
զմաղ կամ եղունգն կամ խիճ կամ փայտ կամ թուղթ
կամ սոցին սակի իրս, լուծանիցէ՞ զծոմ։ — Կէսք ասեն
անխտիր՝ չլուծանել, իբր զի այսպիսի իրք չհամարին ի
կերակուր. և կէսք զհակառակն անխտիր հաստատեն
վասն յարդուածեան խորհրդոյն ։ Եւ հանրագոյն կար-
ծիք զանազանելով ընդունին զառաջնոյն կարծիս, զի
այն ամենայն որ ոչ մարսի և ոչ սնուցանի՝ չլուծանէ
զծոմ. որպէս մազ, մետաղ, ապակի, եղունգն, ասր,
մետաքս և այլն ։

43. Ընդ հակառակն լուծանէ զծոմ որ ինչ մարսի և
կարէ տալ ինչ սնունդ. որպէս թուղթ, յարդ, մոմ,
կաւ և այլն ։

44. Հաղորդել զինի ձաշոյ, որպէս որ յառաջ քան
զհասարակել զիշերոյ ձաշիցէ և յետ հասարակելոյ հա-
ղորդիցի, չե՛ի քուն լեալ, չե զկերակուրն մարսեալ, ոչ
ինչ ընդդէմ պատուիրանին գործէ չհաղորդելոյ անծոմ,
որպէս ուսուցանեն բարեպաշտութիւն առ հասարակ. այլ
զգուշանալ պարտ է վասն թմրութեան ի վերայ հա-
սանելոյ ։ Սակայն և այս չարգելու ի հաղորդութենէ
եթէ ոք ջանիւ յաղթեսցէ թմրութեանն, և ըստ կարի
եռանդեամբ հաղորդեսցի. մանաւանդ եթէ տքնու-
թիւնն այն կամ անմարսութիւն ի բնական կամ յիրա-
ւացի պատճառաց յառաջ գայցեն, որպէս մեայ մեզ ա-
սել աստ ի ստորև (56)։

45. Քանել և խուխ ընկենուլ խակ և խակ յետ հա-
ղորդելոյ, եթէ չիցէ հաւանական կասկած փչրանս ի
սուրբ հաղորդութենէն մնացեալս ի բերանի ընդ թո-
քոյն ի դուրս արկանելոյ, չհամարի ի մեղս. որպէս ու-

սուցանեն Մանքեզ, Ղզրիայ, Պոնաչինա, Հոլզման, Աքրուա և սուրբ Գուինացին. զի որպէս ասացաք ի վեր անդր, այլ է անցք կերակրոյ և այլ շնչոյ՝ ընդ որ և խոսք են անցք: Ոչնոյն հաստատէ Հոլզման և զՀաշակմանէ իսկ և իսկ յետ հաղորդութեան, իմա օրինաւոր պատճառաւ. զի որ առանց այսորիկ ճաշակէ ինչ, մինչդեռ տեսակք խորհրդոյն տևեն ի ստամոքսի, չև քառորդի միոյ ժամու գնէ ի վերայ անցեալ, ոչ է զերծ ի ներելի մեղաց՝ որպէս ուսուցանեն վարդապետք առ հասարակ ընդ սրբոյ Գուինացւոյն:

46. Օրէն է անծամ ընդունել զհաղորդութիւն, նախ՝ ի վտանգ մահու առ ի թոշակ. և վտանգ պարտ է իմանալ զհաւանականն, և ոչ զբաւմունն ամենայն յուսոյ ապրանաց: Այլ ոչ միանգամ ևէթ ի վտանգի օրէն է ընդունել զթոշակ, այլ և երկիցս և երիցս. զի ոչ միայն ի լուսն պատուիրանին պարտ է յայնժամ հաղորդել, այլ և առ ի զօրանալ ընդդէմ սատանայական փորձութեանց՝ որ ի վտանգի անդ յաճախեն: Ասն որոյ Սուարէզ, Սոթոյ, Վոլեսոյ, Լայման, Սինուեթրոյ և այլք օրէն համարին ի նմին իսկ հիւանդութեան երկրորդել և երրորդել զթոշակ. և Ռենեդիկտոս ԺԴ յորդորէ զժողովրդապետս ի նոյն:

47. Այլ խնդիր է թէ որչափ ինչ աւուրց պարտ իցէ ի վերայ անցանել առ ի կարող լինելոյ միւսանգամ առնուլ թոշակ: — Հանրապոյն կարծիք ուէթ աւուրս սահմանեն, այլք վեց. իսկ Լայման, Ռոնքալեա և այլք ոչ առանց հաւանականութեան օրէն համարին ի վաղիւ անդր իսկ երկրորդել, եթէ հիւանդն սովոր իցէ ստէպ հաղորդիլ և վտանգ մահու մօտալուտ ի վերայ կայցէ: Վասթրոխալ, Վամպուրինի և այլք ոմանք զօրհանապազ իսկ անխտիր օրէն համարին:

48. Որ յառաջ քան զսակաւ աւուրս հաղորդեալ իցէ վասն ջերմեռանդութեան, յանկանել ի վտանգ մահու պարտական իցէ ընդունել թոշակ: — Լայման, Սուարէզ, Ռոնքալեա, Պոնաչինա և այլք ըստ հանրագոյն կարծեաց բաւական համարին զառաջին հաղորդութիւնն, թէպէտ և եօթնեակ մի ևս ի վերայ անցեալ. իբր զի նուաւ հիւանդն գտանի ըստ բաւականին պատրաստեալ ի մահ, վասն որոյ և կատարեալ զդի-

տաւորութիւն պատուիրանին : Այս վարդապետութիւն Հաւանական է ըստ բաւականին . բայց Վասդուէզ , Վասթրոփալ , Վոնչինա , Ծոուրնելի , Նաբերտ , Տիանա , Ալմատիկեանք և այլք Հաւանական նագոյնս ըՀակառակն Հաստատեն : Օ՛ի պատուիրանս այս աստուածային ստիպէ յորժամ իսկապէս վտանգ մահու ՛ի վերայ կայցէ . և որպէս ոչ է մարթ Հատուցանել զպարտս մինչեւ լեալ պարտական , այսպէս և ոչ Հաղորդութիւնն այն կարէ ընդունել զպարտս ընդունելութեան Թոշակի : Այս ոչ զօրէ ինչ ասել՝ թէ Հաղորդութեամբն այնուիկ գտանի Հիւանդն կատարեալ ըզդիտաւորութիւն պատուիրանին . զի եթէ այսպէս էր , և որ յառաջ քան զծաղկազարդ Հաղորդի՝ գտանէր կատարեալ զպարտս զատկական Հաղորդութեան , զոր չէ մարթ ասել :

49· Որ յայնմ իսկ առաւօտու Հաղորդեալ իցէ , յանկանել ՛ի վտանգ մահու՝ պաՀպտ իցէ նմա կամ օրէն ընդունել զԹոշակ : — Երբեակ կարծիք են զայսմանէ . առաջինն՝ թէ պարտ է նմա , առ ՛ի կատարել զպատուիրանն . երկրորդ՝ թէ չէ պարտ , այլ օրէն է նմա ընդունել զԹոշակ . երրորդ՝ թէ ոչ պարտ և ոչ օրէն է նմա , զի ընդդէմ սովորութեան եկեղեցւոյ է երկիցս ՛ի միում աւուր Հաղորդել : Ինեդիկտոս ԺԴ (յղ· Ժողովոյ) · ասէ թէ օրէն է Ժողովրդապետի ունել ՛որ և յերեցունց աստի կարծեաց Հաձոյ Թուեսցի նմա , որով զերեսին և ս Հաւանականս Համարի : Այլ կարգինալ Լուկոյ և Հայրն Սուարեզ զանազանեն աստանօր . եթէ առողջ ոք իցէ Հաղորդեալն , և յանկարծակի վտանգ ինչ ՛ի վերայ Հասանիցէ նմա վիրաք կամ կաթուածով , օրէն է նմա դարձեալ Հաղորդիլ· այլ ոչ և Հիւանդի , որ թէպէտ և չգիտիցէ զվտանգ իւր՝ այլ կայ ՛ի նմին բաւոյապէս : Եթէ մարթ իցէ Հիւանդին առանց իրիք վտանգի ՛ի վաղիւ անդր ծոմ ընդունել զԹոշակն , Ալմատիկեանք պարտ Համարին նմա յամել· բայց այլք գրեթէ առ Հասարակ ոչ պարտ Համարին զայսքան զգուշութիւն . զի Ժողովն Կոստանդեան առանց պայմանի ՛ի բաց բառնայ զծոմ վասն Թոշակի :

50· Որ՞ն իցէ քահանային ՛ի տալ զԹոշակ Թողուլ երբեք ՛ի բաց զձեռն լեալ ՛ի Խորհուրդ : — Վեց յաս-

տուածաբանից ոչ երբեք օրէն համարին զայն. բայց այլք հաւանականաբար զհակառակն հաստատեն, եթէ իցէ վտանգ հիւանդին խոովելոյ յոյժ. զի՝ կատարումն պարտուց ոչ է կարևոր դիտաւորութիւն կատարելոյ զայն, այլ կատարել եւեթ զպատուիրեալն, որպէս ասացաք (՚ի գլ. Բ. 29). և մեկնողական իսկ դիտաւորութիւն բաւական է առ այն։

51. Օրէն իցէ քահանայի անծամ պատարագել վասն տալոյ Թոշակ հիւանդի, եթէ այլազգ չիցէ մարթ տալ։ — Ամենք յաստուածաբանից օրէն համարին, իբր զի պարտ է նախագասել զպատուիրան աստուածային՝ որ հրամայէ հիւանդին ընդունել Թոշակ, քան զեկեղեցականն որ արգելու քահանային մի պատարագել անծամ։ Այլ հասարակաց և հաւանականագոյն կարծիք զհակառակն հաստատեն. զի նախագասութիւն աստուածայնոյ պատուիրանին քան զեկեղեցականն զօրէր, եթէ նմին իսկ քահանային էր անկ պատուիրանն. այլ չէ օրէն քահանայի անցանել զպատուիրանաւ եկեղեցւոյ, որ արգելու նմա չպատարագել անծամ, առ՚ի տալ այլում կատարել զպատուիրանն աստուածային, այսինքն ընդունելոյ հիւանդին զԹոշակ։

52. Օրէն է երկրորդ՝ հաղորդիլ անծամ, ուր իցէ վտանգ անարգութեան խորհրդոյն. և յայնժամ եթէ չիցէ անդ քահանայ, օրէն է և աշխարհականի իսկ Ճաշակել զայն. և եթէ դուցէ իսկ անդ քահանայ, օրէն համարին նմա Ասքուզէզ, Լուկայ, Աուարէզ և Պուսեմպայ, տալ զայն աշխարհականի՚ի Ճաշակումն։

53. Օրէն է երրորդ հաղորդիլ կամ պատարագել անծամ, ուր կայցէ վտանգ դայթակղութեան։ Ասն որոյ քահանայ եթէ՚ի պատարագելն յիշեսցէ լուծեալ իւր զծամ, և յիշեսցէ զայն յետ սրբագործութեան, պարտի կատարել զպատարագն, զի չէ օրէն Թողուլ զայն անկատար, որպէս ասա՚ի ստորև ասացուք։ Այլ եթէ յառաջ քան զսրբագործութիւն յիշեսցէ, և մարթ իցէ նմա առանց դայթակղութեան կամ անուանարկութեան Թողուլ զպատարագն, պարտ է նմա Թողուլ զայն. այլ որպէս սուրբն Յոհաննէս Տուրա և Այթոյ և այլք յաստուածաբանից ասեն, ոչ է պարտ քահանայի Թողուլ երբեք զպատարագ՚ի մատուցանելն զայն հրա-

պարակաւ յեկեղեցւոջ, զի զրեթէ անմարթ է չպատա-
հել անդ գայթակղութեան ։

54. Օրէն է յորմոզդ՝ հաղորդիլ անծամ առ՝ի կա-
տարել զսկսեալն պատարագ. և մարթ է այսմ այլ և
այլ օրինակաւ պատահել։ Եթէ ծանիցէ քահանայն՝ի
ձաշակելն՝ զի փոխանակ գինւոյ ջուր՝ի բաժակին սըր-
բագործեալ է, պարտի սրբագործել վերստին այլ նըշ-
խար և գինի՝ ըստ բազմաց, կամ այլ գինի և եթէ՝ ըստ
այլոց, զի երկոքին ևս կարծիք հաւանականք են ։ Եւ
չէ պարտ քահանային, եթէ չև զջուրն կլեալ լցէ, ՚ի
դուրս տալ զայն առ՝ի չլուծանելոյ զծամ. և այս վասն
յարգութեան խորհրդոյն՝ զի միւ և զմանանն և զփշրանս
հացին սրբագործելոյ, որ են ՚ի բաժակին, ՚ի դուրս
տացէ ընդ ջրոյն ։ Իսկ եթէ քահանայն ՚ի դառնալ մը-
տանել յաւանդատունն ծանիցէ զվրիպակն, ոչ ևս
պարտ է նմա սրբագործել այլ գինի ։ Եւ դարձեալ՝ ե-
թէ յետոյ քան զսրբագործութիւնն երկբայեսցի զգի-
նւոյն, ոչ է պարտ նմա վայրապար և գիւրաւ տեղի տալ
երկբայութեան. այլ եթէ արդարև խոհական լցէ երկ-
բայութիւնն, և մարթ լցէ առանց երկար ընդհատու-
թեան տալ ածել այլ գինի, պարտ է նմա սպասել և
զայն սրբագործել, որպէս ուսուցանեն Աքրուա և այլք
յաստուածաբանից. բայց սրբագործել պայմանաւ,
այսինքն եթէ գինին այն երկբայելի՝ չլցէ սրբագոր-
ծեալ։ Եթէ դէպ լինի նուաղել քահանայի յետ սրբա-
գործութեան, պարտ է այլում քահանայի՝ թէպէտ և
չլցէ ծամ՝ կատարել զպատարագն ։ Դարձեալ եթէ
դէպ լինի քահանայի յետ սրբագործութեան հացին
յիշել՝ զի չէ ծամ, պարտի կատարել զպատարագն ։ Եւ
դարձեալ եթէ յետ ձաշակելոյ զլուացուկս բաժակին՝
տեսցէ փշրանս ինչ մնացեալ՝ի մաղզմայն, պարտի ձա-
շակել զայն, որպէս՝ի վեր անդր ասացաք (5)։ Եւ ե-
թէ մնան սրբագործելոյ հացին մնայցէ մածեալ՝ի բա-
ժակին կամ՝ի քիմն քահանային, օրէն է նմա և առա-
ւել վայելուչ ձաշակել զայն գինւով, որպէս ուսուցա-
նեն Պոնաչինա և այլք ։ Օ՛ի զնշխար սրբագործեալ
ձաշակել ջրով կամ գինւով՝ օրէն է և աչխարհակա-
նաց, որ չկարիցեն կլանել զայն գիւրաւ, և չհամարի
ջրոյն կամ գինւոյ լուծանել անդ զծամ՝ թէպէտ և յա-

ռաջ քան զսրբութիւնն կլանիցէ զք զայն, զի բարեպաշտս ՚ի միասին համարի՝ որպէս ուսուցանէ Ներսէհիոս ԺԴ, և այլք յաստուածաբանից գրեթէ առ համարակ։

55. Որչափ և հինգերորդ՝ պատարագել անճոռ առ ՚ի ղերծանել ՚ի վտանգէ մահուան, եթէ միայն չհրամայիցէ այն յարհամարհանս եկեղեցւոյ։ Ամենք յաստուածաբանից օրէն իսկ համարին առ երկիւղի մահու պատարագել և առանց սուրբ սպասուց և առանց իսկ սեղանոյ, իբրև զի եկեղեցական օրէնք ոչ զոք սոսկեն ՚ի պահպանութիւն այնոցիկ վտանգաւ մահու։ Բայց Աւարէզ, Թոմանուբինոյ, Թուրնելի, Երաթի, Քոնքաբեա, Քռնչինա, Այեթանոյ, Անքեզ, Բասիլիա և այլք ոչ ընդունին զայն, և Ուկեյ, Աքրուա և Ներսէհիկոս ԺԴ վասն մատուցանելոյ իսկ Թոշակ հիւանդի չառնուն զայն յանձն. զի դժուարաւ մարթէ խորշել յանարդանաց խորհրդոյն և ՚ի գայթակղութենէ ՚ի պատարագելն այնպէս։

56. Պիջացելում ՚ի նմին աւուր օրէն իցէ հաղորդել։ — Եթէ զիջութիւն նորա կամաւոր իցէ լեալ, թէպէտ և զղջանայցէ և խոստովան լինիցի, ըստ համարակաց կարծեաց աստուածաբանից պարտ է նմա հրաժարել ՚ի նմին աւուր ՚ի սուրբ հաղորդութենէ, եթէ չիցէ ինչ նորա օրինաւոր պատճառք հաղորդելոյ. և որ անպատճառ ՚ի նմին աւուր հաղորդի՝ չէ ազատ ՚ի ներելի մեղաց։ Իսկ ականջ դիջութիւն ոչ լինչ արգելու զնա ՚ի հաղորդելոյ, եթէ միայն դադարեալ իցէ խռովութիւն մտաց նորա և երևակայութեան ՚ի խորհրդոյ և յախտարժանաց՝ որ յարակից են այնմ։ Օ՞ի և այսպիսի կրկնք ՚ի սուրբ խորհուրդն առանց օրինաւոր պատճառի մերձենալ, ոչ ազատ ՚ի ներելի մեղաց համարի ըստ բազմաց յաստուածաբանից։ Բայց և նոքին աստուածաբանք ուսուցանեն, զի որ գուն գործէ յաղթել մտացն խռովութեան և այլայլութեան սրտին, և վասն ջերմեռանդութեան կամիցի հաղորդել, ազատ է ըստ բանի սրբոյն Յուստինոսի՝ զոր Հայրն Աւարէզ ածէ ՚ի վկայութիւն. "Ոչ է արժան և իրաւ վասն ամենայն կամայ կրկին հրաժարել ՚ի խորհրդոյն"։

57. Ընդունանայ առ միմեանս եկեղեցի օրէն իցէ ՚ի նմին

աւուր հաղորդել։ — Սրբոյ մեծին Կիրիպոլի, սրբոյ Գ֊
գուինացւոյն և աստուածաբանից գրեթէ ամենեցուն
կարծիք ոչ օրէն համարին, եթէ չկայ նոցա ՚ի սուրբ
սեր որդեծնութեան ևեթ եկեալ առ միմեանս. և ոչ
ազատ կացուցանեն զնոսա ՚ի ներելի մեղաց։ Բայց
Յանքէզ, Յալմատիկեանք և այլք բազումք համարին
վասն ազատ կացուցանելոյ զնոսա ՚ի մեղաց զոր և ե֊
պատշաճողութիւն հաղորդելոյ. որպէս տուն մեծահան֊
դէս, ներողութիւն և այլն։ Զմանապէս ազատ են, որք
առ ՚ի հատուցանել ևեթ զամուսնական պարտս գայցեն
՚ի նոյն. որպէս ուսուցանեն սուրբ Գրիգուինացին, սուրբն
Պոնաւենթուրա, սուրբն Նտոնինոս, սուրբ Յաւեզա֊
ցին, Գլերտ, Սուարէզ և այլք։ Բայց գովելի է եր֊
կիւղածութիւն ամուսնոյ՝ որք աղաչանօք կամ ինքնա֊
կամ տան ազատութիւն իւրեցոյ յաւուրս հաղորդու֊
թեան, և Սուարէզ, Լայմոն և Յանքէզ ազգ առնեն
խոստովանահօրէ խորհել մանաւանդ զայնոսիկ՝ որք
չհաղորդին ստէպ, խնդրել ազատութիւն վասն հա֊
ղորդութեան։ Գյ՚ի չհաւանել ամուսնոյն՝ ազատ է
միւսն հաղորդելոյ, եթէ չկրէ աղմուկ մտաց և այլայ֊
լութիւն սրտի, կամ եթէ չկարէ յաղթել այնց։ Հա֊
տուցանել զամուսնական պարտս ՚ի նմին իսկ աւուր յետ
հաղորդութեան օրէն է. այլ խնդրել զայն ոչ ազատ ՚ի
ներելի մեղաց թուի ըստ ումանց. բայց հանրագոյն կար֊
ծիք արժան ևեթ և ոչ պարտ համարին հրաժարել ՚ի
խնդրելոյ։ Ո֊նոյն ուսուցանեն հանրական և հաւանա֊
կանագոյն կարծիք և վասն կանանց ապարահիճ։

58. Ոչ օրէն մատչել ՚ի հաղորդութիւն և արտաքին
երևելի ինչ և կամաւոր աղտեղութեամբ. զի ակա֊
մայքն՝ որպէս բորոտութիւն, քոս և այլն, ոչ ինչ ար֊
գելուն ՚ի հաղորդութենէ։ Բայց քահանայի բորոտի,
կամ այլով իւիք զզուելի ախտիւ վարակելոյ, արգելեալ
է չպատարագել հրապարակաւ։ Կանանց՝ որ անհամե֊
տաբար մատչին ՚ի հաղորդութիւն, որպէս հոլանի կրծ֊
ծիք, Նայրն Պոնչինա պարտ համարի մերժել իսկ
զնոսա ՚ի հաղորդութենէ։ Պարձեալ և զինուորաց ՚ի
մատչելն ՚ի հաղորդութիւն պարտ է ՚ի բաց դնել զզ֊
զինս։ Իսկ քահանայի, որ վասն հիւանդութեան կամ
այլ իրիք հաղորդի ըստ աշխարհականաց, պարտ է ու֊

բարաւ ընդունել զսրբութիւնն : Այլ Թէպէտ խափանեալ է արդ վճիռն՝ որ ընդ բանադրանօք սահմանէր զայս , սակայն չէ աղատ ի ներելի մեզաց՝ որ զանց առնէ զարարողութեամբս :

ՑՕԴՈՒԱԾ Զ

ՑԱՂԱԳՍ ՍՐԲՈՑ ՊԱՏԱՐԱԳԻՑ

59. Օրէն էցէ անկարօտ քահանայից ընդունել պատարագիս :
60. Որ այլ և այլ պատարագիս վասն միոյ պատարագի ընդունի :
61. Ո՞ր էցէ օրէն արդար պատարագեաց :
62. Զի օրէն է ընդունել աւելի քան զարդարն , և զնուազն քան զայն արդելուլ : Որ ընդունի զնուազն , օրէն էցէ նմա նուազել զթիւ պատարագաց :
63. Որ չմատուցանէ զպատարագ խոստացեալ ընդ դոյզն ինչ պատճառագեաց :
64. Որ սակ արկանէ զպատարագեաց :
65. Որ խորհ ի պատարագեաց , կամ ասյ պատարագել այլուստ քահանայի ըստ ոչ կամաց բարերարին , ոճմ պարտական է հատուցանելոյ :
66. Եթէ պատարագիքն ի հնորհս անձին ուրուք էցեն առատաձեռնեալ :
67. Զժամարարաց :
68. Զեկեղեցպանաց :
69. Եթէ պատարագիչն Թողեհ կամակար զմանն խորհալ և եթէ հատակատարն :
70. Որ ժողովէ պատարագիս :
71. Որ փոխանակէ պատարագս :
72. Վասն ոյց ժողովգադպեաք պարտին պատարագել :
73. Վասն ոյց և այլ ժառանգաւորք կամ ժամարարք կուսաստանաց . կարիցեն երբեմն վասն այլոց պատարագել, կամ Թողուլ զպատարագ . զինչ եթէ հիւանդանայցեն . զմիաբանական պատարագէ :
74. Զնախագրութենէ պատարագաց :
75. Օրէն էցէ ժամարարի յայլուստ եկեղեցւոջ կամ սեղանի պատարագել . եթէ ոչ պատարագէ յարտունացեալ սեղանի . եթէ այլոց ասյ պատարագել :
76. Կուազումն Թուոյ պատարագաց :
77. Ի նուազել հասից օրէն էցէ եպիսկոպոսի նուազել զթիւ պատարագաց :
78. Օրէն էցէ և ժամարարի :
79. Կարիցէ կրօնաւոր պատարագել ընդդէմ դիտաւորութեան մեծաւորի :
80. Բաւական էցէ ունակական դիտաւորութիւն :
81. Ընդ դիտաւորութիւն :
82. Պայմանաւոր դիտաւորութիւն :
83. Մեղանչէ մահուչափ որ չտապան պատարագէ :
84. Ցայտարարութիւնք սրբոյ արարողութեանց ժողովոյն էցեն օրէնք :

59· Օ պատարագէ ինայ մէջ ձառել՝ի քննութեան նուիրելոց· ասա զպատարագեաց ևեթ ասասցուք և վասն որոց մատուցանի պատարագ ։ Աստուածաբանք առ հասարակ օրէն համարին ընդունել պատարագիս· զի որպէս սուրբ Գրիգորիոսին ասէ՝ “Վահանայն ոչ որպէս կինս պատարագին ընդունի զարծաթ, այլ որպէս Թոշակ կենայ,, ։ Եւ որպէս ձոխք ևս արժանի են վարձուց՝ի գործել ինչ արժանաւոր գնոց, նոյնպէս և քահանայ անկարօտ կարէ առնուլ պատարագիս՝ որպէս ուսուցանեն աստուածաբանք առ հասարակ ։ Գլաց՝ի վեր անդր (Դ· 45)· զի չէ ինչ ընդհակառակութիւն պատարագել գլխաւորաբար վասն Թոշակի· զի որպէս սուրբ Գրիգորիոսին ասէ, Թոշակն այն ոչ որպէս գին հոգևորական իրին պահանջի, այլ որպէս ապրուստ քահանային՝ որ վաստակի՝ի պատարագել ։

60· Կախեալ է զի Գլեքսանդր Ե պատապարտեաց երկուս Թիւր վարդապետութիւնս, որ հային՝ի խընդիրս յայս· յորոց առաջինն այս է· “Որքն է քահանայի առնուլ կրկին պատարագիս վասն նոյն պատարագի, հաղորդս առնելով զնդրօնն և գլխաւորագունի մասին պղտղ պատարագին՝ որ նմին ինքեան պատարագողին է անկ, և և յետ վճռոյ Ալբքանոսի Ը,, ։ Պատճառ դատապարտութեան վարդապետութեանս է բոլորովին անստուգութիւն հաղորդութեան գլխաւորագոյն պտղոյ պատարագին· զի Թէպէտ և բազումք յաստուածաբանից ընդունին զայն, սակայն բազումք ևս՝ որպէս Գայանն, Ղուկոյ, Սուարէզ, Ագուէզ, Թոմաս պուրինի և այլք ոչ ընդունին ։ Երկրորդ վարդապետութիւնն դատապարտեալ այս է· “Ոչ ընդդէմ արդարութեան առնուլ պատարագիս վասն բազումս պատարագաց և մի ևեթ պատարագ մատուցանել· և ոչ ընդդէմ հաւատարմութեան է, երդմամբ ևս խոստանալ բարեբարին չմատուցանել վասն այլոց ուրուք զպատարագն,, ։ Եւ պատճառ դատապարտութեան վարդապետութեանս է, զի Թէպէտ և հաւանականագոյն է կարծիք սրբոյ Գրիգորիոսի՝ զոր հաստատեն և Հաբերտ, Կոննէթ, Փինեաթելլի, Ֆաւրնելլի, Վոնչինա, Վանոյ, Ալմատիկեանք և այլք, զի զօրութիւն պատարագին անբաւ է Թէ ըստ աստուածութեան և Թէ

ըստ տարածութեան, գոլով նոյն ընդ անբաւաղօր պատարագի խաչին, սակայն չէ անբաւ ընդունակութիւն մարդոյ՝ վասն որոյ մատուցանին, նմին իրի և իւրաքանչիւր ոք ըստ իւրում բաւականութեանն ընդունի զպատուղ նորին. սակայն և հակառակն նորին կարծիք, զոր հաստատեն սուրբն Պռնաւենթուրա, Յոթոյ, Յոնքալեա և այլք, հաւանական է՝ զօրութեան սրբոյ պատարագին ոչ ըստ սաստկութեան և ոչ ըստ տարածութեան գոլ հաղորդելի անբաւ, նմին իրի և ՚ի հաղորդելն բազմաց՝ նուազ իւրաքանչիւրոյն օգնել քան եթէ միայն ումեք էր հաղորդեալ:

61. Յակ արդար ՚ի պատարագիս ոչ ըստ չափոյ առօրեայ պիտոյից է, այլ ըստ սահմանելոյ սովորութեան կամ թեմական եպիսկոպոսին և կամ գաւառական ժողովոյ՝ որպէս համարին առաւելագոյնք յաստուածաբանից, և որպէս յայտ արար սուրբ ժողովն տրիդենտեան սահմանադրութեանց: Ըստ նմին սակի պարտ է վարել և կրօնաւորաց, որպէս ասեն Յ՝ասգուէդ, Յ՝ոլինա, Վռանչինա, Յ՝իւա և այլք, և որպէս նոյն սուրբ ժողովն յայտ առնէ: Յ՝ասն որոյ եթէ կտակագիրն թողու գումար ինչ վասն պատարագեաց՝ առանց սահմանելոյ զթիւ պատարագաց, պարտ է ըստ հասարակաց սակի հաշուել զայնս, և կամ եպիսկոպոսին ըստ սովորութեան երկրին սահմանել զսակ, որպէս դարձեալ նոյն ժողով յայտ առնէ, սակայն հայելով և ՚ի ձոխութիւն կամ ՚ի նուազութիւն հրիտակին:

62. Ըայց թէպէտ և չէ օրէն քահանային առաւելագոյն քան զսահմն պահանջել պատարագիս, այլ ոչ արգելու սովորութիւն և ոչ եպիսկոպոսին օրէն է արգելուլ զնոսա յընդունելոյ՝ եթէ ինքնակամ ոք առաւել ինչ քան զսահմն սովորական մատուսցէ, որպէս ուսուցանեն Ի՝եսիոյ, Ի՝ուկոյ, Յուարեզ, Պռնաչինա և այլք, և որպէս նոյն ժողով յայտ առնէ: Ըակ ընդ հակառակն օրէն է եպիսկոպոսի արգելուլ՝ մի ումեք նուազ քան զարդար սահմն ընդունել պատարագիս, որպէս հաւանականացոյս ուսուցանեն Յուարեզ, Պռնաչինա, Յոնքալեա և այլք՝ ընդդէմ Ֆօրն Յոթոյի և այլոց: Ըա յարգելուլ եպիսկոպոսին, պարտական են քահանայք հնազանդելոյ, և հաւանականութիւն կարծեաց Ֆօրն

Սոթոյն ոչ ազատ կացուցանէ զնոսա ի հնազանդութե-
նէ. զի յերկբայականս զօրէ իշխանութիւն մեծաւորի,
որպէս ասացաք ի գլ. ԺԹ. 17։ Եւ եթէ քահանային
ընկալեալ իցէ պատարագիս նուազ քան զսակ արդար,
չէ օրէն նմա նուազել զթիւ պատարագաց, և ոչ մի
պատարագ վասն երկուց ումանց մատուցանել՝ որոց զկէս
սակին առեալ իցէ ի պատարագիս. որպէս սահմա-
նեաց Ներսիկեներիոս ԺԱ, և Աբրբանոս ի Հաստատեաց
զայն ի ձեռն նոյն վերոյիշատակեալ Ժողովոյ։ Նմա ե-
թէ քահանայն գիտելով զթիւ պատարագացն և զսակ
պատարագեաց յանձն առնուցու, և ոչ յանգիտանալ
նորա զնուազութիւն ողորմութեանն՝ որպէս ազգ առ-
նեն Այսման, Պարպոզա, Յոնքալեա, Մուրնելի և
այլք։ Եւ գիտելի է ասա, զի քահանայի՝ որ խոստա-
նայ ժառանգի վախճանելոյն վաղագոյն մատուցանել
վասն հոգւոյ նորա պատարագ ըստ կտակին՝ պարտ է,
մինչ չև իսկ ընկալեալ զպատարագիս, մատուցանել զը-
պատարագս։

63. Զի՞ որ ընդ դոյզն ինչ Թոշակի խոստանայ պա-
տարագել, մեղիցի՞ ինչ մնհաւանի՞ի չպատարագելն։ —
Վասթրոփալ, Ափորեր, Պալմատիկեանք և այլք չհա-
մարին նմա զայն ի մեղս վասն դուշնաքէութեան նիւ-
թոյն։ Զի՞ Հաւանականագոյնս զհակառակն հաստա-
տեն Աքրուա, Հոլշման, Յոնքալեա և այլք. զի ոչ ըստ
արժէից Թոշակին գատելի է աստ, այլ ըստ ծանրու-
թեան գնասուն՝ զոր հասուցանէ ոք այլում, զրկելով
զնա ի ընդհարհայ պատարագին ընդդէմ արդարութեան,
զոր պարտէրն նմա վասն խոստմանն։ Զի՞ այլ ինչ է, եթէ
առանց ինչ Թոշակի ձրի խոստացեալ իցէ, որպէս նո-
քին իսկ աստուածաբանք յաւելուն՝ վասն հաւանակա-
նութեան ձրի խոստմանց չածելոյ ծանր ինչ պարտս,
որպէս ասացաք ի գլ. ԺԱ. 127։

64. Օրէն է քահանայի պայմանել զպատարագիս
ըստ արդար սակի և ըստ սովորութեան, որպէս ուսու-
ցանեն աստուածաբանք, Եսկոյ, Անքէզ, Այսման,
Վասթրոփալ, Սոթոյ, Յոնքալեա և Պալմատի-
կեանք, ընդդէմ Հօրն Վոնէնսայ։ Զի թէպէտ և
պատարագիք չիցեն պարտք ըստ արդարութեան որպէս
գինք պատարագին, սակայն ըստ արդարութեան և

պարտք են որպէս ապրուստ քահանային, վասն որոյ և օրէն է պայմանել զայն։ Եւ ոչ զօրեն ինչ ընդդէմ օրինաց չարկանելոյ սակ զհոգևորաց, զի պատ է իմանալ զայն ըստ հոգևորական լեզուի մասին և ըստ անիրաւ սակարկութեան. զի ըստ այսմ ժողովին տրիդենտեան հրամայէ եպիսկոպոսաց արգելուլ զիւր և զլաւ պահանջմունս պաշտպանեայ, այս ինքն որ չկրեն կամակար տուեալ՝ այլ ժուռվեամբ պահանջեալ։

65. Իչ է օրէն կընդունել առատ պատարագիս՝ խորել անտի մասն, և մնացորդսն տալ պատարագել այլում։ Այս այսպէս սահմանեաց ժողովն աւանդապահ տրիդենտեան սահմանադրութեանց, Ուրբանոսի է և Պիոս վկենտեայ ի հաստատելով զայն. և Կենեդիկտոս ԺԴ յաւել սահմանել, զի եթէ որ կեկեղեցական՝ նայ արասցէ զայս՝ նովքն իսկ գործով կախեալ կացցէ ի պաշտամանց, և եթէ յաշխարհականաց որ՝ անկցի ի քանադրանս վերապահեալս Պապին։ Ըստ այսմ և պարտապան համարին աստուածաբանք զքահանայն ի հատուցումն. զի թէպէտ և ստանայ նա տէրութիւն ի վերայ ողորմութեանն, այլ ըստ կամաց տուողին ստանայ զայն. և որ տայն՝ ոչ միայն զպատարագելն կամի, այլ և այսչափ ինչ ողորմութեամբ պատարագել. զի առաւելագոյն ողորմութեամբ առաւելագունից ընդհայց պատարագին հաղորդ գտանի։ Ընդ այս դիտաւորութիւն նորա յէութիւն դաշինն մնանէ, վասն որոյ և մեղանչէ քահանայն ընդդէմ կամաց տուողի զպատարագիսն։

Ասեն առնեն դարձեալ Աքրուա, Փասդուալիկոյ, Վինչինա և Ալիւա, զի եթէ որ տայէ առատ պատարագիս ումեք վասն առանձինն հատուցոյ յաղօթս նորա, ոչ օրէն է նմա այլում քահանայի տալ զայն. և ծանր իսկ մեղանչէ, եթէ դիտիցէ զաբերելն զժկամակութիւն յոյժ ընդ այն։ Իսկ զհատուցումն խորհեալ մասին՝ Աքրուա և Փասդուալիկոյ օրէն համարին առնել կամ բարերարին և կամ պատարագողին. այլ Ալփոբեր, Հոլզման և Ֆուրներ զհատուցանել պատարագողին. զի ընդ պարտս պատարագելոյ ի նա անցանեն և իրաւունք պատարագեացն ըստ կամաց բարերարին։

66. Այս ուրեմն պատարագիք անկ են բովանդակ

պատարագողին, եթէ չիցէ զի առատագոյն ոք ումեք տուեալ իցէ ողորմութիւն, ոչ վասն պատարագին միայն՝ այլ և վասն բարեկամութեանն ընդ նմա, կամ աղգականութեան, կամ ընտրհակալութեան, կամ աղքատութեան, և կամ վասն այլոց ինչ այսպիսի պատճառաց։ Այս չէ իսկ հարկ զի բանիւք յայտ արասցէ զայն բարերարն, շատ է զի բարեպատիս 'ի հանգամանս անտի յայտնի իցէն միտք նորա, որպէս ուսուցանեն աստուածաբանք։

67. Պարձեալ և ժամարարք ժառանգաւորք կարեն տալ այլոց պատարագել փոխանակ իւրեանց, տալով նոցա զսովորական սակ պատարագեաց՝ որպէս սահմանէ Ինոկենտիոս ԺԲ։ Այսպէս և ժամարարք առաջամանակեայք, որպէս նոյն վերոյիշեալ ժողով յայտ առաբար։ Օնոյն հաստատեն Ալիւս, Աքրուա, Կոպաթոյ և այլք զքահանայից՝ որոց յանձն է հանապազօրեայ միջնջենաւոր պատարագաց մատուցումն, կամ որոց թողեալ է հրիտակ Ձոխ՝ պարտականութեամբ զօրհանապազ ընդ ամենայն կեանս իւրեանց պատարագելոյ, որպէս հաստատեն Ինոքաւեա, Ժամպուրինի, Ռիչչիոյ և այլք. զի ամենայն վճիռք հակառակք զառձեռն մատուցելոց ևեթ պատարագեաց խօսին։

68. Այլ բայառութիւնքս այսոքիկ ոչ ինչ զօրեն վասն աւագերիցանց կամ եկեղեցպանաց. զի սոցա չէ երբեք օրէն խորել ինչ 'ի պատարագեաց, և ոչ վասն ծախուց մատուցման պատարագաց՝ բայց եթէ չիցեն եկեղեցւոյն հասք բաւականք։ Այս գիտելի է զի ըստ վճռոյ նորին ժողովոյ, զոր և հաստատեաց Ինոկենտիոս ԺԲ, պարտ է եկեղեցպանաց զգուշակ միջնջենաւոր և առաջամանակեայ պատարագաց դնել 'ի ցոյց յանդգնութեան։

69. Զմանք յաստուածաբանից ընդ բայառութիւնս համարին յորժամ պատարագիչն կամակար մասն ինչ 'ի պատարագեացն թողեալ ումեք. բայց Ռենեդիկտոս ԺԴ արգել և զայս կոնդակաւ։ Այն որոյ և ոչ կարծիք զամպուրինեայ է ընդունելի, որ օրէն համարի կամակատարի զպատարագս թողեալս 'ի կտակաղրէն տալ մատուցանել ուր նուազագոյն է սակ պա-

տարագեաց, և ունել իւր զմնացեալսն որպէս պատուշ ՀարտարուԹեան։

70. Այլ օրէն էր քահանային, որ ժողովէ պատարագիս, ունել ինչ անտի մասն աշխատուԹեան իւրոյ։ — Ասէր Վռնչինա ոչ օրէն համարի, զի յաւելու Ղևենեգիկտոս ԺԴ՝ի նմին կանգակի դատապարտել "Որ պատարագիս առատագոյնս ժողովեալ, կալցի իւր անտի մասն՝ի տալն մատուցանել պատարագս"։ Այլ Ասէրն Վ իւա վասն այնոցիկ իմանայ զայս դատապարտուԹիւն, որք ինքեանհրաման ջրջին՝ի խնդիր պատարագեաց, և ինքեանք ապա տան այլոց զպատարագիս խոըելով յայնցանէ չարաշահուԹեամբ. այլ ոչ վասն այնոցիկ՝ որոց տուեալ է պաշտօն դրամաժողովոյ առ այս, և եկեղեցպանին՝ որ տայ զպատարագիս՝ հանէ նմա զարդար վարձս աշխատուԹեանն։ Այս չէ անհաւանելի կարծիքս այս։

71. Օրէն էր քահանային՝ որոյ ընկալեալ էր այն օր առաջ պատարագիս՝ խնդրել յայլմէ ումեքէ՝ի քահանայից պատարագել յայնմ աւուր ըստ դիտաւորուԹեան իւրում, խոստանալով պատարագել՝ի վաղիւ անդր ըստ դիտաւորուԹեան նորա։ — Աքրուա և ՄացցոլԹա օրէն համարին, իբր զի չէ այն խորել՝ի պատարագեալ՝ այլ փոխանակել պատարագ ընդ պատարագի։ Այլ Ասէրն Վռնչինա ջընդունի և զայս՝ չկարելով ազատ կացուցանել՝ի չարաշահուԹենէ. այլ և ոչ իշխէ դատապարտել զայն՝ի ծանր մեղս. որում և սուրբն Աղիոնսոս համաձայնի։

72. Պարտ է ժողովրդապետաց ըստ սահմանադրուԹեան Ղևենեգիկտեայ ԺԴ պատարագել վասն ժողովրդեան իւրեանց յամենայն կիւրակէս և՝ի տօնս, իսկ և յայնս՝ յորս տնօրինեալ իցեն գործք ծառայականք. և սա և չունելով նոցա ապրուստ ըստ պատշաճի։ Այլ ընդհակառակն և որոց միանգամ առատ իցեն հասք, չեն ինչ պարտական յայլ աւուրս բաց՝ի տօնից մատուցանել վասն ժողովրդեան պատարագ։ Տես և որ ինչ ասացաքն՝ի գլ. Ե. 29։

73. Իսկ այլ ժառանգաւորք՝ որոց չիք ինչ հոգաբարձուԹիւն ժողովրդեան, եԹէ բարեբարին՝ որ զԹոշակսն սահմանեալ է՝ չիցէ բացայայտակի ազատ կացու-

ցեալ զնոսա ՚ի պատարագելոյ վասն իւր, պարտականք են զօրհանապազ վասն նորա պատարագել, որպէս յայտ արար Ժողովն աւանդապահ տրիդենտեան սահմանադրութեանց։ Օ՞նոյն է իմանալ և զժամարարաց եղբայրութեանց և կուսաստանաց, որք ՚ի լուր եղբարցն և կուսանաց պատարագեն· զի և սոքա վասն բարերարացն պարտին պատարագել։ Ոչայց Լեծանա, Տիանա, Սալմատիկեանք և այլք զրեթէ առ հասարակ օրէն համարին ամենեցուն այսոցիկ ժամարարաց հինգ կամ վեց պատարագս ՚ի տարւոջ մատուցանել վասն իւրեանց, կամ աղգականաց, կամ բարեկամաց, և կամ բարերարաց· զի համարի և բարերարին հաւանել ընդ այս, բայց միայն չէ օրէն նոցա յայն աւուրս ընդունել պատարագիս։ Պարձեալ և ՚ի հիւանդանալ ժամարարին սուղ ինչ ժամանակ, ոչ է պարտական տալ մատուցանել այլոց զԹերին Թուոյ պատարագացն, եթէ բարերարին չկոչէ սահմանեալ անխափան զմատուցումն հանապազորդ պատարագին։ Օ՞սուղ ժամանակ սովորաբար իմանան աստուածաբանք աւուրս իբր հնգետասան· այլք՝ ընդ որս և Լայման և Սալմատիկեանք, ընդարձակեն զայն յամօրեայ ժամանակ· իսկ Լուկայ, Կաւարրոյ և այլք ոմանք, ընդ որս և Հայրն Վրնչինա, յերկարաձգեն զայն ցամիսս երիս· զոր հաւանական համարին և Վասթրոփալ և Պուսեմպայ։ Պիտելի է աստ զի ըստ սահմանադրութեան Բենեդիկտոսի ԺԴ, զմիաբանական պատարագ Կղերոյ իւրաքանչիւր եկեղեցեաց պարտ է մատուցանել վասն ամենայն բարերարաց այնր եկեղեցւոյ։

74· Ոչ սակաւք յաստուածաբանից կարեւր համարին զնախագրութիւն Թուոյ և այլոց հանգամանաց Հրիտակի պատարագաց՝ ընդդէմ պայմանացն հաստատելոց ՚ի կաւակապէնս· և առ այս բաւական համարին 20 կամ 30 և կամ Թէ չատ՝ 40 ամս։ Ոչ ըստ Ջնմանրիա վարդապետութեան ոչ է ընդունելի նախագրութիւն ՚ի մեսինս յայսմիկ· զի Ժողովն տրիդենտեան արգելու մի ինչ ՚ի պայմանաց եկեղեցական հասից և ժառանգութեանց և հրիտակաց պակաս առնել· և Պիոս Ե ՚ի կոնդակին՝ որով հաստատեաց զԺողովն աւանդապահ տրիդենտեան սահմանադրութեանց՝ ան-

զօր յայտ առնէ օր ինչ այնուհետև ընդդէմ այնորիկ սովորութիւնս և զգիտութիւն։ Պանաւանդ զի զըժաւարաւ յոյժ մարթ է աստ համարել անգիտութեամբ զհակառակ սովորութիւն ինչ մուծեալ, զի պարտ է ժառանգաւորաց դիտել զօրէնս ժառանգութեան։

75. Պպա ուրեմն մեղանչէ ժամարար՝ ի չպատարագել զսահմանեալ՝ ի բարերարէն պատարագս, կամ՝ ի պատարագել յայլում եկեղեցւոջ կամ յայլում սեղանի կամ յայլում ժամու. և մեղանչէ մահուչափ եթէ ստէպ և անպատճառ զանց զպայմանօքն առնիցէ։ Պսեմ իսկ ոպէս, զի չէ ինչ ծանր միանգամ կամ երկիցս յամենեան առնել զանց, մանաւանդ եթէ սեղանոյ և եթէ իցէ փոփոխութիւն։ Յաւելլի և անպատճառ, զի իրաւացի ինչ պատճառ՝ որպէս թեզեկ եկեղեցւոյ կամ սեղանոյն օծութեան բարձումն և այլն՝ ազատ կացուցանեն զժամարարն՝ ի պայմանաց անտի։ Պարձեալ և անօրինութիւն ազատ կացուցանէ զնա. զի ըստ բազմաց յաստուածաբանից՝ օրէն է եպիսկոպոսի անօրինել և հրաման տալ նմա այլուր պատարագելոյ վասն տկարութեան, կամ պարապելոյ յուսուն, կամ դժուարութեան, կամ առաւելագոյն օգտի եկեղեցւոյն, և կամ վասն այլոց այսպիսի պատճառաց։ Օ՞ի այսուիկ հանգամանք յարակից կամաց բարերարին յառաւելագունից անտի բարեաց փոխարինին։ Պանաւանդ զի ժողովն տրիդենտեան ընդարձակ եպիսկոպոսաց իշխանութիւն՝ ի դէպս ինչ փոխանակել զկտակ. (տե՛ս՝ ի գլ. Ժ. 62)։ Պակայն Պայման և Պասգուալիկոյ ոչ օրէն համարին եպիսկոպոսի անօրինել, եթէ կտակագրին՝ ի գլուխ թիւն հաստատացելոյ զտեղի և զժամ պատարագին սահմանեալ իցէ։ Իսկ եթէ օր փոխանակ պատարագելոյ յարտունացեալ սեղանի՝ այլուր պատարագիցէ, պարտական՝ ի հատուցումն համարի զնա Պոնքալեա, եթէ պատարագիքն աւելի իցեն քան զակ սովորական. և ոչ՝ այլուր ևս լինակատար ներողութիւն վասն ննջեցելոյ շահելով՝ ազատ՝ ի պարտականութենէ հատուցման գտանի, որպէս ուսուցանեն ընդ Պոնքալեայ այլք ևս յաստուածաբանից։ Պեղանչէ դարձեալ ժամարար, եթէ ոչ անձամբ՝ այլ՝ ի ձեռն այլոց մատուցանիցէ զպատարագս սահմանեալս յայտնապէս՝ ի բարերա-

րէն իւրովի պատարագելոյ. այլ եթէ չիցէ այսպէս սահմանեալ, օրէն է նմա միշտ ի ձեռն այլոց մատուցանել զպատարագս, որպէս ուսուցանեն Պաղեստինեանք, Ցիանա և այլք, և որպէս հաստատեն յայտարարութիւնք նորին սուրբ ժողովոյ:

76. Ցնօրինուածն հրիտակաց ի նուաղել և ի փոխանակել զպարտս պատարագաց արգելեալ է եպիսկոպոսաց, և պահի սրբոյ առաքելական գահոյն իշխանութիւնս այս որով վարին քահանայապետք Հռովմայ վասն իրաւացի և օրինաւոր եղեալ պատճառաց, որպէս ի պակասել քահանայից, ի նուաղել հասից, վասն սակաւութեան պատարագաց, վասն շինութեան եկեղեցւոյն կամ մենաստանի, և այլոց սոցին սակի պատճառաց:

77. Պատն որոյ չէ օրէն եպիսկոպոսի նուաղել զպարտիս պատարագաց առ ի չգոյէ քահանայից՝ որք այնու գոյն ինչ ողորմութեամբ կարիցեն պատարագել: Այլ ոմանք յաստուածաբանից ամփոփեն զվճիռս արգելականս յայնս եթէ ի հրիտակաց՝ որ կան և մնան աննուազելի որպէս են՝ ի սկզբանէ հաստատեալ. այլ եթէ ի սկզբան անդ բաւէին այնոքիկ վասն թուոյ այսչափ ինչ պատարագաց, և ապա ի նուազել հրիտակաց՝ ոչ ևս բաւեն, թուի թէ իցէ եպիսկոպոսաց իշխանութիւն չնորհեալ նոցա ի հասարակաց իրաւանց նուազելոց զթիւ պատարագաց կամ փոխանակելոյ: Այս այսպէս կարծեն Կամպուրինի, Ասքրուա և Փասգուալիկոյ, որ ընդդէմ և վասն ժամերգութեանց և աղօթից հաստատէ, իբր զի վճիռք ընուազուին եթէ թուոյ պատարագաց արգելուն:

78. Այլ ի պակասել հասից՝ զինչ պարտ իցէ առնել ժամարարին: — Եթէ բոլորովին իցեն պակասեալ և առանց իրիք իւրոց յանցանաց, ոչ ևս պարտական է մատուցանելոյ զսահմանեալ պատարագս՝ ըստ հասարակաց վարդապետութեան և ըստ վճռոց առաքելականս գահոյն: Ի նուազել ևս հասիցն՝ եթէ սակ պատարագեացն սահմանեալ իցէ ի կտակողէն, որպէս թէ կրկին ֆրանք ի պատարագիս, օրէն է նմա նուազել ըստ այնմ զթիւ պատարագաց. զի որպէս յառաւելուլ հասիցն պարտ էր նմա յաւելուլ զթիւ պատարագաց, նոյն-

պէս օրէն է և ՚ի նուազել հասիցն պակաս առնել զպատարագս։ Եւ զի՞նչ պարտ իցէ նմա առնել, եթէ կըտակագրին սահմանեալ իցէ զթիւ պատարագաց, և ՚ի նուազել հասից և ոչ առ սովորական սակ պատարագաց բաւիցեն։ — Դառնալագոյնք յաստուածաբանից ոչ օրէն համարին նուազել յայնժամ զթիւ պատարագաց, այլ առ այս զվճիռ Ալրբանոսի Ը, և միւս այլ վճիռ արդեւական, որ հրամայէ դիմել յայնժամ առ գահն առաքելական, "եթէ և այնպէս նուազ իցէ հրեւտանն մինչև ոչ ումեք յանձն առնուլ զայն յարակից բեռամբն,,։ Նայ Պուսեմպայ, Ծուկոյ, Վասգուալիկոյ, Մոնքալեա և այլք օրէն համարին ըստ մտաց կըտակագրին. զի ոչ է մարթ կարծել պարտ ՚ի նմանէ ՚ի վերոյ եղեալ ժամարարին պատարագել նուազ քան զարդարն սակիւ պատարագեաց։ Եւ յորատեն վանն զգուշութեան, և Ջաքուա և Ալուբնելի պարտ ևս համարին, դիմել յայնժամ՚ի գատաստան եպիսկոպոսին կամ դեղի այլոյ ուրուք խոհականի։ Եւ առ հասկառակ վճիռն պատասխանեն, զի չէ աստ խնդիր մնօրինելոյ զթիւ պատարագաց՝ այլ գադարումն պարտուց առ ՚ի չգոյէ հասից. զի վճիռքն այնոքիկ ըստ մտաց տրիդենտեան ժողովոյ տուեալ են. իսկ ժողովն այն ոչ ինչ զնուազելոյ հասից ասէ, այլ զպատարագեաց ՚ի սկզբանէ հետէ այնպէս սահմանելոյց, վասն որոյ սակաւութեան չգտանին պատարագիչք։

79. Հաղորդս զօրութեան պատարագին առնել զոք՝ քահանային ևեթ է անկ. վասն որոյ կրօնաւոր եթէ հակառակ կամաց մեծաւորի իւրոյ մատուսցէ վասն ուրուք պատարագ, ոչ ըստ օրինի գործէ, այլ զգրկ դիտաւորութիւն նորա։ Ո՛չ այս այսպէս ուսուցանեն Ալուբկզ, Ա ասգուէզ, Հայման, և այլք բազումք. և Ջուկոյ անընդունելի համարակաց համարի զհակառակ կարծիս. զի կրօնաւորն ըստ իշխանութեան կարգին, որով վարի անդ, ոչ է հպատակ կամաց մեծաւորին։

80. Պարտ է դիտաւորութեան կանխել քան զպատարագ, կամ գէթ քան զսրբագործութիւն։ Եւ՚ի՞նչ իցէ ունակական դիտաւորութիւն, այսինքն դիտեալ միանգամ և ոչ ևս նահանջեալ։ — Մինչ յաստուածաբանից ոչ շատ համարին զայն, պահանջելով որպէս

վան սրբագործութեան գէթ զզօրութեամբն դիտաւորութիւն, այլ հասարակաց և ճշմարիտ կարծիք շատ համարին զունակականն. զի դիտաւորութիւն հաղորդս առնելոյ զոք զօրութեան պատարագին՝ ոչ այլ ինչ է, բայց պարգևել բանիւ. որ միանգամ արարեալ՝ զօրէ միշտ ցորչափ չիցէ նահանջեալ: Իսկ եթէ առ սրբագործութիւն պահանջի գէթ զօրութեամբն դիտաւորութիւն, չիք ընդ այն և ընդ այս համեմատութիւն. զի՛ի սրբագործութեան դիտաւորութիւն քահանային կացուցանէ զնորհուրդն, այլ ոչ և ատ զզօրութիւն պատարագին՝ որ առանց իսկ դիտաւորութեան քահանային զօրէ ինքնին. վասն որոյ բաւէ առնել նորին զոք միանգամ հաղորդ այնր զօրութեան:

81. Եթէ՛ի տասանց ոմանց ընկալցի ոք պատարագիս, օրէ՞ն իցէ նմա խառնիխուռն վասն նոցա մատուցանել տասն պատարագս: — Ահլուխոյ և Վրանչինա առանց իրիք պայմանի օրէն համարին և շատ՛ի կատարումն պարտուց նորա: Իսայց Պոնաչինա, Մոնքալեա, Ղէբսա, Ծամպուրինի և այլք ոչ շատ համարին՝ եթէ զմի մի՛ի պատարագաց վասն միոյ ուրուք՛ի նոցանէ անխտիր մատուսցէ, առանց որոշելոյ անձն. զի առ՛ի հատուցումն խնդրի դիտաւորութիւն հաղորդս առնելոյ զմի մի՛ի նոցանէ զօրութեան պատարագին: Յակայն եթէ զմի մի՛ի պատարագաց վասն տասանցն ևս մատուցանիցէ, լնու յայնժամ զպարտս իւր. զի զօրութիւն պատարագին բաժանելի է ընկալեալ յամենեցունց. վասն որոյ յընդունել իւրաքանչիւր ուրուք՛ի նոցանէ զբաժին իւր՛ի տասանց ևս պատարագաց, լինի ընկալեալ բովանդակ զզօրութիւն միոյն յայնցանէ:

82. Օ՞րչ՞ դիտաւորութիւն պայմանաւ: — Եթէ յաղագս անցելոց իրաց է պայմանն, զօրէ. այլ ոչ և զապառնեաց, որ Ղատուծոյ աեթ է յայտնի: Ա՛ասն ոմոյ ոչ է օրէն մատուցանել պատարագ վասն որ առաջին տալոց իցէ պատարագիս, որպէս արգելու իսկ զայն վՀիւ Ալեմայ Ը, զոր Հրատարակեաց Պօղոս Ե: Իսայց եթէ դիտիցէ ոք վասն ննջեցելոյ ուրուք՝ զի ազգականք նորա տալոց են պատարագիս վասն հոգւոյ նորա, օրէն է նմա կանխել մատուցանել զպատարագս, որպէս բարւոք ուսուցանեն Ա՛ասգուէզ, Ծուրնելի, Ղէբսա և այլք:

83. Որ ի քառորդ ժամու կատարէ զսուրբ պատարագն, մեղանչէ՞ մահուամբ: — Ոչ պիտի եւ իցէ՝ որք եւ զքառորդ ժամու համարին մահուամբ, այլ սուրբն Աստուածոսոս առ ի սահմանել ապահովագոյնս ասէ. Որ ի նուազ քան ի քառորդ մի ժամու կատարէ զպատարագ, զԺուարին է նմա՝ չասացից թէ անկարելի՝ զերծ ի մահուամբ մեղաց գոլ. զի կրկին մեղս գործէ, մի՝ անարգութիւն խորհրդոյն, եւ միւս եւս՝ գայթակղութիւն ժողովրդեան: Յաղագս անարգութեանն ասէ սուրբ Ժողովն տրիդենտեան՝ դժուարաւ անկարդալ գոլ յամպարշտութենէ. զի անհնար է քահանայի յայնչափ սուղ ժամանակի կատարել եւ զաղօթս սրբոյ պատարագին եւ զարարողութիւնս եւ զերկրպագութիւնս եւ զօրհնութիւնս՝ որ առ հասարակ ի յարգութիւն խորհրդոյն սահմանեալ են եւ հրամայեալ: Ոչ ինչ նուազ եւ զգայթակղութենէն պարտ է ասել, զոր տայ քահանայն ի շտապելն զաղօթս եւ ի շուարեալ զարարողութիւնս. որով արհամարհ առնէ յաչս ժողովրդեան զահաւոր խորհուրդն աստուածային:

84. Յայտարարութիւնք սրբոյ արարողութեանց ժողովոյն համարիցի՞ն յօրէնս, եւ ածիցե՞ն պարտս ի վերայ հաւատացելոց: — Այո՛ ի ձև վճռոյ եւ վասն ամենեցուն իցեն տուեալ, օրէնք են եւ պարտս ի վերայ ածեն. զի իշխանութիւն է նորա, տուեալ նմա ի Աստուածոսոսէ ս լուծանելոյ զամենայն խնդիրս եւ երկբայութիւնս զարարողութեանց: Այլ եթէ պատասխանիք եւեթ իցեն տուեալք խնդրողաց, համարին յայտարարութիւնք եւ ոչ պատուիրանք: Օ՛այս այսպէս ուսուցանեն Հայրն Աերաթի, Լաքոպար եւ Լաքրուա:

ՅԱՆԿ ԳԼՈՒԽ ՈՅ

ՅԱՌԱՋԱԲԱՆ . . . . . էջ 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՅԱՂԱԳՍ ԽՂՃՄՏՑՆՆՑ

ՅՕԴՈՒԱԾ Ա
էջ 9

1 · Հեռաւոր և մերձաւոր կանոն քարուխեան մարգկային գործոց : — 2 · Քանիպատիկ է խղճ մտաց :

ՅՕԴՈՒԱԾ Բ
էջ 10

3 · Ուղիղ խղճ մտաց : — 4 · Մոլար խղճ մտաց : — 5 · Մարթի ոպիտուխիւն բնական օրինաց : — 6 · Մարթ իցէ անպիտանալ թէ յանկուխիւն չարեաց մեղք են : — 7 · Տարտամ խղճ մտաց : — 8–11 · Վարանական խղճ մտաց :

ՅՕԴՈՒԱԾ Գ
էջ 15

12 · Երկբայելի խղճմտանք · բացասական և դրական տարակոյս : — 13, 14 · Տեսական և գործնական տարակոյս : — 15, 16 · Ուր օրէնքն իցեն երկբայելի : — 17 · Ուր ուխտն իցէ երկբայելի : — 18 · Ուր չիցէ յայտ հրամանի մեծաւորին ընդ մեղք տրկանել պատուհասելոյն : — 19 · Ուր պարտք ծոմապահուխեան կամ ծոմ վան հաղորդուխեան իցեն երկբայելի : — 20 · Ուր արգելք կամ պարտք իցեն երկբայելի :

ՅՕԴՈՒԱԾ Դ
էջ 19

21 · Հաւանական խղճ մտաց : — 22 · Ի հաւաստոյս : — 23 · Ի բժըշկուխեան : — 24 · Ի դատաստանի : — 25–27 · Ի սուրբ խոստուրդս : — 28 · Ի տոյժս պլըղ : — 29 · Աստիճանք հաւանականուխեան : — 30 · Նուազ հաւանական : — 31 · Ամենահաւանական : — 32–41 · Հաւանական կամ հաւանականագոյն :

ԴԱՒԻԹ ԵՐԿՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ՕՐԻՆՑ

ՅՕԴՈՒԱԾ Ա
ԿՂ 30

1–3· Ջ[ինչ] են օրէնք և քանիսպատիկ : — 4· Պայմանք օրինաց : — 5–8· Հրատարակումն օրինաց : — 9, 10· Ընդունելութիւն օրինաց : — 11· Եթէ զամն տասն չկոչ լեալ ընդունելի : — 12, 13· Եթէ 'ի բազմաց լեալ անընդունելի :

ՅՕԴՈՒԱԾ Բ
ԿՂ 34

14–16· Հրամայական օրինաց պարտք : — 17· Կարիցէ՞ն հրամայել նեղքին ներգործութեանց մարդոյ : — 18· Եթէ ծանր նեղութիւն 'ի վերայ ածիցէ : — 19· Կարիցէ՞ն օրէնք բառնալ զպարտս բնութեան : — 20, 21· Պա՞րտ իցէ մարդոյ բառնալ զարգելս օրինապահութեան : — 22, 23· Երկբայութիւնք զօրինաց : — 24, 25· Պատժական, հոգևոր, զկողոպական, պայմանական օրէնք : — 26· Ի սուտ կարծիս հաստատեալ օրէնք : — 27· Դաշնադրութեան օրէնք : — 28· Ի կատարումն օրինաց իցէ՞ կարևոր 'ի շնորհս Աստուծոյ գոլ : — 29· Իցէ՞ կարևոր դիտաւորութիւն : — 30, 31· Պա՞րտ իցէ նովին միով գործով այլևայլ պատուիրանս կատարել : — 32· Ջ[ինչ] եթէ նովին միով գործով ընդդէմ այլևայլ պատուիրանաց ոք յանցանիցէ :

ՅՕԴՈՒԱԾ Գ
ԿՂ 42

33· Ո՛չ[ի] իցէ անկ քաղաքական օրէնսդրութիւն· և ո՛չ[ի] եկեղեցական : — 34, 35· Յաղագս սահմանադրութեանց Ժողովոց, և հռովմէական Ռոմեայի աւենին :

ՅՕԴՈՒԱԾ Դ
ԿՂ 44

36· Ո՞յր ոմանց պարտս 'ի վերայ ածեն օրէնք : — 37· Ածիցէ՞ն արդեօք տղայոց : — 38· Ածիցէ՞ն արդեօք օրէնադրաց : — 39, 40· Ածիցէ՞ն արդեօք օտարականաց : — 41· Եթէ օտարականք հարևանցի ուրեք կայցեն : — 42· Իցէ՞ իշխանութիւն եպիսկոպոսի անօրինել զուխտ օտարականաց, զծոմապահութիւն և այլն :

ՅՕԴՈՒԱԾ Ե
ԿՂ 46

43· Ո՞ր[ինչ] ազատ կացուցանիցէ զոք յօրինաց : — Անգիտութիւն : — 44· Երկիւղ : — 45· Անկարողութիւն :

ՅՕԴՈՒԱԾ Զ
Յաղագս փնօրինման : ԿՂ 48

46· Կարևո՞ր իցէ առ 'ի անօրինութիւն պատճառ իրաւացի : — 47· Ե-

Թէ աղերսագիր անօրինութեան իցէ Թէրի : — 48 · Եթէ իցէ վանն այլոց ուրուք : — 49 · Լաւելեայն անօրինութիւն : — 50 · Պատճառք անօրինութեան : — 51 · Ուր երկբայելի իցէ կարևորութիւն անօրինութեան : — 52 · Իցէ՞ երբեք օգուտ մեծաւորի անօրինել : — 53 · Եթէ ոք ոչ ըստ խղճի մտաց անօրինէ , կամ՝ Թէպէտ և ըստ խղճի մտաց՝ այլ առանց երեւելի պատճառի : — 54 · Եթէ ոք առ ահի անօրինէ :

ՅՕԴՈՒԱԾ Ի

Թէ պղծ անկ է փոխրինել : Էջ 51

55, 56 · Սրբազան Պատն ըստ կարգի իշխանութեան իւրոյ զինչ կարող է անօրինել : — 57, 58 · Զինչ ինչ եպիսկոպոսունք : — 59 · Զինչ ինչ ժողովրդապետք : — 60 · Զինչ ինչ կարգապետք : — 61 · Զինչ ոք ըստ աւանդեալ իշխանութեան : Եթէ վախճանի աւանդօղն : — 62 · Պայման օրինաց հինէ՛ն փոխրինուածն : — 63 · Սուղաւանդութիւն իշխանութեան : — 64 · Յաղագս անձամբ զանձն անօրինելոյ :

ՅՕԴՈՒԱԾ Ը
Էջ 55

65, 66 · Զի մարթի է դադարել անօրինման 'ի դադարել պատճառին : — 67 · Նահանջմամբ անօրինմանն : — 68 · Հրաժարմամբ անօրինելոյն :

ՅՕԴՈՒԱԾ Թ

Դադարուած , վինուղիւն , և բացառութիւնք օրինաց : Էջ 56

69 · Ի դադարել վախճանին՝ դադարիցէ՛ն օրէնք : — 70 · Զարգելեալ դրոց : — 71 · Զբարեկարգութեան օրինաց : — 72 · Զվինուղենէ օրինաց : — 73, 74 · Կարևո՛ր իցէ հրատարակութիւն վանն յայտարարութեան օրինաց : — 75 · Զվարդապետական վինուղենէ : — 76 · Կանոնք վինուղեան : — 77 · Բացառութիւն : — 78 · Դիպաց 'ի դէպս ընդ զօրեն օրէնք :

ՅՕԴՈՒԱԾ Ժ
Էջ 60

79 · Պայմանք կարևորք առ 'ի սովորութիւն : — 80 · Ցեղծուածն սովորեան : — 81 · Եթէ օրէնք մերժեն 'ի բաց զամենայն սովորութիւն ապագայ : — 82 · Սովորութիւն մեկնիչ օրինաց : — 83 · Եթէ օրէնք նահանջիցեն զամենայն հակառակ սովորութիւն :

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՑԱՂԱԳՍ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՑ ԵՒ ՄԵՂԱՑ

ՅՕԴՈՒԱԾ Ա
Էջ 63

1, 2 · Գործք մարդոյ և գործք մարդկայինք : — 3 · Յաղագս կամաւորի և հանգամանաց նորա : — 4–6 · Քանիպատիկ է կամաւորն : —

7–11· Զ[ինչ] է ազատն և քանիսպատիկ : — 12, 13· Արգելք մարդկային գործոյ, և նախ՝ ոգիտութիւն : — 14· Երկրորդ՝ բանութիւն : — 15· Երրորդ՝ տենչ հաճելոյ զայլս : — 16–18· Չորրորդ՝ երկիւղ, և քանիսպատիկ : — 19· Ուսումն մարդկային գործք ընդունին զբարութիւն կամ զչարութիւն : — 20· Գործ արտաքին յաճախ զչարութիւն ներքինոյն : — 21· Գու[շ] ինչ գործ մարդկային անխուսափական :

ՅՕԴՈՒԱԾ Բ
Էջ 69

22, 23· Զմահուչափ և զներելի մեղաց : — 24, 25· Յաղագս զգաստութեան մտաց : — 26–31· Յաղագս հաւանութեան կամաց : — 32· Զիմաստասիրական մեղաց :

ՅՕԴՈՒԱԾ Գ
Էջ 74

33· Իղձ, ախորժ, հեշտութիւն : — 34· Պա՞րտ իցէ զանեսակ հեշտութեան բացայայել : — 35· Հեշտանալ ընդ զաղջադործութիւն և ընդ խորհուրդ զաղջադործութեան : — 36· Իղձ գործելոյ ինչ չար, եթէ էր այն օրինաւոր : — 37· Ախորժ և իղձ խօսեցելոյ և տմուսնոյ : — 38· Ախորժել ընդ չարիս վասն բարի արդասեաց : — 39· Ընդ չարիս այլոց վասն բարի վախճանի : — 40· Ընդ արգելեալ ինչ 'ի գրեանն օրինաց :

ՅՕԴՈՒԱԾ Դ
Էջ 78

41, 42· Որոշումն մեղաց ըստ տեսակի : — 43· Ըստ Թուոյ· արմատ բազմապատկութեան ներգործութեանց : — 44–47· Նկարքն ներգործութիւնք : — 48, 49· Արտաքինք : — 50, 51· Արմատ զանազանութեան առարկայից :

ՅՕԴՈՒԱԾ Ե
Էջ 83

52· Արգասիք մահուչափ և ներելի մեղաց : — 53· Քանի՞ օրինակաւ մեղք մահուչափ փոխին 'ի ներելի : — 54· Քանի՞ օրինակաւ ներելին փոխի 'ի մահուչափ : — 55· Զ[ինչ] և 'ի հաւանեական վաստիպ մահուչափ գոլոյ :

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՑ ԱՌԱՋՆՈՑ ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ ՏԱՄՆԱԲԱՆՆԵԱՑ ՕՐԻՆԱՑ

ՅՕԴՈՒԱԾ Ա

Յաղագս աստուածաբանական առաքինութեանց : Էջ 86

1–5· Հաւատք : — 6–8· Յոյս : — 9–12· Սէր : — 13· Ներգործութիւնք աստուածաբանական առաքինութեանց :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս Եղբայրսիրութեան : էջ 91

14· Կարգ սիրոյ : — 15· Կարգ նախադասութեան անձանց : — 16· Որ ինչ ցոյլք սիրոյ առ Թէնամիս : — 17· Կերել նոցա : — 18, 19· Պարտք ոզորմութեան : — 20· Խրատ եղբայրական : — 21· Ե՞րբ ա- զատ լիցի ոք յայնմանէ : — 22· Պարտք մեծաւորաց յայսմ: — 23, 24· Զինչ է գայթակղութիւն և քանիսպատիկ : — 25· Որ գայթակղեցու- ցանէն գործիցէ և ընդդէմ եղբայրսիրութեան, որպէս ընդդէմ առաքի- նութեանն՝ որում մեղանչէ : — 26, 27· Զինչ եթէ գայթակղեալն ինքնին խակ պատրաստ լիցի ի մեղանչել : — 28· Ա՛ի խափանել զգ- գայթակղութիւն պա՞րտ լիցի յանձն առնուլ զոյժս, և Թողուլ խակ զդրական պատուիրանս : — 29· Որ ինչ պատճառք գայթակղութեան ի կանանց և ի Թատերգութեանց : — 30· Օրէ՞ն լիցի Թելադրել զխոք- բագոյն ի չարեաց : — 31, 32· Ե՞րբ օրէն լիցի նիւթական եւեթ գոր- ծակցութիւն ի մեղս :

ՅՕԴՈՒԱԾ Գ

Յաղագս երթեից և որ ինչ ընդդէմ նոցին դէզ : էջ 100

33· Զինչ են կրօնք : — 34· Մնապաշտութիւն· Ախտաբոք· Երա- զահանութիւն· Սաղմոսահմայութիւն· Վիճակահմայութիւն : — 35· Մահան դիւթական : — 36· Խորհրդահմայութիւն : — 37· Փոշի համա- կրական : — 38· Փորձել զԱստուած : — 39· Սեղանակապտութիւն : — 40–48· Սիմինականութիւն : — 49–53· Պատիժք նորա և արձա- կումն :

ԴԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՅ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա

Յաղագս հայհոյութեան : էջ 109

1· Զինչ է հայհոյութիւն : — 2· Անիծանել զարարածս : — 3–11· Անիծանել զմեռեալս :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս երդման : էջ 112

12· Զինչ է երդումն : — 13· Քանիսպատիկ : — 14· Պայման օրի- նաւոր երդման : — 15, 16· Օրէ՞ն լիցի երդումն երկդիմի : — 17· Որ ի վերին երեսս երդնու : — 18· Զի երդումն օրինազանց ոչ ածէ պարտս : — 19· Քանի՞ ինչ ազատ կացուցանեն յերդմանէ : — 20· Յա- զագս երդմնեցուցման :

ՅՕԴՈՒԱԾ Գ

Յաղագս ուխտի : էջ 117

21–24· Զինչ է ուխտ : — 25· Որ վասն ոչ բարւոյ արարեալ ուխտ :

— 26· Ուխտ չինդրելոյ երբէք սնօրինուածն : — 27· Ուխտ ամուսնա-
նալոյ : — 28· Ոչ ևս ինչ ուխտելոյ : — 29· Գիտելիք ինչ առ այս : —
30· Ուխտ պայմանաւ : — 31· Տրտհական ուխտ· և որ կատարէ ա-
ռանց յիշելոյ զուխտ իւր : — 32· Եթէ անցցէ պայմանեաքն ժամա-
նակ : — 33· Մեղք յամեցման ուխտին : — 34· Ուխտ կրօնաւորական :
— 35· Փոխոխուելիւն ուխտելոյ իրին : — 36, 37· Բաժանումն ուխտին :
— 38· Փոխանակուելիւն ուխտի : — 39, 40· Տնօրինուածն ուխտի, և
պատճառք նորին : — 41· Ջինչ եթէ իցէ ուխտն ի նպաստ այլոց : —
42–44· Ո՞ւմ անկ է սնօրինել զուխտս : — 45–49· Վերապահեալ
ուխտք : — 50· Կարող իցէ Պապն սնօրինել զուխտս Հանդիսականս :

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՑ ԵՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա
ԿՂ 130

1· Երրորդս այս պատուիրան եկեղեցականն իցէ արգ՝ Թէ աստուա-
ծային, և ածէ պարտս ի վերայ անհաւատից : — 2· Ո՞յք ոմանք մե-
ղանչէն ընդդէմ այսորիկ : — 3· Ո՞ւմ անկ է սահմանել տօնս : — 4·
Պարտք լսելոյ զբանն Աստուծոյ : — 5· Պարտք քարոզելոյ զայն : —
6· Ածիցէ պարտս և մանկաւոյ :

ՅՕԴՈՒԱԾ Բ
Յաղագս որ ինչ գործոց արգելեալք ի քահանան պատարագ : ԿՂ 132

7· Գործք ծառայականք, ազատականք, հասարակք : — 8· Ազա-
տականք շահաբերք : — 9· Դադարիլ : — 10· Նկարել : — 11· Զկնոր-
սութիւն և այլ որք : — 12· Աներևոյթ գործք : — 13· Տուրևառք և
դաշնադրութիւնք :

ՅՕԴՈՒԱԾ Գ
Որ ինչ զքահանայական գործս առնէն օրինաւոր ի քահանան պատարագ : ԿՂ 134

14· Տնօրինուածն Պապին կամ եպիսկոպոսի կամ ժողովրդապետի : —
15· Սովորութիւն : — 16, 17· Բարեգործութիւն և եղբայրսիրու-
թիւն : — 18–21· Հարկ : — 22· Շահ մեծ : — 23· Առ ի չկալոյ դա-
տարկ : — 24· Օգտակարութիւն : — 25· Սուղ ինչ ժամանակ : —
26· Որ աշխատեցուցանէ սուղ ինչ ժամանակ զայլ և այլ ծառայս :

ՅՕԴՈՒԱԾ Դ
Պարտք պետանելոյ պատարագ : ԿՂ 137

27· Դիտաւորութիւն : — 28· Մատրութիւն : — 29· Ժամերգու-
թիւն ի տեսանելն զպատարագ : — 30· Որ մատուցանէն զպատարագ :
— 31· Որ խոստովանի կամ լսէ զխոստովանութիւն : — 32· Որ ներ-
հէ, կամ ժողովէ ողորմութիւն : — 33· Դուզնաքեայ մասին ինչ պա-
կասութիւն : — 34· Որ կրկին պատարագս լսէ կէս ի կէս : — 35·
Ուստի մարթի իցէ լսել կամ տեսանել զպատարագ : — 36, 37· Ձա-
ղագս մատրան, և ո՞ւր իշխանութիւն իցէ եպիսկոպոսի պատարագել :
— 38· Օրէ՞ն իցէ եպիսկոպոսի տալ հրաման պատարագելոյ ի տունս :

ՅՕԴՈՒԱԾ Ե

Որ ինչ պատճառ ասպա կացուցանէն ի պարտուց պնռանելոյ պատարագ : ՀՂ 144

39 • Անկարողութիւն , այսինքն հիւանդաց , բանտարկելոց , պահապանաց և այլն : — 40 • Ծառայք , որդիք , կանայք արգելեալք ի տերանց , ի հօրէ և յառնէ իւրեանց : — 41 • Ծանր նեղութիւն : — 42 • Սովորութիւն : — 43 • Օրէն ելոյ վասն գայթակղութեան կամ շահու մեծի կամ վասն խոստովանութեան զանց առնել պատարագաւ :

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ի ՊԵՐԱՑ ԶՈՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա

Պարտ որդւոյ առ ծնօղս : ՀՂ 147

1 • Սէր որդիական : — 2 • Յարգութիւն : — 3 • Հնազանդութիւն :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Պարտ ծնողաց ի եղբարց : ՀՂ 148

4 • Ապրուստ , մասն ժառանգութեան՝ որ անկանի որդւոց • օժիտ դստերաց : — 5 • Դաստիարակութիւն • հայր որ արգելու զկոչումն որդւոյ , կամ սակիկ զնա ի պայման ինչ կենաց և ի կրօնաւորութիւն : — 6 • Պարտք եղբարց :

ՅՕԴՈՒԱԾ Գ

Պարտ պէրանց , ծառայից , և ամուսնաց : ՀՂ 151

7 • Պարտք տեառց մանաւանդ ի վարձ ծառայից : — 8 • Պարտք ծառայից • եթէ թողու ինչ գողանալ այլոց • եթէ մեկնին ի ծառայութենէ ընդդէմ դաշին : — 9 • Նախագրութիւն զհատուցմանէ վարձուց : — 10 , 11 • Փոխարինումն վարձուց : — 12 • Պարտք առն : — 13 • Պարտք կնոջ , մանաւանդ գնալոյ զհետ առն իւրոյ :

ՅՕԴՈՒԱԾ Դ

Պարտ հոգեւոր հովուաց : ՀՂ 154

14 • Սահման արիդենտեան ժողովոյ վասն կալոյ նոցա ի վիճակի իւրեանց : — 15 • Ժողովրդապետ որ կայ ի վիճակի իւրում առանց կապարելոյ զպարտս իւր : — 16 • Բարեմասնութիւն ոչ ազատ կացուցանէ զնա ի հատուցմանէ : — 17 • Հրաման եպիսկոպոսի : — 18 • Ո՞ւր պարտ ելոյ կալ սրբազան Պատին , Կարդինալաց , եպիսկոպոսաց և ժողովրդապետաց : — 19 • Ազատ կացուցանէն զնոսա եղբայրութիւն , հարկ , հնազանդութիւն և խոնարհութիւն : — 20 • Բաւական ելոյ բանիւ և եթէ կամ լռելեայն կամ վարկուցեալ հրաման : — 21 • Եթէ գուցէ իրաւացի պատճառ բացակայութեան , այլ ոչ և հրաման : — 22 • Պարտ ելոյ հատուցանել զամենայն հաս : — 23 • Ո՞ւմ հատուցանել : — 24–27 • Մատակարարութիւն սուրբ խորհրդոց : — 28 • Ի ժանտախտի : — 29 • Վասն ոչ պարտին մատուցանել զպատարագ : — 30–32 •

Պարտին յանդիմանել : — 33 • Պարտին արգելուլ անարժանից յառնուլ զձև եկեղեցական , և չասալ նոցա վկայական : — 34 • Պարտին հրաժարիլ , մանաւանդ ի վերայ զտակական հաղորդութեան , և արգելից սրբ- սակի : — 35 , 36 • Քարոզ և քրիստոնէական վարդապետութիւն : — 37–44 • Որ ինչ կարևորագոյնք ի քարոզութիւն : — 45 , 46 • Որ ինչ ժողովրդապետի այլ պարաք , այսինքն բարի օրինակ , առընթերակայու- թիւն ի հոգեվարս , ողորմութիւն , քննել զմանկաբարձս վասն մկրը- տութեան :

ՅՕԴՈՒԱԾ Ե

Պարտք Եպիսկոպոսաց : Էջ 171

47 • Ձեռնադրութիւն : — 48–51 • Քննել զկոչումն ձեռնադրելեաց : — 52 • Քննել զգիտութիւն նոցա : — 53 • Կղերանոց առ այս : — 54 • Ընտրութիւն ժողովրդապետաց : — 55 • Որ ինչ պարտ է եպիսկոպոսի աղդել նոցա : — 56 • Ընտրութիւն խոստովանահարց : — 57 • Միա- բանութիւնք եկեղեցականաց : — 58 • Խնամք եղանակի մատուցման պատարագաց : — 59 , 60 • Այցելութիւն թեմի : — 61 • Հոգաբար- ձութիւն կուսասաստանաց : — 62 • Կալ ի Թեմին : — 63 • Ցանդիմանու- թիւն : — 64 • Ողորմութիւն : — 65 , 66 • Պատարագ , ընդունելու- թիւն , բարի օրինակ՝ մանաւանդ ըստ հեզութեան , ըստ աղքատու- թեան , ըստ ապօթասիրութեան , և այլն :

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՑ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա

Յաղագս անչնաւսպանութեան : Էջ 182

1 , 2 • Ե՞րբ օրէն էր ի դնել զկեանս ի վտանգի : — 3 • Կերբնայու- յանել զորդիս : — 4 • Արբեցութիւն : — 5 • Օրէն էր արբենալ առ ի դեղ : — 6 • Առ ազատել ի սպանութենէ : — 7 • Օրէն էր արբե- ցուցանել զոք առ ի խափանել զնա ի մեծագոյն եղեռանէ : — 8 • Որ ինչ մեղայ պարտաւոր դատի արբեալ ոք :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս սպանութեան : Էջ 189

9 , 10 • Սպանութիւն ի հրամանէ պետութեան : — 11 • Ի պաշտ- պանութիւն անձին կենաց : — 12 • Ի պաշտպանութիւն պատուոյ : — 13 • Ի պաշտպանութիւն ընչից : — 14 • Ի պաշտպանութիւն պարկեշ- տութեան : — 15 , 16 • Ի պաշտպանութիւն ընկերին : — 17 • Առ ի զաւակս առնուլ յարձակման : — 18 • Օրէն էր սկզբիկի պաշտպանել զկեանս իւր ընդդէմ յարձակման առն չնացելոյն : — 19 • Օրէն էր երբէք սպանութիւն անմեղին : — 20 • Օրէն էր տալ պատճառս վիճ- ման : — 21 • Անկանիցէ ի բանադրանս կին որ կամաւ զաղջին վիճե- ցէ : — 22 • Եթէ երկբայելի էր հոգևորութիւն սաղմին : — 23 , 24 • Թէ օրէն էր մօր առնուլ դեղ վտանգաւ վիճման սաղմին :

ՅՕԴՈՒԱՆ Գ

Յաղագս վնասմարդոութեան և պոռնկութեան : ՀՂ 196

25 · Ընդամարտ , և որ ինչ զայնմանէ վարդապետութիւնք գտեալ պարտեալք : — 26 · Երբ մեծամարտ իցէ օրինաւոր : — 27 · Օրքո՞ն իցէ դրդել պատերազմ հաւանական կարծեօք : — 28 · Օրքո՞ն իցէ կոչել յօգնութիւն զձշնամիս հաւատոյ : — 29 · Օրքո՞ն իցէ զինուորի դնալ ի պատերազմ, որոյ արդարութիւն իցէ երկբայելի : — 30 · Որ ինչ ի պատերազմի օրինաւոր :

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՑ ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

ՅՕԴՈՒԱՆ Ա

Յաղագս զօշափմանց, հայհոյութեանց , և պարկեր բանից : ՀՂ 201

1 , 2 · Իցէ՞ ընդունելի դուզնաքէութիւն նիւթոյ ի մարմնաւոր կամ ի զգայական հեշտութեան : — 3 · Զօշափմունք : — 4 · Զպարոյս : — 5 · Կին որ թողու զօշափել զանձն : — 6 · Պարտ իցէ օրիորդի բանաբանել ընդ նաբարութիւն : — 7 · Իցէ՞ երբեք օրէն թողուլ զանձին բռնաբանել զաղաղակ : — 8 · Զհայհոյութեանց : — 9 · Զաղտեղի բանից · — 10 · Զլեզու զայնպիսի բանս :

ՅՕԴՈՒԱՆ Բ

Յաղագս պղծագործութեանց բնականաց : ՀՂ 205

11 · Զպոռնկութենէ : — 12 · Օրքո՞ն իցէ թողուլ զբոզս : — 13 · Պոռնկութիւն խօսեցելոյ իցէ՞ արդեօք մեղք այլաւեսակ : — 14 · Զաղագս կուսապղծութեան : — 15 · Յաղագս առևանգութեան : — 16 · Յաղագս շնութեան : — 17 , 18 · Յաղագս մծղնեղութեան : — 19 · Զինչ մեղս գործեն անօրինեալք՝ որ ընդ իրեարս նախ քան զհարսանիս պոռնկին : — 20–23 · Յաղագս սրբապղծութեան :

ՅՕԴՈՒԱՆ Գ

Յաղագս պղծագործութեանց ընդդէմ բնութեան : ՀՂ 210

24–26 · Զարուսպիտութենէ : — 27 · Զանասնապիտութենէ : — 28 · Զդիւապիտութենէ : — 29 · Զդիմդութենէ : — 30 · Զսերմնակաթոռութենէ : — 31 · Օրքո՞ն իցէ արտաքսել զանբիծ ապականեալ : — 32 · Պարտ իցէ արդելուլ զդիմդութիւն ինքնեկ : — 33 · Պարտ իցէ զգուշանալ յամենայն իսկ պատճառաց դիմդութեան : — 34 · Եթէ կարելոր կամ օգտակար իցէ պատճառքն :

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՑ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

ՅՕԴՈՒԱՆ Ա

Յաղագս արդարութեան , իրաւանց և փերութեան : ՀՂ 216

1 · Բաժանումն այսոցիկ : — 2 · Ինչք որդւոյ , զինուորականք և իբր

զինուորականք : — 3 • Յընչից կամ յանուն հօրն չահեալք • 'ի հօրէ ժառանգեալք , կամ չահեալք յորդւոյ 'ի տուրևառս : — 4 • Եկամուտք : — 5 • Օժիտք կնոջ : — 6 • Ինչք եկեղեցականաց • հայրենականք • 'ի վաստակոց • յեկեղեցւոյ • 'ի խնայուԹենէ : — 7 • Իցէ՞ ժառանգաւորի աղաս իշխանուԹիւն 'ի վերայ հասիցն : — 8 • Որ ոչ ըստ օրինի ընդունի ինչ 'ի հասից ժառանգաւորի : — 9 • Քանի՞ օրինակաւ մարԹ իցէ առանալ զհերուԹիւն : — 10–13 • ՆախագրուԹիւն :

ՅՕԴՈՒԱՆ Բ

Յաղագս գողուԹեան : էջ 223

14 • Սահման գողուԹեան : — 15 • Աղքատ 'ի յեսին կամ գրեԹէ 'ի յեսին կարօտուԹեան : — 16 • Փրկանք քրեստոնեայ գերեաց : — 17 • Պա՞րտ իցէ աղքատի մուրանալ : — 18 • Օրէ՞ն իցէ նմա առնուլ ինչ մեծապին : — 19 • Գող որ 'ի յեսին կարօտուԹեան ապաւէ զգողնն : — 20 • Մեծատուն , որ ոչ տղորմի աղքատին , պարտական իցէ հատուցման : — 21 • ՓոխարինուԹիւն :

ՅՕԴՈՒԱՆ Գ

ԹԷ ՛րլաֆ ինչ գողնոփ համարին 'ի ձանր ձեղս : էջ 227

22 • ԾանրուԹիւն գողնոյ ըստ այլ և այլ պայմանի , անձանց : — 23–25 • Գողնոյք այգեաց և անտառաց : — 26 • Գողնոյք մանուկք : — 27 • Գողնոյք նշխարաց սրբոց : — 28 , 29 • Գողնոյք մանուկք 'ի բազմաց , մանաւանդ կրպակաւորաց : — 30 • Գողնոյք մանուկք 'ի բազմաց միանգամայն : — 31 • Որ գողանայն գոյն ինչ յետ ծանր գողնոյ : — 32 • Գողնոյք որգւոց : — 33 • Կանանց : — 34 • Ծառայից :

ՅՕԴՈՒԱՆ Դ

Յաղագս հապուոյման : էջ 232

35 , 36 • Ե՞րբ ունէք 'ի վերայ կայցէ պարտք հատուցման : — 37 • Պատճառք հատուցման : — 38 , 39 • Առուտուրաբանական և իրաւաբանական օրինազանցուԹիւն : — 40 • Կերեւի մեղք ածիցէ՞ն պարտս հատուցման : — 41 • Ի դաշնադրուԹիւնս և 'ի պաշտամունս քաղաքական ածիցէ՞ պարտս օրինազանցուԹիւն իրաւաբանական :

ՅՕԴՈՒԱՆ Ե

ԹԷ ՛ոյ 'ի հապուոյման ինչն պարպանոփ : էջ 235

42 , 43 • Գործակիցք պատուիրանաւ : — 44 , 45 • Խրատուք : — 46 • Եթէ գործօնն վաղ իսկ 'ի մոխ եղեալ էր գործել : — 47 • Եթէ ոք խրատեսցէ 'ի վտքրագոյն ՛լսաս : — 48 • Եթէ նահանջեսցէ զնրատս իւր : — 49 • Եթէ առ ապիրատուԹեան տուեալ իցէ զնրատան : — 50 • Որ տայ քուէ անօրէն : — 51 • Հրապուրիչք : — 52 • Որք տանն ապատանան : — 53 • Օրէ՞ն իցէ որոց գնանն ինչ 'ի գողոյ՝ հատուցանել զայն նմին : — 54 • Գործակիցք : — 55 • Եթէ բազումք 'ի միասին հուր հարկանեն զտանէ : — 56 , 57 • Որ գործակից լինի յահէ ՛լսասու անձին : — 58 • Որ արգելու չնապանել զՂնատան : — 59 • Առիթք բացասականք : — 60 • Ո՞յք 'ի գործակցաց առաւել իցեն պարտականք , և եթէ պարտաւէրն Թողցէ ունէք 'ի նոցանէ զբաժին պարտուցն : — 61 •

Որ արգելու զբաղի ինչ ուրուք : — 62 · Որ խափանէ զգանձ հասա-
ղակաց յիրաւանց իւրոց : — 63 · Որ խափանէ ումեք զբաղի ինչ առ-
առելութեան , այլ առանց չարաբաստ հնարից :

ՅՕԴՈՒԱԾ Զ

Թէ առ ո՞ պարտ իցէ առնել աչխատութիւն : էջ 244

64, 65 · Եթէ առտուգ լցեն ինչք , և տէր նոցին հեռի : — 66 · Եթէ
տէր իրին առնու զայն ուժգնի 'ի գնողէն : — 67 · Եթէ ինչքն անըս-
տոյգք : — 68 · Ցիօրինուին անստոյգ պարտուց հատուցման : — 69 ·
Զգտեալ իրաց : — 70 · Զգանձուց գտելոց : — 71 · Զանասնոց որսա-
ցելոց : — 72 · Ո՞ր յորսոց չիցէ օրէն եկեղեցականաց և կրօնաւորաց :

ՅՕԴՈՒԱԾ Է

Որ ինչ պարգին հատուցանել որք ծառանգելնն ղջաբրին անգիպոնելեամբ և որք
գիպոնելեամբ : էջ 248

73 · Որք ժառանգելնն ինչ անգիտութեամբ : — 74 · Պատուիրք բնա-
կանք , խառն , և որ Հարտարութեամբ յառաջ բերեալ : — 75 · Որ գո-
ղօնս խառն ընդ իւրն ընդունի 'ի գողոյ : — 76 · Որ առնէ ինչս ինչ
այլումի համարեալ նուազ քան զոր էն : — 77 · Որ ժառանգի զայլոյ
ինչ գիտութեամբ : — 78 · Եթէ առէ գին նորա , և եթէ ծախս ինչ
պիտանիս արարեալ իցէ գողոյ 'ի նմին : — 79 · Եթէ գողնին կորնչէր
և 'ի ձեռս տեառն նորին : — 80 · Եթէ կասկածանօք ոք դնեսցէ : —
81 · Որ նենգի 'ի տուրս արքունի :

ՅՕԴՈՒԱԾ Ը

Որ ինչ պարտ իցէ հատուցանել ընդ մարդասպանութեան : էջ 253

82 · Որ ինչ պարտք մարդասպանին : — 83 · Որ ինչ ընդ կենդան և
ընդ համբաւոյ հատուցումն : — 84 · Որ ոք այլ ընդ այլոյ սպանանիկ ,
պարտական իցէ հատուցման : — 85 · Անհնարի նա ընդ բանադրանօք
և ընդ անկանոնութեամբ : — 86 · Որ 'ի սպանելոյն ընդունի թողու-
թիւն , պարտական իցէ որդւոց նորա : — 87 · Չինչ պարտի ժառան-
գաց սպանելոյն · պարտի և զոյժս նոցա և զպարտաւորսն : — 88 ·
Չինչ 'ի համարել սպանութեանն այլումի ումեք : — 89 · Որ սպանա-
նէ զոք՝ անցեալ ըստ իրաւացի պաշտպանութիւն անձին : — 90 · Ժա-
ռանգք պատուհասելոյն 'ի մահ՝ պարտականք իցեն տուժիցն :

ՅՕԴՈՒԱԾ Թ

Զինչ ընդ խոստպչութեան պարտ իցէ առնել հատուցումն : էջ 257

91 · Իցէ՞ն ինչ պարտք կուսապղծին , եթէ կոյսն հաւանեալ իցէ : —
92 · Եւ զինչ եթէ բանաբարեալ իցէ կամ սպառնալեօք հաւանեցու-
ցեալ զնա : — 93 · Չինչ եթէ խնկապէս կամ կեղծեօք խոստացեալ
իցէ առնուլ զնա 'ի կին : — 94 · Եթէ մարթ էր ազգականն գուշակել
զնաբէտութիւնն : — 95 · Եթէ գուցէ վտանգ չարաչար եղիցի · եթէ ազ-
ջինն Թողցէ նմա · եթէ իցէ 'ի նախասինս ընտանեացն · եթէ շշոպափեալ
եւեթ իցէ · եթէ գուցէ զնա վաղ իսկ ապականեալ : — 96 · Եթէ ազջինն
չկամիցի լինել նմա կնութեան : — 97 · Եթէ կուսապղծին իցէ ուխտ
ազգախոտութեան : — 98 · Եթէ ազջինն իցէ ազգական նորա :

ՅՕԴՈՒԱՆ Ի

Յաղագս պարտուց ընացողաց : Էջ 262

99 · Ջ[ինչ] պարտք իցեն կնոջ [ընացելոյ] · պարտականն իցէ նա յայտնել որդւոյ իւրում անհարազատի զընտրութիւն իւր : — 100 · Պարտ իցէ որդւոյ հաւատալ նմա : — 101 · Ջ[ինչ] պարտք իցեն ընացողի, թէ և չիցէ իւր հրապուրեալ զկինն ընացեալ՝ ընդ հարազատ որդիս առն իւրոյ խառնել զզաւակն : — 102 · Եթէ կեղակարծ իցէ զաւակին հարազատութիւն : — 103 · Եթէ յանկեանոց զնա արկցէ :

ՅՕԴՈՒԱՆ ԻԱ

Թէ Է՛բ և ո՛րպէս պարտ իցէ առնել վճռոցոյն : Էջ 265

104 · Պարտք վաղագոյն հատուցանելոյ, և տուժելոյ զվնաս յապաղմանն : — 105 · Ոչ է պարտ արձակել զապաշխարողն մինչ չէ զպարտսն հատուցեալ : — 106 · Մարթ է՛ի ձեռն այլոց ուրուք հատուցանել, այլ զ[ինչ] եթէ նա ոչ հատուսցէ : Եւ զ[ինչ] եթէ խոստովանահայրն պատուիրէ տալ զայն՛ի պատարագիս, յայտնի գոլով տեառն նորին :

ՅՕԴՈՒԱՆ ԻԲ

Թէ առ ո՞յս ըսպ կարգի է առնել վճռոցոյն : Էջ 267

107 · Եթէ գոյ իրն, պարտ է տալ զայն տեառն իւրում· այլ զ[ինչ] եթէ իցէ վաճառեալ : — 108 · Պարտ է նախադասել զպարտս քան զնոսառումն : — 109 · Եթէ քնաւք իսկ իցեն պարտք : — 110 · Եթէ իցեն պարտք ըստ յանցանացս կամ ըստ գաշանց : — 111 · Եթէ իցեն պարտատէրքն յայտնի : — 112 · Պարտք գրաւականեալք և պարտք անձնականք : — 113, 114 · Օրէն իցէ պարտատէրն նախադասել զն և կամիցի, կամ եթէ պարտատէրն պահանջիցէ : — 115 · Եթէ ծառայ ընդունի զվարձս՛ի պարտատեր տեառնէ :

ՅՕԴՈՒԱՆ ԻԳ

Ո՛ր ինչ պարճառս ազատ կացուցանէին զպարտապանն՛ի հատուցմանէ : Էջ 270

116 · Ի կողմանէ պարտատեառն՝ Ա· Հատուցանել առ պարտատէր նորա : Բ· Գիտութիւն հաւանութեան նորա : Գ · Նախատեսութիւն զեղծանելոյ նորա այնուիկ : — 117 · Ի կողմանէ պարտապանին՝ Ա· Եթէ առանց մեղաց հատուցեալ իցէ ուժգ ինչս : Բ· Եթէ ընկալեալ իցէ անօրինութիւն : Գ· Եթէ յոյժ առատ ծանր իցէ ինչս իւր՛ի հատուցմանէ : Դ · Եթէ վտանգ հոգևոր՛ի վերայ կայցէ : Ե· Եթէ կենդանւոյ կամ համբառոյ : Զ· Եթէ հրաժարէ յընչից իւրոց : — 118 · Ազատ՛ի հատուցմանէ կացուցանի և ազքատութիւն : — 119, 120 · Ջ[ինչ] եթէ պարտատէրն ևս իցէ ազքատ :

ՅՕԴՈՒԱՆ ԻԴ

Յաղագս դաշանց : Էջ 274

121 · Քանիպատիկ են դաշինք : — 122 · Որ գնէ դաշն առանց կամից յանձն առնուլ զպարտս դաշին : — 123 · Յոսի դաշինք : — 124 · Կենդանւ կամ վրնպակաւ եդեալ դաշինք : — 125 · Ա՛ռ ահի կռեալ դաշինք : — 126 · Դաշինք առանձնականք :

ՅՕԴՈՒԱԾ ԺԵ

Յաղագս խոսման և պարգևելոյ : ԿՂ 277

127 · Պարտք խոստման : — 128 · Որ ոչն ունի իշխանութիւն պարգևել · որ ընդունի պարգևս ՚ի պարտաւորանէ : — 129 · Պարգևք աստուածոց առ միմեանս · հօր և որդւոյ առ իրեարս : — 130 · Պարգև ոչ ընկալեալ · արարեալ ՚ի ձեռն նուիրակի կամ նամակաբերոյ : — 131 · Եթէ իցէ վասն բարերարութեան , և թէ կարիցէ ընդունել Ժառանգն : — 132 · Տուչութիւն · կատարումն · պարգև շահեալ · վախճանական պատճառ : — 133 · Վասն որոյ իրաց օրէն է նահանջել զպարգև , մանաւանդ զղկողական : — 134 · Պարգևք հրեշտակականք :

ՅՕԴՈՒԱԾ ԺԶ

Յաղագս չանօվ և չաւանդի պալոյ : ԿՂ 281

135 · Քանիպատիկ է տալ ինչ չանօթ : — 136 · Չինչ է աւանդ : — 137 · Պարտ իցէ առաւելագոյն ունել հոգ զաւանդից քան զսեփհականն իրաց : — 138 · Ե՞րբ օրէն իցէ աւանդառուն չհատուցանել զաւանդն :

ՅՕԴՈՒԱԾ ԺԷ

Յաղագս ֆոխպուռնեան և վաչխի : ԿՂ 282

139 · Ե՞րբ պարտ իցէ հատուցանել զվոխս : — 140 · Որդւոց չէ հա ազատացելոց տուեալ վոխս : — 141 · Որդւոց չէ հա զատուցելոց ՚ի տանէ տուեալ վոխս : — 142 · Չվաշխից : — 143 · Տալ վոխ յուսով շահու : — 144 · Շահ տուեալ ձրի : — 145 · Տուեալ առ ակն : — 146 · Դաշն չպահանջելոց ղբրամպլուին ընդ երկար ժամանակ : — 147 · Վնաս ծագեալ : — 148 · Շահ խափանեալ : — 149 · Պայման ա · ազդարարութիւն վոխառուին : — 150 · Պայման բ · մի աւելի ինչ քան զակնկալեալն շահ պահանջել : — 151 · Պայման գ · զի ՚ի վոխառուութենէ անաի առցէ պատճառս ինասն ծագեալ կամ շահն խափանեալ : — 152 · Պաշտ իցէ ինասուն կամ շահու գոլ հաւասար : — 153 , 154 · Վտանգ դրամագլխոյն : — 155 · Գրաւականք : — 156 , 157 · Տոյժ պայմանեալ : — 158 · Պահանջ բարեկամութեան : — 159 · Պայմանք հարկեցուցիչք : — 160 · Պայման հատուցանելոյ նոյնչափ քանակաւ : — 161 · Հատուցանելոյ որ ինչ պարան է ըստ արդարութեան կամ ըստ հզբայրսիրութեան : — 162 · Պարտք վաշխառուաց և ժառանգաց նոցա : — 163 , 164 · Գործակիցք վաշխառուաց :

ՅՕԴՈՒԱԾ ԺԸ

Յաղագս գնելոյ և վաճառելոյ : ԿՂ 291

165 · Որշումն սակի և իրին : — 166 · Ահաւասիկ : — 167 · Ե՞րբ տէրութիւն իրին անցանէ ՚ի գնօղն : — 168 · Գնել պայմանաւ : — 169 · Վտանգ և շահ իրին գնողին միշտ իցեն անկ : — 170 · Դաշն վայելելոց ՚ի պատուս մինչև ցհատուցումն գնոցն : — 171 · Եթէ ոք գնեսցէ արծաթով պղծ · կամ զպղծ իր վաճառեսցէ : — 172 · Գին արտաք : — 173 · Աճումն և նուազումն գնոց : — 174 · Վաճառ կամակաւ , և ե՞րբ օրէն իցէ վաճառել ծանրագնի : — 175–177 · Հասարակաց վաճառք : — 178 · Վան վաղ կամ անագան հատուցման օրէն իցէ պղպղել

զգինս : — 179 • Գնել զմուրհակ : — 180 • Դաշն անդրէն վաճառելոյ : — 181 • Դաշն անդրէն գնելոյ : — 182 • Որ ինչ յայսոսիկ օրինազանցութիւնք : — 183, 184 • Մենավաճառ : — 185–187 • Յառաջիւն վաճառաց : — 188 • Որ գիտակն է աճման համ նուաղելոյ գնոց : — 189 • Միջնորդք վաճառաց : — 190 • Եթէ երկուց ոմանց վաճառեալ իցէ ինչ : — 191 • Ի կորնչիլ իրին վաճառելոյ :

ՅՕԴՈՒԱՆ ԺԹ

Յաղագս վաճառականութեան : Էջ 300

192 • Ո՞ւմ իցէ արգելեալ վաճառաշահ , և երբ իցէ ծանր մեղք • զինչ եթէ եկեղեցական ոք ՚ի ձեռն այլոց ուրուք առնիցէ վաճառաշահ , և կամ ՚ի շահ այլոց : — 193 • Սահման խաչն վասն արօտի իւրոյ : — 194 • Վաճառել առաւելագոյն գնոց , առ ՚ի գնել սակաւագին • գնել զաս և այլն • և զինչ եթէ հարկ ՚ի վերայ կայցէ : — 195 • Իջ՞ օրէն եկեղեցականի հոգալարձուքիւն , գործակալութիւն և այլն :

ՅՕԴՈՒԱՆ Ի

Յաղագս դրամավաճառոյ : Էջ 302

196 • Զինչ է դրամավաճառ : — 197 • Պայմանք սահմանեալք առ այն : — 198 • Օրէն իցէ դրամավաճառ անձնական : — 199 • Օրէն իցէ դրամավաճառ , կարելով գնողն յետս դարձուցանել զայն : — 200 • Զինչ ՚ի կորնչել դրամավաճառոյ՝ կորստեամբ կալուածոյն : — 201 • Օրէն իցէ վաճառել փոխանակ դրամոց զպահանջս :

ՅՕԴՈՒԱՆ ԻԱ

Յաղագս փոխանակութեան դրամոց , և ՚ի վերչին փալոյ պիալոտաց : Էջ 305

202 • Ա՛յլ և այլ ազգ փոխանակութեան դրամոց : — 203 • Որ ընդունի տարադիմ դրամս : — 204 • Որ տայ ՚ի վարձու : — 205 • Որ յաջորդիւ տուողին ՚ի վարձու : — 206 • Զինչ յարկածս անպատշաճութեան : — 207 • Օրէն իցէ տալ ՚ի վարձու զնրաւունս մուրանալոյ : — 208 • Սուրհանդակ , որ առ երկուս ոմանս գնայ ՚ի նոյն տեղի : — 209 • Պարտ իցէ տալ զվարձ ծառայի ՚ի հիւանդութեան նորա : — 210–212 • Ա՛յլ և այլ ազգ տալոյ ՚ի վարձու :

ՅՕԴՈՒԱՆ ԻԲ

Յաղագս գերատաքրութեան և խաղոյ : Էջ 308

213 • Օրէն իցէ դրաւ դնել : — 214 • Զինչ եթէ մի ՚ի կողմանց գիտիցէ զերն հաւատառաւ : — 215 • Եթէ մանկունք կամ կրօնաւորք կուրասանիցեն ՚ի խաղի : — 216 • Նենգ ՚ի խաղի : — 217 • Արգելեալ խաղք . և եթէ օրէն իցէ յաղթողին յայնմ՝ ունել զշահն : — 218 • Պարտ սակաւն իցէ հատուցանելոյ պարտեալն : Իսկ զինչ եթէ երդուեալ ևս իցէ հատուցանել և չպահանջել յետս : — 219 • Խաղք արգելեալք և կեղեցականաց : — 220 • Կրօնաւորաց : — 221 • Եպիսկոպոսաց :

ՅՕԴՈՒԱՆ ԻԳ

Յաղագս ջահակցութեան : Էջ 311

222 • Պայմանք արդար շահակցութեան : — 223 • Զի պարտ է նախ

'ի բաց առնուլ զգրամագլուխն, որոյ իցէ այն: — 224. Պարտ է կըշռադատել զարժանս աշխատութեանն: — 225. Տոյժ զրամագլխոյն անկ է տեառն նորին: — 226. Շահակցութիւն յանդեայս, դաշամբ ընդ շահակցին զձեռըն թուոյ նոցին: — 227. Երբաղի դաշինք: — 228. Չինչ եթէ որգի հայրենի զրամովն առնիցէ վաճառաշահ: — 229, 230. Շահակցութիւն եղբարց: Քանիսպատիկ օրէն է վախճան առնել շահակցութեան:

ՅՕԴՈՒԱԾ ԻԹ

Յաղագս ապահովութեան, երաշխաւորութեան, գրաւականի հոգեբարձութեան և կիպոի: էջ 315

231. Չինչ է գաշն ապահովութեան: — 232. Երաշխաւորութիւն: 233. Գրաւական: — 234. Հոգաբարձութիւն. օրէն իցէ որբոց պարտ յանձն առնուլ կամ պարգևս տալ: — 235. Կապակ. եթէ յայտնի է. ցեն կամք կապակղին. եթէ մի և եթէ իցէ վկայ: — 236. Հրիտակ վասն կուսանաց. օրէն իցէ սրբազան Պապին կամ եպիսկոպոսի փոխել զկըտակ: — 237. Պարտք թողլոյ զժառանգութիւն որգւոց, եղբարց, կամ աղքատ ազգականաց: — 238. Օրէն իցէ հօր անժառանգել զորդի, և ընդ:

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՑ ՈՒԽՏԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա

Յաղագս յանդուգն դատողութեան: էջ 318

1. Դատողութիւն և կասկած: — 2. Խրատք առ այս:

ՅՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս ընդնամանաց: էջ 319

3. Չինչ են թշնամանք, և որպէս պարտ իցէ առնել թշնամանաց հատուցումն: — 4. Որ ինչ 'ի հատուցմանէ ասաի ազատ կացուցանեն զթշնամանօղն: — 5. Բանալ և վերծանել զնամականին այլոց: — 6. Ո՞րժամ օրէն իցէ առնել զայս:

ՅՕԴՈՒԱԾ Գ

Յաղագս բամբասանաց: էջ 321

7. Մեղանչական բամբասանք. — 8. Ղենգաւ որսալ զգաղտնիս: 9. Պարտք լսելոյ զգաղտնիս: — 10. Օրէն իցէ յայտնել զմեղս ուրուք 'ի պաշտպանութիւն անձին: — 11. Ի ինդիր խրատու և սիրտիանաց. կամ խոհականի և առաքինւոյ ումեք: — 12. Եթէ հռչակեալ ուրեք իցեն մեղքն: — 13. Եթէ յառաջ ժամանակաւ իցեն հռչակեալ: — 14. Եթէ 'ի հանգոյն ինչ ոք վաղ իսկ իցէ չարահամբաւեալ: — 15. Որ ոք պատմէ ինչ 'ի լոյս: — 16. Որ անուանի զուխտ ինչ կամ զվանս: — 17. Որ տայ պատճառս կամ լսել բամբասանաց: — 18. Հատուցումն համբաւոյ: — 19. Որ ինչ ազատ 'ի հատուցմանէ ասաի կացուցանեն զբամբասօղն: — 20. Պարտ իցէ արծաթով փոխարինել չարահամբաւութեան: — 21. Օրէն իցէ չարահամբաւելոյն իւրովն առնուլ իւր փոխարէն: — 22. Յաւելուած յաղագս չարամտութենից:

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

1 • Ի ՎԵՐԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆԱՅ ՆԿԵՂԵՑԻՈՑ

ՅՕԴՈՒԱՆ Ա

Յաղագս պարտուց Յովսափհոռնէան : էջ 328

2 • Հրաժարել՝ի մոյ : — 3, 4 • Ի կիճեղինայ : — 5 • Ի Ճարպոյ : — 6 • Երեքին կռնգակք Բենեդիկտոսի ԺԴ զպահոյ : — 7 • Որոյ հրամանն է ուսեալոյ զմիս, օրէնն իսկ նոցա ուսեալ և ձուկն : — 8 • Եւ խոզենի՝ի քառանորգս : — 9 • Չի միանգամ ևեթ պարտ է Ճաշել : — 10 • Բաժանումն Ճաշոյ : — 11 • Չքաղցրաւենեաց : — 12 • Չըմպելեաց : — 13 • Չգինւոյ և զպարեզոյ : — 14 • Չպաղպաղակէ : — 15 • Չելբոլմէ : 16–19 • ՉերեկոյաՃաշիէ : — 20, 21 • Որ բազում անգամ յաւուրս պահոց Ճաշակէ զմիս կամ զայլ կերակուրս :

ՅՕԴՈՒԱՆ Բ

Որ ինչ ասացաք նոցունէ՝ի պահոց : էջ 335

22 • Տիօրինուածն, և ուր անկ իսկ անօրինել : — 23 • Անկարողութիւն բնական : — 24 • Անկարողութիւն բարոյական : — 25 • Չմանկաւոյ և զծերոյ : — 26, 27 • Չաշխատաւորաց : — 28–30 • Չուղեւորաց : — 31 • ՉՀոմ ձեռագիտաց : — 32 • Եթէ մարթի իսկ ձեռագիտին ծոմս պահել առանց ծանր նեղութեան : — 33 • Որ անպատճառ ձեռնարկէ յաշխատութիւն : — 34 • Եթէ արդեօք բարեգործութեան օրէն իսկ չծոմապահել :

ՅՕԴՈՒԱՆ Գ

Յաղագս զպաչեան խոստովանութեան և հաղորդութեան : էջ 342

35 • Որոյ չիցէ գործեալ մահու չափ մեզս, պարտ իսկ նոցա առնել զտարեւոր խոստովանութիւն • և եթէ գիտիցէ որ զի խափանելոյ է՝ի զատկական խոստովանութենէ, պարտ իսկ նմա կանխել խոստովանել : — 36 • Որոյ չիցէ արարեալ զխոստովանութիւն զատկական, պարտ իսկ նմա վաղագոյն խոստովանել • ապա թէ ոչ, քանի՞ մեզս գործիցէ : — 37 • Խոստովանութիւն երկրորդի ամին ընդ զպահաւութիւն առաքելոյն : — 38 • Պատիճք պատուիրանազանցութեան : — 39 • Պատուիրան զատկական հաղորդութեան : — 40 • Որ չիցէ հաղորդեալ՝է զատկի, պարտ է նմա հաղորդել վաղագոյն • և որ գիտէ զի խափանելոյ է՝ի հաղորդելոյ՝ի զատկի, պարտ իսկ նմա կանխել հաղորդել : — 41 • Եւ զինչ թէ իսկ զբ՝ի բանագրանս կամ՝ի բանաի և այլն : — 42 • Չի պարտ է՝ի ժողովրդապետական եկեղեցւոջ հաղորդել : — 43 • Չի յօրինաց առաջ ազատ են քահանայք, պանդուխտք, և որք՝ի ծառայութեան կան՝ի մենաստանս : Եթէ պարտ իսկ մանկաւոյ հաղորդել : — 44 • Եթէ խելագարաց :

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՑԱՂԱԳԱՏ ԱՅՐ, ԵՒ ԱՅՐ, ՊԱՏՄԱՆԻ ԿԵՆԱՑ

ՅՕԴՈՒԱԾ Ա

Յաղագս կրօնաւորական կենաց : էջ 348

1 · Ջի՞նչ է կրօնաւորութիւն, և ուր՞ է անկ հասանելոյ զկրօնս : — 2 · Ջի պարտ է կրօնաւորի զիմէ՛ի կատարելութիւն · և երբ մեզանէ մեծաւորն 'ի չյանդիմանելն զնա : — 3 · Հասակ ընդունելութեան 'ի կրօն · համառօտութիւն ուխտի , և որ լինչ անվաւեր առնեն զայն : — 4 · Նպաստակ կրօնաւորք պարտականք լեին 'ի պահպանութիւն ուխտին և կանոնաց · զխիտասէիցն և զարտաքսելոց 'ի կրօնէ , և որ լինչ պատճառք արտաքսելոյ :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս պարտուց ուխտին : էջ 352

5 · Ուխտ ազքատութեան , և յաղագս զրուածոց կրօնաւորի : — 6 · Ջառանձին գրամոյ նորա : — 7 · Ուր լինչ մեզք ընդգէմ ազքատութեան : — 8 , 9 · Ընդելք պարզաւորութեան : — 10 · Երբ լեցէ ծանր , և պարտ հատուցման 'ի վերայ ածիցէ : — 11 · Բաւակա՞ն լեցէ առ այս լսելեացն հատուածոյն մեծաւորի : — 12 · Եթէ մեծաւորն յանկրաւէ ժխտիցէ զկրաման · կամ եթէ տացէ առանց գիտելոյ ուժմ տալոց է զարգելն, զոր եթէ գիտէր՝ չտայր հրաման : Օրէ՞ն լեցէ արբաստուհեաց պարգևել լինչ , կամ տալ հրաման պարգևելոյ : — 13 · Եթէ կրօնաւոր 'ի չար լինչ կամ 'ի զուր ծախէ հանրական հրամանաւ մեծաւորի : — 14 · Կարելի՞ մեծաւորն տալ հրաման խաղալոյ արծաթոյ : — 15 · Յաղագս ողջախոհութեան և փափկանաց : — 16 · Յաղագս հնազանդութեան , և յորս լինչ և երբ ածէ պարտս : — 17 · Եթէ ժողովին միաբանութեան հատուածէ զնախնին կանոնապահութիւն · զի անհնազանդութիւն կրկին մեզք են · պարտ լեցէ հնազանդել յերկեցականս : — 18 · Եթէ զգաստութիւս հրամայիցէ յայտնել : — 19 · Եթէ այլ հանգամանք 'ի վերայ հասանիցեն : — 20 · Եթէ վանահայրն տացէ հրաման , զոր կարգադրեալն լեցէ ժխտել : — 21 · Ո՞րքան պարտին հընազանդել կուսանք : — 22 · Յաղագս ընարութեան աբբասուհոյ :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Ոյոյ ամանց չէջն օրէն մտանել 'ի կրօնս : էջ 362

23 · Օրէ՞ն լեցէ որդւոց կրօնաւորել՝ թողեալ զծնօղս 'ի կարօտութեան · և ուխտելոյ պարտ լեցէ ելանել 'ի կրօնէ վասն օգնելոյ նոցա : — 24 · Օրէ՞ն լեցէ որդւոց կրօնաւորել հակառակ կամաց նոցա , կամ թողեալ 'ի կարօտութեան զորդիս , զնղբարս կամ զքոյր : — 25 · Ուր խափանէ զոք 'ի կրօնաւորութենէ : — 26 · Ուր զկոչումն իւր ապականէ : — 27 · Օրէ՞ն լեցէ պարտականաց կրօնաւորել : — 28 · Եպիսկոպոսաց : — 29 · Ժողովրդապետաց : — 30 · Ժառանգաւորաց :

ՅՕԴՈՒԱՆ Դ

Ո՛ահ մարդն իցէ և պարտ զնորհել զծառանգաւորին եկեղեցական : էջ 366

31 • Քանիպատիկ են ժառանգութիւնք եկեղեցականք : — 32 • Քահանի օրինակաւ է ստանալ զայնս • իրաւունք տալոյ ուժիք զայնս : — 33 • Պաշտ իցէ տալ արժանաւորնին և զպարտ ժառանգութիւնս : — 34 • Պաշտ իցէ տեարց առաջարկել զարժանաւոյնս : — 35 • Ջինչ և ի կրօնաւորական կարգս : — 36 • Վաւերք իցէ ընտրութիւն նուազ արժանւոյն : — 37 • Պարտականն իցէ ընտրօղն ի հաստուցումն : — 38 • Մեծանչէ նուազ արժանին ընդ արժանաւորնին ի խնդիր լինելով : — 39 • Ջինչ եթէ քննիչք ծածկեն զնշմարութիւն : — 40, 41 • Ջբազմապատիկ ժառանգութենէ :

ՅՕԴՈՒԱՆ Ե

Ջհանգամանաց և զպարտուց ծառանգաւորաց , և ժրպէս մարդ իցէ անխոնել նոցա ի ծառանգութենէն : էջ 373

42 • Հանգամանք ժառանգաւորաց • դիտաւորութիւն ընդունելոյ յառաջ քան զամ մի զկարգ : — 43 • Որ ընդունի երկբայութիւք կամ պայմանաւ զժողովրդապետութիւն : — 44 • Որ ընդունի զժառանգութիւն դիտաւորութեամբ հրաժարելոյ յայմանէ : — 45 • Պարտք ժառանգաւորաց ըստ պաշտամանն : Ըստ հասից : Եթէ կարէ կեալ նոքօք : — 46 • Ցինչ զաւելորդս հասից ժառանգութեանն ի կիր արկանել պարտ իցէ նմա : — 47 • Կարիցէ տալ ազքատաց երկրին : — 48 • Կարիցէ տալ ազգականաց : — 49 • Ջինչ պարտ իցէ թոշակելոց առնել զաւելորդս թոշակին : — 50 • Պարտք կալոյ կանոնիկոսաց ի դասու : — 51 • Պատիժ բացակայութեան : — 52 • Որ ինչ ազատ կացուցանէ զնոսա ի կալոյ անդ , և նախ հիւանդութիւն : — 53 • Երկրորդ՝ հարկաւորութիւն : — 54 • Բանադրեալն եթէ կայցէ ի դասու : — 55 • Եթէ անկանոն : — 56 • Երրորդ՝ օգտակարութիւն , որպէս որ յանձանձէ զկրս եկեղեցւոյն կամ զսխալ կանոնիկոսաց , որ պարտիցէ ի պաշտօն ասպաշխարհօր կամ ասատածաբանի : — 57 • Քննիչք և այլք ինչք : — 58 • Քանի օրինակաւ մարթ է կորուսանել զժառանգութիւն , մանաւանդ հրաժարմամբ , և օրինօք՝ եթէ սիմոնականութեամբ իցէ ընկալեալ : — 59 • Ցաղագս թոշակաց : — 60 • Որ ինչ արուեստ և պաշտօն արգելեալ է եկեղեցականաց : — 61 • Որ վաճառէ կամ տայ ի բաց զինչս եկեղեցականս : — 62 • Որ ինչ պայմանք խնդրին առ այս :

ՅՕԴՈՒԱՆ Զ

Ջպատասխանոյ և զերդնեցողաց : էջ 385

63, 64 • Ե՞րբ օրէն իցէ դատաւորի դատապարտել կամ հարցափորձել կամ նուազեցուցանել զպատուհաս : Օրէն իցէ նմա առանձնանալ դիտաւորութեամբ դատել : — 65 • Օրէն իցէ նմա դատել ըստ նուազ հաւանական կարծեաց : — 66 • Օրէն իցէ նմա մանաւանդել թոշակի հրամատարին , կամ ընդունել պարգեւս : — 67 • Օրէն իցէ նմա չտալ ի բաց զչինս անիրաւ վճռոյ : — 68 • Վասն հարցաքննող դատաւորաց :

ՅՕԴՈՒԱՆ Է

Ջդատաբանից և զերդնեցողաց : էջ 388

69 • Օրէն իցէ միանձանց և եկեղեցականաց առնել փաստաբանու-

Թիւն · Երբ պարտ իցէ փաստաբանի պաշտպան կալ : — 70 · Որ ինչ դատս օրէն է փաստաբանի պաշտպանել, և որ ինչ վարձս ընդունել : — 71 · Եթէ անիրաւ իցէ դատն · կամ ՚ի վարել զդատն սակ արկանէ, կամ եթէ այսչափ ինչ մատն ՚ի դատմարէն պահանջէ ՚ի յաղթելն : — 72 · Եթէ գործակալն ձրի իցէ փաստաբան , կամ եթէ ինքնին պաշտպանեսցէ զդատն :

ՅՕԴՈՒԱԾ Ը.

Ձդաւախաւղէց , վՀայէց և պարբաւորէն : էջ 391

73 · Երբ օրէն իցէ դատախազել · պահապանաց պարտք ամբաստանելոյ : — 74 · Եկեղեցականաց երբ օրէն իցէ ամբաստանել · պարտ իցէ նոցա կանխել խթատել, մանաւանդ ՚ի միաբանութենէն : — 75 · Ձաղջ արարոց : — 76 · Երբ պարտ իցէ ամբաստանել զհերետիկոսս : — 77 · Երբ զհայհոյութիւնս հերետիկոսականս : — 78 · Երբ զնաապաշաւութիւնս : — 79 · Ձվկայից · Երբ պարտ է նոցա տալ վկայութիւն : — 80 · Որ չկայանի զՀաւատարմութիւն : — 81 · Որ ծածկէ զայն : — 82 · Ձպարտաւորսդ · երբ պարտ է նոցա խոստովանել զհեղանս : — 83 · Եթէ ծանր առաջի կայցէ պատուհաս : — 84 · Եթէ յանձն առնուցու սուտ մեղանս : — 85 · Եթէ զպարտիչէ զդատախազն : — 86 · Օրէն իցէ պարտաւորի զդէմ ունել իշխանութեան · պարտ իցէ նմա փախչել : — 87 · Օրէն իցէ նմա խորտակել զբանան , կամ կաշառել զբանտապան · օրէն իցէ և այլոց օգնել նմա :

ԳԼՈՒԽ ՁՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՑԱՂԱԳԻՍ ԹՈՐՔՐԴՈՑ ԱՌ ՀԱՍԱՐԱԿ

ՅՕԴՈՒԱԾ Ա
էջ 399

1 · Յաղագս մեռադրութեան և դիտաւորութեան : — 2 · Որպիսի՞ ինչ դիտաւորութիւն պարտ է ունել պաշտօնեկի խորհրդոց : — 3 · Պաշտել զխորհուրդս պայմանաւ : — 4 · Պարտ իցէ մերժել զմեղաւորս ՚ի խորհրդոց : — 5 · Երբ ՚ի հաղորդութենէ : — 6 · Եթէ որք խնդրենն զպատասխ՝ ՚ի մեղս կացցեն :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս Ազրաւելեան : էջ 403

7 · Բանիպատիճ է սկրտութիւն : — 8 · Նիւթ նորին հեռաւոր : — 9 · Նիւթ նորին մերձաւոր · և թէ օրէն իցէ հատանել վասն սկրտութեան զարգանդ մայրենի : — 10–12 · Օրէն իցէ սկրտել զմանուկ յարգանդի մօր , և յորո՞մ յանդամից : — 13 · Կարևոր իցէ երբաւիղ հեղումն : — 14 · Ձև սկրտութեան : — 15 · Պաշտօնեայ նորին : — 16 · Կարգ՝ զոր պարտ է ունել յայնմ պաշտօնէից : — 17 · Ձօտարաց սկրտելոց : — 18 · Ձյապաղմանէ սկրտութեան , և զառանին սկրտութենէ :

ՅՕԴՈՒԱԾ Գ

Ձերաթայից : էջ 410

19 · Պատիժք վերստին սկրտոզաց : — 20 · Սաղմն վիժեալ , և որդիք

անհաւատից լսի՛ն ընդունակք մկրտութեան : — 21 • Չի՞նչ են[ի՞] չկամիցին ծնողք : — 22 • Օրի՞ն լսի դարձուցանել անհաւատից զորիս նոցա : — 23 • Մկրտութիւն պայմանաւ : — 24 • Ջմանկանց արիւնոյ 'ի բաց : — 25 • Ջմկրտելոյ 'ի ձեռն աշխարհականաց : — 26 • Ջմկրտելոյ 'ի հերետիկոսաց : — 27 • Եթէ մկրտութիւն լսի երկրպագելի : — 28 • Պատրաստութիւն առ մկրտութիւն : — 29 • Աւրհնութիւնք մկրտութեան , և նախ զջուր : —30 • Չնկեղեցւոյ :

ՅՕԴՈՒԱԾ Դ

Յաղագս ինչ[ա]հօր և ինչ[ա]մօր , և պարտուց նոցա : էջ 415

31 • Պարտք կնքահօր : — 32 • Հանդամանք նորա : — 33 • Աղգակցութիւն հոգևոր 'ի ձեռն մկրտութեան : — 34 • Չի՞նչ եթէ ծնօղք մկրտիցեն զմանուկն : — 35 • Պարտ է կնքահօր զի լսի սահմանեալ 'ի ծնողաց մանկանն : — 36 • Չկնքամօրէ : — 37 • Ո՞ւմ չլսի օրէն կալ կնքահայր կամ կնքամայր : — 38 • Ո՞ւր ժողովրդապետին լսի վանդ մեղանչելոյ :

ՅՕԴՈՒԱԾ Ե

Յաղագս դրոշմի : էջ 419

39 : Հեռաւոր նշանք դրոշմի : — 40 • Կարևո՛ր լսի լուղոյ դրոշմին օրհնութիւն , և յումմէ : — 41 • Մերձաւոր նշանք դրոշմին • ձեռնադրութիւն եպիսկոպոսին լսի՛ նշանք : — 42 • Օծումն բուրվառ աջոյ կամ դորձուով : — 43 • Զև դրոշմին : — 44 • Պաշտօնեայ դրոշմին : Օրի՞ն լսի քահանայի դրոշմել : — 45 • Չի՞նչ եթէ լսի օտարական , որ խնդրէ զդրոշմ : — 46 • Չի եպիսկոպոսի պարտք են դրոշմել : — 47 • Չի կարևոր է դրոշմ : — 48 • Որ առանց այնր ձեռնադրելի : — 49 • Պա՞րտ լսի դրոշմել զաղայս և զլիմարս : — 50 • Աւրհնութիւնք դրոշմին : — 51 • Չկնքահօրէ : — 52 • Չայլոց ևս արարողութեանց խորհրդոյն : — 53 • Չօրութիւնք նորին :

ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՅ ԽՈՐՀՐԴՈՅ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա

Չէութենէն սուրբ հաղորդութեան : էջ 424

1 • Խնդիրք զէութենէ սրբոյ հաղորդութեան : — 2 • Կարևո՛ր լսի հաղորդութիւն հարկաւորութեամբ միշտորդի : — 3 • Միթէ անեծ առասաւ քահանայապետել լսի՛ անվաւեր եթէ ըստ ոչ օրինի միայն : — 4 • Դէպք 'ի բաց առեալ : — 5 • Չօրութիւնք սրբոյ հաղորդութեան : — 6 • Տեղութեան առասկացն արդասիք : — 7 • Որ հաղորդի նեբելի մեղաց :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Չմատաղարարութենէն խորհրդոյ հաղորդութեան : էջ 428

8 • Պարտք ժողովրդապետաց ունելոյ 'ի պահեստի և մատակարարել զսուրբ խորհուրդն : — 9 • Կարիցի՞ն քահանայք առհասարակ մատակարարել զհաղորդութիւն , ևս և սարկաւագունք : — 10 • Օրի՞ն

լեկ փոքր ասաքձանաւորաց, և աշխարհականաց խակ, ՚ի պահանջել հարկին, հաղորդել զայլս և հաղորդել իւրովք: — 11. Օրէն է լեկ քահանայի վասն բարեպաշտութեան հաղորդել իւրովք. — 12. Որպէս պարտ լեկ և օրէն տալ զհոգւոյն: — 13. Օրէն է լեկ հաղորդել որովք և լեկ մատուցանել: — 14. Օրէն է լեկ հաղորդել երիցաքուհիք և սեսա-կօք: — 15. Օրէն է լեկ հաղորդել զայսոսիկ մեզաւորս: — 16. Օրէն է լեկ հաղորդել ՚ի հոգեհանգստեան պատարագի: — 17. Երբ օրէն է լեկ հաղորդել: — 18. Եթէ մեայցեն փշրանք:

ՅՕԴՈՒԱԾ Գ

Պարտ ընդունելոյ զհաղորդութիւնն: Էջ 433

19. Երբ պարտ է լեկ ընդունել զհոգւոյն: — 20. Զինչ եթէ վտանգ է լեկ հիւանդին վերբերելոյ զայն: — 21. Եթէ հեղի հիւանդն ՚ի հազոյ:

ՅՕԴՈՒԱԾ Դ

Յաղագս հոգեւոր պարբեսպութեան ՚ի հաղորդութիւն: Էջ 434

22. Զի պարտ է խոստովանել նախ քան զհաղորդութիւն: — 23. Որոյ՞մ ինչ ՚ի մեզայ լեա խոստովանութեան անկաւի ՚ի միտս: — 24. Որ ինչ զերծ կացուցանէ ՚ի պարտուց խոստովանութեան նախ քան զհաղորդութիւն: — 25. Որ ՚ի պատարագելն լիշէ զմեզս ինչ իւր կամ զքահանային: — 26. Եթէ չիցէ անդ խոստովանահայր: — 27. Եթէ վերապահեալ լիցեն մեզքն: — 28. Պա՞րտ լեկ ասել յայնժամ զվերապահեալն: — 29. Զինչ եթէ բանադրանք ևս ՚ի վերայ կայցեն: — 30. Որպէս պարտ լեկ խմանալ զվաղագնն: — 31. Իսկ եթէ պատուիրանս այս լեա քահանայապետութեան և սախտիցէ: — 32. Սախտիցէ և զանգանակատուն պատարագիչ: — 33. Սախտիցէ և զաշխարհիկս: — 34. Օրէն է լերկբայս հաղորդել:

ՅՕԴՈՒԱԾ Ե

Յաղագս մարհաւոր պարբեսպութեան ՚ի հաղորդութիւն: Էջ 442

35. Զծոմապահութենէ. երկբայութիւն զայնմանէ. զինչ եթէ այլազգ լերկոցս ցուցանիցեն ժամացոյցք. որ ինչ արագութեամ մոտնէ, այն է որ լուծանէ զծոմ: — 36. Նշխարք մեայեալք ՚ի բերանի լուծանիցեն զծոմ: — 37. Մնացորդք ջրոյ, շաքարի և այլն լուծանիցեն: — 38. Փթախոտ լուծանիցէ: — 39. Ծխախոտ լուծանիցէ: — 40. Ծամել զծխախոտ կամ զկուէնկս լուծանիցէ: — 41. Ջուր կամ այլ ինչ լցեն ընդ ունդսն կամաւ կամ ըստ դիպաց ընկալեալ, լուծանիցէ: — 42, 43. Մաղ, քար, թուղթ և այլն լուծանիցեն: — 44. Օրէն է լեկ հաղորդել չև մարսեալ զկերակուր: — 45. Թէքանել լեա հաղորդութեան մեզք լեցեն: — 46. Երբ օրէն է լեկ անծամ հաղորդել և նախ լընդունել զհոգւոյն, և մարթի լեկ երկոցդել զայն: — 47. Քանիցս օրէն է լեկ ընդունել զայն: — 48. Որ յառաջ քան զաւուրս ինչ վասն չերմեռանդութեան լեկ հաղորդեալ: — 49. Որ յայնմ իսկ առաւօտուն: — 50. Օրէն է լեկ թողուլ ՚ի բաց զառաւ և ՚ի ծուխ: — 51. Օրէն է լեկ անծամ պատարագել վասն տալոյ զհոգւոյն: — 52. Օրէն է լեկ անծամ հաղորդել առ ՚ի զերծուցանել յանարգանաց զաւրք խորհուրդն: — 53. Եթէ ժամարարն լիշէցէ լուծեալ իւր զծոմ, և վտանգ գայ թակղութեան առաջն կայցէ: — 54. Եթէ հարկ լեցի կատարել զպատարագ թերակատար կամ երկբայելի վասն գիւղացին ոչ անխոտոր-

թեան : — 55· Օրէն իցէ վասն վաճառի կենաց անձամ պատարագել : — 56· Պաքոս իցէ վասն գիշերութեան հրաժարել 'ի հաղորդութենէ : — 57· Եւ վասն ամուսնական պատուոյ կատարելոյ , կամ վասն ապաքսիոյ : — 58· Որ աղաեղջհանդերձ , կամ բորոտ , կամ անհամեստ մտաչէ 'ի հաղորդութիւն : Քահանայ որ սրպէս աշխարհիկ ոք հաղորդիցէ :

ՅՕԴՈՒԱԾ Զ

Յաղագս սրբոյ պատարագին : Էջ 452

59· Օրէն իցէ անկարօտ քահանայից ընդունել պատարագիս : — 60· Որ այլ և այլ պատարագիս վասն միոյ պատարագի ընդունի : — 61· Ո՞ր իցէ օրէն արդար պատարագեայ : — 62· Զի օրէն է ընդունել աւելի քան զարդարն , և զնուազն քան զայն արգելուլ : Որ ընդունի զնուազն , օրէն իցէ նմա նուազել զնիւ պատարագայ : — 63· Որ չմատուցանէ զպատարագ խոստացեալ ընդ դայն լինչ պատարագեայ : — 64· Որ սակ արկանի զպատարագեայ : — 65· Որ խորէ 'ի պատարագեայ , կամ տայ պատարագել այլում քահանայի քան ոչ կամոյ բարերարին , ոչ պարտական է հատուցանելոյ : — 66· Եթէ պատարագիքն 'ի ընդհան անձին ուրուք իցեն առատաձեռնեալ : — 67· Զժամ արարոյ : — 68· Զեկեղեցպանոյ : — 69· Եթէ պատարագիչն Թողցէ կամակար զմանն խորհել, և եթէ կամակատարն : — 70· Որ ժողովիլ պատարագիս : — 71· Որ փոխանակիլ պատարագս : — 72· Վասն որոյ ժողովրդապետաք պարտին պատարագել : — 73· Վասն որոյ և այլ ժառանգաւորաց կամ ժամարարք կուսաստանայ· կարիցեն երբեմն վասն այլոց պատարագել, կամ Թողուլ զպատարագ· զի՞նչ եթէ հիւանդանայցեն· զվիաբանական պատարագէ : — 74· Զնախապրութենէ պատարագայ : — 75· Օրէն իցէ ժամարարի յայլում եկեղեցւոջ կամ սեղանի պատարագել· եթէ ոչ պատարագէ յարտունացեալ սեղանի· եթէ այլոց տայ պատարագել : — 76· Կուազուսն Թուոյ պատարագայ : — 77· Ի նուազել հասոյ օրէն իցէ եպիսկոպոսի նուազել զնիւ պատարագայ : — 78· Օրէն իցէ և ժամարարի : — 79· Կարիցէ կրճատուոր պատարագել ընդդէմ դիտաւորութեան մեծաւորի : — 80· Բաւական իցէ ունակական դիտաւորութիւն : — 81· Աղօտ դիտաւորութիւն : — 82· Պայմանաւոր դիտաւորութիւն : — 83· Մեզանէք մահուչափ որ չտապաւն պատարագէ : — 84· Ցայտարարութիւնք սրբոյ արարողութեանց Ժողովոյն իցեն օրէնք :

5847